Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՑԵՂԻՆ ՍԻՐՏԸ

●

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ, «ԱՐԵՎԻԿ»
1991

ԳՄԴ 8421—5
Ց 338

Կազմեց, առաջաբանը և ծանոթագրությունները գրեց
ՎԱՉԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ Խ. Մ. — ՀԱԽՎԵՐԴՅԱՆ Լ. Հ.
ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ. Վ. — ՄԿՐՏՉՅԱՆ Լ. Մ.
ԴԵՎՐԻԿՅԱՆ Գ. Խ. — ՋՐԲԱՇՅԱՆ Է. Մ.
ԷԴՈՅԱՆ Հ. Ա. — ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Վ. Ս.
ԹՈՓՉՅԱՆ Ս. Է. — ՕՀԱՆՅԱՆ Գ. Ս.
ԽԱՉԱՏՐՅԱՆ Վ. Կ.

Ց 338 *Ցեղին սիրտը։ Արևմտահայ բանաստեղծություն /[Կազմ., ծանոթագր. և առաջաբանը գրեց Վ. Գաբրիելյանը].— Եր.։ Արևիկ, 1991.— 752 էջ.— (Համաշխարհ. գրակ. պատանիների համար)։ Խմբ. կոլեգիա՝ Գյուլնազարյան Խ. Մ. և ուրիշ.)։*

Հատորն ընդգրկում է Դ. Ալիշանի, Մ. Պեշիկթաշլյանի, Սիամանթոյի, Դ. Վարուժանի և արևմտահայ մյուս նշանավոր բանաստեղծների ընտիր երկերը։

4803080102 (10) / 707 (01) 90 — 45—90 — ԳՄԴ 8421—5

ISBN 5—8077—0300—6
ISBN 5—8077—0301—4

© «Արևիկ» հրատարակչություն, 1991

ԱՐԻՎՄՏԱՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

Տասնհինգ դարերի պատմություն ունեցող հայ գրավոր գրականությունը, ժողովրդի պատմական ճակատագրի բերումով, իր գոյության մի կարճատև շրջանում (շուրջ մեկ դար՝ 19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբը) ռուսահայ և տաճկահայ (կամ արևելահայ և արևմտահայ) անվանումներն ունեցավ, պայմանավորված Հայաստանի երկատված գոյավիճակով. արևմտյան հատվածը թուրքական (տաճկական) բռնակալության տիրապետության տակ էր, արևելյանը միավորվեց Ռուսաստանի հետ ռուս-պարսկական պատերազմի (1827—1928) ավարտով։ Մեր ժողովրդի պատմության հետաքրքիր ընթացքը մինչև առաջին համաշխարհային պատերազմի ավարտը և հեղափոխության հաղթանակը զարգացավ այնպիսի հունով և իրադարձություններով, որ պատմաբանը ստիպված է առանձնացնելու դրանք ըստ ռուսահայ և տաճկահայ հատվածների, և եթե ճշմարիտ է այն միտքը, որ գրականությունը ժողովրդի պատմության, նրա ոգորումների, իդեալների ու պայքարի արտացոլումն է (իսկ հայ գրականության համար դա հատկապես այդպես է), ուստի և արդարացվում է նաև պայմանականորեն արևելահայ ու արևմտահայ անվանվող գրականությունների զարգացման ընթացքի, նրանց առանձնահատկությունների ուսումնասիրությունը, առանձին ժողովածուներով ներկայացնելը, անշուշտ, չմոռանալով երբեք նրանց միասնականությունը՝ ընդհանրությունները, փոխազդեցությունները, ազգային ու հոգևոր իդեալների նույնականությունը, վերջապես՝ մեկ ժողովուրդ՝ մեկ գրականություն անվիճելի կարգախոսը։

Հենց այս մոտեցումով էլ դիտարկենք արևմտահայ բանաստեղծությունը՝ պոեզիան. մի զարմանալի երևույթ՝ իր թեմատիկ ու գաղափարական հարստությամբ, տաղանդների բազմազանությամբ ու թվով, գեղագիտական համակարգերով, բանաստեղծական արվեստի շքեղ թռիչքներով ու ...ողբերգական ճակատագրերով։

Եվ հասկանալի է, որ այդ մեծ երևույթի, պոեզիայի պատմության շուրջ ութ տասնամյա մի շրջանի, մի քանի տասնյակ բանաստեղծների մասին մենագրական ուսումնասիրությունների պայմաններում մեր այս խոսքը անշուշտ պակասավոր է լինելու, ուստի բավարարվենք միայն այդ պոեզիայի պատմության ուրվագծերի, զարգացման շրջանների, թեմաների ու մի քանի առանձնահատկությունների դիտարկումով, հուսալով, թե ընթերցողի հետաքրքրությունը կարող ենք ուղղել դեպի այդ խորախորհուրդ բանաստեղծությունը, ինչու չէ, նաև նրա մասին եղած ուսումնասիրությունները։

* * *

Նախ՝ երկու խոսք այս ժողովածուի խորագրի մասին։

Արևմտահայ պոեզիայի (և ընդհանրապես գրականության, մշակույթի) աննախընթաց զարթոնքի (1909—1914) շրջանում, ստույգ՝ 1911-ին, Կ. Պոլսում լույս տեսնող «Շանթ» պարբերականը տպագրել էր ընթերցողներին ուղղված մի հարցարան, որի մեկ հարցն էր՝ «Որոնք են Ձեր ամենաշատ սիրած գրքերը» և ընթերցողների գերակշիռ մասը (ներառյալ մտավորական ընտրանին) պատասխանել էր՝ «Ցեղին սիրտը» ժողովածուն։ Դ. Վարուժանի գրքի ճշգրտորեն գտնված խորիմաստ խորագիրը մեզ մղեց այդպես էլ անվանելու ներկա ժողովածուն և ահա թե ինչու։

Իր ժողովածուի հղացման ու ստեղծման մասին Վարուժանը բացատրվել է մի քանի նամակներում. «...Նախընտրեցի երգել Ցեղին սիրտը, որին բախյունները կդգայի իմ մեջս, իմ սեփական արյունիս խորը։ Հայությունը կուլար և կմոնչեր իմ մեջս», «...ան ժողովուրդին զանգվածին համար եղավ, massa-ին ուզեցի խոսիլ...»։ Մի քիչ ավելի ուշ Վարուժանը բացատրել է, թե հայրենիքի տառապանքը չի թողել իրեն ու գրչակից իր ընկերներին ուրիշ խնդիրներ արծարծել, ուրիշ գեղեցկություններ երգել։ Սիամանթոն՝ հայոց տառապանքի ու ընդվզումի մեծագույն երգիչը, ցավով է խոստովանում, որ «մոռացության է տվել» աշխարհի, բնության գեղեցկությունները, անգամ սերը, որովհետև բանաստեղծի իր աչքերը ամենուր արյուն են տեսնում ու ժողովրդի տառապանքը, և ինքն իրեն պատգամում է «Ցեղին ցավը և ցեղին ուժը բանաստեղծել»։ Այսպես արևմտահայ բանաստեղծության երկու մեծագույնները «Ցեղին սրտի» բախյուններն էին չափագրում ու հնչեցնում իրենց երգերի մեջ։ Ու եթե ետ դառնալով հասնենք «Ավարայրի պլպուլ» նահապետին՝ Ղևոնդ Ալիշանին, ըմբոստ դեյքունցիներին՝ «Հայ քաջորդվույն» պանծացնող Մկրտիչ Պեշիկթաշլյանին, թշվառ հայրենիքին չօգնած մնալու ողբերգությունն ապրած պատանի Պետրոս Դուրյանին և այսպես ետ ու առաջ՝ արևմտահայ բանաստեղծներից գրեթե բոլորին, հիշենք նրանց ոչ միայն հայրենիքի տառապանքի ու սիրո երգերը, այլև ժողովրդի սոցիալական ծանր կացությունից ծնված ցավի ու երազի երգերը, ապա լիովին իրավունք կունենանք ասելու, թե նրանց երգերում տրոփեց Ցեղին սիրտը։ Ու նաև սխալ չենք լինի, եթե ասենք, թե ընդհանրապես հայ նոր գրականության պատմության ողջ ընթացքում հայ գրողը քիչ ժամանակ ունեցավ իր անձնական հուզումների ու հրճվանքների մասին գրելու, քանի որ իր ժողովրդի քաղաքական ու սոցիալական ազատության երազողը եղավ։ Ու հաճախ նա ժողովրդի զանգվածի հետ խոսեց, հրապարակախոս ու մարտիկ եղավ, քան արվեստի քուրմ։

Արևմտահայ բանաստեղծության անցած ճանապարհը համընթաց է ժողովրդի ոգորումներին ու երազներին։

* * *

Այդ ճանապարհի սկիզբը անցյալ դարի 40-ական թվականներն են, արևմտահայոց ազգային զարթոնքի շրջանը, երբ Եվրոպայում ուսանած հայորդիները՝ եվրոպական դեմոկրատական-ազատասիրական շարժումների ազդեցությամբ, նրանով լցված ու ոգևորված սկսում են իրենց ազգային սահմանադրական պայքարը Թուրքիայի տիրապետության տակ հեծող Արևմտահայաստանի սահմանադրական իրավունքների համար։ Ասենք, որ լուսավորական, ազգային-ազատագրական շարժման պոեզիան սկսվել էր մի քիչ ավելի վաղ, եթե նկատի առնենք նաև ոչ աշխարհաբար բանաստեղծությունը Զմյուռնիայում, Մադրասում և այլուր լույս տեսնող պարբերականների ու ժողովածուների էջերում, հիշելով առաջին նշանակալի երկերը՝ Մ. Բաղրամյանի «Տետրակ, որ կոչի հորդորակ» ողբը, անհայտ հեղինակի «Օրհներգություն ազգային» («Տեր, կեցո դու զհայս» տողով սկսվող) հայտնի երգը, Հովհան Վանանդեցու պատմական թեմայով երգերը և հատկապես հայտնի «Հայաստան, երկիր դրախտավայր...» երգը, որ հնչում է առ այսօր։ Ու դեռ Վենետիկի Մխիթարյան միաբանության բանաստեղծների կլասիցիստական գրաբար պոեզիան, գլխավորապես պատմական անցյալը փառաբանող ստեղծագործությունները (օրինակ, Ա. Բագրատունու «Հայկ Դյուցազն» չափածո վեպը)։

1840-ական թվականներին արևմտահայ աշխարհաբարով Պոլսում ստեղծվում են չափածո երգիծական ստեղծագործություններ, որոնց հեղինակները (հաճախ անհայտ)

էական տեղ ու դեր ձեռք չեն բերում. սոցիալական տարբեր խավերի մեջ ծնված հակասությունների շարժառիթով ստեղծված նրանց պամֆլետները առավել տարածվում էին բանավոր։

Պոլսում, Իզմիրում ու Վենետիկում ծավալված գրական-մշակութային շարժումը, որ ազգային լուսավորական-ազատասիրական շարժման հետևանք էր, ծնում է նաև իր բանաստեղծներին, և գրաբար-աշխարհաբարի պայքարի ընթացքում բնականորեն հաղթանակող աշխարհաբարը դառնում է նաև արևմտահայ բանաստեղծության լեզուն։ Ժողովրդի հետ նրան հասկանալի լեզվով պիտի հայ բանաստեղծը կիսեր իր խոհերը, նրա հոգս ու ցավի, նրա գալիքի մասին սրտակից խոսք պիտի բացեր պարզ ու սրտամոտ, առօրյա հայերենով։

Տեղին է հիշել, որ Մխիթարյան միաբանության նշանավոր դեմքերից մեկը՝ Ղևոնդ Ալիշանը, մի քանի հատոր գրաբար բանաստեղծության հեղինակ, 1847—1850 թթ. մամուլում հանդես եկավ աշխարհաբար բանաստեղծությունների մի շարքով՝ «Նահապետի երգեր» խորագրի տակ, ներկայացնելով դրանք իբրև ոչ սեփական գործեր, այլ «քանի դար մը առաջ» Հայաստանում ապրած բանաստեղծի՝ Նահապետ անունով, որի երգերը իբրև թե ինքը հայտնաբերել է «հին տաղարաններու մեջ»։ Ժողովրդի հետ ժողովրդի լեզվով խոսելու ճշմարտությանը հետամուտ բանաստեղծը ըստ էության հիմքը դրեց արևմտահայ աշխարհաբար ճշմարիտ բանաստեղծության և դարձավ այդ բանաստեղծության նահապետը՝ այդ երգերով և ընդհանրապես իր ազգային-հայրենասիրական ողջ նկարագրով՝ տևական ազդեցություն ունենալով հետագա շատ բանաստեղծների վրա։ Կլասիցիզմի գրաբար բանաստեղծության շրջանակում երիտասարդ վանականի համարձակ արարքը պայմանավորված էր նրա ներքին մղումով, որ դրսևորվեց ոչ միայն բանաստեղծության մեջ։ Դարձյալ աշխարհաբարով նա հոդվածներ էր գրում հայ ժողովրդական բանաստեղծության մասին, ժողովրդական երգերն էր քննում ու բարձր գնահատում նրանց ազգային ոգին, գեղարվեստական արժեքը, զարմանալի պարզ ու խոր կառուցվածքը։

Կարևոր էր, անշուշտ, Նահապետի երգերի ոչ միայն լեզվական դրսևորումը, այլև ոգին, բովանդակությունը։ Այդ երգերով բանաստեղծը արթնացնում էր ժողովրդի ինքնաճանաչման ոգին, բարձրացնում ազգային հպարտությունը, կապում արմատներին, դարձնում իր պատմության ժառանգ ու շարունակող, իր հող ու ջրի օրինական տեր, ջերմացնում էր նրա սիրտը հայրենի բնաշխարհի ու ժողովրդի ցավի նկատմամբ, արթնացնում անսահման սիրո զգացումը («Հայ հայրենիք», «Հայոց աշխարհիկ», «Հրազդան» և այլն)։

Հայրենիքից հազարավոր մղոններ հեռու, հայրենի ափերի կարոտով մշտապես լիքը, բանաստեղծը իր այդ կարոտն էր դնում «Հրազդան» բանաստեղծության մեջ, և այդ բանաստեղծության հարատևության գաղտնիքը մեկն է՝ տարագիր բանաստեղծի հուզառատ կարոտը չափազանց անկեղծ բխվածքով փոխանցվում է ընթերցողին։

Եվ անչափ կարևոր է, որ ազգի մշակույթին անմնացորդ, անանձնականորեն նվիրված մտավորական-միաբանը իր բանաստեղծության մեջ նույնպես հավատացնում է, թե հեռու չէ Հայաստանի ազատության օրը, թե հինավուրց երկրի վերածնությունը գալու է և այդ օրվան հասնելու համար ըմբոստության, պայքարի կոչ է ուղղում հայ երիտասարդներին՝ «Դուք այլ շարժեցեք, մանկտիք հայկա...» («Մասիսու սարերն»)։ Ալիշանը դիմում է մեր պատմությանը, զրույց է բացում հայոց հերոսական անցյալից, պանծացնում է մեր քաջ ու հայրենասեր նախնիներին, նրանց հայրենասիրական-հե-

բոսական պայքարի օրինակով ոգևորում ներկա սերնդին («Պլպուլն Ավարայրի», «Շուշան Շավարշանա» և այլն)։

Ալիշանի հայրենասիրական պոեզիան ու հայրենիքին երկար տարիների անձնվեր նվիրումը բացառիկ օրինակ եղավ հետագա բանաստեղծների համար, նրա խոսքը եղավ այն հրդեհը, որ բորբոքվելով պիտի դարավերջին սերունդներ ոտքի հաներ։ Նրա երգը, ինչպես Չարենցն է գրում՝ «...ոտքի հանեց քաջարի այրերի մի սերունդ, որ եկավ գերությունից փոշուց հայրենյաց համար կռվելու», նրա երգը, որ կոչ էր անում «արժանի լինել մեր նախնյաց փառքին պանծալի՝ վառելով ջահերն անցյալի, իբրև նոր փրկության փարոս»։

Ալիշանը, որ Վարուժանի բնութագրմամբ՝ «բանաստեղծ նահապետն է հոգեհմա», իր ամբողջ գործունեության ընթացքում ունեցավ մի մղում՝ նոր սերնդի հոգիներում բռնկեցնել «հրդեհը հայրենասիրության» ու թեև 50-ական թվականներից հետո նա այլևս բանաստեղծություններ չգրեց և գիտությամբ էր զբաղվում, բայց մշտապես՝ «ան բանաստեղծ էր, որ գիտություն կրներ» (Դ. Վարուժան)։

Իտալիայում, Մխիթարյանների մոտ ուսանած Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Մկրտիչ Աճեմյանը, Թովմաս Թերզյանը, Փարիզում ուսանած Նահապետ Ռուսինյանը, ազգային-լուսավորական շարժման նվիրված, Պոլսում հասարակական-մշակութային եռանդուն գործունեություն ծավալած այս մտավորականները և վերջապես պատանի Պետրոս Դուրյանը նկատելիորեն շիկացնում են արևմտահայ բանաստեղծության մթնոլորտը 60-ական թվականներին, Մխիթարյան կլասիցիզմի պոեզիայից անցում կատարելով դեպի ռոմանտիզմի պոեզիան, պատմական անցյալի ոգեկոչումից՝ դեպի ներկան՝ հայրենիքի անազատ վիճակի ու ազատության համար պայքարի անմիջական ընկալումները, պաթետիկ ոճերից դեպի անկեղծ ու անմիջական խոսքը, գաղափարական հարցադրումներից դեպի անկեղծ խոստովանքը, համազգային ցավերից դեպի մարդկային անձնական հուզապորումները։

40—50-ականներից ազգային-լուսավորական շարժմանը նվիրված այս անհատները, բանաստեղծությամբ աշքի ընկան հատկապես 60-ական, մասամբ էլ 70-ական թվականներին, որ արևմտահայ նոր պոեզիայի զարգացման երկրորդ փուլն էր, ավելի ճիշտ՝ ճշմարիտ սկիզբը՝ հաստատված Պեշիկթաշլյանի մի շարք երգերով ու Դուրյանի խորունկ քնարերգությամբ։ Բայց սրանց ու մյուսների քնարերգության բնութագրումից առաջ, հիշենք, թե հետագայում զարգացման ինչ փուլեր ապրեց արևմտահայ բանաստեղծությունը։

1868-ին մահանում է Մկրտիչ Պեշիկթաշլյանը, 1872-ին՝ Պետրոս Դուրյանը։ 1870 թ. լույս է տեսնում Պեշիկթաշլյանի ժողովածուն, 1872-ին՝ Դուրյանինը։ Ավարտվում է 50—60-ական թվականների արևմտահայ նոր պոեզիայի զարգացման այդ փուլը։ Հաջորդ շրջանը 70—80-ական թվականների ժամանակահատվածն է, երբ արևմտահայ բանաստեղծությունը նման թռիչք չի ունենում ոչ միայն ազգային-ազատագրական, սահմանադրական-լուսավորական պայքարի մարման (հատկապես ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո), այլև բանաստեղծական տաղանդների բացակայության պատճառով։

Ռեթորականներից արևմտահայ արձակում արդեն ծավալված իրապաշտական (ռեալիստական) շարժման ազդեցությամբ 1890-ական թվականների սկզբում պոեզիայի մեջ նույնպես սկսվում է նոր շարժում, բայց ցավոք այն ընդհատվում է 1895—96 թթ. Պոլսում ու գավառներում տեղի ունեցող հայկական կոտորածների պատճառով, որ Արդուլ Համիդի հայաջինջ քաղաքականության առաջին վճռական քայլն էր։

Արևմտահայ պոեզիայի (և ընդհանրապես գրականության) հաջորդ փուլը ընդգրկում է 1895—1908 թթ., երբ համիդյան խստությունները գնալով ահագնանում էին և ինչպես Վարուժանն էր ասում՝ արևմտահայությունը «կխեղդվեր սուրի ու սովի մղձավանջին մեջ», ասել է գտնվում էր սոցիալական ու քաղաքական ճնշման ծանրագույն պայմաններում։ Ջարդերի, գրաքննչության խստության, կյանքի ծանր պայմանների հետևանքով հայ մտավորականների, գրողների մեծ մասը փախչում է արտասահման։ Գրական կյանքը Պոլսում ու գավառներում դառնում է տարտամ, անթռիչք ու խեղճ։ Բայց դրա փոխարեն թռիչք է ապրում արևմտահայ գրականությունը արտասահմանի հայ գրողների ջանքերով։

Համիդի և սուլթանական ռեժիմի տապալմամբ 1908-ին Թուրքիայում իշխանության գլուխ է անցնում «Միություն և առաջադիմություն» կոչվող «երիտասարդ Թուրքերի» կուսակցությունը, որը սկզբնապես հռչակում է Թուրքիայում ապրող ժողովուրդների հավասարության, եղբայրության և ազատության կոչերը, որոնց հավատալով Պոլիս են վերադառնում նաև արտասահմանում գտնվող հայ գրողները, ու Պոլսում ստեղծվում է գրական կյանքի աննախընթաց մի վերելք, 1909-ից մինչև 1914-ը։ Իսկ երբ սկսվում է պատերազմը, կառավարող երիտթուրքերը անցնում են վաղուց գաղտնիորեն մշակած հայաջինջ ծրագրի իրագործմանը՝ 1915—1916 թվականներին իրենց ծննդավայրերից բռնի աքսոր են քշում Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի հայաշատ վայրերի գրեթե ամբողջ հայ ազգաբնակչությանը՝ աքսորի ճանապարհներին սպանելով ու սովահար անելով շուրջ մեկ ու կես միլիոն մարդկանց։ Պոլսում ձերբակալվում, աքսորվում են հայ մտավորականները, գրողները, որոնց մեծ մասը գաղանաբար սպանվում է։

1909—1914 թթ. արևմտահայ գրականության աննախընթաց վերելքի շրջանը արհեստականորեն ընդհատվում է։

1915—1918 թթ. արևմտահայ գրականության մասին խոսք լինել չի կարող. չկա այդպիսի գրականություն։ Արևմտահայ նշանավոր գրողների մեծ մասը գտնվում էր աքսորում կամ արդեն նահատակված էր։ Մի փոքր մասը մինչև պատերազմը արտասահմանում էր, մի երկուսն էլ կարողացան փախչել։ Ոմանք էլ թաքստոցներում էին՝ ծպտված կամ այլ անվան տակ։ Բնականորեն գաղարեց լույս տեսնել գրական մամուլը։

1918-ին, պատերազմի ավարտից անմիջապես հետո, Պոլսում (գավառներում այլևս հայ կյանք չկար) կրկին աշխուժանում է հայ գրական մշակութային կյանքը։ Սկսում է լույս տեսնել ոչ միայն նախկին մամուլը, այլև նոր թերթեր ու հանդեսներ։ Վերսկսում են իրենց աշխատանքը «Շանթ», «Ոստան» գրական հանդեսները, սկսվում է «Բարձրավանք» գրական ամսագրի հրատարակությունը։ Պոլիս են վերադառնում արտասահմանում գտնվող արևմտահայ մի շարք գրողներ, թաքստոցներից ելնում են ծպտյալ մտավորականները։ 1918—1922 թթ. արևմտահայ, ավելի ճիշտ պոլսահայ գրականության նոր զարթոնքի տարիներ էին։ Լույս են տեսնում բազմաթիվ գրքեր, գրական ուժերը խմբավորվում են, հիմնվում է հայ արվեստի տուն, կազմակերպվում են գրական հանդեսներ, գրական հավաքույթներ։ Լույս են տեսնում թարգմանական ու ինքնուրույն գրքեր։

Սակայն շուտով կրկին թուրքական նոր իշխանությունների կողմից սկսվում է քրիստոնյա ազգությունների դեմ հալածանքը, Իզմիրում հույների ու հայերի նկատմամբ սկսվում են բռնություններ, կրկնվում է 1915-ի աքսորի ու սպանությունների փորձը, հրդեհվում է քաղաքը։ Իզմիրի դեպքերից սարսափած, Պոլսի հայ մտավորականները բռնում են փախուստի ճանապարհը։ Պոլսահայ գրական-մշակութային կյանքի զարթոնքը միանգամից դադարում է։ 1922 թվականն էր։ Ընդունված է ասել, թե այդ թվականով ավարտվում է արևմտահայ գրականության ետպատերազմյան՝ 1918—1922 թթ., վերջին շրջանը։ Այնուհետև արտասահմանի տարբեր գաղթօջախներում գտնվող արևմտահայ գրողների և գրական ասպարեզ իջած նոր սերնդի կողմից սկզբնավորվում է գրականության մի նոր շրջան՝ սփյուռքյան շրջանը։

* * *

1850—60-ական թթ. արևմտահայ պոեզիայի պատմությունը ուսումնասիրողները, արժեքավորելով այդ շրջանի նշանավոր դեմքերի՝ Պեշիկթաշլյանի ու Դուրյանի ստեղծագործությունները, իրավացիորեն չեն մոռանում հիշատակել նաև անուններ, որոնք իրենց մասնակցությունն են բերել գրական կյանքին, ժամանակին ունեցել են իրենց ընթերցողը, ինչ-որ չափով նպաստել են պոեզիայի զարգացման ընթացքին, միասնաբար ստեղծել այն մթնոլորտը, որը և պայմանավորել է մեծերի ծնունդը։ Այդպիսի անուններ են Սիմոն Ֆելեկյանը, Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ), Նահապետ Ռուսինյանը, Արմենակ Հայկունին և ուրիշներ։

Հիշատակելի են Սիմոն Ֆելեկյանի ազգային-հայրենասիրական թեմայով (Սահմանադրության առիթով) մի քանի սրտառուչ, հուզական բանաստեղծությունները («Հայրենիք», «Հառաչանք Եփրատա»), որոնք ժամանակին տարածված են եղել ընթերցողների շրջանում։ Հիշենք, որ Ֆելեկյանին է վստահվել հրատարակության պատրաստել վաղամեռիկ Դուրյանի առաջին գիրքը (թեև հայտնի է նաև, որ նա թույլ է տվել իրեն «մշակել» Դուրյանի որոշ գործեր, առանձին փոփոխություններ է մտցրել, որի իրավունքը անշուշտ չուներ. այդ փոփոխությունները ճշտվեցին Դուրյանի հետագա հրատարակությունների ժամանակ)։ Իր ժամանակին սիրված բանաստեղծ է եղել նաև Խորեն Գալֆայանը։ Իր մի շարք բանաստեղծություններով («Վարդենիք», «Ստվեր հայկականք» և «Քնար պանդուխտին» ժողովածուներում), որոնք աչքի են ընկնում հայրենասիրական, ազգասիրական, նաև անձնական տրամադրությունների անկեղծ ներշնչանքով, Գալֆայանը լայն ճանաչում դտավ այն օրերին։ Ցմոռանանք, որ նա ժամանակին ճանաչված անձ էր՝ եպիսկոպոս, ազգային երեսփոխան, դրամատուրգ, բանաստեղծ, ըստ Պարոնյանի «երևելի անձերից, ազգային ջոջերից» մեկը, որին գնահատելով, նաև երգիծել է նրա թերությունները «Ազգային ջոջեր» շարքի դիմանկարներում։

Չնայած այն հանգամանքին, որ ազգային-հասարակական նշանավոր գործիչ, հրապարակախոս, բժիշկ, մանկավարժ, թարգմանիչ ու բանաստեղծ Նահապետ Ռուսինյանը քիչ բանաստեղծություններ է գրել, բայց նրա մեկ բանաստեղծությունը՝ «Կիլիկիան» որ ավելի շուտ փոխադրություն է, 60-ական թվականների հայ պոեզիայի նշանակալի գործերից մեկն է, հենց այն օրերից դարձել է երգ, գտել է լայն տարածում ու զգա-

հեք թողել օրերի և հետագա շրջանի հայ հոգիների ու բանաստեղծության վրա։ Հայրենի երկրի, ծննդավայրի նկատմամբ պանդուխտ մարդու անծայր կարոտը կա այս բանաստեղծության մեջ, մի թախծոտ, լուսավոր հայրենաբաղձություն, ջերմագին ու նվիրական սիրո զգացում առ հայրենին։ Հայրենիքը տեսնելու, նրա աննման գեղեցկություններով կրկին զմայլվելու, նրա հողում ննջելու անափ ցանկություն-երազանքը, որ հայտնում է բանաստեղծության քնարական հերոսը, փոխանցվում է ընթերցողին։

Երթամ ննջել գիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

Հայրենաբաղձության, հայրենիքի նկատմամբ ջերմեռանդ սիրո այս տրամադրությունը այդ օրերի պոեզիայի համար ընդհանրական էր և հնչում էր գրեթե բոլոր բանաստեղծների երգերում, բանաստեղծ, որոնց մեջ առանձնանում են հատկապես Մկրտիչ Պեշիկթաշլյանն ու Պետրոս Դուրյանը։

Պեշիկթաշլյանը բանաստեղծություններ գրել է դեռևս 40-ական թթ. իտալական Պադուա քաղաքում ուսանելու տարիներից։ Մինչև 50-ական թթ. վերջը, որ ընդունված է համարել նրա բանաստեղծության առաջին շրջանը, Պեշիկթաշլյանը հանդես է գալիս գրաբար բանաստեղծություններով, կլասիցիզմի պոեզիայի, հատկապես Մխիթարյան բանաստեղծների որոշակի ազդեցությամբ՝ պաթետիկ ոճեր, միստիկական հնչերանգ, հայրենիքի ու հայրենասիրության ընդհանուր գաղափարներ, պատմական անցյալի ոգեկոչում ու փառաբանություն, մասամբ՝ բնության ու սիրո երգեր։ Բայց ահա 50-ական թվականների վերջերից և հատկապես 60-ական թվականներին, որ նրա ստեղծագործության երկրորդ շրջանն է, Պեշիկթաշլյանը, հրաժարվելով անցյալի ոգեկոչումից, կլասիցիզմի պաթետիկ ոճերից ու գրաբարից, ստեղծում է օրվա կյանքային թեմաներով, աշխարհաբար բանաստեղծությունների մի շարք, որ անմիջական արձագանքն էր ազգային-ազատագրական շարժման վերելքի ու հատկապես Զեյթունի ապստամբության, անմիջական արտահայտությունն էր ինչպես ազգային-քաղաքական կյանքի, այնպես էլ անձնական ներշնչանքների։ Շուրջ երկու տասնյակ բանաստեղծություններ՝ նվիրված Զեյթունի հերոսամարտի հայ քաջորդիներին, նվիրված բնությանը, սիրած էակին, մարդկային եղբայրակցությանը, մանուկներին, մայրությանը, բանաստեղծությունների մի հրաշալի փունջ, Պեշիկթաշլյանին դարձնում է իր օրերի ամենասիրված բանաստեղծը։ Հենց այդ երգերով էլ Պեշիկթաշլյանը դառնում է, ինչպես Պ. Սևակն է բնութագրում, հայ նոր քնարերգության հիմնադիրն ու առաջին դասականը։ «Գարուն», «Աշուն», «Առ Զեփյուռն Ալեմտաղի», «Եղբայր եմք մեք», Զեյթունի քաջերին նվիրված՝ «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն» և այլն, հայ նոր քնարերգության առաջին գեղեցիկ օրինակները եղան, ճշմարիտ արվեստի բիւրեղներ, որոնք հնչեղ ու հմայիչ լինելով այն օրերին, արձագանք գտան հետագա տասնամյակների մեջ, և հուզիչ են ու սիրելի նաև այսօր, իրենց ծննդյան օրից շուրջ 130 տարի հետո։ Պեշիկթաշլյանը նաև դրամատուրգ էր, արևմտահայ ռոմանտիկական դրամատուրգիայի հիմնադիրը, մանկավարժ ու հասարակական գործիչ, բայց նրա տաղանդը փայլատակեց հատկապես բանաստեղծության մեջ։

Պեշիկթաշլյանի քնարերգության հմայքը պայմանավորված է նրա պատկերավոր և միաժամանակ պարզ ու անպաճույճ խոսքարվեստով, նրա՝ իր պատկերած հերոսի, բնության, իրադարձության նկատմամբ ունեցած սիրառատ վերաբերմունքով, քնարա-

քան հնչերանգով, որ մեղմ է, նվագային (այստեղից էլ՝ նրանց երաժշտականացումը, այնքան տարիներ սիրված երգեր դառնալու իրողությունը)։ Նրա տաղանդի այս հատկանիշներն են նպաստել, որ նրա խոսքը տպավորիչ ու փոխանցելի դառնա հավասարապես և մարտական բնույթի երգերում, և սիրո ու բնության պատկերների մեջ։ Կա նաև մի ուրիշ հանգամանք. նրա երգերում անձնական ու հասարակական տրամադրությունները միասնական են, ներթափանցված են իրար մեջ, մեկը պայմանավորված է մյուսով։ Այսպես, բնության հրաշագեղ պատկերները, որ ինքնին գեղեցիկ են ու հմայիչ, որ կարող են ընթերցողի հոգուն խաղաղություն հաղորդել ու հաճելի հուզապրումներ, միաժամանակ կարող են նաև մղել նրան հայրենական մտահոգիչ խոհերի, հայրենիքի ճակատագրի շուրջ մտորումների, հայրենիքի նկատմամբ ունեցած սիրո ու կրակի բորբոքումին։ Ծաղկանց ու կույսի մազերը շոյող, անուշ ու դով հովիկի, անտառի ծառերի մեջ սրտագին երգ ասող թռչնիկի, ականակիտ ու հանգարտիկ վտակի պատկերները, որ ինքնին շատ գեղեցիկ են, բանաստեղծին ասես չեն հմայում, որովհետև օտար են, իսկ նրա սիրտը հայոց ավերակների վրա շրջող թռչնիկի ու հովի համար է բաց, «Հայրենյաց հառաչքին» է ունկնգիր («Գարուն»)։ Շքեղ բնության բյուր ձայնները, գույնի ամենագեղ մատներով զարկված քնարի հնչյունները բանաստեղծի համար «չունին ձայն մի այնքան սիրուն քան զանձկալի եղբայր անուն» («Եղբայր եմք մեք»)։ Եվ մարգկանց մտերմության, եղբայրության, միության նրա կոչը իմաստավորվում է ոչ միայն աշխատանքի ու ծով բարիքի վայելքի, այլև հայրենիքի շենացման երազանքով։

60-ական թվականներին գրված իր այս բանաստեղծություններով Պեշիկթաշլյանը հաստատում էր նոր՝ ռոմանտիկական մեթոդի հազթանակը կլասիցիզմի պոեզիայի նկատմամբ, քնարական, օդացոմային, կյանքային ապրումների մի նոր որակ, որ անմիջաբար շարունակեց պատանի Պետրոս Դուրյանը։

Դուրյանի բանաստեղծական առաջին գրչափորձերը եղան 1867—68 թթ., Պեշիկթաշլյանի կենդանության օրոք։ Սակայն նրա պոեզիայի գերակշիռ մասը, որ Դուրյանի մեծության ճշմարիտ արտահայտությունն է, գրվել է Պեշիկթաշլյանի մահից (1868) հետո, 1869—71 թթ.։ Իրապես, նա շարունակում էր Պեշիկթաշլյանին։ Շարունակում էր ռոմանտիզմի նոր ամրապնդված սկզբունքները, անում ևս մի քայլ հաստատման համար, ապա և ինչ-որ չափով ռոմանտիկական մտածողության մեջ բերում մի նոր երանգ, բացում մի փոքր ակոս իրապաշտության համար, որ դեռ մեկ-մեկուկես տասնամյակ հետո էր արմատավորվելու արևմտահայ գրականության մեջ։ Այդ շերտը զուտ անձնական ապրումներից, ավելին՝ բանաստեղծի կենսագրության իրական փաստերից ծնված բանաստեղծությունների մեջ չէր։ Կենսագրական հիմքով ռեալիստական հուզապրումներ, որոնք, լինելով բացառիկ ճշմարիտ ու անմիջական, Դուրյանին դարձնում են «մեր նոր քնարերգության առաջին մեծը» (Պ. Սևակ)։

Առաջին մեծը իր բանաստեղծության կյանքային բաբախով, կենսաբաղձ տրոփով, մարդկային հոգու մեծ զրամայով։ Դուրյանի բանաստեղծության քնարական հերոսը, որ ինքը բանաստեղծն է, ու նաև իր մեջ ընդհանրացնում է 60—70-ական թվականների արևմտահայ մտավորականին, զարմանալիորեն կենդանի է հառնում ընթերցողի աչքի առաջ։ Դեպի կյանքը, մարդը, հայրենիքը անսահման սիրով լցված մի երիտասարդ է, գրեթե պատանի, որի առջև հառնել է անազատ հայրենիքի, բռնադատված հայի գոյությունը, և մահվան ուրվականը՝ անազոթ ու գժնտեսիլ։ Եվ անընդհատ երկփեղկվում է պատանի բանաստեղծի հոգին, փոթորկվում է հոգու խորքում մի ծանր դրամա, որ

ծնվում է հայրենիքի նկատմամբ ունեցած մեծ սիրո, հայրենիքի անազատ վիճակի ու նրան օգտակար դառնալու անկարողության զգացումի հակասությունից, ընտանիքի ծանրը կյանքը տեսնելու և նրան օգնել չկարողանալու մտատանջությունից, սիրելու, սիրած էակին նվիրվելու, սիրո վայելքի, երազի ու դրժման ծանր զգացողությունից, վերջապես՝ ապրելու, կյանքի գեղեցկությունները վայելելու և մոտալուտ մահվան զգացողությունից։ Դրաման ծնվում է նաև շրջապատի անտարբերությունից, «Բոց անհուն» հոգին, զգացումների հրդեհ ունեցող սիրտը չճանաչելու պատճառով։ Շրջապատը նրան կարող է համեմատել մեռած լճակի հետ, դալկահաք դեմքից այն կողմ ոչինչ չտեսնել, մինչդեռ՝ «—Ո՜հ, հատակն են իմ փրփուրներ»։ Նրա դրաման իր ծայրակետին է հասել, անշուշտ, մոտալուտ մահվան զգացողությունից։ Ծանր է՝ մեռնել երիտասարդ տարիքում, ընդամենը քսան տարեկան, դեռ չճաշակած կյանքը, լեցուն՝ երազներով։ «Մեռնիլ թարմ և երազկոտ... մեռնիլ առանց հոգին ժպիտով մը հրդեհելու, մեռնիլ... տխուր է այդ...»,— սրանք խոհեր են, նամա՛կ տողեր, որ ծավալվել են նաև բանաստեղծության՝ հանճարեղ «Տրտունջքի» մեջ, դրժել տրտունջ, պահանջ ու բողոք, քմբոստացում՝ ճակատագրի, աստծո դեմ։

Ո՜հ, կայծ ավեր քնե՛ն, կայծ ավեր, ապրի՛մ...
Ի՞նչ, երազն վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...
Ո՜հ, ավեր հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրել կուզեմ դեռ, ապրել ու ապրիլ...
Երկնքի աստղեր, հոգվույս մեջ քնկեք,
Կայծ տվե՛ք, կյա՛նք՝ ձեր սիրահարին հեք։

Կյանքի մեծ սիրուց էլ ծնվում է զայրույթը բնության օրենքների և աստծո դեմ, հիվանդության ծանր մի պահի, իր գլխավերևում արտասվող մորը տեսնելիս։ Ու թեև «օր մը եւոր» «Զզջում» բանաստեղծությունը պիտի գրեր՝ զղջալով թե պատճառաբանել-արդարացնելով իր արարքը՝ «Ո՜հ, ներե՛ ինձ, Աստված իմ, մորս արտասրը տեսի», բայց մոր արտասուքը և կյանքի սերը և ճակատագրի դառն հեգնանքը ստիպի այնչափ փոթորկեին իր հոգին, որ նա, հավատացյալ պատանի, առ բարձրյալը ուղղեր իր զայրույթը.

Այժմեն թող որ շանթ մ'ըլլամ դալկահաք,
Պլլրվիմ անվանդ, մռնչեմ անդադար,
Թող անեծք մ'ըլլամ քու կոդդ խրիմ,
Թող հորչորչեմ քեզ «Աստված ոխերիմ»։

Չնայած հոգեկան ծանր տառապանքներին, հոգու քիչ թե շատ խաղաղ պահերին նրա հայացքը որսացել է բնության ու մարդկային գեղեցկությունները, գրել է բանաստեղծություններ մարդկային գեղեցիկ երազների մասին, երգել է բնության ու մարդկային գեղեցկությունները, «բոցագեմ սիրտ կոգեն փրթած մի կրակ» գեղեցկուհուն, հայրենի ու չքնաղ հայուհուն, տատղային մի գիշեր «Ներա հետ» հանդիպման ու տիեզերք արարող մի համբույրի պատմությունը, երգել է հայրենիքի վիշտը։ Ծավալվորեն տխրել է վաղաժամ մեռնելու գիտակցությունից, բայց և չի տոկացել։ «Երբեք մի մտաբերեր, որ

ես հուսահատ մ'եմ. բնավ, բանաստեղծ մը մահվանեն չըսոսկար...»,— գրել է ընկերոջը։ Բայց նաև խոստովանել է, վեր բարձրանալով իր ցավից, մի այլ մտահոգություն, ի վերջո ցավ չէ մեռնիլը, այլ՝

Հեգ մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշվառ,
Ջօգնած անոր՝ մեռնիլ աննշան,
Ո՜հ, ա՛յս է սոսկ ցավ ինձ համար։

Ու մի զուտ անձնական ցանկություն նաև, որ իր մահից հետո բարեկամները հավաքեն ու հրապարակեն իր «արցունքոտ տողերը», որ հիշատակը չկորչի։

Դուրյանի մահից անմիջապես հետո հրատարակված նրա գիրքը տևական հետք թողեց հայ պոեզիայի հետագա ընթացքի վրա, նրա բանաստեղծությունները, որ ինքը տաղեր էր անվանում, անվարան գտան ընթերցողի սրտի ճանապարհը և չեն հնանում մինչև այսօր, չեն հնանում, քանի որ անկեղծ ներշնչանքից ծնված երգեր էին, սրտի երգ, սիրո երգ, ցավի երգ, «ժպիտ ու հառաչ, ծիծաղ ու հեծկլտոց», ճշմարիտ ու բնական հուզապրումներ՝ բանաստեղծական պարզ ու անսեթևեթ, պատկերավոր ու նկարեն ձևերի մեջ, արևմտահայ աշխարհաբարի, ժողովրդական լեզվամտածողության նոր դրսևորումներով։ Հատկանիշներ, որոնք պատանի վաղամեռիկ հանճարի անունը մշտապես կապեցին հայ դասական պոեզիայի մեծերի անունների հետ, որպես, Իսահակյանի բնութագրությամբ, նոր դարաշրջանի առաջին և ամենամեծ քնարերգուի։

* * *

Ճիշտ է, 1870—1880-ական թվականներին արևմտահայ բանաստեղծությունը նշանավոր դեմքեր չտվեց, սակայն ավանդները շարունակվում էին և իրենց գրական-հասարակական ընդհանուր վաստակով ճանաչում գտած մի շարք մտավորականներ, բանաստեղծական թեև ոչ հաճախադեպ հրապարակումներով բարախուն պահեցին պոեզիայի այն երակը, որ արյուն պիտի տաներ 90-ականների և հատկապես 20-րդ դարասկզբի սերնդի ստեղծագործությանը։ Այստեղ կարևորվում է կապի պահպանման, փոխանցողի դերը։ Այդ մտավորականներն էին Թովմաս Թերզյանն ու Մկրտիչ Աճեմյանը, Եղիա Տեմիրճիպաշյանն ու Մինաս Չերազը, Ռեթեոս Պերպերյանն ու Հովհաննես Սեթյանը և ուրիշներ։ Հասարակական-մանկավարժական-լրագրական ու գրական և այլ զբաղումներից բացի նրանք մամուլում հանդես էին գալիս նաև բանաստեղծություններով, հրատարակեցին մի շարք բանաստեղծական ժողովածուներ, որոնք պահպանում էին արևմտահայ պոեզիայի ընթացքի բավարար ռիթմը։ Այդ օրերի պոեզիան թռիչքներ չունեցավ հավանաբար այն պատճառով, որ ազգային կյանքը նման ազդակներ չէր տալիս։ Ազգային սահմանադրության, ազատ հայրենիքի, ազատության համար պայքարի նկատմամբ ոգևորության ալիքը գնալով մարում էր և դեմ էր առնելու ռուս-թուրքական պատերազմից հետո ստեղծված քաղաքական ռեակցիային, համիդյան խստություններին, հետևաբար ծնելով թախիծի և հուսալքության տրամադրություններ։ Ազգային-հայրենասիրական գաղափարների հանդեպ վախվորած կեցությունը ասես թե խանգարիչ է դառնում ոչ միայն այդ թեմաներով բանաստեղծության ծնունդին, այլև անձնական ապրումների դրսևորմանը։ Անշուշտ, ավելի հզոր տաղանդները կարողանում են հաղթահարել այդ կաշկանդվածությունը (Մեծարենցն օրինակ), և այս հանգամանքն էլ հենց թույլ է տալիս ասելու, թե կարևոր է նաև անհատի ու տաղանդի գործության պարագան։ Թերևս 70—80-ական թվականների արևմտահայ պոեզիայի ոչ բարձր մակարդակը պայմանավորված է նաև բանաստեղծական ճշմարիտ, մեծ տաղանդների բացակայության հանգամանքով։

Այնուամենայնիվ, 70—80-ականների սերունդը պահեց մի մակարդակ, որ նույնիսկ ինչ-որ չափով ուսանելի եղավ դարավերջին ու նոր դարի սկզբին հանդես եկող ու երգեց, և սեր, գեղեցկություն ու երգ սորվեցուց. բանաստեղծ եղավ և ուսուցիչ, ներ էին և իրենց անձով ու գրական ճաշակով զգալի ազդեցություն թողեցին իրենց աշակերտների վրա, որոնք հետագայում գնահատել, սիրո և երախտագիտության խոսքերով են պատվել նրանց։ «Թերզյան մին եղած է ամենեն լուսավոր ու ներդաշնակ դեմքերեն, որ մեր մեջ երևցած ըլլան,— Թովմաս Թերզյանի մահից տարիներ հետո գրել է Արշակ Չոպանյանը։— Իր կյանքն ու գործը երկու բառով կարելի է ամփոփել. ան սիրեց ու երգեց, և սեր, գեղեցկություն ու երգ սորվեցուց. բանաստեղծ եղավ և ուսուցիչ, բանաստեղծ ու գեղեցկության ուսուցիչ...»։ Նման հիացում է եղել Եղիա Տեմիրճիպաշյանի, Ռեթեոս Պերպերյանի, Մինաս Չերազի, Հովհաննես Սեթյանի նկատմամբ։ Ճիշտ է, նրանք չստեղծեցին նոր բանաստեղծության բարձր որակը, սակայն ժամանակին ճանաչում գտան։ Թերզյանը, Մկրտիչ Աճեմյանը, Տեմիրճիպաշյանը իրենց կենդանության օրոք վայելում էին նաև բանաստեղծի համբավ։

Թերզյանը «կմեծարվեր իբրև շնորհալի, զգայուն ու փափկաճաշակ բանաստեղծ մը», դասվում էր «արևմտահայ լավագույն ռոմանտիկ քնարերգուներու շարքին»,— վկայում է Չոպանյանը։ Իրոք, Թերզյանը էությամբ բանաստեղծ է։ Ճիշտ է, իր շատ բանաստեղծություններում նա արվեստական է ու սառը, մասամբ միայն արտաքուստ հմայիչ ու խորքի մեջ՝ անկյանք, բայց շատ գործերում, ներշնչվելով կյանքից, բերում է կյանքի ռիթմը, անկեղծ հուզապրումներ ու խոհեր և անփույթ չէ իր խոսքի նկատմամբ, ուշադիր է կառույցի մեջ։ Ի տարբերություն Պեշիկթաշլյանի ու Դուրյանի՝ Թերզյանի քնարը չի հնչեցրել քաղաքական-հայրենասիրական լարը, ի տարբերություն Մխիթարյան բանաստեղծների (թեև ինքն էլ ուսանել էր Վենետիկի Մխիթարյանների մոտ), գրեթե չի անդրադարձել հայոց հին ու նոր պատմության դրվագներին, ավելին՝ սակավադեպ է արծարծել ազգային ցավի ու երազի, պայքարի մոտիվներ։ Թերզյանը առավելապես աշխարհի, բնության, մարդկային կյանքի, սիրո, ուրախության, գեղեցկության երգիչն է, մարդկային հարաբերությունները, կյանքը փիլիսոփայորեն քննող, ամենասովորական հարաբերությունները, սովորական կյանքի պատկերները երևակայության ու երազի միջով դիտարկող, հոգու գաղտնիքներին հետամուտ (երբեմն էլ հոգևոր, աստվածապաշտ) ռոմանտիկ բանաստեղծ։

Թերզյանը գիտեր մի շարք լեզուներ, հետամուտ էր դասական ու նոր բանաստեղծության ավանդներին, ռոմանտիկ դպրոցի հետևորդ էր և բծախնդիր իր բանաստեղծության մշակվածության, պատկերավորության ու նվագայնության հարցերում։ Թերևս հենց դա էլ խանգարել է նրա ինքնատիպության դրսևորմանը, անկեղծ ներշնչումին, և կրակը, որ բանաստեղծի զգացումը ընթերցողին փոխանցելու գլխավոր պայմանն է, չի ծնվել, որ ջերմացնի բանաստեղծությունը անգամ գունագեղ պատկերի ու նրբագեղ կառույցի դեպքում։ Թերևս նաև խանգարիչ եղավ այն հանգամանքը, որ Թերզյանը գրաբար բանաստեղծությունից անցնելով աշխարհաբարին, մշտապես ջերմեռանդ սեր ունենալով

գրաբարի նկատմամբ, գրում էր գրաբարախառն լեզվով, որը խաթարում էր աշխարհաբարի կենդանությունը։

Թերզյանի առաջին բանաստեղծությունները (գրաբար) մամուլում լույս են տեսել 50-ական թվականներին։ 60-ականներին նա առավելապես զբաղվել է դրամատուրգիայով, մեծ դեր խաղացել արևմտահայ թատրոնի ու դրամատուրգիայի սկզբնավորման գործում։ Որպես բանաստեղծ, դարձյալ մամուլում, նա հանդես է գալիս 70—80-ական թվականներին։ Սկսելով Դուրյանից առաջ, նա սակայն որպես բանաստեղծ լայն ճանաչում է գտնում Եսդուրյանական շրջանում։

Թերզյանի հետ 70—80-ականներին հայտնի անուն է դառնում նրա Վենետիկի տարիների դասընկերը՝ Մկրտիչ Աճեմյանը։ Աճեմյանի բանաստեղծական ջորհները ավելի համեստ էին Թերզյանի հետ համեմատած, բանաստեղծական արվեստի մեջ ավելի անկատար, սակայն նա ավելի ժողովրդականություն վայելեց, որովհետև գրում էր ավելի պարզ լեզվով ու մտածողությամբ, ժողովրդական ոճերին ավելի մոտիկ, երբեմն անգամ բարբառային բառեր օգտագործելով։ Եվ ամենակարևորը՝ հիմնականում թեմա է ընտրել ժողովրդի սոցիալական վիճակը։ Կարելի է ասել, թե այս առումով նա թեմատիկ հարստացում էր բերում արևմտահայ պոեզիայի մեջ։ Հարուստների, շահամոլ կրոնավորների նկատմամբ քննադատությունը, նրանց անխնա երգիծելը, աշխատավոր դասի, աղքատների նկատմամբ սերն ու համակրանքը, պանդխտության ու նրա հետևանքների մասին մտահոգ վերաբերմունքը, Աճեմյանի բանաստեղծությունների համար ապահովում էին մեծ լսարան։ Սոցիալական մոտիվի նկատմամբ նրա ընդգծված վերաբերմունքը նկատելի է նաև հայրենասիրության, սիրո ու բնության թեմաներով գրված բանաստեղծություններում։ Աճեմյանի բանաստեղծությունները առօրյա, կենդանի կյանքի դիտումներ էին, գրված պարզ ու կենդանի լեզվով, առավելապես նկարագրական, էպիկական թեքումով, հետևապես նաև իրապաշտական հակումով։ Ճիշտ է նկատված, թե նա 70—80-ական թվականների արևմտահայ գրականության մեջ ռեալիզմի համար պայքարողների առաջին շարքում էր։

Ուքսունականներին գրական ասպարեզ իջած մեկ ուրիշ բանաստեղծ՝ Հովհաննես Սեթյանը, թեև Աճեմյանի նման արծարծում էր նաև սոցիալական հարցեր, բողոքում էր կյանքի անարդարությունների դեմ, բայց նրա երգերը մեծ լսարան չգտան, քանի որ դրանք առավելապես երկարաշունչ խոհեր էին, այլ ոչ պարզ պատումներ, ռոմանտիկական ձգձգված զեղումներ էին՝ մշտապես տխուր շեշտերով, հուսալքվածության տրամադրությամբ։

Այդ շրջանի արևմտահայ նշանավոր մտավորականներից մեկը՝ Եղիա Տեմիրճիպաշյանը, թեև իր արձակ էջերով որոշակի հակումներ էր դրսևորում ռեալիզմի նկատմամբ, իր բանաստեղծությունների մեջ շարունակում էր հետևել ռոմանտիկական ուղղությանը։ Հրատարակիչ, խմբագիր, հրապարակախոս, արձակագիր ու բանաստեղծ Տեմիրճիպաշյանը, զորձուն մասնակցություն բերելով ժամանակի գրական-մշակութային շարժմանը, բեղուն չեղավ բանաստեղծության ասպարեզում։ Սակայն նրա բանաստեղծական մի քանի շարքերը («Անգեղն երգեր», «Տաղարան», «Հրայրք մութին» և առանձին բանաստեղծություններ արձագանք գտան այն օրերին, քանի որ աչքի էին ընկնում պատկերավոր մտածողությամբ, ինքնատիպ խորհրդանիշներով և, որ կարևոր է, տառապած հոգու երգեր էին։ Երբեմն-երբեմն սրվող հոգեկան հիվանդությունը, որ նրան քանիցս մղեց ինքնասպանության փորձերի և վերջակետեց նրա կյանքը, մղում էր նրան սրված զգայությունների ոլորտը, որոնք էլ դրսևորում էին գտնում նրա բանաստեղծություններում։ Հոգեկան դրաման, ողբերգական հոգեվիճակը, որ ծնունդ էր հիվանդության գիտակցության ու անհույս սիրո ցավագին զգացումի, բանաստեղծության մեջ արտահայտվում էր տխուր, մռայլ շեշտերով, ընդհուպ մինչև մահաբաղձիկ ցանկություն՝ հոգեկան ծանր տառապանքներից ազատվելու համար։

Առանձին բանաստեղծական ժողովածուներով հանդես եկած, հետագայում նշանավոր հրապարակախոս ու քաղաքական գործիչ Մինաս Չերազը, հայտնի մանկավարժ ու հրապարակախոս Ռեթեոս Պերպերյանը, Հովհաննես Սեթյանը, Տիգրան Սեթյանը, Ալեքսանդր Փանոսյանը վերը հիշատակված բանաստեղծների հետ (Թերզյան, Աճեմյան, Տեմիրճիպաշյան) միասին ամրողջացնում են 70—80-ական թվականների արևմտահայ պոեզիայի դիմագիծը։

* * *

80-ականներին և հատկապես 90-ականի սկզբում արևմտահայ արձակում ծավալված իրապաշտական (ռեալիստական) շարժումը իր ոլորտն է առնում նաև բանաստեղծությունը։ Իրականությունը ռեալիստորեն պատկերելու, կյանքի արդիական հարցադրումներին պատասխանելու պահանջը պայմանավորված էր ազգի առջև ծառացած խնդիրներով։ Բեռլինի համաժողովի խոստացած բարեփոխումներին ի պատասխան Սուլթան Համիդը սկսում է ճնշումներն ու բռնությունները։ Իրականության կենդանի արձագանքը գրականության մեջ հնարավորություն կտար ընթերցող զանգվածներին՝ ճանաչելու բուն կյանքը, սեփական ժողովրդին ու սեփական ուժերը, հաշվեկշռելու գոյատևման ու ազատության համար պայքարի իր հնարավորությունները, իր մարդկային արժանիքները, հետևաբար և կբարձրացներ սեփական արժանապատվությունը։ Պատահական չէ, որ այդ ժամանակ գրողները մեծ հետաքրքրություն են դրսևորում ժողովրդական կյանքի, կենցաղի ու բարքերի, ազգային սովորությունների, ժողովրդական բանահյուսության նկատմամբ։

Իրականության, ազգային կյանքի սթափ քննությունը, բնականաբար, հուսալքի ու երազանքների ռոմանտիկական կերպավորման փոխարեն պահանջում էր ռեալիստական մոտեցում, որ առաջադրվեց և՛ իրապաշտական հոսանքի տեսության մեջ, և՛ հատկապես գեղարվեստական արձակի էջերում (հիշենք Թեկուզ Արփիարյանի ու Զորհրապի պատմվածքների խորագրերը՝ «Կյանքի պատկերներ», «Կյանքը ինչպես որ է»)։

Պոեզիան նույնպես անմասն չմնաց այդ շարժումից, ու թեև առանձին բանաստեղծներ ռոմանտիկական ուղղությանը մշտապես անդավաճան մնացին, սակայն հատկապես նորերը, մղվեցին դեպի նոր մտածողություն, որ իրականությունը իրապաշտորեն պատկերելու պահանջով էր ձևավորվել։ Բանաստեղծների նոր սերունդը ասպարեզ իջավ 90-ականների սկզբին։ Բանաստեղծական առաջին ժողովածուներով հանդես եկան Արշակ Չոպանյանը, Վահան Մալեզյանը, Եվտերպեն (Զարուհի Գալեմքերյան), Ռուբեն Որբերյանը, մասնակցում՝ Սիպիլը, Անայիսը, Կարապետ Ոսկյանը և ուրիշներ։

Թերզյանի, Տեմիրճիպաշյանի ու ֆրանսիական ռոմանտիկների ազդեցությամբ էին ձևավորվել Գալեմքերյանի, Անայիսի, Որբերյանի առաջին բանաստեղծությունները, որոնք ժամանակին քննադատվեցին, բայց արդեն մեկ-երկու տարի հետո գրված նոր բանաստեղծությունների մեջ նկատելի եղան կյանքի ճշմարիտ պատկերներ, բնության վերացական նկարագրությունների կողքին տեղ գտան սոցիալական բնույթի արծարծում-

ներ, կյանքի դառնությունների ու գեղեցկությունների կենդանի պատկերներ, ժողովրդական բանարվեստի ոճավորումներ։

Բանաստեղծների այդ սերնդի մեջ իրենց տաղանդով առանձնանում են Չոպանյանը, Սիպիլը և Ռուբեն Որբերյանը, որ սկսելով 90-ականներին, իրենց բանաստեղծական խոսքը ամբողջացնում են դարասկզբին, միանալով բանաստեղծների հաջորդ սերնդին, կատարելով մի տեսակ կամրջի դեր երկու դարերի միջև։

Ռեալիզմի հաղթանակը այդ շրջանի պոեզիայում առավելապես դրսևորվում է Չոպանյանի ստեղծագործության մեջ։ Չոպանյանը որոշակի գեղագիտական ծրագրով հապկադրվում էր, ինչպես ինքն էր բնութագրում, «գաղափարի», «մտածության» պոեզիային, դրա փոխարեն առաջադրելով առօրյա «սյատկերի» ու «հուր զգացման» պոեզիան, մարդկային իրական ու բնական հոգեվիճակների պոեզիան՝ «հառաչք ու ճիչ, արցունք, արյուն, ժպիտ ու վերք»։ Նկատենք, որ այդ ձգտումը ընդհանրական է դառնում 90—900-ական թվականների մի շարք բանաստեղծների համար նաև արևելահայ գրականության մեջ (Հովհ. Հովհաննիսյան, Ավ. Իսահակյան և ուրիշներ)։ Բանաստեղծական երկու ժողովածուների («Արշալույսի ձայներ»— 1891 թ., «Քրքումներ»— 1892 թ.) հրապարակումից և հատև մամուլում հրատարակված մի շարք բանաստեղծությունների հրապարակումից կապես 1895-ի արյունոտ դեպքերից հետո անցնելով Փարիզ, նա ամբողջովին նվիրվում է հրապարակախոսությանն ու բանասիրությանը, մամուլին, հրատարակչական գործին, նպատակ ունենալով, ինչպես ինքն է խոստովանել, «անմիջական օգուտ բերել ազգային դատին», և սակավադեպ է հանդես գալիս բանաստեղծություններով, որոնք նախորդների հետ միասին հրատարակում է 1908 թ., «Քերթվածներ» խորագրով։ Չոպանյանի բանաստեղծությունը կարևոր սկիզբ էր այն կենսաբաբախ պոեզիայի համար, որ թափ էր առնելու դարասկզբին, արևմտահայ նշանավոր բանաստեղծների շնորհիվ։

Սիպիլի առաջին բանաստեղծությունները լույս տեսան դեռ 80-ական թվականների վերջերին, սակայն ռեալիզմի նկատմամբ նրա հակումը 90-ականին էր և մի ամբողջ տասնամյակ, թեև տպագրվում էր միայն մամուլում (առաջին ժողովածուն լույս տեսավ 1902 թ.), նա պոլսահայ ճանաչված ու սիրված բանաստեղծուհին էր։ Դեռևս 90-ականի սկզբին Գ. Զոհրապը Սիպիլի մասին գրել է. «Նրա շեշտը անկեղծության շեշտն է, գծած պատկերները անշուշտ կապրին իր սրտին մեջ և ինքը կզգա, կտեսնե զանոնք»։ Դարասկզբին Սիպիլը արդեն հայտնի անուն էր ոչ միայն պոլսահայ միջավայրում։ Ժամանակակիցը հիշում է, թե վ. Տերյանը շատ էր սիրում Պեշիկթաշլյանին, Դուրյանին, Սիպիլին ու «որքան հաճախ արտասանում էր Սիպիլի «Ամպը» և «Խունկը» բանաստեղծությունները»։ Սիպիլը «արվեստագետ» սերնդի բանաստեղծներից էր, որ հոգ էր տանում բանաստեղծական խոսքի հղկմանը, երաժշտական հնչեղությանը, պատկերավորությանը։ Սիպիլը ունի բանաստեղծի դիտողականություն, հոգեբանական նուրբ վերլուծումներ (մանավանդ կանացի հոգեբանության)։ 95—96-ի ջարդերից հետո, երբ սուլթանական ռեակցիան գնալով ուժգնանում է, Սիպիլի խոսքը դառնում է ավելի կշռկանդված, և «անմեղ» թեմաների շրջանակում նա փորձում է հուսալքման տրամադրությունները ցրել իր հոգու «հույսի հեղեղներով», հայրենի հոգիներին գեթ «ցողի մի շիթ» հասցնելու ցանկությամբ։ Մեծ թռիչքների բանաստեղծուհի չէր Սիպիլը, բայց բանաստեղծական մի շարք գոհարիկ էջերով, որոնք ճշմարիտ արտացոլումն էին ժամանակի հոգեբանության, բանաստեղծուհին ուներ իր ընթերցողը և գնահատված էր քննադատության կողմից։

90-ական թվականների արևմտահայ պոեզիայի մասին խոսելիս չպետք է մոռանալ

երեք անուն, երեք տաղանդավոր բանաստեղծի, որոնք ճակատագրի բերումով հնարավորություն չունեցան դրսևորելու իրենց տաղանդը։

Կորյուն Մկրտիչյան, Գարեգին Պեշկյոթուրյան, Կարապետ Ոսկյան։ Երեք վաղամեռիկ բանաստեղծ, երեք պայծառ անուններ։

Մուշի Զիարեթ գյուղում ծնված Կորյուն Մկրտիչյանը էջմիածնի Գևորգյան ճեմարանը ավարտելով՝ աշխատանքի է անցնում Կարինի Սանասարյան վարժարանում, դասավանդելով հայոց լեզու և գրականություն։ Հանկարծահաս խոլերան նրան գամում է անկողնուն և խլում նրա կյանքը 1892 թ., քսանվեց տարեկանում։ Գավառացի երիտասարդ բանաստեղծը կյանքի վերջին տարում մի քանի ակնարկներ էր տպագրել պոլսահայ մամուլում, բանաստեղծությունները դեռ անտիպ էին։ Չորս տասնամյակ հետո միայն աշակերտներից մեկը նրա ձեռագիր բանաստեղծությունների մի փունջ հրատարակեց ամերիկահայ մամուլում։ Այդ բանաստեղծությունները հաստատում են, թե Մկրտիչյանը առաջիններից էր 80—90 -ական թվականների բանաստեղծների շարքում, ովքեր անձնական քնարերգության մեջ արծարծեցին նաև հասարակական խնդիրներ, նրանցից, ովքեր իրենց հայացքը ուղղեցին ժողովրդական բանահյուսությանը, մշակելով մեր լեգենդներն ու զրույցները՝ լայնացրին դուրյանական սիրո երգի հունը։

«Գավառի Դուրյան» անվանեցին խարբերդցի Գարեգին Պեշկյոթուրյանին, որ Դուրյանի պես նվիրված էր պոեզիային, նրա ցավն ուներ կրծքի տակ, ու այդ ցավից ծնունդ առան բանաստեղծություններ, որոնց մեջ նրա տառապող հոգին էր՝ կյանք ու արևի ձգտող, որոնող ու չգտնող, հուսահատությամբ ու զայրույթով լեցուն։ Նույն հիվանդությունն էր՝ թոքախտը, որ կտրեց նրա կյանքի թելը 1891 թ., կյանքի 23-րդ գարնանը։ Ժամանակակիցների վկայությամբ նա՝ Խարբերդի Նփրատ գոլեջը փայլուն գնահատականներով ավարտած և նույն գոլեջում անգլերեն ու երաժշտություն դասավանդող Գարեգին Պեշկյոթուրյանը բանաստեղծություններ էր գրում, հրաշալի նվագում էր դաշնակի վրա, երաժշտություն էր հորինում, խմբագրում էր գոլեջի խմորատիպ «Ասպարեզ» հայրենասիրական ուղղվածություն ունեցող ամսաթերթը և ...ահա ծանր հիվանդությունը... Տարիներ անց ընկերները հրապարակեցին նրա մի քանի բանաստեղծություններն ու արձակ խոհերը։ Եվ այդքանն է միայն այսօր հայտնի մեզ։ Ու մեկը դրանցից՝ «Սրինգը», որի համար հեղինակը նաև երաժշտություն է հորինել, անմիջապես սիրվեց ու տարածվեց, մտավ դասագրքերի ու հատընտիրների մեջ, դիմացավ ժամանակի քննությանը, քանի որ տառապած հոգու անկեղծ մի պոռթկում էր՝ բանաստեղծական հետաքրքիր ձևի մեջ՝ զրույց իր սրինգի հետ, հոգեկան ծանր մի դրամայի, մի ամբողջ կենսագրության պատմություն։ Իսկական, ճշմարիտ պոեզիա։ «Ես սիրով մի հատոր իմ բանաստեղծություններից կտայի «Սրինգի» տակ ստորագրելու համար»,— մի առիթով ասել է Ավ. Իսահակյանը։

Դուրյանի հետևորդներից էր նաև Կարապետ Ոսկյանը, որ 1901 թ. 31 տարեկան հասակում հրաժեշտ տվեց կյանքին՝ Դուրյանի հիվանդությամբ։ 90-ական թվականներին մամուլում լույս տեսած բանաստեղծություններով (գիրքը տպագրեցին ետմահու) Ոսկյանը սիրված ու շատերի կողմից գնահատված բանաստեղծ էր։ Տեմիրճիպաշյանը նրա պոեզիան անվանում էր «զգայազղու, զգայատու», «վսեմ»։ Նրան բարձր է գնահատել Սիպիլը։ Հերանուշ Արշակյանը խոստովանել է՝ «Ոսկյան իմ ամենասիրած բանաստեղծը եղած է, ինչպես Դուրյանը։ Իր գրածները ցավի աղաղակներ են, ան ալ Դուրյանի պես իր մահը նախատեսած է»։

Ոսկյանի բանաստեղծությունները, հատկապես 95-ի շարդերից ու բռնություններից հետո գրված, բռնապետության շրջանի արտահայտությունն էին, ազգային-հասարակական ու անձնական վշտի դրսևորումներ։ «Բնության զգացողությամբ լցված հոգի մըն էր» Ոսկյանը, բարի, ազնիվ ու մաքուր մի հոգի, որ դեմ-հանդիման կանգնեց բռնության ու մահվան ուրվականին և ցավագնորեն ապրեց այդ գրաման։ Բայց նույնիսկ այդ պահերին, որ լիքն են խախիծով, հուսալքությամբ, նա կամենում է մարդկանց ներշնչել հույսի, սպասման հավատը։ («Նետում մաշած սիրտս հողին, դուք հավատալով դեռ ապրեցեք...»)։

90-ական թվականներին, մանավանդ 95-ից հետո արևմտահայ բանաստեղծությունը հաճախ մղվում է անձնական ապրումների ոլորտ, սիրո, բնության, հոգու ցավի երգը հնչում է անձկորեն ու տրտում, պահելով մարդկային ապրումների մի համակրելի երանգ։ Բանաստեղծության այդ որակը լավ է բնութագրել դարասկզբի արևմտահայ նշանավոր քննադատ Արտաշես Հարությունյանը այդ սերնդի հայտնի բանաստեղծներից մեկի՝ Վահան Մալեզյանի առիթով. «Դյուրագրգիռ, թրթռուն նկարագիր մը, խորհրդապահ սարտամության մտերիմ խոսք մը, քաղցր ու արցունքոտ տրտմություն մը, ճակատագրական ուժերու փուչ համակերպորեն գլուխ ծռող անձկության շեշտ մը»։ Այս գիծը շարունակվում է արևմտահայ բանաստեղծության մեջ նաև դարասկզբին, նույնիսկ ավելի է ընդգծվում, քանի որ Համիդյան ռեակցիան գնալով խորանում էր, ազատ միտքը՝ բանադատվում։ Բայց դարասկզբի արևմտահայ պոեզիան բերում էր նաև մի ուրիշ սրակ, որ կապվում է այն սերնդի անվան հետ, որ ստեղծագործեց արտասահմանում։

* * *

Ինչպես արդեն ասել ենք, 1895—96-ի շարդերից հետո, մինչև 1908 թվականը արևմտահայ պոեզիայի համար առանձնացող մի շրջան է, և մշտապես աչքի առաջ պետք է ունենալ նրա երկճյուղ զարգացման իրողությունը։ Պոլսում ու գավառներում շարունակվող ու ահագնացող բռնության պայմաններում այդ պոեզիան շրջանակվեց անձնական քնարերգության մոտիվներով, իսկ արտասահմանում գտնվող բանաստեղծները, քաղաքական ազատության պայմաններում, ազգային տառապանքի ու ազատության համար պայքարի երգը հնչեցրին։ Ազատ, չբռնադատված միտքը կարող է թռիչքներ գործել, և այդ շրջանի պոեզիան իրոք գործեց այդ թռիչքը։

Ցնցած բռնություններին՝ գրական կյանքը Պոլսում շարունակվում էր. գրական մամուլ, գրքերի հրատարակություն, գրականության զարգացման հարցերի շուրջ գրական վեճեր, մամուլում ու առանձին գրքերով հանդես եկող բանաստեղծների քանակը նույնպես պակաս չէր։ Շարունակում էին ստեղծագործել ավագ սերնդի բանաստեղծները՝ Թերզյանն ու Ահնդյանը, Տեմիրճիպաշյանն ու Սեթյանը, 80—90-ականներին գրական ասպարեզ իջած Զ. Գալենքերյանը, Անայիսը, Ալ. Փանոսյանը, Սիպիլը, Վ. Մալեզյանը (Պոլսից հեռացավ 1900 թ.), Ռ. Թրթերյանը (արտասահման անցավ 1904-ին), Արտաշես Հարությունյանը, դարասկզբին նրանց միացան նոր բանաստեղծներ՝ Տիրան Չրաքյան (Ինտրա), Միսաք Մեծարենց, Հրանտ Նազարյանց, Լևոն Էսմանյան, Էդվարդ Գոլանճյան, Հերանուշ Արշակյան։

Պոլսահայ այդ շրջանի բանաստեղծությունը՝ զրկված ազգային ու հասարակական հարցերին արձագանքելու հնարավորությունից, մղվեց դեպի այսպես կոչված անձնական թեմաները՝ անձնական վիշտ ու ցավ, սեր ու բնություն։ Ու հիշված բանաստեղծներից յուրաքանչյուրը յուրովի, բանաստեղծական խառնվածքի ու տաղանդի իրենց հնարավորության սահմաններում, մի երանգ բերեց պոլսահայ պոեզիային։ Դարասկզբի բանաստեղծների այդ նոր սերնդից շատերը չընդգծվեցին իրենց ինքնատիպությամբ, թեև երբեմն ստեղծեցին նաև հաջողված գործեր, ստեղծագործելու անազատությունը, կենսական մեծ թեմաներ շոշափելու արգելքը խանգարեցին նրանց ստեղծել մեծ արվեստի գործեր և քչերը միայն, բնածին տաղանդները կարողացան հաղթահարել թեմատիկ ու գաղափարական սահմանափակումները և ստեղծել ճշմարիտ արվեստի ստեղծագործություններ (Միսաք Մեծարենց, Հերանուշ Արշակյան, Ինտրա, Ռուբեն Որբերյան)։

Մանկության օրերի ու դայրերի վերհուշի, կարոտի թեմաներով Որբերյանն ստեղծեց «Գյուղիս ճամփան», «Տնակս» անկեղծ ներշնչանքի բանաստեղծությունները։ Կենսասիրությամբ, բնության զգացողությամբ լցված մի շարք հաջողված բանաստեղծություններ ստեղծեց նշանավոր քննադատ ու բանաստեղծ Արտաշես Հարությունյանը («Լքված քնար» և «Երկունք» ժողովածուները)։

Հարությունյանի պոեզիան նույնպես բռնապետության շրջանի ծանր մթնոլորտի արձագանքն էր՝ անհուսության, հուսալքության ու սպասման տրամադրություններով, խուլ բողոքի ու տրտունջի և ելքի որոնման արտահայտություններով, որ ի վերջո որպես մխիթարանք գտնում էր մայր բնությունը և սերը։ 1899-ին բանաստեղծ ու քննադատ Հարությունյանը իր մի հոդվածում ընդգծելով այդ օրերի բանաստեղծության մեջ «կենսական ու ծանրակշիռ հարցերի» բացակայությունը և «անկումի պարագան» այդ վիճակից դուրս գալու իբրև ելք առաջարկում էր հայրենի բնությունն ու մարդկանց կյանքը, գավառը դարձնել պոեզիայի նյութ։ Մ՛վ հուսալքման, և՛ երազի ու սպասման, և՛ բնաշխարհին մերձենալու տրամադրություններով Հարությունյանը հարազատանում է իր կրտսեր հոգեղբոր՝ Միսաք Մեծարենցի հետ, որ իր տաղանդով վեր կանգնեց այդ օրերի պոլսահայ մյուս բոլոր բանաստեղծների մեջ։

Բայց Մեծարենցից առաջ հարկ է հիշել ևս երկու անուն, որոնց և Մեծարենցի ճակատագրերի ու ստեղծագործության միջև դիտարկելի կողմեր կան և միասնաբար ներկայացնում են այդ շրջանի պոլսահայ պոեզիայի բնորոշ մի քանի գծերը։ Անձնական սիրով ու բնությամբ լեցուն, ի ծնե բանաստեղծ-արվեստագետի էությամբ օժտված երեք ինքնատիպ անհատականություն, որոնց հոգեկան ծանր դրաման վերջնակետվեց ողբերգական ավարտով։ Տիրան Չրաքյան, Հերանուշ Արշակյան, Միսաք Մեծարենց։

15-ամյա Հերանուշ Արշակյանին բաժին ընկավ Դուրյանի «ցավը»։ Բժիշկների խորհրդով նա թողեց դպրոցը, մեկնեց գյուղ, բնությամբ բուժվելու և ֆիզիկական ու հոգեկան տառապանքների երկու տարի (1903—1905) ընդամենը կարողացավ ստեղծագործել։ Նա բանաստեղծ էր ծնվել և այդքան երիտասարդ տարիքում, ինչպես գրում է գրականագետ Սիմոն Հակոբյանը, «ասել է այնպիսի խոսքեր, որ կյանքի փորձ ունեցողները կրնան, ասել է իսկական բանաստեղծի ձևով»։

Որբության, նյութական զրկանքների, անբուժելի հիվանդության զգացողությամբ լցված աղջնակը ժամանակից վաղ հասունացավ, և իր ժողովրդի ազգային ու սոցիալական վիշտը նույնպես հասու եղավ նրան։ Ու այդ ամենի միագումար մորմոքը դրսևորվեց նրա երգերում, արձակ էջերում։ Եվ ճշմարիտ ցավը ճշմարիտ բանաստեղծություն դարձավ։ Բնության ու կյանքի գեղեցկության զգացողությունը, մարդկանց նկատմամբ զարմանալի սերն ու կարեկցանքը դեմ էին առնում մահվան գիտակցությանը և հոգու խորքում փոթորկվող դրաման ելք էր փնտրում՝ մերթ որպես բողոք ճակատագրի դեմ,

մերթ որպես անանձնական սիրո ալիք։ Գրեթե նույն ժամանակ գրական ասպարեզ իջած Մեծարենցի համար սպես կրկնվելու էր նույն ճակատագիրը, չանցած մեկ-երկու տարի։

1890-ականի սկզբին՝ գրական ասպարեզ իջած, բանաստեղծական ու նկարչական ակնհայտ շնորհներով օժտված 16-ամյա Տիրան Չրաքյանը իր առաջին ելույթներով դրավեց բոլորի ուշադրությունը։ Սակայն «հիվանդոտ ու ջղային, հոգեկան անձկություններու ենթարկված», բանաստեղծ-նկարիչ արվեստագետի գերզգայուն հոգին փոթորկվեց 1895—96-ի ջարդերից, և փոքր-ինչ խաթարվեց հոգու հավասարակշռությունը։ Իսկ հետագա տարիների մղձավանջը, հայի ու անհատի ազատության նկատմամբ ծայրահեղ բռնությունները նրան մղեցին հոգեկան որոնումների՝ բնություն, աստված, տիեզերք, սիրո անգո իդեալ։ Ու ծնվեց «Ներաշխարհ» քնարական արձակ պոեմը, բանաստեղծական ինքնատիպ մի երևույթ, որ գրվելով 1898—900 թթ., լույս աշխարհ եկավ Մեծարենցի գրքերից մեկ տարի առաջ, 1906-ին։ Իսկ երկու տարի հետո 1908-ին լույս տեսավ երկրորդ՝ հնչեակների (սոնետների) գիրքը, որ նրա տխուր, մահվան զգացողությամբ համակված տրամադրությունների արտահայտությունն էր, յուրօրինակ բողոք սրևմտահայ կյանքի այն տարիների մռայլ իրականության դեմ։ Հետո նրա հոգու մռայլը ավելի խտացավ, աստվածապաշտ էությունը սրվեց։ Իսկ 1915—1916-ի դեպքերը, երկրորդ հարվածով, գրեթե լրիվ խաթարեցին հոգեկան հավասարակշռությունը։ Մոլեռանդ հավատացյալ՝ շաբաթապահ քարոզիչների հետ նա շրջում էր գավառներում ու մարդկանց՝ բոլոր ազգերին, քարոզում սեր ու միություն։ 1915-ի աքսորից փրկված Չրաքյանը աքսոր քշվեց նոր կառավարության հրամանով և 1921 թ. նահատակվեց աքսորի ճանապարհին։

Տիրան Չրաքյանի (Ինտրայի) հոգու թախիծն ու մռայլը, որ ծնունդ էր այն օրերի, նաև Մեծարենցինն էր, սակայն Մեծարենցը համակիր չէր Ինտրայի խորհրդապաշտ արվեստին։ Մեծարենցի հոգեկան ծանր դրաման չպղտորեց նրա երգի ակունքը և օրերի մղձավանջն ու մահազգացողությունը զարմանալիորեն դեմ առան նրա բնապաշտությանը ու մարդասիրությանը։ Թոքախտը նրա մարմնում բույն էր դրել դեռևս 1902-ից, սակայն սրվեց 1905-ից հետո, իսկ կյանքի վերջին երեք տարիները մահվան դեմ մաքառման տարիներ եղան։ Ու հենց այդ տարիներին էլ նա ստեղծեց իր երկու գրքերը՝ «Միածանն» ու «Նոր տաղերը»։ Չարմանալի է, այն նույն ժամանակ, երբ նրա աչքերի առաջ ուրվագծվում էր մահվան ուրվականը, նա իր հայացքը հառում էր մարդկանց, կյանքին, բնությանը։ Հոգու աչքերով նա տեսնում էր բնության՝ ծառ ու ծաղկի, դաշտ ու առվակի բանաստեղծությունը, ունկնդրում էր բնության ներդաշն մեղեդիները։ Ասես ժամանակ չուներ մահվան հոգսով զբաղվելու, նա շտապում էր մարդկանց բանալ Սիրո խորհուրդը։ Ճակատագրի՝ Աստծո դեմ, որպես բողոքի խոսք, նա դեպի մարդիկ ու կյանքը ունեցած իր անսահման սերն էր պատնեշում։ Աստված նրան մահ էր բերում, իսկ նա Աստծուց կյանք չէր աղերսում, այլ ուրախություն, բայց ոչ իր համար, այլ ուրիշների, խնդրում էր «անանձնական ուրախություն», որ բաժանի ամենքին՝ «պարզ մարդերուն՝ գեղջուկներին ու բանվորին, ծերին, կույսին, մանկան», ամենքին։ Նա երազում է դառնալ բնության տարբեր երևույթներ («Ելլայի՜, ելլայի՜» շարքը), որ կարողանա օգտակար դառնալ մարդկանց։ Այս անանձնական նվիրումը յուրօրինակ բողոք է ճակատագրի դեմ, բայց հոգեկան տառապանքը, հոգեկան ծանր դրաման, որ ծնվում է կյանքի, մարդկանց ու բնության նկատմամբ իր մեծ սիրո ու իրեն բաժին հասած անձնական ու հասարակական տառապանքների հակադրությունից, մնում է և դառնում երգ։ Դառնում է բնության պաշտամունք, սիրո ու երազի անբջանք, արևապաշտություն։ Մեծ

բանաստեղծները իրենց անձնական տառապանքի մեջ խտացնում են իրենց ժամանակը, հասարակական կյանքի տագնապները հնչեցնում են որպես սեփական տառապանք։ Բանաստեղծը իրեն «լուսաբաղձ հիվանդ» է անվանում ու «սպասման հիվանդ», և «Միածանն» գիրքը բնութագրում որպես «սպասման երկարաձիգ գիշեր մը՝ աղերսանքներով, հոգսերով, ցավերով ու երբեմն ալ կայծկլտուն հույսերով լեցուն»։ Եվ «երկարաձիգ գիշերի» մեջ «սպասման հիվանդը» առավոտվա երազն է փայփայում, «Ցայգերգի» ու «Այգերգի» ընթացքով հասնում արևին, որ նոր օրվա, նոր կյանքի խորհրդանիշն է՝ «Գիտի ըմպեմ բոցն արևին, ճառագայթի եմ ծարավի»... Հրաշալի կերպավորումն է սա իր սերնդի տառապանքի ու երազի, համիդյան բռնապետության վերջին տասնամյա շրջանում։ Ծանր իրականությունից ու հոգեկան ծանր դրամայից ձերբազատվելու, դուրս գալու ձգտումները չեն ավարտվում լուսայգի ու արևի տենչանքով, նրա հոգին «դեպի կյանք կվազե խանդավառ ու բաղձալից»։ Նա գտնում է բանաստեղծական մի իրականություն՝ բնության հրաշք ներդաշնակությունները, գյուղական կյանքի «խաղաղ մեծությունները», հողագործի մտերմությունը հողի հետ։ Ու այստեղ է, որ բանաստեղծի նրա աչքը տեսնում է գույներ, գեղեցկություններ, լսում է բնության հրաշք մեղեդիները, տեսնում անտեսանելին, տեսնում է զարմանալի իրական ու նուրբ պատկերներով։ Կենդանացնում է բնությունը, հողագործին, աշխատանքը։ Մեծարենցի մեծ տառապանքից ծնվում է մի մեծ կենսասիրություն, որով էլ նա առանձնանում է դարասկզբի պոլսահայ բանաստեղծների մեջ։ Եվ առանձնանում է նաև իր բանաստեղծական մտածողության պատկերային համակարգով, իր զգայնությամբ, իր ձայնով՝ «գորովոտ ու խանդաղատ»։

* * *

Ի տարբերություն պոլսահայ բանաստեղծության, 1896—1908 թթ. արևմտահայ բանաստեղծության մյուս ճյուղը՝ արտասահմանի բանաստեղծությունը, ուրիշ հուն և ընթացք ունեցավ։ Թուրքական բռնությունից հեռու, ազատության մեջ հնչեց հայրենիքի տառապանքի ու ազատության անկաշկանդ երգը, ըմբոստության, արդար վրեժի ու պայքարի բանաստեղծությունը։

Շուրջ երեք տասնամյակ (Պեշիկթաշլյանից ու Դուրյանից հետո) արևմտահայ հայրենասիրական բանաստեղծությունը գրեթե շնչահատ էր։

Դարասկզբին, ի դեմս արտասահմանում գտնվող բանաստեղծների, ինչպես նկատել է Հ. Սիրունին, արևմտահայ «հայրենասիրական քերթողությունը դիմագիծ կփոխեր ու նոր քերթողներուն մեջ նոր հայրենիք մը կարթնար, այս անգամ միսով-ոսկորով, իրական հուզումներով ու խռովքներով»։

«Բռնակալության թաթին տակ կքած» հայությունը գլուխ էր բարձրացնում։ Բանաստեղծական ազատ միտքը որսում է զանգվածի վշտի և ըմբոստության բարձրացող ալիքը, ծնվում է տառապանքի ու պայքարի, ցավի և ուժի նոր երգը։ Հրապարակ են իջնում Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը։

Նորովի է դրսևորվում «Թուրքական գեհենից» հեռավոր Աֆրիկա հասած Ռուբեն Որբերյանի տաղանդը։ Ու հենց նրանք էլ ստեղծում են արևմտահայ հայրենասիրական պոեզիայի նոր որակը։

Իրական հայրենիքի, տառապող ու երազող ժողովրդի կենդանի գոյությունն է կեր-

պավորվում այդ պոեզիայում։ Սկսում էր Սիամանթոն. «Իր ձայնը լռեցուց բոլոր կա-
կազմունները։ Իր մուտքը եղավ մրրկային իր արվեստին պես ու հետևաբար բարի ու
վճռական»,— գրել է Վարուժանը։ 1901—1908 թթ. Սիամանթոն լույս ընծայեց հայոց
տառապանքը, ըմբոստությունն ու պայքարը ոգեկոչող հինգ ժողովածու։ Առաջինը
«Դյուցազներենն» էր։ 1895—96-ի ջարդերի պատկերները որպես մահվան տեսիլներ ու
ծանր մղձավանջ կերպավորվեցին առաջին բանաստեղծություններում։ Սակայն գրքում
դրանք տեղ չգտան։ Առաջին գրքում հայրենիքի տառապանքից ավելի նա երգեց տա-
ռապանքի դեմ ըմբոստացող ոգին, նկարագրելով հերոս հայորդիներին, որ հայրենիքի
ազատության համար ելել են պայքարի, կռվում են և հաղթում։ Հետո այդ ըմբոստան-
երին և նրանց պայքարի դրվագները տվեց «Հայորդիներ» շարքի մեջ։ Հետո տառապան-
քի ահազարգուր պատկերները հավաքեց «Հոգեվարքի և հույսի ջահեր», ավելի ուշ
«Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուների մեջ։ Ըմբոստության, պայքարի երգով
էլ հենց Սիամանթոն բերում էր հայրենասիրական երգի նոր որակը, որ փոխանցվեց ու
ծավալվեց Վարուժանի, Սեակի և այլոց գործերում։ «Ես երգելով կուզեմ մեռնիլ» բա-
նաստեղծության մեջ Սիամանթոյի իդեալ հերոսը՝ հայրենիքի ազատության կռվին մեկ-
նող գեղեցկադեմ հայորդին, բանաստեղծին պատգամում է «Ցեղին ցավը և ցեղին ուժը
բանաստեղծել» և այդպիսի մի երգ է ուզում, որ ունենա իր շուրթերին ազատության
համար կռվի ու մահվան ժամին։ Բոլոր ռոմանտիկների նման Սիամանթոյի՝ երգի մա-
սին ունեցած այս բարձր կարծիքից զատ, կարևոր է հիշել այդ երգի բովանդակային
կողմը, որ Սիամանթոյի ստեղծագործության ոգին է ու սկզբունքը՝ երգել «Ցեղին ցավը
և ցեղին ուժը»։ Հայրենիքի ցավի ու տառապանքի լալկան երգի փոխարեն բանաստեղծը
առաջադրում էր ծանր տառապանքից ծնվող վրեժի, ըմբոստության, պայքարի, ասել է՝
ուժի փառաբանության երգը։ Տառապանքի, մահվան ու շարշարանքի իրական տեսիլ-
ները, ռոմանտիկ բանաստեղծի երևակայությամբ մեծացված ու խտացված պատկերնե-
րով, որ բերում է Սիամանթոն, նպատակ ունեն արթնացնել ըմբոստության ու պայքա-
րի (ինչու չէ՝ նաև վրեժի) տրամադրություններ և պայքարի ելած հայորդիների լուսա-
վոր կերպարները ներշնչում են հավատ սեփական ուժի ու հաղթանակի նկատմամբ։

Սիամանթոյի պոեզիան անմիջական մղումներ տվեց Բելգիայի Գենտ քաղաքի հա-
մալսարանի ուսանող երիտասարդ Վարուժանի հայրենասիրական երգին, որ ստեղծվեց
հատկապես 1905—1908 թթ. ընթացքում։ 1907 թ. Զոպանյանի «Ծնահիտ» հանդեսում
ու նաև առանձին հրատարակված (1909-ին «Ցեղին սիրտը» ժողովածուի մեջ մտած)
«Ջարդը» ընդարձակ քերթվածի մասին Վարուժանը մի նամակում ասել է «...արդուն-
քիս, ցասումիս և հեգնությանս մեկ խմորումն է...»։ Բառերն այս մի-մի խորհրդանիշ
են։ Արդունքը ժողովրդի ու բանաստեղծի վշտի, տառապանքի խորհրդանիշ է, ցասումը՝
համբերության հատնումի ու քնվզման, հեգնությունը՝ դիմադարձ ոգու, ըմբոստացման
ու պայքարի։ «Ջարդի», ապա և «Ցեղին սիրտը» ժողովածուի մեջ ժողովրդական կյանքի
եռացող հուզումների շարժման ընթացքի պատկերն է, դարձյալ ցեղի ցավի և ուժի ներ-
կայացման սկզբունքով։ Սիամանթոյի նման, մի նոր երանգով, Վարուժանը բերում էր
հայոց տառապանքի ու ընդվզման երգը՝ հաղթանակի աներկբա հավատով։ Սրտաբուխ
արցունք, բայց ոչ լալկանություն, ոգի, բայց ոչ հուսալքության ոգի, այլ զայրույթ ու
հեգնություն, պայքարի կոչ, հավատի ներարկում։ Հավատ՝ «արշալույսի մը», սեր՝
մարդկանց ու հայրենիքի նկատմամբ։ Ավերակված երկրի ու մորթվող հայրենակիցների
պատկերները Վարուժանը ոգեղում է սիրո տաք շողերով, հայրենիքի ըմբոստ զավակ-
ների, ազատության համար պայքարի ելած առաքյալների ու մարտիկների կերպար-

ները ներկայացնում է լուսապսակով, հնչեցնում է ազգային ու մարդկային արժանա-
պատվության պատգամները՝ իր խոսքի մեջ դնելով կիրք ու պաթոս, խրոխտ ու առնա-
կան շնչեր, որ անմիջաբար փոխանցվում են ընթերցողին։

«Ցեղին սիրտը» ժողովածուի սկզբում «Նախերգանքից» հետո զետեղված «Զոն»
բանաստեղծության մեջ, որ հայ հայրենասիրական պոեզիայի գոհարներից մեկն է, ձևի
ու բովանդակության կատարյալ ներդաշնակությամբ, Վարուժանը խտացրել է գրքի ամ-
բողջ նյութի գրեթե բոլոր կողմերը, ոգին՝ գաղափարի և զգացմունքի շարժման, զար-
գացման տրամաբանական ընթացքով։ Լույս արարող հին հայրենիքի լուսավոր պատ-
կերից խորհրդանիշ բառերի զարմանալի նրբերանգներով նա անցնում է ներկա կյան-
քին, որ պանդուխտներին հանջող կարոտախտն է, կրակի ու սուրի զոհերը, ամայացած
հայրենի օջախները, ապա, որպես ելք ու եզրակացություն, պայքարի ու վրեժի կոչը։
Եվ գրքի երեք բաժիններում («Բագինին վրա», «Կրկեսին մեջ», «Դյուցազնավեպեր»)
նա բացում է «Զոնի» խորհրդանիշները, մանրամասնում տառապանքի ու պայքարի
պատկերները։ Անցյալի պատկերները հնչում են որպես ոգեկոչում ազատ հայրենիքի,
որպես հայրենիքի ոգու արթնացման ազդակներ։ «Կրակի ու սուրի» զոհերի պատկեր-
ների մեջ, ջարդի զարհուրելի տեսարանների մեջ բանաստեղծը «բարբարոս ոգուն», որ
վայրենի ու գազանաբարո թուրքն է, հանդիմանում է «խաղաղ հոգիներին», որ աշխա-
տավոր, ստեղծագործ հայ մարդն է, բարիքներ ստեղծող հողագործը։ Կան հայոց տա-
ռապանքի նաև ուրիշ կողմերը՝ պանդխտությունը, աղքատությունն ու թշվառությունը։
Եվ կան վերջապես ազատության համար պայքարի կրկես, արենա մտած քաջարի
հայորդիները («Կրկեսին մեջ» շարքը)։

Հայոց տառապանքի և ազատության մեծագույն երգիչները դարձան Սիամանթոն ու
Վարուժանը։ Երկուսն էլ պատկերում էին տառապանքը, բայց ոգին ու արցունքին հա-
կադրում էին ընդվզումն ու պայքարը, փառաբանում էին մարտնչող ու զոհաբերվող հե-
րոսներին, երգում էին ազատության համար պայքարի վսեմությունը, հայրենիքի վե-
րածնության հավատը։ Սիամանթոն ուզում էր Եվրոպային՝ այդ քաղաքակիրթ աշխար-
հին ցույց տալ հայոց տառապանքը՝ հուսալով նրա օգնությունը, Վարուժանը չհավա-
տաց այդ օգնությանը, այլև՝ մերկացրեց նրանց շողոքորթ քաղաքականությունը։ Սիա-
մանթոն չափազանց խորանալով կոտորածների տառապանքի մեջ, հնչեցրեց համա-
մարդկային իդեալներ, Վարուժանը տեսավ նաև ուրիշ տառապանքներ՝ ազգային ազա-
տագրական պայքարի գաղափարից հասնելով սոցիալ-քաղաքական պայքարի գաղա-
փարին, առաջադրելով ընդհանրապես բռնության վերացման գաղափարը։

Եվ տարբեր էին նրանք իրենց բանաստեղծական շնչով, պատկերավորման եղանա-
կով, գեղարվեստական մտածողությամբ։ Սիամանթոյի անհատականությունը թերևս
ամենալավ ձևով բնութագրել է Վարուժանը, նրա տաղանդի տիրական հատկանիշը հա-
մարելով հզոր, անսահման երևակայությունը։ Սիամանթոյին նա համեմատում է առաս-
պելական կիկլոպի հետ, որի ուղեղի վրա բացված միակ աչքը «թե խոշորացույց մըն
է և թե գեղադիտակ մը, որ ամեն բան կտեսնե հսկայական համեմատությամբ։ Երևա-
կայության միացած զգայարանքը՝ հռետորություն կծնի, երևակայության միացած
զգացումը կծնի վսեմը։ Ցարճանյանի արվեստը արդյունք է այս զուգավորումներուն»։
Սիամանթոյի տաղաչափությունը ազատաչափն է։ Նրա տողերը ոչ շեշտ ունեն, ոչ հանգ
և ոչ էլ չափված վանկեր։ Նրանց ներդաշնակությունը պայմանավորված է պատկերը
մեկ տողում խտացնելու և տողը մեկ շեշտով արտասանելու հանգամանքով։

Վարուժանը առաջավոր ռոմանտիկների նման, իր իդեալի, երազանքի որոնումներում գնում է դեպի իրականությունը՝ Ստույգը։ Եվ իրականության պատկերները ունեն թանձր գույներ, ներկայացվում են մանրամասների մեջ, հստակ ձևեր ունեն ու զարմանալիորեն կենդանի են, հանգամանքներ, որ ոմանց հիմք էին տալիս իրապես ռոմանտիկ Վարուժանին իրապաշտ (ռեալիստ) անվանելու։ Վարուժանի բանաստեղծական ոճը առավելապես քանդակային է, նկարագրական, էպիկական։ Եվ որովհետև կենդանի կյանքի պատկերներն է քանդակում, կյանքի կենդանի ռիթմն է դարձնում տեսանելի, կյանքի շարժումը։ Նրա ոճի բնորոշ հատկանիշներ են պաթոսը, կիրքը, խոսքի հորդարուխ ուժն ու առնականությունը։ Պատահական չէ, որ ֆրանսիացի լուք Անդրե Մարսելը Վարուժան բանաստեղծին համարում էր «առյուծների զարմից»։

Հայրենիքի տառապանքի ու ըմբոստության երկու մեծ երգիչներին շուտով միանում է բանաստեղծական մի ուրիշ ինքնատիպ անհատականություն, երիտասարդ Ռուբեն Սևակը (Չիլինկիրյան), որ բժշկություն էր սովորում Շվեյցարիայի Լոզան քաղաքում։ 1907—1910 թթ. Սևակը ստեղծում է շարքերին ու բանաստեղծություններին նվիրված մի շարք հաջողված գործեր, որ մեր ցավի ճշմարիտ արտահայտություններից են։ Թթե «Կարմիր գիրքը» ժողովածուում զետեղված «Զարդին խենթը» և «Թրքուհին» պոեմներում առավելապես տառապանքի պատկերներ են՝ լուռ բողոքով, ապա «Կիլիկյան երգեր» շարքում, «Ով իմ հայրենիքս», «Զանգակներ, զանգակներ», «Հայաստան» և ուրիշ բանաստեղծություններում այդ տառապանքի հետ հնչում է բարձրաձայն բողոքի ու ընդվզման տրամադրությունը, պայքարի կոչը։ Հնազանդության, համակերպության ընդդեմ՝ «մարդկայնորեն կատղելու» ոգով, բանաստեղծը սթափեցնում է մարդկանց, հնչեցնում տագնապի ու պայքարի ահազանգ։ Բանաստեղծը գտնում է, թե իր թշնամուց, ոսոխից, իրեն թալանողից ու սպանողից բարոյապես բարձր կանգնած հայը, վաղվա հավատով ու իր պատմությամբ պարտավոր, պիտի ըմբոստանա, պիտի պաշտպանի իր տունն ու հողը, իր հայրենիքը։ Վիրավոր, մահամերձ մայրը իր կաթնակեր մանկանը վերջին օրորն է ասում և դա սրբազան պատգամ է.

Արյո՜ւն—հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,
Բայց չի փախի՜ս, փարե՛ երկրիդ, զայն սիրե՛,
Հոգիդ վրա գերի մ'ըլլար, այլ տիրե՛...
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս։

Եվ կոչակում է նրան՝ Հայաստանը որպես մայր, և ձեռքի սուրը երկսայրի՝ հոր արյունով թաթախված։

Հայրենիքի տառապանքի ու ազատության համար պայքարի թեմային համահունչ էր հայրենիքի կարոտի թեման, որ հայրենի ափերից հեռու գտնվող բանաստեղծների հոգու սրտաբուխ ճիչն էր։ Հայրենակարոտության, հայրենաբաղձության մարդկային բնական զգացումը ծայրահեղորեն սրված էր երգ դառնում տարագիր հայ բանաստեղծների շուրթերին, քանի որ անմատչելի էին նրանց տունդարձի ճամփաները։

Հայրենիքի սրտամաշ կարոտն է, որ մորմոք է դառնում Սևակի «Կարմիր կարոտ», «Ով իմ հայրենիքս», Վարուժանի «Կարոտի նամակ», «Պատվեր», Սիամանթոյի «Ափ մը մոխիր», Ռուբեն Որբերյանի «Աղվոր ափեր», «Գրնա», «Վարդենին» և ուրիշ բանաստեղծությունների մեջ։ Սիամանթոյի ստեղծագործությունը գնահատելիս Վարուժանը

կարևորում էր նաև այդ կարոտախտը, որ բնութագրական հատկանիշ էր համարում ամբողջ հայ բանաստեղծության համար։ «Օ՜, Սիամանթոյի կարոտախտը։ Այդ բառին մեջ է ամբողջ քերթողը... Հայ բանաստեղծության ոգին կարոտախտ է։ Մեր երգը երգն է կռունկին, հառաչանք մը՝ դեպի թողլքված հայրենի տունը...»։

* * *

Բայց եղավ նաև, որ տարագիր հայ բանաստեղծները հայրենի տուն դառնալու հնարավորություն ստացան։ 1908-ին համիդյան բռնապետության վերացումից հետո նրանք վերադարձան Պոլիս ու գավառները և լծվեցին գրական-մշակութային բեղուն մի գործունեության, որ աննախադեպ էր Թրքահայ իրականության մեջ։ Արևմտահայ գրականությունը, բանաստեղծությունը հատկապես, մի նոր թռիչք գործեց կարճատև շրջանում, 1909-ից մինչև 1915-ը։ Հայոց տառապանքի բանաստեղծությունը մի ալիքով էլ բարձրացավ՝ Կիլիկիայում 1909 թ. տեղի ունեցած ջարդերի անմիջական արձագանքով (Վարուժանի «Կիլիկյան մոխիրներուն» բանաստեղծությունը, Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամես», Սևակի «Կարմիր գիրքը» ժողովածուները), ապա տեղի տվեց բանաստեղծության մի այլ որակի, որի բովանդակությունը հարստացավ նոր համամարդկային թեմաներով։ Արտասահմանից վերադարձածների ու նրանց ուժերի միասնական ջանքերով գրական կյանքը նոր հուն մտավ. գրական նոր մամուլ («Շանթ», «Ոստան», «Մեհյան», «Նավասարդ», «Ազատամարտ-գրական»), բանավեճեր՝ հայ գրականության գալիքի շուրջ, գրական նոր միություններ ու հանգանակներ, նոր գրքեր ու գրական ասուլիսներ, որոնց նպատակն էր ազգային հայեցի նոր գրականության ստեղծումը՝ համամարդկային մեծ արվեստի չափանիշներով։ Անհրաժեշտ էր, Վարուժանի բնութագրմամբ, «մարդ էակին գիրքը գրել», ամբողջ հայ ժողովրդի մեջ բաժանված «մեր սրտին նշխարները» «հավաքել, կեդրոնացնել մեկ կուրծքին տակ և զգալ իր սեփական կյանքը» և այդ՝ «ի սեր Արվեստին, ի սեր կյանքի երգին»։ Այս մտահոգությամբ էր համակված արևմտահայ գրական ամբողջ միտքը, և արևմտահայ բանաստեղծությունը ստեղծեց բարձր արժեքներ. լույս տեսան մի շարք ժողովածուներ ու շարքեր մամուլում, որոնք երևույթներ էին մեր պոեզիայի ամբողջ պատմության մեջ։ Մամուլում լույս տեսավ Սիամանթոյի «Հայրենի հրավեր» շարքը, որ մտավ նրա անմիջապես հրատարակած «Ամբողջական գործեր» ժողովածուի մեջ, Վարուժանը լույս ընծայեց «Հեթանոս երգեր» ժողովածուն, մամուլում լույս էին տեսնում Սևակի սիրո և սոցիալական թեմաներով բանաստեղծությունները, երգեր Վարուժանի «Հացին երգը» շարքից, լույս տեսան Արտ. Հարությունյանի, Սիպիլի, Մալեզյանի, Սեթյանի նոր ժողովածուները, Կ. Ոսկյանի ու Հ. Արշակյանի առաջին ու միակ ժողովածուները (Նտմահու), 900-ականին գրական ասպարեզ իջած պոլսահայ նոր սերնդի բանաստեղծների՝ Լ. Էսաճանյանի, Մ. Պարսամյանի, Հ. Նազարյանի, Հ. Սիրունու ժողովածուները։

Գրական նշանակալի երևույթ էր Վահան Թեքեյանի «Հրաշալի Հարություն» ժողովածուն (1914 թ.)։ Թեքեյանը, արևմտահայ բանաստեղծության նշանավոր դեմքերից մեկը, գրական ասպարեզ իջավ Սիամանթոյի հետ, դարասկզբին, «Հոգեր» (1901 թ.) գրքույկով, սակայն շուտով ճանաչում գտավ որպես խմբագիր, ազգային մշակութային գործիչ, կամաց-կամաց նվաճելով նաև բանաստեղծության բարձունքները ու տասական

թվականներին կանգնեց մեծերի կողքին։ Ճակատագրի բերումով Թեքեյանը եղեռնի զոհերի բախտը չկիսեց, կիսեց թափառական հայի հակատագիրը, շարունակելով ազգային ու գրական բեղուն մի գործունեություն Փարիզում, Պոլսում, Հունաստանում ու Կահիրեում։ Դարասկզբի արևմտահայ բանաստեղծության մեծերից մեկն ու միակը դարձավ սփյուռքի նշանավոր գործիչն ու բանաստեղծը, հրապարակեց բանաստեղծական մի քանի ժողովածուներ, ստեղծեց գրական հարուստ մի ժառանգություն։ Սիամանթոյի ու Վարուժանի հետ ու նրանցից հետո Թեքեյանն ստեղծեց իր ինքնատիպ հայերգությունը (իր բնորոշումն է), որ բանաստեղծական ինքնատիպ մտածողությամբ ներկայացնում է «Հայ ազգին կարճ ատենի մը մեջ ապրած հոգեկան աճումի և կորուստի, հրճվանքի և տառապանքի, հույսի, անհուսության և հետո դարձյալ հույսի, բոլորովին անօրինակ, իրեն միայն հատուկ կյանքը», «այդ կյանքին ներշնչած, արվեստ դարձած հոգին»։ «Իր հայերգությունը բաց վերք մըն է, բայց նաև գրավականը՝ դողդոջուն և համառ հավատքի»,— գրել է Շահան Շահնուրը։ Նրա հայերգության մեջ կերպավորվում է, ինչպես ինքն է ասել, «Փառքն ու արհավիրքը անցյալի, ներկայի շվարումն ու ապագայի տեսիլքը»... Թեքեյանի պոեզիայում հայերգությանը միահյուս է մարդերգությունը։ Նա մարդու երգիչն է, նրա խորունկ ցավերի, սիրո տագնապների ու հուզումների, կյանքի ու մահվան, բնության ու տիեզերքի մասին խոհերի երգիչը։ Եվ Թեքեյանի այդ երգերը՝ նրբաշյուռ ու կատարյալ ձևերի մեջ, որ հաստատումն էին «մարդ էակի վիրքը» գրելու ընդհանուր մտահոգության, սիրեց ընթերցողը, և գրական նոր սերնդի շատ բանաստեղծների համար Թեքեյանը դարձավ ուսուցիչ։

Համիդյան բռնապետության վերացումից հետո, թվացյալ ազատության այդ կարճատև տարիներին, արևմտահայ բանաստեղծությունը որոնումների մեջ էր, և ծնունդ առած նոր գրական շարժումը, որ կոչվեց «Հեթանոսական», նպատակ ուներ բարձրացնել սոցիալ-քաղաքական ամեն տեսակ ճնշումներից խեղճացած մարդկային հոգիների ազատության խնդիրը։ «Հեթանոսական շարժման» բանաստեղծությունը, վերակենդանացնելով նախաքրիստոնեական՝ հեթանոսական շրջանի մարդկային հարաբերությունները, կենցաղը, ընտրում էր այդ կյանքի ինչ-ինչ հատկանիշներ՝ ուժի ու գեղեցկության պաշտամունք, անկեղծություն ու առաքինություն, շիտակություն, մեծարում ու փառաբանում էր դրանք՝ հակադրվելով ներկայի հասարակական հարաբերություններին, մարդկային նորօրյա ապականված բարքերին։ Այդ «օրերուն աղտն ու տգեղությունն էր», որ հեթանոսական շարժման բանաստեղծների «հոգվույն մեջ զզվանք մը կարթնցներ ու կտաներ ետ, դեպի հին դարերը, երբ դեռ մարդիկ չէին խաչած գեղեցկությունը»,— բացատրում է շարժման մասնակիցներից մեկը՝ Հակոբ Սիրունին։ Պատահական չէր, որ շարժման մեծագույն դեմքը՝ Դանիել Վարուժանը, «Հեթանոս երգեր» ժողովածուի մեջ անցյալի և ներկայի պատկերները առանձնացրել էր առանձին շարքերի մեջ («Հեթանոս երգեր» և «Գողգոթայի ծաղիկներ») ընդգծելով հակադրությունը։ Սիրո, գեղեցկության, մարդկային բազում առաքինությունների, տարաբնույթ ապրումների, հուզումների ու հրճվանքների բանաստեղծական կերպավորումը՝ «ի սեր Արվեստին, ի սեր կյանքի երգին»,— եղավ այդ ջրջանի արևմտահայ բանաստեղծության գլխավոր մտահոգությունը։ Իսկ այդ մտահոգությունը թելադրվում էր հայության գրականություն ստեղծելու, հայ ժողովրդի ազատագրական պայքարն արթուն պահելու, նրա հոգևոր ու ֆիզիկական ուժերը համախմբելու ցանկությունից։

* * *

Արևմտահայ բանաստեղծության այս մեծ վերելքը ընդհատվեց 1915-ի դեպքերով։ Իսկ երբ պատերազմի ավարտից հետո Պոլսում կրկին հավաքվեցին արտասահմանից վերադարձած ու թաքստոցներից ելած գրողները, պարզվեց վիճակի ողբերգականությունը։ Ձկայինգրականության մեծերը, որ շունչ ու ոգի էին տալիս այդ գրականությանը։ Նահատակվել էին բանաստեղծներ Սիամանթոն, Վարուժանը, Սեակը, Արտ. Հարությունյանը, գրողներ Զոհրապը, Թլկատինցին, Զարդարյանը, Երուխանը և շատ ուրիշներ։

Կորուստները չափազանց մեծ էին և վերապրողները՝ կենդանի մնացած գրողները՝ չափազանց ընկճված։ Ընկճված էր ամբողջ ժողովուրդը և նրան պետք էր հաղորդել կենսական լիցքեր, նա պիտի ապրեր, պիտի նորեն համախմբվեր և նրան պետք էր կյանքի երգը։ Ու 1919-ին վերահրատարակվող «Շանթ» հանդեսը հայտարարեց լավագույն երգի մրցանակաբաշխություն, երգ, որի նշանաբանն էր՝ «Մենք երգելով կուզենք ապրիլ»։ Եվ պոլսահայ մամուլի, հրապարակախոսության, գրականության նոր զարթոնքի այս վերջին շրջանում (1919—1922) արևմտահայ բանաստեղծությունը փորձում է շարունակել ավանդները։ Փարիզից Պոլիս է վերադառնում Վ. Թեքեյանը և կանգնում է գրական շարժման կենտրոնում։ Իտալիայից վերադառնում է Կոստան Զարյանը։ Նրանց հետ պոլսահայ պոեզիան այդ շրջանում ներկայացնում են դարասկզբին, ապա պատերազմից առաջ գրական ասպարեզ իջած Մ. Պարսամյանը, Լ. Էսահանյանը, Ա. Զարբեգը, Է. Գոյանճյանը, Գ. Կառվարենցը, և նորերից՝ Շ. Միսաքյանը, Հ. Գերպերյանը, Հ. Պողոսյանը, Մ. Զարիֆյանը։ Մամուլը լցվեց նաև բանաստեղծությամբ, լույս տեսան մի շարք ժողովածուներ, սակայն դրանց շնչին մասը միայն ուներ գեղարվեստական արժեք։ Հիշատակելի են Թեքեյանի մամուլում լույս տեսած բանաստեղծությունները, Գևորգ Կառվարենցի «Գեթսեմանի ծաղիկներ» (1921), Կոստան Զարյանի «Օրերի պսակը» (1922) և Մաթևոս Զարիֆյանի «Տրտմության և խաղաղության երգեր» (1921) ու «Կյանքի ու մահվան երգեր» (1922) ժողովածուները։

Փարիզում 1919-ին լույս էր տեսել Թեքեյանի «Դեռ գիշերն մինչև արշալույս» խորագրով ժողովածուն, նա Պոլիս եկավ 1920-ին և իր նոր երգերում փորձում էր խորանալ «արշալույսի» տրամադրությունները։ Ջոռուանակով անցած տարտափներն ու չպիտացած վերքերը, հայ որբերին, նա ձգտում է իր երգը լցնել կյանքով, ազնիվ երազներ բերել մարդկանց, ջերմացնել սրտերը, ներարկել կենսական ավիշներ։

Գ. Կառվարենցի «Գեթսեմանի ծաղիկները» խորհրդանշում էր օրերի տրամադրությունը՝ իր մեջ անթիվ դիակներ պահող հողի վրա դարձյալ պիտի ծաղկի կյանքը։ Գեթսեմանի ծաղիկները մահվան ժխտումն են, բայց և հիշեցումը։ Անցած տառապանքների հաշը մխում է բանաստեղծի սրտում, բայց ապրող ու ստեղծող մարդուն կյանքը հաստատող երգ է պետք։

Կ. Զարյանի «Օրերի պսակը» ժողովածուն արձագանքում էր 1915—22-ի դեպքերին։ Անցած տառապանքների ու ներկա ոգևորությունների խորհրդանիշ-արձագանքներ էին այդ երգերը՝ քնարական հերոսի խորհրդածությունների տեսքով։

1918—1922 թթ. արևմտահայ պոեզիայի հայտնությունը եղավ Մատթեոս Զարիֆյանը՝ արևմտահայ քնարերգության վերջին պայծառ դեմքը։ Դուրյանի, Ոսկյանի, Արշակյանի ու Մեծարենցի ճակատագիրը բաժին հասավ նաև նրան։ 1919—1922 թթ. մամուլում երևացին առաջին բանաստեղծությունները, 1921—1922-ին երկու ժողովածու, և սաստկացող թոքախտը խլեց նրա կյանքը 1924-ի գարնանը։ Ասուպի նման հայտնվեց,

միանգամից դարձավ սիրված անուն։ Սիրեց նրան երիտասարդությունը, որովհետև նրա երգերում զգաց իր սրտին մոտ մի տենչ ու ձգտում, որ տառապանքի ու հուսալքության միջով ելնում է դեպի վեր, կամենում է սիրո, երազի, տվայտանքի ճանապարհով, «ներքին հատնումով» հասնել բարու, գեղեցիկի աշխարհը։ Սիրեց, որովհետև պարզ և հուզիչ էին նրա երգերը, սիրո և տառապած հոգու մրմունջներ էին, գեղեցիկ ու ողբերգական, քանի որ նրա հեղինակը, որին՝ «շքեղ Զարիֆյան» էին կոչում, կենսասիրության պայծառ գենքով պայքարի մեջ էր մտել մահվան դեմ և ուզում էր հաղթել։ Սիրեց նրան ընթերցողը, որովհետև հոգեկան պահանջ էր զգում սրտամոտ երգի, հոգու խաղաղության, մտերմիկ խոսքի, կենսահաստատ տրամադրությունների։ Զարիֆյանի տրամությունը մտերմիկ էր և հոռետես շեշտեր չուներ։ Նրա տխրության, թախիծի մեջ անգամ մի ինչ-որ քնքուշ, հուսադրող, հավատ ներշնչող շեշտ կար, մի ջերմ ոսկեղեն ճառագայթ իր արևից, կար հեգնանք ու ըմբոստություն մահվան դեմ։ Ու սիրո վեհացնող ուժի փառասիրությունը կար նրա երգերում, սերն ու կյանքը նույնարժեք էին նրա համար ու փոխադարձաբար պայմանավորված իրարով։ Սիրո հրաշալի մի պահը մի ամբողջ կյանք արժե և այդ պահն զգալու համար նա պատրաստ է տալ նույնիսկ կյանքը. «Եթե մեռնիմ իսկ հուզումես, այդ մահն ապրիլ է ինձ համար»։ Այսպես, սիրած աղջկա կրծքին, սիրո խոսքեր մրմնջալով մեռնելու պահը բանաստեղծը «շքեղ օրհաս» է անվանում և իր արարքը հաստատում է հզոր փաստարկով՝ «Ես սիրեցի քեզ իբր աստված»։

Զարիֆյանի բանաստեղծության հաջողության գաղտնիքը նրանում էր, որ ինչպես Ա. Ջոպանյանն էր բնութագրում, նա երգում էր «իր իղձերը, հրճվանքները, արբեցությունները, կարոտները, վիշտերը, միշտ հալածված մահվան անվանելի մղձավանջեն», երգում էր «ձայնով մը միշտ թարմ ու վճիտ, որ նույնիսկ ցավի ու հուսահատության ազաղակներուն» տալիս էր «երիտասարդ լուսավոր զգայնության մը թեթևությունը, շնորհը, մաքուր ու թեավոր քնքշությունը»։ Այս ամենով էլ Զարիֆյանը հաստատեց իր տեղը մեր նոր քնարերգության մեջ։

Զարիֆյանի երկրորդ գիրքը լույս տեսավ 1922-ին։ Հենց այդ թվականին էլ պոլսահայ գրողների մեծ մասը թողեց Պոլիսը։ Ավարտվում է արևմտահայ գրականության վերջին շրջանը։

Աշխարհով մեկ ցրված արևմտահայ գրողները, նոր գրական ասպարեզ իջած գրողների հետ միասին, սկզբնավորեցին սփյուռքահայ գրականությունը։

ՎԱՉԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ԵՐԳՔ ՆԱՀԱՊԵՏԻ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

Հայո՜ց աշխարհիկ, գարունդ է հասել
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՜վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,
Ո՜վ դու իմ սրրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ հասել է, հասել,
Ավագ Մասյաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սև-սև ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ-ճերմակ սարերն են անվախ.
Ջընիկն ի ծոցին բացեր է ճանպարհ,
Քաղցրիկ կըրկըջով գլորե գետս հազար.
Այն բարձրը ժայռից, որ երկնուց են մոտ,
Կենաց օրհնության ծագե առավոտ։
Ահա քո բլուրներն, Հայո՜ց աշխարհիկ,
Այն քո բյուր բլուրներ ու բյուր վրտակիկք
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
Տարան ցուրտ ձրմեռդ ու ձյուներրդ շատ,
Լերինք և հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսին նըման.
Կապուտակ սարերդ գունըզգուն պըսակ
Կապեն ի գլուխ զինչ նոր թագվորակ.
Ի ծայրից սարից որ երկնուց են մոտ՝
Փրովի մինչ ի խորն հորոտն ու մորոտ.

Գետեզերք ամեն բացել են շուշան
Պայծառ դընդրղնով ցընցրղկեն գնան.
Սարեզերքն ամեն զվարդն երևցուցին,
Ա՜հ կարմրուկ վարդեր, զավակք եղեմին։
Պլպուլն ի հեռվանց թողեց ճրգնարան
Ծովեր ու ցամքներ թևեց անգուման,
Կանչեց ի օդուն երեք հետ բարև
Ոտկունքըն դրրավ ի սարին վերև,
Սարին վերևեն ի վարդին տերև,
Հայո՜ց աշխարհիկ, քեզ երետ բարև.
Սարեկն ի սարին եկաց ու մընաց,
Անմեղ նախընծով եղավ երգասաց.
Արագիլն երգիսն ավլեց իր բունիկ,
Կանգնեցավ կըղաց՝ «Հայո՜ց աշխարհիկ».
Արտուտիկըն թռավ, թռավ վարուվեր,
Մանրիկ ճըվըլով ասաց շատ բաներ.
Տատրակիկն իջավ, իջավ ցած ու ցած
Կըրծկունքն ի գետին ըզկո՜ւկո՜ւ ճըվաց.
Հովիվն ու հոտաղ, գառինք, եզն ու կով
Գոհացան զաստված՝ մարգեր շուրջ գալով։
Հանց քեզ տերն է տվել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս, Հայո՜ց աշխարհիկ.
Դրախտիկն որ անցել գառնա քեզ գարնամբ,
Զինչ պայծառ արևն որ ծածկեր ի ամպ։

Բայց Նահապետիս ի՞նչ ասեմ ծերուկ,
Որ եմ քան զամեն ծաղիկ վաղանցուկ.
Իմ գարունս անցել ու հասել աշուն,
Ցամքած տերևուկս ըսպասեմ հովուն՝
Թե ե՞րբ ի լերանց ծոցուն փըչե խոր
Զըգե անկըսկիծ զիս ի մահուն ձոր։
Նահապետիս կյանքն եղավ բավական,
Երընդությամբ կեցավ ի յուրն Հայաստան.
Ժամ է որ երթա ի այն հայրենիք,
Ուր իսկի չզաավին եղբարք սիրելիք.
Երընդությամբ կերթամ քեզնից, Հայաստան,
Քեզնից առած հողս՝ ի քեզ տամ թաղման.

Ի քո ծոցեդ վեր կանգնեցավ Ադամ,
Ես ի քո ծոցեդ տ'ելնեմ անթառամ։

Ա՜յ մանկտիք, եկեք շուրջ Նահապետիս,
Ականջ դիք շայիր հորդ ետքի ձայնիս.
Պլպուլն ու սարեկն երգերն են նորել,
Իմն՝ հետ տատրակին հողու հավսարել.
Մանկտիք, զիս հայոց հողն ու ջուր սնուցել,
Ես այն հողն ու ջուր սըրտով եմ սիրել.
Հայրենյաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենյաց փուշ.
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վըտակք.
Ջուրն ու պըտուղն համ տան անմահություն,
Խոտն ոսկեզօծե զգառներուն քերան.
Յոսկեթել ամպոց զայգուն զովագին
Թորթոր իջանե ցողիկ մանրագին,
Կարմիր ճաճանչով արևուն շաղված
Գա ի խավըրծիլ մանանա կենաց։
Ո՜հ լերունք ծաղկած, ո՜հ ջուրք ծիծաղկոտ,
Զանուշիկ հովերդ ի զիս ածեք մոտ.
Հողմունք անուշիկք՝ եկեք մոտ ի զիս,
Շունչ ու երգս առեք տարեք ի Մասիս.
Տարեք վերջի շունչս ի տուն տապանին
Ու լըսեցուցեք զավկաց Թորգոմին։
Զե՜զ կասեմ մանկունք սիրունք նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ.
Մ'ուրանայք զերկիրդ ու զազգդ սիրուն,
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբն է տուն.

Մեր տերն ի երկնուց ծայրեն երբ իջավ
Երկրիս հիման քարն յԱյրարատ դրավ.
Այն մեր Մասիսու երկնաձև սարեն
Աչեց ըզբոլոր՝ վերացավ նորեն.
Հոն չափեց սահման յուր նախաստեղծին
Զեփրատն ու զԵրասխ բաժակ դրավ դրախտին.

Կենաց փայտին ծառն ի հոն ծաղկեցավ,
Չար գիտութենե բարին մեզ տրրվավ։
Ի հայոց հողեն կազմեցավ Ադամ,
Զօդն հայոց Եվայն ծրծեց քաղցրահամ.
Աչքերրն պայծառ, երեսքն աննրման
Հրեշտակաց առջևն հոն հանդիսացան.
Ծաղկունքս այս ծրնած են հայն ծաղկոց,
Որ Եվայի պսակ եղան ու նրստոց.
Այս մեր սարերուս ծերուկ արձագանգք
Աստուծո ձայնին տրվին պատասխանք.
Աստից երգք սիրո ու ապաշխարության
Երկինքն ի վեր նախ հերկրես վերացան.
Արյամբն Աբելի Քրիստոս հոս զենավ,
Կրկին և կրկին մեզ հույս խոստացավ.
Ադամ ծերունին այս սարիս ներքև
Զավակացն ասաց զիր հետին բարև.
Այս ձորիկն ի վայր լալով գնաց Եվա,
Գլուխն ի քար դրրավ կարոտ Եդեմա.
Ի հոն են նրնչել մարդիկն առաջին,
Որ հետ հրեշտակաց զաստված օրհնեցին։

Երբ գոռաց երկինքն, ու գետին սարսեց
Ամպերն ի ծով, ծովն ի ամպեր վազեց,
Այն սարին ծայրեն Նոյ մտավ ի տապան,
Ջրագունդ երկրիս շուրջն եկավ մանուման.
Իջավ բազմեցավ ի բարձրրն Մասիս
Զաղու աղավնին ղրրկեց ավետիս.
Երկիրս էր դատարկ անապատ ահեղ,
Լուկ ի Հայաստան կայր մարդկության տեղ։
Մեք եմք հարազատ ծեր Նոյի ծրնունդք,
Որ ժառանգեցինք զհովիտս ու լերունք։
Նախրնծեցավ Բել բրոնավոր արքայն,
Զհասակն անճոռնի կանգնեց բարձր ու լայն.
Շատ զորքեր շարան բերավ անհամար,
Թուխ արև բրոնեց մեր երկնուց պայծառ.

Լրսեց Հայկն արի, ձենեց քաջերուն,
Սարն ի վար վազեց զինչ կայծակ ամպուն.
Զաղեղրն լարեց կամրրջի նրման
Որոտաց թրռուց ըզնետրն գերան,
Զերկաթն ու պրղինձ կրրծից հրսկային
Սրրտովն ու թոքով հանեց կրոբնկին.
Փլավ Բելն ի բրլրեն ի խոր Գերեզման,
Զետ ծուխ սև զորքերն եղան ցիրուցան։
Շատ կրտրրճվորայք հանեց Հայաստան,
Շատ Բելեր փլուցին քաջքն Հայկի նրման.
Հոռոմն, Ասորին, Մար, Սրկյութ, Պարսիկ
Հայոց թրրերուն եղան պատառիկ.
Այս սարեր, ձորեր ու դաշտերս ամեն
Կարմիր են քրտնել, կարմիր խրմել են.
Ի հոն են խաղցել Տիգրան ու Տրրդատ,
Վարդանն ու Վահան, Աշոտ ու Սրմբատ։
Հոն կրակե թռուցել նետ հայոց մանկտին,
Թրզի պես թափել գունդ-գունդ թշնամին.
Այս բլուրներուս ծայր դրոշը կներ բացվել,
Առյուծն ու արծիվ հետ խաչին վառել.
Զենք ծարված գացել, դարձել են արբած,
Ճրմռոտած ճակատք պարզել են պսակած.
Ընկել են ընկել հոն հայոց այլ քաջք
Մեկ ձեռքրն նիզակ ու մեկալրն խաչ.
Թրռել ի դաշտեն ելեր են երկին,
Բազմել հետ Գրիգոր, Տրդատ, Վարդանին։

Աբգար Թագավոր մեր քաջ իմաստուն
Թրղթով է խոսեր հետ աստվածորդվույն,
Երնեկ և ընծա առել Քրիստոսեն,
Դեսպան ընդունել զառաքյալ Թադեն.
Զառաջին պատկերն այն սուրբ դաստառակ
Փրկչին կողաբաց Գեղարդրն միակ,
Այլ շատ նրշխարքներ, մասունք զանազան
Ի ծոցն է պահել աշխարհս Հայաստան,
Շատ առաքյալներ ունի յուր քարոզ,
Շատ սուրբ հայրապետ, ամբավ մարտիրոս.

Բյուրավոր ունի մատրունք ու տաճար
Անապատ ու վանք հազար ու հազար։
Ի աստուծո առեր ըզլեզուն ու զգիր,
Թարգմաներ ամեն ազգե գիրք ընտիր,
Ճարպիկ տղայք ղրրկել ի Ստամպոլ, Աթենք,
Հայն հոռոմ լեզվով հաղթել է զՀելլենք.
Շատ գրրքունք գրրեր մեր հարքն ու մագդաթ
Ձետ ցորեն դիզել քանց բարձր Արարատ։

Բայց ափսո՜ս հիմա, որ չար թըշնամիք
Իսկի չեն խնայել Հայո՜ց աշխարհիկ,
Եկեղեցիք, վանք, գրրատուն, դարպաս
Ջարկել են թըրով, հրրով դաս ու դաս.
Ձազգն ընչոք տեղոք քանդել ու գերել,
Դեմ չորս հովերուն տրվել ու ցրրվել։
Ավա՜ղ քեզ, ավա՜ղ, Հայոց աշխարհիկ,
Տուն երկնանման, փըլած տաղվարիկ։

Այլ ի՞նչ ափսոսամ ըզքեզ, Հայաստան,
Երբ ձեռքն Աստուծո տեսնում հանդիման.
Ինքն է հրամայած քակել, ինք շինե,
Ձինչ ըզհետ ձըմռան ըզգարուն հանե.
Ձաշխարհ մեր սիրեաց Աստված ի սկըզբան,
Թե անեծք երետ՝ սիրո էր և այն։
Ի թուխ ամպերեն ելնե փոթորիկ,
Հողու հավսարին ծառերն ու մայրիք,
Տերևքն և ողկույզքըն մարգարտաշար
Ի ոտից ներքև երթան ի խավար.
Ամպն և փոթորիկ շուտով վերանա,
Նոր արև, գարուն, ծառն ու այգին գա։
Արմատք հին՝ նոր ճյուղ, հին ճյուղք՝ նոր ծաղիկ
Ընծայեն բնության, Հայոց աշխարհիկ.
Դուք այլ կործանած այունք, դուք այլ կանգնիք,
Կապին կամարքդ, ո՜հ, սուրբ եկեղեցիք.
Քակյալ վանորեք շինիք հոգվոց տուն,
Դառնան ձեր սաղմոսք, ձեր քաղցր ալելուն։

Այդ քո ավերակք, Հայո՜ց աշխարհիկ,
Նըշան մեծությանդ են, թոռմած ծաղիկ.
Թոռմած ես՝ բայց վարդ, ցամքած՝ բայց հալվե.
Ով քեզ օտար ծաղկան հետ փոխե՝
Նա կույր է, հիմար. զհոտն անմահության
Ընդ սուտ գույն փոխե տըխմարն ու տըղայն.
Հիմար է, հիմար, որ զպարծանքն հարանց
Երթա վաճառե ընդ օտար ազանց.
Աշխարհիս օրենք՝ որ ծնողք չըփոխվին,
Հայրենափոխք չեն, ուրացողք լինին.
Ծառն՝ արմատով ծառ, ծառովն է արմատ.
Դալար մանկտիք, ձեր տակն է Արարատ.
Պի՛նդ կացեք, աստված ցողե ի վերեն,
Ծըլիք ու ծաղկիք, քանց վարդ ի թըփեն.
Ձըլնի ոք նախանձ, չըլնի հակառակ,
Թե չէ՝ նման խոտու լինի խայտառակ,
Այլք ծըլին ծաղկին, թեպետ քըչիկ մի ուշ.
Ձարկամըն մնա միշտ դըժնիկ, միշտ փուշ.
Որք խելոք, սիրով կան զինչ աղբըրիկք
Տեսնեն քո գարունդ, Հայո՜ց աշխարհիկ։

Այլ ես Նահապետ ցամքած ծերունիս՝
Երթամ մեր հին հարցըն տամ ավետիս,
Ասեմ, թե գարուն երեկ տան Հայոց,
Դուք Նահապետիս ասացեք՝ հոգվո՜ց,
Ծեր Նահապետիդ՝ տո՜ւր կակուղ հողիկ,
Որ զքեզ պինդ սիրեց, Հայո՜ց աշխարհիկ։

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ

Առավոտուն դրոնակն է բաց.
Ե՛լ, ե՛լ արևդ Հայաստանյայց։
Ահա ելնեն որք'ին ի քուն
Ու Նահապետն այլ որ անքուն՝

Աստվածազարդն ելնե հանդես,
Հայ հայրենյացն ելնե ի տես։
Ելներ, ելներ նա մինչ Արտոս,
Զաչերն ածել ընդ չորս բոլորս,
Երբ սեավ գիսակն էր ճակատուն
Ոտկունքն արագ էր քանց այծուն,
Աստվածազարդ ելներ հանդես
Հայ հայրենյացն ելներ ի տես։
Դուք որ սարերդ ի վեր երթայք,
Ա՜յ իմ սիրուն կտրըճորայք,
Գեմ թե զդալար աչվիդ սիրեք,
Նահապետին մըտիկ արեք.
Աստվածազարդ ելեք հանդես,
Հայ հայրենյացս ելեք ի տես։
Ահա ելանք ի մեծ հանդես.
Հայ հայրենյացս ելանք ի տես.
Ահա տեսանք զաշխարհն Հայոց,
Որ ըզդրախտիկն առել ի ծոց
Դեմ երկրնուց կայր կանգնըման
Անդրանկածին մորըն նըման։
Ահա ելներ արևն յամպոց,
Վարդ կու թափեր աշխարհն Հայոց.
Ցողըն տեղայր զով ու սիրուն
Զինչ մարգարտին ի սատափուն.
Կարմիր կանաչ ծին ծիրանի
Գոտի ածվեր Հայաստանի։
Լերանց սարերըն բարձրածայր
Ոսկի պըսակ եղան հավսար.
Հայոց գետերն հազարավոր
Իշանեին ճաճանչավոր.
Հազար թե գետ, բյուր թե առվի
Հայոց ծովակքն այլ ավելի։
Ա՜յ դրախտի ջրեր, իշե՛ք, իշե՛ք
Ձերկիրն հայոց արբեցուցեք.
Ահա վտակունք կըրկըջային,
Ձորն ու հովիտ արբենային,
Ամեն կաթեն աստղիկ ծըներ,

Ամեն ծըներն ծաղիկ ծագեր։
Ահա տեսանք զծաղկունքն Հայոց
Գույնն էր երկնից, հոտըն խընկոց.
Վարդն ու շուշան էին վառման
Հարսնամատերն ի ջուր փրման.
Հորոտ մորոտն էր տարածել
Ըզտեսողաց աչքըն քաղել։
Ահա տեսանք զհավերն հայոց,
Ձայնն հրեշտակի, գույնն էր ծաղկոց.
Կռունկ ու արագիլ գային հիտրաց,
Ղարիպներուն սիրտըն ճըխաց.
Աբեղաձագ, սարեկ, արտուտ,
Կաքվուկ, պըլպուլ վարդակարոտ։
Ահա տեսանք մեծ կարավան
Ի չորս դիհաց ելեր կու գան.
Քուրդըն կու գայր արոտ ամռան
Հոտերն ի հետ շարան- շարան.
Աղջկունք առյալ զասրըն հյուսեն,
Մանկունք ըզսառն աղբյուրս խըմեն։
Ահա տեսանք զվաստակն Հայոց,
Սերմն էր իջել երկնից ամպոց.
Հոն որ Ադամ վարեր գութան
Քանց ըզքառսուն հասկերըն տան.
Հոն որ Աբել գառն ընծայեր՝
Մաքիքն ածեն միշտ ջուխտըկներ.
Հոն որ զայգին է տընկեր Նոյ՝
Ոսկի ողկույզքն են խաղողոյ.
Կաթն այն կըրծքի, գինին բազկի,
Ջուրն հասիաթ է ամենի։
Ահա տեսանք զխորանքն հայոց
Կամար կապեր են երկնից ծոց.
Եկեղեցյաց թիվն հազարով,
Մատրունք սրբոց չեն համարով.
Խունկըն ծըխե առտու՝ ըրկուն,
Աստված առնու զհոտըն սիրուն։
Ահա տեսանք զքարերն Հայոց,

Մեր պապերուն մահվան օրոց.
Գերեզմաններըն լուռ էին,
Խաչվեմքն ի քովն աղոթեին,
Տերն ողորմի հանգուցելոց
Եվ ամենայն երկրիս Հայոց։
Ահա տեսանք զերկինք պայծառ,
Շրթներն՝ երկրիս Հայոց հավսար,
Հավերն ի հունչ, հովերն ի շունչ,
Օդըն վառվառ, ջուրն ի մրրմունջ.
Լուսիկս է ճոխ, արևս անուշ,
Սարերն ի վար իջնումք մեք ուշ։
Ահա ի գունդն երթայր արև,
Նահապետին մենք տանք բարև,
Մեր Նահապետն այլ ձեզ բարև.
Աստված վերեն տա շատ արև,
Իժիր գնացեք դուք այդ հանդես
Հայ հայրենյացդ ելեք ի տես։

ՈՂԲԱՄ ԶՔԵԶ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Զայս իմ կենաց դառնահամ ծովս որ եմ կտրել՝
Հայո՜ց աշխարհ, ըզքեզ իսկի չեմ մոռացել.
Հիմ՝ որ շընչիկս ի հագագիս է ոտնառած,
Մազթափ ճակատս գետընուց ակընկորած,
Ընդ չորս բոլորդ հետ հայիմ, հետ ծածկին հեռի,
Այլուի քըշիկ մ՝ ու Նահապետըն տի մեռնի.
Ո՜հ, զիմ կընտիկ ճակատս այլ չեմ կարեր կանգնել
Ու պըսպըղուն Մասյաց սարերն ի վեր նայել.
Այլուի քըշիկ մ՝ ու այս ափունքըս տի լռեն,
Այս բարկ շըքերս ըզծերունիս չի տի գըտնեն.
Դուք բազմաշար Մոկաց լերունք քարաբերանք,
Դուք ինձ եղիք գերեզման, դուք ինձ արձագանք.

Փետտած քընար, ահա ջեզիկ տամ թույլ մատներս,
Անմա՜շ փափագ, անմաշ կըրակ մըտե՜ք ի ներս,
Զայն պատառուկ սիրտն որ տեսնուք՝ այնոր ներքև
Ճընշած կըրծկունքս աղեկըտրին, ո՜հ, զինահար,
Այսօր քաշեմ ու դուրս բերեմ զիմ ցավս հազար.
Թող ի Տարոն հասնին ձայներս, սարքըն պատռին,
Մեղրա գետույն ալիքն անույշ՝ լեղի կըտրին,
Հետ Խորոնից քերթողահոր պատմագըրին
Թող կիսատ շունչքս ողբակցելով երթան ոլրին,
Զաշխարհն Հայոց ես լամ զիմ քաղցրըն հայրենիք,
Արյուն արցունքըս հետ թափեմ դառն ու ցրտիկ։
Ահա թուլցած աղիքըս պինդ, պինդ քարշեցան,
Մոխրեն ի դուրս կրակունք ելան սիրտըս լցվան.
Թրռավ ելավ Նահապետին սիրտ վեր ու վեր,
Իջավ խորցավ գերեզմանաց վախեր վըհեր։
Ողբա՜մ ըզքեզ, Հայոց աշխարհ, ողբա՜մ ըզքեզ,
Որ փառավոր նըստած երբեմն արքայապես՝
Արևելքից և հյուսիսո ազգացն հազար
Ճոկան ի ձեռդ առած՝ կայիր հրամանատար,
Ողբամ զիշխանքդ ու թագավորքդ, որ անցկացին,
Ողբամ զորդիքդ մեծ Գրիգորի, որ չերևին.
Ըզբյուր հազար ցավերդ ողբամ, աշխարհ Հայոց,
Զոր թշնամիքդ ետուն ու միտք կուրացելոց։
Զարթի՜ր, զարթիր Երեմիա մարգարե զգոն,
Տես ի՞նչ եղավ գեղեցիկ նորըս մեր Սիոն.
Ոչ Հովսիաս մեզ մընաց, ոչ Սեդեկիա,
Աշխարհս ամեն ոտնակոխած ավեր մընա.
Ըրկա քաջաց հայր Մատաթի, ոչ Մակաբե,
Որ զայսպիսի մեր կործանմունք նորեն կանգնե...
Ո՜հ, իշխանաց աթոռանին անկեր գետին,
Թանձրատեսակ ծըխով լըցվեր եկեղեցին։
Զարթի՜ր, ելիր արե՜կ, թե ճար գիտես ցավույս,
Հուսակըտուր պընդե զաղիս, սիրտ տուր երգույս։
Ե՜կ ի Մըսրա, ե՜կ ուռենյաց Բաբելոնի,
Սաղմոսարանդ իջո՜, արե՜կ Արածանի
Կա ուռեստան և Հայոց, կան մեր շատ ալիք,
Կան կաղամախք, կան սև նոճիք, կան և սոսիք.

Մեր գերեզմանքս այլ շատ, մեռելքս այլուի շատ է՝.
Որը ու այրի՝ եկեղեցիք դարպասք ամեն.
Թե լուկ հայիս իմ աշխարհին երեսըն սև՝
Լերդերդ վառի, սրրտիկդ ըլլի ներքև վերև։
Դու այլ զարթի՛ր ու եկ քերդողերդ մեր Մովսես,
Որ ողբակից հրավիրեիր ըզմարգարես.
Տես, ա՞յս երկիրն է Հայկազանց և Արշակունյա՛ց,
Որոց փառոք լցեր ըզգիրքս պատմությանց,
Այս ա՞յն երկիրն է Տիգրանին և Արամա,
Որ բրոնեին ըզբրոնավորքըն զինչ տրղա.
Այս ա՞յն երկիր մեծ Տրդատա՝ քաջ Վարդանին,
Ում նախանձեր Պարսիկ, Հոռոմն և Ասորին.
Եվ ա՞յս երկիր Լուսավորչին ու Ներսիսի.
Ա՞յս Սահակա, Մեսրովպա, քո իսկ Մովսիսի.
Ո՜հ, ինչպե՜ս փառքն ամեն մրթնած և այլափոխ։
Միայն անփոխ գուշակությունք քո կան ցավոք.
Ավար, ավեր, սուր, գերություն, սուգ և չարիք,
Ա՜յլ չար՝ նախանձ, տրգիտություն մընան հիմիկ,
Դարեր անցին գնացին, Հայոց փառքըն մոռցված՝
Նահապետիս միայն խավարն ու սուգ մընաց։
Հե՜ խեղճ ծերուկ, զարկ ըզգործիդ ու զքեզ քարի՝
Կամ թե քաղե՛ զաղիք սրրտիդ, որ քաջ թրրթռի.
Խոսին կանչեն այրած լերդերդ, լրսե աշխարհ,
Քո գանկրտանք բրոնեն լեռներ ձորեր հավասար։
Ողբամ, ողբամ, հազար ողբամ զքեզ, Հայաստան,
Երբեմըն բյուր փառաց տեղիք, հիմա դամբան.
Քո ծիրանիքըն մերկացան, քո թագդ առավ,
Արիությունըն հայկական ելավ թրռավ.
Քո սուրբ հաջորդք քահանայիցըն պակսեցան,
Ամեն չարիք մրտին ի մեջ ժողովրդյան.
Քո ծառաներն ապրստամբ դեմ քեզ առին սուր,
Քո իշխաններըն՝ մեջ քո տան վառեցին հուր։
Լրսեցին Պարսք ու բարբարոսք գազանական,
Մեկ առ մեկ ձայն տրվին՝ ելե՛ք ի Հայաստան.
Ելան եկան ամառնամուտ ամպոց նման,
Որ Առնոսա սարերն ի կախ կու կրրկրան,
Հայաստանի չորս բոլորտիքըն պատեց սև,

Բյուր տակ ամպեն ինչպե՞ս ի դուրս ելնե արև.
Պահակք բացվան, սահմանքն առան, արգելքն ընկան,
Փախի՛ր, պահվի՛ր, թե չէ մաշիս, ո՞վ Հայաստան...
Բայց ո՞ւր փախչիս դու ժողովուրդ անհայր անտեր,
Բերդն ու պարիսպ, շենքն են հողու հավասարեր։
Ա՜հ անիծյալ երկաթ ու ձեռք, որ զայն սրբեց,
Հայոց արյուն քե՞զ լուկ այսքան անույշ թրվեց.
Միթե անկուշտ քաղցիդ ու չար կեռիքներուդ՝
Չի՞մ Հայաստան որսիկ ցրցուց արևն անգութ.
Ո՞ր բրոնավոր, ո՞ր տիրապետ, ո՞ր անօրեն
Չեկավ սրրով բաժին մ'առնուլ Հայոց երկրեն.
Ո՞ր բարբարոս ավերածու ձեռաց նշան
Չեթող վրկա մեր շենքերուս երկնանման.
Մեկըն կըտրեց, մեկըն հրնձեց, մեկըն լափեց,
Մեկն այլ փորեց, զարմատն հանած հողըն ցրվեց.
Ա՜հ, այս տեսույս ո՞վ դիմանա թե չէ արձան,
Կամ ի՞նչ ցեղ քեզ չողբա, խեղճուկ իմ Հայաստան։
Տեսեք գեղանքն ու քաղքընին խառնուփընթոր,
Սառնապաղուկ գետոց ջրերն՝ արյուն հորդոր.
Տեսեք ռամիկն ու մեծատուն՝ ամենքն աղքատ,
Տընակորույս, բարբարական դաշտե ի դաշտ.
Փախչին գընան, չըգիտեն ո՞ւր, հետ չընային,
Չի սուրն անգութ փրոե զիրենք ցուրտ ի գետին.
Դոքա այլ ո՞ւր ըզփախ առել ըշտապ կերթան.
Ամենքն ի մեկ տեղ. ո՜հ, ամենքն ի գերեզման։
Ահա ծերեր, որ հարկևոր ալիքն առել
Փախչիլ փորձեն, փորձա՜նք գոչեն, ընկնին մեռել.
Ահա անսիրտ խեղճ կընկըտիք, որ անլաչակ
Հետ էրկընուն կանչվրտելով մընան միանակ.
Պարկեշտ աղջկունքն, որ արևեն ծածկըվեին,
Գազանակերպ մարդկան ձեռքե ի ձեռք ընկնին.
Ահա մատղաշ մայրն, որ կաթնածուծ տրղեկն առեր
Լեղապատառ խոլոռ մոլոր կերթա վրհեր,
Պահ մի թողու զտըղայն ի վայր, դեմ գա դահճին,
Ցամքած ծոցիկն առել՝ մոր գութ հիշե նրմին.
Բայց սուրն ահեղ ոչ մոր գրթա, ոչ որդեկին,
Ծաղիկն ու ճյուղ մեկտեղ կըտրե վառ վառ նռին.

Կաթն ու արյուն զինչ եղ ու մեղր հետ կաթկրթին...
Հրեշտա՜կք, թե գութ ունիք՝ հանե՛ք զայս կաթս երկին։
Ո՜հ, ես քանի՞, քանի՞ ներքև այս ձորերուս
Գերեզմանաց վրրա թափել եմ արտասուս,
Ուր քորք ու եղբարք, հարս ու փեսա, հարք և որդիք
Կարճ օրերով զերկայն գիշերըն կու հանգչիք։
Ա՜հ, Նահապետ, քանի՞ հիշես թափես արտասունք,
Երնե՜կ այտոնց որ զինչ վրկա մեռան սիրունք.
Առին զաչերն այս սևոտած մոխրած երկրես,
Չըտեսան զայս ավերակներս ուր ժուռ գամ ես.
Երնե՜կ անոնց, որ չըտեսան գետին փրռված
Զանվո նըշխարքն հազար ու մեկ եկեղեցյաց.
Ոչ զայն ամուր բերդըստանին ու պուրճընուն
Ամպադրացի ծայրերն հավասար գետնի հողուն։
Վա՜յ իմ աչաց, որ լույսն Հայոց սև եմ տեսել.
Թագավորաց դարպասն՝ եզանց գոմ է դարձել.
Վա՜յ իմ ձեռաց, որ հող ժողվել եմ զիշխանաց՝
Մազապակաս ճակտիս վրրա իմ զայն ցանած.
Վա՜յ իմ ոտաց, որ սուրբ կոխել են գմբեթունք՝
Ուր լոկ արևն հասցըներ թույլ, թույլ փայլփըլմունք.
Վա՜յ զիս, վա՜յ վա՜յ, որ զՀայաստան մեռել դիտեմ,
Ի գերեզման դարձել տեղիք նրման Եդեմ։
Լո՜ւռ գերեզմանք, լո՜ւռ մեռյալք, քաղցր ըլլի ձեր քուն,
Քանզի լըռեց և ընկավ սուր ձեր թըշնամվույն.
Բայց դու, Հայո՜ց աշխարհիկ, ե՞րբ դու այլ հանգչիս,
Ե՞րբ տի ցամքին աղբյուր արտասունք Նահապետիս։
Ո՜հ, ես տեսնում ա՜յլ մեծ չարիք, ողբամ զքեզ,
Ողբամ հազար, որ այդ չարյաց պատճառ դուն ես։
Ար՛ ե՛կ, ար՛ ե՛կ, հայր իմ, ողբոցըս դու Մովսես,
Իմ սիրտ այլ չի՛ երթալ, ասա՛ դու քաջ գիտես.
Քո Երեմիկդ ու քո Զաքարդ հե՛տ առ ողբա՛
Հայոց ազգիս տարակուսյալ գըլխուն վրրա.
Ողբամ ըզքեզ, Հայո՜ց աշխարհ, ողբամ ողբ բյուր,
Քան ըզգետերն հորդացընեմ աչաց աղբյուր.
Գեմ ժողովուրդըն շըվարած մընաց մոլար,
Ոչ ձեռնըտու, ոչ առաջնորդ ունի, ոչ ճար.
Առան վերցվան մեր թագավորքն ու քահանայք,

Խորհրդականքն և վարժապետքըն քաջիմացք,
Աթոռանին ու սուրբ բեմերն ի լաց ողոք՝
Ի բրոնության ներքև ընկած կանչեն բողոք...
Միշտ ոտնակոխ, միշտ բարեզուրկ, ի լաց, ա՛ի կոծ
Ջարն ուզե զքեզ, ո՞վ իմ բարի աշխարհ Հայոց...

Այլ դու լրե՛, ծածկե՛ զչարիք երկրիդ, Մովսես,
Մ՝ ա՛սեր զամեն, որ ի Հայոց մեջ կու տեսնես.
Մի՛ զայն եղբարց հարազատաց ընդդիմություն,
Ջանգիտություն, որ ի հավատք և ի ուսմունս,
Եվ մի՛ զարդար՝ բայց խիստ՝ երկնից ծեծ վրեժխընդիր,
Որ զՀայաստան օտարաստան ըրավ ցան ու ցիր։

Ա՜հ, Նահապետ, ծածկե կնգղով գլխիկդ ու քնար,
Թուլցուր թելերդ և այլ սրգով առաջ մ՝ե՛րթար։
Գիտեմ, գիտեմ այն մեր մեղաց պարտքն էր արդար.
Սակայն երկնուց արդարություն չունի՞ վրճար.
Եվ հրեական ազգին նրման նրզովք երես՝
Դարե ի դար հուսահատյալ տի գնա՞ն հայերս։
Չէ՛. ողորմածն Աստված թողել չէ զՀայաստան.
Նա ինքըն զինքըն է գրլորել այս խոր զրնդան.
Երբ որ կամի՝ կանգնի. բայց թող գրնա՛ն կռիվք,
Երթա նախանձ, թող գա սեր, թող միանան սիրտք.
Այնժամ չողրա զքեզ Նահապետս, Հայո՞ց աշխարհ,
Այլ երանիս կարդա բերանս հողու հավասար։
Ի եզր հողուս երդումն ուզեմ ձեզնից, ո՞վ Հայք,
Այս հառաչանքս ըլլան ձեր ձայն, ձեր այս փափագ.
Որ հանդարտիկ ելնե հոգյակս երթա խաղաղ,
Գերեզմանիս ծագե արևն Հայոց ծիծաղ...
Թե չէ՝ քաշեմ զաղեկտուր թելիկ սըրտիս,
Ի սև սարուկն համբուրեմ զհողն, որ ծածկե զիս...
Ո՜հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան,
Այլ թող ելնե՛ ի տապանեն նոր Հայաստան։

ՀՐԱԶԴԱՆ

Հրազդա՜ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՜ն, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդրխտիկ.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լրռիկ։

Ես ձեր դրացենակն եմ, չե՞ք ճանչել.
Սիրտս ըզձեզ չէ մոռացել իսկի.
Դուք կարկըշիկդ է՞ր եք մոռցել,
Ծիծղուն երեսդ է՞ր սուգ ունի։
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լրռիկ։

Վա՜հ, մեր կանաչ անտառիկս ո՞ւր,
Ո՜ւր տաղվարիկս, ո՞ւր մեր նրշիս,
Հովո՞ւն եղան թե ծովուն կուր.
Ո՞ւր մեր տընակն, ո՞ւր մեր այգիս.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լրռիկ։

Ո՞ւր ես աչիցըս լույս խանտուկ.
Իմ ընկերներն ո՞ւր են, Հրազդան.
Միթե պարսիկի՞ն եղան գերուկ,
Միթե ամենքն ի հո՞ղ մրտան.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լրռիկ։

Ա՜հ, անցուգնաց ելել ամեն.
Ա՜հ, անցուգնաց է Հայաստան.
Ձիս անմեկիկ թողած աստեն՝
Հետ անցնիս գնաս դո՞ւն այլ. Հրազդան...
Անցի՜ր գրնա. ջրիկդ հայրենի,
Արտասունք հերիք են Բաբկենի։

ՀԱՅ ՀԱՆՃԱՐ

Ո՞ւր ես, Հայ հանճար.— անցե՞ր ես, անցեր,
Հին և երկայն դարք այլևայլ բաղդով,
Մեր Հայ հայրենյաց վրայեն սահելով՝
Սև ու սրպիտակ քողերով պատեր,
Զաղվորն այն ծածկեր,
Անցե՞ր են, անցեր։

Այն աշխարհ, որ շատ աշխարհաց մայր էր,
Որ սփռեց զազգեր մինչ ի ծայր երկրի,
Արդյամբք իր հողուն, մատամբք ճարտարի՝
Լեցուն գրկերով տաներ ու բերեր,
Զանազան բերքեր,
Անցե՞ր է, անցեր։

Այն որ զառաջին շինվածն է կանդներ,
Սարերըն ծակեր հանց փտտած տախտակ,
Պատերով պատեր ըզծովուն հատակ,
Բերդի տակ, լերան գըլուխ գետ քաշեր,
Զանգուդ կամըրջեր,
Անցե՞ր է, անցեր։

Հայրենյաց պաշտպան՝ զենքով զենք քըշեր,
Հյուսսի, հարավո դեմ դրներ վահան.
Վազեր արևմուտս, Աթենս հմտական,
Հելլեն հանճարույն դեմ ըզՀայն հաներ,
Անհաղթ հռչակեր,
Անցե՞ր է, անցեր...

Թո՛պ... լըսե՞ք թմբկին... թո՛պ. թնդան սրտեր.
Հայրենյաց է տոն, հայրենյաց համբավ.
Ո՞վ լավք, ո՞վ քաջք, ձեզ վարձք հռչակեցավ.
Արյո՞ւն և քրտի՞նք, ձեզ կապվին թագեր...
Հա՜յք, ո՞ւր արդյունք ձեր.—
Անցե՞ր են, անցեր։

Պարեն պատանիք, ծիծաղին ծերեր,
Կուսանք ամոթխածք վարդերով վառվան,

Պարկեշտ երախտյաց գովեստք բարձրացան.
Առաքինություն, ահա պատիվ ձեր...
Հա՜յք, դո՞ւք լոկ անտեր,
Անցե՞ր են, անցեր...

Անցա՞ն, մարեցա՞ն ուրեմն հայ լուսեր...
Ա՜հ, Հայաստան, ո՞ւր քո փառքըն փայլուն.
Ո՞ւր քո ճարտարաց աշխատանքն անհուն.
Ո՞ւր քաջ և գիտուն որդվոցդ արդյունքներ.
Ո՞նց քո բյուր փառքեր,
Անցե՞ր են, անցեր...

Անցի՞ք դուք այլ սև սրտիս սև ամպեր,
Անկե՞ք հայ հողուն սև քարին վըրան...
Ո՜հ, քանի՞ հազար կանգուն լայն ու երկայն.
Ո՜հ, ո՞նց ցեղուցեղ անձինք հոն եկեր,
Եկեր ու անկեր,
Անցե՞ր են, անցեր։

Ըզսև գիրն հայոց՝ կարդացե՞ք ազգեր,
«Կարկառ հանգըստյան տոհմի տան Հայկա,
Համարի՛նդ մեռյալս և ինքն ի քուն կա»
Մեռյալ չե՞ն ուրեմն Հայ հայրենիք մեր.
Հայաստան անկեր,
Բայց ո՜չ է անցեր։

Հա՜յ ազգ, Հա՜յ հանճար, քունն է զքեզ բռներ,
Քո՜ւն թանձր և երկայն, բայց ոչ մահ անհույս,
Ո՜վ արթնացընե զազգն իմ ի նոր լույս,
Ես հազարներ տամ այնոր, տամ բյուրեր,
Որ զաչքըն բացներ,
Ու չըլլա՜ր անցեր։

Ո՞վ բանա զՀայկա աշխույժ աչուկներ,
Ո՜հ, ո՞վ կանգնե զքեզ հանճար հայրենի.

Ծ՛լ, կանգնե՛ դու զքեզ, զավակ ես երկնի.
Լո՞ւյս ծագե մըթեդ, ե՛լ կանգնի՛ր ի վեր,
Հերիք քընացեր,
Գիշերդ է անցեր...

Կ' երդնու Նահապետ, կանչե ձեզ Հայե՛ր,
Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք,
Մեծ պզտիկ՝ այդոր սիրով վառվեցեք...
Ծագե՛, Հայ հանճար, փայլե՛ բյուր բոցեր,
Իմանան ազգեր,
Թե Հայք չե՛ն անցեր։

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

ԵՐԳ

Ի բյուր ձայնից բնության շըքեղ
Թե երգք թուչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թե որ զարնեն փափուկ քընար,
Ջունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբա՛յր եմք մեք,
Որ մրրրրկավ էինք զատված.
Բաղդին ամեն ոխ չարանենք
Ի մի համբույր ցրվին ի բաց.
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնե զորդիս յուր քովև քով,
Սըրտին խորունկ վերքըն դաժան
Քաղցր արտասվաց բուժին ցողով.
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մեկտեղ լացինք մենք ի հընում...
Եկեք դարձյալ հար անբաժան
Խառնենք զարտոսր և ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլա մեր ջան.
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

Մեկտեղ հոգնինք, մեկտեղ ցանենք,
Մեկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարյաց հերկինս հանենք,
Որ կյանք առնուն Հայոց դաշտեր.
Ընդ աստեղոք ի՞նչ կա սիրուն,
Քան զանձկալի Եղբայր անուն։

ԳԱՐՈՒՆ

Ո՜հ ի՞նչ անուշ և ի՞նչպես զով
Առավոտուց փրչես, հովի՜կ,
Ծաղկանց վրա գուրգուրալով
Եվ մազերուն կուսին փափկիկ,
Բայց չես հովիկ իմ Հայրենյաց,
Գրնա՛ անցի՛ր սրտես ի բաց։

Ո՜հ ի՞նչ աղու և սրտագին
Ծառոց մեջեն երգես, թռչնի՜կ.
Սիրո ժամերն ի անտառին
Ըզմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ Հայրենյաց,
Գրնա՛, երգե՛ սրտես ի բաց։

Ո՜հ ի՞նչ մրմունջ հանես, վրտա՛կ
Ականակիտ ու հանդարտիկ.
Քու հայելվույդ մեջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ,
Բայց չես վրտակ իմ Հայրենյաց,
Գրնա՛ հոսե՛ սրտես ի բաց։

Թեպետ թռչնիկն ու հովն Հայոց
Ավերակաց շրջին վերա,
Թեպետ պղտոր վրտակն Հայոց
Նոճիներու մեջ կը սողա,
Նոքա հառա՛չք են Հայրենյաց,
Նոքա չերթա՛ն սրտես ի բաց։

ԱՇՈՒՆ

ԵՐԳ

Ո՞ւր եք, ծաղկունք, դուք փայլփլունք,
Ո՞ւր ձեր այտեր անուշ հոտով,
Ո՞ւր ձեր պչրանք ու փափկություն,
Եվ ծոց լցյալ շաղ մարգարտով։

Ինչո՞ւ, հովիկ, անգո՜ւթ հովիկ,
Ցուրտ համբույրներ կուտա ձեզի,
Մոռցա՞վ արդյոք յուր սեր գողտրիկ
Եվ յուր գգվանք փայփայելի։

Ո՞ւր թիթեռնիկ հոլաթևյան,
Ձեր բաժակին հյութոց կարոտ,
Որ գայր թերթից ձերոց գունյան
Տանել ըզբույր հեռու և մոտ։

Ա՜հ, ո՞ւր սոխակն իմ սիրակեզ,
Որ տերևոց նստած ի շուք
Հալեր կարմրիկ վարդին ի տես
Եվ կողկողեր սրտամաշուք։

Ըրկա՛ զեփյուռ, չըկա՛ ծաղիկ,
Եվ ծաղկատարփ չըկա թիթեռ.
Ըրկա՛ սոխակ, ո՛չ վարդենիք
Լցյալ ցողով մարգարտահեռ։

Սակայն կուսի՛կ մի կա փափուկ,
Բոլոր անձեն շնչե գարուն,
Կուսիկ, որ դեռ թըվի մանուկ,
Հրեշտակ ի թուխ վարս ոլորուն։

Այլ ի՞նչ պիտին ծաղկանց փունջեր,
Հորժամ նորա այտերն հայիս.
Այլ ի՞նչ պիտին վարդից հոտեր,
Հորժամ նորա մոտ գրտնըվիս։

Ո՜հ, մի՛ երթար դու տեսնելու
Ձերմակ շուշանն թե յուր ճյուղիկ
Ինչպես նազի գլուխըն աղու,
Երբ հովն իրեն տա ողջունիկ։

Տե՛ս, թե կուսին փափուկ ուլան
Վերա ի՛նչպես կը տատանի,
Հույլ հոպոպյոք զեղածածան
Զքնաղ գլխիկ յուր նազելի։

Լո՛ւռ կաց, գիշերց սիրո՛ւն խոսնակ,
Լըսե՛ մեկ մ'ալ զյուր դայլայլիկ.
Լո՛ւռ կաց, լուսին երբ ի դաշնակ
Երթևեկեն մանու թաթիկք։

Ո՜վ հրաշագեղ կույս օրիորդ,
Հիմ հայրենիս թե դու էիր,
Հայոց շիրմաց արտասվահորդ
Ուռենիներն թե տեսնեիր,

Եվ յուր վրտակն ողբանըվեր՝
Ի սըրբափայլ յուր հայելի
Տայր օրորել այն քու պատկեր,
Որ հրեշտակաց է տարփելի,

Աննըմանյակ աչերդ մեղույշ
Նորա երկինք թե տեսնեին,
Ու մեկ նայաց, նայաց մ'անույշ
Արձրկեիր նորա հողին,

Հայնժամ սոխակ շիրմացն Հայոց,
Որ միշտ ողբա հողմոց ի մռունչ,
Գեթ մի անգամ լրոյալ ըզկոծ
Քեզ ողջուներ ուրախ մրրմունչ։

ԱՌ ԶԵՓՅՈՒՌՆ ԱԼԵՄՏԱՂԻԻ

ԵՐԳ

Դու փափկաթև մանկիկ զեփյո՛ւռ,
Աղբերց վրայեն լուսակարկաչ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփյուռ՝
Ի՞նչպես թրուչիս ինձ ընդառաջ,
Ու խունկ և զով ընծայելով
Զիս ողջունես հեզիկ շնչով։

Ո՜հ, կը սիրեմ ըզքեզ, հողմի՛կ,
Երբ դու փութաս ինծի գալու,
Ի պար, ի թռիչ, ի սույլ մեղմիկ,
Այրած ճակտիս իմ այցելու,
Ծաղիկ հոգվույս, քև զովացած.
Բացվի ի լույս ախորժ կենաց։

Սլացի՛ր, փափկիկ դու սուրհանդա՛կ,
Լո՛ւր տար հովտին ու ծործորին
Եվ անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին,
Թե մըտերիմն յուրյանց եկավ
Բյուր ըզմայլմանց հիշատակավ։

Ո՜հ, կորսրված իմ հաճույքներ,
Հոս վերըստին գըտնեմ ըզձեզ.
Ծառոց շըքով եք ծածկըվեր
Ու փըրփըրով առվակին հեզ.
Ահա կայտռեք ի հայս ծրմակ,
Ի այս թրփուտ հովանոցակ։

Հոս դառն հոգեր մեկիկ-մեկիկ
Ճակտես ի բաց հեռանային
Ու հույլք ժամուց գեղապարիկ

Սիրտը թեթև օրորեին,
Եվ բնություն՝ մայր որդեսեը՝
Քնքուշ զրկաց մեջ զիս գրգվեր։

Հոս ճեմեին երեկոյան
Ի զով ըստվեր պար մի կուսից,
Մազերն հովուն բազմաբուրյան,
Սիրտք ընծայված հեշտ վայելից.
Շող լուսնակին, կույսն ու աղջիկ
Ջիրար շոյեն սիրատարփիկ։

Մըտերմությո՜ւն, Սե՜ր կրակուբոց,
Ի՜նչ անուշ եք հայս տեսարան,
Ուր բյուր դալարք ձեզ հանգըստոց
Ու անհուն դաշտեր ըզբոսարան.
Մըտերմությո՜ւն, ինձ երանի՜,
Թե հոս ծոցեդ հոգիս թռանի։

Դու փափկաթև մանկիկ զեփյո՜ւռ,
Աղբերց վրայեն քաղցրակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց ըսփյուռ
Թրռի՜ր, թրռի՜ր ինձ ընդառաջ,
Ու խունկ և զով ընծայելով
Պարե՜ շորս դիս հեզիկ շնչով։

ՇԵՄՔ Ի ԼՅԱՌՆ ՀՍԿԱՅԻՆ

ԵՐԳ

Ծովը ցոլայր ու ծրփծրփայր,
Սուրայր ակատն ի մեջ ալյաց.
Հովն հեզաթռիչ երթայր ու գայր

Վազվըռտելով ամեն դիաց.
Բացե՜ք, հաճո՜ւյք, փափուկ թևեր,
Տարե՜ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Մըրմընջեին մանըր ալյակք՝
Նավուն կողից տալով համբույր,
Եվ կույս բաժիշտ՝ Ոգվույս նմանյակ՝
Երգ ծավալեր ի ծով անդուր.
Բացե՜ք, հաճո՜ւյք, փափուկ թևեր,
Տարե՜ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ի՜նչ շուտ հասանք և հանդարտիկ...
Կարծես ծովուն վըհուկ գրթոտ
Մեզ գգվելով ի ծոցն հուշիկ,
Բերավ ի զով հայս ըստորոտ.
Բացե՜ք, հաճո՜ւյք փափուկ թևեր,
Տարե՜ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ձերդ գեղավարս հաղթող հսկա,
Որ խրոխտ նայի ընդ շորս բոլոր,
Այնպես լեռն ալ մեզի մոտ կա՝
Անտառներով պըսակավոր.
Բացե՜ք, հաճո՜ւյք, փափուկ թևեր,
Տարե՜ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Թուչնա մը պես կուսիկն անուշ,
Տըված մազերն հովուն ի ծուփ,
Կը թըռչըտի ընդ քար, ընդ փուշ,
Դարեւ ի դար, թուփեւ ի թուփ.
Բացե՜ք, հաճո՜ւյք, փափուկ թևեր,
Տարե՜ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Դար վե՜ր, դար վե՜ր. ո՜հ, ի՜նչ վըսեմ
Ընդարձակի կապույտ եթեր.
Դար վե՜ր, ահա ծովուն նըսեմ
Դիտեմ հեռվանց ահեղ պատկեր.
Բացե՜ք, հաճո՜ւյք, փափուկ թևեր,
Տարե՜ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Միտք իմ անժույժ և սուրարշավ
Թրռավ հանկարծ յուր ալյաց մեջ,
Խաղաց, ծրփաց, թավալեցավ
Թուխ կոհակաց ընդ ելևէջ.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ու ձյունափայլ այն փրփուրներ,
Որ անդընդին ցայտեն մեջեն,
Կարծես ճերմակ վարդից թերթեր,
Որ յուր ծոցեն կըբողբոջեն.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Հուր հեր արփվույն կը ծավալի
Ի դաշտ, հարոտ գեղաժըպիտ,
Ծովն ի հերկինըս կը զմայլի,
Երկինք ի ծով ծիծաղախիտ.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ի՜նչ սըխրալի ես դու, բնությո՛ւն,
Յուր զարդերեն մեկն ալ դու չե՞ս.
Գա պարավոր աղվոր գարուն
Գունակերպիկ ծաղիկներով.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ի՜նչ գեղանի ես դու, բնությո՛ւն,
Երբ շաղն ու ցող ծոցեդ տեղան,
Եվ քու մեջքիդ գոտի անհուն
Յոթնակամար կապես ծիածան.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարեք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ու երբ գիշերըն կը բանա
Յուր աստղազարդ ամպհովանի,
Լուսնին զարդով ճակտին վերա
Նայի ծովուն ի հայելի.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ի՜նչ վեհ, ի՜նչ մեծ ես դու, բնությո՛ւն,
Որո նայվածքն է սուր փայլակ,
Իր ձայն՝ մրրրկոտ ալյաց մրոնչյուն,
Երբ ամպերեն վազե կայծակ.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ու այս ամեն ըսքանչելիք
Ավելի վեհ կուգան ի տես
Ու վառեն զիմ սիրտ և ոգիք,
Երբ ի բարձանց դիտեմ ըզքեզ.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ո՜հ, զայս բնություն երգե՛, կուսա՛ն,
Յուր զարդերեն մեկն ալ դու չե՞ս.
Քենե չքնաղ կըլլա՞ գուսան,
Որ ձայնիկովդ երկինք դյութես.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ահա խոսի...լըցան բոցով
Յուր սեաթույր ականողիք.
Ահա երգե... լըցավ խանդով
Հովիտ ու մարգ ու ամեն տեղիք.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Շունչք և մրմունջք դադարեցին.
Միայն հողմիկ փըշեր համբույր,
Ու ի վերա մաքուր ճակտին
Օրորվեին հոպոպք սամույր.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Ու լուսափայլ ամպիկ բարակ
Գլխուն վերև հեզիկ խաղայր,
Եվ հովանին զով և ախորժակ
Դեմքին վերա ծավալանայր.
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

Անշուշտ ի հայն ծածկյալ էին
Զույգ մի հրեշտակ օդապարիկ,
Որ իրարու փըսփըսային՝
«Ի՞նչ անուշ մեր երգե քուրիկ...».
Բացե՛ք, հաճո՛ւյք, փափուկ թևեր,
Տարե՛ք ըզմեզ բըլուրն ի վեր։

ԵՐԳ

Ալեմտաղըն այն գեղեցիկ
Գացի ժուռ գալ անհոգ մոլար,
Ուր բյուր վըտակ բյուրեղ ծոցիկ
Մատուցանեն տնկոց դալար։

Երբ փայլփըլուն ծագե արև,
Ոսկի ցանվի լերանց վերա,
Շող արձրկե ամեն տերև,
Զեփյուռ թփոց հետ կը խաղա։

Բայց քան զամեն հովիկ քնքուշ
Հրեշտակ մի անդ կը թևածեր,
Ու քան զամեն երգերն անուշ
Այն նազելվույն ձայնիկն հնչեր։

Թըռի՛ր ինծի, ահա մըռայլ
Անտառին մեջ իջավ գիշեր.
Կանչե պըլպուլ լուսնին ի փայլ,
Բայց անոնցմե չունինք ընկեր։

Սա հովանիքն անուշաբույր
Տեսնեն ըզմեզ թև ընդ թևով,
Ասդիս ծաղիկ, անդին համբույր
Փունջ փունջ սիրո ընծայելով։

Պարանոցիս մարգրիտ մանյակ
Կախե՛ սպիտակ քուկին թևեր,
Մազերդ գըլխիս իմ հովանյակ,
Ու լուռ մնջիկ սահին ժամեր։

Երբ բընություն անխոս կենա,
Մահկանացուք ձայն չեն հաներ.
Լուռ է ամեն ինչ որ շուրջ կա,
Ավելի տա՛ք խոսին սրտեր։

Շուշանափայլ բարձ մի փափկիկ
Ըլլա քու ծոցդ ինձ առ ի քուն.
Բայց թե այն սերդ է խաբուսիկ,
Լավ է չտեսնամ ըզլույս առտուն։

ԵՐԳ

Ո՞ւր էր, թե զեփյուռիկ
Ըլլայի թափառիկ,
Ոսկեթել մազերուդ
Տայի համբուրիկ։

Ո՞ւր էր, թե վարդ գոհար
Ըլլայի վառ ի վառ,
Ընտրեի ինձ բազմոց
Կուրծքդդ ձյունափայլ։

Ո՞ւր էր, թե քանարիկ
Ըլլայի ես թռչնիկ,
Թըռչիլ գալ ու շոյել
Դեմքդդ գեղեցիկ։

Կամ երազ խուսափուկ,
Որ գայի մինակուկ
Քունիդ մեջ խրոովել
Քու սիրտդ փափուկ։

Ի՞նչ ըրի ես քեզի,
Որ ցավոց այդպիսի
Եվ անբույժ հարվածոց
Ըլլամ արժանի։

Հրեշտակ էր, թրռավ,
Երազ էր, որ անցավ,
Այդ քու սերդդ փափուկ
Շուտով թոռմեցավ։

ՀԱՅ ՔԱՋՈՐԴԻ

Ապառաժուտ լերան մը կող,
Հեցյալ ի քար գերեզմանի,
Աչք մերթ հերկնիս և մերթ ի հող՝
Խարտիշագեղ կայր պատանի.
— Ո՞վ դու որդիդ լերանց հովտաց,
Ինչո՞ւ այդպես սիրտդ է ցաված։

Կուզե՞ս որ մեծ փոթորկյալ ծով
Մատուցանե քեզ մրխիթար՝
Կոհակաշարժ յուր լարերով
Երգյալ ի շունչ մրրրկավար։
Ո՞վ դու որդիդ լերանց հովտաց,
Ինչո՞ւ այդպես սիրտդ է ցաված։

Կուզե՞ս որ քեզ ահեղաշուք
Երնդա կամարն աստեղց անթիվ,
Եվ բընություն պայծառ զարդուք
Ժըպտի ծաղկամբ և զեփյուռիվ.
Ո՞վ դու որդիդ լերանց հովտաց,
Ինչո՞ւ այդպես սիրտդ է ցաված։

Կամ փափկագույն այլ ըսփոփանք
Միթե կուզե՞ս մոր քաղցվենի
Ու սիրուհվո անուշ գգվանք,
Որ քու կրսկիծդդ փարատի.
Դեռ ի՞նչ կուզես, ո՜հ, մի՛ ծածկեր...
— Կուզե՛մ վառոդ և գնդակներ։

ՄԱՀ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ

Դու զո՞վ խնդրես, մա՛յր իմ անույշ,
Ե՛կ, մի՛ դողար, մոտեցի՛ր հոս,
Անլաց աչոք դիտե՛ զորդիդ
Ու յուր վերքերն արյունահոս.

Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

Ինչպես երբեմն օրրանիս մեջ
Կակուղ ձեռքով փայփայելով
Մանկիկ մարմնույս հանգիստ տայիր՝
Իբրև հրեշտակ նըվագելով.

Զիս հանգչեցուր ի հող, և դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

«Նորեկ որդվույս կենացն արև
Ձեզի համար փայլի՛, հայե՛ր»,
Այսպես հայնժամ դու կ'երգեիր՝
Օրորոցիս նըստյալ քովեր.

Անոնց համար շիջավ, և դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

Կարմիր կայլակք ցայտին վերքես,
Սակայն, մա՛յր իմ, նայե՛ չորս դին,

Զարյունրռուշտ թուրքերրն, տե՛ս,
Հազարներով փրռված գետին.

Կերավ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

Մրռընչեցին ինչպես վիշապ
Ու մեր վրրա հարձակվեցան.
Ո՛վ Հայրենիք, ի հուր, ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան.

Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

Ե ծափ զարկին մեր հարց ոսկերք,
Չի չէ՛ մեռած Հայոց կրրակ,
Ու ցընծացին այնչափ զոհեր,
Չի լուծավ վրեժ հարյան վրտակ.

Խնդաց Մասիս, մա՛յր իմ, և դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

Վերջին համբույր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանես զայն սիրուհվույս.
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ոյր արդ կ'իջնամ ի ծոցն անլույս։

Խաչ մը տընկե վրրաս, ու դուն
Ուրախ լուրեր տա՛ր ի Զեյթուն։

ԹԱՂՈՒՄՆ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ

Ո՛չ փոզ զարկինք, ո՛չ արձագանք լեռնասույզ
Սարե ի սար չարաշրշուկ տարին լուր.
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտահույզ,
Երբ պատանվույն բացինք մրռայլ փոսին դուռ։

Գիշերասկան մունջ ըստվերներ շուրջ կային,
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք.
Լուսին միայն գողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ, բրլուր և երկինք։

Պետք չէր դագաղ, և ոչ ճերմակ պատանքներ,
Որով գոցվեր ազատորդի Զեյթունցին.
Նա հետ մարտին կարծես հոգնած կը հանգչեր,
Ու վերարկուն կարմիր բավեր յուր անձին։

Անձայն ու կարճ «Ննջեցելոց» մի զրուցեց
Մեր քաջ տերտերն, զինվոր հայոց և Աստուծո,
Գովեց ըզմահն և ըզքաջությունն յուր օրհնեց,
Թույլ չի տրվավ հառաչ մ'ու ճիչ հանելու։

Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշեն,
Տեսանք ըզգեղ ճակտին ու վերրըն պայծառ,
«Ո՛վ պատանյակ, ըսինք ամենքս մեկ բերնեն,
Վասն հայրենյաց մեռար, դու շա՛տ ապրեցար։

Գընա՛ զրուցե՛ հայկազարմից մեծ ոգվոց,
Որ կան այստեղ ազատ ու քաջ դեռ հայեր,
Որոնք ի բյուր պատերազմաց թեպետ խոց՝
Մեջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր»։

Մեյ մ'ալ քամի հանկարծ փըշեց ցըրտաշունչ,
Լուսնին շողերն եկավ գոցեց մրթին ամպ,
Ու մեր սարերն, զերթ ուրվականք անմրռունչ
Սև գլուխնին տնկած դիտեն ապշությամբ։

Հայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք յուր վրրան,
Խաչ մը դրրինք, ինչպես յուր մոր պատվեր ետ.
Ո՛չ այլ շրքեղ արձանագիր, ո՛չ տապան.
Զինքրն մինա՛կ թողուցինք յուր փառքին հետ։

ՀԱՅ ՔԱՋՈՒՀԻՆ

Այն ո՞ւր կերթա զըվարթագեմ
Եվ սուրալով լերանց վըրան
Փափուկ, թեթև ոտիցն ի ճեմ,
Ուսից վըրա հերքըն ծըփան։

Արդյոք չքնաղ եկա՞վ գարուն,
Կամ ավետի՞ս ետ ծիծառնուկ,
Թե՝ ե՛լ հագվե՛, պարե Զեյթուն,
Ելե՛ք ի դաշտ, ծե՛ր, կո՛ւյս, մանո՛ւկ։

Եվ նա խնդում և զարդարված
Ու նազելով աշխուժաբար
Կերթա ընդ պարս ընկերուհյաց.
Քաղել նարկի՞զ և նունուֆա՞ր։

Սակայն ոչ ոք կա իրեն քով.
Ձայն մը լըսվի, բայց ծիծառն չէ.
Թևիցը տակ չունի կողով,
Ուր որ ծաղկի փունջեր շարե։

Բոթ մը փչեց ինչպես մըրրիկ,
Ու Զեյթունի անտառներուն
Հաղթահասակ դողան մայրիք.
Ցցվեց առյուծ բաշ գալարուն։

Այն բարձրաբերձ սարից պահպան
Ազատությունն՝ ել սըլացավ,
Հովտաց, դաշտաց, հյուղից վըրան
Թևատարած հովանացավ։

«Արի՛ք ի զեն, թուրքն ահարկու
Լողաց եղբարց արյան ի ծով,
Արդ ի մեր կույս վազըս կառնու
Արյունթաթախ ճիրաններով»։

Ու կանգնեցան հսկայաբար
Հազարավորք՝ աչք բոցահատ,
Իրենց ահեղ սարից հավսար
Բարձրացուցած գոռոզ ճակատ։

Բայց ո՞ւր կերթա այն գեղագեմ
Աղջիկ թռուցյալ լերանց վըրան,
Փափուկ, թեթև ոտիցն ի ճեմ,
Ուսից վըրան հերքըն ծըփան։

Ի՞նչ է այն, որ կուրծքըն սըխմե։
— Բոցանըշույլ զըրա՛հ մի լայն.
Ի՞նչ գրգվանոք նա համբուրե.
— Ճակատամուղ երկա՛թն է այն։

Նա այլ գրգվանք և այլ համբույր՝
Կուսան անբիծ՝ դեռ չըգիտեր,
Երախայրի սրտին ի բույր
Ցոլաց միայն ազգին յուր սեր։

Օրհնյա՛լ, անմահ դու Քաջություն,
Գրսակ լանջաց Ազատության,
Որ զհրեղեն վառես Զվարթուն
Եվ զսիրտ քնքույշ հայ աղջկան։

Դու մեկ օր մ'ալ անհուն թեռեր
Գիտի թըռչիս ի Հայաստան,
Մեկ ձեռքով զայն կանգնես ի վեր,
Մյուսով գլորես թուրքըն կործան։

Տե՛ս, ինչպես քաջ կույս Հայկուհին
Երախույս կարդա գոռ բարբառով.
«Հառա՛ջ, մոտ կա ժանտ թըշնամին,
Զինք վանեցե՛ք կոտորածով»։

Տեսին հսկայք զայն ահավոր,
Ծափ ըղծափի մեծ աղաղակ

Որոտացին ցրվիր-հրա խոր,
Կարծես բամբյուն հանեց կայծակ։

Հայկուհի՞ն է, տեսե՞ք, ահա
Կրակներ թափին յուր աչքերեն.
Հայկուհի՞ն է, որ թըռչի գա,
Ինչպես հրեշտակ ըսպառազեն։

Որպես շանթից հրավառ նիզակ
Զարնե կառափ մեր հաղթ լեռանց,
Այնպես զարնենք այն ավազակ
Թըրքին գրլուխն արյունախանձ։

Ինչպես մղյալ ի փոթորկաց
Գլորին ժայռից մեր հատորներ,
Հա՛պա, այնպես ի մեջ թըրքաց
Իյնանք թավալ օրհասաբեր։

Հայկուհի՞ն է, կտրիճ եղեք,
Հայկուհին տա խրախույս հոբդոր.
Ժանտից վերա հուր տեղացեք,
Մինչև մոխիր դառնան բոլոր։

Ու շանթեցին, հարցե՞ք, ո՞ւր է
Այն բազմամբոխ թրքին բանակ.
Սևափրփուր շունչն արձրկե
Զեյթունցիին ոտքերուն տակ։

Այդ կույսն աղվոր ո՞ւստի կուգա,
Թռուցյալ զրվարթ լեռանց վերան.
— Պատերազմեն նա կու դառնա,
Հերաց վերա դափինինք շողան։

ՅՈՒ. ԵՐԳԱՆԻԿ

Ո՞ր մանկանացուն աչք Երգի վրա
Երջանիկ ժամեր վերցնել կրնա,

Եվ ո՞րն է այն վարդ՝ ծլած աշխարհին,
Որ ձեռքերուդ մեջ իսկույն չթոռմի.

Ո՞հ, չեք երջանիկ, ո՞հ, դժբախտ հայեր,
Մինչդեռ Հայրենիք չեք մխիթարեր։

Թե մտքով գրկես երկիրն ու երկին,
Եվ ամեն գաղտնիք քեզ մերկանային,
Անհնար է քեզ ըլլալ երջանիկ
Այդ դժխեմ բախտին թշվառ խաղալիք.

Ո՞հ, չեք երջանիկ, ո՞հ, դժբախտ հայեր,
Մինչդեռ Հայրենիք չեք մխիթարեր։

Իզուր գյուցազունք պատերազմական
Դաշտերու վրա կանգնեցին նշան.
Հազիվ ստացան հաղթության պսակ,
Կորզեց ձեռներես զայն մահու հրեշտակ.

Ո՞հ, չեք երջանիկ, ո՞հ, դժբախտ հայեր,
Մինչդեռ Հայրենիք չեք մխիթարեր։

ԹԵՈՆ ՎԱՄՍԱ

ԵՐԳ

Ո՞ւթ է դիշերս, ինչպես սիրտս ալ.
Եվ թուխ ալիք մշտափրփուր
Վանա ծովուն ծիածավալ
Հառաչանոք լի են տըխուր։

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս։

Ո՞վ նազուհի դուստր իմ Մեհեկ,
Շուշա՞ն և վարդ դաշտաց մերոց,

Եկո՛ւ, և հորդ ծերուկ ու հեք
Առաջնորդե՛ ի Զորն Հայոց։

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս։

Քո սիրատարփ կտրիճ Արտակ
Տըխուր երգեց, ո՜հ, այս գիշեր.
Սերն էր երգոց յուր նըպատակ,
Բայց Թորգոմա զաղետն հիշեր։

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս։

«Ո՜հ, ինչվան ե՞րբ հաճույք և սեր
Առանց սուգի պիտի չըլլան».
Այսպես ի քնարն յուր նա երգեր,
Ու արցունքով աչք մեր լըցան։

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս։

Հոս են շիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամեն դամբան,
Երբ փոթորիկ գոռա հանկարծ,
Հեծեն՝ ննջող ոգվոց փոխան։

Գոց են ամպով աստղունք... և հույս,
Դեռ շատ հեռու է Արշալույս։

Հին են ցավերս, հեծեմ և ես.
Ժամ է իշնամ ի գերեզման,
Երթամ վեհից հայոցն ի տես,
Վանա կոհակք թող զիս ողբան։

Եվ դու, Մեհեկ, կուլա՞ս անհույս,
Ո՜հ, ո՛չ, գընա՛... գա Արշալույս։

ԱՌ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՕՐԻՈՐԴՍ

ԵՐԳ

Շատ դարերու ցավերով,
Տրտում տըխուր ողբական,
Ի գերեզմանս նստելով՝
Արցունք թափե Հայաստան.
Ո՜ կույսք, փունջ մի քաղեցե՛ք,
Եկեք իրեն մոտեցե՛ք։

Եվ պար առյալ վայելուչ,
Ո՜վ դուք ժըպիտք հայ հուսո,
Երգեցե՛ք երգ սրտառուչ
Ըզդարձ բախտին և լուսո.
Ո՜ կույսք, փունջ մի քաղեցե՛ք,
Եկե՛ք իրեն մոտեցեք։

Փունջ մ'ալ անգին իմաստից
Եվ գիտությանց ծաղկավետ,
Պարկեշտագեղ բարոյից,
Որով պարծի նա հավետ.
Ո՜ կույսք, փունջ մի քաղեցե՛ք
Եվ զայն իրեն մատուցե՛ք։

Հրավեր տըվե՛ք սըրտաթունդ,
Ու քաջալանջ պատանիք
Թող սըլանան գունդագունդ
Հոն, ուր կոչեն Հայրենիք.
Ո՜ կույսք, փունջ մի քաղեցե՛ք,
Նոցա ճակտին մատուցե՛ք։

Ճարտար մատամբք ձեր հորդոր
Գեղեցկահյուս բանվածով,
Դուք հայ փառաց սրգավոր
Հորինեցեք թագ շուտով.
Ո՜ կույսք, իրեն մոտեցե՛ք
Ու զայն յուր գլուխը դրրե՛ք։

Դագրին նվաղք ողբերգու,
Սրբի արցունքն Հայաստան,
Չի հույս զըվարթ օրերու
Ազչկունք Հայոց իրեն տան.
Ո՜ վույաք, իրեն մոռեցե՛ք
Ու թագն յուր գլուխը գըրե՛ք։

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆ

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացվին դռներն հուսո,
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ,
Ջքնաղ երկին մերո Արմենիա,
Երբ փայլի յուր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն ի բույն դառնա,
Երբոր ծառերն հագնին տերև,
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։
Ցեսի դաշտերն Սյուրիո,
Լյառն Լիբանան և յուր մայրեր.
Տեսի զերկիրըն Իտալիո,
Վենետիկ և յուր կոնտոլներ.
Կրզզի նման չիք մեր Կիպրա,
Եվ ոչ մեկ վայր է արդարև,
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։
Հասակ մը կա մեր կենաց մեջ,
Ուր ամենայն իղձ կ'ավարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Հիշատակաց յուր կարոտի.
Հորժամ քընարս իմ ցըրտանա,
Սիրո տալով վերջին բարևս.
Երթամ ննջել հիմ Կիլիկիա,
Աշխարհ, որ ինձ ետուր արև։

ՄԱՆՈՒԿ ԵՎ ԱՐՏՈՒՅՏ

Դարանամուտ կամ վազուց ես լըռիկ,
Եվ ոչ դյուրավ քեզ ձեռք բերի հիմիկ.
Պետք է երգես, իմ սիրուն Արտուտիկ,
Որ դու տաս սըրտիս զվարթ քու դայլայլիկ։

Մի դողար ի տես վանդակիս անել,
Ծաղկոք եմ պատած ես անոր թելեր.
Դու քեզ մարգերու կրնաս մեջ կարծել,
Երգե ինծի հետ, թրոչնիկ սիրավեր։

Երբ գա նոր գարուն՝ բնության նոր ուժ,
Եվ մեզի պայծառ օրերու տա հույս,
Գողտրիկ մարմանդին մեջեն ձայնդ անուշ,
Ջամբիծ քու սիրույդ կը տոնե զխնճույս։
Այլ իմ քովս այժմիկ ընդե՞ր կաս լրռած,
Կամ մինչ ես ձայնովս եմ քեզ աղերսարկու.
Ա՜հ, գուցե ես քու ձայնիկ չեմ լսած,
Թո՛ղ ես փորձ փորձեմ, օ՜ն երգե՛ և դու.
Կամ ո՜հ, գուցե ես քու անուն չեմ ուսած,
Թող ես փորձ փորձեմ, օ՜ն երգե՛ և դու։

Վա՜խ, այսքան աղերմ չընդտին շնորհ,
Եվ դու կաս մնաս միշտ խուլ ու պապանձ.
Արդ թրոիր գնա՛, հավիկդ ապաշնորհ,
Չուզեմ քեզ ընել գերի իմ կամաց։
Բայց խիստ հովանյաց տակ մեյ մ'որ նեռվիս,
Ա՜ռ երգերդ իսկույն ու հեշտ զվարթիքդ,
Չի անտառներու տեսնեմ պետք ունիս,
Որ զազատություն երգես անդորրիկ։

ԳԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

***

Գարնանային կենացս մեջ
Սիրո ծաղկունք մինչ փրթթեին՝
Սիրտս վառված սիրովն անշեջ
Առաքինվույն և գեղեցկին,

Մահագուշակ խորշակն անդեն
Հասավ տիրեց սրտիս բոլոր,
Թառամեցան ծաղկունք ամեն
Մրլած փթթած սրտիս մեջ նոր։

Այն, որ տրվավ երկրիս գարուն,
Ծաղկունք, մարգերն ալ զարդ նորին
Եվ մարդկային վեհ սրտերուն
Ուսույց սիրել զեղն ու բարին,

Ինչո՞ւ արդյոք խորշակահար
Կ'ընե ծաղկունք դեռափրթիթ,
Ինչո՞ւ արդյոք Նա սիրահար
Սրտերն զեղու արտասվոք միշտ։

Ահա կիջնեմ, ո՜հ, ես այժմեն
Առջևս բացված գերեզման խոր,
Բայց սա տրխուր տեսարանեն
Ի՜նչ կա արդյոք հաճույք մ'Անոր։

ԻՑԻ՞Վ ԹԵ

Ո՜հ, ի՞նչ ես դու, սե՞ր, երկնի հուր կամ ժրպի՞տ...
Չ'ունի երկին աչացդ կայծերն ու կապուտ,
Վարդը չ'ունի քու լանջդ ամբիծ, լուսափթիթ,
Չ'ունի լուսինն վարդերն շիկնոտ այտերուդ։

Գիշերն երկնի կայծից, լուսնույն տխրադեմ,
Ցերեկն ալյաց, ծաղկանց ծպտիս... մեկո՞ւն գեթ...
Իսկ քեզ համար ես արցունքով կ'աղոթեմ,
Դու չե՞ս շնորհեր նայվածք մ'ինձ հուր աչերեդ։

Արդյոք էա՞կ մ'ես թե երկնի զրվարթուն,
Կը նախանձին փայլիդ վրա վարդ, լուսնակ.
Զայնիկդ ապշած լրտելով քաղցր ու թրթռուն՝
Նոճերու մեջ կ'սրգա լրտիկ լուսինյակ։

Մնեի իցի՞վ թ'հևացող հով մ'անուշիկ,
Եվ գգվելով երազք ճակտիդ այդ անուշ՝
Տայի շունչս շուրթերուդ մեջ ես հուշիկ,
Լոկ սրբելով՝ եթե շողար աչքդ արտասուք։

Պարտեզդ իցի՞վ թե փթթեի վարդ լացող,
Եվ երբ գայիր այգուն շաղին ժպտով պերճ՝
Գունովս ներկել այտերդ, թափել գոգդ իմ ցող,
Թոռմեի գիրդ ձեռքդ տայի կյանքիս վերջ։

Բխեի ես իցի՞վ թ'առու մը վրձիտ,
Եվ երբ հուշիկ նստած մոտ իմ եզերքին,
Ցոլանար իմ հայելվույն մեջ քու ժրպիտ՝
Պղտորելով կապույտ ալիքս՝ ցամքեին։

Ա՜հ, իցի՞վ թե լիներ ես ճառագայթ,
Շողշողայի գեմքդ վրա վայրկի մի,
Խաբեի քեզ թ'ես ավելի գեղազարդ,
Ի'անուշաբույր մազերուդ մեջ մարեի։

Այլ ո՛չ, անգո՛ւթ, եթե տրվիր մեկուն սեր,
Իցի՞վ թ'անոր գերեզմանին քարն լինիմ,
Եվ դու թոշնած գաս ինձ՝ շուրջս... արտասվե՞լ...
Քեզ հրպիղու հանար հարկ լոկ գոլ ինիմ...

ՎԻՇՏՔ ՀԱՅՈՒՆ

Փոխանակ քաղցր օրորներու, հայրենի՜ք,
Օրրանիս քով մայրիկս ըզքեզ միշտ ոգբաց,
Համբույրին հետ շիթ մ'ըզգացի արտասվաց,
Աչերս տեսան արցունքներու լոկ երկինք։
Ամերակաց ծաղկանցդ ոսոկ այցելու
Ջեփյունն չ'եկավ նժդեհ ճակատս շոյելու.
Փառաց դարեր ծընող՝ ընկնող հայրենի՜ք,
Մամռոտ ավերք և դամբարան զորավիգ
Արարատյան հսկայից,
Ուր ծոր ճակտով վիրալից
Հեծե ոգին հայկական...
Բայց ի զո՜ւր. ոգբ, վայ, կական
Եվ արտասուք ու հառաչ
Քեզ ըսփոփել չ'են կարող,
Այլ վեհ ճակատ քրտնաշող
Ի'արյունաբուխ կող ու լանջ։

Մոխիր հագած՝ արյուն ծրծած սև հողե՛ր,
Ուր կը տիրեն սոսկում՝ տրխուր հիշատակք,
Ալ ծոցեդ թռեր են հուսո քաղցր հրեշտակք
Եվ արյունոտ դափնի մ'անգամ չ'են թողեր...
Սև շղթաներ եղան ինծի խանձարուր,
Մրթության մեջ սրտիս վրա հսկեց սուր,
Միթե Հա՞յ եմ՝ մինչդեռ չ'ես ինձ, Հայաստա՜ն,
Եվ հոյակապ, վեհ կոթողներդ պատվանդան
Օտարաց գահդ՝ հիշատակ,
Եվ ճակատդ կրես պրսակ
Արդ փրշահյուս, սև նոճի...
Ալ չըկա՜ վառ թագդ առչի,
Որուն ականց տեղ անդին՝
Դառնաթախիծ մրտածմանց
Քրտունքներ սառ՝ քար կտրած՝
Կնճռոտ ճակատդ պճնեցին։

Երբոր տեսավ արյունլրվա վարդին ծոց՝
Վարդատարփիկ բուլբուլն գոռով թռչեցավ,

Սուգին փափկիկ թևքն արցունքով թրջեցավ՝
Սիրատրոփ լանջք կուսից տեսավ երբ սրախոց...
Լրեցին քնար, համբույր, գեղգեղ և մրմունջ,
Հրաժե՛շտ տիրեց... և սիրակաթ շուրթեր մունջ
Համբուրեցին սև հողեր, ժայռ և ալիք,
Բույլ բույլ, բյուր բյուր ոգիք թրռան տրտմալիք.
Մասյաց մուսայք դողահար՝
Թողուցին պսակ և քընար.
Դաշտեր, ձորեր և սարեր,
Ալիք, ժայռեր և սառեր,
Հե՛գ հայրենիք Հայաստա՛ն,
Ըզքե՛զ, ըզքե՛զ ողբացին,
Որ ուրացողք քեզ բացին
Բյուր բյուր՝ սև սև գերեզման։

Հայն էր, որ թագրդ գըլորեց փայլարձակ,
Եվ ալևոր ճակտիդ բարդեց սև ամպեր,
Հետո վայեց, երբ գերեզման կըշտապեր,
Այլ շնչասպառ էր՝ չ'ուներ ձեռքը կայծակ,
Որ այն ամպերն փոթորկաբեր փարատեր,
Եվ հայրենիքն շղթաներե ազատեր.
Նոճյաց խորքը մահվան շունչը սոսափեց,
Սոսկմամբ ցնորած Հայն իր երկրեն խուսափեց.
Թողուց տվեր և արյուն.
Թաղեց հոն փառք և ավյուն.
Արդ կը տեսնե բոթաբեր
Ներկայն՝ ճիգ մը չը թափեր,
Հայաստա՛ն, քեզ փրկելու,
Անզգա դարձած դարե դար՝
Չը հիշեր քեզ, չը փութար
Քեզ անձկանոք գրկելու։

ԻՂՁՔ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Երբոր ցողին փաղփուն շիթերն գիշերվան
Խոսք, թերթի, ծաղկի վրրա կը շողան,

Օրկինքն երբոր աստղեր փալփլին գիշերը՝
Ցայտեն արցունք, կայծ իմ ցաված աչերը.
Ի՜նչ, Հայաստա՛ն, քեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ սև նոճի մ'ըլլալ, քեզ շո՛ւք տալ։

Չ'իս աստղազարդ երկին սփոփել չ'է կարող,
Մասյաց սարին արտասվալից է նա քող,
Ձեր հիշատակն ինծի համար հեշտագին՝
Նրման կուսին սիրո առջի արցունքին.
Դամբա՛նք, ավե՛րք, Ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ ուղիս մ'արցունք ըլլալ, Ձեզ թա՛ց տալ։

Երկաթ, շղթա, զնդան, անդունդք ու վրհեր,
Ամպրոպ ու շանթ, մահվան զանգակ ու ջահեր,
Չ'է, չ'են կարող պահ մը Ձեր վառ հիշատակ
Ծածկել սևի ու սոսկումի՝ վեմի տակ.
Ազա՛տ օրե՛ր, Ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, այլ հուր մ'ըլլալ և Ձեզ Հայո՛ւն տալ։

Զվարթ բնության այն կամարներն ծաղկահյուս,
Բույր, կայծ ու գեղ, նայվածք, ժըպիտ սիրուհվույս,
Անուշ հովեր, արծաթ ալիք վրտակին
Ձեր հուրն սրտես պահ մը առնել չը կրցին.
Փառա՛ց օրեր, Ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, պատրույգ մ'ըլլալ այլ Ձեզ, ու լո՛ւյս տալ։

Արշալույսին տժգույն աստղեր երբ փալփլին,
Գողտրը գեղգեղ վարդակարոտ բուլբուլին,
Բնության դաշնակք, ո՜հ չ'են կրնար նվաճեր
Ձեր հառաչներն, որով մոռնչեն նոճիներ.
Սև՛, սև՛ օրեր, Ձեզ մոռնա՛լ...
Երբե՛ք, արյուն մ'ըլլալ և Ձեզ կարմի՛ր տալ։

Թերևս ժպտին Մասյաց մրթին սարերը,
Կամ արտասվին Սիպերիո սառերը,
Բայց սև հոգիք ու սև ճանկեր չ'են կրնար
Խեղդել իմ ձայնս, փշրել փրշոտ իմ քնար.

Արդարությո՛ւն, քեզ մոռնա՞լ,
Երբե՛ք, այլ սուր մ'ըլլալ, սրտեր քեզ մուտ տալ։

Մինչ ցե՞ր գոչեմ, ձայնըս մեկը չը լսեր,
Հայն յուր ժանգոտ շղթան երբե՛ք չը սարսեր...
Վայրկյան մ'ինձ հետ դեռ իրավունք չ'թոթովեց,
Հայն զ'իս ծաղրեց, և ձայն մը զ'իս չը թողեց.
...Դեռ կը գոչեմ Ձեզ, Հայե՛ր,
Որ դամբանիս մեջ չը լրտեմ Ձեր վայեր։

Հարուստն ու կղեր թե ազգ ըզգան ու վառին,
Թե «լույս և սեր» Հայ սրտերուն մեջ թառին,
Թե լուսո գարն երկնե «ազատ զավակներ»,
Թ'եղբայրության, սիրո վառին կըրակներ,
Թեև ըլլամ ես մեռել,
Դամբանես դուրս կ'նետվիմ ԱԶԱՏ Հայն տեսնել։

ՍԻՐԵՑԵ՛Ք Զ'ՄԻՄՅԱՆՍ

Վարդակարմիր Գողգոթային վեհ գագաթ
Միշտ փալփըլող, սիրո անշե՛ջ ճառագայթ,
Դեռ կըսպասե՞ս թափել սրտից քու սըլաք.
Ջ'ո՞վ կը հրսկես, վիհ և անդո՞ւնդ, թե կըմախք.
Մ'ը սև ժայռից մեջ մարեցավ այն բեկբեկ
Բարբառն վրսեմ, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»։

Մանկե ամպով կարմիր կողերդ, Գողգոթա՛,
Եվ թող խայտան ցավոտ ոսկերք սև Հուդա...
Ժանգոտ ու գուլ թուրերն առին կարմիր փայլ,
Նոր կրոնին հետ արյան հեղեղն առավ քայլ...
Թնդանոթին առջի բոմբյունն խեղդեց սեգ
Ջհաղաղքն քաղցր, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»։

Մարդազոհով Վատիկանի մըխացին
Մխնելույզքը, կամարքը «փա՛ռք գոռացին,
Փոխ-Քրիստոսք խաչն ըրին դաստակ կացինի՝
Սև դրոշ մը ատելության արյունի.
Դարուց մոխրեն կամ ամպերեն հուսա հեք
Զրկյալն լրսել, թե «ըզմիմյանս սիրեցե՛ք»։

Տնանկին դամբանը կ'անհետի ոտնակոխ,
Տընակին մեջ մարի առկայծ կանթեղն հող,
Այն մութին մեջ նոթի արդեկք կը հեծեն,
Դղյակըն խրախ մինչև լույս ջահք կը հյուսեն,
Հարուստին կառք ժխորով կ'անցնի սրրաթավ,
Հեքին դուգաղն իր գերեզմանն լուռ իջավ...

Գեթսեմանին-իջնող հրեշտակն դալկահար,
Որ գեղ, ծաղիկ, արցունք ու փառք չը ճանչնար՝
Նորա ցուրտ գոգն աղքատը սոսկ կ'ըսփոփի,
Ճոխն ու տընանկ պատանին մեջ կ'ըլլան մի.
Կայծակնաթև թե մըռընչեն մրրրիկներ
Թե «սիրեցե՛ք զ'իրար», հեքն հոս չեն սիրեր։

ՆՎԱԳ
Է ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ

Պատուեր են Հայոց դաշտերն արյունոտ,
Հայկազն հրսկայից կըմախք կայթեն ի ոտն,
Մոխրոտ ու մամուռոտ ավերակք խայտան,
Մասիս բարձեր է վեհ ճակտեն պատան.
Հիշատակն Հայն կը կանչե,
Հայն Հայաստան կը կանչե։

Զինվո՛ր Սիրո, դրոշդ ծալ-ծալ ծրփացո՛ւր,
Սորվինք խաչովդ սեր, 'քան թե փայլել սուր,
Հեշտ արցունք թափեն սառք Մասյաց սարին՝
Երբ Հայեր աննենգ իրարու փարին.
Հայաստանը դեռ ողջ է՝
Թե Հայն միշտ Հայը կանչե։

Հայրենյաց տրխուր մեջ ավերակաց՝
Հուր հոգի մ'ըսկեր, կանթե՛ղ սիրակայծ,
Միշտ դեպ 'ի հեք Հայն տաներ քայլ հառաջ,
Նա աղյաց խորն Հայն՝ կուրծն էր գամած խաչ.
Ըսին թե Հայն զայն կանչե,
Սե՛ր է, նոճյաց լոկ ձայն չէ։

Ծովե՛զր, որ սիրո նախ տվիր արձագանք,
Արյուն չը ծրծած հողդ, չը թաղած գանկ,
Բաժակք հնչեցին՝ ո՛չ սև թնդանոթ,
Հյուսեցան կամարք դափնյաց սիրահող.
Սև վետ հափունսդ թե հնչե,
Հեք Հայն եղբայրն կը կանչե։

Դառն են արցունքով մեր սիրո բաժակք,
Սիրո դրոշք՝ մեր քերց արցունքոտ լաչակք,
Թե չերդնումք, եղբա՛րք, հիշել զՀայաստան,
Արյամբ ևս պահել պատիվն Հայոց տան,
Կը տառապի՝ Հայրենիք,
Կամ Հա՛յ ըսվինք կամ մեռնինք։

ՆԵ

Վարդը գարնայնի
Թե կույսին տիպար
Այտերուն չ'ըլլար՝
Ո՞վ կ'հարգեր զ'անի։

Թե չը նմաներ
Կապույտն եթերաց
Կույսին աչերաց՝
Երկինք ո՞վ կ'նայեր։

Թե կույսը չ'ըլլար
Սիրուն ու ամբիծ,
Աստվածն այն երկնից
Մարդ ո՞ւր կը կարդար։

ՀԾԾՅՈՒՆՔ

Երբոր վարդի փունջք հայեցի՝
Ծըլան տժգույն ճակտիդ վերև,
Խոնարհեցիր աչերդ արև,
Քեզ այն օրեն ես սիրեցի։

Թերթեր հուզող սյուքի մը պես՝
Թրռար սրտիս ծալքերն թոթվել,
Քընարի մը կըրակե թել՝
Քեզ ձրգեցիր դու աղիքես։

Արդ կը փախչիս ինձմե սյուքի
Պես, շուքդ տաս լոկ քընարիս,
Գիսաստղի պես հեռուն կ'նազիս՝
Հովին տրված մազերդ ոսկի։

Երբ աստղալույց գիշեր է զով,
Շրջագայիս Պաղլար-Պաշի,
Գիտե՞ս թե սիրտս ո՞րչափ մաշի՝
Շրջազգեստիդ լոկ շրշյունով։

Գա սյուքն ազատ քեզ այցելու,
Նային քեզի աստղերն ազատ,

Ըստվերին մեջ միենակ ու զատ՝
Ես կը դողամ քեզ մոտենալ։

Ո՜հ, թող երթա՛ այուքն իր ծաղկոց,
Նայի՛ն աստեղք թող հ՚օվկեան,
Եվ թող մեկ մ՚ե՛ւ ալ թալկանա՛մ
Քու նայվածքիդ մեջ կրակոտքոց։

Մահիկն երբոր շառագունած՝
Իջնե լեռնեն ի հորիզոն,
Ալ կ՚անհետիս, չ՚ես շրջիր հոն՝
Կազին, հովին, աստղին դիմաց։

Գերեզմաննոցին ցուրտ ծառեր
Կը փրսփրսան մեռելոց հետ,
Շրջազգեստիդ շրշյունին գեթ
Ինձ արձագանք մահահրավեր։

Նրվաղած են լույս ու ժրխոր,
Դադրած շրշյունք կանանց՝ անմոռնչ
Արդ կը թաղվին համբույր, մրմունջ՝
Աստեղազարդ անդունդին խոր։

Շրջազգեստիդ խշրտոցքն հար
Կը փրսփրսա դեռ ականջիս,
Հեծկլտալով իշնե հոգիս
Արտոսրալից անդունդ մ՚ի վար...

ՍԻՐԵԼ

Բույլ մը նայվածք, փունջ մը ժպիտ,
Քուրա մը [illegible] իմ սիրտս։

Ես ուզեցի լոկ մենանալ,
Սիրել [illegible], [illegible]։

Սիրել կայծերն երկնի կապուտ,
Առտվան շաղն, իրիկվան բալ,
Ճակատագրիս սև գիծ կարդալ,
Խոկալ, սուզիլ, ըզմայլիլ սուտ։

Ո՜հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջազգեստ մը շրշեց իմ շուրջ։

Ես ուզեցի լոկ ու միենակ
Սրտակցիլ ջինջ վրտակին հետ,
Հիշատակի չ՚ունի նա հետ,
Սի՛րտ մ՚որուն մինչ սուզիմ հատակ,
Գտնեմ զ՚իս հոն դժգույն, հստակ,
Գաղտնի՛ք մ՚ունի— այն՝ անթիվ վետ։

Եթեր մը տրոփ սրտի լսեցի,
Հծծեց.— կ՚ուզե՞ս սիրտ, ե՛կ ինծի։

Ես ուզեցի սիրել զեփյուռ,
Որ երկնքեն թռչի բեկբեկ,
Նա չը սիրեր խոցել երբե՛ք,
Հոգի՛ մ՚որուն գաղտնիքն է բույր,
Գիտե շոյել երազներ բյուր,
Երկնի բույրն հ՚ուշ կ՚ածե առ հեր։

Ո՜հ, փունջ մը բոց փրսփրսաց ինձ,
—Կ՚ուզե՞ս պաշտել հոգի մ՚անբիծ։

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս, հոս դալկահար,
Պաշտել, գրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչել զ՚անի,
Ըստ իմ քրմաց լարել ազի,
Եվ սրտակցիլ սիրոզարար։

Նե մոտեցավ հուշիկ, ըսավ,
— Քնարդ է ցուրտ սիրտ և սեղրդ ցավ։
Թոթվեց թևերն հոգիս մոլար,
Ճանչեց ըզնե գեղ ու կրրակ։

Սիրտն անապակ՝ ինչպես վրտակ,
Անմե՛ղ՝ ինչպես սյուք դալկահար,
Հավատարի՛մ՝ ինչպես քընար,
Հրաժեշտ տրվավ կյանքի մենակ։

Բույլ մը նայվածք, փունջ մը ժրպիտ,
Քուրա մը խոսք դյութեց իմ սիրտ։

ԴՐԺԵԼ

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դրժոխք մ'անեծք խոցեց հոգյակս։

Ես ուզեցի պաշտել ըզնե,
Սիրել ժպիտքն՝ փրթի՛թք անհուն,
Սիրել աստղերն սև աչերուն
Եվ այն խոկումն, որ մրթագնե
Պայծառ ճակատը՝ այն ամպն է
Որ կ'ըշպարե դեմքը լուսնույն։

Գիշեր մը սուգ, անդունդ մ'հառաչ՝
Հուզեց ներա հոգին ու լանջ։

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մրտիկ ընել թնդյուն սրտին,
Շնչել, խրմել ներա հոգին,
Եվ շոշափել լոկ ձյունափայլ
Ծոծորակին վրրա ծալ-ծալ
Թափող վարսից ալյակք ծրփին։

Օվկեան մը տրտունջ լսեցի,
Ջի՛ս կը նեղե՛ս— հծծեց ինծի։
Ես ուզեցի քընար մ'ըլլալ
Ներա ձեռքին տակ հևացող,

Ներա հոգվույն խորն հիացող
Թեթև պատկեր մ'ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնե՛ խոկալ,
Կ'վառե երազ մ'որուն մեկ շող։

Ամպրոպ մը սաստ ցնցեց հոգիս,
Գոչեց— սիրել չե՛ս կրնար զ'իս։

Ի զո՛ւր սիրտըս մրխաց առջին՝
Խնկարկելու սիրտն անապատ.
Ցուցի իրեն ճակատս գունատ,
Կուրծքս գոգած, մարն իմ աչքին,
Ի զո՛ւր շուրթերս դողդոջեցին,
Ջ'ինքը սիրելս հծծեցին հայտ։

Նե հեռացավ ինձմե, ըսավ.
— Բա՛վ սիրեցի քեզ, մնաս բարյա՛վ։

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս հիս,
Ճակատագիրս խնծդաց ի վեր,
Խորշ մը կար որ զ'իս չը ծաղրեր,
Այն լուռ փո՛սն էր գերեզմանիս...

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ'անեծք խոցեց հոգյակս...

ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած են, լճա՛կ,
Ու չ'են խայտար քու ալյակք,
Միթե հայլվույդ մեջ անձկավ
Գեղուհի՞ մը նայեցավ։

Եվ կամ միթե կրզմայլի՞ն
Ալյակքդ երկնի կապույտին,

Եվ այն ամպոց լուսափթիթ,
Որք նըմանին փրփուրքիդ։

Մելամաղձոտ լըճա՛կդ իմ,
Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավչիչ, լըռիկ ու խոկալ։

Որքան ունիս դու ալի՝
Ճակատս այնքան խոկ ունի,
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի բյուր։

Այլ եթե գոգդ ալ թափին
Բուլլքն աստեղաց երկնքին,
Նըմանիլ չե՞ս կրնար դուն
Ճոգվույս՝ որ է բոց անհո՞ւն։

Հոգ աստղերը չ'են մեռնիր,
Ծաղիկներն հոգ չ'են թառմիր,
Ամպերը չ'են թըչեր հոգ,
Երբ խաղաղ ես դու և օդ։

Լըճա՛կ, դու ես թագուհիս,
Զի թ'հոմն մ'ալ խորշոմիս,
Դարձյալ խորքիդ մեջ խըռով
Ջ'իս կը պահես դողդղալով։

Շատերը զ'իս մերժեցին,
«Քնար մ'ունի սոսկ— ըսին.
Մին՝ «դողդոջ է, գույն չ'ունի—
Մյուսն ալ ըսավ— կը մեռնի՞»։

Ոչ ոք ըսավ— հե՞գ տղա,
Արդյոք ինչո՞ւ կը մըխա,
Թերևս ըլլա գեղանի,
Թե որ սիրեմ, չը մեռնիս։

Ոչ ոք ըսավ— սա տըղին
Պատռե՛նք սիրտը տըրամագին,
Նայինք ինչե՞ր գրված կան...
— Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան։

Հոն կա մոխի՞ր... հիշատա՛կ...
Ալյակքդ հուզի՛ն թող, լըճա՛կ,
Զի քու խորքիդ մեջ անձկավ
Հուսահատ մը նայեցավ...

ՀԱՅՈՒՀԻՆ

Աշնան մեջ էր, երեկո մը
Վերադարձիս հՅուսկյուտար,
Օդը պարզ էր, հողմը մեղմիկ,
Սովուն ջուրերն ալ հանդարտիկ։

Շոգենավին սարավանդը
Նըստած անկյուն մ'առանձնակի՝
Ուշադրությամբ ես նույն օրչան
Ալբատրոսները կարդայի։

Մեկ մ'ալ հանկարծ սանդուխեն
Վեր ելնելու ոտնաձայն մը
Շըփոթեց զիս և աչերս
Դարձուցի դեպ հայն կողմը։

Հայուհի մ'էր վեր ելնողն,
Թարձրահասակ և գեղագեմ.
Անցավ մոտես նե սիգաձեմ,
Նստավ անկյուն մ'ինձ դեմ առ դեմ։

Ո՜հ, կարծես թե նե երկնային
Զրվարթուն մ'էր վար իջած՝
Լույս սփռելու, սեր բուրելու,
Խրոովելու սրտերն այրած։

Այլ չըգիտեմ թե ինչո՞ւ
Կրկին աչերըս հառած՝
Իմ թերթիկիս վըրա միշտ՝
Սիրտս էր ամբողջ խրոոված։

Մինչև մեկ մ'ալ նավաստին
Խոպոտ ձայնով մը գալով մոտ,
Ըսավ. «Հասանք հՅուսկյուտար,
Ալ ի՞նչ նստեր ես դու հոդ»։

Վեր վերցուցի աչերըս,
Ոչ ոք տեսի մեջ նավին.
Մինակ էինք երկուքնիս,
Մեկ մ'ես, մեկ մ'ալ... նավաստին։

ԹՐՔՈՒՀԻՆ

Երեկո է. բոցավառ է հորիզոն.
Կառք մը կ'անցնի դագաղի պես համբընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրոփե հոն,
Վերջալույսի աղջի՞կ մ'է սա, ո՜վ Աստված.
Եթե նայի՛,
Կ'ըսես— հի՛մա կը մարի։

Մեղրամոմե անդրիանդի մ'է հանգույն.
Ի՜նչ դալկահար... կարծես հաչաղը վառե
Գատան մ'է նուրբ ներա վարդիցը դժգույն.
Աստված ըզնե զույգ մ'աչերովն կը վառե.
Եթե ժպտի՛,
Կ'ըսես— ո՜հ, հի՛մա կ'անցնի։

Նայիլ կ'ուզե, բայց ա՛վելի կ'նըվաղի,
Սիրտը խունկի պես կը մըխա՜ սիրավառ,
Նե շողերու, բույրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'որ կը խնդրե ծաղկե թառ.
Եթե շարժի՛,
Կ'ըսես— հի՛մա կը թռչի։

Լանջն է հուզյալ Օվկեանի մը նման.
Կ'ուզե սիրե՛լ... համբույրի մ'հետ նըվաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրո կրակե բաժկին հուսկ կաթիլ.
Եթե շիկնի՛,
Կ'ըսես— հի՛մա կը բոլնկի։

Սրտի մեղո՜ւ, ինչպես կոչեց Լամարթին,
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սեր,
Ես կոչեմ զնե կո՛ւյս, որուն սիրտն է երկին
Անհուն սիրո, որ հորիզոն չ'ունի դեռ.
Եթե խոսի՛,
Կ'ըսես— հի՛մա կը հատնի։

Նե կը վառի, մի՛շտ կը վառի, չը հատնիր
Տրնանկ կրնոջ տաճարն վառած ճրագին պես,
Աստղերու նման գիշեր սիրե՝ փողփողի՛լ.
Կրակ մ'է փրթած կողեն սիրո բոցագեմ...
Թե իսկ մեռնի՛,
Կ'ըսես— հի՛մա կը ծընի։

ՆԵՐԱ ՀԵՏ

Համբույր մ'առի ներանե,
Համբո՜ւյր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր շողք մարեին
Հորիզոնին վերևի։

Ձեռքս տարավ կուրծքին՝ հոն
Սիրտ երկին մ'ոռոտար.
Թոշնեցա գիրկն ես իրրև
Համբույր մ'անհուն, դալկահար։

Նե զ'իս իր քով նըստեցուց
Գորգի վըրա դալարյա.
Հուսկ ճաճանչ մը կ'պզպզար
Ներա դիմացը վըրա։

Թոթովեցի... դողացի...
Առի համբույր անհամար.
«Խոսի՜նք» ըսավ— ո՜հ, խոսի՜լ,
Հատնիլ է լոկ ինձ համար։

Աչերու բոցն երբ մարի,
Դադրի տըրոփն երբ սրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անզոր շուրթերը խոսին։

Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբույր մ'առի դարձյալ ես
Հ'անուն աստեղց ցիրևցան։

Նե թողուց, որ վարսքն ազատ
Սյուքը դեպ հիս բերելով
Միշտ հովահրե բըռընկած
Ճակատըս զով բույրերով։

Ո՜հ, այն ժամը ոսկեզօծ
Անշուշտ սահած, թըռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերեն երկաթե։

Մեր համբույրներն պահեցին
Տերևները խարշափմամբ,

Նվ շաղերու տըվին շուք
Աստղերն երկնից այն անամպ։

Ձեռք վերցուցինք աստղերուն,
Սեր ուխտեցինք իրարու,
Դողդըղացին աստղերն ալ
Մեր երդումեն ահարկու։

Լըսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Աստղեր սրսկեց ի գորով,
Բնությունն եղավ պըսակիչ,
Մեզ պըսակեց աստղերով...

ՏՐՏՈՒՆՋՔ

Է՜հ, մնաք բարով, Աստված և արև,
Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև...
Աստղ մ'ալ ես կ'երթամ հավելու երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթե ո՜չ անբիծ
Եվ թշվառ հոգվոց անեծք սըրագին,
Որք թրոին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծուն՝ շանթերո՜ւ արմատ՝
Հավելուն զենքերն ու զաքդերն հըրատ...
Այլ, ո՜հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե զ'իս,
Աստվա՜ծ, խոկն հրսկա փշրե հյուլեիս,
Որ ժպըրհի ձգտիլ, սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու սանդուղքն ահալի...
Ողջո՜ւյն քեզ, Աստված գոզդոջ էակին,
Շողին, փրթիթին, ալվույն ու վանկին,
Դու որ ճակտիս վարդն և բոցն աչերուս
Խլեցիր թրթռումս շրթանց, թոիչն հոգվույս,
Ամպ տըվիր աչացս, հևք տըվիր սրտիս,
Ըսիր մահվան գուռն ինձ պիտի ժպտիս,

Անշուշտ ինձ կյանք մը կազմած ես ետքի,
Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոթքի.
Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մեջ համր անշըշունչ,
Այժմեն թո՛ղ որ շանթ մ'ըլլամ դալկահար,
Գլլըվիմ անվանդ, մոնչեմ անդադար,
Թ՛ող անեծք մ'ըլլամ քու կողըդ խըրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»։

Ո՜հ, կը դողդոջեմ, տժգույն եմ, տժգո՜ւյն,
Փըրփըրի ներսըս դըժոխքի մ'հանգույն...
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մեջ սև,
Թափելու մոտ շոր աշնան մեկ տերև...
Ո՜հ, կայծ տըվե՛ք ինձ, կայծ տըվե՛ք, ապրի՜մ...
Ի՜նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՜մ...
Այս ճակատագիրն ի՜նչ սև է, Աստվա՜ծ,
Արդյոք դամբանի մրուրո՞վ է գծված...
Ո՜հ, տըվե՛ք հոգվույս կրակի մի կաթիլ,
Սիրել կ'ուզեմ դեռ ե՛ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղե՛ր, հոգվույս մեջ ընկե՛ք,
Կայծ տըվե՛ք, կյա՛նք՝ ձեր սիրահարին հեք։
Գարունն ո՛չ մեկ վարդ ճակտիս դալկահար՝
Ո՛չ երկնի շողերն ժըպիտ մ'ինձ չ'են տար։
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն հար կուլա, խուզարկե վըհեր։
Կ'ըլլան մարդիկ, որ լացող մը չ'ունին,
Անոր համար Նա դըրավ այդ լուսին.
Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյա՛նքը, վերջը՝ լացող մ'իր վըրան։
Ի զո՛ւր գըրեցին աստղերն ինծի «սե՛ր»,
Եվ ի զո՛ւր ուսուց բուլբուլն ինձ «սիրել»,
Ի զո՛ւր սյուքեր «սե՛ր» ինձ ներշնչեցին,
Եվ զիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Ի զո՛ւր թավուտքներ լըռեցին իմ շուրջ,
Գաղտնապահ տերևք չ'առին երբե՛ք շունչ,
Որ չը խըռովին երազքըս վրսեմ,

Թույլ տըվին որ միշտ ըզնե երազեմ,
Եվ ի զո՛ւր ծաղկունք, փըթիթնե՛ր գարնան,
Միշտ խնկարկեցին խոկմանցըս խորան...
Ո՜հ, նոքա ամենքը զ'իս ծաղրեր են...
Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...

ԶՂՋՈՒՄ

(Օր մը վերջը)

Երեկ երբ պաղ քրտանց մեջ
Սև մըրափ մը կ'առնեի,
Եվ թոշնած զույգ մը վարդեր
Այտերուս վրա կ'այրեին,
Անշուշտ ճակտիս վրա մահու
Դալկություն մը կը պլպլար,
Եվ մահու թռիչ մ'ունեի,
Լրսեցի մորս հեծեծում...
Բացի աչերըս խոնջած,
Մորըս արտոսրը տեսի՜...
Ո՜հ, ճշմարիտ գորովի
Մարգարիտներ սուտ ու կեղծ...
Մայրըս անհո՜ւն ցավ մ'ուներ,
Այն սև ցավը ե՜ս էի...
Ա՜հ, գըլուխըս փոթորկեց...
Այս սև հեղեղն տըվի դուրս...
Ո՜հ, ներե՛ ինձ, Աստված իմ,
Մորըս արտոսրը տեսի...

Զ'ՆԵ. ՊԱՐՏԵԱՄ.

Ճառագայթի ու վարդի
Փթթումներով վեհապանծ՝
Ես չը սիրեմ սա դեմքը
Սիրո ժպտով մը օծած։

Ես չը սիրեմ, երբ կուլսի մ՝
Աչերը զ'իս բուրվառեն՝
Ձերթ հուր ամպոց զույգ մը հյուս
Հոնիցը տակ մեղմորեն։

Դիսաստղի պես հերարձակ՝
Ես չը սիրեմ՝ սա վրեժիտ
Կույսն, ոյր դեմքեն կը փթթին
Լուսնի դալուկն ու ժըպիտ։

Ես չը սիրեմ՝ հանդիպիմ
Ծըր կույսի մը հեզանազ,
Որ եդեմ մը կը բուրե,
Կ'վառե երկինք մը երազ։

Ես չը սիրեմ՝ սա [illegible]
Զույգ մ՝ երկիններն գինովցած,
Ոյր մեկուն մեջ պաշտի նա,
Եվ մյուսին մեջ ալ Աստված։

Ես չը սիրեմ սա օտար
Ժըպիտները հուսաշող,
Որք ծաղիկներ են սուտ սոսկ
Սրտի. անգունագը ծածկոզք

Ես կը [illegible] զ'իմ Պ....
Ինձ կը բավեիր օրորին
Մեկ ճառագայթը միայն,
Եվ մեկ վարդ[illegible] ժըպիտին։

Թեև սև աչքն հեղեղեն
Անթիվ աստեղց միշտ բույլեր՝
Իր սև հոնից շուքին տակ՝
Ջ'որս ութ օրն է Նա գրծեր։

Լուսինը ո՛չ ներա վարդն,
Եվ ոչ ալ վարդը ունի
Ճառագայթումը ներա,
Ճառագայթո՛ւմ սիրողի։

Ես կը դողդողամ իր վրա,
Նե իմ վրա գորովի,
Իսկ թե մոռնա՝ ջ'իս օր մը...
Ա՜հ, այն օրը քա՜ր կտրի...

ՍԵ՜Վ, ՍԵ՜Վ

Սրբեմն հոգիս աստղի մը բոց
Եվ թիթեռնի մ'ուներ թևեր.
Վերջալույսի նըման ամպոց
Երազներ հո՜ւր ճակատս վառեր։

Արդ սառույցներ դառն արտոսրի
Կը քարանան կուրծիս ներքև,
Եվ բարդք ամպոց սևաթորմի
Կ'ուզեն խեղդել սիրտս ու արև։

Հազիվ քանի մ'օրերն կյանքիս
Ոսկեզօծեց իմ բախտը վատ,
Որո՜նք եղան լոկ օվասիս
Մեղմող կյանքիս դառն անապատ։

Մենանայի օրեր ցրվերջ
Սրբեմն՝ հովտի ծաղկանց ս'երկնի

Ջյունափրթիթ ամպերուն մեջ,
Կյանքի մրրուրն ես թափեի։

Ծրծեի սե՜ր, ծրծեի կյա՜նք,
Մինչ վերջալույսն կը հրրահրեր,
«Մնաս բարովի» սա կարմրորակ՝
Տրխուր կրրակ ս'երկնի բոցեր։

Ունեի ես երբեմն առատ
Վարդեր, առատ աստղեր նույնպես,
Ճակատագիրս սև տեսավ շա՜տ,
Բրցուց, քաղեց ջ'անոնք սրտես։

Ունեի ես իմ սիրուհին,
Որո թեպետ աչքն էին սև,
Սակայն սրգալ չը գիտեին...
Հրեշտակ մ'էր նե, հրեշտակ անթև։

Սև երազ մը օր մը դողդոջ
Մրղեց ջ'իս սև՛ փոսի մ'առջին,
Ուր քար կտրած՝ սիրտ ի թընդոջ՝
Դագաղի մ'աչքս հառած էին։

Ավա՜ղ ներա վարդքն ու աստղերն
Լուռ պիտի տար կուլ այն սև փոս,
Ցուրտ համբույր մը առի ճակտեն,
Ներա վերջին ձոնն էր ափսո՜ս։

Եվ լրսեցի յայնժամ՝ թի թի
Սև սև հողեր կոշտ թնդեցին
Տրխուր քողքին վրա փայտի...
Դրժոխք մ'անեծք այն սև՛ օրին։

Այն ցուրտ հողերն յ' իմ դատարկ սիրտ
Լրցուցին, փոսն գոցելնուն հետ՝
Եվ այս աշխարհն ալ անժրպիտ
Գոցեցին իմ առջև հավե՜տ...

ՄԱՆԻՇԱԿ

Ո՛վ մանիշա՛կ, մանիշա՛կ,
Ինչո՞ւ այդպես գլխիկոր
Նայիս հողին սրգավոր...
Ո՛հ, ինչի՞ այդ նըշանակ։

Միթե դու կո՞ւյս մը տեսար,
Որուն աչաց քով կապուտ՝
Հզքեզ գըտար այնչափ մութ,
Որ կը սրգաս սեւահար։

Եթե դու ալ վարդին պես
Ունենայիր դույզն բոսոր,
Կը շիկնեիր, ինչպես որ
Շիկնեցավ այն վարդը վես,

Երբ տեսավ օր մը ներա
Վարդերն անբիծ այտերուն։
Շուշանին պես դալկություն
Եթե ըլլար քու վըրա,

Տժգուններիր որպես նա,
Ինչպես որ օր մը շուշան
Տժգունեցավ աննըշան՝
Տեսավ ձեռներն երբ ներա։

Եվ դեռ ըսե՞մ... ար մ'երկին
Աժպոտեցավ... է՞ր արդյոք...
Երբոր կ'ըներ նե աղոթք,
Վերն հառած աչքն ու հոգին։

ԱՌ ՄԱՅԻՍ

Մայիսներու մայրի՛կ դու գոյս՝
Ո՛վ իմ Մայի՛ս ծաղկահանդերձ,
Սա երփներանգ ծաղկոթդ հանդերձ
Է՞ր չը բերիր Ծաղիկն հոգվույս։

Ո՛հ, միթե կա՞ այլ զըվարթուն
Մայիս հոգվո՛ Ծաղիկներու։
— Նա փողփողե վերև գլխու,—
Մի դալկահար Մայիս անհուն։

ՆՈՐ ՍԵՎ ՕՐԵՐ

Մինչ բոնության՝ ընկա՞ն արյան գարերը,
Աշխարհ մը կա արցո՞ւնք թափող սարերը,
Արյամբ պզտո՞ր դեռ գետերուն ափունքը.
Չը դադրեցավ դեռ այս երկրին սև սուգը։
Ավերակույտն այս ահարկու,
Աշխարհ մոխրոց ու նոճերու։

Հայ դյուցազանց, որ հոն ընկան ի վաղուց՝
Ոսկերտիքն՝ արմատնե՞րն այն վըրիժուց
Ա՛հ, դեռ բողբոջ մը չ'արձըկած հո՞ղ դարձան...
Ուրեմն հիմա աղիք չ'ունի Հայաստան...
Ա՜յ, դալկահար դու՝ հայրենիք...
— Եվ դեռ Քրդի՞ն ալ խոնարհինք։

Մառախուղ են հագեր դաշտքն ու լերինքը,
Չը գեղգեղեր Հայ հովվուհվույն սըրինգը,
Հայուն համար չը փալփըլիր աստղիկը,
Արցունքներով թոռմեր հոգվույն ծաղիկը.
Դադրեր անմեղ խինդ, թինդ ու պար,
Շողա ազա՞տ Քրդին տապար։

Դողդոջ մտնե առագաստը գիրգ հարսը,
Արտասվաթոր՝ դեմքին ծածկած հույլ վարսը՝
Որ չ'ըլլա թե հանկարծ սիրո մրմունջը
Խափանե վատ Քրդին տուփոտ մրուունջը.

Սերը փեսին արյամբ կարմրի,
Հարսը Քրդին կ'երթա գերի...

Մի՛շտ կը ցանե Հայն, չը հնձեր... անոթի՜...
Իր դալկահար դեմքեն երկու շիթ կաթի,
Արտասր ու քիրտ միանգամայն... ո՜վ Աստված
Նա ճաշակե տրտմած սրտով ցավ ու հաց.
Այս տարաբախտ ազգն է Հա՛յը,
Մեր արյո՜ւնը, մեր եղբա՜յրը։

Ա՜հ, ոտնակոխ Հայուն սիրտը և տաճար
Հրացանն յ'ուս սա կոշտ Քրդին անդադար,
Եվ մեր ներսը չ'եռա՞ր կարմիր մեկ ալին
Կամ մեկ փրփուրն հայրենյաց սուրբ երակին,
Որ սառույցի վերթ որդիներ՝
Մեր աղիքները չ'ենք թոթվեր։

Ի՞նչ սիրտ է այս, որ հոս գամեր է Աստված,
Մինչ չը սիրեր նա հայրենիքը ցաված...
Ջ'ունի ներսը Հայն իր նախնյաց տրրոփը,
Լրքե՞ր է զ'ինք ճակատագրին Սերոբը.
Երես դարձուց Հայն սուսերեն,
«Սև» ժառանգեց լոկ պապերեն։

Սառե աչեր, քարե լեզու, ա՞յս մընաց
Բյուր փառքերեն մեր գոռ ու պերճ հայրենյաց,
Սևագրլուխ խումբ մը ագռա՞վ մընաց լոկ՝
Կամ խումբ մը կույր խրլուրդ՝ ըստրո՜ւկ փառքի սոսկ
Ա՜հ, այն արծիվ ժողովրդեն,
Որ հարվածվի արդ կոշտ Քրդեն։

Ի՞նչ, սև ձեռքեր հրպին վրճիտ ճակատին
Հայ կուսիկին նրվիրական լաչակի՞ն,
Դրժոխք մը տարփ թոշնեն վարդը կուսության,
Կարծես ծաղիկ մը կոխկոտեն— զ'այս կրզգան,
Ինչպես որ Հայ մը մորթեն,
Կարծեն թե հավ մը մորթեն։

Է՜հ, մի՛ վախեք, ասեղ մ'անգամ պետք չ'է մեզ,
Այլ հայրենի սոսկ ըզգացում մ'աղեկեզ.
Ժանգոտ սուր մը, պատռած դրոշ մը թե չ'ունինք,
Կուրծերնուս տակ տրրոփող սի՞րտ մ'ալ չ'ունինք.
Օ՜ն, ոտքերեխս զարնե՛նք գետին,
Հայտնե՛նք մեր ցավը ահագին։

Մեր քերց վարդերն և արևներն մեր եղբարց՝
Մեր տաճարաց խաչերն՝ պատի՛վն հայրենյաց
Մենք պահանջենք, բարօրությո՜ւն մեր ազգին.
Ջ'ա՛յս պահանջե՛նք՝ զ'ա՛յս Սուլթանեն սրտագին,
Մեր պատիվն ու Քուրդը կ'ուզե՛նք,
Եվ կամ նորա զենքին դեմ զե՛նք։

ԻՄ ՑԱՎԸ

Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գտնե՛լ աղբերքն յամայր,
Ցամքի՛լ ծաղիկ հասակի մեջ,
Ո՜հ, չ'է այնչափ ցավ ինձ համար։

Ջերմ համբույրով մը դեռ չ'այրած
Սա ցուրտ ճակատս դալկահար՝
Հանգչեցունե՛լ հողե բարձին,
Ո՜հ, չ'է՛ այնչափ ցավ ինձ համար։

Դեռ չը գրկած էակ— փունջ մը
Ժրպտե, գեղե, հուրե շաղյալ՝
Գրկե՛լ սա ցուրտ հողակույտը,
Ո՜հ, չ'է՛ այնչափ ցավ ինձ համար։

Քաղցր երազով մ'հրդի մրափ մը
Ջ'անդորրած գլուխս մրրկահար՝

Ննջե՛լ հողե վերմակի տակ,
Ո՜հ, չ՚է՛ այնչափ ցավ ինձ համար։

Հագնի՛լ հյուղին մուր-անունը,
Ծրծե՛լ նորա մրրուր— օդն հար,
Միշտ ցավի՛լը միանգամայն,
Ո՜հ, չ՚է՛ այնչափ ցավ ինձ համար։

Հեգ մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Ջ՚օգնած անոր՝ մեռնի՛լ աննշան,
Ո՜հ, ա՛յս է սոսկ ցա՛վ ինձ համար։

Ի ԳԵՐԵԶՄԱՆՆ

ԱՄԵՆԱՍԻՐԵԼՎՈ ՎԱՐԴԱՆ ԼՈՒԹՖՅԱՆԻ

ՀԵԾԵԾՄՈՒՆՔ

Ո՜հ, երկնքի ժապավեններ՝
Ճառագայթնե՛ր՝ միացուցած
Էին սրտերը մեր միմյանց՝
Մեր սրտերը սիրանըվեր։

Նոքա միմյանցս համար քանի՞
Էին անհո՜ւն բա՛ց մատյաններ,
Հոն ամեն բառ խորք մը ուներ
Իր ներքևը սիրս, ցավիս։

Ո՜հ, կը հիշե՞ս, Ջամլըճայի
Սարը նստած լո՜ւռ մըխայինք,
Ուր շուք տային մեզի նոճիք՝
Սև հովանոցք վշտահարիս։

ԸՍԹամպոլի կապույտ գոտվույն՝
Վոսփորի ծուփը դիտեինք,
Ուսկից և մերթ զ՚անամպ երկինք.—
Ո՜, ախորժնե՜ր լուռ մեր հոգվույն։

Այն հյուսկենները երկնքին՝
Այն ամպերը ձյունաթորմի՝
Մինչ երեկո, ո՜հ, մի առ մի
Մեր նայվածքը գըրավեին։

Ջ՚էինք խոսեր, խոսքն մեր հոգվոց
Անհունությունը կը պղծեր,
Մենք զերթ երկու տժգույն բոցեր
Իրարու մեջ կ՚այրեինք սոսկ։

Մեր հոգիքը նոճիներու
Թուխ թիթեռներ էին տրտում,
Մ՚և ծրծեինք՝ սո՜ւգ անհատնում,
Նայեինք միշտ երկրես հեռու։

Անհուսությո՜ւն, գերեզմանի
Այդ սև կաթը շատ ըմպեցինք,
Քեզ հափրեցուց այդ ըմպելիք,
Եղար երկնից տժգույն որդի։

Քու դալուկըդ՝ զիս ցավցուց շա՜տ;
Եվ նայվածքդդ վերջին նըվաղ՝
Ջ՚որ ուղղեցիր ինծի, ավա՜ղ,
Բևեռացուց յ՚իս հիշատակդ։

Երջանի՞կ ես հոդ թե թշվառ,
Ջվարթնո թևով լուր մ՚ինձ ղրկե,
Ա՜հ, այս աշխարհն միշտ տաղտուկ է...
Ցավերու մեծ մայր մ՚է աշխարհ։

Ո՜հ, եթե հոգ ծառի մը ջուք
Կա և նորա քով մեկ վրտակ,

Եթե կա հոդ սե՛ր անապակ,
Կան ազատ օդ, ազատություն։

Ո՜հ, կը թոթվեմ ես այս աղտոտ
Զորձն հոգվույս՝ կյանքս՝ մինչ իսկ այսօր,
Հող կը հագնիմ, հո՜ղ սրգավոր...
— Ա՜հ, ուզածներս, Վա՜ղդան, կա՞ն հոդ...

ԻՄ ՄԱՀԸ

Եթե տժգույն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնե իմ դեմ...
Շոգիանան ցավքս ու հոգիս,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե սընարրս՝ իմ տիպար
Մոմ մը վըտիտ ու մահադեմ,
Ո՜հ, նըշուլե ցուրտ ճառագայթ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե ճակտովս արտոսրազօծ
Ջ'իս պատանի մեջ ցուրտ զերթ վեմ
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե հընչե տըխուր կոչնակ՝
Թրթռուն ծիծաղն մահու դժխեմ,
Դագաղս առնե իր համբը քայլ,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթե մարդիկն այն մահերգակ,
Որք սև ունին ու խոժոռ դեմ՝
Համասըփռեն խունկ ու աղոթք,
Գիտցե՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթ՝ հարդարեն իմ հողակույտ,
Եվ հեծեծմամբ ու սրգալեն
Իմ սիրելիքը բաժնըվին,
Գիտցե՛ք որ մի՜շտ կենդանի եմ։

Իսկ աննըշան եթե մընա
Երկրի մեկ խորշն հողակույտն իմ,
Եվ հիշատակս ալ թառամի,
Ա՜հ, այն ատեն ես կը մեռնի՛մ...

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

Ինծի կը՛սեն— ինչո՞ւ լուռ ես.—
«Ո՜հ, միթե բառ կամ խոսք ունի՞
Արշալույսը, որ կը բռընկի,
Չի անհուն է այն ալ ինձ պես»։

Ինծի կ'ըսեն— միշտ տխուր ես.—
«Ի՞նչպես չըլլամ, մեկիկ մեկիկ
Թոթափեցան գլխուս աստղիկք...
Արշալույս մը չ'անցավ սըրտես»։

Ինծի կ'ըսեն— կրակոտ չ'ես,
Լրճակի մը պես ես մեռած,
Դալկահա՜ր դեմքդ ու հայեցված։—
«Ո՜հ, հատակն են իմ փրփուրներս»։

Ես ինձ կ'ըսեմ— ժամդ է հասեր,
Քու երկրորդ սև մորդ գընա գոգ,
Գերեզմա՜ն, հո՜ն գտնես դու գոգ
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր...

ԱՌ ԱՐԵՎ

Ե՛լ, արև՛, ե՛լ ամպոց մեջեն,
Ալ կարոտցավ սիրտըս քեզի,
Կուզե ժպտիլ վարդ կոկոնեն,
Բայց նայվածքիդ կը կարոտի։

Իբր երերուն թույլ վարագույր՝
Լեռներն ու ձոր մեգն է պատեր.
Ոհ, թող փըքինք քո լուսաթույր
Հալածեն զայն սև սև հրեշներ։

Ե՛լ, և հյուսիս թող ալևոր
Որ կարշավե մըրկաց ի սայլ,
Փախչե ի ծերպս յուր գլխիկոր՝
Աստվածակերպ տեսքեդ պարտյալ։

Ե՛լ ու խրճթին մեջեն տընանկ
Բանա լուսանցքն և երկինք տեսնե
Ա՜հ, երկնային այն կապուտակ
Ցաված հոգվույն ինչե՞ր կ'ըսե։

Ե՛լ, կաղնույն ոստք ծաղկին նորեն
Հովանիներ տալով դաշտին.
Վեր՝ թռչունք բույն պիտի կապեն.
Վար՝ սիրականք պիտի հանգչին։

Ե՛լ ու ժպտե՛, արև՛, և իսկույն
Բոլոր բնություն ժպտի քեզի,
Աստված անշուշտ ի ժամ սիրույն
Արև շնորհեց զքեզ երկնի։

Ե՛լ և ողջույն քեզ ընդունե,
Ծաղկեն՝ բուրմունք, ծովեն՝ ծիծաղ,
Լիաշուրթն օրհնեք մանկութենե
Եվ իմ սրտես զայս սիրո տաղ։

ԻՂՁ

Ինչո՞ւ ես այն հողմիկը չեմ,
Որ դյութական թևերով
Կուգա դգվել անուշ այտերդ՝
Նոր բացված վարդ կարծելով...

Ո՜հ, այն թռչնիկն ինչո՞ւ չեմ ես,
Որ թառելով ուսիդ վրա
Շրթունքներդ ջամբ կ'ընդունի
Եվ համբույրներ քեզ կուտա։

Քանի որ ցավք զիս կը մաշեն,
Գեթ մեկ երազ դառնայի
Եվ սրտակաթ տեսիլներով
Գիշերը քունդ օրրեի...

Գեթ այնչափ փուչ տվող բաղդ՝ զիս
Ըներ այն վարդն առտրվան,
Որ ծոցիդ մեջ խունկ սփռելով
Հոն կը թոռմի իրիկվան...

* * *

Քեզ սիրեցի.— մենք իսկույն
Սիրո երկնյակ մ'ըստեղծելով՝
Կը տեսնեի զմեզ ձեռն ի ձեռն
Միայնակ ճեմել հոն քովե քով...
Սերեն անդին ի՞նչ կա հաշխարհ...

Ցայտեդ անդին ի՞նչ կա անուշ.
Ի՜նչ փույթ, թե որ խոցե զիս փուշ,
Թե արյունոտ ժպտիս հոգվույս...
Ըսթափեցա սիրտ ի երեր,
Ավա՜ղ, երա՜զ էր, երա՜զ մ'էր...

Հավատացի բարեկամաց,
Պատվո, երդմանց հավատացի
'Ի ազատության արժանավոր
Մեծ հայրենիք մ'ինձ երկնեցի.
Բարվո միայն տենչ ոգեսպառ
Հոն կը դրդեր զամենք մրցման
Եվ գահակից ճշմարտության
Հոն կը բազմեր իմաստություն.
Ըսթափեցա սիրտ ի երեր,
Ավա՜ղ երազ էր, երազ մ'էր...

ԱՇԽԱՐՀ

Աստված մարդուս շատ ցավ տրվեր,
Տարօրինակ հանելուկ մ'է
Աշխարհս ամբողջ, զոր ամեն ոք
Յուր ուզածին պես կը մեկնե։

Հոս ոսկեբարձ էշն երբ զրոա,
Ազգք գլխիկոր կըսքանչանան,
Եվ մայրեաց մեջ անայցելու
Սոխակին երգք անլուր կը մնան։

Ապուշին մեկն հոս կը տիրե,
Եվ իմաստնույն ճակատ վսեմ
Կարոտության ժանյոք մղված՝
Կը խոնարհի այն կուռքին դեմ։

Հոն անոթի կուլա այրին,
Ծերը շիրմին քով կը տրքա,
Եվ պատանին՝ կույր ի ծնե,
Դոնե դուռ հացը կը մուրա։

Երկու գոռոզ խենթի համար
Կը ջարդվին բյուր պատանի.
Եվ նշանածն հուսակտուր
Ջառած կարոտը կը մեռնի։

Հոս կը գողնան հզորք զավելորդն
Եվ կառարշավ ցեխոտեն զբնավս.
Հոն՝ երբ գողնա հաց մ'անոթին՝
Շղթայակապ բանտը կերթա։

Թե փշեն սոսկաս՝ քովը վարդ կա.
Թե օրրոցով հուսաս խնդալ՝
Բացված է մոտ շիրիմ.— մեղուն
Խորիսխ ունի՝ բայց խայթող մ'ալ։

Հոս ընդ երկար մրցելե ետք
Աղջիկն՝ անուշ հրեշտակ երկնի՝
Սրիկայից զբոսանք դարձած՝
Բոզանոցին մեջ մը մեռնի։

Հոս յուղերով օծյալ ի գլուխ
Բռնավորներ տեսակ տեսակ,
Խիզախ կամ սուրբ դիմակներով,
Կը կեղեքեն ազգերն անհագ։

Հոս կան հրդեհ, սրածություն,
Պատրանք, դեզեր, սափրիչն անգութ,
Երկունք, Սիպիր, ախտք ու շղթայք,
Կայծակ և ծով, անդունդ ու խութ։

Փա՜ռք քեզ՝ Աստված, այսչափ աղետք
Քեզ բավական չեն երևիր.

Եվ ի լրումն ամեն չարյաց՝
Սերն ալ վրան ավելցուցիր...

ԴԱՓՆԵ ՊՍԱԿԸ

Օր մը— խաղի մ'առթիվ— թատրոնն
Դափնե պսակ մ'ինձ տըվեցավ.
Այդ պերճ բեռամբ թեավորված
Տունըս դարձա հաղթանակավ։

Կինս խնդաց.— տղայք գլուխնին
Զայն անցուցին փոխանակավ,
Աղախինն ալ կ'ըսեր. «Աղան
Այսչափ տերև ուսկի՞ց գտավ»։

Ես բերկրալից՝ իմ ախոյանս
Կախեցի դեմս՝ ի ճաշարան,
Որ բացվի սիրտս վշտակոծ՝
Նայելով մերթ ընդ մերթ վըրան։

Ատեն մը ետք ինձ թըվեցավ,
Թե դափնեպսակս կը պզտիկնար,
Մտքես ըսի. «Փառաց պայմանն՝
Այս ըլլալու է անպատճառ»։

Ամսե մը ետք— ամառվան ջերմ
Օրերուն՝ ա՛լ թաց չմնաց,
Շատ մըտածուփ՝ պարտեզս խլա՝
Ջըրել զածուս իմ բանջարաց։

Այլ ո՞վ զարմանք, կամ մանավանդ
Ո՞վ անպատում կսկիծ— տեսա—

Դափնե պսակս տերևատած
Խոհանոցի սեղանին վրա...

Եվ— սոսկալի՛ միամտություն—
Խոհարար կինս, շամփուր ի բռին,
Մեկ թրաձրկան շերտ՝ մեկ տերև
Կ'անցըներ փոխն ի փոխ ի սվին։

Եվ ձեռնամած կքյալ՝ ըսի.
«Ավա՜ղ փառաց անցավորի»...
Այլ երբ հետո սեղան նստանք,
'Ի ախորժ խորոված՝ ալ ճաշեցի։

Ըսի սփոփված.— իմաստություն
Չէ՞ գըտածով մարդ գոհանա.
Ո՞վ գիտե, սիրտ իմ, ամեն փառք
Այսչափ արդունք մ'իսկ կ'ունենա։

ԳԱՂՏՆԻՔՍ

Ո՛չ պլպուլն, որ ողբա թուփերուն մեջ
Զաղեկեզ վիշտ յուր գողտրը սրտին,
Ո՛չ այլակք, որ փշրին ափերուն դեմ՝
Փալփլելով ի նշույլս լուսնին։

Ոչ հողմիկն, որ անուշ թևերով
Կը գգվե շիրիմներ ու ծաղկունս,
Ոչ ցողիքս, որ շողան դալարյաց վրա,
Ջինջ գոհարք, զոր ցանե արշալույս։

Ո՛չ վըտակն, որ բյուրեղ հայելվույն մեջ
Ժպտելով կը կրկնե բլրակներ,
Ոչ այգուն առաջին բոց նըշույլը,
Զոր կարծես հրեշտակի մը թևեր,

Ո՛չ գաղտնի ծաղրածու արձագանքը,
Ոչ սիրո պահապան հովանիք;
Ջեն գիտեր իմ սրտիս տառապանքը,
Ջեն գիտեր զաղեկեզն իմ գաղտնիք։

Աչերես լոկ հոսե դառն արցունք մը,
Շրթունքես հառաչանք մը կը թռի,
Մին սլանա դեպ երկին— հրեշտակի մը—
Մյուսն երկիր մեկ շիրմի վրա կաթի։

ԼՔՅԱԼ ՏՆԱԿՆ

Ո՛վ ճառագայթ արևու,
Պայծառ ծիծաղ Արարչին,
Ըստեղծված լույս տալու
Կարծես միայն երջանկին։

Անհունին մեջ խուռներամ
Ետիդ հրեշտակք կը թռչին,
Երբոր իջնես երկրիս վրա՝
Բոլոր ծաղկունք կը ժպտին։

Ծովուն մեջ բյուր ապարանք
Լույս սյուներով կը թրթռան,
Վհին խորեն մռնչող ուղխք
Պահ մը սփոփված կը խնդան։

Ո՛վ ճառագայթ դու՝ ամբիծ,
Քան զայլ ամեն արարած,
Ամեն նյութե ավելի՝
Ո՛վ նմանող դու մտաց։

Դու, որ Գթություն ես ու սփոփ,
Այս խեղճ հյուղին մեջ իջիր,
Ուր հուսալե իսկ հոգնած
Բունիկ մը կա ցանուցիր։

Մանկիկք անձայն, դալկադեմ,
Կծկած մեկդի.— մայրն հյուծած
Մտածմունքե զուրկ աչքերով,
Կոնակն անոնց դարձուցած,

Եվ անբարբառ կրսպանեն.
Այլ ինչ բանի, այլ որո՞ւ.
Կենաց աղմուկն անոնց շուրջ
Անլուր կ'անցնի և հեռու։

Անոնց համար քսան դար
Ջրճգնեցավ մարդկություն,
Մերկ են առջի մարդուն պես,
Անկուշտ՝ նման վայրենվույն։

Վաղը՝ երբ խայթեն զինք ճիրանք
Անոթության՝ աչք հրավառ՝
Կը սողոսկի շամբից տակ՝
Լրտեսելով մեկ ավար.

Ասոնք կը մնան անտարբեր՝
Փափագելու անկարող.
Գիտեն թերևս թե հող են
Ու կրսպասեն դառնալ հող։

Այդ հյուղ՝ լքված ամենեն,
Ո՛վ ճառագայթ արևու,
Իբրև հուսո երկնառաք
Ժրպիտ մ'իջի՛ր այցելու։

ԻՂՁ ՄԸ

Կուզեի գրիչ մ'ինձ երկնքեն
Եվ սուր մ'ըլլար այն ահարկու
Եվ ըսեի Արդարության՝
«Ահա պատրաստ եմ, խոսե՛ դուն։

Եվ պատենեն երբ ցատկեր նա,
Ինչպես կայծակն ամպին խորեն,
Կորագլուխ խույս տային ոճիրք
Յուր մահասփյուռ փայլակներեն...

Կուզեի գրիչ մ'ինձ երկնքեն,
Եվ այն ըլլար դյուցիչ մահակ,
Զոր զարնելով ժայռից՝ բղխեր
Գոհարներու փալփլուն վտակ...

Եվ ըսէի. «Առե՛ք լիաբուռն,
Ո՞վ կարոտյալք, ո՞վ զրկյալներ,
Ձե՛ր են գանձերն այդ անսպառ,
Արցունք տեսնել ա՛լ չեմ ուզեր»...

Կուզեի գրիչ մ'ինձ երկնքեն,
Գրիչ մը լույսեր ցատկեցնող՝
Որ հուսաբեկ ամբոխիս վրա
Արշալույս մը սփռե լիաշող.

Եվ խուճապով փարատեին
Յուր առջևեն ամեն ճիվաղք.
Փշրեին զենք, և գիրկընդխառն
Մարդիկ գիրար ճանչնան եղբայրք։

Եվ մինչ սովորք կը փարատին
Տգիտության և ախտերու,
Անոր լուսով գիրար ճանչնան
Մարդիկ և գիրկ տան իրարու։

ԻՄ ԿՅԱՆՔ

Օր պիտի գա, որ այս կենաց
Բեռն ուսերես թոթափելով
Պիտի ննջեմ հետ սիրելյաց,
Որոց հալիմ ես կարոտով։

Ա՜հ, գերեզմանս այնտեղ ըլլար,
Ուր Վոսփորի դարևանդներ
Ծաղկապըսակ և միշտ դալար
Թանան ալիս զիրենց պատկեր։

Եվ այն ծավի-ծավի ալյակք
Գային փշրել շիրմիս վրա,
Ու հոն նոճյաց մեջեն կաթեր
Ճերմակ մահկին լույս արծաթյա։

Եվ թե սպիտակ պատանքներով
Նստեր հոգիս եզր անդ շիրմին,
Լրսեր հեռվանց դանդաղ թիով՝
Ծովաշրջիկ զերդ ձկնորսին։

Ավա՜ղ, աչքերս հուսախնդիր
Զո՛ր ծանոթներս պիտի հայցեն,
Մահվան հողմովըն ցան ու ցիր,
Ով գիտե ո՛ր ափունս ննջեն։

Նոր մարդկություն մը՝ նորահույս,
Նոր-նոր արցունք կամ ժըպիտներ,
Անկարեկիցք իմ ցավերուս
Շիրմիս նայվածք մ'իսկ չեն նետեր։

Այլ անփոփոխ ըզքե՛զ միայն
Պիտի գտնեմ, ո՛վ մեծ բնություն,
Եվ այն անդունդ մոռացության
Պիտի ժպտիս ինձ միայն դո՛ւն։

ՄԿՐՏԻՉ ԱՃԵՄՅԱՆ

ԽԵՂՃ ՄԸԿՈ

Լույս առավոտեն մինչև երեկո
Անդուլ բահ ու բրիչ ածե խեղճ Մըկո.
Այսպես աշխատիլ սովրել է կանուխ,
Անդուլ կըփորե ու քաշե մեկ ծուխ։

Անխոնջ նա տքնի, պեղե ու մաղե,
Հողերը դիզե աջե և ձախե,
Քրտինքն հոսե հոծ, շապիկն ըլլա թաց,
Եվ ապա նստի՝ ուտե սոխ ու հաց։

Շատ օրեր թափեց հոն քիրտ ու վաստակ
Մինչև որ հարթեց նոր շենքին հատակ,
Եվ երբ զարկին հիմն ու վեմն առաջին,
Մեկ արծաթ պարգև տվեց շալապին։

Եվ Մըկո խփեց ծրարին ի խոր
Այն նախկին պարգև փայլուն մեճիտ նոր.
Միտք դներ օր մը յուր մորը պառավ
Գնել մեկ խորոտ գոտի կամ հալավ։

Պատեր կը հյուսվին տակավ առ տակավ
Շենքը բարձրանա. Մըկո շալակով
Քար, աղյուս, շաղախ կըրե փոխն ի փոխ
Եվ միշտ գոհ ծխե, ուտե հաց ու սոխ։

Բայց ոտքը խեղճին սահելով մեկ օր՝
Շենքին կատարեն վար թավալ գըլոր
Անկավ դղրդմամբ և վիրապատառ՝
Անդամներ փշրեալ՝ մնաց շնչատպառ։

Պահ մ'ապա բացավ աչերն այն քիրտ քաջ,
Եվ ոչ արձակեց մեկ ճիչ՝ մեկ հառաչ,

Ծունկն էր ջախջախած, ա՜լ չուներ օգուտ,
Ուղարկեցին զինքն հիվանդանոց շուտ։

Սրունքն հոշոտել հարկ եղավ՝ և վեց
Ամիս հոն անհուն տառապանք քաշեց.
Չոր կմախք դարձավ այն վիթխարն, ավաղ,
Եվ փայտե ոտքով շրջեր կաղն ի կաղ։

Դոնե դուռ երթար, անհույս թափառիկ,
Խեղճուկ երգերով իբրև մուրացիկ.
Ալ յուր պառավ մոր՝ որ մեռներ նոթի,
Ո՞վ պիտի գներ խորոտիկ գոտի։

Շենքն ավարտած էր և ճոխ բազմածուխ
Կահույք զարդարված, որում կյանք ուրախ
Կը վարեր հարուստ, բայց ցուրտ շալապին,
Անհոգ Մըկոյին կըրած տագնապին։

Թե Աստված կամեր և նա հաշմանդամ
Կ'ըլլար կամ ձեռն ոտ ու թերևս այնժամ
Խըղճար Մըկոյին կաղ և վշտակիր,
Սիրտը շինելով ուղարկեր երկիր։

Լույս առավոտեն մինչև երեկո
Դոնե դուռ շրջի, մուրա խեղճ Մըկո.
Բայց Աստված՝ որպես աղքատ Ղազարու
Անշուշտ յուր ցավո կ'ըլլա վրիժառու։

ԱՍՈՒՊՆԵՐ

Կես գիշեր է թափանցիկ,
Հովը հեծե հեղձուձիկ,
Ծովը ծածան տարուբեր
Ծույլ ծույլ ծեծե իր ափեր,
Հաշտ ու համբույր են այերք,
Անտառներն ալ չ'ունին երգ.
Կես գիշեր է ու թմրած
Նիրհե ամեն արարած.

Աբազներով-խաբուսիկ
Պահ մը կ'ելլա երշանիկ։
Կես գիշեր է դյութական
Ու կաս կարմիր լուսնկան
Կերանց ետին պահվըտած
Հարս մը թվի ամոթխած։
Կես գիշեր է ցողաթեր
Ու պըլպըլան ասուպներ
Իրենց լռիկ բույներեն
Խուսափելով կը սիրեն՝
Սահիլ թռչիլ ժիր ու ժիր
Ու սուրալով լուսածիր
Պարապին մեջ՝ հըրեղեն
Խորհրդավոր գիր գրեն.
Հետաքրքիր երբեմն ալ
Համարձակին մոտենալ,
Թըռին մինչև վար խոնարհ
Դիտել տխուր մեր աշխարհ,
Ճեպեն ճախրեն սրարշավ
Դեպի հյուսիս կամ հարավ,
Եվ ո՜հ արդյոք ինչ անել
Իրեր տեսնեն ի՜նչ տգեղ.
Հոն նշմարեն անգութ սով,
Որ չոր ու սուր ճիրանով
Մերն ու մանուկ բըզրքտե.
Հոն վարակյալ ժանտախտե՝
Թե մեծատուն թե աղքատ,
Մեկտեղ մեռնին հուսահատ.
Հոն արյունով միշտ անհոգ
Ցեղեր կուտան մարտ վայրագ,
Հոն հղփացած հարուստի
Դղյակներուն քով՝ նստի
Թշվառություն ահավոր.
Մութ տրջերու մեջ ու խոր
Բյուր ճիվաղներ նվաղկոտ՝
Պատառ հացի են կարոտ,
Կամ ծովերու մեջ մոլար՝
Ճամբորդին նավ հողմավար
Հսկա ժայռի մը բախի՝
Բյուրեղի պես ջախջախի...
Եվ ասուպներն՝ ահարեկ
Հոն կը մարին մեկ առ մեկ։
Կես գիշեր է զովարար
Ու շողշողուն գերդ գոհար
Ասուպներ ալ օդաշու՝
Կուգան մեզի այցելու.
Հրճվին՝ դիտեն ապշելով
Այս կապուտակ ժպտուն ծով,
Պարտեզներու չքնաղ շարք
Ու բարեբեր դաշտն ու մարգ,
Որ տարածվին միշտ դալար
Կղզիներեն Ի՛սկյուտար,
Ոսկեղջյուրեն մինչ Վոսփոր,
Ու զարդարված բյուրավոր
Լապտերներով ալ պես պես՝
Ծովուն երեսն է կարծես
Երկինք բացվեր լույսերով.
Եվ ասուպներն՝ ապահով
Դրախտն հոս տեղ համարին
Ու հաճույքեն կը մարին։

ՈՐԲ ԹՌՉՆԻԿԸ

Մեր տանիքեն բունիկդ առկախ
Ճիվ ճիվ երգես, թռչնիկ անտեր,
Ու քո լեզվով կ'ըսես ա՜խ, վա՜խ.
Ջմեռն եկավ՝ քու ընկերներ
Թռան գացին հեռու-երկիր,
Դուն մինակուկ հոս մնացիր։

Եվ անձկությամբ լի՝ աջ ու ձախ
Կը նայիս, թե կուգա՞ն արդյոք,
Ու քու լեզվով կ'ըսես ա՜խ, վա՜խ.
Թռչնի՛կ, թեպետ որբ և անոք,
Ցուրտին բուքին կը համբերես,
Չի դուն անհույս չես ինծի պես։

Սիրտս լցված հիշեմ հաճախ
Ան կտրիճն որ գնաց ձեռքե.
Ու քեզի պես կ'ընեմ ա՜խ, վա՜խ.
Երբոր Աստված գարուն ղրկե՝
Քու ընկերներ նորեն կուգան,
Բայց ա՛լ չի գար իմ սիրական։

Շիրիմն անշուք ծածկե ցմախ.
Գնա՛, թռչնիկ, թառի՛ր վրան
Ու քու լեզվով ըսե՛ ա՜խ, վա՜խ։
Որբ էր՝ հոգվույս հատորն էր ան.
Ըսե՛, թե կարճ է կյանքիս թել
Շուտով կերթամ զինքն ընդգրկել։

ԱՂՔԵՐԸ

Աչքեր աշխույժ ու թխորակ,
Ուր ցոլանա կայծն աստղերուն,
Աչքեր ծավի ու կապուտակ,
Ուր կը փրթթի ամբողջ գարուն,
Կը հրմայեն զիս հավասար.
Աղվոր աչքին չեմ դիմանար։

Դեռ մանուկ է՝ ձայնը թոթով
Ու լեզուն է կես բարբարոս.
Բայց իր աչքեր, որ եռանդով
Ու հրճվանքով են պերճախոս,
Երբ ինձ հառին մտերմաբար,
Իր նայվածքին չեմ դիմանար։

Դեռ աղջիկ է՝ հոգին տարտամ,
Խոհեր ունի մշուշ՝ անգույն.
Սակայն արդեն սերն անզգամ
Իր աչքին մեջ դրեր է բույն.
Երբ զիս դիտե պատահաբար.
Մեղկ նայվածքին չեմ դիմանար։

Դեռ նոր հարս է՝ հեշտ ու փափուկ,
Երջանիկ կին կ'ըսեն իրեն.
Բայց արցունքի կաթիլ գաղտուկ
Կախվի սիրուն թարթիչներեն.
Ու երբ ժպտի սուտ՝ բռնաբար,
Խեղճ նայվածքին չեմ դիմանար։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

Եպիսկոպոսք՝ երեսփոխանք
Ահա կազմեն այսօր ժողով.
Ոմանք կուգան սրտադողով.
Ոմանք բազմին իբրև իշխանք.
Աչքերնուն մեջ փայլի նախանձ.
Ու սև կիրքեր պոռթկան անսանձ.
Կ'ըսեն՝ ընտրենք մեկ Պատրիարք՝
Ապա կուզե փլչի աշխարհք։

Վեղարավորք դիտեն զիրար.
Իր ընկերին ոչ ոք հավնի.
Յուրաքանչյուր ոք արժանի
Զինքը միայն կարծե հարմար՝
Ըլլալ Հայոց ազգին հովիվ.
Փառք և ոսկի դիզել անթիվ.
Թող նախ ըլլամ ես Պատրիարք,
Ապա, կ'սե փլչի աշխարհք։

Սեազգեստ մը անցավ առաջ,
Ըսավ, «Հայերն անմիտ փոփոխ,
Զսպել միայն ես եմ կարող.
Այո՝ հովիվ արթուն և քաջ
Ես ազգն ընեմ այնպես խելոք.
Որ դուք ալ քուն ըլլաք անհոգ.
Թո՛ղ նախ ըլլամ ես Պատրիարք,
Ապա կուզե փլչի աշխարհք»։

Մեկն ալ եկավ փորն անհեթեթ,
Կանչեց. «Տեսե՛ք իմ մեծ մորուք,
Արժանավոր չե՞մ, ըսեք դուք.
Զիս ընտրեցեք և ինծի հետ
Մեկ եղած ազգը թալեցեք.
Ես ձայնիկ չեմ հաներ երբեք.
Թո՛ղ նախ ըլլամ ես Պատրիարք,
Ապա կուզե փլչի աշխարհք»։

Գոչեց երրորդ մը անհամբեր.
«Էջմիածին, Սիս, Ախթամար,
Երեք խոց են ազգին համար.
Խոհեմություն ըլլա մայր մեր,
Ու գրպանս ալ ոսկով լեցուն,
Խաղաղություն ամենեցուն.
Թող նախ ըլլամ ես Պատրիարք,
Ապա կուզե փլչի աշխարհք»։

Եպիսկոպոս մ'ալ սիգաճեմ
Բաժին ուզեց սուրբ աթոռեն.
«Ոմանք, ըսավ, զիս մեղադրեն,
Բայց դուք գիտեք թե ինչ կ'արժեմ.
Անուշ երգով ու ներդաշնակ
Շատերն որսամ ձգեմ ծուղակ.
Թո՛ղ նախ ըլլամ ես Պատրիարք,
Ապա կուզե փլչի աշխարհք»։

Բայց հեզ հովիվ մը, սիրտը բոց,
Կորովամիտ ու երկյուղած
«Ազգ իմ, աչք իմ, գոչեց հուզված,
Ես ախոյան իրավանց քոց,
Լուսավորչա հարազատ թոռ,
Ինծի վայլե այս սուրբ աթոռ.
Ես եմ Հայրիկ ու Պատրիարք
Թող հրճվին Հայք, խնդա աշխարհք»։

ԱՆԱԿՆԿԱԼ

Անհուն ասպարեզ անծայր ծովերուն
Զմեզ կը բաժնե... հոն փրթթի գարուն
Ու երկինք է միշտ կապույտ ու պայծառ,
Հոն է հարազատն իմ շեն ու կայտառ։

Հոս ձյուն ձմեռ է. սպիտակ եղյամ
Մազերս կ'օծե ու ես կը դողամ.
Ան հույսն է, որ դեռ կը ծըլի բողբոջ՝
Մինչ կայծը կյանքիս պըլպըլա դողդոջ։

Բայց ծովեր անեզր ու լայնատարած
Չեն կարող զատել մեր սրտեր զուգված.
Կրկնակ հարվածներ բաղդին անընդել՝
Մեր երջանկությունն անզոր են քանդել։

Իր վերջին նամակն ինձ անակնկալ
Ընծա մը բերավ... ծաղիկ մը թոշնյալ,
Ծաղիկ մ'որուն տերևներուն տակ
Նստած կ'երգե հայրական տնակ։

Ծաղիկ մը քնքուշ՝ հավետ խնկաբույր,
Ում դրոշմած էր իր ջերմագին համբույր...
Թող բաժնեն զմեզ ալիք ծովերուն,
Մեր սրտերուն մեջ կը փրթթի գարուն։

ՆՈՐԵԿ ՊԱՆԴՈՒԽՏՆԵՐԸ

Փոքր եղբայրը

Երազ մը տեսա, ա՛լ քունըս թռավ.
Հիմա միտք բերեմ մամիկըս պառավ,
Մեր տուն, մեր պարտեզ, այգին ու արոտ,
Ու սրտիս խորեն ա՜խ քաշեմ կարոտ.
Խաչո՛, Պոլիսը թող մնա իր տեղ,
Խաչո՛, իմ աղբար, մենք դառնանք մեր գեղ։

Մեծ եղբայրը

Կես գիշեր է թուխ ու նստեր արթուն
Հերիք վայ կուտաս, լալկան չըղչիկ դուն.
Պառկե քուն եղիր ու վաղ առավոտ
Կը ցնդին քու խև երազն ու կարոտ.
Պոլիսն է, Պետո՛, հարուստների տեղ,
Մեն մի շենքն արժե մերին հազար գեղ։

Փոքր եղբայրը

Այս մութ խանին մեջ կը մաշվի հոգիս,
Պատառ մի երկինք չկա որ հայիս.
Ի՜նչ ընեմ աս մեծ քաղաքը փարթամ,
Ուր բեռ շալկելով անարգված կ'երթամ.
Պոլիսը, Խաչո՛, ինծի կգա նեղ,
Խաչո աղբարիկ, ա՛լ գնանք մեր գեղ։

Մեծ եղբայրը

Սիրտըդ պղտորված ու միտքդ է մոլար,
Աղ մեծ խոսքերով դու մարդ չես ըլլար.
Է՜հ բեռ շալկելու կամաչես, տղա՛.
Որ փարա շահիս՝ քեզ կանչեն աղա.
Շատ տարի պետք է աշխատինք մեկտեղ,
Կամարնիս լնունք՝ հապա դառնանք գեղ։

Փոքր եղբայրը

Ա՜խ, Խաչո, Պոլսի փարան չունի խեր.
Պալատներու հետ մեր տուն չեմ փոխեր.
Որ մեր պապերուն արտին մեջ դատինք,
Աստված ալ կ'օրհնե մեր թափած քրտինք.
Խաչո՛, հոս կյանքն է փշոտ ու տգեղ,
Խաչո՛ աղբարիկ, ա՛լ գընանք մեր գեղ։

Մեծ եղբայրը

Տո՛, խենթ ու խելառ լրագիր կարդաս,
Ու ելեր ես հա՛ ինծի տալու դաս.
Տե՛, անխելք տղա, հողեմ քո գլուխ,
Հիմա շնթոկե՛, կես գիշեր է թուխ.
Ու վաղը նորեն բեռ շալկենք մեկտեղ,
Մի օր ալ, Պետո՛, հարուստ գընանք գեղ։

Փոքր եղբայրը

Իմ կարոտն է վառ, չեմ կրնար տոկալ,
Ա՜խ, տեսնեմ մեր հին տընակ, գոմն ու կալ,
Զուլալ աղբյուրներ ու մեր գեղջուկ ժամ,
Ան հողն համբուրեմ ու հոն հոգիս տամ.
Խաչո՛, վաղ առտու մուրալով տեղ-տեղ
Ցուպիս կոթրնած պիտի գընամ գեղ։

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ

ՄԻՆԱԿ

Տարիներն, որոնք ետիս են՝
Իրենց զվարթության դառն հիշատակով
Չիս կը շարշարեն։
Տարիներն, որոնք առջիս են՝
Խելագարության ահռելի հեռապատկերով
Չիս կը քարացնեն։

Հին տարիներն, որոնց լիալուսյա պայծառությունն
Աստիճանավ կը նվազի,
Նոր տարիներն, որոնց դեռաբուսյա մթությունն
Տենդերու սաստկության հետ կ'աճի։
Հին տարիներն, հնագույններն, ի՜նչ քաղցր կը ժպտին.
Նոր տարիներն, նորագույններն, ի՜նչ ծամածռություններ
ունին։

Հին տարիներն իրենց հետ ամեն բան,
Հին բարի՜ տարիներն անգութ,
Տարին ամեն բան իրենց հետ,
Ամենքն ու ամեն բան անդարձ հավիտյան.
Մայրս, հայրս, եղբայրս.
Սերըս, հույսըս, հավատքս։

Նոր տարիներն ոչինչ պիտի բերեն ինծի,
— Նոր տարակույսներ պիտի բերեն մտքիս.
Նոր հուսախաբություններ սրտիս,
Ու նոր մշուշներ հոգիիս։
Արագ-արագ կուգան որպես գուժկան,
Ու համր-համր կ'երթան,
Չի ծանրաբեռնյալ միշտ կ'երթան
Նոր տարիներն, որոնք հին են այժմ։

Անկողինները մեկիկ-մեկիկ ծրարեցան,
Պնակները մեկիկ-մեկիկ վերցան,
Ու ձայները մեկիկ-մեկիկ մարեցան։
Ու տունս հիմա մեկ անկողնյակ,
Ու սեղանս հիմա մեկ պընակ,
Ու բընավ կենդանի ձայնի մ'արձագանք։

Եվ կերակուրս կուտեմ, ու կերակուրս զիս կուտե։
Եվ սենյակներս կը պըտտիմ, և ուրվականք գանկիս
սենյակները կը պըտտին.

Եվ պատերուն վրա պատանքի պես ճերմակ՝
Կը պըտտին գիրկընդխառն իմ սիրեցյալս տովերները։

Կը պըտտին գիրկընդխառն հին տարիներու տովերները։
Հին բարի՜ տարիներն անգութ
Երջանկության պայծառաշող պատկերներ
Աչքիս տակ միշտ կը պըտտցընեն։
Ու տարիներն, որ պիտի գան,
Սև սև սարսուռներ
Հոգիիս մեջ կը պըտտցընեն...

ԱՂՈԹՔ

Ալ չեմ ուզեր, ալ չեմ կրնար
Զքեզ խաբել, անբիծ հոգի.
Թող ինձ, եթե այսքան երկար
Զքեզ պատրանոք օրորեցի։

Սուրբ բուրվառին խսկույն հանգույն,
Պարուրաձև, կապուտագեղ,
Ի խորոց քո պայծառ հոգվույն
Վերուղղեցա հերկինս անե՜ղ։

Այնքան էին համեղ քո բանք,
Քո կացք այնքան զմայլելի,
Եվ սրտառուչ այնքան նայվածք,
Չի ցարդ, ո՜վ իմս, զքեզ խաբեցի...

Գնայր Աղոթքդ, հավատա միշտ,
Անսայթաք մինչ վերին երկինք,
Ուր երազեք, կյանքն է անվիշտ,
Ուր համեք, հար, աստվածայինք։

Այլ... Խից ականջդ, ով հրեշտակ...
Ես ըսեմ, դուն, ո՜հ, մի լսեր.
Երկինքն հավետ գտա դատարկ...
Ունա՜յն Աստված, և ունա՜յն սեր...
Մեղա, Տեր։

ՎԵՐՔ ՈՒ ՎԵՐՔ

Ջով ու մաքուր ջուր բերեք,
Վերքես արյուն կըհորդե.
Ջըպիտ երկար փնտրեք,
Մարմին՝ հոգի, համա՜կ վերք։

Արցունքս աղի կըկաթի
Թերանաբաց վիրացս մեջ.
Վերքս սուր-սուր կսկըծի,
Վերքս, մա՜յր իմ, կսկըծի։

Փուշ ու նիզակ չերևիր,
Ո՞վ հար հիս վերք կբանա.
Արցունքն աչքես չի դադրիր.
Դուն ինձ, մա՜յր իմ, ի՞նչ ըրիր։

ՎԱՐԴ ԱՂՔ

Գարնան անույշ օր մըն էր,
Օր մը գարնան օր գոհար,
Թռչուն՝ երկնից սիրահար
Իջավ ոստին վրա հերեր,
Գերեր ունկն իմ և աչեր։

«Մի՞թե գունո և բուրման
Երգ մը չեմ ես», մնջեց վարդ.
«Թե՞ չունիմ զույգ թև հպարտ,
Ջունի՞մ բյուր թերթ այգանման»։
Ու աչկունքս վարդին հառեցան։

Թռչունն ոստեն խույս տվավ.
«Ջույգ իմ աչքեր քո գեղույն
Ջբավեին, ով թռչուն.
Վարդն ինձ աչք մը թվեցավ»։
Ա՜հ, համենուստ սրտիս ցավ...

ՎԻՇՏ

Հորժամ տեսնեմ շրթունքդ անշարժ
Աչքդ հանծանոթ կետ սևեռած,
Ոչ ասեմ քեզ. «Ի բանս անվարժ».
Ջասեմ. «Հոգին է քո սառած»։
Այլ տրտմիմ.
Քեզ առավել ես հարիմ...

Հորժամ լռին, աչք հարտասուս
Խորհիմ խավար իմ նսեհին,
Եվ մրմնջեմ մերթ երգս անհույս,
Ասես. «Ցամաք ես. երգդ է հին»։
Ես տրտմիմ.
Մնաս բարյավ, ո՜, Սեր իմ։

ԹԻԹԵՈՒՆԻԿ

Թռչո՛ւն անբուն, անկաց միզա՛ւ,
Թե՛րթ ոգեվոր, ծաղի՛կ թռչոդ,
Մեզ կըբերես ծաղիկ ու շոդ,
Սիրականն ես ամեն տղու։

Կոհակակերպ երթով մ'առաջ
Կ'ելևէջես օգերուն մեջ,
Թևոք, գոգցես փոքրիկ զուրգ էջ
Աչեն ահյակ, ահյակեն աջ։

Խելքի՛ն եկած սիրող մըն ես,
Գոգցես՝ ինկած լեռ ու հովիտ,
Անտես խա՛չ մը վրան թևիդ
Գո՛գ անտրտունջ հավետ կրես։

Գաղտուկ, խորին, ծանր վշտի
Մ'արտահայտույթ ես գոգ թեթև՛.
Իմացողի՛ն մեն մի քու թև
Կըպատմե վեպ մը թախծալի՛։

Բնավ սիրել չես թվիր դու
Ծաղկունքն, որոց հազիվ հպիս,
Արհամարհանքդ հուզե հոգիս,
Չի մեծ ցավի մ'է՛ մատընտու։

Պտույտ մ'է քուկդ աշնային
Մելամաղձոտ, լռին, խոհո՛ւն,
Փթթմանց մեջ, զորս կոչենք գարուն.
Գորշ հողերուն աչկունքդ հային։

Որքա՛ն որոշ գնացք ու դուվ
Ունի մեղուն զվարթ ու ժիր,
Այնքա՛ն տարտամ, անուշադիր
Ու հույլ ես դուն-անո՛ւրջ ամուլ։

Խորհրդո՞ւ պատակեր ես դու
Աննպատա՛կ կենաց մարդուն,
Որո սիրտը կ'տալբնաւ թույն,
Այլ զոր հածիլ կոչե տեսու։

ՀԻՄԱՐ ԱՐՇԱՎ

Առ Աբգանազ Փնտո

Պետո, մակուլկն խչեցուր,
Հևաթռի հովն, եռա ջուր։
Ո՞ն, հեռանանք ցամաքեն,
Սեր չունիմ՝ բաց հալյակեն։

Կաթնյա ուղվույն երկնային
Տակեն սուրանք, թող նային
Աստեղք ոսկի նախանձով,
Երերածուփ փրփուր ծով։

Կապույտ ծովուն վրայեն
Ճառագայթեց ծովահեն.
Վազենք արփվույն ետևեն,
Որքան ալ վազք մեր տևեն։

Դիք հերկինս հար գողնան թող.
Մեր ավարն է ոսկի շող։
Շուտ առագաստ բաց, Պետո,
Չէ մեր արշավն այս խոտոր։

Քաջ ո՞ նավազ, քան զքեզ,
Իսկ ես՝ շողույն անձկակեզ.
Արփին նորեն չելած վեր՝
Պիտի ստացվածքն ըլլա մեր։

«Հիմար արշավ, պիտ ըսեն
Զմեզ դիտողք փարոսեն.
Ընդ վայրուռույց առագաստ,
Ո՞վ տիրացավ արփվույն այս»։

— Հիմար արշավ, ոյց աստեն
Երջանկության ետևեն
Տենդիվ վազեն անվհատ։—
Պետո, պարզե առագաստ,

Ու հեռանանք ցամաքեն.
Զունիմ սեր բաց հալյակեն.
Վազենք արփվույն ետևեն,
Որքան... այս կյանք մեր տևեն։

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿՅՈԹՈՒՐՅԱՆ

ՍՐԻՆԳԸ

Ե՛կ, իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին,
Նիհար շրթներդ, ո՜հ, երերուն,
Դիր դալկահար իմ շրթներուն՝
Երգենք ու լանք, լանք ու երգենք միասին։

Ա.

Ա՜հ, կը հիշե՞ս գետակին եզրն, սարին տակ
Մինչ բնության ննջեր համայն
Եվ վերն անքուն լուսնկան միայն
Մինչ դիտեր զյուր համեստ ճակատ՝ այն հստակ
Վետ վետ ալյաց հայելվույն մեջ հեզասահ,
Կ'ընթանային որք շար ի շար՝
Մերթ գրկելով սերտիվ զիրար,
Մերթ զատվելով ի միմյանց որպես, ա՜հ,
Դյութիչ խմբակ պարող կուսից երկնային՝
Ոյց ուռուցիկ լանջաց ներքև
Սրտեր ծփին, հուզին ի հև,
Այսպես նոքա ոլոր-մոլոր գնային,
Եվ դեպ առաջ զյուրյանց սահման հետզհետ
Կը սեղմեին, մինչև հեռին
Ի խոր մթան անհայտ, լռին,
Կ'ընկղմեին թուխ լեռներու տակ անհետ։
Բնության այս խորհրդավոր սուրբ պահուն
Ահ, կը հիշե՞ս որպես աղու,
Սրտակիցդ իմ, կ'երգեիր դու
Հոտաղին հետ լալահառաչ, ուր անհուն

Հսկա ժայռեր և ձոր ու լեռ վարեին
Զքո տրտունջ, մրմունջ, հառաչ,
Մին մյուսին ետ ու հառաջ,
Մինչև զայնս յուրյանց ի ծոց մարեին։
Եվ ես լռիկ, ձեռն ի ծնոտ, սիրտս երեր,
Արտասվալից աչքեր իմին
Ուղղյալ երկին ի խանդ ջերմին
Քեզ, որ յուր երգ հոգվույն իմ վերք հայտ բերեր,
Քեզ ուխտեցի լինել ընկեր հավիտյան,
Ողբալ ընդ քեզ, երգել խանդիվ,
Եվ իմ վշտերս, իղձերս անթիվ
Ընդ քեզ հղել վեր, Աստուծոսուրբ ատեան։
Ե՛կ, արդ, սրինգ, իմ բարեկամ կարեկից,
Նիհար շրթներդ, օհ, երերուն
Դիր դալկահար իմ շրթներուն,
Լաց ու երգե ինչ որ գիտես իմ կյանքից։

Բ.

Երգե՛, խնդրեմ, զքո ծնող ու ծնունդ,
Թե ինչպե՛ս նախ ի մեջ հողին
Կուտ անկենդան զքեզ թողին
Հ՝որովայնին քո մոր, ինչպե՛ս դու սնունդ
Առիր, լեզու երբ չունեիր և շրթունք.
Ո՞ր ձեռք զ՝անշարժ քույդ անկողին
Ցնցեց, պատռեց կոշտերն հողին
Եվ թույլ տվավ քեզ գալ ի լույս նորատունկ։
Ահուն բնություն մի՞ կա՞ ս արդյոք թաքթաքուն
Ի քեզ՝ ջրին մեջ կամ արտին.
Ի՞նչ են շարժմունք, որ խլրտին
Երբ իրք անշարժ հպին ենջել ի խոր քուն։
Կ՝ըսես քո կյան գաղտնյաց անլույս է բավիղ,
Ու թե գլիմ հանգստությանն
Բոլոր ջանքերս ի զոր կ՝երթան
Եվ զիս հավիտ մոլորեն խորն անշավիղ։
Հավատա ինձ, բարեկա՛մդ իմ, թե իմ կյան
Չէ ինչ տարբեր ի քույդ երբեք.
Ես ալ հանախ կամ հուստրեկ
Եվ գոչեմ.— է՞ր ծնա երկրի մի անկյան։

Ուր որ դառնամ ճակատագիրս որ է լակ
Տգիտության Ծպտյալ ՝ի բառն,
Ծաղ ու Քիծաղ արձակե դառն
Եվ շանթահար անհետե զիմ խոհ և կամք։
Ահ, գուցե դուն ստիպյալ չես ինձ նման
Քո էությունն բռնի գիտնալ,
Զի ես պարտիմ անշուշտ հավատալ
Թե ինչ է մարդ և պիտավոր յուր վախճան։

Գեթ մին լիներ սրտի վերքերս հանկացող.
Իմ անմենեն ժիրտ բարեկամք
Չ՝ըմբռնեցին իմ հույզ ու կամք,
Վախնամ այսպես անոք գնամ ի թաց հող։
Դո՛ւ գեթ, սրինգ, իմ բարեկամ մտերիմ,
Նիհար շրթներ քո երերուն
Դիր դալկահար իմ շրթներուն՝
Լաց ու երգե, տանիմ քեզ հետս ի շիրիմ։

Գ.

Լա՛ց, զի լոկ քեզ գտի հատորն իմ սրտին.
Դու բարունակ էիր կանաչ,
Երբ մի անփույթ ձեռք անճանաչ
Կտրեց զքեզ, անջատեց մայրն ու որդին։
Եվ թույլ տվիր, որ լանջիդ վրա գալարուտ
Ծակեր բացին, վերք երկաթի,
Թող այդ վիրաց, դսիր, կաթի
Արյուն, արցունք, միակ սփոփ վշտերուդ։
Ես ալ մանուկ էի անմեղ, երբ վաղուց
Մի խուժդուժ սև ախտ վզիս
Լուծ դրավ, ո՜հ, որբ կոչեց զիս
Եվ հոր ու մոր սիրույն կարոտ զիս թողուց։
Իմ ալ կուրծս ծակծկեցին ժանտ վերքեր.
Եվ որպես դու սիրես որմին
Հենուլ՝ լռիկ, ՝ի՞նչ որ մին
Չ՝հուզե քեզ, չես հառաչեր, չես երգեր,
Լռիկ, մնջիկ սիրեմ և ես հենու կալ

Ընկերության ժիտ ժխորեն
Եվ իմ սրտին, հոգվույն խորեն
Ջննել, զգալ լոկ, զարմանալ ու խոկալ։
Եվ քանի որ նույնն է ծնունդ մեր և կյանք,
— Մարդուն քմաց դու հպատակ,
Եվ անծանոթ մի նպատակ
Անհուն կամաց մը մեջ թաղած է իմ կյանք,—
Ինչո՞ւ նույն հողն չ'ամփոփե մեզ, իմ սրինգ,
Չէ՞ որ սիրող սրտից կրկին
Նույնն են դժոխք և նույն երկին.
Հիշե՛, ընդ քեզ ապրիլ՝ մեռնիլ ուխտ ըրինք։
Թող երգեհոն, դաշնակ, քնար գեղգեղեն
Հ'եկեղեցվոջ, ի գինետան
Աղոթք ու պար թուչին, խայտան,
Թող այլք վայ'լեն հաճույք մարմնո, հոգեղեն,
Ա՜խ, իմ սրինգ, աշխարհ հույսով թող բերկրի,
Թող բաղդն անոր ժպտի հույսին,
Ե՛կ, ես ու դու ի միասին
Լանք ու երգենք, մեր բաժինն այս է երկրի...

ԵՐԳ

Երբ խըլրտին տարերք ներքին,
Լերինք խկուն
Քստմնին դժգույն.
Եվ ի խորոց յուր ընդերքին
Հուր, ժայռեր, կիր
Ժայթքե երկիր,
Երբ խըլրտին տարերք ներքին։

Իսկ բորբոքին երբ սիրո կիրք,
Կարծես դադրին
Քստմունք երկրին,

Լերինք առնուն և անշարժ դիրք։
Այնքա՜ն ուժգին
Հուզվի հոգին
Ա՜հ, բորբոքին երբ սիրո կիրք։

Երբ կատաղի շնչե ամպրոպ,
Անսահման ծով
Յուր զանգվածով
Դողա և խույս տա սրտատրոփ.
Եվ պատառին
Ծառք անտառին
Երբ կատաղի շնչե ամպրոպ։

Այլ երբ կուսին շունչն զգա մարդ,
Կարծես օվկիան
Յուրում անկյան
Ամոթահար կծկի հանդարտ.
Այնքա՜ն ուժգին
Սարսռի հոգին
Երբոր կուսին շունչն զգա մարդ։

Եվ երբ շփվին մռայլ ամպեր,
Օդոց մեջեն
Շանթիք մռնչեն,
Խուժյալ երկիր իբրև բանբեր.
Այնժամ բռնկին
Այեր, երկին,
Հորժամ շփվին մռայլ ամպեր։

Իսկ երբ շրթունք շրթանց մոտին,
Կարծես մարին
Բոցք կամարին,
Լռեն շանթիք և անհետին.
Այնքա՜ն ուժգին
Վառի հոգին,
Երբոր շրթունք շրթանց մոտին։

ՎՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ի բա՜ց հինեն, խինդ և հրճվանք՝ արտամաշուք,
Ձեր ժպիտներ չեմ սիրեր ես, մա՜ղձ և թույն.
Ի բա՜ց, արև, թող շուրջ զինև պատե շուք,
Մահու տագնապ, լքված վայրից լռություն։

Ի բա՜ց, ուսում, ի բա՜ց նվաղ՝ սեր և կյան,
Ծաղու գործիք գիտնույն, երգչին, հիմարին.
Որք թե տան իսկ մեզ լույս՝ գրոս մի վայրկյան,
Ծաղրեն զմեր տկարություն և մարի՜ն։

Թող մարդկություն քակե հինեն իր կապանք,
Անեծք դժոխոց, մահու դալուկ, ցուրտ թախիծ,
Դառն հայհոյանք, մռունչ կրրից, տառապանք,
Ահա՜ ինչ որ ունի և տալ կրնա ինձ։

Փշրե՜ ջախջախ, քնա՜ր, գուսան գու հոգվոց,
Ձմե՜ռ եկավ, հաճույքդ ամեն սառեցան,
Թող վասն իմ՝ բուն, ամպն ու մրրիկն ալեկոծ՝
Վայե՜ն, գոռա՜ն և մռնչան միաձայն։

Լա՜ց դու, առվակ, և հառաչեն թող հովեր,
Կարկաչ և սույլ հույժ ծաղրելի բառեր են.
Ա՜խ, սիրտս՝ աչերս լինեին վիհ ու ծովեր,
Գիշեր-ցերեկ դրղրրդեի քեզ, Որ էն։

Թափե՜ թերթերդ մեկիկ մեկիկ, վարդենիս,
Քո բույր և թույր ալ չեն դյութեր իմ հոգին.
Փուշեդ ի զատ ոչինչ հրճվանք գու չունիս,
Խոցե՜ ձեռներս, վշտեր արյամբ ամոքին։

Տխուր լուսին, որ ի տափին գետափին
Փայլիս աղոտ՝ սև ամպերի տակ, հո՜ն առ կանգ,
Եվ թող անտի գոռուն շանթեր թոթափին,
Սրտիս խորեն տամ ես անոնց արձագանք։

Եվ դու, Գիշե՜ր, բախե թևեր քո անլույս,
Ծածկե զամեն գեղ ու գեղգեղ ի սև շուք.
Թող չը վառի՜ն ալ կուսին աչք, արշալույս,
Նա խոց, սա բոց, ծաղրեն իմ վիշտ և արտասուք։

Մի՜ փայլփլիք, շողե՜ր, կապույտ երկնք մոտ,
Ծավի աչվին ձեր խփեցե՜ք անբարբառ,
Զի ձեզ նման և ես ցերեկն անծանոթ,
Գիշերն անքուն վառի՜մ, դողա՜մ անապառ։

Երգե՜, բվեճ, խավարաբնակ՝ առանձին,
Վայնասունովդ հուզե աչացս արտասուք,
Շատ ցերեկներ լուսոտ եկան, մութ անցին,
Մութ է վախճանն այս տղուն, ո՜հ, մութ և սոգ։

Պատռե՜ կուրծքդ, բա՜ց ծոցդ, սև՜ գերեզման,
Ցուրտ բազկացդ մեջ սեղմե սա որբ պատանին,
Կյանքի վհատ բեռեն ազատ ըրե զայն,
Ո՜ւր կ'ուզես հոն գլե անոր հեգ հոգին։

ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋՅԱՆ

ՄԵՂԵԴԻ

Աղվո՜ր աչքեր, սիրեցեք մեզ, սիրող աչքեր։
Լճակին քով Թուփերն իրենց շուքը լրռին,
Թարթիչներու պես, կը քրսեն կապույտ ջուրին։
Աղվո՜ր աչքեր, սիրեցե՛ք մեզ, սիրող աչքեր։

Ո՜վ համբույրներ, երգեցե՛ք միշտ, երկինքն ի վեր։
Կապույտ ջուրը կը համբուրե կողը ժայռին,
Եվ սարսուռի շրջող շիթեր շուտ կը փըշրին։
Ո՜վ համբույրներ, երգեցե՛ք միշտ, երկինքն ի վեր։

Այգը դեռ կույս կը փախչի մութ տարփանքներեն,
Այգը, դեռ կույս, դեռ չի սիրած արևն իրեն,
Աղվո՜ր աչքեր, սիրեցե՛ք մեզ, սիրող աչքեր։

Ծաղիկներու բույրերն հուշիկ կը մոլորին.
Հեշտ երազե մը կը դողա շուրթը մերին.
Ո՜վ համբույրներ, երգեցե՛ք միշտ, երկինքն ի վեր։

ԼԵԼԱԿՆԵՐԸ

Առտվան մեղմ սյուքին տակ,
Մեղմ համբույրին պես կույսի,
Կը դողդրղան մեկուսի
Լուրթ լելակներն ու սպիտակ։

Մեղմ համբույրի պես կույսի,
Առի անոնց բույրն հստակ.
Լուրթ լելակներն ու սպիտակ
Տարփոտ լանջեր են՝ ըսի։

Առի անոնց բույրն հըստակ,
Կարծես հևք մը նոր հարսի.
Տարփոտ լանջեր են՝ ըսի,
Ցոլքերն այգուն զերթ լելակ։

Ինչպես հևք մը նոր հարսի,
Լելակն հեշտանք մըն է տաք.
Ցոլքերն այգուն զերթ լելակ՝
Պըզտիկ ծովեր են վարսի։

ԿԸ ՍՊԱՍԵՄ...

Ես կըսպասեմ, կըսպասեմ, որ
Սիրտիս վըրա շող մը ծաթե։
Դառն է կեանքը, և ամեն օր
Կյանքն ըսպասում մ'է գըրեթե։

Գարնան գալուն կըսպասեմ դեռ,
Որ ժըպիտ մը ծաղկի նորեն։
Ես կըսպասեմ, որ երազներ
Հին հըմայքներ ինծի բերեն։

Քիչ մը սիրո կըսպասեմ ես,
Ես կըսպասեմ խաղաղության,
Ես կըսպասեմ, որ վերջապես
Ոսոխները եղբայրանան։

Ձեռքիս վըրան գորովներու,
Եվ սիրտիս մեջ լացող գութի՝
Երջանկության ըսպասելու
Միակ հույսը կը միամըտի։

Ես կըսպասեմ ձայնի մը նոր,
Որ հին երգ մը կըրկնե հիմա։
Ես կըսպասեմ բանի մը, որ
Մահեն առաջ վախնամ չիգա...

ՄՈՒԹԸ ԿՈԽԵՑ

Գիշերը վրա հասավ.
Մութ զընտան է, մութ, մութ։
Գիշերը վրա հասավ.
Իրար չենք ճանչնար։ Շուտ,
Ջահեր բերեք կարգավ.
Ջահեր բերեք, քույրեր,
Ճամբանիս չենք գրաներ։

Մութը կոխեց զընտան,
Մեր սիրտերուն վրան։
Իրար չենք ճանչնար աչ։
Պետք է սակայն գիտնալ,
Թե ո՛ւր ենք, ո՛ւր կ'երթանք,
Դեպի ո՛ր սև վրտանգ։

Ջահեր բերեք, շուտ, շուտ,
Ճամբանիս ցույց տրվեք։
Ա՜խ, քույրեր բարեգութ,
Մութը այսպես երբեք
Թանձր եղած չէր, բընա՜վ։

Գիշերը վրա հասավ.
Ջահեր բերեք կարգավ.
Ջահեր բերեք, շուտ, շուտ,
Մութ զընտան է, մո՜ւթ, մո՜ւթ։

ՄԵԿՆՈՒՄՆԵՐ

Կարգավ նավեր կը մեկնին
Դեպի ծովերն հեռավոր
Ու կը թողուն ետևնին
Սուրբի ամպեր նըրբոլոր։

Նավահանգիստն առանձին
Կը մրտմրտա սրգավոր.
Ու նավերը, որ գացին,
Ա՛լ չեն դառնար ծոցն ետեր։

Դեպի վիհերըն արցունքի
Իմ երազներս սուտ փախան՝
Հուշ մը թողլով անհոգի

Ու, ցավերու մեհարան,
Ջո՜ւր կըսպասե սիրտս հար
Երազներուս, որ չեն գար։

ԹԱԽԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անձրևին ծույլ շիթերն անվերջ կիյնային վար,
Շիթերն անվերջ աչքերեն վար կը ծորային։
Գորշ ամպերուն ետին ցավեր կան ըստվար.
Գորշ ամպերուն ետին հոգի մը կա լռին։

Ցուրտ մը կըծու հոգիներուն մեջ մերին
Կը բերե սառ ըստվերները դագաղի։
Ցուրտ մը կըծու խորհիլ կուտա թըշվառին,
Թշվառին՝ որ մերկ, ամոթի կը պաղի։

Անձրևին ծույլ շիթերն անվերջ կիյնան վար.
Ու կիյնան վար տերևները հետին շուր։
Տերևներուն անկումին հետ ոգևար՝
Կը թափթրփին սիրտս իղձերն ալ բոլոր։

Հովը կուռի ու կը ճվա կատաղի.
Եվ թախծությանն հիվանդ լալկան ձրմեռին
Կը բերե սառ ըստվերները դագաղի՝
Տարտամ անտենչ հոգիներուն մեջ մերին։

ԲԱՆՔ ԱՌ ՀԱՅՈՐԴԻ

Մի՛շտ կանգուն, տրղաս, գըլուխըդ մի՛շտ բարձր։
Հայ ցեղին զավակն երբե՛ք չի կըքիր,
Բըռունցքին առջև կամ լուծին տակ կարծր։
Անիկա Հա՛յ է, նույնիսկ տարագիր։

Դո՛ւն հայ մանավանդ, հողի վրա օտար,
Գըրկած հայրենիքն, ո՛ւր հայը կ'ապրի,
Դըրոշն Հայության միշտ բարձրորեն տար,
Որպես թանկ ավանդ ազգիդ քաջարի։

Մի՛շտ կանգուն, իբրև կոթողը ցեղիդ,
Կոթողը հույսի և վաղվան Փառքին,
Զոր պիտի դարբնե, վեհ ու աներկմիտ,
Ձեր սերունդը նոր կամքովն իր ուժգին։

Հայրենիքին մեջ կամ հեռու անկե,
Հայորդին կըզգա երակներուն մեջ
Արյունը Հայու, զոր կը մըտրակե
Իր վեհ նախահարց հիշատակն անշեջ։

Մերթ իր աչքերուն, տեսի՛լ սըրբազան,
Երբ նահատակներն հայ ժողովուրդին
Հարությունն առած հանկարծ կ'երևան։
Ան ուխտովն հայու կ'երդնու վերըստին։

Հայը, գետնահար, միշտ կանգնեցավ վեր։
Հայն, աստանդական, սակայն մեկ հոգի,
Հա՛յ պիտի ապրի դեռ բազում դարեր։
Մի՛շտ կանգուն ուրեմն, ամենքդ ալ ոտքի՛։

ԿԱՐՈՏԸ

Ա՜հ, կարոտը։ Կարոտները կը կրծեն խեղճ սիրտս հալումաշ։
Կարոտն ունիմ հին բաներու։ Անցյալին՝ որ ալ չի դառնար,

Բայց կը ժպտի երբեմըն քաղցր դրվագներու վերհիշումով։
Եվ, վշտահար, ունիմ կարոտն ընկերներու, որ շուտ մեռան։

Եթե չըլլար թուղթն ու գրիչ, դաժան կ'ըլլար կյանքս իհարկե։
Գրե՛լ, քերթե՛լ, ահա կոչումս, որուն փառքովն ես դեռ կ'ապրիմ։
Բայց ծերությանս մեջ ավելի՛ բարեկամի կարոտն ունիմ,
Անոնց անկեղծ սիրույն ու ջերմ խոսքին կարոտն հրակեզ։

Կարոտը հին երազներուս և երգերուն իմ սիրատենչ,
Գեղեցկության հըմայքներն, որոնցմով մենք միշտ արբեցանք։
Կարոտն ունիմ ես երբեմնի մաքուր սիրո ջինջ սրբության,
Երբ փողոցը չէր իջած սերն, ինչպես այսօր պիղծ լրբությամբ։

Եվ սուր կարո՜տն իմ տարագիր քամբախտ ազգիս խաղաղության,
Որ, օտարին դժխեմ լուծեն, նաև, ափսո՜ս, անհարազատ
Զավակներուն նախճիրներեն ձերբազատված, իր դարավոր
Պատմությունը ճոխացնէ նորապսակ դափնիներով։

Բայց կարոտն, որ մենությանս մեջ հայրենաբաղձ հոգիս տանջեց,
Հայրենի սուրբ հողին կարոտն էր մանավանդ, հրդե՜հ անշեջ։
Եվ մշտավառ կարոտիս հետ, պիտի տանիմ Հայաստանի
Ափ մը հողն ալ, դագաղիս մեջ իբրև ընկեր հավերժական։

Սակայն ինչո՞ւ, շար ոգիներ կը հանգերգեն, թե բախտավոր
Ծերունի մ'եմ, իշխանակա՜ն կյանք կը վարեմ, հանգստավետ։
Մինչդեռ միա՛կ վայելքս կ'ըլլա Նիսի կապույտ ծովն ու երկինք,
Լոկ բնության մեջ գտնելով հետին հաճույքս սփոփարար։

Արդեն կըզգամ, որ կյանքս ապրում չէ՝ այլ միայն դեռ սպասում,
Կարոտովը բարեկամին, որ կուշանա, բայց պիտի գա։
Հավատարիմ այդ միա՛կ անկեղծ բարեկամն է՝ որ կը պահէ
Ունայնության ծոցին մեջ ծե՛ր հոգիները անփառունակ։

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

ՕՐՈՐ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դուն նստեր ես ճամփաներուն անկյունը,
Մազերդ ի վար իջեր կախվեր է ձյունը,
Մարմնույդ վրա կըփոսանան մութ խոցեր,
Եվ աչվըներդ արյունի լիճ են դարձել։

Ո՞ր չար պարիկը հյուսեց թելը բախտիդ...
Ո՞վ տեսնելով քեզ տասալած ու վտիտ՝
Պիտի հիշե, որ դուն երբեմըն հզոր
Աղջկին էիր սև աչքերով լուսավոր։

Կը ծփային մազերդ ինչպես դրոշ մը լայն՝
Ազատ լեռան մեջ ուր հոգիդ մեծաձայն
Կը մոնչեր խոյանալով սարե սար,
Ու ծոցդ հպարտ՝ մեղր ու կաթով կ'ուռենար։

Քեզ ցանկացին հելուզակները բոլոր.
Պաշարեցին քեզ ոսոխներ ահավոր.
Երկար ատեն ոգորեցար, կռվեցար,
Մինչև ա՛լ խոնջ ինկար գետին ուժասպառ։

Եվ քու հոգիդ արգավանդ էր ու բարի՝
Կործանարար ուժերուն մեջ վիթխարի.
Դուն կյանքի ծիլ մ'ավելցուցիր աշխարհին,
Մատներդ հողեն գեղեցկություն հանեցին։

Դուն Անահիտն էիր խաղաղ աչքերով,
Ոսկիամայրն էիր պայծառ լանջքերով,
Ծոցեդ բարիք, նայվածքեդ լույս կը տեղար,
Շրթներդ դաշն էին ու ձեռքդ ճարտար։

Եկան խուժերն ու ձեռքիդ կապ անցուցին,
Բզբքտեցին, աղարտեցին ծոցդ անգին.
Եվ բյուրախոց դարձար դուն Մայրը կարմիր՝
Գողգոթային ճամփուն վրա ծնրադիր։

Ի՜նչ գեղեցիկ, ի՜նչ քաջ եղար ցավին մեջ...
Աղետքին տակ հոգիդ մնացեր էր անշեջ.
Կարծըր լուծեր կոտրտեցիր ու մահեն
Քանի՜ անգամ ոտքի ելար դուն նորեն։

Աչքդ լույսին կը սևեռեր անդադար.
Միտքդ, խիզախ, նոր աշխարհին կը դառնար.
Ու դարերով համառեցար, առանձին,
Թումբ ձևանալ ասիական հեղեղին։

Մեծցավ հեղեղն ու զգետնեց քեզ մոլեգին
Ու մարեց բոցդ թափով իր ալիքին.
Ջվառական, խավարին մեջ, հողամած,
Միշտ կենդանի, դուն սպասեցիր գալարված։

Գիշեր ատեն, մերթ հին շիրմաց խաչերը
Կ'երերային, ու Մասիսի քաջերը
Մութին մեջեն կը շողային բարկաճայթ,
Աչվըներեն արձկելով շառ ճառագայթ,

Օդին մեջ խուլ կը թընդային թմբուկներ,
Դուն, դող ելած, կ'առնեիր պահ մ'աչքդ վեր,
Ու, վրդոված, կը նայեիր լեռներուն,
Ոչի՜նչ՝ բայց մութը ծանր ու պաղ լռություն...

Օր մ'ալ ցավի ցնցման մը մեջ անսահման՝
Ցցվեցար մեծ ճիչով մ'անձկոտ ընդվզման,
Աշխարհ ձայնիդ խուլ մնաց ու բիրտ ուժին
Կույր գարշապարը ճզմեց ճիգդ քուկին։

Բարկ հուրերու մեջ ճիվաղներ ցատկեցին,
Սիրտդ այրեցին ու աչվըներդ փորեցին,
Տունեդ վանված, հովերուն տակ մնացիր,
Մերկ տարածված— չորս դիդ արյուն ու մոխիր։

Հիմա նստեր ես, ցավագի՜ն ուրվական,
Ավերներուն պատկերին մեջ տխրական.
Կը խածկրտե վերքերդ հովը սառուտ,
Արյուն կ'իյնա խեղճ ծիծերեդ կաս-կապուտ։

Դանդաղորեն կը ժաժես գլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ձայնով օրոր կը կարդաս
Ջավկըներուդ, որ արյունին մեջ ինկան
Եվ անոնց, որ շորս հովերուն ցրվեցան։

Օրո՜ր կանաչ արևներուն, լուսավետ
Աչվրներուն, որ մարեցան առհավետ,
Եվ անոնց, որ դեռ կ'ապրին ու կը տանջվին
Ջնդաններուն մեջ ու մռայլ աքսորին։

Հերի՜ք, հերի՜ք... այդ օրորդ ողբ է մահու.
Հերի՜ք... մենք նոր օրոր ունինք երգելու,
Պիտի երգենք օրորն հույսին ու վրեժին,
Ու մեռելներն պիտի հողին տակ սարսին...

Հերի՜ք, հերի՜ք... վեր առ գլուխդ ու մի՛ լար,
Ցավը սուրբ է, ցավը՝ մեծ ու փրկարար.
Ոչինչ կա վեհ, քան խաչին տակ զոհն արի,
Գիշերին մեջ կը հյուսվի այգը բարի։

Ժանտ դահիճներն ու քանդողները մթին
Փոշիի պես պիտի անցնին ու ցնդին,
Ու մոխիրին մեջեն պիտի ելլես դուն,
Տառապանքեն նորոգված ու շողշողուն։

Մի՛ լար, մի՛ թույլ մազերդ հովուն տարտղներ,
Մի՛ լար, մի՛ խեղճ գլուխդ վար կործաներ.
Ճանչցիր դուն քեզ, ժողվե՛ ավյունդ ցիրցան,
Հերի՜ք ուժերդ օտար տան սյուն կանգնեցան։

Հանգի՜ստ տժգույն եղբայրներուն, որ ինկան,
Ելի՜ր, օրհնե՛ մեզ, տարածե մեր վրան
Թևերդ անհուն։ Թող մեր արյունն ու հոգին
Քու արևուդ մատաղ ըլլան ու ցամքին։

Մութին մեջեն պիտի ցցվիս հաղթական,
Աչքերդ աստղեր պիտի դառնան ու ցոլան.
Վերքերդ վարդ պիտի ըլլան հոտավետ
Ու լույս պիտի թափի ճերմակ մազերեդ։

Պիտի կանգնիս ճամփաներուն բերանը,
Պիտի քանդես Բոնության սև խորանը.
Ոտքի՛ ելիր, ցավերդ երկունքն են հսկա,
Ով Մա՜յր, աշխա՛րհ մը ծոցիդ մեջ կը խլրտա։

ԵՐԱԶԸ

Ա.

Երազ մըն էր դողդոջուն ու դալկահար,
Ոգի մ'կիսամեռ,
Զոր իրիկուն մը լուսնի շող մը նիհար
Սենյակս էր նետեր։

Կարծես երկայն թաքուն վըշտով մը մինակ
Տանջվելն խոնջած,
Եկեր ինկեր էր, ոգեսպառ, տխրունակ,
Թևերը փըրթած։

Գիրկս առի զայն ու շոյեցի ընդերկար
Մարմնիկը հատած,
Որուն մեջ լույսն հիմա, հիվանդ, կը գողար
Ձերթ կանթեղ մ'առկայծ։

Ես սիրեցի, ինչպես տխեղծ աղջիկներ
Կը սիրենք գթոտ,
Սիրեցի զայն՝ որովհետև դժբախտ էր
Ցավով մ'անծանոթ։

Բ.

Շաբաթ մ'ամբողջ մեր խեղճ տարփանքը տևեց.
Բարձիս վրա պառկած,
Գլխուս մոտիկ երազն իր ողբը հըծծեց
Խուլ ձայնով մը ցած։

Կ'ըսեր ինծի բոլոր իղձերը փշրած
Իր դառըն կյանքին,
Ու կը պատմեր երկնքին մեջ լուսամած
Իր վի՛շտը մթին։

Եվ ես անոր կը պատմեի մեր ցավերն
Աշխարհի վրան,
Ու կ'ըսեի. «Ամեն տեղ, վարն ինչպես վերն,
Ցավն է տիրական»։

Ու մեր եղբայր հոգիներուն մեջ գորով
Մը ծնավ անհուն,
Եվ սփոփանք պահ մը գտանք իրարմով
Մեր մորմոքներուն։

Գ.

Ինծի հաճախ երկնքին վրա կը խոսեր
Մելամաղձորեն.
Կ'ըսեր ինչպես հոն իրարու կուտան սեր
Աստղե՛րը հրեղեն։

«Հոգիներ են,— կըսեր,— որ ջինջ եթերին
Մեջ կապրին կյանքով
Մը տենդագին, կյանքով մ'որ լի է խորին
Հույզով, տանջանքով։

Սերն է անոնց տենչն ու հրայրքն անհեղլի,
Սերը բոնավոր,
Սերը կույր, Սերն անողորմ ու պաշտելի,
Սերն ամենազոր։

Երբոր ժպտի անոնց, անուշ ու պայծառ,
Հպարտ կը վառին,
Ու երբ զրկվին անոր շողերն բարերար,
Թոշնած կը մարին։

Դ.

Բայց խոցվածներն այդ մերթ կ'իջնեն երկնքեն
Ձեր երկրին վրա մութ,
Ամոքել հոս՝ սրտի մ'հպմամբ մարդկեղեն
Իրենց ցավն անգութ։

Եվ ատոնց էջքն է, որ հոգվույն մեջ մարդոց
Կը թափե տրտում
Անրջանքներն անասելի, քաղցրաբոց
Խանդերն անպատում։

Ես այդ դժբախտ հոգիներեն մեկն էի,
Անեծք մ'ահավոր
Խամրեց օրերս, զանոնք դարձուց ամայի
Անապատ մը չոր։

Բայց մեջս արդեն հուրը տակավ կը մարի,
Կըզգամ, վերջս է մոտ...
Եղբա՛յր, հիշե՛ զիս՝ պահերուդ մեջ ցավի՝
Հուշով գորովոտ»։

Ե.

Ու գիշեր մ'ան մեռավ. իզո՛ւր ջանացի,
Ժամերով երկայն,
Թափելով վրան հեղեղներ տաք արցունքի,
Արթնցընել զայն։

Հետո, մինակ, կատարեցի ես, ավա՛ղ,
Սև հանդեսն անոր
Թաղմանը, ե՛ս քահանա, ե՛ս դիաթաղ,
Ե՛ս հուղարկավոր։

Իմ սուգիս մեջ փաթթեցի զայն, ու կերոն
Ըրի հառաչներս.
Եվ ընդերկար հեծկլտացի, լացի հոն,
Եղերամոր պես։

Հետո, բացի սիրտս ու այնտեղ թաղեցի
Երազն անկենդան.
Քովիկն այնքա՛ն մեռելներու սիրելի՝
Որ հոն կը քնանան։

ԱԴԱՄԻ ՎԻՇՏԸ

Լեռներու ստորոտ, մարմանդին վրա,
Շուքին տակ ծառի մը բազկատարած,
Վճիտ առվակի մը մոտ արծաթյա
Եվա մեղկորեն էր ընկողմանած։

Բոցակեզ արևն հորիզոնեն վեր
Կ'ելլեր հաղթական. զեփյուռն անուշակ
Կը պարզեր օդին մեջ փափուկ թևեր,
Վարդը կը խնկեր, ու կ'երգեր սոխակ։

Բայց ո՛չ արևին, ո՛չ ծաղիկներուն
Կը նայեր Եվա. ուժով կըսեղմեր
Իր թևերուն մեջ մանկիկ մը սիրուն,
Խնձոր այտերով, խաժակն, ոսկեհեր։

Կը շարժեր անդուլ մանկիկն անհանդարտ,
Խաղալով մանրիկ մատներովն իր մոր
Գանգուրներուն հետ. և ան, գոհ, զվարթ
Կը համբուրեր զայն, ժպտելով անոր։

Ծառի մ'ետևեն Ադամ կը դիտեր
Այդ պատկերն աղու և շնորհալի,

Ու լուռ, տրտմությամբ լեցված, կը խորհեր՝
Աչքն իր մանկիկին հառած ծագկատի։

Հանկարծ արցունքով աչքերը լեցան,
Հառաչ մը կուրծքեն թռավ թախծալիր,
Ճակտին զարկավ ձեռն ու շշնջով մը դաան՝
«Տե՛ր,— ըսավ,— ինչո՞ւ մայր մ'ինձ չուզիր»։

ՏԱՂ

Անո՛ւշիկ աղջիկ, քեզ կը գտնեմ ամեն տեղ.
Երբ գիշերանց հառեմ աչքերս աստղերուն,
Ա՛յնքան ջինջ են, ա՛յնպես քնքուշ և անմեղ,
Որ կը կարծեմ անոնց լույսին մեջ սիրուն
Տեսնել նայվածքդ բյուրեղ։

Ծառերու տակ երբ որ ելնեմ իրիկվան
Ման գալ անունդ հիմարաբար կրկնելով,
Այն փայփայիչ նվագն աղվոր խոլական,
Զոր ոստերուն մեջեն թ'երգե այուքը զով,
Ինձ կրթվի ձայնդ անմահ։

Առավոտուն, երբ երկնքին մեջ ճմիտ
Պատուհանես դիտեմ ծնունդն արեգին,
Ջեփյուռը, շունչ Ափշալույսին վարդաժպիտ,
Որ իմ մազերս կուգա շոյել մեղմագին,
Կուտա սարսուռն համբույրիդ։

ՀԵՔԻԱԹ

Աստված առավ ափ մը լույս,
Խառնեց անոր շիթ մը ցող,
Դրավ հոն կայծ մը ջանթեն,
Շաղեց մատովն ըստեղծող։

Հետո մասնիկ մ'առավ փոխ
Աստղերուն լուռ նվագեն,
Միստիկ բույրեն վարդերուն,
Ջեփյուռին խոլ քմայքեն,

Ափշալույսին ամոթխած
Շիկնումեն ու խոր տրոփեն
Ծովուն սրտին և նետեց
Այդ զանգվածին մեջ հրեղեն.

Ապա, դեռ հոն չըփրշած
Իր կենսատու շունչը մեծ,
Գորովի մեջ թաթխեց զայն,
Խենթությենով համեմեց,

Օծեց կաթիլ մ'արցունքով
Ու վրան սրբսկեց հեշտություն,
Եվ ահա ծընավ գողտր ու նուրբ,
Փոքրիկ էակ մը սիրուն։

Կը թրուչըտեր, բայց թռչուն չէր,
Կը բուրեր, բայց չէր ծաղիկ,
Եվ ուներ շունչ մը գրգվող,
Թեպետև չէր ջեփյուռիկ։

Էակ մ'աղվոր ու մաքուր,
Ինչպես հրեշտակ մ'ոսկեհեր,
Ու դևի պես անառակ,
— Եվ այդ էա՛կը Սե՛րն էր։

ՍԻՐԵՐԳ

Քեզ, իմ սիրելիս, երգելու համար,
Ես պիտի ընտրեմ բառերուն մեջեն
Անոնք, որ աղնիվ են ինչպես մարմար,

Եվ անոնք, որ քաղցր ու ճոխ կը հընչեն,
Որպեսզի անունդ ապրի հավիտյան,
Կախված իմ տաղիս անկորուստ փունջեն.

Ու պիտի հավքեմ դեռ բառեր բուրյան,
Բառեր փետուրի պես գիրգ ու փափուկ,
Բառեր խրոխտ և անբիծ ինչպես քամելիան,

Բառեր, որ ցոլքեր ունին խուսափուկ,
Բառեր, որ աստղի քրթթումներ ունին,
Եվ անոնք, որ նուրբ են զերթ տերեփուկ։

Հետո՝ լույս հրճվանքն անմեղ գարունին
Փոխ պիտի առնեմ, և զեփյուռին սույլ,
Ու դայլայլն անուշ սիրո թրռչունին,

Թիթեռնիկներեն իրենց վազքը հույլ,
Այգեն իր ժպիտն ու լուսընկայեն
Լայն մազեր արծաթ, թափած հույլ ի հույլ։

Պիտ՝ ոգեմ խոհերն, որ կը հմայեն,
Սուրբ ճաճանչումով պատկերներն անգայտ,
Երազներն, ուր ջինջ ձայներ կը մայեն,

Եվ հիշատակներն, որոնք ճառագայթ
Ունին իրենց մեջ, տենչանքներն աղվոր,
Որոնք կը թրռչին ճախրանքով անգայտ։

Ու պիտի բանամ գոհար տուփը որ
Կը պարփակե նուրբ ոճերն ու ձևեր
Եվ ասույթներն հանդուգն, անսովոր,

Ու պիտի գրեմ. բայն հրզոր թևեր
Պիտի ընդլայնե, և մակբայն ոսկի
Թիթեռի մը պես՝ պիտի սլանա վեր,

Պիտի վառի զերթ ցայտք մ'արեգակի՝
Գոյականն, ու խոլ հրրթիռի նման
Խիզախ ածակա՛նը պիտի ժայթքի.

Պիտի գրեմ, ու լա՛յն շունչով մը հուզման՝
Պիտ՝ երգեմ չքնաղ քու դեմքդ հրաշեղ
Եվ քու հոգիիդ շնորհն անսահման.

Ու դարե ի դար սիրով բոցակեզ
Սրտերը մատաղ՝ երգիս շողյունեն
Քեզ գուշակելով՝ պիտի պաշտե՛ն քեզ,

Ու զիս նախանձով պիտի երանեն։

ԱՏԵ՛, ԲԱՅՑ ՄԻ՛ ՄՈՌՆԱՐ ՁԻՍ

Դիպվածը մեզ օր մ'իրարու հանդիպցուց,
Ու սիրեցինք մենք զիրար,
Գըտած ըլլալ կարծեցինք՝ ինչ որ վաղուց
Կը փնտրեինք անձկաբար,
Հիմա կը զգանք որ, ա՜խ, խաբեր ենք մենք մեզ,
Ու կը զատվինք, սիրելի՛ս,
Գիտե՞ս քենե ի՞նչ պիտի լոկ խնդրեմ ես,—
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

Քանզի սրտով սիրեցի պահ մ'ես զքեզ,
Եվ ինծի դառն է հիմա
Մտածել, թե ոչինչ, ոչի՛նչ իմ սերես
Պիտի սրտիդ մեջ մնա։
Գիտեմ, ամեն բան վերջացած է մեր մեջ,
Բայց չըպատռենք վիպակնիս.
Թող գեթ մե՛կ էջ անկից մնա, գեթ մե՛կ էջ.
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

Երբ իմ անունս հնչե երբեմն ականջիդ,
Դող մը հոգիդ թող ցնցե.
Թող հիշատակս ստվերե աչքդ վճիտ,
Եվ համբույրիս իմ բոցե

Հնագը թող միշտ անտես այրի այտիդ վրա.
Մեր տարփանքեն, նազելիս,
Արձագանք մը, ցոլք մը, շուք մը թող մընա.
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

Ո՞վ գիտե, եա գուցե եղա հանցավոր,
Գուցե դժբախտ ըրի զքեզ,
Մնա՞ս բարով, աշխարհ լայն է, դուն աղվոր,
Այլուր թերևըս գտնես
Երջանկությունն, որուն սիրտդ է արժանի.
Երբ նոր սեր մը, պաշտելի՞ս,
Մեր խեղճ սիրույն մոխիրներուն մեջ ծնի,
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս։

ՍՊԱՍՈՒՄ

Աղջիկ մը կա հոգվույս մեջ,
Որ հավիտյան կը փորձե.
Հիշել մոռացված երգ մը հին,
Որ խույս կուտա միշտ իրմե։

Տղա մը կա մտքիս մեջ,
Որ կը սպասե անդադար,
Հույսով մը, որ չի հոգնիր,
Մեկուն որ չի՛ գար, չի՛ գար։

Ծերուկ մը կա սրտիս մեջ,
Որ կը կանչե հավիտյան
Մեկն, որ հեռուն է և որ
Չի՛ տար երբեք պատասխան։

***

Մի՛ ատեր վիշտը երբեք և անկից մի՛ վախնար դուն,
Երկինքը, տե՛ս, անկենդան է, երբ անամպ է համակ.

Ամպերն են, որ վ'արժեցնեն վերջալույսին և այգուն
Պերճ երանգներն ու լուսնին նշողումներն անուշակ.
Անոնց քողին ներքևեն, մեջեն անոնց ժանյակին
Ավելի ջինջ կերևա կապույտն ու խոր ավելի.
Ու ծիածանը թովիչ, այդ հրաշալիքն երկնքին,
Լույսին, անոնց մաքառմանը ծնունդն է զմայլելի։
Տառապանքն է, որ ի հայտ կը բերե ուժը թաքուն
Եվ ճոխությունը ներքին մարդոց հոգվույն. զուրկ անկե՝
Մերկ է հոգին ու դատարկ, առանց կյանքի և անգույն.
Եվ որպեսզի ան ալ իր այգն երփնագեղ շողացնե
Եվ իր գոտին ծիրանի կախե մութին մեջ եսին,
Պետք է պայքարը վշտին ուժերուն հետ էության։
Բայց վա՜յ, եթե վիշտն հոգվույն տիրապետե բռնագին,
Ինչպես երկինքն, երբ ամպերն հորդակուտակ թանձրանան,
Կ'անհետանա ու կը մեռնի, այնպես հոգին խեղդված
Կ'անէանա, երբոր վիշտը հոն իշխե հաղթական։
Վիշտը պետք է ըլլա ոսոխն հարկավոր ու պարտված,
Մի՛ ատեր վիշտն և անկից մի՛ վախնար, բայց վարե՛ զայն։

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ

ԿԱՐՈՏԱԳԻՆ ԱՅՑ

ԳՅՈՒՂԻՍ ՃԱՄԲԱՆ

Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,
Մոռացումը առա՛վ ինձմե ամեն բան,
Հին երազներս ամպերու պես կ'անհետին,
Հիշատակն ալ կ'անցնի երգի մը նման։

***

Հոգիս սակայն կը հիշե՛ քեզ,
Դո՛ւն, ծաղկավետ գյուղիս ճամբան,
Ուր քալեինք գառնուկս ու ես,
Դեպի պուրակն ու բուրաստան,
Անմեղության երազին պես։

Ու քովիկեղ դողդողագին
Սահեր աղվոր վճիտ առուն,
Մերթ կամուրջին ու մերթ մարգին
Տակ պահելով կ'երթար հեռուն,
Ամայության իբրև ոգին։

Բարակ, նիհար քանի մը ճյուղ
Կը զատվեին վտիտ բունեդ,
Մին կը դիմեր դեպ անշուք գյուղ,
Կը տարածվեր, կ'ըլլար անհետ,
Բոլորելով խրճիթն ու հյուղ։

Մին մագլցեր բլուրն 'ի վեր,
Մյուսը կ'իջներ ձորակեն վար,
Ուր ուռենին կուտար ստվեր,
Ու սրինգն իր երգը կուլար,
Զոր կրկնեի՛ն գարնան հովեր։

Զմռանն ալ երբ ձյունն սպիտակ,
Կը գտներ մեզ շուրջ թոնիրին,
Անհետ կ'ըներ իր ծալքին տակ
Մեր հին գյուղին վտիտ ուղին,
Ինչպես մարգերն ու մանիշակ։

***

Տաշված քարե ուղիղ ճամբան
Կը տանի զիս արդ ի ծովափ,
Կը ճմլըվի՛ հոգիս սակայն,
Մտածումով մը հրատապ,
Ու կը թոչիմ հին մանկության։

Հոն՝ փակ թեև՝ սակայն աղվոր
Ու երփնագե՛ղ էր հորիզոն,
Հմայքներով լի բյուրավոր
Անմեղությո՛ւնը խայտար հոն
Ճամբուն վրա ոլոր մոլոր։

Մին՝ մագլցեր բլուրն ի վեր,
Մյուսը կ'իջներ ձորակեն վար,
Ուր ուռենին կուտար ստվեր,
Սրինգն ալ իր երգը կուլար,
Զոր կրկնեի՛ն գարնան հովեր։

Կյանքի նավակն հետք չի թողուց իր ետին,
Մոռացումը առավ ինձմե ամեն բան,
Հին երազներս ամպերու պես կ'անհետին,
Հիշատակն ալ կ'անցնի երգի մը նման...

ՏՆԱԿՍ

Բախտը քեզ ալ ինծի նման
Մոխիր դարձուց ու քու հովիկ
Մենիկ թողուց վտակ, հովիկ,
Իրենց երգովը բաժանման։

Անտառներու մե՛ջն էր անի,
— Մեկ քանի սյուն ու սև պատեր,
Մեջքերնին կոր, իրար բռներ,
Հին օրերու զերդ ծերունի։

Ու իր խարխուլ պատերեն վեր
Մագլցեին բաղեղն ու վարդ,
Ու կտուրին տակն իր զվարթ
Սիծեռներու կային բույներ։

Մեկ սենյակ էր ու մեկ օջախ
Ու հևացող լոկ մի ճրագ,
Ու կյանքն ալ որ կ'անցներ արագ,
Մեկ իդեալ ուներ, ավա՜ղ...

Ժպիտներով լեցուն առկայծ
Մեկ վերջալույս կը հառանար հոն,
Ու կարմրագեղ մեր հորիզոն
Դալարներու մեջն էր փակված։

Հին տնակին քովիկն ի վար
Կարկաչելով սահեր վքտակ,
Կ'երթար՝ պահվիլ մարգերուն տակ
Սիրամրմունջ ու դողահար։

Սիծառն անվախ կուգար իմ քով,
Ու ձմռան ալ ճնճղուկն անտեր
Իր փշրանքը ափես կ'ուտեր
Ու կը թռչեր բյուր երգերով։

Ջյունը երդիկը կը ծածկեր իրեն տակ,
Փոթորիկեն հյուղակն ամբողջ կը դողար,
Բայց մեզ ինչ հոգ, երբ ճարճատուն, մշտավառ
Օճախին մեջ դեռ չի մարա՜ծ էր կրակ։

Մեկ կանթեղը բա՜վ էր մեզի,
Թեև դեղին ու հևացող,
— Փույթ չէ՛ ստվերն՝ երբ կիաշող
Երանությունը կը հոսի...

Այդ կանթեղին շուրջ թռավ իմ նախկին ճիչ,
Երազներս հո՛ն ծընան զվարթ կամ տխուր,
Մայրս հո՛ն տվավ արագիլի մեկ փետուր,
Գրե՛, ըսավ, ա՛յս թող լինի քու գրիչ...

Մեկ հյուղակը մեզի բավ էր,
Թեև անշուք, խարխուլ ու հին,
Ձմեռներու թեև քամին
Ձայն տերևի պես կը շարժեր...

Կանթեղին շուրջ ժպտուն աչքեր փակվեցան,
Սիրելիներ ծեր հյուղակը թողուցին,
Ու հոն երգող մնացին լոկ առանձին
Թափառիկ հովն ու վտակը ողբաձայն...

Կ'երազեմ զո՛ւր աչքերս փակ ու գրչին
Զոր ինձ տվավ սուրբ մայրենի
Սերն՝ աղվոր օր մը գարունի
Դեռ չի տված իմ հրաժե՛շտը վերջին։

Կ'ուզեմ երգել, քե՛զ, իմ տնակ մանկության,
Երբ դուն իմ բյուր հույսերուն պես
Այսօր անշուք փլատակ մ'ես,
Ու կը մնաս մոռացումեն անբաժան...

Չի դիմացար քեզ սիրողներն երբ գացին,
Կարոտդ զքեզ դարձուց մոխիր.
Երազիս պես սին ու պատիր,
Ու դուն մեռած՝ չե՛ս սպասեր իմ դարձին...

Այլ երանի՜, երբ ամենքը քեզ մոռցան,
Վտակ, հովիկ քովը թռչին,
Ու փշրելեն ետք իմ գրչին
Անոնք զքեզ պիտի երգեն հավիտյան...

ԳԸՆԱ՜

Հարություն զավկիս

Դյութված հոգիս բախտեն դժխեմ,
Անապատին մեջ հրայրյաց,
Ա՜խ, ալ չիպ'տի՜ վերատեսնեմ
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց։

Եղնիկի պես օր մը երբեք
Հին երկնային բարձունքն 'ի վեր
Չի պ'տի՜ սուրամ ու սրտաբեկ
Պիտի հատնի՜մ հոս կարեվեր...

Ես կը մխամ մինչ կարոտով,
Հոգիս բոցը չի մարած,
Ու կ'որոնեմ սրտախռով
Ձյունն ու մշուշն իմ հայրենյաց։

Ամպեր կ'անցնին ծովեն անդին,
Ու փոթորիկը խելահեղ
Կը սլանա որոտագին,
Անդունդներու մեջեն ահեղ։

Ո՞ւր կը դիմեն ամպ ու հովիկ,
Երգն ամայքին, հնքն օվկիանին,
Ո՞ւր կյանքն ու իր տրտում ալիք,
Հին երազները՞ս ո՞ւր գնացին։

Երգե՜, հոգիս, երգդ ո՞ւր մնաց,
Հանձնեցիր զայն ո՞ր կոհակին,
Միայն մենիկ ու տխրամած
Անբախտնե՜ր հոս երգ չունին։

***

Գեթ դո՜ւն գընա, տղա՜ս, դուն որ միասին
Հոս այրեցա՜ր արևներու բոցին տակ,
Որ անտրտունջ բաժանեցիր հետքս կյանքին
Լեղի բաժակ։

Սուրա՜, ամպին, փոթորկին հետ հեռացի՜ր
Ամայության կոհակներեն շատ հեռուն,
Հորիզոնեն անդին անհուն ու անծիր,
Վես Տավրոսի լեռներուն։

Գտի՜ր անբիծ ձյունն ու մշուշն հայրենյաց,
Տո՜ւր ճակատդ ցուրտ սառուցիկ հովերուն,
Ու ջիղերով պողպատի պես ամրացած,
Ողջունե նոր մի գարուն։

Ձիս մի՜ հոգար։ Ես քայլերով դողդոջուն
Կրնա՜մ ելլել բաժանումի Գողգոթան,
Դուն հին, մեռած երազներո՜ւս Հարությո՜ւն,
Փակե աչերս ու գընա՜...

Վերաշինե՜ տընակս ավեր ու լքված,
Համբույրներս տուր վարդերուն սիրահմա
Ու դեպ անբիծ ձյունն ու մշուշն Հայրենյաց
Փակե աչերս ու գընա՜...

ՎԱՐԴԵՆԻՆ

Իմ հայրենի բուրաստանիս մեջ սիրուն
Ու մարմարե աղբերակի մ'եզերքին,
Վարդի մեկ ծիլ, զերդ հուշիկ հին օրերուն,
Դեռ չի դիմած պանդխտության դառնագին,
Իմ մատներով տնկեցի։

— «Ինչո՞ւ խամրիլ, երբ գարուններ կը ծաղկին,
Ու երբ կայծեր կրնա՛ն հառնուլ մոխիրեն,
Քանի հույսեր կրնա՛ն դառնալ գեռ կյանքին,
Ու երազներ դեռ կը խայտան, կը բուրեն,
Դաշտերուն մեջ հայրենի։

Որ վշտահար ու գլխահակ հեռացար,
Քու հյուղակեդ օտարության, հեք քերթող,
Ու կտրեցիր մութ անդունդներ, ձոր ու սար,
Կյանքի խութին դեմ տիրական ու հաղթող,
Ու բարձունքի՛ն սլացար։

Դարձի՛ր, հոգի՛ տուր հյուղակիդ ավերակ,
Դարձուր ե՛րգը աղբերակիդ մարմարի,
Քե՛զ կ'սպասեն դրրախտի գետն ու բյուրակ,
Ու հին ուղին տակավին քե՛զ կը հառի
Հիմա լքված ու մինակ...

Առ վարդե՛րս, սփռե անհայտ շիրմաց վրան,
Կախե՛ քընարդ ճյուղերես տրտմագին,
Ու մրմնջե՛ երգը անմա՛հ Հայության,
Թե չի՛ մեռնիր Հայրենի՛քը թանկագին,
Քանի ծաղկի՛ վարդենին...

Արցունքիդ տեղ՝ ոռոգեցի՛ր որով գիս,
Խռոված հոգիդ պիտի կապեմ անդորրին,
Ու երբ մահվան դալուկներով տժգունիս,
Եկուր գտնել, հո՛ս, հոգիիս մտերիմ
Ըստվերիս տակ մեկ շիրիմ...»

ԿՈՉՆԱԿ

Միթե չի կա՞ր Եփրատին քով ողբաձայն
Կանգուն մատուռ մ'ուր հնչեիր իրիկվան,
Գյուղակն ավեր ու ամայի՞ էր այնքան,
Որ մեկնեցար այն վայրերեն մոգական,

Մեկ արշալույս հազի՛վ կեցա իրեն քով,
Տերևները խամրած, հովեն կը դողար,
Մեկ անգամ ջուր տվի իմ տաք արցունքով
Ու մեկնեցա դեպ ուղիներն վշտահար,
Օտարության, տաժանքի։

Ոչ մանկական երգիրս օրորն եղան իր,
Եվ ոչ ալ ինք բուրեց կյանքիս գարնան հետ,
Չի քաղեցի իրմե ծաղիկ մ'իսկ կարմիր
Իբրև նվեր իմ երազի՛ս սիրավետ,
Ու պաշտումիս լուսածիր։

Տընակս ինկավ ու կրքեցա՛վ վշտահար,
Մամուռներով լցավ աղբյուրն մարմարի
Եվ ա՛լ չերգեր,— այլ վարդենին միշտ դալար
Բյուր վարդերով կը սարսռա, կը վառի
Իղձերուս պես անհամար։

Ամայքներուն մեջ դուն ինչո՞ւ կ'ապրիս դեռ,
Մեկ գարունե դողդոջ կ'անցնիս մյուսին,
Ու զեփյուռին կուտաս աղվոր քու թերթեր,
Ինչո՞ւ դալար, երբ ձայները լռեցին,
Ու սոխակներ չե՛ն երգեր...

Ծաղիկներդ որո՞ւ ճակտին կ'սպասեն,
Դո՞ւն, իմ ավեր հայրենիքիս վարդենին,
Հույս չի ծագեր մութ ամպերու քաոսեն,
Ու հավատքին նշույլները կը հատնին
Հոգիին մեջ վշտագին...

***

Սարսռաց տունկը։ Անապատիս խորերեն
Լուսնի զույգ շող կապեցին մեզ իրարու,
Անդրաշխարհի իբրև երազ լուսեղեն,
Իբրև հծծյո՛ւնն անցնող անուշ օրերու,
Եվ իր ե՛րգը լսեցի։

Ու թափառիկ հայուն ընկեր կտրեցիր,
Անցար ալիք, կոհակ, անդունդ ու օվկիան,
Ու հայրենյաց զավակներուն ցանուցիր
Գացիր հնչել երգը պայծառ հարության,
Հնչե՛ կոչնակ
Իմ ներդաշնակ,
Թե չի մեռան
Հույսեր համայն։

Նոր աշխարհին ափեր քեզի են օտար,
Կ'զգամ, պանդուխտ ես ինծի պես, ի՛մ կոչնակ,
Էլեկտրական շողերուն տեղ բոցավառ,
Կ'ուզես մոմի հեքն ու մատո՛ւռ միայնակ,
Արծաթահունչ ձայնիդ իբրև արձագանք,
Պետք է անուշ շարականի մեղեդին,
Հարկ են գեղջուկ մեր հավատքի երգն ու վանկ,
Ու հծծյունը մեր հայրենի զեփյուռին։
Հնչե՛ կոչնակ
Իմ ներդաշնակ,
Թե չի մեռա՛ն
Հույսեր համայն։

Դուն գացիր հոն զերդ հիշատակ անցյալին,
Մեծ քաղաքաց ժխորին մեջ բարձրացար,
Շուրջդ պատրանք ու երազներ կը հալին,
Այլ դուն հավետ կ'ուղղես կոչը վշտահար
Արարատին. «Տարահալա՛ծ Հայություն,
Դարձի՛ր, ալ բա՛վ ինձմե հեռու մաշեցար,
Դարձի՛ր անցյալ սուրբ միության օրերուն,
Բե՛ր ինձ դրո՛շը Ազատության սիրավառ»։
Հնչե՛ կոչնակ
Իմ ներդաշնակ,
Թե չի մեռան
Հույսեր համայն։

Այլ կը մնաս ու կը հնչե՛ս ողբագին,
Գուցե պանդուխտ մ'ունիս քեզի ունկնդիր,
Որ նվազկոտ հրաժեշտ կուտա այս կյանքին,
Նշմարելով գերեզմանը սևածիր,—

Կը մրմնջես անուններն իր սիրելյաց
Գյուղին անունն ու Եփրատին սիրական,
Կ'ըսես թե իր հիշատակն է անմոռաց,
Թե հոգիներ պիտի ապրի՛ն հավիտյան,—
Հնչե կոչնա՛կ
Իմ ներդաշնակ,
Թե արդ հարյան
Հույսեր համայն։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՆՁՈՐՆԵՐ

Բարեկամիս, որ Հայաստանեն ստացած
խնձորներեն բաժին ճաճեր էր ինձ։

Ինծի ինչո՞ւ ղրկեցիր։
— Կովկասեն նոր հասեր էին, ըսիր դուն,
— Խորհրդային ու քաղցրահամ Հույսին պես,
Հալող, կարմիր ու սպիտակ այտին պես,
Խնձորներդ՝ երազահյուծ կույսին պես,
Բանաստեղծին սրտին համար տրոփուն
Արշալույս մը բերին անհուն ու անծիր...
Ինծի ինչո՞ւ ղրկեցիր։
Մարմինս անշարժ, այլ հոգիով խորասույզ,
Անցյալին ծոց կ'ապրեմ մշուշը Մուշի,
Կը թափառեմ Արաբկիրի և Ակնի
Ամայքներուն, կամ բարձունքը Բյուրակնի,
Դեռ կ'երազեմ, դեռ տաճար մը կը կանգնի
Կիսակործան։ Պատրանքներով վշտասույզ,
Կը կարծեմ թե մեր դրախտագեղ Մալաթիան
Ու Կիլիկիան՝ արծվի բույնը Հայության,
Ազատության դրոշին տակ Վահագնի
Հին անցյալի զենն ու զրահ կը հագնի...

***

Ինծի ինչո՞ւ ղրկեցիր,
— Կովկասեն նոր հասեր էին, ըսիր դուն,
Հայուն արևն է նկարեր իրենց գույն...
— Էջմիածնի ու Սևանի խնկաբույր
Հովն է հպեր անոնց աղվոր այտերուն,
Խորհրդային ու քաղցրահամ Հույսին պես,
Հալող, կարմիր ու սպիտակ այտին պես,
Բանաստեղծին սրտին համար տրոփուն,
Արշալույսնե՛ր բերին անհուն ու անծիր...
Ինծի ինչո՞ւ ղրկեցիր...

Ձեզ երանի՛, խնձորենի՛ք Շիրակի
Որ ճյուղերնիդ Մայր Արաքսի երգերով
Կը դողդղա և արմատնիդ շեշտակի
Հայ գյուղացվույն սուրբ քրտինքի՛ն կը մակի։
Արագածին ու Մասիսին հով, զեփյուռ
Կը փայփայեն ձեր ծաղկըներ սիրասփյուռ,
Եվ անոնցմով ազատատենչ հայորդին
Նարո՛տ կապե հայ կույսերու ճակատին։
Միտքս կուգա մի այլ աղվոր բուրաստան,
Դրախտի գետ Արածանին ուր կ'երգեր,
Խնձորենիք ծաղկըներով բյուրազան,
Կը կարծեինք, թե իրական երկինքն էր...
Ինծի ինչո՞ւ ղրկեցիր...

Գիտե՛մ ինչո՛ւ ղրկեցիր...
— Կովկասեն նոր հարսեր էին, ըսիր դուն,
Խորհրդային ու քաղցրահամ Հույսին պես,
Հալող, կարմիր ու սպիտակ այտին պես,
Խնձորներդ՝ երազահյուծ կույսին պես,
Բանաստեղծին սրտին համար տրոփուն
Արշալույսը բերին անհուն ու անծիր...
Հայուն արևն է նկարեր իրենց գույն,
Էջմիածնի ու Սևանի խնկաբույր
Հովն է հպեր անոնց աղվոր այտերուն,
Բանաստեղծը ճակատը մակ, սլացող,

Կը սևեռի իր հույսերուն անցյալին,
Արևելքեն կարմիր շողեր կը փայլին...
— Մղձավանջը ու մռայլը դադրին թող,
— Մայր, զավակներդ կարոտավդ կը մաշին...
...Եվ աչքերես հուշիկ-հուշիկ կը թափին
Խնձորներուդ կարմիրին վրա
Ու նոր երազ մը կ'երերա,
Պանդուխտներուն արցունքները իբրև ցող...

ԱՆԴՐԱՆԻԿ

Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն,
Շիրիմն ալ ոչ քար ունենա, ոչ կոթող,
Եվ որպեսզի հերոսն հանգչի քիչ մ'ատեն,
Բարեկամներ դագաղին վրա նետեն թող
Հայաստանի ափ մը հող։

Արծվի աչքերն իր կիսաբաց մնացին,
Պանդխտության, աքսորանքի մը դաժան
Չի դիմացավ սիրտը զարնող հարվածին,
Բոլորեինք գեթ ճակտին շուրջ առնական
Շավարշանի մը շուշան...

Կայծակնաշաղ սուրն՝ իտեալ մարմնացած
Վրիժառու և մշտապես հաղթական,
Դողդոջ բազկով երկարեց Մայր հայրենյաց,
Երբ լքումի, մոռացումի, բաժանման
Մահվան ցուրտը նախազգաց...

***

Մագաղաթն այս կուրծքին վրա թող ծալեն,
Ուր վերջին Հայրն իր զավակին փառքը վերջին
Դրոշմեց հպարտ, հեծկլտալեն, ժպտելեն,
Եվ ուր հույսերն կը սլանան, կը թռչին
Մեր դարավոր անուրջին...

Շղթայակապ չէին հեծծեր այն ատեն
Մասիս, Տավրոս, ամպածրար [նշավոր],
Կը լսեինք մեր Տիգրիսեն, Եփրատեն
Հայ երգերու շեշտերը գոռ և հզոր,
Արձագանք մը հին դրախտին...

Եվ հուսացինք ու կը հուսանք տակավին,
Աքսորական կտրեցինք ծովն ու օվկիան,
Ու կըսպասենք արդարությանն երկնային,
Վերածաղկին պիտի ազատն Հայաստան,
Ամայացած Կիլիկիան...

***

Արծվի աչքերն իր կիսաբա՛ց մնացին,
Շիրմին խորքն դեպի զենիթ կը դառնան,
Ու կը հառեն աստեղափառ մեր Հայկին,
Կը հարցունեն, թե գիշերներ բաժանման
Պիտի տևե՞ն հավիտյան...

Փոթորիկներ ըլլան իրեն այցելու,
Ու կայծակներ որոտան գոռ ամպերեն,
Եվ օվկիանին կոհակները մոլորուն
Ջայրասլաց զարնվելով իրարու,—
Դյուցազնին քո՞ւնն օրորեն...

Եվ դուն, Նվարդ, քո՛ւյր սգավոր Հայրենյաց,
Շավարշանի քույրերուդ պես փափկասուն,
Հսկե իրեն գերեզմանին մենակյաց,
Համբույրներով արտասվազօծ, դողդոջուն,
Փակե՛ աչերն կիսաբաց...

Փակե աչերն կիսաբաց,
Որ չի տեսնե, թե ինչքան
Անբաժան ենք իրեն ու սուրբ Հայրենյաց,
Որ դամբանին շուրջն անգամ
Անմիության իժը սուլեց ու շլաց...

***

Կայծակնաշող սուրն՝ իտեա՛լ մարմնացած,
Նոր քաջերու հզոր բազկին կ'սպասե,
Առանց սուրի չէր Եհովա, կամ Աստված,
Առանց անոր ու վեհ կամքին պողպատե
Հայն անարժան է նախնյաց...

Մագաղաթն այս կուրծքին վրա՛ թող ծալեն,
Շիրիմն ալ ոչ քար ունենա, ոչ կոթող,
Եվ որպեսզի հերոսն հանգչի քիչ մ'ատեն,
Բարեկամներ դագաղին վրա նետեն թող
Հայաստանի ափ մը հող...

«ԿԱՐՈՏԱԳԻՆ ԱՅՑ»

Պատասխան առ Լոնգֆելլո

Լուսնկային շողերուն տակ,
Եթերաճեմ ու սլացիկ,
Երնեկ անոնց, որոնց հոգիք
Ձիրենք հիշող ունին հրեշտակ։

Երանի քեզ, Յանկի պուետ, որ հոգիդ
Բաց դուռ մ'ուներ ու կիսափակ պատուհան,
Սենյակդ օջախ մը, քովն աթոռ մը հանգիստ,
Ուր նազելով կուգար ամեն իրիկվան,
Հին իտեալդ, ստվերն անուշ հրեշտակիդ։

Զգացիր թե զենիթեն վար քանի հեղ
Սիրելիներդ քեզ որոնել եկան հոս,
Հուշի՞կ-հուշիկ լուսաշղարշ, փառահեղ,
Մրմնջելով մեղեդիներ երկնահույզ,
Եվ անցյալի ճովողյուններ սրտազեղ,
Մրտքեդ չանցավ, չերազեցիր մի հրեշտակ

Վտարանդի, ապերջանիկ, որ կուգար
Հաճախ փնտրել իրեն սիրողն ու բունակ,
Տարագրության հորձանքի տակ սգահար
Գտնել լացող ամայությունն ավերակ...
«Ես հիշատակն եմ Մտերմության», կ'ըսեր ժին,
«Ես՝ իտեալդ անտիական օրերուն»,
Կը մրմնջեր Ազատության դիցուհին,
«Ճշմարտությո՜ւն, Սե՜ր, Գո՜ւթ, Սլա՜ցքն առ Անհուն»,
Փնտրեցին քու բույնն իրենց հին մտերմին—
Ցավոց հովտին մեջ երջանիկ եղար դուն,
Ցուրտին սարսուռն հոգվույդ մնաց ենծանոթ։
Գլուխդ ինկավ կուրծքի մը վրա ղվարթուն,
Ու ձմռան իսկ ծաղկի մը բույր մշտահոտ,
Կյանքդ ուղղեց անհետացած ի գարնան։

* * *

Լուսնկայեն շողերուն տակ
Եթերաճեմ ու սլացիկ,
Երնեկ անոնց որոնց հոգիք
Ձիրենք հիշող ունին հրեշտակ...
Հայու հոգի մը ճանչցա ես, որուն փակ
Ու մռայլված բանտը չուներ լուսամուտ,
Կ'սպասեր ան զուր վիզը ծուռ, վայրահակ,
Թե հին ստվեր մ'արդյոք կուգա՞ր ոը իր մոտ,
Բերել ծաղկյա գարուններուն հիշատակ։

Հոգակույտի մը պես լքված, որուն վրա
Ավազին տակ նետեց հովը փայտե խաչ,
Իբրև անգիր, անտիրական մի տապան,
Նկուղին խորն հայու հոգին մեղմավաչ
Մնջեր անունը սիրելյաց, որ չեկան։

Բանտն այն չուներ ոչ լուսամուտ ու ոչ դուռ,
Ոչ մեկ գիշեր աղջոր էակ մ'եկավ անդ
Որուն ճակտեն ցոլար հույսը գեղաթույր,
Ու ծավալեր գորով մ'անուշ, ոիրախանդ,
Արծարծելով նվիրական երկնից հուր։

Դեռ կը հուսա թե երկոքյա իր շղթան
Պիտի փշրի մի օր, ցնցում մ'ալ հզոր
Քանդե խավար նկուղին պատն ու պատյան
Ու սլանա ինք սրաթռիչ, հեռավոր
Ազատության,

Կը հաջորդեն գարուն գարնան,
Ձեփյուններուն աշնան հովեր,
Կռունկ, ծիծառ ետ կը դառնան՝
Վերաշինել բունակն ավեր,

Հայու հոգին՝ վիրապին մեջն իր անլույս,
Կ'սպասե որ ստվեր մ'ըլլա իր կարգին
Ու սլանա մրմունջներով սրտահույզ
Ալեպսակ Արարատի բարձունքին,
Սիրակապույտ իր հայրենյաց թանկագին։

Հյուղակ մը կա Արագածի լանջին վրան,
Այնտեղ օջախ մը, քովն՝ աթոռ մը թափուր,
Դուռը բաց է և կիսափակ պատուհան,
Ուր կ'սպասե ալևոր Մայր Հայաստան,
Իր տարագիր զավակներուն հեռավոր։
Մո՞տ է առտուն, ըսե՛, ո՛վ Մայր կաթոգին,
Կարմիր աստղեն եկա՞վ հույսի մի նշույլ,
Բուրաստանիդ մեջ վարդենիք կը ծաղկի՞ն...
...Անհետացա՞ն մղձավանջներն մեզ մաշող,
Բոսորին տակ պայծառաշող երկնքին...

Հյուղակին մեջ պահե աթոռն իր թափուր,
Կարոտակեզ զավակդ քեզ պիտի գա,
Չի մարեցավ դեռ հոգվույն խոր հույսին հուր,
Ու կը հավտա գարուններուն ապագա,
Դալկուն ճակտին համար պահե քու համբույր...
Հագիր վրադ մետաքսահյուս քու բեհեզ,
Թոռնիկներդդ քեզ սևերով չի տեսնան,
Անոնք կուգան արուսյակի, աստղի պես
Հրատոչոր անոնք կուգան հարությյան
Քեզ երգերովն ազատության հաղթական։

Տե՛ս, ձեռքին մեջ ձեռք մ'ալ կը հանգչի դողահար,
Այն հրեշտակին, որ բաժնեց բանտն իր դաժան,
Որ հավատքի պահեց պլպլուն ջահն անմար...
...Պարզե Մասյաց վրա դրոշիդ ծիածան,
Ողջունել հայ Մայրն՝ հայության անուշ Մայր...

* * *

Յանկի պուետ, կյանքի պուետ,
Հայ երգիչին բանտն ու շղթան,
Երազի պես կ'անհետանան,
Նոր հմայքով մ'երանավետ։

Ան չսպասեր ստվեր, ոգի,
Հոս են երկինք, հոս իրական
Նոր կյանք մ'ուժեղ ու տիրական
Նոր բարձունքի մը կը հանգի...

...Ախ, չի կրնար։ Կը վախնա թե
Պատրանք մ'ալ այն է գիշերվան
— Արդարության մեծ ապագան—
Կասկածն այն ալ պիտի քանդե...

Ու կը դառնա մութ գիշերվան,
Անձնատուր հին տվայտանքին,
Ու քեզի պես կարոտագին,
Կ'սպասե թե արդյոք կուգա՞ն
Իր ստվերները կաթոգին։

Լուսնկային շողերուն տակ
Եթերաճեմ ու սլացիկ,
Երնեկ անոնց, որոնց հոգիք
Ձիրենք հիշող ունին հրեշտակ...

ՀԻՆ ՏՆԱԿՍ

Բուրաստաններ ամեն տեղ կան
Գեղափթիթ ծաղկներով,

Նույն աստղերը, նույն լուսնկան,
Նույն թռիչն ունին զեփյուռն ու ծով։

Լոկ դուն չիկաս սարերուն վրա,
Ամայացած տուն հայրենի,
Քեզի համար հոգին կուլա,
Ղարիպին սիրտն ալ կ'արյունի...

ՄԵՐ ԴԱՐԸ

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կարապի մը երևույթը ուներ նա,
Երբոր մարդուն հետը եկավ այս աշխարհ,
Որ երգ մ'ուներ, որ կը կրկներ մշտակա,
Պայծառ շեշտով և գանգերով անհամար։

Կոմփյուկիոս, Պուտտա, Սոկրատ, Պղատոն,
Եվ մարգարեք եղան նրան արձագանք,
Մինչ նա մարդոց ցույց տար մի նոր հորիզոն,
Եվ անսպառ ու անվախճան սիրո՞ կյանք։

Օր մ'ալ մարդիկ այդ կարապը խաչեցին,
Եվ նա երգեց վերջին անգամ մելանույշ,
Եվ մարդկության երակաց մեջ հեշտագին
Սարսուռ մ'եղավ... երազներու հետ քնքուշ...

Այսօր կարապն Երկնից մեջ է, այլ յուր ձայն,
Դարուց մեջեն սահի հեզիկ ու խաղաղ,
Ճշմարտությունն՝ ժամանակա՛ց քահանան,
Դեռ կը հնչե՞ իր նվագը մե՛ղմ, նվա՞ղ...

ՓԱՓԱՔ

Ո՛չ, թաղարիս խամրած ծաղիկ,
Վերափթթիլը՝ չե՛մ ուզեր,
Թող չի դառնա՛ն գարնան հովիկ
Ու հոգիիս մարած հույսեր։

Ինծի մնաց լոկ մի երազ,
Միակ փափաք մ'երանավետ,
Պատրանքներու մեջ վաղահաս
Դեռ կը մխա՛, կ'այրի՛ հավետ։

Սին բաղձանքներ գտան վախճան,
Մին կը մնա՛ դեռ նվաղկոտ,
Անուշ, անբիծ, անդավաճան
Մտերմությա՛ն քաշեմ կարոտ...

ԴԵՂՁԱՆԻԿՍ

Երջանի՛կ ես ինձմե՛, իմ հե՛ք դեղձանիկ,
Բացիր աչերդ ու վանդա՛կը տեսար դուն,
Դեռ չի սիրա՛ծ գարնան բուրումն ու ծաղիկ,
Կյանքը չապրած թռիչներով ոստոստուն,
Սընարիս քով հատար տրտում ու մենիկ։

Գոնե Մայիս մը չանցուցի՛նք միասին,
Հատա՛ր անուշ, մելամաղձիկ շեշտերով,
Ծաղկին սե՛րը երգեցիր դու տրտմագին,
Ջուր խնդրելով խանդաղատանք ու գորով,
Բախտը ողբա՛լ որոշած էր քեզ բաժին։

Աչքերդ բաց՝ կարծեցի թե կ'ապրիս դեռ,
Երբ շարժեցի՝ կամացուկ մը ինկար վար,
— Դինովցե՛ր է, ըսի մտքես անտարբեր,
Առի, կուրծքդդ դողդոջ, սիրտդ կը հևար,
Ու ձեռքիս մեջ հատար մենիկ, անընկեր։

***

Երջանի՛կ էր սակայն իմ հեք դեղձանիկ,
Բացավ աչքերն ու վանդակը տեսավ ան,
Զգաց Մայիս, արև, բուրում ու ծաղիկ,
Սիրո ցավեր իր կուրծքին տակ չայրեցան,
Ու չի տվին ճակտին խորշոմ ու ալիք։

Կարծեց գուցե թե կյանքն ե՛րգ մ'է մեծավոր,
Ցած նախանձը չի խափանեց ձայնն իրեն,
Կեղծ մտերիմ մը չի պատռե՛ց սիրտն անոր,
Ու զերծ բախտին մրրիկներեն, հովերեն
Գնաց հածիլ եթերին մե՛ջ հեռավոր։

Ես կը մնամ սիրտս լեցուն հույսերով,
Ու կը համբեմ հոգվույս տենչերն անցյալին,
Երգ չունիմ ես, շեշտերս ցուրտ ու թոթով,
Ես չի հատած ինձմե առաջ կը հալին։
Կը գալարիմ մոռացումդդ հիշելով...

ՄԵՐ ԴԱՐԸ ԱՍՏՈՒԾՈ ԱՌՋԵՎ

Հավաքվեցան երկնքի մեջ
Բոլոր դարերը անցյալին,
Անոնք, որ լսած էին «Եղիցի լույսը»,
Անոնք որ տեսած էին մանուկ Մարդը,
Կիսամերկ, խորշոմ, ալեոր դարեր։

Ծռեցան ինչպես հովին տակ ցորենի հասկեր,
Աստղերու բույլերը սարսուռ զգացին,
Աստված կուգար։
Ան կուգար նոր արևներ ստեղծելով,
Հսկա ու միշտ ահեղ, վսեմ ու միշտ խոնարհ,
Ու տիեզերք կ'երգեր՝ «Սո՜ւրբ, սո՜ւրբ, սո՜ւրբ...»։

Բազմեցավ հավիտենական գահին վրա,
Ու հիշեց մեր աշխարհը,
Մեր մոռացված հյուլե աշխարհը,
Որ կը թավալեր մութին մեջ։

Հոնքը պռստեց Եհովան,
Տիեզերին վրա լռությունը թանձրացավ,
— Տասնևիններորդ դարը թող գա, գոռաց ան,
Ու հին դարեր ծռեցան նորեն,
Հավատքի, հույսի, սիրո դարեր...

Ձեռքը ռուսական մուշտակե ձեռնոց,
Վրան տևտոնյան փափուկ վերարկու,
Երեսը փարիզյան շպար,
Սիրաբանելով մահվան հրեշտակին հետ,
Որուն դեղին գույնը կարմրած էր հմայքեն,
Անգլուհիի պես հառաջ անցավ մեր դարը։

Միջին դարերը՝ վայրահակ թեև,
Ցանկության սարսուռ մը անցավ իրենց մեջեն,
Ճգնավոր դարերը դողացին,
Երբ մեր դարուն վճիտ ձայնը հնչեց.

— Տեր, մարդկությունն հառաջ գնաց,
Քու անունիդ նոր տաճարներ,
Գիտության նոր վառարաններ,
Երջանկությո՜ւն տվի երկրին...

Ընդհատեցա՜վ հանկարծ իր ձայնը սիրահունչ,
Ու դարերու պատկառելի ամբոխեն,
Աղաղակ մը վեր բարձրացավ ողբագին,
Հիսուսի դարն էր, որ կուլար բարձրաձայն...

Կունատեցավ աստծո դեմքն ու հրային
Նայվածքով մ'ուր Արդարությունը կ'այրեր,
— Պատմությունը թող տա վճիռը, գոռաց...

Ու պատմության հրեշտակն եկավ անողոք,
Հյուսիսի ցուրտ հովերուն պես սառուցիկ,
Դեմքը ողորկ, իբրև մարմար անզգա,
Ու քանի մոտ կուգար աղվոր մեր դարուն,
Գեղեցկությունն անոր կ'ըլլար փլատակ։

Շպարները թափեցան նախ այտերեն,
Ու նայվածքը մելանույշ
Տեղի տվավ բորենիի նայվածքին,
Ու պատռեցավ ձեռքի մուշտակը փայլուն,
Տեսնվեցան գայլի թաթեր, ճիրաններ,
Ուզեց ողբալ... կարծես օձ մը կը շչեր...

Երկինք դողաց, արևները մարեցան,
Դարեր համայն մթության մեջ թաղվեցան,
Հիսուսի դարը մնաց հոն վշտաբեկ,
— Տե՜ր, նոր դար մ'ալ սիրույս համար, մրմնջեց։

ԾԱՂԿԱՆՈՑԻ ՆՈՃԻՆ

Ապակեպատ ծաղկանոցին մեջ լեցուն
Թաղարները շարված էին քովե քով,
Շուշան ու վարդ կը ծաղկեին գույնզգույն,
Թեև աշունն հասած էր ցուրտ երկինքով։

Արևն հազիվ ամպերեն վար կը մաղվեր,
Քամին կուլար իր տխրահունչ մեղեդին,
Կը մոտենար ձմեռը ցուրտ, ալեհեր,
Ծաղկանց հոգին տանելու մութ անդունդին։

Այլ այդ սիրուն արվեստական գարնան մեջ
Կը ժպտեի՛ն վարդ, մանիշակ իրարու,
Կը հեգնեին սարսուռներով բյուր, անվերջ,
Դուրսը հեծող փոթորի՛կը ահարկու։

Այդ ծիծաղկոտ ծաղիկներուն դրացի,
Անկյունի մը մենության մեջ անընկեր,
Դալկատերև նոճետունկ մը դիտեցի,
Լեռան ծնունդ, զոր բախտը հո՛դ կը նետեր։

Նկուն դիրքով, անշարժ ու լուռ, մահվան պես,
Ճակատն հակած ծաղկանոցի փեղկերուն,
Օտար հողի տրտում զավակն էր կարծես,
Որ քշված էր հոսանքե մը մոլորուն։

* * *

— Ինչո՞ւ տխուր ես, հարցուցի հուզմունքով,
Հոս տաքուկ օ՛դ կա... ծաղիկնե՛ր քեզ մոտ,
Փոթորկեն հեռու կյանքդդ անվրդով
Կ'անցնի բույրի, սիրո կյանք մը անձկարոտ։

Նոճին շարժեց իր տերևներ դալկահար,
Հասակես ցո՛ւնց մը սահեցավ դառնագին,
Կարծեցի թե լռիկ թեև անբարբառ,
Այլ մրմունջ մը կուգար մոտեն թաղարին։

— Զիս դարձուցե՛ք հին լեռներուն ամեհի,
Տարե՛ք ահեղ մրրիկներուն ցուրտ աշնան,
Այս թաղարի կյանքը կե՛ղծ է, ամայի՛,
Տերևներրս փոթորկին տակ թող չորնան։

Թող ունենամ գարնան՝ անձրև, ձմռան՝ ձյուն,
Ա՜խ, չե՛մ սիրեր գարուններ որ հավիտյան
Զիպտի՛ խամրին... Զիս տարեք հին լեռներուն,
Ուր նոճիներ չունի՛ն փականք ու պատյան...

Կը սիրեմ հոն խաղալ հետը փոթորկին,
Երկյուղ չի՛ տար հոն ամպին շանթն ու կայծակ,
Հեգնոտ դիտեմ պիտի հեղեղն զայրագին,
Որ կը սուրա դեպի անդունդն անհատակ...

* * *

Քանի մը օր անցավ. գացի հոն նորեն,
Ծաղիկները բացվել էին ժպտագին,
...Մենիկ անկյունն զրկվա՛ծ իր թաղարեն,
Կեղծ գարունին մեջ խամրա՛ծ էր հեք նոճին...

ԱԴԱՄԻՆ ԱՆԵԾՔԸ

— Դրախտեն դո՛ւրս,— կը մռընչեր վիրավոր,
Հրպարտն աստված ու չէ՛ր հավտար աչքերուն,
Երբ նախահայրը՝ կը նետվեր ցնծագին,
Եվային ձեռքը սեղմած՝
Դեպի աշխարհ։

Մինչև այն օր Ինքը Տերն էր բացարձակ,
Նյութին, Ուժին և իր շուրջ,
Հրլու, անխոս տիեզերքը կը տեսներ։
— Լեռներ հսկա, որ ծովին մեջ կ'իյնային
Իրմե վախցած։— Դրություններ և բույլեր,
Որ երկյուղով Իրեն գծած ծիրին մեջ
Կը դառնային։ Ու հիմա,
Դեռ երեկվան Իր ձեռակերտ այդ հրալեն
Ծիծաղով մը ամբարիշտ,
Եդեմ-դրախտը կը հեգներ։

— Ես եմ Որ էն,— կը մռնչեր վիրավոր
Հրպարտն աստված ու չէր հավտար ականջին,
Երբ նորաշող երանությամբն ապստամբ,
Սիրով գինով մարդը՝ ճակատն աստղերուն,

— Ես եմ Որ էն,— կը մրմրոար ու կ'երթար։
Ի՜մս են Սերը, Բընութիւնը ու Մեղքը,
Ի՜մըս Գիշերն ու փըշալից ուղիներ,
Այլ երջանիկ եմ բյուր անգամ, քանի որ
Սե՛րը ունիմ ինծի ընկեր անբաժան։

Տիեզերքի մարմինները ներշնչված
Այս ապստամբ հյուլեին,
Արարչին դեմ սկսան գլուխ վերցընել,
Ասուպները նախ ամայությունը թողին,
Ավելի մո՛տ եկան մարդուն համակիր,
Զարնըվեցա՛ն մթնոլորտին և ըսին՝
Վայրկյան մը շողն մութ հավիտյա՛նը կ'արժե։
Մոլորակները դանդաղցուցին գնացքնին,
Աստղե՛րն անգամ սիրտ առած,
Հավերժական իրենց ծիրեն դո՛ւրս ելան։
Դրախտին փակ դռան առջև, զոր հրեղեն
Սուրն հրեշտակին կը պահեր,
Ադամ զվարթ ու ծիծաղկոտ՝ առաջին,
Իր բունա՛կը կը շիներ։
Ճակտի քրտինք, ծնունդի ցավ,— անեծքներն
Աստվածային՝ կը շեշտեին ավելի
Երջանկությունն նախամարդուն։
Կայեն, Աբել,— նոր ճովողներ ավելցան,
Որոնց եկան միանալ
Սոխակներն ու դեղձանիկներն Եդեմին,
Սուրբ երգերու բուրաստանեն ձանձրացած։

Նյութն՝ Օրենքին ներքև ընկճած անգամ մ'ալ,
Եկավ աստված։ Իր հպումեն տիեզրի
Անսաստ տարրերն՝ վազած էին հև ի հև
Իրենց ծիրին։ Դրախտին դռները բացավ,
Ու ճիշտ իր դեմ
Ընտանիքի երջանկությո՛ւնը տեսավ։
Նախանձեցավ։ ...Ներե՛ ինձ, մե՛ծդ Անծանոթ,
Եթե դարեր ետքը կ'զգամ թե մեկ օր
Հավերժական մենությանդ մեջ Դո՛ւն անգամ
Նախանձեցա՛ր հեք մարդեն։

Ու մահվան սև հրեշտակն այդ բույնը ղրկեց,
Աբել ինկա՛վ եղբայրասպան հարվածեն,
Իր եղնիկի աչքն Եդեմի՛ն սևեռած։

Իրիկունը Ադամ եկա՛վ երգելեն,
Տարօրինա՛կ։ Ոչ արձագա՛նք մ'իր ձայնին,
Արդյոք օ՞ձը։ Չէ՛, վստահ էր թե Եվան
Երկրորդ անգամ չէր խաբվեր։
«Կայե՛ն, Աբե՛լ»։ Խնդաց ինքնին։ «Թերևս
Ինձ աչքկապուկ կը խաղան»։
Հովը կ'ոռնար։ Շատ հեռուն,
Դրախտին անշուք մեկ լուսանցքեն
Կարծեց տեսնել զույգ մ'աչեր,
Տամուկ նայվածք մը զղջումի։—
Աստված զինքը կը դիտեր։
Ու հոն, ծառին տակ, տեսավ
Իր Աբե՛լը, արյուններով թաթավուն,
Անձայն։ Մայրն ալ որ շվար,
Շվար, մոլոր՝ կը դողդոջեր անխոսուկ։
«Աբե՛լ, հոգի՛ս»։ Ու զավկին
Ճակատն առավ ծունկին վրա,
Ինչպես անցյալ օրերուն մեջ մանկության.
«Աբե՛լ, հոգի՛ս»։ Պաղ, սառած
Ճակատը վար գլորեցավ ծունկերեն։
Հովը կ'ոռնա՛ր, ափսո՜ս, Հորը սրտի կոչն
Անարձագանք կը մնար։
Խիղճը կ'ըսեր Ադամին
Կուրծքին ներքև վատ ու վախկոտ շեշտերով.
— «Ըմբոստ մ'ըլլա՛ր, խոնարհե՛,
Աստծո կամքն, օրհնյա՛լ ըլլա, ըսե դուն»։
Ադամ գունատ, ոստյունով մը խելահեղ,
Բռունցքը՝ սեղմ ուղղած արդ լուռ դրախտին
Եվ զերդ առյուծն Եթովպիո, որ կորյունն
Իր ոտքերուն քով կը տեսնե ոգեվար,
Մրընչեց.— Աստվա՛ծ անարդար,
Չպիտի՛ ընկճեմ, չե՛մ ընկճիր,
Կ'անիծե՛մ քեզ Արդարությանդ անունով,
Դո՛ւն Անհունն ես, ես՝ հյուլեն,

Կ՚անիծեմ քեզ օրենքներուդ անունով,
Դո՛ւն ալ ողբա՛ս ինծի պես...
Քու միածին Զավակդ ալ օր մը մեռնի,
Աչքիդ առջև ու չերկարե՛ս ձեռքդ իրեն,
Ամայանա՛ դրախտդ ու Դուն խելահեղ
Չի կարենա՛ս արտասվել...
Աբե՛լ, հոգի՛ս...

Աստված սարսռաց։ Սուզեցա՛վ Նա Ինքն իր մեջ,
Հիշեց դալու Գեթսեմանին, Գողգոթան,
Կարմրած ճակտով Իր սիրական Գառնուկին
Օրորոցին մոտեցավ։
Հիսուս Մանուկ կը ննջեր դեռ ժպտագեղ,—
«Ո՛չ, չե՛մ կրնար, մրմնջեց,
Բաժանումին տոկալ, ե՛ս իսկ չեմ կրնար...»։
Ու Մանուկին ճակտին վրա դրոշմեց
Համբույրն Հույսի, Միացումի, Հարության...

ՐՆՏՐԱ (ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆ)

ԼԵՏԻՆ

Շեկ ծառերուն տակ, երբ անոնց մեջեն
Կը մաղե արևն իր ցոլքն իրիկվան,
Մենավոր պայտեր, դանդաղ, կը հնչեն՝
Ու չոր տերևներ շրշույնով կ՚իյնան...

Ձիուն վրա ճերմակ, Լետին կ՚երևի,
Սուզելով ժժգույն դեմքն անտառին տակ
Ու ձին համբընթաց, լանջով կորովի
Իր քայլով կ՚օրրե աղջիկն սպիտակ։

Անդորր մենության մեջ արահետին
Ուր մեկ քանի հուսկ շողերու տակ վարդ
Կ՚իյնան շուքին մեջ տերևներն հետին՝
Կ՚անցնին տրոփյունն ու աղջիկն հանդարտ։

Եվ այդ նայվածքեն՝ այդ դեմքեն դալկնոտ
Եվ մութ ծալքերեն հագուստին կույսի
Անպատում նշույլ մը, բան մը աղոտ
Ըստվերներուն մեջ մեղմիվ կը հոսի...

Եվ ես խառնված աճող շուքերուն
Սրտիս մեջ կ՚ըզգամ դողալն այդ լույսին...
Հոգիես կը թռի հառաչանք մ՚անհուն
Հալելու ամբավ Շնորհին մեջ կույսին։

Անոսր հույլերն ալ գոս տերևներուն
Ծառերուն ոտքին՝ կը թափթփին վար,
Եվ անձնդյուր քայլին, տրոփը ձիուն
Կը փշրե հեծող տերևը տկար։

Հոս սրտիս տրոփն ալ, ուժգին, ավա՜ղ,
Կը զարնե կուրծքիս... Բայց կ՚երթա Լետին.

Իր ուրվանկարն կը դողա նվաղ
Հեռո՜ւն, աշնահար ծառերուն ետին...

Կը բաբախե կուրծքս... արձագա՜նքն անզոր
Ցիուն տրոփին, աղջկան դալկահար,
Ու սրտիս անձնդյուր հարվածին տակ խոր
Կը մեռնի ահա այս անուրջն հիմար...

ԿԻՍՏՈՒՆ

Քո՜վս եկուր, կատուս, քայլովդ երազկոտ,
Եկո՜ւր, որ, պառկած, խոսինք հոս մինակ.
Ու դնեմ ճակատս հանգչելու կարոտ՝
Վայրենի՛ ստվիդ մեջ գգվող ու տաք...

Եկուր, որ, պառկած, խոսինք հոս մինակ.
Աչքս հառած աչքիդ խոռվքին նվաղկոտ,
Վայրենի ստվիդ մեջ գգվող ու տաք՝
Տարփատենչ բնազդդ զգալով աղոտ...

Աչքս հառած աչքիդ խորհուրդին նվաղկոտ՝
Վայելել կուզեմ խաժ բիբդ անհատակ.
Տարփատենչ բնազդդ զգալով աղոտ՝
Նայվածքիս, կուրծքիս, տխո՜ւր ճակտիս տակ...

Վայելե՛լ կուզեմ խաժ բիբդ անհատակ,
Որ գիտե սուզիլ խորքեր ստվերոտ.
Նայվածքիս, կուրծքիս, տխո՜ւր ճակտիս տակ՝
Հոգվո՜ւյս մեջ սուզե ակնարկդ մտածկոտ,

Որ գիտե՛ սուզիլ խորքեր ստվերոտ՝
Իր սևեռումով խորունկ ու շիտակ...
Հոգվույս մեջ սուզե ակնարկդ մտածկոտ,
Ծագումեդ մնացած վայրի հիշատակ...

Իր սևեռումով խորունկ ու շիտակ՝
Նայվածքդ կարծես ցորք մ'է անծանոթ...
Ծագումեդ մնացած վայրի՜ հիշատակ՝
Թող իջնե հոգվույս ալքը մացառոտ...

Նայվածքդ կարծես ցնո՜րք մ'է անծանոթ,
Ծովուն խառնվող շողին պես ճերմակ.
Թող իջնե հոգվույս ալքը մացառոտ՝
Հրապուրելու ձանձրույթս դժնդակ...

Ծովուն խառնվող շողին պես ճերմակ՝
Պա՜րզ կյանքը պատմե թող հոգվույս կնճռոտ,
Հրապուրելու ձանձրույթս դժնդակ,
Որ կը սիրե խե՜ ցնորքները գթոտ...

ՄԹՆՇԱՂԻ ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ

Կուզեմ, որ մարմրին ցոլքերն իրիկվան
Մութ խորքերուն մեջ մեծ նոճիներուն,
Ու խուցիս մեջ, ուր շուքերը շատնան,
Քու վրադ մտմտամ տխուր ու սարսռուն։

Մութ խորքերուն մեջ մեծ նոճիներուն
Հուսկ ցոլքերուն տեղ աչքերս ծփան.
Քու վրադ մտմտամ տխուր ու սարսռուն
Մինչև որ մութը պատե ամեն բան...

Հուսկ ցոլքերուն տեղ աչքերս ծփան
Իբրև հոգվույս մեջ՝ խորը ծառերուն...
Մինչև որ մութը պատե ամեն բան՝
Ու ստվերե թմբիր մը՝ միտքս երազուն...

Իբրև հոգուս մեջ՝ խորը ծառերուն
Խաղաղությունը պատե գիշերվան...
Ու ստվերե թմբիր մը միտքս երազուն,
Մինչ հուսկ շշուկներ դեռ հեռուն թրթռան...

Խաղաղությունը պատե գիշերվան
Տխուր այս սրտին տրոփյունը խոհուն...
Մինչ հուսկ շշուկներ դեռ հեռուն թրթռան
Տարակույսներուն հեգնությամբն անհուն...

Տխուր այս սրտին տրոփյունը խոհուն
Լքվի՛ պետքերեն, որ ապրիլ կուտան...
Տարակույսներուն հեգնությամբն անհուն
Կյանքի ձայներն ալ հեռուն դեռ խնդան...

Լքվի՛ պետքերեն, որ ապրիլ կուտան
Այս սիրտն, ուր շրջի արյուն մը նիրհուն...
Կյանքի ձայներն ալ դեռ հեռուն խնդա՜ն
Մարող բաներու ժպտովն անանուն...

Այս սիրտն, ուր շրջի արյուն մը նիրհուն
Ըզգալով քեզի խառն իր իսկության՝
Մարող բաներու ժպտովն անանուն
Դեռ ժպտի՜ քեզի, Ստվե՜ր իրիկվան...

ՆՈՃԵՐՈՒՆ ՄՈՏ

Նոճերն եզերող ճամփուն վրա նորեն
Մինակս այս գիշեր ալ կըդեգերիմ.
Չի կրծող կիրքերն, հուշերն ոխերիմ
Հոս զիս չեն տանջեր դրժընդակորեն։

Խո՜նջ այսպիսի գարշ ու բիրտ աշխարհի մ՚
Ընտանութենեն ու ճանաչումեն,
Հոս կրնա՜մ մոռնալ նվաստ հույզերս ամեն
Ու՝ անհունին հույսովն ահա կըբերկրիմ.

Չի ոչինչ կա հոս գիշերին մեջ ջինջ,
Քան սև-սև նոճերը կարոտալից,
Եվ աստեղց ուղխերն, որ կըփողփողին.

Աշխարհքեն, ցայգեն, տխեզերքեն ոչինչ՝
Քան լուսաժըպիտ ցնծությունն երկնից,
Եվ հավերժաբերձ հայրենախտն հողին։

ԵՐԵԿՈ

Արևն իջեր է արդեն նոճերուն ետին.
Կրծավալի վերն անբիծ իրիկունն աղվոր.
Եվ հիր ու հուր իր փաղփումն այնքան սուրբ է, որ
Լույսին թախիծն է կարծես ու ժպիտը մութին։

Մըթնշաղը կըտիրե նոճյաց սաղարթին.
Եվ ոպսիտե կոներուն ծալքերն հեշտոլոր
Կըհեռու նսեմ զմրուխտով մը խորհրդավոր,
Մինչ ավելի կըսևնան վիհերը չորս դին։

Հրաժե՛շտ այլևս տըվընջյան և ցայգին ողջո՛ւյն.
Ան է, որ դաշն իր խավարն ահա կըհեղու՝
Միավորելու ամեն հույզ անդորրին մեջ նույն։

Ո՜հ, գա՜ր այսպես մեծ գիշերն ալ երանավետ,
Գաղափարաց անթարշամ կյանքն ինձ շնորհելու,
Նույնացնելով զիս ընդմիշտ խղճմտանքին հետ։

ԻՂՁ

Պիտի գա օր մ՚ուր լըքված կյանքեն խաբեբա,
Վես գլուխս հակի և խըրոխտ թևերս խոնարհին.
Մթնե, ցրտե մարմնույս մեջ քամիեն վիհին
Եվ կորստյան տրմույն զոհ՝ իյնամ ես ճամփա։

Ձեր բոլոր հույլն հայնժամ, նո՜ճք իմ, թող զիս ողբա.
Թող եղերգե գիշերայն մահն երգչին ձեր հին.
Ու տաղերնուդ ամենեն ծանրն ու ամեհին
Ձեր մտերմին իբր այգողք հեծելով ծրփա։

Ձեր բազմաստեղն աղջամուղջն ըրեք սուգ անոր։
Թող ձեր սև լարք իր քնարին ավյունը տավղեն,
Եվ անոր դաշն արցունքներն հծծեն իրարու։

Ըսե՛ք, անմեռ խոհք երկնից, թե ան՝ մենավոր,
Կուգար, ձեզի փարելով, հոգի խնկեղեն՝
Վաղանցության իր ցավովն ըզձեզ երգելու։

ՍԻՀՈՒՆ

Հեռվեն Տորոսի
Ալևոր լերանց
Խորքեն անթափանց
Սիհուն կհոսի։

Լեռներու սրտին
Գիտե՞ հույզն անբավ
Անոնց, որ կանխավ
Կոհակներ էին։

Ձայնն իր ջուրերուն
Ու խավարն հզոր
Լերանց իղձն է, զոր
Կտանի ծովուն։

Անշարժ, դարավոր
Լեռնասարերու
Թռչելու, ծփալու
Կարոտն է բոլոր,

Զոր Սիհուն սարսռուն
Կերթա տանելու
Լեռներեն հեռու,
Մշտառույգ ծովուն։

ՍԻՊԻԼ

ԱՄՊԸ

Ա՛մպ լուսեղեն, ուր երազներս ապրեցան,
Երկինքին մեջ, լուսնին աշխարհն արծաթի,—
Ու քեզի հետ փըշրած կիյնան ցիր ու ցան.
Այդ փըշրանքեն տաք-տաք արցունք կկաթի։

Բաժնըվելով քու շողերեդ մըտերիմ,
Հովերու բիրտ հարվածին տակ կըփըրթիս.
Կյանքդ երկինքն էր. հողը կ'ըլլա քեզ շիրիմ,
Ուր թաղվեցան հուր տենչանքներն իմ սըրտիս։

Եվ կըժըպտին վերեն արևն ու եթեր՝
Մեր վիշտերուն անկարեկիր ու անփույթ,
Փայփայելով թևերնուն մեջ նոր ամպեր,
Նոր սարսուռներ ու երազներ ջինջ, կապույտ.

Մինչ մենք զոհեր սիրո անհուն պապակին՝
Անձրև կուլաս դուն, ես՝ արցունք ցավագին։

ԱՇՈՒՆ

Ա՛հ, եկա՛ր վերջապես, ո՛վ աշուն,
Այրի հարս վիրավոր,
Աղջիկներ թարմ, մատղաշ ու նախշուն
Քեզ կ'անձկան, իրավ որ,
Հոգիներ ծաղկահաս, երազուն
Ըզքեզ միշտ կըպաշտեն,

Ժողվելով նըշխարներդ աղազուն՝
Անտառեն ու դաշտեն։
Միգամած երկինքիդ տակ տըրտում՝
Վավարշուտ գիշերներ,
Ի՛նչ իղձեր, ի՛նչ խոհեր անպատում
Կըհըսկեն անհամբեր։
Եվ երբ հովդ ըսկըսի թափել վար
Ծառերեն տերևներ,
Շատ կյանքեր անոնց պես ոգևար՝
Կըմեկնին երկրեն մեր։
Ինչ ունիս դո՛ւն անուշ և չըքնաղ
Քու քողիդ տակ թաքուն,
Որ տրժգույն վերջալույսդ իսկ նվազ
Չեն փոխեր հետ այգուն,
Ոչ ալ գոս արոտներդ անմարմանդ
Կարմրագեղ վարդերուն,
Որոնց մեջ ցողն իբրև ադամանդ
Կըշողա երեբուն։
Քու հրապույրդ անծանոթ է սըրտիս,
Շընորհքիդ անտարբեր՝
Որպեսզի պըշրանքով ինձ ժըպտիս,
Կըսպասեմ անհամբեր։
Անձրևոտ քու աչքերդ այդ հիվանդ
Չունին գեղ ինձ համար,
Դալկահար չոր ճակտիդ մանավանդ
Չեմ բընավ սիրահար.
Չի հոգեր քեզմե շատ ունիմ ես
Հոգվույս մեջ հըրախանձ.
Վաղանցիկ տըրտմությունդ ալ, գիտե՞ս,
Ո՛հ, չազդեր ինձ նախանձ։
Թերթերուդ մեջ ունի՞ս դուն երբեք
Թերթեր նուրբ ու մաշած,
Որքան թերթն իմ հոգվույս աղեբեկ,
Չոր վիշտերն են տաշած։
Քու հովերդ ալ տըխուր ողբերգու
Չայն ունիս բավական՝
Իմ սըրտիս հուզումներն երգելու,
Մինչ ժայռերն ալ ըզգան,

Հեգնությամբ կնայիմ պատկերիդ
Թախծությամբ լուսավառ,
Որ արև մ'է տրժգույն, անժըպիտ
Հոգվույս քով իմ խավար։

ԺԱՆՅԱԿՆԵՐԸ

«Շատ նիհար է, շատ ալ տրժգույն», կըսեին,
Երբ փողոցեն կանցներ երկայն մեկնոցով,
Մեջքը սեղմած լարերուն մեջ քորսեին,
Աչքն ալ հովեն պատըսպարած ակնոցով։

Ըրփին մույնքը բարեկամ չէր սևերուն,
Մութ ըզգեստով անշուք աղջիկ մ'էր խոնարհ,
Սև թավիշե օձիքն երկար սևեռուն՝
Դեմքեն ցոլքեր, ուլեն թովքեր կըգողնար։

Իր քաղաքի արդուզարդովն ապերախտ՝
Գեղանի չէր բնավ այդ կինն աննըման,
Չոր դիտելով իսկ կ'ըլլայինք բարեբախտ,
Երբոր պարի սըրահին մեջ կուգար ման։

Ի՛նչ աղվոր էր օթյակին մեջ՝ երբ ճերմակ
Ժանյակով մը լոկ կը սքողեր իր թևեր,
Եվ ուսերուն, լանջքին վըրա անդիմակ՝
Բեհեզի մը թեթև ծալքը կըթևեր։

Մարած, հալած երանգներու մեջ պես-պես՝
Իր սեփական փայլը կ'առներ դեմքն անոր,
Եթերային, անծի՛ր, աննյո՛ւթ ամպի պես
Միշտ անմատույց, անըրջային և միշտ նոր։

Ժանյակներու այդ փըրփուրներ թափանցիկ,
Ծակտիքն անոնց, ցանցը բարակ օդային

Եվ մետաքսե ծրփանքն ալ թույլ ցոլացիկ՝
Բոլոր անձին դյութիչ բան մը կուտային։

Ճառագայթ մը, լույս մը, ավյուն մը կյանքի
Մութ նայվածքին մեջ հրապույր մը կ'արծարծեր,
Խորհ՛ն անդունդ առանց ելքի ու հանգի,
Որուն գաղտնիքն ունի շանթերն ու կայծեր։

Եվ ժրպիտ մ'ալ, շրքնաղ փրթթում մը վարդի
Կուգար բանալ շրրթունքներուն իր թերթեր,
Ինչպես արևն իր ըզգեստովը զարդի,
Որուն առջև կրբացվին այգն ու եթեր։

Եվ կրբացվեր սիրտն երազի մը հեշտին
Այդ ժանյակե մրթնոլորտին մեջ տարտամ,
Ջերմ, հրմայող զարկ մը տալով իր շեշտին,
Զոր կրպաշտեր քերթողն ու ջոջն ալ փարթամ։

Բայց ամենուն համար սիրտն էր անտարբեր,
Լոկ կրսիրեր պերճ ժանյակներն անապակ,
Որոնց հրմայքն անձրևի պես կրթափեր
Այնքան խունկեր, այնքան վարդեր ոտքին տակ։

Կրփայփայեր զանոնք տենչով կաթոգին՝
Կյանքը դրրած անոնց վրրա հոլանի,
Կրրքոտ սեր մը, ուր կար հանճարն ու հոգին,
Ինչպես գիտեն սիրել կանայք խելանի։

Սև առտու մը սակայն հազով մ'արթընցավ
Իր ժանյակե լայն բարձերուն կրռթընած,
Մեջքին վրրա, կողին վրրա կրզգար ցավ
Ու կրհևար հոգնած, դեղնած, քրրտընած։

Թատրոնին մեջ ցուրտ էր առեր, կրհիշեր,
Երբ օթյակին դուռը բացվեր էր ետին.
Դեկտեմբերի հով մը սաստիկ այն գիշեր
Կրդրղրդեր անդուլ երկինքն ու գետին։

Ու մերժեր էր առնել մեկնոցն ուսերուն,
Իր ժանյակներն ըստվերելու երկյուղով,
Նրշուլագե՛ղ ոստայն ճերմակ ու սիրուն,
Ինչպես աստղով լեցուն ձյունե նուրբ կողով։

Եվ մեռա՜վ ան ժանյակներուն փաթթրված.
Վերջին շունչին հետ եղավ հուսկ իր կրտակ,
Ժանյակներով պրճնել իր մահ, սև՛ քերթված,
Ժանյակներով թաղել մարմինն հողին տակ։

«Ի՜նչ աղվոր է, կրսեին, ի՜նչ մանկամարդ»,
Երբ փողոցեն կ'անցներ դագաղն ողբական,
Եվ երգերու, բուրվառներու մեջեն ցարդ
Կրժրպտեր ինք ժանյակներուն սիրական։

Կ'ԱՆՁՐԵՎԵ

Կ'անձրևե, կ'անձրևե...
Մութ, կապարե եթերին մեջ աննշույլ,
Սև ագռավներ կ'իջնեն վերեն հույլ ի հույլ,
Հուղարկավոր վաղուց մեռած սիրտերուն,
Զոր այնքան հեշտ ձայնով երգեց մեզ գարուն։

Կ'անձրևե, կ'անձրևե...
Կաղամախի ոստերուն մեջ նիհարցած,
Մրմունջի պես դեռ կը լսվի հևք մը ցած,
Արձագանքը հոգիներու առանձին,
Որոնք իրենց տրխուր սերերը լացին։

Կ'անձրևե, կ'անձրևե...
Եվ այդ հեզիկ շրշյունին մեջ ես հանկարծ
Անուշ վանկեր կընդնշմարեմ սիրարծարծ,
Որոնք հոգվու աշխարհներեն մեզ կուգան,
Հովին, ջուրին, կառչած ձայներ սիրական։

Կ'անձրևե, կ'անձրևե...
Դեղնած թերթերը ճմլելով պուրակին,
Որոնք երեկ դեռ արևուն կըրակին՝
Իրենց կյանքոտ բուրման նըվերը շըքեղ
Կ'խնկեին վեհվեհելով լուսագեղ։

Կ'անձրևե, կ'անձրևե...
Եվ օր մըն ալ մեր դամբանին հողին վրա,
Որ դեռ մեզի սուտ երազ մը կերևա,
Պիտի երգեն այդ անձրևներն ու խնդան
Մեր խեղճ սրտին հուզմանց վըրա անկենդան։

ՀԱՐՑՈՒՄ

Հոգիս լի է ճաճանչներով ըզգացման
Կըփալփըլին, կընըշուլեն, կըցոլան.
Ո՞ր աստղերուն, ո՞ր այգերուն մեջ թափեմ,
Որ խավարներն իմ անցյալիս լույսի ցոլքով մը շողան։

Հոգիս լի է լայն հեզեղով մը հույսի.
Կըփոթորկի, կըծփծըփա, կըհուզվի.
Ո՞ր ծովերուն, ո՞ր գետերուն մեջ զեղում,
Որ մայրենի հողին վըրա գեթ ցողի շիթ մը հոսի։

Հոգիս լի է կըրակներով ըղձանքի.
Կըկայծկըլտա, կըրոցրոցի ու կ'այրի.
Ո՞ր փայլակին, ո՞ր կայծակին հանձնեմ զայն,
Որ անցյալի մոխրին ներքև գոնե կայծ մը հըրահրի։

ԱՆՈՒՐՋԻՍ ՄԵՋ

Ձյո՛ւն ըսպիտակ, թեթև, մաքուր, լուսամած,
Որ կը թըռիս այգ թևերով
Ծաղիկ, ծիծաղ թոթափելով,

Եվ նազանքոտ շրջաններով օդահած,
Որչա՜փ փայլիս, որչափ ծըփաս ու նազիս,
Իմ աչքերուս քու գեղդ ջինջ
Դալուկ մըն է պըղտոր ոչինչ,
Չի քեզմե շա՜տ ջինջ են ձյուներն երազիս։
Սուրբ արեգակ, հըրդեհ բոցիչ, կենսաձիր,
Ճաճանչներովդ ոսկի, բյուրեղ
Երբ ողողես աշխարհ բյուր հեղ,
Հյուլեները, ծովերն անծայր ու անծիր,
Մութ փոսերուն մեջ սըփռես շող արփենի,
Կանթեղ մըն ես ինծի համար,
Չի իմ մըտքիս անուրջն հիմար
Քեզմե փայլուն արևներով կը վառի։
Դուք, անդունդներ անլույս, ալքեր թանձրամեգ,
Սարավանդներ, լեռներ տիտան,
Արտևաններ, ժայռեր խոպան,
Արծիվներեն, ամպերեն վեր իսկ թևեք,
Ո՜հ, չեք կըրնար ճախրել հոգվույս հավասար,
Չի վիհերը իմ երազիս
Խորհուրդներով կ'օրորեն զիս,
Եվ լեռները երկնքիս մեջ չունին սար։
Կըրա՜կ աչքեր, ծավի աչքեր լուսահոծ,
Վեհ հանճարով, սիրով օծված,
Հըմայքներու խոր առեղծված,
Ձեր բիբերեն զուր կը ցայտե մեղր ու բոց,
Երազիս մեջ անճառ աչքեր կան խորին,
Որոնց գեղին կապված հոգիս
Երկինքն ի վեր կը տանի զիս,
Եվ ես դյութված, չեմ նայիր սուտ աշխարհին։
Իսկ հըրճվանքնե՜ր, վիշտե՜ր, սերեր համորեն
Ու աշխարհիկ վայելքներ դուք
Քիչ մ'անտարբեր զիս կը թողուք։
Թեև հոգեր ու արցունքներ զիս փորեն,
Ճակատս ըլլա նույնիսկ փառքով լուսապանծ,
Ինծի համար մեծ հույզեր չեն,
Չի իմ հոգվույս մեջ կը նընջեն
Հայրենիքիս ցավերն անհուն ու անանց։

ԻՆՉՈՒ... ԻՆՉՈՒ

Տե՜ր, եթե հուր վառքով լույսեն անթափանց
Հորինեցիր կինն այնքան բարձր, այնքան վեր,
Ինչո՞ւ արևն ալ վառեցիր լուսապանծ.
Իր նայվածքը կյանք սփռելու չէ՞ր բավեր...

Եթե վարդին բուրմունքներովն օծեցիր
Կընոջ ժըպիտն, իր պերճանքներն ու ցավեր,
Ծաղիկներով ինչո՞ւ պճնել դաշտն անծիր.
Իր խունկն աշխարհ հըմայելու չէ՞ր բավեր։

Ինչո՞ւ առվին և թռչունին տվիր ձայն,
Բյուր երգերով լեցուցիր ծառն ու ջուրեր.
Մի՞թե կընոջ բարբառն աղու, հեշտ այնքան,
Կյանքին անուշ երազներուն չէ՞ր բավեր։

Ինչո՞ւ կոհակն, ինչո՞ւ անտառն ու վըտակ,
Ինչո՞ւ երկինքն ըստեղծեցիր ու ծովեր,
Եթե կընոջ պիտի տայիր օր մը կյանք.
Աչքն իր՝ հոգվույն խորհուրդներուդ չէ՞ր բավեր։

Եթե կինը հակադրություն մ'ըրիր պերճ
Բարվույն, շարին, որ փոթորկեր ու թովեր,
Ինչո՞ւ պատրանք տըվիր կյանքին, հույսին՝ վերջ.
Իր հըմայքը մարդ տանջելու չէ՞ր բավեր։

Եթե վըսեմ հըմայքներով երկնածիր
Սիրտ մը տըվիր իրեն, պատիժ կամ նըվեր,
Ինչո՞ւ սիրով աշխարհն ամբողջ լեցուցիր.
Իր սերն անհուն տիեզերքիդ չէ՞ր բավեր։

ԽՈՍԻՂ

Վեր՝ հավատքեն, սերեն, հույսեն,
Որոնք այնքան միտքս ու հոգիս կըհուզեն,
Ըզմայլանքի պահերեն կույս՝

Որոնց պաշտանքն այնքան անույշ է հոգվույս,
Վայելք մը կա ինծի համար,
Խոսիլ ազատ մտքիս խոհերն անհամար։

Փույթ չէ ինծի՝ ըլլալ գերի.
Թո՛ղ կյանքն համակ փուշերու մեջ դեգերի,
Թևերս ըլլան շղթայակապ,
Ոտքերուս տակ բացվին փոսեր ու վիրապ.
Բայց տան ինծի վայելքն անգին
Ազատ թըռիչ տալու սրտիս խոյանքին։

Շըքեղանքի փափա՛ք պատիր,
Ի՜նչ շուտ կ'անցնին՝ ցանելով ափ մը մոխիր.
Փառքի ոսին ուրվակա՛ն,
Քու լուսասփյուռ սադրանքներեդ մոգական
Կ'ընտրեմ որ միշտ զիս զրկես,
Միայն խոսի՜մ, ինչ որ բըխի հոգիես։

Փայփայանքի ծաղիկ անո՛ւրջ,
Նըվիրելու և զոհվելու տենչեր լուրջ,
Դուք որ այնքան զիս դյութեցիք,
Գուցե օր մը ձեր սերն ըլլա վաղանցիկ։
Ինչ որ կյանքին կըկապե զիս,
Ազատ, արձակ խոսելու ուժն է սրտիս։

Թե մահվան մոտ ըլլամ, թե ողջ.
Վախ չ'ազդեր ինձ ոհմակ մ'ամբողջ.
Կրնա կյանքը զինվիլ ինձ դեմ,
Իր հարվածներն ես քաջությամբ կըդիտեմ.
Բավ է, որ տան ինծի միայն
Ազատ խոսքի սուրբ իրավունքն անպայման։

ՀԱՅ ԼԵԶՎԻՆ

Դո՛ւն առաջին վանկ շրթունքիս, առաջին վանկ իմ հոգվույս,
Նախկի՛ն հնչյուն իմ մանկական լեզվիս հեզ,
Որով լացի ու երգեցի միշտ հուզումներս, իղձս ու հույս,
Իմ մայրենի քաղցրի՛կ բարբառ, ողջո՜ւյն քեզ։

Քու բառերեդ արևեն վառ ու բյուրեղեն ալ վրձիտ՝
Իմ հոգվույս մեջ բոց մը կաթեց մշտակեզ,
Հուր ծարավ մը անհունության, բարվույն, մեծին ճշմարիտ.
Ո՜վ մանկությանս ազնիվ լեզու, կ'օրհնե՛մ քեզ։

Տարիներով թափառական օտար երկիր ու վայրեր,
Զուրկ մնացի ընտանիքես, տընակես.
Այլ քու կարոտդ անդարման ցավն եղավ սրտիս կարևեր,
Ո՜վ իմ լեզուս, ամեն իղձ զոհ ըլլա քեզ։

Զարմանահրաշ վրսեմ թարգման դուն սրբության անմատույց,
Դուն արձագանք հայ անցյալին, կյանքին վես,
Տիտաններու, քերթողներու անմահ փառքին ապացույց,
Ո՜վ վեհ բարբառ իմ հայրերուս, պատի՛վ քեզ։

Ալեծաղիկ կատարներու անմահ զավակ դարավոր,
Ծոցեդ անշեջ ճառագայթներ կըժայթքես.
Մշտափթիթ գարուն մ'անանց կըպսակե դեմքդ աղվոր,
Անզուգական, քնքույշ լեզուս, համբո՜ւյր քեզ։

Դուն Մեսրոպին ու Սահակին շունչին թրթռումը ոսկի,
Որ հայրենի հուշերն անդուլ կ'եղերգես.
Իր պաշտելի ավանդությանց, նշխարներուն սուրբ ըսկիհ,
Ո՜հ աննման չքնաղ լեզու, բուրվա՛ռ քեզ։

Ծով ծիածան, որ կըգըլես լայն կոհակներդ այգաբեր.
Մերթ գոհարներ ծավալելով, մերթ բեհեզ.
Մերթ սաղմոսներ ծփծփալով, մերթ վեպեր,
Ո՜վ հայ լեզուս իմ պաշտելի, ողջո՜ւյն քեզ։

Դուն թրթռացիր անտառներու սոսիներուն տակ ըստեպ,
Հայ աշուղին քնարին պարծանքն եղար վես.
Հիմա կ'երգես զավակներուդ նժդեհ կյանքը երաշխեպ,
Քերթողներու անմահ բարբառ, բյուր փառք քեզ։

Օրհնյա՜լ ըլլան մեր հայրերը, որոնք թեև ցիրուցան,
Մութ օրերուն՝ մոլորած չոր շյուղին պես.
Մոռցան իրենց տունն ու տեղը, զավակներին ուրացան,
Իրենց անձն ալ, բայց չը մոռցան երբեք քեզ։

Օրհնյա՜լ ըլլան մեր մայրերը, որոնք ըզքեզ սընուցին,
Իրենց շունչովն ու աղոթքով սրտակեզ։
Խարխուլ, փըլված կրտուրին տակ, կարոտ պատառ մը հացին,
Գուրգուրանքով պահպանեցին միշտ ըզքեզ։

Թո՜ղ որ ես ալ, մեր հայրերու հետին զավակը թշվառ,
Սուրբ տաճարիդ ոտքը բերեմ ողջակեզ,
Միշտ տառապած, երբեք շիջած սիրտես կայծ մը խանդավառ,
Հոգով պաշտեմ ու քընարովս օրհնեմ քեզ։

ԱՂՎՈՐ ԵՐԱԶ

Ամպերեն վեր, աստղերեն վեր, կյանքեն վեր
Աստվածության մը պալատը կերազեմ.
Կ'ուզեմ որ զայն պատեն լայն-լայն ջինջ ծովեր,
Եվ դուռներուն ազատությունն ըլլա սեմ։

Իր գմբեթը չըլլա ոսկի, ոչ արծաթ,
Բայց զայն բռնեն ճերմակ-ճերմակ երազներ,
Որոնց ծաղիկ ծիծաղներեն լուսացայտ
Ուրախության ճառագայթում մը հասներ։

Էակներն հոն կայուն ձևեր չունենան.
Իրենց մարմինն ըլլա շող, բույր ու ճաճանչ,
Որ միշտ փոխվի, ինչպես արևն իրիկվան
Ամպերու մեջ՝ լեյակ, վարդ, շառ ու կանանչ։

Սիրտերն ըլլան մեծ փարոսներ բյուրեղե.
Ըզգացումներն ապրին ազատ անտաղտուկ.
Ամեն շրթունք երգ, սեր, քերթված հեղհեղե.
Ոչինչ պզտիկ, ոչինչ տրգեղ ու գաղտուկ։

Ու սերն ըլլա պալատին մեջ դիցուհին.
Համայնասփյուռ բեհեզով մը հիացման
Հոգիները ծավալանան, պարուրվին
Ջերթ արբշռանքով զեղուն ծաղկե խնկման։

Ճշմարիտը մերկ, սուրբ, վըճիտ, անոլորտ,
Գեղեցիկը համակ այգ, բոց ու փթթում,
Աղավնիի ձյուն թևերով լայն ու լորտ
Հոն սավառնի բարությունը անպատում։

Անոնց պաշտումն, ըսքանչանքը անայլայլ
Հոգիներուն ըլլա պըսակն ու դափնին,
Եվ մեծ սիրո խարույկին մեջ բոցափայլ
Վառին, վառին, սակայն երբեք չըհալին։

ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՇԱԼՈՒՅՍ

Վարդ անկողնի մեջ պառկած,
Փակ շրթները կեռասե,
Վարդ վերմակով, շուշան բարձ,
Արշալույսը կ'երազե։

Եվ լուսահյուս ժանյակե
Վարագույր մը թափանցիկ,
Ննջարանին կըփակե
Կապույտ բացվածքն ու ծոցիկ։

Եվ ամպերուն ձյունաթույր
Եզերքներովը մաքուր,
Կարմիր վարդե մի համբույր
Կըդեգերի թաքթաքուր։

Շրջազգեստին ծայրն ըսփյուռ՝
Զամբյուղ ըրած մի հուրի,
Կըցանցընե վարդեր բյուր՝
Խառնուրդ բոցի, փրփուրի։

Հորիզոնին կարմըրոտ
Գծին վրա քալելով,
Իր ետևեն վարանոտ
Շուշան ոտքի հետքն հոլով։

Եվ կընիրհե դեռ առտուն
Ծոցն անուրջին ցնդական,
Կես քունի մեջ, կես արթուն
Երազելով ապագան։

ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ

Պիտի բանամ հոգուս պայծառ
Պատուհանները բյուրավոր,
Եռանդալից ու խանդավառ
Ուժգին կամքով մը անսովոր։

Եվ անոնցմե հոգնակոհակ
Պիտի խուժեն լույսն ու արև։
Բոլոր բույրերն, երգերն համակ
Պիտի պարեն հոն ակներև։

Եվ ստվերի մասնիկն հետին
Պիտի ցնդի հոգուս մեջեն,
Ուր մոռացման թումբի ետին
Ուրախ երգեր կըմրմնջեն։

Եվ մաքրված հին սերերուն
Ախտավարակ մնացորդեն,
Թարմ կիրքերու ուղխին անհուն
Պիտի բացվի սիրտս համորեն։

Բաց են հիմա փեղկերն հոգուս
Գարնան բոլոր զեփյուռներուն,
Ուր կրծաղկի առատաբույս
Գողտրիկ թաղարն իմ սերերուն։

Ու կրփարի, կրհարի
Սիրտս խոցոտ, լքված կարի,
Վերջալույսին, որ կրմարի
Երկայնքովը հորիզոնին կամարի։

ՀՈՊՈՊ ԹՌՉՈՒՆԸ

(Ավանդավեպ)

Զքնաղ առտու մը գարնան
Ցոդոտ, կիսալույս,
Աղվոր աղջիկ մ'աննման,
Հարսնցու մի կույս,

Լոգարանին մեջ մինակ,
Անփույթ պչրանքով,
Կըլվացվի ու ճերմակ
Շուշան մ'է տեսքով։

Մազերն սփյուռ ոսկեզօծ՝
Կրսաներև անի,
Ու կըսարսռա լանջքը հոծ
Ու պորան հոլանի։

Ու վարսերը կըցրվին,
Վիժակ՝ սոնապան՝
Ծփալով շուրջն իր մարմնին՝
Խորան մարրուվթյան։

Այլ բաղնիքին կիսաբաց
Դոնեն՝ աղջկան
Եղբոր աչքն է հանդիպած՝
Քրոջ մերկության...

Օ՜հ, ի՜նչ ամոթ, ասուած իմ,
Փրկե՛, փրկե՛ զինք.
«Թռչուն մ'ըլլամ ու թռչիմ
Երկինքե երկինք...»։

Եվ աղվորը սարսռագին
Հանկարծ կ'առնե թև,
Մոռցած սանրը դեռ գլխին
Մազերուն վերև։

* * *

Հոպոպ թռչուն է այսօր
Սիրուն աղջիկն այն,
Բուբուկն ալ սանրը անոր,
Ըստ ավանդության։

ԳԻՇԵՐԱՅԻՆ

Գիշեր։ Լճակի եզրը առանձին։
Ջուրերու պայծառ արծաթին վրա
Սյուքը հևիհև մերթ կըսարսըռա,
Ու լայն թրթռումներ վերը կըհածին։

Ու Ծիր-կաթինի անբավ լույսերեն՝
Աստղեր կը ժպտան անտառակին մեջ։
Ու ցոլ-ցոլ, վետ-վետ հրթիռներ անշեջ
Կապույտ ջուրերուն վրա կըպարեն։

Սաղարթներուն տակ թեթև մի հուրի
Մարմանդին վրա կըսահի շուտ-շուտ,
Ասուպ մը կ'իյնա մեղմ ու վիժանուտ,
Ու կապույտին մեջ պահ մը կ'երկարի։

Կը սահի արծաթ ջուրերուն մեջեն
Ամպի թափանցիկ պաստառ մը թեթև.
Ու սաղարթախիտ պուրակին ետև
Մեղմ հեծկլտուքներ մերթ կըմրմնջեն։

Ու փոսփորալույս կայծոռիկներուն
Բույլ մը կ'ակոսե մութն ստվերակուռ,
Ընդհատ երիզ մը նուրբ ու ոսկեկուռ,
Ինչպես անկումը վերն՝ ասուպներու։

Գիշեր։ Լճակին եզրը միսմինակ.
Այս փայլի, բույլի, ստվերի պահուն
Հոգվույս տենդագին խոլ սլացքներուն
Պահ մը նեղ կուգա մեծ միջոցն համակ։

ԱՆՐՋԱՆՔ

Գարնան գիշերվան երկինքն է պայծառ
Լուսնով ոսկեզօծ մառախուղին մեջ,
Կապույտին աչքերն հեշտանքով անճառ
Կըքթթեն քնատ ու երազատենչ։

Ի՞նչ քաղցր է նստել պատուհանիս քով
Եվ այս խնջույքին հոգիս անձնատուր
Ծրծել երազը դառն ըսփոփանքով,
Մեծ մոռացման մը վայրկենին մեջ լուռ։

Հոն կ'անդորրի թափն հոգվույս ծփանքին,
Որ խաղաղավետ լըճի մը նման
Կ'անընդջեն անշարժ և ըզմայլագին,
Եվ ուր կապույտեն՝ ջահեր կըցոլան։

Կըհանգչի սիրտս ալ,— հրավառ խնկաման,
Հուշիկ թմրությամբն իր կսկիծներուն,
Եվ կրոնաշունչ պահը գիշերվան
Անվերջ վայրկյան մ'է վայելքով լեցուն։

Գարնան գիշերվան լուսնին տակ պայծառ
Հեշտ է ինձ այսպես փարվիլ անուրջին,
Ըզգալ ներսս ուժգին կյանքը մշտավառ
Եվ սրբել հոգիս իր ցավերեն հին։

ԵՐԿՐԱԽՏ

Ծովեն անդին ու լեռներեն ալ անդին,
Մառախուղին խորն երազի մ'ոսկեփայլ,
Աշխարհ մը կա, որուն պատկերն հոգեզմայլ
Կրկորսվի ծոցն անստույգ անդունդին։

Ջքնա՞ղ աշխարհ, ուր խոկումներս կըփթթին,
Անրջահույս տեսլերևույթդ անայլայլ
Կըլեցնե պարապն հոգվույս իմ մռայլ
Որ՝ թախծաբեկ՝ զքեզ կըտենչա վերստին։

Կըխուսափիս տարտամին խորն օրե օր,
Իզո՞ւր նայվածքս երևույթին դյութավոր
Կընկրտի ճշտել վայրկյանն հոսանուտ։

Ու գինովցած անկարելի երազեն,
Ոտքերս դեռ համառորեն կըվազեն
Անվերջ ճամփուն երկայնքին վրա բազմախուզ։

ԳԻՇԵՐՎԱՆ ՃԱՄՓՈՐԴԸ

Գիշերվան մեջ խոր ու ցրտին՝
Հեգ ուղևորն է մոլորեր.
Կըդողդղան մոտն անդունդին
Իր հոգնած այլ համառ քայլեր։

Կարմիր կայծ մ'է հոգվույն թիրախ,
Հեռուն թանձր խավարին մեջ,
Ու կըքալե, մութ է, ավա՜ղ,
Այլ կայծն արթուն, կայծն է անշեջ։

Կը քալե ան,— ուրկի՞ց ի վեր,
Բոբիկ, փշոտ ճամփաներեն,
Ու կ'արյունին իր կարեվեր
Ոտքերն՝ հոգնած անհունորեն։

Եվ չհասած կայծին երբեք,
Պիտի մարի՞ գիշերվան մեջ.
Կասկածն է սուր ճամփորդին հեգ,
Այլ կայծն արթուն, կայծն է անշեջ։

Պիտի քալե ան հավիտյան,
Մինչ հուսկ կաթիլն իր ուժերուն.
Գիշերն ի՜նչ փույթ, ի՜նչ փույթ ճամփան,
Երբ կայծն անշեջ, կայծն է արթուն։

ՀԵՐԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ

ԵՐԿՈՒ ՃԱՄՓԱՆԵՐԸ

Ես ու դուն իրարմե տարբեր ենք, օ՜, տարբե՜ր,
Դուն լայն ճամփեն կ'երթաս, ուրախ
ու անխոթով,
Մինչդեռ ես իյնալու վախովըս տաքուքեր՝
Նեղ ու ցից ուղիես կը քալեմ արցունքով։

Ջանացի սակայն գեթ դիտել քեզ, քու ճամփան,
Ուր շքեղ ուռենին կ'ընծայե շուք ու զով,
Ուր գետինն կը ծածկեն ծաղիկներ բյուրական,
Ձեփյուռն ալ ճակատդ կը գգվե հեշտանքով։

Այլ սակայն նայվածք մը դեպի քեզ արձակված,
Բավ է որ գլտորիմ անդունդը անհատակ,
Չի փբշոտ այս ճամփաս այնչափ նեղ է ու թաց,
Մեկ քովըս անդունդն է, մյուսըս՝ ժայռ
վայրահակ։

Ճամփան, ուր կը քալեմ, ուղին է ցավերու,
Հոն մտնողն ժամ առաջ դուրս ելնել կը փութա,
Դուն կ'երթաս ճամփայեն երջանիկ կյանքերու,
Սակայն լոկ ճամփորդ մ'ես ինծի պես տարակաս։

Ու տրտում կը քալեմ մտրակված բուռն հուլեն,
Տատասկը կ'արյունե սրունքներըս փափուկ,
Ժայռերուն ցրցվածքն են իմ միակ ապավեն,
Որոնց սուր ծայրերուն կը փարիմ ողոքմուկ։

Բայց երկուքս ալ, ավա՜ղ, կը հանգինք սև
վիհին,
Ու պետք է որ անցնինք մահի սև կամուրջեն,
Դուն՝ ուրախ, ես՝ տրտում, երբոր գանք դեմ
առ դեմ,
Այն ատեն ո՞վ արցունք պիտ՝ հեղու
մեր մեջեն։

ԵՐՋԱՆԻԿ ՀՈՒՇԵՐ

Ցավերուս մեջ որ հաճախ զիս են պատեր,
Երբեմն անուշ հիշատակներ ալ ունիմ,
Ինչպես մութին մեջ փայլփլող լույս կեսեր,
Որ խավարը ծակող աչքեր կը թվին։

Մերթ երբ սիրտս տխուր կ'ըլլա ու մինակ,
Արևին տակ բընության գոգը շրջիմ,
Երջանիկ հուշ մը կը պատե զիս համակ,
Արբշռանքով կը տարվիմ ե՛տ, անցյալին։

Ու կը գտնեմ ես զիս նորեն դեռատի,
Սիրտս հույսով, աչքս լեցուն ժպիտով,
Զբաղելով բաներու հետ սընոտի,
Երթալով հոն, ուր քշե զիս բաղդին հով։

Գիշերները վառարանին դեմ պառկած,
Գորգին վրա, դիտելով բոցը կրակին,
Այրող փայտին ճարճատյունով օրորված,
Երազներս երջանկորեն կը վառին։

Ու մինչ հույզեր տրտում սիրտս կուռեցնեն,
Վերհիշումովը երջանիկ օրերուն,
Հանկարծ նորեն կը գտնեմ զիս ինչ որ եմ,
Հիշատակներս ալ կը փախչին ա՛լ հեռուն։

Ու ակնարկս նորեն կ'ուղղեմ դեպի ետ,
Ճամփորդին պես, որ կը նայի այն ճամփան՝
Ուրկե անդարձ անցավ և ուր՝ առհավե՜տ
Տեսարաններ պիտի թողու սիրական։

ԳԱՆԳԱՏ

Եկո՛ւր, նայե, ծովն է հանդարտ, ո՞վ ընկեր,
Լուսնի շող մը կապույտին մեջ է ինկեր.
Նավակիս մեջ եկո՛ւր, ջուրին վրա դանդաղ
Նավարկելով դիտենք ալյաց զվարթ խաղ։

Հոս ամեն ինչ խինդ է, ժպիտ,
Ալիք, երկինք, ծով, հովիտ,
Լուսինն արծաթ շող սփռելով,
Ման գա երկնից մեջ անխռով։

Բայց հոգիներ կան գեղեցիկ այս պահուն,
Որոնց սրտեն կը կաթկթի միշտ արյուն,
Հոգիներ կան խեղճ, թափառկոտ, մենավոր,
Որոնց վերքը սև անդունդե՛ն ալ է խոր։

Ուրեմն ինչո՞ւ, գիշե՛ր, աղվոր ես այսքան,
Եվ ծաղիկ, ծառ, ալիք, լուսին կը խնդան,
Երբ կանթեղի մը պլպլուն լույսին տակ՝
Աղվոր աչքեր արցունքի՜ մեջ կը լողան...

ՀՈԳԻՆԵՐՈՒՆ ԱՐՑՈՒՆՔԸ

Երբոր աշնան կը թափթրփին
տերևներ դեղին,
Ու անձրևը, հովեն տարված,
օդին մեջ գա հած.

Սիրտը թախծոտ, խորհիմ տրտում
այն աղջիկներուն,
Որոնք կյանքի բուրաստանին
վերդ մտերմուհին,
Գարնան անուշ օրերուն մեջ
շուտով կ'առնեն վերջ,
Ու իրենց կո՞ւյս հոգին կապույտ
դեպի երկինք ցուրտ
Կը բարձրանա հանդարտ՝ ամրան
ամպերուն նման։
Նոճիներուն սև շուքին մոտ՝
լքված, անծանոթ,
Անոնց մարմինը հողերուն
տակ մնա թաքուն.
Հիշատակին ալ ծուխի պես
կը ցնդի անտես.
Ու մոռցունքի սև քողին տակ
կ'երթան վայրահակ։
Երբ աշունին ամպերն ի վար
անձրևն համբարար,
Կաթիլ-կաթիլ կը թոթափի
դժգույն, անարփի,
Արցունքներն են անոնք անհուն
մեռած կույսերուն,
Որոնք իրենց մութ լքումին
ցավը կը հեղո՞ւն...

«ԱՊՐԻՄ-ՄԵՌՆԻՄ»

Քամի, արև, ցող, շող
Ըմպելով լոկ կ'ապրիմ,
Դաշտերու մեջ բուսնող
Անշուք ապրիմ-մեռնիմ։

Վարգերու անուշ հոտ,
Շուշանի շքեղ փայլ
Չունիմ ես, խեղճ, վշտոտ,
Դամբանի զարդ մքաայլ։

Փշփշանքս հերմակ,
Միա՛կ գեղ կոճակիս,
Այլ սակայն անգիտակ,
Ավա՜ղ, կ'սպանեն զիս։

Պատանի թարմ տղաք
Ձիս հաճախ կ'առնեն ձեռք,
Հարցումներ կ'ուղղեն տաք,
Սիրտերնուն բանան վերք։

Փեսրատեն մի առ մի
Խեղճ թերթերդս փոփուկ,
Եվ ապա լքումի
Տան կոճակդս խեղճուկ։

Փողոցին մեջ ինկած
Խեղճ կոճակ աննշան,
Փոշիին մեջտեղ հած
Ոտքի կ'ըլլամ կոխան։

Չեմ կրնար գանգատի,
Ո՜հ, հառաչ մը մինակ
Դուրս հանել ծաղկատի
Ջոր կուրծքես ավերակ։

Փոշիին ու ցեխին
Մեջտեղը կորսքված,
Օր մ'ալ կը կորսվիմ
Անանուն, անքերթված։

ՀՈՒՅՍ

Սիրտիս պաքաղ խորշերուն մեջ մքթամած՝
լույս մը կա,
Ինչպես հուրք խալ շրջմոլիկ ճահճին թաց՝
շող կուտա։

Գուրգուրանքով մը անսահման զանիկա
կը պահեմ,
Կյանքիս ուղին կը պաշտպանե ան հիմա
խավարեն։

Այդ խավարին մեջ չի թողուց որ իյնամ
ես լքուն,
Ազատեց զիս անկումներե խոլական,
անկայուն։

Ո՜վ աստված իմ, որ այդ լույսը սիրտիս մեջ
վառեցիր,
Թո՛ղ որ ան հոն միշտ փայլի վառ ու անշեջ,
անձանձիր։

ԳԱՆԳԱՏ

Ցավի բաժակն մինչև մրուր քամեցի,
Արյունելով շրթունքներրս կանացի,
Խոցոտելով ի՛նչ որ բարի կար մեջրս,
Ինչպես սիրտիս զգացումն ալ խոցեցի։

Աչքերուս մեջ արցունքներրս ցամքեցան,
Ինքրս իմ մեջ տառապեցա ես անձայն
Եվ բառերով օրորվեցա մինչև որ
Հույսի բոլոր աղբյուրներրս ցամքեցան։

Ու արյունրս կաթիլ-կաթիլ թափեցավ,
Հոգվույս ցավին հետ միացավ մարմնի ցավ,
Խավարը և լռությունը հավիտյան,
Սպառնացին պարուրել զիս շտապավ։

Տառապանքը ինծի բաժին ըրիր, Տե՜ր,
Եվ հնազանդ ես կրեցի անստվեր,
Ինչ ծանրը բեռ որ ուսերուս բեռցուցիր,
Կյանքը ծա՜նր է, ուժս է համակ սպառեր։

ՂԱՐԻՊԸ

Քսան տարի կ'անե, մարի՛կ,
Որ հեռավոր եմ քենե,
Գլուխս չունիմ բուրդե բարձիկ,
Քսան տարի է, մարի՛կ։

Շալակս առած կաշի սեմեր՝
Բեռ կը կրեմ ամեն օր,
Երեսրս՝ խինդ, սիրտրս՝ սևեր,
Ճիկերս հատավ կարոտով։

Անո՜ւշ մարիկ, ա՛լ քեզ տեսնել
Մտքես հաներ եմ, գիտե՞ս.
Ճիտիս պարտքն է խաչրս քաշել՝
Պատառ մը հաց խրկել քեզ։

Գեղիս աղվոր էգիին տեղ
Հոս խուց մ'ունիմ մութ, աղտոտ,
Ձեռոքդ շինած անկողնուս տեղ
Ջուլ մը փռած՝ դրան մոտ։

Ուժ չը մնաց աշխատելու,
Օր մը վերեմ կը մեռնիմ,
Երկու աղբեր, մեկ տիրացու
Ջիս թաղելու կը տանին։

Ու փոսին մեջ հոն, մինակուկ,
Լուռ կը պառկիմ ես, մարի՛կ,
Գոնե կարոտդ չեմ քաշեր,
Քո՜ւն կը լինիմ հանդարտիկ։

ՕՐԵՐՈՒՆ ՈՃԻՐԸ

Պատուհանին մոտ,
Ուր արևն իր նվաղկոտ
ապրիլի

Դժգույն ցոլքովը կը փայլի,
Կույս աղջիկը ծաղկատի,
Ասեղն առած՝ կ'աշխատի։

Ու կը սահին ժամ ու օր
Այնքան արագ իրավ որ
և ունայն,
Բայց աղջիկը չ'ըզգար զայն,
Այլ կը կարե գլխահակ՝
Ճակատագրին անգիտակ։

Եվ օրերը սահեցան
Միօրինակ և անձայն
ու տժգույն՝
Մարտի արևին հանգույն,
Մինչև որ ա՛լ ձանձրույթեն
Կույսն ասեղին ըրավ քեն։

Գարնան արևը նորեն
Կը կայծկլտար եթերեն.
կույսն անմեղ,
Ակնարկ մ'ուղղեց իր հայլիին
սրտագեղ,
Որ շատոնց է, կիսավեր,
Փոշիին մեջ մոռցեր էր։

Ու քարացավ զարմանքեն,
Զի պատկերըն իր դեմեն
ձյունաթույր
Ցույց տար մազերն իր գանգուր.
Արցունք մ'ինկավ աչքերեն.
— Օրերն ի՜նչ շուտ սահեր են...

ՄԱՀՎԱՆ ՄՈՏ

Վերջալույսը կը նվազի.
հոգնած եմ, մա՜յր անուշիկ,

Կուրծքիդ վրա գլուխս հենած,
թո՛ղ որ պառկիմ ա՛լ հուշիկ.
Քնել, գիտեմ, թե կարող չեմ,
բայց կրնամ գեթ արտասվել,
Միտքս տխուր այս վիճակիս
դեռ կը մնա անընտել։
Հովը ծառերը կը սարսե...
կը մսիմ ես մութին մեջ,
Թեև ցավիս սև կրակը
կը վառի ներսս անշեջ։
Վերջըս մո՜տ է... վաղն առավոտ,
երբ ծագե նոր արշալույս,
Սառ մարմինես շատոնց հոգիս
պիտի տված ըլլա խույս։
Անկողնիս քով, դուն ծնրադիր
ինծի խոսիս պիտի դեռ,
Ու անբարբառ իմ բերանես
իզո՜ւր սպասես խոսքեր.
Թևերովդ մի՛ շրջապատեր,
մի՛ ջանար տաքցընել զիս,
Սիրտս այնքան խրոված է,
որ հոգըս չէ մսիլըս։
Վաղը երբոր գերեզմանիս մեջ
միս-մինակ փակեն զիս,
Ո՜հ, այն ատեն արցունքներովդ
տաքցուր պաղ հողը շիրմիս.
Վերջըս մո՜տ է... ալ ո՛չ շարժիլ,
ո՛չ մտածել չեմ կրնար,
Սիրտս միայն կը կտրտի...
մատաղ մեռնի՜լն է դժվար...

ՍԻԱՄԱՆԹՈ

ԴՅՈՒՅԱԶՆՈՐԵՆ

Այնքա՜ն արշալույսներ կան, որ
տակավին չեն ծագած...
ՌԻԿ-ՎԵՏԱ

ՀՈՒՅՍԻՆ ՃԱՄԲԱՆ

Ու անոնք, հսկայաձև ռահվիրաները մարմարեղեն Հույսին,
Ըմբոստացումներու ապառաժներեն իրենց ճակատներն արյունած,
Բայց աչքներեն անասելի արհավիրք մը արձակելով
Ու իրենց փշրող ակռաներուն տակ հրաշեկ դաշույններ տրորելեն՝
Ավերակներու քառուղիի մը վրա, այս իրիկուն
Տժգունությանս հետ երես երեսի, ինծի ըսին.

«Ո՜վ դուն, որ քու մատվիներովդ աչքներդ փորեր՝
Այս ընդվզումի ու խոլ երիվարումներու պահուն
Վճռական փոթորկումներուն անտարբեր՝
Այսպես շրթունքներդ դեպի Ցավը կարկառած՝
Ու բազուկներդ, պաղատանքի մեջ, հոգնածորեն դեպի վեր,
Առավոտե առավոտ ու իրիկվընե իրիկուն,
Անշա՜րժ, մեզի համար զոհվածներուն վրա, եղբոր մը պես, բայց
վայրապար՝
Քու վերք դարձած նայվածքներուդ բոլոր արյունը տվիր...

Օ՜, նախ քու փորված բիբերդ անհուն,
Մեր պաշտամունքի ջահերուն դարձո՛ւր,
Ու մտածումովդ մեզի ունկնդրե,

Գիտենք որ դուն երազող մըն ես ու այլուրներեն սթափեցար,
Ոգեվարներու աղերսող հոնդյունններեն հրավիրված,
Ու իրենց քարուքանդ մարմիններուն գալարանքեն սարսափահար,
Անոնց վրա քու երգերուդ եղերական հանգիստին հետ,
Ձեռվընեներուդ հանգչեցնող անդորրությունը տարածելու...

Բայց նվիրական ցավը ինքն իր մեջը ձգե՛,
Ո՜վ դուն, ողջակիզումներու ուխտված սպիտա՜կ տղա,
Երբեք պետք չէ խաղաղությունը խռովել ինկածներուն,
Եթե նույնիսկ նայվածքներուդ արյունին աղբյուրներովն ալ ըլլա։
Ու դուն մտածումովդ այսուհետև, հավերժապես
Փառքերու ճակատագրին սահմանված
Աստվածային մարմարներու զանգվածներեն՝
Քու ձեռներուդ իմաստությանը համեմատ,
Եթե կուզես, Տառապանքը, դարերուն համար, քանդակե.
Բայց մի՛ մոռնար, Անոր աչքներն ու բերանը ու հոգին տարփորեն,
Ընդվզումի ստինքներուն կարկառելու...

Ու հետո ու մանավանդ ըլլալու համար Ան՝ որ պետք է ըլլալ
վերջապես,
Այս մաքառումի ու ակնկալության օրերուն,
Ամբողջ երկիրը, ստվերիդ մեջեն, հոգիիդ հետ, առանձին,
Հորիզոնե հորիզոն քալե՛ դուն,
Ավաններեն, ու դաշտերեն, ու արտերեն անծայրածիր,
Դեպի քաղաքներն, ու գյուղերն, ու հնձաններն հեռավոր.
Ու քայլիդ վրա անխոնջորեն նորեն վերադարձիր,
Եվ մոլեգնաբար Մահը հոտոտե՛,
Գիտե՞ս որ պետք է բախվիլ անկե,
Բանալու համար մեծ ճամփաները Հույսին,
Որպեսզի, վերջապես, Երազին երիվարները փոթորկանման
Մեր կամքին ձեռվընեներեն դյուցազնաբար վարվելեն՝
Հաղթանակին կատարներուն վրա արձանանան...

Ու վայրկյան մը մթաստվերին մեջեն,
Եթե կրնաս, անհունորեն ետիդ դարձիր,
Ու տես մեռելներուն հողեն ժայթքումն հանկարծական,
Որ գերեզմաններուն ու քանդված քաղաքներուն տակեն,
Մեկենիմեկ փրկության ոգումներեն շնչավորված՝
Մեր ետևեն, այս իրիկուն, տենդոտորեն ոտքի՝
Դեպի Հույսին բացաստանները պիտի քալեն։

Ու անոնց հավատքին հրայրքը նայե՛ ու սիրտ ա՛ռ,
Տե՛ս իրենց ծանր քարերն ու սև խաչերը փայտե
Հողեն հոգնած ուսերնուն վրա,
Տե՛ս իրենց պատանքներն իրարու արյունե կարմիր՝
Խավարներու հովերուն տարածած,
Ու տե՛ս, տե՛ս, բոլորն ալ մեկմեկու առջև կարծես թե ծնրադիր,
տե՛ս...
Իրարու համար անգամ մը ևս մեռնելու երդումները կ'ընեն...

Ու ամենքն ալ հոն պիտի ըլլան, այսօր, մեզի հետ,
Անոնք, որ կույր են ու անոնք, որ անկար,
Ու անոնք, որ իրենց վիզերը խելահեղորեն
Մեկմեկու հոգիի համար
Դեպի եղեռնը երկարեցին...
Ու անոնք ալ, որ մեր վարպետներն եղան ընդվզումի,
Որոնց խոսքերը մեր խոսքերն են, այս իրիկուն,
Ու իրենց հոգին մեր պաշտամունքն առ Հավետ։

Ու տակավին ամբոխը կա անոնց՝ որոնց սարսափին աղեկ որ
չընդհարեցար դուն,
Միայն մենք գիտենք թե անոնց մարմինները որչա՜փ ամեհի են,
Ու իրենց աչքերն ու շարժումները որչա՜փ ահարկու...
Ու այն արյունը, որ եղբայրներու գլխատումեն իրենց մտքովն
ըմպեցին,
Օ՜, անոնց գանգերուն մեջը՝ հաղթանակներու ծարավեն գինով
արծիվներու
Անսահման թևաբախումները բացավ...

Ու դեռ մայրերը կան, արգասաբեր ու հերարձակ,
Որ վերը, վրաններուն մեջը դաշտավայրին,
Իրենց հուտի ու լայն ու լուսավոր կողերուն տակ,
Մեր վաղորդայնները նորեն փառավորելու համար
Մոլեգին Դյուցազներու կարմիր երկունքը կ'ապրին...

Բայց հիմա որ առավոտը պայծառորեն մոտեցավ,
Ու դուն մեր հոգիները ճանչցար,
Ո՞վ երաղելեն ոգեվարող եղբա՜յր,
Եկո՛ւր, որպեսզի մեր շրթունքները քու շրթունքներդ ընդունին...

Վայրկյանի մը ու հավերժության մը համար...
Ու դեռ Արյունին նվիրական պղծումեն չկարմրած՝
Սա՛ փայլակե սուրը կտրիճորեն ձեռքդ ա՛ռ,
Ու անով մեր ամենուն սուրերը ա՛յս ասպետներուն մարրությանը տակ,
Երդումներուն երդումը ընելե խաչաձևե՛...
Ու գեթ անգամի մը համար՝ ինքնիրմեդ դուրս գահավիժելեն՝
Եթե կրնաս, մեզի հետ քալե՛։ Ահավասիկ Ճամփանս։

ԱՍՏՎԱԾԱՅՈՒՄԸ

Ըմբոստացողներու ամբոխը երբ առավոտին մեջեն խելահեղորեն
կըհառաջանար
Դեպի բախումները նորանոր ու նպատակը սրբազան,
Տեղափոխվող անտառներու զարհուրանքը տարածելեն՝
Ու նվաճելով հորիզոնները սարսափահար,
Հանկարծ երկու Ձևեր, դաժանորեն սպառազեն,
Իրենց սուրերը արեգակին՝ ու ծանրադեմ մեզի ըսին.

«Եղբայրներ, այսօր օրերուն Օրն է, ու գիտենք որ պատրաստ եք
դուք Արհավիրքին,
Բայց մեր երկաթե դասակներն անոր կուրծքին աղեղելե առաջ,
Սա՛ կործանված տաճարին խաչքարերուն վրա,
Հոն, ուր Անոնց ոսկերոտին կըհավերժանա,
Փառքերու ասպվածացումին ունկնդրեցե՛ք,
Ձոր մեր ձայները ձեզի համար՝ ու անոնց հոգիին՝ պիտի երգեն։

Ո՞վ դուք, որ ձեր գարուններն, ձեր արշալույսներն ու հոգիներն
անհուն՝
Մեր ամենուն փրկությանը համար
Ա՜յնչափ այլասիրորեն արյունելով անմահացաք,
Ու անցաք Իդեալին գագաթներեն, ազատարար խոյանքներով,
Մտածումներդ ու աչքերդ անընկճելի Հույսին կարկառած,
Բոլոր մեր ցավը ու բոլոր քայքայումը մեր սև օրերուն
Ձեր ներսիդին մոլեգնաբար տառապելեն...

Ու ձեր նայվածքին ու հավատքին փայլակները գերբնական,
Ազատության նորածին որբի մեր խեղճ աչքերը լուսավորելեն՝
Հոս, մեր ամենուն հոգիին մեջ, ձեր պատգամները քանդակեցին...

Անձնուրացումի ու ադամանդե փառքի այդ օրերեն ի վեր,
Սա չորս կողմի լեռնաշղթաները բոլոր,
Իրենց ճակատներուն վրա քանդվող մրրիկներուն պես,
Ձեր անունները սարսափագին՝
Դողահար կողերուն խորը կապրին...

. . . . . .

. . . . . .

Դուք էիք, որ կործանումի ու փրկության երկաթե ժամերուն
Շղթայազերծումներու ահազանգերը հնչեցուցիք
Պատնեշներեն պատնեշներն ու, ահեղապես, աշտարակե աշտարակ,
Ու բանտերեն, բերդերեն, ու թիարաններեն անդին
Դեպի քաղաքները Ստրկության...
Ու երբ, գիշեր մը, անձնազոհումներու եղերական ժամը վրանիդ
ինկավ,
Դո՜ւք, ազատության ճանապարհները մեզի համար հարթելե հետո,
Ձեր ձեռվրներով, ավա՜ղ, մեր անկարեկիր նայվածքներուն դիմաց՝
Ձեր վաղվան խարույկները պատրաստեցիք...

Ուրեմն փա՜ռք, և օրհնությո՜ւն ձեզի,
Դուք մեր Կուռքերը մարմարեղեն ու մեր Սուրբերը պայծառ,
Դո՜ւք՝ Հսկանե՜ր, դո՜ւք՝ Առաքյալնե՜ր, դո՜ւք՝ Ահավորնե՜ր
բոլոր,
Փա՜ռք և օրհնությո՜ւն ձեզի.
Հոս, ձեր հողին առջևը ծնրադիր ու աչքերնիս աղոթքով լեցուն,
Ձեր պատանքները մտքերնուս մեջ երկյուղածորեն քակելեն՝
Թույլ տվե՜ք որ՝ մեր բերանները ձեր դյուցազնի գանգերուն՝
Ընդունինք ձեր կմախքները մեր ուխտվածի իրաններուն վրա,
Ու ձեզի խնկե՜նք աչվընուս մեջի Վրեժեն սառած արյունը Ցավին,
Որպեսզի երբ համառորեն շարունակենք հառաջանալ,
Ձեր մահերուն հաճախանքն ա՛լ չի կառչի մեր քայլերուն...
Փա՜ռք և օրհնությո՜ւն ձեզի, նորեն ու նորեն,
Ու հիմա կբաժնվինք ձեզմե՜՝ ավետելեն՝
Թե ձեր բազուկները ձեր ընդվզումի զավկրներուն բազուկներն են
այսուհետև,

Ու ձեր հավատքը մոլեգնությունն է անոնց՝
Որ մոխրակույտերու ու դիակի մինչև աստղերը բրգավորումներեն
խելահեղած,
Սա չորս կողմի բոլոր առապարներեն, բլուրներեն ու ապառաժնե-
րեն վեր,
Ձեր աստվածացումը օրհներգելով պիտի երիվարեն, ահավասի՜կ,
Ո՜վ գիտե, դեպի ո՜ր հաղթանակները կամ դեպի ո՜ր պարտու-
թյունները փառավոր...»։

ԱՐՇԱԼՈՒՅՍՆԵՐԸ

Ու արհավիրքով լեցուն Մեռելները այն ապառաժուտ
բլուրներու տակեն,
Որոնց վրա ըմբոստացումի մեր կարավանը կըլեռնավորվեր,
Հանկարծ իրենց մերկ բազուկները դեպի մեզի տարածելեն,
Նորեն կյանքը վերագտածի իրենց երգերը ցնորաբեր,
Ամենքը մեկ, անշարժ ու երկյուղած ու մղձավանջային,
Տարօրինակ երջանկությունով մը երգեցին...

«Օ՜, կա՜նգ առեք ձեր վերելքին վրա, ո՜վ դյուցազունները վաղվան,
Ու մտիկ ըրե՜ք անոնց, որոնք փառքի օր մը մահն անարգեցին
Ձեզի ու մեր ամենուն համար...
Մենք, մեռելներս, ձեզի հետ ենք այս առավոտ,
Այլևս մեր բազուկի ոսկորներուն ճարճատյունները, գիտե՜նք
դիվային,
Սրունքներնուս երկայնքն ի վար ու ձեր ականջին,
Մահագուժորեն պիտի չի հնչեն...
Քանզի մեր կմախքները՝ ալ դագաղներեն ու ավերակներեն դուրս,
Սա՛ ծաղիկներուն նման, վերեն հորդող լույսերուն տակ,
Օ՜, ավետի՜ս ձեզի, ավետի՜ս ձեզի, ալ կսկսին պայծառորեն
մսավորվիլ...

Ու նորեն մեր այսչափ ատեն,
Խավարով ու հողով ու հուսահատությունով լեցուն,
Մեր կոպերուն տակ, այս պահուն,
Մեր նայվածքները լիճերու նման կբացվին,
Ու մեր խեղճ շրթունքները մահեն տրորված,

Օ՜, գթացե՜ք, ձեր հրավառ ճակատներուն եղբայրությանը պետք
ունին...

Մեր գերեզմանի քարերն ու խաչերն արյունլվա,
Որոնք մեր մահը ու այս կյանքը մեզի հետ ապրեցան,
Սպասեցեք, որ ձեր դյուցազնի գլուխներն անոնց վրա
Գեթ վայրկյան մը զարհուրանքեն իրենց խոնջենքը հանգչեցնեն...

Նորեն կ'ըսենք, մենք անոնք ենք, որոնք օր մը փրկանքի
Իրենց կյանքը ձեզի համար Եղեռնին տվին...
Ու անոնք դարձյալ, որոնց դուք ձեր այսօրվան երգերովն ամեհի,
Ավերակներու ծանրությանը տակ, ուր ցավին հետ վատաբար
կրկքեինք,

Ձեր արարչագործ շունչովը մեզի կյանքը տվիք։

Ուրեմն ձեր երգերը մեր երգերը թո՛ղ ըլլան,
Բայց թո՛ւյլ տվեք, որ ձեր ամեն մեկուն պատյանեն մերկացած
սուրը պողպատե,
Սա՛ մեր քարուտ, ու դաժան, ու մութ ու անողորմ ճամփան,
Միածանի մը հանգույն մինչև Նպատակը լուսավորե...»։

Ու ես բլուրներուն վերեն ու դաշտավայրին վրա,
Անհունորեն ոտքի՛, ինչպես աշտարակ մը գրանիտե,
Տեսա որ բյուրավո՜ր ու բյուրավո՜ր ծննդաբեր մայրերը սևահեր
Իրենց նորածին զավակները ձեռքերնուն մեջ ու խելահեղորեն
դեպի վե՜ր

Արյունոտած հորիզոններուն ամբարցուցին,
Ջանոնք առավոտին ճառագայթներուն խորը մխրճելով,
Աստվածածին լույսերուն մեջ մկրտելու համար...
Ու բոլորը մեկ իրենց ջինջ ու ծանր ձայնովն այսպես երգեցին...
«Ո՜վ դո՜ւք, նորածիններ, որ մեր մարմարե կողերուն մայրությենեն
ստեղծվեցաք,

Ձեր կյանքին առջև փակ աչքերները սա լույսերովը ողողելեն՝
Խմեցե՜ք նախ այդ շողերեն, որ արյունն է ձեր փառավոր հայրերուն,
Ու հետո ամեն օր մեր առույգ ստինքներուն կաթը կենդանարար,
Ձեր ամեն մեկը պիտի ընե այնպես, ինչպես որ ձեր հայրերը
մեզի համար

Սա դաշտերուն մեջը անձնուրացորեն եղան...
Ուրեմն Օվսաննա՜ ձեզի, դո՜ւք՝ մեր միսը, ու դո՜ւք մեր հոգին,
Ու Օվսաննա անոնց, որոնք զձեզ մեզ համար փառքի օր մը
ստեղծեցին...»։

Երգերը դադրեցան, մինչդեռ հանկարծ՝ հայտնվեցավ որ,
Անդին, անծայրածիր ու հեռավոր արտերուն վրա,
Բոլոր երիտասարդ ու լայն ու հուժկու հերկողները մեր վաղնչական
հողերուն,

Իրենց խելահեղ եզներն երկաթներուն լծած, ու համառորեն,
Ադամանդյա արգասավոր Արշալույսները կ'արորեն...

ՇԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Մարմարի ո՞ր ապառաժներեն արդյոք իրենց իրանները կառուցին...
Ու ո՞ր գինիեն, ո՞ր թույնեն և կամ ո՞ր արյունեն հրավառ,
Այսպես իրենց աչքերներն ու մտածումը սա՛ խենթությանը
հանգեցան...

Ո՞ր սալերուն վրա ու ի՛նչ կռաններով ու այս արշավանքի գիշերվանը
համար,

Իրենց սա՛ կայծակներու հանգույն սուրերը կարողացան
դարբնելու...

Ու վերջապես, ըսե՛ք, ո՞ր խավարներուն երկինքեն է, որ նվաճելով
սանձեցին,

Այս բյուրավոր երկաթե երիվարներն ահարկու...

Ու հորիզոններուն ու հողերուն բոլոր գոտիներեն,
Այսպես, վայրագորեն ու քինահույզորեն ու հաղթականորեն,
Եկա՜ն, եկա՜ն, եկա՜ն Անոնք, իրենց դռույթովը դժոխային
Սասանելեն դաշտավայրը, ուր մենք բոլորս առավոտին լույսերեն
գինով,

Վճռական օրվանը համար՝ որ «օրերուն Օրն է» ըսին,
Իրենց խառնվեցանք զանգվածելու համար այդ Փոթորիկն
ապերասան,

Որուն անողոք ճամփան, արդեն մեր ամենուն ալ ճամփան էր...

Ու երբ լուսինը եղերականորեն դեպի երկինք կ'ամբառնար,
Խավարներուն անդունդները իր հրդեհներեն անտառելեն՝
Հանկարծ՝ հորիզոնին վրա, Ուրվական մը, թերևս արքա մը՝ մեր հին
փառքի օրերեն,
Որ հողեն հառնած ըլլալու եղերական երևույթն ուներ,
Իր խույրը ձեռքը՝ զրահը արեգակի նման կուրծքին՝
Ու իր վահանը ըմբոստներուն դեմը բռնելեն,
Կույր աստվածի մը հանդիսավորությանը համեմատ, ծանրադեմ,
ըսավ.

«Զավակնե՛ր, նախ սպասեցեք, որ իմ խավարյալ աչքերուս մեջեն,
դարերե ի վեր,
Գերեզմաններեն լեցված դեղին հողը վրա թափելեն, ձեզի խոսիմ...

. . . . . .

«Ու ահավասի՛կ, ձեր հոգիները կճանչնամ ձեր ճակատներուն
բոցեն,
Ու ցեղիս արյունին ձեր մեջ եռալը երջանկորեն մտիկ ըրի...
Գիտեմ ձեր Ցավը, որուն մոլեգին ծնունդն է ձեր ըմբոստացումն
այսօրվան...
Իմացա, գլուխս ձեռքերուս մեջ ու դագաղիս տախտակներուն
արմնկած,
Իմացա բոլոր ճիշերն ու հծծյուններն Անմեղներու անագորույն
կոտորածին...
Ու սերունդներուս սրտերեն հոսած արյունը կրակե,
Ավա՜ղ, հողին մեջեն սուզվելով իջա՜վ, եկա՜վ, իմ խեղճ
ճակատս թրջելու...
Բայց արշավելե առաջ, նախ՝ հորիզոններուն առագաստեցե՛ք
Սա՛ դրոշը՝ որ Դրոշն եղավ ձեր հայրերու Հաղթանակին,
Ու ձեր քայլերն շտապելու և հոգինիդ դեռ փոթորկելու համար,
Ոսկեշեփորիս ունկնդրեցե՛ք, որ շունչիս մեջեն մեր Վրեժը պիտի
հնչե...

Ուրե՛մն, Հառա՜ջ, Հառա՜ջ, ո՜վ Ըմբոստացումի զավկներս
արյունաքիթ,
Ես գիտեմ, որ կյանքին հանգիստն ու խաղաղությունը այս
երկնքին տակ,
Ձեր հաղթանակեն վերադարձին ցնծությունով պիտի երգեք...»։

Ու հրեղեն Անցյալին տեսիլքն իր ոսկեկուռ պատանքը ուսին,
Հորիզոնին մեջեն հանդարտությամբ անհայտացավ,
Մինչդեռ գերագույն խռովքին փողերը ռազմին համար հնչեցին,
Ու ձիերը մեր երկաթե ազդրերուն տակը ծառացան.
. . . . . Ու գունդերը բախվելեն՝ Վրեժին ու Եղեռնին,
Մարմին մարմինի ընդխառնումը փոթորկեցավ։
Օ՜, այն ընդհարումները օրեր ի բուն, մեկմեկու վրա փլչող
իրաններու...
Ու պաղատանքներն ու գալարումները, զոր մեր կրակներն
անոնցմե կրկորզեին,
Ու դեռ անապատում ճարճատյունը հոշոտվող լանջքերուն...
Ու ագռավներուն բազմությունը, սև անտառի մը այնչափ նման,
Որ հարատև՝ իրիկվընե իրիկուն՝
Մեր սուրերեն ինկած դիակներուն վրա խավարին պես
կըտապալվեր...

Գիշեր մը, արյունռուշտ կատաղանքի ու կորուստի գիշեր,
Ուր ամեն դի արյունին ազատարար սահանքները մեր ձեռքերովը
պեղվեցան...

Քանի՜, քանի՜ վիրավոր մարտիկներ
Իրենց հերոսի փառավոր պարտությենեն ամոթահար,
Մեր բոլորին առջև, սարսափին տակ ու թշնամիին դիմաց
Նորեն ապարդյունորեն չի մեռնելու համար,
Իրենց քանդված մարմինները դեպի զմեզ շարժելեն՝
«Հաղթանակի՜ն, Հաղթանակի՜ն, Հաղթանակի՜ն...»
Մոլեգնաբար որոտալեն,
Իրենց պողպատե սուրերը ակռաներուն տակ փշրելով՝ կյանքեն՝
հուսալի՜ց մահացան...

Այսպես մեր՝ արհավիրքի կարավանները կամքի զորավորներուն,
Պղինձե ու կապարե աննվաճելի պատնեշներն եղան,
Որոնց դիմաց Ոճիրն իր մարմինը բախելեն պարտասած՝
Օր մը, վախճանական անկումի շարաշուք օր,
Իր ձեռվընեռովն իր ոսկրակույտերը քաղաքներու նման,
Մեր փառքի պատվանդանին տակն ահավոր,
Գերիաբար ծունկի եկած՝ կնդրուկի տեղ հրկիզեց...
Եվ արծաթյա առավոտի մը ընդմեջեն,

Մեր կարմիր քղամիդներովն անհունորեն փաթթված,
Բոլորովին համրաբար ու հաղթական՝ ռազմադաշտը նկատելու
համար՝

Մեր խոլական երիվարներն թշնամիին բեկորներուն վրա,
Փոթորկին պես ու քառարշավ արձակելե հետո...
Դարավանդի մը գագաթը բարձրացանք,
Տարփորեն, մեր ոընգունքներն Ազատության հորիզոնին՝
Ալ վերջապես Եղեռնին ծովատարած տաք արյունը հոտոտելու...

ՀԱՂԹԱՆԱԿԵՆ ՀԵՏՈ

Բայց մեկը, դարավանդին վրա, իր արյունաթաթավ քղամիդը
հովուն

Ու իր ջահին բոցովը մեռելակույտերը լուսավորելեն,
Իր կերպարանքը դեպի մեզ՝ քաղցրաբար ըսավ.
«Եղբայրնե՜ր, թեև գիտեմ որ ձեր անձնվերի ճակատներն այս
պահուն,

Խավարներեն նոր ծնանող սա՜ արշալույսին դիմաց,
Հաղթանակին հուրերովը կ'ադամանդվին...
Թեև գիտեմ որ ձեր աչվընները տակավին
Ծովատարած Արյունին նկատումեն չարբեցան,
Բայց այսօր Հանգրվանին վրա, մեր մայրերուն գիրկը ժամանելե
առաջ,
Եկե՜ք, նախ մեր ուսերուն արյունոտած վերարկուներովը հրավառ,
Այս փառքերու Փառքին գագաթեն, անմիջապես,
Գանգերու, բազուկի ու տրորված իրաններու,
Գթությո՜ւն հայցող սա փլատակները պատանքենք.
Ու հողին ընդերքը հաղթանակին լուրովը լուսավորելու համար
Բոլորդ մեկ ձեր սուրերուն կրակը անոր խորքը մխրճելեն՝
Թաղեցե՜ք զանոնք անոր մեջ, ուրկե մեզի մեր հաղթանակը բերին...
Ու հետո, վերջապես, ինծի հետևեցեք դեպի քավությունը սա
մրրկոտ ջուրին՝

Որ մեր հայրերուն դիակներովը բեռնավորված,
Իր արհավիրքեն զանոնք այնչափ ատեն սա ապառաժներուն
դիմացը կըփշրեր...

Եկե՛ք ձեր արյունոտ դաստակներն հուժկու,
Իմ արյունոտ դաստակներուս հետ,
Անոր սրբագործող ալիքներուն մեջը մաքրելու,
Քանզի, այն իդեալը՝ զոր մեր երիտասարդի մտածումը պայծառ,
Մեր դարավոր հողին համար սրբորեն քանդակեց,
Երբեք, և ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի,
Այլևս ո՛չ հաղթանակներու ազատաբեր սուրերուն,
Ու ոչ ալ արյունին ահեղությանը պետք ունի»։
Իր խոսքերն ավարտեցան, մինչդեռ,
Առտվան հովին թևերուն հետ, որ ոգևարները կըսարսեր,
Գիշախանձ անգղերու փոթորկի մը այնչա՛փ նման,
Մեր վերարկուներն իրենց կարմիր նախճիրին տակ
Բովանդակ ռազմադաշտը մեր նայվածքներեն դիապատեցին...
Ու մեր ձեռքերեն արձակված սուրերը բյուրավոր
Հեռավոր հողին վրա կայծակի պես սուզվեցան։

ՀԱՆԳՐՎԱՆԸ ԵՎ ՎԱՂՈՐԴԱՅՆԸ

Բացաստաններու ընդմեջեն երբ մարտախումբը դեպի հանգրվանը
կ'ընթանար,
Վճռական ու համառ գնացքովն այն մարդերուն,
Որոնց ուղիին վրա ուրիշ նոր ու մեծ Երազներ իրենց թևերը
կըբանան...
Հանկարծ՝ լայն ու արգավանդ առավոտի մը նման՝ մեր մայրերուն
ծագումը հայտնվեցավ,
Որոնք սնուցանող կուրծքերնին իրենց քողերեն մերկացուցած՝
Արմավենիի ոստերով բեռնավոր, մեր ճակատներուն համար,
Մեր սպասումեն գինով ու մեր կարոտեն արբշիռ, այսպես երգեցին.

«Զավակնե՛ր, նախ մեզի մոտեցեք, վասնզի գիտենք որ
Ձեր հոգնած ու խռովյալ ու հաղթական
Ճակատներն ազատաբեր հերոսի,
Այլևս հիմա մեր մայրական լուսեղեն ծոցերուն,
Հանգչեցնող քաղցրությանը պետք ունին...

Ու ահա՛վասիկ շուշաններն անբասիր,
Ձեր դեռ արյունլվա ոտվրներուն տակ,
Արշալույսին հետ, ձեր փառավորումին համար,
Մեր մայրական ձեռվրներովն հնձված...

Ու ահավա՛սիկ արծաթյա խնկամանները սրբազան,
Ինչպես վաղնջական ու մաքրակրոն քրմուհիներ,
Այսպես մեր անշա՛րժ ձեռվրներուն բարձունքեն,
Թո՛ղ ձեր հաղթողի կերպարանքներուն առջև
Մեր պաշտամունքն արտաբուրեն...

Ու ահա՛վասիկ մեր հինավուրց հնձաններուն
Աստվածային ու անապակ գինին՝
Զոր ձեր հագուրդին համեմատ,
Այս տոնական ու ցնծության օրերուն,
Մեր հողե սափորներեն պիտի ըմպեք...

Ու ահավասիկ հոսանքը կրակե արյունին՝
Սև ու հանդիսական ու աննվաճելի ցուլերուն,
Զոր ձեր հայրերու հոգիին ու ձեր աստվածացումին համար
Անոնց գերեզմանաքարերուն վրա, այս առավոտ,
Մեր զորավոր ու սպիտակ ձեռվրները զոհեցին։

Ու ահավա՛սիկ, ոսկիե որաները ավետարանական ցորյանին...
Ու հեռուներեն արգասավոր դաշտերուն տարածվումը անսահման,
Ահավա՛սիկ գարունեն բարձրացող հողին հոտը կենսաբեր,
Ու ահա՛վասիկ նորեն լայն շարժումները սերմնացաններուն...
Ու ահա՛վասիկ հոտերուն տողանցումը բլուրներեն վեր,
Ու ծաղիկներու ածուներ ձեր սպիտակ վրաններուն համար»։

Երգերը դադրեցան, և հայ մայրերն իրենց զավակներուն հետ,
Սրբազան Արարատներուն դեմ ծնրադիր ու բազուկնին դեպի վեր,
Հաղթանակը տոնելե առաջ, նախ ազատության Հողին համար,
Դարերու անձայն սուգեն հետո՝ իրենց պաշտամունքը մատուցին։

Առավոտ մը նորեն, նույն զավակները նույն իդեատանջ ու
դարավոր ցեղին,
Բոլորս մեկ պայծառորեն մեկնեցանք հանգրվանեն,

Մինչդե՞ռ մեր երիտասարդի երկաթե ուսերը կըլայննային...
Արդարության և Զորության և Լույսի վաղորդայնին՝
Գրանիտե հավիտենական ու ճշմարիտ Ոստաններուն
Աստվածադիր հիմնաքարերը կարենալ կրելու համար...

ՀԱՅՈՐԴԻՆԵՐՈՒ

ԴԱՐԵՐՈՒ ՎՐԵԺ

«Հույսերու երկաթե սանդուխին կատարներեն է, որ ավետիս կարձակեմ,
Մոխիրներու, դիակներու և վշտերու հովիտներեն է, որ հասա ի քեզ,
Եվ, ավա՜ղ, քղամիդիս թեզանիքներեն իմ շքեղ ցեղիս արյունը ահավասի՛կ դեռ կըթորա...
Բայց քայլերս անխոնջ են և կամքս գերազոր և ձայնս դաժանորեն ամեհի...
Գլուխս սուգերեն և վրեժեն և ճակատագրեն թեև ալեհեր,
Բայց, տե՛ս, աչքերս դյուցազնի մը աչքերուն չափ կարմիր և կերպարանքս է սոսկատեսիլ։
Իմաստությանս և ցասումիս արեգակին տակ իմ հուժկու իրանս անկյունաքար,
Այլևս չուզեր այդ սնոտի փառքը հավերժորեն իր վրա կրել։
Եվ պաղատանքի, աղոթքի, լաց ու կոծի և ողբի այն մատյաններուն մեջ,
Որ դար առ դար իմ սերունդներս իրենց արյունը և տառապանքն են լացեր,
Մեկ կողմ նետեցի ես զանոնք, պարտութենե ստրկացում և աղաչանքե արցունք չերթալու համար...
Եվ մտածումովս և զայրույթովս ձեր ցավերուն ամենախոր արմատները չափեցի.
Տեսա՛, որ ձեր փրկություն մուրացողի բոբիկ ոտքերն ավերակներու մոխիրներեն այրեցան...

Տեսա՛, որ դուք արցունքին մեջ երջանիկ էիք և կենսաբեր կռիվին դեմ ահարեկ...
Տեսա՛, որ արդարությունը ստեղծել պետք էր և ազատությունը մոլեգնաբար հափշտակել։
Եվ այսօր, ահավասի՛կ, իմ անկշռելի բարկությունս իր բոլոր հուրերը վառեց...
Ահա՛ քեզ ալ կդիմեմ, եկո՛ւր՝ և ճամփուս վրա ոտքի՝ երգե՛, որ արձակե՛մ,
Ճամփուս վրա ռազմերգե՛, որ քինահույզորեն և առհավետ արձակեմ
Իմ հավատքի զավկրներուս վայրենալանջ երիվարները փոթորկապար...
Ըսե՛, որ գաղափարիս փարոսները հրդեհեմ չորս ծագերուն դիմաց,
Ըսե՛, որ թավալե՛մ ապառաժներուս կույտերը անիրավության կուրծքերուն,
Եվ ոտքի հանեմ հողիս հրեղեն և ըմբոստ մարտիկներուն հետ,
Քինախնդրության և սարսափի բանակներուս արշավանքն ալ ահեղաշար...
Ըսե՛, որ շեփորներս հինավուրց հերոսներու հագագովը շեփորել տամ...
Ըսե՛, որ երկաթներս կռանեմ և պողպատներս շողացնեմ,
Ըսե՛, որ ես ալ իմ արյունախում նժույգս շքեղորեն թամբեմ,
Ըսե՛, որ անոր սմբակները ձորերեն վեր՝ լեռնե ի լեռ միայն կայծեն...
Երգե՛, ահա, բոլորին արյունը արև է դարձեր և կամքերն ու դաստակներն է պղնձվեր.
Երգե՛, Եղբայրությունը տոնվեցավ և շունչերն ու հոգիները նույն դարերու վրեժովը պսակվեցան...
Ահա՛ թափվող արցունքները ե՛տ դարձան և կուրծքերու կոծումը դադրեցավ,
Ահա՛ բոլորը մե՛կ, բոլորը մե՛կ, իմ Գերիշխանի թևերուս տակ հառաջացան.
Արբեցո՛ւր զանոնք դեռ, եթե կրնաս, և արժանաբար դյուցազներգե՛ զիս, ո՞վ քնարավոր,
Ես գիտեմ, որ քու տավիղդ հայրենիքին ծարավն ունի, ինչպես վրեժն այնքա՜ն դարերու...
Ուրեմն լարերդ զենիթին շանթերեն հափշտակե, տրցակ առ տրցակ,
Բարձրացո՛ւր ձեռքերդ և զանոնք գիշերվան կապույտներու կամարին կարկառե՛

Եվ փառազարդե գլուխս առավոտյան աստղերու բույլով մը
լուսածոր,
Խնկարկե՛ զիս և անմահության տաճարներուն էն փառակերտը
կառուցո՛ւր,
Ծնրադրե՛ և պաշտե՛ զիս՝ և երբ ժամը հասնի՝ ողջակիզվե՛ ինծի
համար,
Եվ փշրե՛ քու հողեղենի ճակատդ իմ կոթողիս մարմարներուն
դիմաց,
Որովհետև ես ե՛մ, ես ե՛մ, ես ե՛մ, իմ անունս է Պայքար և
վախճանս Հաղթանակ»։

ՀՈՂԻՆ ՁԱՅՆԸ

Անզուգական Քրիստափորի հիշատակին համար

Լսե՛ք, ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելության
ընկերներ,
Որ նորեն տառապանքի, հույսի և քանդումի քաղաքներուն վրա,
Այս իրիկուն, ինծի կըսեն, թե բոցավառվող սուրերու հետ պիտի
իյնա,
Ի՞նչ է այն զարհուրանքը, ո՞վ սուգերու և ատելության ընկերներ։
Ու խոսող ձայնը հավիտենական, մաքառումներու Հողին ձայնն էր,
Որ իր ավերակե բերանները դեպի վեր՝ հորիզոններուն,
Մահազանգերու երկաթեղեն մրրկումի մը հանգույն՝
Վրեժով ու ցասումով առլցված, գերագույն մարտահրավերը
կ'աղաղակեր...
Ու ահավասի՛կ ձեզի մահաբույր արձագանքն իր փրկարար
խոսքերուն.
— Ո՞վ քաղաքներես և երկինքես հալածված թափառական
զավկըներ,
Մտիկ ըրե՛ք, այս իրիկուն, ձեր հինավուրց և արգավանդ և այրի
հողին՝
Ատելությունով, հեծկլտանքով և հոգեվարքով հղի,
Սա քինահույզ ու արյունոտ ու հուսահատ հրավերը պաղատագին...

Եվ եթե կուզեք, որ ձեր վաղնջական ազգը դեռ տևե,
Եթե կուզեք, որ երկիրը անգամ մըն ալ ինքն իր մեջը չի քանդվի,
Եթե կուզեք, որ ազատության հերոսները իմ կողերես նորեն ծնին,
Եթե կուզեք, որ արհավրալից գետերս դիակներով բեռցված չի
թավալին...
Եթե կուզեք, որ աստղերս բացվին և բլուրներս ծաղկանան...
Եթե կուզեք, որ աղբյուրներս երազներու պես ճառագայթեն...
Եթե կուզեք, որ բարեբեր դաշտերս նորեն իրենց ցորյանները
ծովացնեն...
Եթե կուզեք, որ մայրության կաթովս ձեր այգիները ոռոգեմ,
Եթե կուզեք, որ արշալույսներս մերկանան և արեգակներս ծագին...
Եթե կուզեք, որ հովիտներս այլևս մահվան շունչին տակ չի
հեծկլտան...
Եթե կուզեք, որ սերունդներս բարգավաճին և իմ այրիի դեմքս
գեթ առավոտ մը ժպտի...
Եթե կուզեք, որ խաղաղությունը ձեր երդիքներուն տակ արձանանա,
Եթե կուզեք, որ ձերիններուն տաք արյունը ճամփաներուս
քարերեն վար ա՛լ չի հոսի,
Եթե կուզեք, որ ձեր Վրեժը լուծվի և ձեր Ատելությունը հափրանա...
Եթե կուզեք, որ Արդարությունը տիրապետե և իր ոստանը
կառուցվի,
Եթե կուզեք, որ Հայկաշենն և Արմավիրը, Տիգրանակերտն ու
Արտաշատը վերականգնին,
Եթե կուզեք, որ ձեր հոգիները զորանան և ձեր ճակատները
լուսավորվին...
Եթե կուզեք, որ դաժան խղճի խայթը ձեր ամենուն առջև
գերեզմաններ չի փորե...
Ինծի հասե՛ք այն ատեն, մոլեգնաբար և գունդ առ գունդ,
Բազուկներնիդ ըմբոստացումի երկաթեղեն հովերուն
Եվ ճակատներնիդ բոլոր բախումներուն կարկառած՝
Եվ աղաղակեցեք ճգնաժամերու մահաշուք օրերուն համար
սահմանված,
Արիացումին անդառնալի ընդվզումներու, հուսադրող,
սպառազինող, հաղթանակող՝
Ձեր սրտոտ և կատաղի կոչերն Ատելության,
Աղաղակեցե՛ք զանոնք որոտումի գոռումներով ապերասան,
Դաշտավայրե դաշտավայր, քաղաքե քաղաք և հոգիե հոգի,
Վասնզի գիտեմ, որ այս վճռական ընդհարումներեն հետո,

Թշնամիս ոսկորներեն, հաղթանակին կոթողներն ահարկու,
Ահագնաբար, ճակտիս վրան, ձեր ձեռքովն, աշտարակվին
պիտի...

Օգնություն աղաղակեցե՛ք ձեր հոգիին բարկության շունչովը
բովանդակ,

Ու թող ցանուցիր զավկրներուս ամբոխներն հայկական
Իրարու զանգվածվին, եղբայրանան, հրահրվին,
Ձեր վրեժի մահաշունչ կոչին պատգամներուն տակ,
Ու թո՛ղ ձեր դաստակները կայծակներու նման գալարվին,
Ու գլուխներնիդ արյունով և հույսով խենթենան...
Ու թող ձեր մերկացուցած սուրերը փայլատակեն,
Երիվարներու դռույթեն արձակված բոցերուն հետ,
Ու ձեր ջահերը թո՛ղ իրենց արևները տարածեն,
Ռազմադաշտե ռազմադաշտ ու կատարե կատար.
Օ՜, օգնությա՜ն, օգնությա՜ն, օգնությա՜ն արշավեցե՛ք.
Զավկրներուս սիրույն և Արշալույսներու հողին փրկության
համար...

Ու որպեսզի ձեր հոգիներն արիանան և ձեր իրանները
մարմարվին...

Որպեսզի Ատելությունը ձեր սրտին մեջը ծովանա,
Որպեսզի ձեր քայլերը վճռվին ու ձեր կամքը փոթորկի,
Որպեսզի ձեր հողին մահը գեթ անգամ մը ձեր ուղեղը դաշունե...
Որպեսզի ձեր բազուկները զարնեն ու ձեր կուրծքերը պղնձանան,
Տեսե՛ք անգամ մը օգնություն հայցող կարավանները իմ մոռցված
զավկրներուս,

Ու անոնց մարմինները օրերուն ոճիրներեն քարուքանդ,
Ու անոնց որբ հոգիներն ձեր լքումներեն վիրավոր,
Ու անոնց աքսորանքի շտապը իմ դժվարին բլուրներես ի վեր,
Տեսե՛ք, անոնց նայվածքները վերահաս մահեն զարհուրած,
Ու անոնց աղոթքը ու ճիչը ու պաղատանքը նորակոծ,
Նորեն ու նորեն հուսալով և անձկագին դեպի ձեզ ակնդետ,
Ձեր բոլորեն, ո՜վ հալածական և հեռավոր և տարագիր զավկրներ,
Ձեր բոլորեն պաշտպանության շարժում մը կամ կաթիլ մը արյուն,
Կամ քանի մը զորավոր կյանք, հույսով և հուսահատությունով
սպառազին,

Ձեր բոլորեն իրավամբ և եղբայրաբար կըսպասեն...
Աճապարեցե՛ք, ձեզի՜ եմ, որովհետև բոլոր կյանքերը պիտի
ջախջախվին,

Բոլոր ամոլները պիտի այրիանան ու բոլոր այրիները պիտի
մահանան,
Բոլոր նորածինները իրենց խանձարուրներուն արյունոտ
ծալքերուն տակեն,
Իրենց կյանքին անկիտակ աչվրները մահվան մեջը պիտի բանան...
Ու դեռ բոլոր դիակները անգամ մըն ալ և վայրագորեն
Իրենց կտավե պատանքներուն ընդմեջեն պիտի հոշոտվին, պիտի
սրածվին...

Ու բոլոր արգասաբեր արտերն ու խարտյաշ հունձքերն
վաղորդայնին,
Այգեստաններուն ու ծաղկադաշտերուն հետ բոլորը մեկ պիտի
մոխրանան...
Աճապարեցե՛ք, բոլոր կաթողիկները իրենց գմբեթներովը պիտի
թավալին,
Ու բոլոր քաղաքները քաղաքներուն և գյուղերը գյուղերուն տակ,
Ու բերդերն ու պատնեշներն ու աշտարակներն դարավոր՝ այս
բոլորին վրա...
Աճապարեցե՛ք, ո՜վ վրեժխնդրության օրերու զավկրներս անվեհեր
Դեպի ձեր հողը նվիրական, ձեր նիզակները ցցած ու ձեր
կուրծքերը բացած՝
Ձեր վահանը կռիվներու հովին, ու ճակատամուխ երկաթներնիդ
ճոճելեն,
Աճապարեցե՛ք, ու վայրագաբար ու փոթորկապես ու
քինահույզորեն,
Դեպի անառիկ ապառաժներն իմ հավիտենական կողերուս...

Ու այս ալ ըսած թող ըլլամ ձեզի, ո՜վ վարանոտ զավկրներ,
Թե վրեժխնդիր ու սուրբ ատելություններեն վերջն է միայն,
Որ սրբազան ու աստվածային Սերը Կյանքին,
Իմ անսահման ու մայրական կուրծքիս վրա պիտի ապրի...
Որովհետև, ավա՜ղ, միայն ես գիտեմ թե արյունի ի՜նչ անագորույն
սահանքներ
Իմ յոթը խավերուս աղջամուղջներուն խորը սուզվելով
Հաստատությանս հիմունքները անողորմաբար ոռոգեցին...
Միայն ես գիտեմ, իրարու ետև, անվերջորեն, հոգիիս խորը
մխրճվող

Կիսաբաց դագաղներուն ճարճատյունն ահաբեկիչ...
Միայն ես իմացա բոլոր անպատմելի հոնդյունները
ոգեվարներուն...

Բոլոր աղաղակներն անոնց, որոնք փրկվիլ ուզեցին,
Բոլոր ցավատանջ կարկառումը այն ամենուն,
Որոնք դեռ վայրկյան մը արեգա՜կը, արեգա՜կը պաղատեցան...
Միայն ես իմացա բոլոր անձկությունը իրար դեռ տարփորեն
պաշտողներուն,

Բոլոր կողկողանքը զավկներե բաժնվող արդեն այրի մայրերուն...
Ու այս բոլորին մեջեն ահագնալից կրճտյունը փշրվող
ոսկորներուն...

Ու իրաններե անջատվող գլուխներուն վայրէջքը ցնորական,
Միայն ես իմացա, երբ կառափնատներու բարձրերեն իմ ճակտիս
վրա ինկան...

Ու վերջապես միայն ես դիտեմ կուտակումները այն կմախքներուն,
Որոնք սրտիս խորքերուն մեջը, ո՜ր ժամանակեն ի վեր, ո՜ր
ժամանակեն ի վեր...

Այնչա՜փ մրրկոտորեն արմատացա՜ն, անտառվեցա՜ն...»։
Եվ հետո Հողը քաղցրությամբ՝ մաքառողներուն համար՝ սա
ավետիսը տվավ...

«Բայց հիմա, ո՜վ դուք, որ համառորեն մարմինիս ու հոգիիս
կառչած եք,

Դուք հավատարիմները, Դուք Ուխտվածները, դուք իմ
հարազատներս անբասիր,

Դուք, որ իմ ցավերս ապրեցաք ու ձեր արյունը ինծի համար
անխնա բաշխեցիք,

Դուք, որ դասալքումներու դժխեմ վատությունը չի ճանչցաք,
Ձեզի եմ, սրտապնդվեցե՛ք, հուսադրվեցե՛ք, խաչակնքվեցե՛ք,
Քանզի, իրենց փախուստներեն խղճահարված ձեր եղբայրները
բոլոր,

Ահավասի՜կ կհասնին, Ատելությենե հրաշացած ու Սիրով արբշիռ,
Եվ արշալույսին հուրերուն մեջեն իրենց երկաթյա ձեռքերը ձեր
ձեռքերը կըփնտրեն...»։

ԱՆԴՐԱՆԻԿ

Ինքն էր, որ Երազիս մարմարյա եզերքներուն վրա, այս գիշեր,
Ապառաժի մը նման անհաղթելիորեն ոտքի,
Իր ըմբոստացողի հրեղեն գլուխն աստղերուն մեջ մխրճելեն,
Ու իր ձեռքը ատելության սուրերովը զինած,
Հողին փրկությանը սիրովը հրաշացած եղբոր մը նման,
Որ եղբոր մը օտարացումեն իր հոգին կ'արյունի,
Խոսեցավ ինծի Ան, և իր բառերը իրարու ետևե, և կարգ առ կարգ,
Խիստ էին և քաղցր, և ճշմարիտ, և քինահույզ, և առնական...

«Եվ ահավասիկ ես եմ, ո՜վ մեղկության ու անշարժության զավակ,
Որ աղմկահույզորեն՝ այս իրիկուն հեռուներեն կուգամ,
Քու երազուն և անտարբեր ու անգործոն ու եսական ու տկար,
Երիտասարդի մարմինդ ու էությունդ ու հոգիդ,
Բազուկիս հարվածովը ու սուրերուս շառաչին հետ,
Կռիվներու հարկադրիչ ժամերուն համար, վերջնականապես
ցնցելու...

Ունկնդրե իմ ձայնիս, որ այս վճռականության օրերուն
Մեր ցեղին, մեր վրեժին ու մեր արյունին աղաղակն է ահարկու,
Ու խառնվե՛, ընկերացի՛ր, եղբայրացի՛ր, սա՛ մեր հզորաքայլ
ամբոխին հետ՝

Եթե դեռ քու հոգիիդ մեջ ազատության որևէ կայծ վառ մնաց,
Եթե դեռ քու բազուկներդ քաջությունը ունին թշնամիներ
հարվածելու,

Եթե սիրտդ գեթ անգամ մը խոցոտվեցավ մեր մայր-հողին
մահացումեն,

Եթե ցեղիդ տառապանքեն ու անմեղներու կոտորածին
մղձավանջեն,

Քու ներսիդիդ ատելության ու բարկության անտառները
բարձրացան...

Եթե դուն դեռ կյանքիդ մեջը պիտի կրնաս նպատակի մը
փաթթվիլ,

Եթե դեռ քու աչվերներդ այդ անօգուտ արցունքներեն չկուրացան...
Եթե դուն քու աղոթքներդ Ատելության գոռումներու փոխեցիր,
Եթե ցեղիդ ռազմական ու արեգակե արյունին
Երակներուդ ու գլխիդ մեջ բորբոքվիլը դեռ կզգաս,

Եթե դեռ Արամին, Տիգրանին, Արտաշեսին և Վարդանին,
Հաղթանակող զորությունն քու մեջդ շունչ մը մնաց,
Դյուցազնական քայլերին քու երազողի նայվածքներուդ առջև,
Անձնվիրություն, վրեժի և ազատության ճանապարհ մը բացվեցավ,
Գաթի՛ կեցիր այն ատեն, եղբայրացի՛ր խումբերուն ու մրրկվե՛
անոնց հետ,
Որովհետև, գիտցիր, որ այս զոհաբերումի, ընդվզումի և հույսի
օրերուն,
Ե՛ր ամեն մեկուն համար անկողնի մեջ հոգի տալը
վատություն է վատություններուն...»։

Հանկարծ խումբերը հեռացան արևածագին կրակներուն միջեն,
Ու իրենց կամավորի գիտակից ու վճռական քայլերուն հնչյունը
երկաթյա,
Մարմարակույտեր փշրող անհամար կռաններու հնչյունը ուներ...
Մինչդեռ թշնամիներեն անջատված գլուխներ ջահերու պես
կբոցավառեին՝
Իրենց ուսերուն վրա բարձրացուցած սուրերուն կատարներեն...
Եվ ես այն ատեն՝ նախաձեռնությամբ ու տարփանքով հողին վրա
ծնրադիր՝
Իրենց հերոսի քայլերուն հետքը երկյուղածորեն համբուրեցի...

ԱՂԲՅՈՒՐ-ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Իր քառասուն զինակիցներու հիշատակին համար

Ո՜վ մարտնչումներու և զորության արքայակերպ հսկա,
Ներե՛ որ ակնածությամբ՝ և եղբոր մը պես դեպի քեզ հառաջանամ,
Եվ իմ տառապողի և տարփավորի կարմիր քնարովս այս իրիկուն,
Քու ջատագովանքդ ու փառավորումդ երգեմ քեզ պաշտողներուն
համար։
Թեև իմ շունչս կարող չըլլա քո հաղթանակի փառքդ շեփորելու,
Թեև իմ ընկճվածի մտածումս քու անունիդ կատարներուն երբեք
չբարձրանա,
Թեև հոգիս անարժան ըլլա քու հերոսի հոգիդ խորասուզելու...
Թեև խորհուրդներս ըլլան աղքատ և ձևերս անպաճույճ,
Թեև քեզի համար կառուցած խորանս ըլլա անսուրբ և ծխած
խունկս օտար,

Թեև ես խեղճ լացող մը միայն եղած ըլլամ Հայրենիքիս
մոխիրներուն առջև,
Թեև իմ քայլերս քու քայլերուդ ճամփաները ստրկորեն
անգիտանան,
Թեև բազուկներս ու կուրծքս խուսափած ըլլան քու կռիվիդ
սրբավայրերեն,
Թեև ճակատս մինչև այսօր ընդվզումի կայծ մը հղացած չըլլա...
Բայց ներե՛ պարտվածիս, ներե՛ եղբորդ, որ այս իրիկուն զքեզ
երկրպագե,
Հորիզոններեն քալող քու արձանակերպ ստվերիդ խենթի մը պես
կառչելով,
Ու թող քու հերոսի շունչիդ հովերեն գինովնամ,
Թո՛ղ քու մտածումիդ և անցյալիդ պատկերներեն այլակերպվիմ,
Թո՛ղ քու դյուցազնի արփաթև անունեդ եղեգի մը պես դողդոջեմ,
Թո՛ղ քու հավատքովդ լվացվիմ և քու հրամանովդ
հառաջանամ...
Որովհետև թերևս այս բոլորը, քու աչվներուդ ու կերպարանքիդ
քաղցրությանը հետ հրեշտակային
Ու իդեալիդ ու հաղթանակներուդ մարտապատկերին հետ,
Թերևս իմ արյունս հրավառեն, կորուսյալի քայլերս ուղղեն, թերևս
բազուկներս ու կուրծքս երկաթեն...
Դուն տարիներով ու տարիներով սարսափանքը եղար մեր թշնամիի
խուժաններուն,
Դուն՝ որուն արդարության սուրը եղեռնին վրա շանթի մը պես
կըշողար,
Դուն՝ որուն նայվածքներուն հրամանին տակ բարբարոսները
պաղատելեն կըծնրադրեին,
Դուն՝ որուն քայլերուն և զենքերուն շառաչումեն ռազմագունդեր
նահանջեցին...
Դուն՝ հայրենիքին սրտապնդող արեգակն էիր դժբախտներուն
համար.
Եվ միանդամայն փոթորկանման աղջամուղջը թշնամիներն
ահաբեկող...
Դուն այն կամքի ու հույսի մարգարեն էիր որուն հոգիին ի տես,
Բոլոր Սասունն ու Մուշը ու Բաղեշը հավատքովդ հաղորդվեցան...
Դուն անտիրական ժողովուրդին պաշտպանն էիր ամենազոր,
Դուն՝ քաղաքներուն ու բոլոր երդիքներուն խաղաղությունը եղար,

Եվ անընկճելի հսկողը ճակատագրեն ու ոճիրներեն դատապարտյալ
անմեղ կյանքերուն,
Դուն բարեբեր դաշտն էիր ու պտղատու այգին ոսկեվառ,
Դուն այն ավազանն էիր պայծառ՝ որուն վրա բոլորս տարփանքով
դլխահակ,
Մեր ապագա օրերուն արշալույսներն ընդնշմարեցինք...
Դուն մեկը եղար հիմնաքարերեն ազատության այս ապարանքին,
Որուն վրա այլևս բյուրավոր ու հաղթական բազուկներ,
Անխոնջորեն, մարմարյա զանգվածներ կբարձրացնեն...

Եվ առավոտ մը, մեր հեռավոր ու սևահեր ու տրտում քույրերն,
քու անունիդ քաղցրությանը ի լուր,
Զքեզ երկյուղածորեն և սրբությամբ իրենց ԱՂԲՅՈՒՐԸ
անվանեցին...
Ու հրաշափառ ծերունիներ քու փառքիդ և արևիդ համար,
Հսկումներուն ծնրադրեցին պատարագներու առջև արտասվելեն...
Ու վերջապես դուն, ո՜վ անկորնչելի, բովանդակ ցեղիդ
գոյությանը վրա
Անդորրությունը տարածելեն՝ վերահաս աղետքները կամքիդ
բոցովը ցրեցիր...
Ու քեզի հետ էին ու քեզի հետ ինկան քու քառասուն զինակիցներդ
փառահեղ,
Անոնք, որոնց հոգիներն քու խոսքիդ ու քու արարքիդ ծարավովը
կ'այրեին,
Անոնք, որոնց շունչը քու շունչիդ հովերեն էր որ կը հպարտանար,
Անոնք խնկարկու և շքեղ քահանաներն եղան քու ազատագրման
կրոնքիդ,
Անոնք իրենք իրենց մեջ քու իշխանական անձիդ տիրապետումը
կ'ապրեին,
Անոնք քու գաղափարովդ գինով էին ու քու զորությամբդ
զորական.
Ու գիտցան ու կարողացան ըմբոստացումի առավոտյան մը
զարհուրանքին մեջ,
Իրենց արիական արյունը խառնելու թշնամիին մեղապարտ
արյունին հետ...

Ու դեռ քու ճինդ կար, աստվածային ու մաքրակրոն Սոսեն՝
Որ հրացանդ ու տուրդ իր հոլանի ուսերուն վրա կրեց,

Ու քու հաղթական ու արքայական գլուխդ, ցավի ժամերուդ,
Իր սփոփարար ու գորովագութ ու սիրատոչոր կուրծքին վրա...
Ու հետո եղբայրներդ կային և մանավանդ զավակներդ իրենց
հորը հետ սրբորեն ըմբոստ,
Իրենց արյունը, որ Վարդանյաններու արյունն էր հրաշեկ,
Ազգին համար և արցունքոտ նայվածքներուդ առջև, հպարտությամբ
հոսեցուցին...
Բայց ըսեմ քեզի, ո՜վ եղբայր, ո՜վ հերոս, ո՜վ Աղբյուր,
Ու թող քու ոսկիե ոսկորներդ հողին ծոցին մեջ լուսավորվին,
Թո՜ղ քու ճակատդ իր ցավեն ու հոգնութենեն նոր հույսով մը
ծաղկի.
Ու թող՝ քու վրեժդ ու ցասումդ այլևս առհավետ հափրանան...
Վասնզի քու վայրագ դահիճդ քու զինվորներուդ արդար ձեռքովն
պղնձյա,
Փառքի և պարծանքի անմոռաց օր մը անգթաբար գլխատվեցավ...
Եվ դեռ ուրիշներ բարձրացան, ուրիշներ զինվորվեցան, ուրիշներ
մեռան,
Քու հավատքիդ Գողգոթային վրա, քու լեռներուդ դիմաց, քու
պաշտպանյալներուդ պաշտպան,
Ասոնք Հրայրներն են, Վաղարշակները, Թորգոմներն ու Վահաններն
վեհապանծ,
Որոնց արշավախումբերեն արյունարբու թշնամիները նորեն
դղրդեցան,
Որոնց երևումը քու մահեդ անմխիթար երիտասարդները նորեն
ծառացուց...
Ու անհամարներ կան այսպես, կատաղաբար ու վճռականորեն
ոտքի,
Հողին տարփանքովն արբշիռ ու ազատության մտածումովն
սպառազեն...
Ավա՜ղ, չեմ գիտեր, թե ո՞ւր է, որ իր բոլոր փառավորությամբ
կըհավերժանա,
Քու տիտանյան մարմինդ արևանման գլուխեդ անջատված,
Ո՞ր վրեժխնդիր, ո՞ր քինահույզ և ո՞ր բարեկամ աստղին տակ,
Բայց քու անունդ, ո՜վ զորութենե և հավատքե հրաշացեալ Սերոբ.
Քու անունդ կրտարածվի, կրգահակալվի և կ'արշալույսվի,
Մեր հոգիներուն տրտմությանը և հայրենիքին բոլոր՝ անկյուններուն
վրա,
Ինչպես աստվածառաք և անճառելի և աննվաճ Անունը Հույսին...

ԿՈՎԿԱՍ

Նվեր կովկասահայ ընկերներուս

Ի՜նչ ոսկեղեն դարագլուխ է այս, և շղթաներու ի՜նչ զայրագին
փշրտում.
Ի՜նչ ընդհարում ճակատ ճակատի, և հավատքի ի՜նչ հաղթանակ.
Ի՜նչ երկաթակուռ հարված բռնապետության անխախտելի
օրենքներուն.
Ի՜նչ արյունի հեղեղում քեզ անարժան թշնամիդ վայրագ
շարքերեն,
Եվ դիակի ու բացված լանջքերու ի՜նչ արդարաշա՜ր մեռելակույտ,
Մեր բոլորին վրիժածարավ աչվընեռուն առջև...

Կովկա՜ս, հաղթականորեն դո՜ւն եղար, որ հայտնություններուն
գերագույնը ըրիր.
Քու բազուկներուն հուրին մեջն էր գետնահարող զորությունը
Ցեղին,
Քու մտածումիդ մեջն էր, որ ծնավ կարմիր արևը հուսահատյալ
Հաղթության,
Քու արյունիդ մեջն էր, որ վառեցավ ճշմարիտ արյունը երազված
Ընդվզումին.
Եվ այսպես իրիկուն մը քու զինավառ ձեռքերդ ազատության
աստղերուն նիզակվեցան,
Թշնամի երկինքներուն չարիքի կամարներեն կորզելու
Քիչ մը լույս, քիչ մը կյանք, քիչ մը սեր և քիչ մը երազ՝
Քու խռովյալ սերունդիդ և ի քեզ ակնդետ ու տառապող եղբայրներուդ
համար։

Օ՜, փառք քեզի, և փառք շանթամարտ հպարտությանը քու
լեռներուդ,
Կարծես անոնց ապառաժներուն հավիտենական տարրերեն են
կառուցված՝
Անպարտելի հասակները քու սևահեր ու հրաշվի որդիներուդ,
Քու անտառներուդ ահագնաթափ փոթորիկը գիշերական
Անոնց զինվորյալի կուրծքերուն մեջ իր հսկայական հևքը դրավ.
Քու հովիտներդ Անոնց քայլերուն առջև Հույսին ճամփաներուն պես
կանանչացան...

Եվ քու հողմերդ Անոնց շունչին մեջեն փրկության ժամը
շեփորեցին։
Քու ծոցիդ մեջն է, քու սրտիդ վրան է, քու արեգակիդ տակն է,
Եվ հարազատ և անպարտելի և անվեհեր զանգվածը մեր հինավուրց
Ազգին,
Մեր նսեմացյալ ճակատները այդտեղ էր, որ վերջապես իրենց
մութեն պայծառացան,
Այդտե՛ղ էր, որ սկսավ պայքարի սուրերուն ամենեն արդարը շողալ,
Այդտե՛ղ էր, որ ժողովուրդը իր իրավունքը իր կռուփովը պահանջեց,
Այդտե՛ղ էր, որ Ան չի լացավ, չի ծնրադրեց և իր գլուխը հողին չի
հասավ,
Այդտե՛ղ էր, որ կատաղությամբ զարկավ և հպարտորեն
զարնվեցավ,
Այդտե՛ղ էր, որ արդարություն որոտացողի իր ճակատը
փառակերտ՝
Արևմուտքի աշխարհներուն դիմաց ջահերու պես ցոլացուց,
Այդտե՛ղ էր, որ իր անեծքի և պժգանքի թուքը թագակրին նետեց,
Եվ այդտե՛ղ էր, որ վերջապես Անիրավությունը օր մը ամոթահար
պարտվեցավ,
Եվ քեզի համար, այդտե՛ղ է, որ այսուհետև կոթողները Փառքին,
Մարմար առ մարմար սերունդիդ ձեռքերովը պիտի բարձրանան...
Ջա՜րկ, Կովկա՜ս, ավերակյալ ու արցունքոտ Հայաստանին աչքերը
քեզի կընային.
Ան գիտե, որ քու թշնամիդ ատելությունը իր թշնամիներեն է, որ
կբխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովերուն հետ եկավ
ճամփաներդ սգավորել,
Երբ իր արյունը եկավ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտրտած բազուկը քու կտրիճի ձեռքերուդ ի խնդիր քեզի
դողդոջեցավ,
Թշնամին նույնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի
բազուկեն զարհուրած՝
Կուզե զայն ջախջախել, կարենալ տոնելու համար վերջնական
մահացումը մեր Ցեղին...

Ուրեմն զա՜րկ, Կովկա՜ս, թեև գիտեմ որ քու ասպետական
ձեռքերուդ հարվածին անարժան է նա,

Զա՛րկ, թեև գիտեմ որ քու սուրիդ վեհությունը պետք չէ՛ր
արատավորել
Այդ անբաններու խուժանին թունավոր ու պժգալից արյունեն...
Զա՛րկ, թեև գիտեմ որ հերոսները հերոսներու միայն կրնան
ընդհարվիլ,
Զա՛րկ, սա անարդ ճակատագիրը ջախջախելու և Զարիքն
ըմբերանալու համար,
Զա՛րկ, որովհետև ամե՛ն Հույս զՔեզ կըհուսա և ամեն Ապագա զՔեզ
կըպաղատի,
Զա՛րկ, վասնզի ամեն Ազատություն ու ամեն Արև քու հարվածիդ
կայծերեն պիտի ծնանին.
Զա՛րկ, Քու անթառամ սիրույդ և ատելությանդ չափին
խորությանը համեմատ.
Զա՛րկ, զա՛րկ, ահավասիկ հորիզոնները կրկապույտնան, ահավասիկ
առավոտները կըճեղքվին,
Զա՛րկ, ազատաբեր հարվածիդ շռինդը Մասիսեն ի Տավրոս և
մինչև հայրենիքին խորերը կըթնդա։

ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵՆ

Մահակիր սյուները մթնշաղին մեջեն եղեռնաբար կբարձրանան,
Պայծառ, սրտոտ և նվիրական որդիներուն համար տրտմաթախիծ
Հայրենիքին,
Կարինեն Գաղատիա, Մարզվան և Պոլիսեն Իզմիր և Երիզա...
Եվ ամեն անգամ որ արևակերպ հերոսի մը հոնդյունը հովերուն մեջ
մեռավ,
Հեթանոս խուժանը կատաղորեն վարն էր, հրապարակին վրա, ցեխին
մեջ և ցեխն ապականելով...
Եվ ցնծութենե կոռնար, Ալլահին հրավերեն և ատելության
ծափերեն մոլեգին։
Բայց ո՞վ էր, որ պիտի ողբար քո բարոյականդ, ո՞վ խավարի և
ավերի ժողովուրդ,
Դուն, որ գահիճներուն առջև կծնրադրես և հերոսներուն համար
պակ հյուսել չես գիտեր...

Ո՞վ պիտի սգա քո անբերրի դարերուդ բարբարոս արշավը
Ծլլադաեն ի Հայաստան,
Ո՞վ պիտի կենցաղացնե քու գործած ավերակներդ և
գեղեցկությունները զոր փոշիացուցիր...
Եվ ո՞վ պիտի բերե իդեապաշտության մրրկոտ ջահը, քու կյանքիդ
ճանապարհին վրա, հերոսաբար սարսելու...
Եթե ոչ Հայորդին, որուն հստակ մտածումը, Արևմուտքին
իդեալները ձեր դիմաց ապարդյունորեն ցոլացուց...
Եվ որուն արյունը եկավ նույնիսկ Մարդկության բովանդակ
Պատմությունը թրջելու...
Որպեսզի կարմիր լույսը վերջապես զձեզ թափանցեր, և դժխեմ
սուրին տեղ ձիթենիին ճյուղը բռնեիք...

Ահավոր անկյունե մը անդոհական թիարանին դուռը իր ծխնիին
վրա կըճռնչե...
Կիսամութին մեջ մահաձայն շռինդ մը քարերուն վրա դաժանորեն
կըդարբնվի,
Եվ սվիններ և սուրեր կմերկանան, և հիշոցներ ու նզովքներ
ամեն դի,
Հսկաներ դուրս կ'աշտարակվին, անընկճելի և շքեղ և անվեհեր,
Իրենց ըմբոստի ուսերեն առկախ երկաթները ազատարար զանգերու
պես մեկզմեկու ընդհարելեն...
Դեպի ստույգ մահը կը քալեն, ցեղին ցավովը սպառազեն և մոտավոր
մահեն զորավոր...

. . . . . .

. . . . . .

Ո՞վ գերագույն եղբայրներ, առավոտը քաղցրո՞ւրեն քաղցր է, և
ամենագութ աստղերը կըտարաժամին...
Եվ երկնակամարեն ծորացող լույսը, այսօր ձեր հերոսի
հոգեվարքին համար է սահմանված...
Հիմա հովեր պիտի անցնին տառապանքով հեծեծուն, արյունով
կարմիր, մոխիրով սպիտակ...
Հայրենիքեն փախչող հովեր պիտի անցնին, կարոտով, արցունքով,
և հիշատակով բեռնավոր,
Եվ հողին տրտմութենեն տրտում՝ տատրակները իրենց
փետուրներուն շուշանը վար պիտի թափեն...
Եվ սրարշավ արծիվներ ձեր հերոսի մահագույժը կատարե կատար
պիտի պատգամեն...

Մինչդեռ չարաշուք խուժանը վարեն, թերևս, մա՜հ պիտի որոտա
գաղափարի գոհերուդ...
Եվ ահա կմախակերպ սյուներուն առջև կանգ առին, մահը
ոտքերնուն տակ և հայացքնին աստղերուն,
Եվ որոտումին պես խոսեցան, իրենց բռունցքին մեջ կայծակներ
ծրարած և բառերնուն հետ ապառաժներ շարժելեն...

— Նախ դո՜ւն ետ թավալե, ստրկության և չարիքի արյունախում
խուժա՜ն,
Դո՜ւն, որուն բերանեն դեռ մեր ցեղին արյունն է, որ աչքերնուս առջև
վար կըկաթկթի...
Դո՜ւն, որ մեր հացովն ես սնած ու մեր դարբնած սուրերը մեր
սրտին ուղղած...
Դո՜ւն, որ քու անիմաստ գոյությունդ մեր կենսագործությանը և
մեր ճիգին կըպարտիս,
Դո՜ւն, որ մեր աշխատավոր բազուկին և մեր լուսավոր ճակատին
պտուղները քաղեցիր,
Դո՜ւն, որ դաշտե՜ր մոխրացուցիր և մենք, որ անխոնջորեն զանոնք
արշալույսներու վերածեցինք...
Դո՜ւն, որ մահ սերմանեցիր և մենք, որ ցեղովին գեղեցկություն
և բարօրություն ծնցուցինք...
Դո՜ւն, բարբարոսության անխիղճ գործոն, ե՜տ քաշվե, ե՜տ թավալե,
ե՜տ խավարվե...
Թող մեր վերջին հայացքը պայծառ մեռնի՝ մեր ոգեվարի
գալարումին արժանի չես դուն...
Եվ դո՜ւք, դատավորնե՜ր, դահիճնե՜ր, և դուն, մեռելատի՜պ
Մարդասպան,
Ըսե՜նք ձեզի, այս ժամը ձեր զարհուրանքի ժամն է, Հայրենիքին
կողը նոր հերոսներու երկունքեն կըսարսռա...

Այլևս օրենք չի կա, ազատակամ ու խիզախ մահը, մահն է ձեր
դարավոր բռնության,
Կործանողներու կործանումը փոթորիկներու պես, անջրպետներեն
պիտի հասնի, պիտի գա,
Միայն Գաղափարն է, որ ո՜չ մահ ունի, ո՜չ դատավոր, ո՜չ
գերեզման և ո՜չ դագաղ։
Եվ հիմա զմեզ խեղդող չվանը մեզի տվե՜ք, մեզի տվե՜ք,
դահճապետնե՜ր, դահիճնե՜ր,

Եվ կեցցե՜ն Ըմբոստները, կեցցե՜ն Ըմբոստները, կեցցե՜ն, և
կեցցե՜ Հայաստան...»։

. . . . . .

. . . . . .

Հեթանոս խուժանը անհետացավ, ինչպես դիակներ պղնձե հովերուն
շունչեն հալածական,
Եվ անցնող զեփյուռները իրենց մայրական լացը լացին, անցնող
թռչուններն իրենց երգը երգեցին,
Անցնող ճառագայթներն իրենց ոսկիե պսակը և դափնին
հյուսեցին,
Անցնող եղբայրը և լռին և անխոս հոգիները իրենց զարհուրելի
վրեժները հղացան...
Ու ձեր մարմինները, ո՜վ Ահավորներ, ո՜վ Ճշմարիտներ, ո՜վ
գերագո՜ւյն եղբայրներ,
Ձեր մարմինները օդին մեջ առկախ և ձեր մեծաբաց աչքերը
հայրենի աստղերուն,
Օրերով և գիշերներով, երկու սյուներուն մեջտեղ քինահույզ,
ճոճեցան և ճոճեցան,
Եվ ձեր վերջին խոսքերը, անտառին նման ուռճացավ...
«Կեցցե՜ն Ըմբոստները և կեցցե՜ Հայաստան...»։

ՀՈԳԵՎԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՋԱՀԵՐ

Արյունը և եղբայրակցությունը
ամենամեծ ուժերն են։
ԷՍՔԻԼԵՍ

ՄԱՀՎԱՆ ՏԵՍԻԼՔ

Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...
Քաղաքներուն մեջ և քաղաքներեն դո՜ւրս,
Եվ բարբարոսներն արյուններով կըդառնան,
Մեռելներուն ու ոգեվարներուն վրայեն,

Ագռավներու բազմություններ կ'անցնին վերերեն,
Արյունոտ բերաններով ու գինովի քրքիջներով...
Ցամաքահով մը կիսամեռները զայրույթով կը խեղդե,
Ու պառավներու անձայն կարավաններ
Շտապով կը փախչին լայն ճամփաներեն...
Գիշերին մեջեն արյուններուն ալիքը կըբարձրանա՝
Ծառերուն հետ շատրվաններ ուրվագծելով,
Ու ամեն կողմե սոսկումով կըսուրան հալածված՝
Նախիրները հրդեհվող ցորյաններուն մեջեն...
Փողոցներուն մեջ մորթված սերունդներ կը տեսնեմ,
Եվ ամբոխները անպատմելի սրածությենե դարձող,
Արևադարձային տաքություն մը կը բարձրանա
Հրդեհի տրված ազնվական քաղաքներին...
Ու մարմարի ծանրությունով իջնող ձյունին տակ,
Ավերակներուն և մեռելներուն մենությունը կըմսի,
Օ՜, մի՛կ ըրեք սա սայլերուն ճռնչյունն ահավոր,
Իրենց վրա դիզված դիակներուն տակ,
Ու սգավոր մարդերուն աղոթքներն արցունքոտ,
Որ կածանե մը դեպի համայնափոսերը կ'երկարին,
Մտիկ ըրե՞ք հոգեվարքներուն ձայները վերջին,
Հովին հարվածներուն մեջ, որ ծառերը կըջարդե,
Օ՜, մի՛ մոտենաք, մի՛ մոտենաք, մի՛ մոտենաք,
Չըլլա որ մոտենաք գերեզմանոցներուն և ծովուն,
Կարմիր ջուրերուն վրա նավեր կընշմարեմ հեռուն,
Մեռելներու կուտակումներ անոնց մեջ կան,
Ու ցավեն գալարվող ալիքներուն վրա
Գանգեր ու սրունքներ ինծի կ'երևան...

Մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք
Փոթորիկին գոչը ծովուն ալիքներուն մեջ,
Կոտորա՞ծ, կոտորա՞ծ, կոտորա՞ծ...
Մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք, մտիկ ըրե՞ք
Մահաձայն ոռնումը զարհուրյալ շուներուն,
Հովիտներեն ու գերեզմաններեն ինծի հասնող,
Օ՜, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ,
Կոտորա՞ծ, կոտորա՞ծ, կոտորա՞ծ...

ԱՓ ՄԸ ՄՈԽԻՐ, ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Ա

Ավա՜ղ, ապարանքի մը պես մեծ էիր և շքեղ,
Ու ես՝ երդիքներուդ սպիտակ կատարեն,
Աստղածորան գիշերներու լույսին հետ,
Վարեն, ահեղավազ Եփրատին կ'ունկնդրեի...

Բ

Արցունքո՜վ, արցունքո՜վ լսեցի, որ ավերակ առ ավերակ
Քու լայնանիստ պատերդ իրարու վրա կործանեցին,
Սարսափի օր մը, կոտորածի օր մը, օր մը արյունի...
Շքեղ եզերող պարտեզիդ ծաղկներուն վրա։

Գ

Ու մոխրացա՜վ այն սենյակը կապույտ,
Որուն որմերուն ետև և գորգերուն վրա
Իմ երջանիկ մանկությունս կըհրճվեր,
Եվ կյանքս կ'աճեր և հոգիս իր թևերը կ'առներ...

Դ

Փշրեցա՞վ, ուրեմն, այն հայելին ոսկեծիր,
Որուն եթերային խորությանը մեջ,
Երազներս, հույսերս, սերերս և կամքս կարմիր,
Տարիներով, մտածումիս հետ, ցոլացին...

Ե

Ու բակին մեջ երգող աղբյուրը մեռա՞վ,
Ու կոտրեցա՞ն պարտեզիս ուռին և թթենին,
Եվ այն առվակը, որ ծառերուն մեջեն կըհոսեր,
Ցամքեցա՞վ, ըսե՛, ո՞ւր է, ցամքեցա՞վ, ցամքեցա՞վ...

Զ

Օ՜, այն վանդակին կ'երազեմ հաճախ,
Որուն մեջ գորշագույն կաքավս, առավոտուն,
Արևածագին հետ և վարդի թուփերուն դիմաց,
Զարթնումի ժամուս՝ հստակորեն կըկարգՃեր...

Է

Հայրենի՜ տուն, հավատա՛ որ մահես հետո,
Քու ավերակներուդ սևին վրա իմ հոգիս
Պիտի գա, որպես տատրակ մը տարագիր,
Իր դժբախտի երգն և արցունքն լալու...

Ը

Բայց ո՞վ պիտի բերե, ո՞վ պիտի բերե, ըսե՛,
Քու սրբազան մոխիրեդ ափ մը մոխիր,
Մահվանս օրը, իմ տրտում դագաղիս մեջ,
Հայրենիքս երգողի իմ աճյունին խառնելու...

Թ

Ափ մը մոխի՞ր աճյունիս հետ, Հայրենի տուն,
Ափ մը մոխի՞ր քու մոխիրեդ, ո՞վ պիտի բերե,
Քու հիշատակե՛դ, քու ցավե՛դ, քու անցյալե՛դ,
Ափ մը մոխիր... իմ սրտիս վրան ցանելու...

ԱՐՑՈՒՆ Է ՈՐ ԿԸ ՏԵՍՆԵՄ

Մոռացումներու մոխիրին մեջն է, որ զքեզ պատանքեցի,
Ո՞վ երկբայելի, եսանվեր ու սնոտի Սեր,
Եվ չի հաճեցա հյուսել խարտյաշ եղեգներեն ո՞չ դափնի և ո՞չ
պսակ,
Ու ո՞չ ալ դողդոջ երգ մը, քեզի համար, իմ ազատածուփ քնարես...

Ո՞չ ալ զքեզ դեռ երգեցի, ո՞վ երկինքներու անդորրական կապույտ,

Ո՞չ ալ զքեզ՝ Արեգակ, զորությո՞ւն, կյանքի և աճումի օվկիան,
Ո՞չ ալ զքեզ՝ Արևելք, աստվածներու և քուրմերու ծննդավայր,
Պատմությանց կոթող, իմաստության խորություն և վայելքի
խորան...
Ո՞չ ալ զձեզ՝ Արևմուտքի իդեապաշտ Ոստաններ, ուր Մեծերը
կըծնանին...
Ո՞չ ալ զձեզ՝ մեհենական անտառներ և փլատակվող բարկությունք
սարսափահար ծովերու...
Եվ վարդակարմիր և հոլանի և անբասիր առավոտ,
Կամ ոսկիներու իրիկուն, մեռելական աշնանամուտ և անապատի
անեզրությո՞ւն...

Իսկ օր մըն ալ, երազիս մեջ, Քերթողահայր մը, ինծի ըսավ.
— Կհասկնամ ես քու ցավդ, վասնզի ես ալ կյանքեն եկա անցա...
Ջավա՛կ՝ և գիտես, որ իմ քնարիս պարտեզներեն վարդի թերթեր
հոսեցուցի...
Եվ տարփավորներն անոնց բուրմունքեն գիշերներով գինովցան,
Բայց ծաղիկները գոսացան, ինչպես մեռավ իմ աշունս ալ
մեծափառ...

Ես գինին երգեցի իր ոսկեվառ բաժակին մեջ հրակայլակ,
Եվ բլբուլին հայրենացավը տավիղիս թելերեն սրտիս մեջը
կաթկթեց...
Եունկեր մատուցի՝ մոլեգնորեն պաշտված աստվածներու
պատվանդանին,
Եվ տառապանքս մոռնալու համար, կերպարանքս մոխիրով
պատեցի...

Մարմնին ձևերն երգեցի, գերեզմանեն սերած և գերեզմանին
ընծա,
Ու ծնրադիր պաղատեցա և դողացի շրթունքի մը և երկու աչքերու
առջև...
Արցունքն երգեցի, վերջապես, հոգիներե հորդող և նայվածքներու
հեծեծանք,
Եվ օր մը այսպես մեռա՝ Հեղգությունս ձեր բոլորին բաժին
ձգած...»։
Բայց քու գերեզմանեդ ի վեր, Քե՛րթողահայր, ըսի,
հերոսություններու օրեր հասան,

Ոտքերուս տակ ավերակնե՛ր եմ տեսած, և լուսամուտես դուրս՝
հազարավոր մեռցվածներ...
Եվ սուրե՛ր շողացին... ձգեցե՛ք զիս, ո՛վ տկարության կապանքներ,
դեռ սուրեր կըշողան,
Եվ բանաստեղծի աչվըներս արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն է որ
կըտեսնեն...

ՀԱՅՐԵՆԻ ԱՂԲՅՈՒՐ

Արշալույսիս և հույսիս օրերուն էր, որ զքեզ ապրեցա,
Ո՜վ, հայրենի և քաղցրահամ աղբյուր,
Եվ քու լուսավառ ձայնդ դեռ ինծի կըխոսի,
Իմ հոգնածի և հուսահատի ուղեղիս մեջեն...
Քու աղամանդյա վազքդ հորդառատ,
Հոգիիս խավարշտին ավերակներուն վրա,
Այսչափ ատենե ի վեր հիշատակներս ու անցյալս կուլա...
Չեմ մոռցած զքեզ, ո՜վ հեռավոր ու եղբայրական աղբյուր,
Կըհիշեմ, երբ կուգայի թրջել քու ջուրիդ խորհուրդներուն առջև,
Իմ երջանիկ տղու աչվըներս ու ճակատս պայծառ,
Եվ դուն գորովագութ՝ ազատության մտածումին նման,
Իմ արևս ու կյանքս ու հոգիս կըքաղցրացնեիր...
Երբ իմ թևերս դեռ չէին կոտրտած սա՜ հուսահատության
ապառաժներեն,

Երբ նայվածքներս ուրախութենե կըփակեի,
Երազված հաղթանակներու արեգակին ի տես...
Չեմ մոռցած այն առավակը ոսկիե մամուռով,
Որ քու երգիդ հոսանքին առջև կ'ակոսվեր,
Եվ ես մանկական քայլերովս՝ երազելեն՝
Իրեն ճամփեն տարփանքով ու գինովությամբ կ'երթայի,
Ինչպես կ'երթան անոնք, որ սպասված Հույսին կուզեն հասնիլ...
Բայց դեռ կհոսի՞ս արդյոք, ո՜վ հայրենի աղբյուր,
Այնչափ հստակ, որչափ էր Արշալույսն իմ անցյալիս,
Դեռ վճի՞տ են արդյոք սա ջուրերդ հին օրերու,

Եվ քու ձայնդ դեռ ե՞րգ մըն է, թե աղաղակ մը վրեժի...
Եվ չեկա՞ն արդյոք, ըսե՛, չեկա՞ն, մեր արհավիրքի օրերուն մեջ,
Դառնացնելու քու պայծառությունդ ադամանդե,
Իմիններուս անմեղ արյունեն՝ քանի մը կաթիլ արյուն,
Որոնց հոսանքներեն, ավա՜ղ, ավա՜ղ, իմ մտածումս պարտվածի,
Սուգե ու սարսուռե ու սարսափե անբուժելիորե՛ն խենթացա՜վ...

ԱՐՑՈՒՆՔՆԵՐՍ

Ա

Եվ մաքրաթև երազիս հետ մինակ էի, հովիտներուն մեջ հայրենի,
Քայլերս էին թեթև, ինչպես քայլերը խարտիշագեղ եղնիկին,
Եվ զվարթությամբ կըվազեի, կապույտեն և օրերեն բոլորովին գինով,
Աչքերս ոսկիով և հույսով՝ և հոգիս աստվածներով լեցուն...

Բ

Եվ ահա բարեբեր Ամառն իր պտուղները զամբյուղ առ զամբյուղ,
Մեր պարտեզին ծառերեն դեպի հողը և դեպի զիս կ'ընծայեր,
Եվ ես լռությամբ՝ գեղուղեշ ուռիին ներդաշնակ հասակեն,
Երգերս ստեղծելու համար խորհրդավոր սրինգիս ճյուղը կըկտրեի...

Գ

Կ'երգեի... Ադամանդյա առվակն և թռչուններն հայրենագեղ,
Աստվածային աղբյուրներուն հստակահոս մեղեդիներն անդադրում,
Եվ առավոտյան զեփյուռը, քրոջական գորովներու այնչափ նման,
Այս բոլորն իմ երջանիկ երգերուս թոթովումին կըձայնակցեին...

Դ

Այս գիշեր երազիս մեջ, ձեռքս առի զքեզ, ո՜վ քաղցրախոս Սրինգ,
Շրթունքներս զքեզ ճանչցան՝ ինչպես համբույր մը հին օրերու,
Բայց շունչս՝ հիշատակներու զարթնումեն, հանկարծորեն մեռավ,
Եվ երգիս տեղ՝ շիթ առ շիթ, շիթ առ շիթ, արցունքներս էին, որ
ինկան վար...

ԵՍ ԵՐԳԵԼՈՎ ԿՈՒԶԵՄ ՄԵՌՆԻԼ

Ա

Սպասումիս և Հույսիս քաղցրությանը հետ միանակ էի այդ
իրիկուն,
Եվ Փրկության ու Տառապանքի նժարովը՝ Հայրենիքին բախտը
կըկշռեի...
Երբ՝ հեռակա տանս դուռը, գիշերվան սարսափին մեջեն,
ուժգնապես բախեցին.
Եվ ժպտուն՝ ընկեր մը ներս մտավ, շքեղորեն գեղեցիկ,
եղբայրաբեմ և ահավոր...

Բ

Երիտասարդ էր։ Աչվքներուն կայծը երկնքի աստղերեն էր, որ
կըծորեր,
Եվ հասակին ձևերը մարմարներու զորություններեն էր կերտված...
Մտածումը մարդկային արդարության էջերեն հստակորեն
ջահավառյալ...
Ճակտին վրա իրենց ցավի և բարության ծաղկներն ունեին։

Գ

Մտերմաբար քով քովի, Հայրենիքին տառապանքեն կըխոսեինք,
Իր ծանրախոհ գլուխը սգավոր կիսաստվածի մը արյունոտ սրտին
կընմաներ...
Նայվածքները նայվածքներուս մեջ, նույն ճակատագրին
խորհրդանիշը փնտրեցին...
Եվ մեր տրտում ժպիտները հոգիե հոգի մեղմորեն ճառագայթվեցան։

Դ

Ժամերով լռին էր։ Լռին էի։ Հիշատակի հեծեծանքներ մեր աչքերը
թրջեցին...
Եվ լամպարիս կապույտ լույսը, սեղանիս վրան, այլևս
արյուններու նման վար կըթորար...

Տժգունեցա ես՝ ինչպես երազ մը, որ առավոտին երևումեն
կ'անհետի...
Բայց ինք՝ հերոսատիպ և հպարտ, ձեռքս ձեռքին մեջ՝ ոտքի՝ ինծի
ըսավ...

Ե

— «Այս իրիկուն՝ հավատքի և հրաժեշտի իրիկունս է, ընկե՛ր,
Երիվարս թամբած եմ արդեն՝ և կյանքի ու կռվի տենդեն՝ դուռիդ
առջևը կըվըրնջե...
Եվ տե՛ս հասակես վար անբիծ սուրս մերկ է, մերկությամբը
գերմարդկային վճիռներուն։
Ճակատդ շրթունքիս մոտեցո՛ւր... հավատքի և հրաժեշտի
իրիկունս է, ընկե՛ր։

Զ

Եվ դուն սա՛ մաքրափայլ թերթերուդ վրան, ցեղին ցավը և ցեղին
ուժը բանաստեղծե,
Ապագա սերունդներուն և մեր անցյալին տխրությանն ի նվեր.
Ես որբ մըն եմ և ըմբոստ մը, մնա՛ս բարյավ, կորուսյալներս
փնտրելո՛ւ կ'երթամ...
Քու երգերեդ երգ մը տո՛ւր ինձ, երգ մը, ես երգելո՛վ կ'ուզեմ
մեռնիլ...»։

ՀՈԳԻՍ

Ահավասի՛կ հոգիիս ջահերը, որ վայրկյան առ վայրկյան,
Մտածումս կարեգակեն՝ զանիկա խավարին մեջ սուզելե հետո...
Հոգիս ա՛ն է, որ բյուրավոր անգամ ձեր ամենուն ցավն ապրեցավ,
Ա՛ն է, որ անդունդի մը մեջ՝ իր մոխրին վրա ծնրադիր՝
Հարազատ ու շղթայակապ քույրերու աքսորը կուլա...
Հոգիս այն վա՛յրն է, ուրկե արյունոտուշտ լուսին մը բարձրացավ
Անմեղներու կոտորածեն ծովացյալ դաշտի մը վրա...

Ու ա՛յն հողմակոծ անտառն է, որուն ավազաններուն շուրջ՝
Օ՜, եղբայրական արյունի հեղեղներ կը հոսին...
Հոգիս այն երկիրն է, ուր որբ և սևահեր տղաներու բազմություններ,
Անարդար սուրերու շողյուններեն հալածական,
Աղեխարշ ճիչերով փլատակներու մեջեն կը փախչին...
Հոգիս այն երկինքն է, ուրկե հույսին բոլոր աստղերը թափեցան,
Ու այն մարմարակերտ տաճարն, ուր կյանքը ծունկի եկած՝
Խելահեղորեն Ամենագութ մահը կը պաղատի...
Հոգիս Ավետարան մըն է, որուն վրա տժգույն ու հուսահատ ձեռքեր
Անկարելի քավության մը համար, ապարդյունորեն, դեղին թերթեր
կը թղթատեն...
Հոգիիս մեջ երբեմն արշալույսներ կ'արյունին,
Եվ պաղատող աղաղակներու անասելի համանվագ մը կ'որոտա.
Հոն սրածումներու աշխարհը մը կա, ուր սարսափահար կյանքեր,
Ձեր շարժումին, ձեր օգնության, ձեր ձայնին կը սպասեն...
Հոգիիս մեջ հերոսներու ծնունդ մը կա և մեռելներու թափոր մը
միանգամայն...
Հոգիս այսօր անձրև մըն է մորթազերծված դիակներու վրա,
Ու նայվածք մըն է, որ բոլոր անտիրական դագաղները կը թափանցե,
Հոգիս բարկության ու ցասումի հով մըն է այս գիշեր,
Որուն վազքին տակ արյունարբու ռազմագունդերը պիտի
նահանջեն...
Ու բոլոր գերեզմանոցները, իրենց խորերեն, ահագնաբար,
Ձեր նայվածքներուն առջև՝ դեպի վե՜ր պիտի շրջին...
Որպեսզի վերջապես ճանչնաք, ո՜վ անկարեկիր ներկաներ,
Այն բոլոր մարտիրոսները, որ ձեր բոլորին համար,
Անձնվիրության և կամքի առավոտ մը ինկան...
Հոգիս մահատեսիլ աշուն մըն է, որ այս ամենուն վրա
Իր մշուշը և իր տերևներուն հոգեվարքը կը սրսկե.
Բայց հոգիս և Կարմիր Հուսահատ մըն է, որ անընկճելի Հույսին
համար՝
Առաքյալի մը պես դեպի արգասաբեր Մահը պիտի թևե...

ՔՆԱՐԻՍ ԼԱՐԵՐԸ ԴԵՌ ԹԱՑ ԵՆ

Ա

Դո՜ւն, դառնապես տրտում քույր, և դո՜ւն, պատուհասյալ պարմանի,
Քաղցրորեն երկուքդ մեկ բանաստեղծի շրթունքներուս հառաջացեք,
Ճշմարիտ է, որ անսուտ բերանս ձեր ճակտին, որբ վարդերուն վրա՝
Հեռուներեն հասնող եղբոր մը կրակե կարոտն է, որ պիտի
համբուրե...

Բ

Տարիներով և խավարներով ձեր մահացու ցավն իմ կարմիր ցավս
եղավ,
Ու տառապանքիս տիեզերքին մեջ՝ ձեր արցունքն իբր անձրև,
հոգիիս վրա կ'տեղար։
Ձեր հեծեծանքներն մահվան հովերուն պես մենավորի լուսամուտիս
փեղկերը կոտրտելու եկան...
Եվ անհնարին սոսկումներ ապրեցա ա՜ն անտառին մեջ, որ ձեր
հայրերուն ոսկորներեն էր կազմված...

Գ

Բարբարոսներեն թափված արյունը, կյանքիս առջև, այն
կմախքատեսիլ ավազանն էր,
Որուն խորերը, ես քանի՜ անգամ մաքառումի և ուխտի արդար
ընկերներուս հետ,
Իմ նորավարժ քնարս, գրիչս, սուգերու սրինգս և անբիծ սուրս
արծաթյա,
Եկա, եղերականորեն ահավոր մկրտության մը համար, անոր մեջը
թաթխելու...

Դ

Այսպես, իմ ճշմարտասեր հոգիս, ձեր ճշմարիտ ցավին համար
կարմիր մատյաններու մեջը խամրեցավ...
Եվ քանի՜, քանի՜ արեգակներ մեռան, բայց քնարիս լարերը դեռ
թա՛ց են, եղբայրնե՛ր, դեռ իր լարերը թա՛ց են,

Ա՛հ, գթացեք մատվիներուս, և թո՛ղ երգերս մրրկին, թո՛ղ
արցունքս թորա, թո՛ղ շեփորս հերոսներուն իր հրավերն որոտա...
Որովհետև Արդարության առավոտը դաժանորեն հեռու է, և
իդեալիս երկինքներն՝ անհատակ...

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՍ

«Թարքիշներս կըրշվին արտասուքի կաթիլներով,
Բայց չե՛մ ուզեր զանոնք թափիլ, կանգ մի առներ».

ՍՈՒԳ

Դուն թախծադեմ անծանոթս կամ դուն հոգիի բարեկամ,
Որ խրախճանքի այսօրվան ճամփաներեն կանցնիք,
Ունկնդրեցե՛ք սա մենության և սուգի խոսքերուս։
Գիտեմ, որ ձեր անմեղ ոտքերը դեռ թաց են ձերիններուն արյունեն...
Եվ ազատության այն վսեմ վարդը, որ ձեր ցեղին ցավերեն՝
Այս դժբախտ երկնքին տակ, օր մը, վերջապե՛ս ծաղկեցավ,
Օտար ձեռքեր հասած են՝ ծիծաղելով զայն քաղելու...
Բայց թո՛ւյլ տվեք, որ անոր աստվածային բուրմունքեն
Անխտիր՝ ամեն մարդ, երկյուղածությամբ և լիապես գինովնա...
Թո՛ւյլ տվեք, որ ձեր մուրճերովը քանդակված Արդարության
դիցուհիին առջև,
Եվ հեռավորը և դրացին և ապերախտը գան՝ իրենց խունկը ծխելու։
Թո՛ւյլ տվեք, ո՛վ հպարտ և հերոսական սերմնացաններ,
Որ ձեր ոսկիե արորներեն բուսած հասկերը բեղուն,
Ուրիշներ, ձեր մանգաղներովը, իրենց համար, զանոնք հնձեն...
Որովհետև գիտեմ որ, եթե անգետ Ջարիքեն է, որ հալածվելով
կըմեռնիք,

Բայց միանգամայն դուք ծնած եք իմաստուն և բերրի Բարիքներուն
համար։
Խրախճանքի պողոտաներեն, Տառապանքին պես տրտո՛ւմ, անցե՛ք,
Եվ խնայեցեք երջանիկներուն, որ չի կրնան ձեր աչքերուն մեջը
կարդալ
Այն զարհուրելի պատկերը, որ դիակի ու մոխիրի ցոլացումներն
ունի...
Խնայեցեք անցորդին՝ արդար կամ ոճրապարտ, որ ձեր աչքերուն չի
նայի...
Վասնզի հայ հոգիին տառապանքը միշտ հայ նայվածքներուն մեջը
գտած եմ ես։
Այսպես խրախճանքի քառուղիներեն բոլորդ մեկ անցեք.
Բայց զվարթության ո՛չ մեկ բիծ և ո՛չ մեկ շիթ արցունքի,
Պետք չէ՛, որ գան մեր տրտմության վեհությունը պղծելու...
Որովհետև պարտվածին համար արցունքը վատություն է,
Եվ հաղթողին համար սնոտի մպիտը՝ կնճիռ...

Դուն, շղարշներովդ մահագուժորեն գիշերված հայ գեղուհի,
Եվ դուն, պարմանի, որ դիմագծեգ ցեղիդ սուգը սրտիդ մեջը կըհոսի,
Առանց զայրույթի և շտապով սա՛ ճամփաներեն անցե՛ք,
Պիտի ըսեք՝ թե որչա՜փ լույս է այս և ի՜նչ հեգնական մեռելաթաղ...
Ի՜նչ խաժամուժ և ի՜նչ պարեր, ի՜նչ ցնծություն և ի՜նչ խնջույք
ամեն դի...
Մեր կարմիր պատրանքները, հաղթանակներու դրոշներն են կարծես,
Եվ մեր վճիտ եղբայրներուն սակրները սրինգներու
վերածված...

Ահավասի՛կ, որ անոնց մեջեն ուրիշները արտասվոր երգեր է, որ
կ'երգեն...
Բայց մի՛ սարսափիր, ինձ անծանոթ քույր կամ ճակատագրի
եղբայր,
Եվ ճշմարտության աստղերը զննելով՝ հուսադրվե՛ և հառաջացի՛ր,
Կյանքին օրենքը դեռ այսպես է, մարդերն չի կրցան մարդերն
ըմբռնել...
Եվ այս իրիկուն ձեր տանը դուռներեն, թշվառորեն աղքատ կամ
մարմարակերտ,
Բոլորդ մեկ, արեգակին մահեն առաջ, ձեր սեմերեն ներս մտե՛ք,

Եվ անդորրությամբ փակեցե՛ք դավաճան փեղկերը ձեր
պատուհաններուն,
Փակեցե՛ք զանոնք անկարեկիր և մեղավոր Ոստանին դիմաց,
Փակեցե՛ք զանոնք և մարդկության և ձեր աստծուն երեսին...
Եվ գիտեմ, որ ձեր հստակ հոգիին մեկ ահավոր հեծեծանքեն,
Ձեր սեղանին վրա վառող ճրագն իսկ պիտի մարի...

ՊԱՐԸ

Եվ արցունքներն իրեն կապույտ աչքերուն մեջ խեղդելով,
Մոխրագաշտի մը վրա, ուր հայ կյանքը դեռ կըմեռներ,
Այսպես պատմեց մեր սարսափին ականատես Գերմանուհին.

Այս անպատմելի պատմությունը, որ ձեզ կ'ընեմ,
Ես իմ անգութ աչքերովս այս մարդկային,
Իմ անվտանգ տնակիս գեհենադիր լուսամուտեն,
Ակռաներս կրճտելով ու զայրույթես զարհուրելի...
Այս աչքերովս անգթորեն մարդկային, ես տեսա։
Մոխրակույտի վերածված Պարտեզ քաղաքին մեջն էր։
Դիակները դիզված էին մինչև կատարները ծառերուն,
Եվ ջուրերեն, աղբյուրներեն, առուներեն, ճամփաներեն,
Ձեր արյունին կարկաչյունն ըմբոստաձայն...
Դեռ ականջիս իր վրեժն ահավասիկ որ կըխոսի...

Օ՜, չի սոսկաք երբ անպատմելի պատմությունս ձեզի պատմեմ...
Թող մարդերը հասկնան մարդուն ոճիրը մարդուն դեմ,
Երկու օրվան արևին տակ, գերեզմանին ճամփուն վրա
Մարդուն չարիքը մարդուն դեմ,
Թո՜ղ աշխարհիս բոլոր սրտերն իմանան...
Այդ մահաշուք առավոտը կիրակի էր,
Դիակներուն վրա ծագող առաջին և անօգուտ կիրակին,
Երբ սենյակիս մեջը, իրիկունեն մինչև արշալույս,
Դաշունահար աղջկան մը հոգեվարքին վրա ծռած՝
Արցունքներովս անոր մահը կըթրջեի...

Հանկարծ հեռուեն սև խուժան մը անասնական
Քսան հարսներ իրենց հետ՝ մոլեգնորեն մտրակելով,
Շվայտության երգերով, այգիի մը մեջ կանգնեցան։

Ես կիսամեռ խեղճ աղջիկն իր խշտյակին վրա լքած,
Դժոխահայաց պատուհանիս պատշգամբին մոտեցա...
Այգիին մեջ սև խուժանն անտառվեցավ։
Վայրենի մը՝ հարսներուն— «Պետք է պարե՛ք, որոտաց,
Պետք է պարե՛ք, երբ մեր թմբուկը հնչե»։
Եվ մտրակներն սկսան մահակարոտ հայ կիներուն
Մարմիններուն վրա կատաղությամբ մը շառաչել...
Քսան հարսներն ձեռք ձեռքի, իրենց շուրջպարն սկսան...
Աչվքներեն իրենց արցունքը վերքերու պես կըհոսեր,
Ա՜հ, ես ո՞րչափ նախանձեցա իմ դրացի վիրավորիս,
Որովհետև լսեցի, որ հոնդյունով մը հանդարտ,
Տիեզերքն անիծելեն, խեղճ հայուհին գեղադեմ,
Իր տատրակի շուշան հոգուն դեպի աստղերը թև տվավ...
Ունայնորեն կռուփներս ամբոխին դեմ շարժեցի։
«Պե՛տք է պարեք, կ'ոռնար խուժանը մոլեգին,
Մինչև ձեր մահը պե՛տք է պարեք, դո՛ւք անհավատ գեղեցիկներ,
Կուրծքերնիդ բաց՝ պե՛տք է պարե՛ք, մեզ ժպտելով և անտրտունջ..
Հոգնությունը ձեզ համար չէ, ո՞չ ալ ամոթը ձեզ համար,
Ստրուկներ եք, պե՛տք է պարեք, և մերկանդամ և հոլանի,
Մինչև ձեր մահը պե՛տք է պարեք պագշատորեն և ցոփությամբ,
Մեր աչքերը ծարավի են ձեր ձևերուն և ձեր մահվան...»։

Քսան հարսներն գեղադեմ, գետին ինկան պարտասած...
«Ոտքի՛ ելեք», գոռացին, մերկ սուրերնին օձերու պես շարժելով...
Հետո մեկը սափորով մը քարյուղ բերավ խուժանին...
Ո՜վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ...
Քսան հարսներն շտապով այդ հեղուկովն օծեցին...

«Պե՛տք է պարեք, որոտաց, ահավասի՛կ ձեզի բուրմունք մը, որ
Արաբիան իսկ չունի...»,
Հետո ջահով մը բռնկցուցին մերկ մարմինները հարսներուն։
Եվ ածխացած դիակները պարին մեջեն դեպի մահը գլորեցան...

Զարհուրանքես՝ պատուհանիս փեղկերը՝ փոթորկի մը պես փակելով՝
Իմ մենավոր մեռյալիս մոտենալով հարցուցի.
Ինչպե՞ս փորել այս աչքերս, ինչպե՞ս փորել, ըսե՛ ինձ...
. . . . . .

ԼՈԳԱՆՔԸ

Իր մարմինը սպիտակ էր...
Ինչպես է ձյունն աստվածընծա Տավրոսներուն,
Եվ իր երկու աչքերուն մեջն ահավոր՝
Բարբարոս սեր մը անհագուրդ կըվառեր։
Բայց սևահեր այս գեղուհին ամուլ էր,
Ստինքները դեռ չոր էին մաքուր կաթեն,
Եվ իր կողերեն չէր ծնած այն պտուղը ազնվական կամ
ոճրագործ՝
Որուն համար բոլոր մայրերը կըսպասեն...
Ու գինովությամբ, բայց վայրապար կըցանկանար
Այրություններ խոժոռաղեմ և արգավանդ,
Բնության դեմ հաղթանակող։
Դաժանագեղ կնությունն այս կ'անգիտանար,
Թե մեծ օրենքը իր երկաթե գաղտնիքն ունի...
Բայց կախարդուհի մը չարաշուք,
Ավերումի այս օրերս, իրեն ըսավ...

— Որպեսզի քու ամլությունդ ադամանդյա,
Պայծառորեն և առհավետ պտղավորվի...
Եկուր քեզի հին իմաստուն Դարերուն
Միակ դարմանը ես իմ ձեռքովս մատուցանեմ։

Եվ անգթության ավանդավեպը պատմեց...
Մինչ վհուկը՝ գեղեցկուհվույն աչքերուն մեջ՝
Իր աչքերը շանթերու պես, մոլեգնությամբ մը կըմխրճեր։
Հետո բերին մեր հանդարտ գյուղեն հեռավոր՝

Յոթ կույսեր վեշտասնամյա
(Ա՜հ, ճակատագիրնիդ կրտեսնեմ, որ եղերականորեն նման է,
Ո՜վ, խե՜ղճ քույրերս, այսչափ ատեն իմ մահերգած ճակատագրիս),
Այսպես բերին մեր հանդարտ գյուղեն առաքինի և հեռավոր՝
Յոթը կույսեր վեշտասնամյա՝ մահվան դողեն դողդոջուն,
Ներս մտցուցին զանոնք լոգարանի մը մարմարակերտ դռներեն,
Ուր արդարության արեգակին ճաճանչները վերեն,
Արցունքի պես անոնց վրա կ'անձրևէին...
Եվ շտապով տախտակե տաշտ մը հոն դրին,
Ու անոր շուրջը զարդարեցին շուշաններով սպիտակ,
Մինչդեռ հեռուն, վարագույրի մը ետևեն,
Կրոնավոր մը մութ աղոթք մը կըկարդար...
Հանկարծ այսպես՝ գեղեցկուհին զվարթությամբ մը զարհուրելի,
Իր ոսկեհյուս շղարշները լայնածավալ,
Իր ուսերեն իր նաժիշտին ուսերուն վրա նետելով՝
Խաղաղությամբ մը մերկացավ...

Սև դահիճները դաշույններով շողարձակ,
Անխղճորեն խողխողեցին յոթը կույսերը մեր գյուղին...
Եվ երբ ամուլ գեղեցկուհին, աչվքները դեպի երկինք,
Տաշտին մեջը արձանացած՝ ոտքի վրա կանգնեցավ,
Հայ կույսերուն տաք արյունը վարդակարմիր...
Սկսավ իր մերկ և անխռով ոտքերեն
Մինչև իրեն ամուլ արգանդը բարձրանալ...

ԿՈՒՅՐԸ

Ցուպին ծայրովն արյան ծարավ ամբոխին մեջ իր ճամփան
ճեղքելով՝
Սպիտակով պատմուճանված, մեռելաքայլ՝ անոնց առջևը
կանգնեցավ...
— Ինձ նայեցեք, ես օտար չե՞մ, ես ալ ձեզ պես հավատացյալ,
Ուխտունամյա ծերունի՝ խավարեն դուրս ես հորիզոն չունեցա...
Փայտիս վրա խարխափելով, աշխարհներ ալ եթե քալեմ,

Ինծի համար կեցած տեղես տարբերություն բնավ չունի։
Ամեն վայելք ձեզ համար է, կրնաք վճռել և պատժել,
Եվ ձեր զոհը ձեր ձեռքովն իսկ դուք կարող եք մորթազերծել...
Ինչ որ օրենքը կըհրամայե արդարության այս օրերուն։
Ձեմ գիտեր թե ի՛նչպես է կերպարանքն իսկ անհավատին,
Ո՞ր հրեշին, ո՞ր զեռունին, ո՞ր սև օձին կընմանի,
Ո՜րչափ կուզեմ ձեռքերովս գոնե մեռել մը շոշափել...
Մոխիրներուն հոտը առի, հազար ապրի՜ք, օրհնյալներ,
Քալած պահուս մուճակներս հանկա՜ծ հողին կըկպչին...
Ես գիտեմ, թե ինչ է այդ... արդեն հոտեն կըճանչնամ,
Բայց մեղավորին այդ արյունը որչափ տա՜ք է, ճամփաներեն
կարծես կրակ կըհոսի...

— Ինծի ըսին, թե դուք արդեն անոնց տներն ամբողջովին այրեցիք...
Հետի՛ն դաշտն ալ, հետի՛ն գոմն ալ, խրճիթներուն հետ և գյուղերուն
ու քաղաքին...
Բայց ե՞ս ինչպես վայելեմ, ծնած օրես այս քարացած կոպերովս,
Միայն ականջս է երջանիկ, փառք Աստուծո, որ գոնե,
Ութ օր է ի վեր կ'իմանամ հոգեվարքի, հեծեծանքի աղաղակներն՝
Որ ստապաշտ բերաններեն, ձմռան ծովուն մրրկին պես...
Շնորհիվ ձեր հաղթության, մեր քաղքին մեջ բարձրացավ.
Միայն ականջս է երջանիկ, մնացյալն ինձ ցնորք է...
Որչափ կուզեմ ես ալ ձեզ պես սուր մ'ունենալ և շարժել զայն.
Մանուկներո՜ւն, մե՜րկ կիներո՜ւն, ինձ տարեկից ծերերո՜ւն մեջ,
Որչափ կուզեմ սուր մը շարժել և եղեգի պես հնձել զանոնք...
Ամեն վայելք ձեզ համար է, միայն ես եմ որ կուրությանս մեջ
լողալով,
Ես ինքզինքս իսկ անկարող եմ գոնե բոպե մը դիտելու։
Աղբյուր չի կա՞ այս կողմերն, որ աչքերս քիչ մը լվամ,
Բարկութենես աչվրներս բացվի՜լ կ'ուզեն. տեսնե՜լ կուզեմ,
տեսնե՜լ կ'ուզեմ...
Ո՞ւր եք դիզած դիակները... եթե զավակս այստեղ ըլլար,
Անտարակույս իր ծերունի հորը վրան պիտի գթար,
Բայց անցյալ օր ես զինքը՝ ոտքեն գլուխ զինել տալով,
Օրհնությամբս օծելե ետք՝ սուրբ կռիվին ղրկեցի,
Չի կա՞ ձեր մեջ, հազա՜րներ եք, բարեկամ մը, դրացի մը, որ այսօր,

Իր դաշույնը ձեռքիս մեջը դնելով՝ խարտյաշ աղջիկ մը ինձ
հանձներ...
Ես ալ կուզեմ բարիքին մեջ բաժին առնել, կույր ըլլալս պատճառ
մը չէ...
Որ սուրբ օրենքն անարգելով՝ արքայութենես ալ զրկվիմ,
Խարտյաշ աղջիկ մը ինձ բերեք, որուն մարմինը թարմ ըլլա,
Աղավնիի մսին նման... իմ ձեռքերս դեռ անվարժ են...
Խարտյաշ աղջիկ մը, լսող չի կա՞, և դաշույն մը աջ ձեռքիս...

Պահ մը հետո երիտասարդ մը՝ հալ կույսի մը ծամեն բռնած,
Կույր հրեշին ակնածանքով մը մոտենալով, եկավ ըսավ...
— Զավակդ իմ բարեկամս է և հայրս ալ քեզ հին ծանոթ,
Թերևս դուն իմ ձայնես կարենաս զիս գուշակել...
Ժամանակով ես Սուրբ գիրքեն ընթերցումնե՜ր ըրած եմ քեզ...
Այս աղջիկն ես ինձ համար ընտրած էի սա մոտակա գյուղերեն,
Բայց հավատքի դեռ չեկավ, ու կըմերժե իմ կինս ըլլալ...
Եվ աչքերեն ես կը սոսկամ, կրնա օր մը, գիշեր ատեն, անկողնիս
մեջ զիս խեղդել...
Հազա՜ր ափսոս, որ կույր ես, բայց ձեռքերովդ իր մարմինը նախ
շոշափե,
Տե՜ս իր ձևերն մանկամարդի, մտրուկի մը պես դեռ կրակոտ,
Ահավասիկ քու առջևդ է մարգագետնին վրա մերկ.
Ծունկի նստե ճիշտ այդտեղ, ահա՜ այդպես, ծալապատիկ.
Հանգի՞ստ ես հոգ,
Աջ ձեռքդ ինձ երկարե, ահավասի՛կ դաշույնս, ա՜հ, կըտեսնեմ, որ
անվարժ ես,
Չէ՛, այդպես չէ որ կբռնեն. բթամատդ բունին վրա,
Բոլոր ուժովը բազուկիդ, մեկ հարվածը ես կըհուսամ պիտի բավե...

Երբ մերկ մարմինն աղջկան, ալիքի մը պես կատաղի, մարգին վրա
կըփրփրեր...
Հանկարծորեն կարմիր ձեռքեր զայն բռնեցին, որբ կարապին
ճերմակ թռիչն այդ՝ հողին գամող՝
Եվ լաչակովն իր սգավորի, անոր կապույտ նայվածքները կապելով...
Ձեռք մըն ալ եկավ, բերնին վրա, կույսին ճիչերն կոկորդին մեջ
մեռցնելու...
Եվ ծերունին թեզանիքներն վեր շրջելեն՝ խռպոտ ձայնով մը ըսավ.

— Հազար ապրի՛ք։ Կարծեմ թե ես պատրաստ եմ։ Արդյոք
դաշույնս կը դողա՞...
Սիրտը ո՞ւր է, զավակներս, ո՞րչափ կ'ուզեմ սրտին ուղղել, ո՞ւր է
սիրտն այս աղջկան...

— Սպասե՛, որ ձեռքդ ճշտեմ, ահավասիկ, ձախ ստինքեն քիչ մը
վա՛ր...

. . . . . .

Եվ աստվածային արյունն անտիրական հայ աղջկան...
Բոցավառված ծաղիկներու փունջի մը պես,
Երբ իր սրտեն դեպի դեմքը դժոխածին ծերունիին ժայթքեցավ,
Թշվառական ութսունամյան ոտքի ելած՝ ամբոխին մեջ աղաղակեց՝

— Ա՜խ, կարծեմ թե լույսը տեսա՜, ես այսօր իսկ լույսը տեսա...
Կարծես կոպերս կը բացվին. մեռա՞վ աղջիկը, շո՛ւտ ըսեք,
Իմ քարացած աչվրներուս սև թաղանթն անոսրացա՜վ...
Ահավասիկ թե ի՜նչ է բարիքը. զավակներս, արդյոք լո՞ւյսն էր որ
տեսա...

ԹԹԵՆԻՆ

Ու ինչպիսի՜ անողոք մխիթարության մը համար էր որ,
Ձեռքերնուս մեջ, ձեզմե հասած, քանի մը ծրար ցնցոտիներ,
Երկու ընկեր մեռած գյուղե մը, ուրիշ գյուղ մը կը քալեինք...
Երբ ճամփուն վրա պատահեցանք ծեր կնոջ մը կորաքամակ,
Որ հացի պարկ մը ուսեն կախ և ցուպի մը վրա հենած
Ելավ մեզի, իր ցավին հետ, դանդաղությամբ մը մոտեցավ։

— Առավոտեն մինչև հիմա մինավորիկ կը թափառիմ,
Այրած տանս մոխիրները փնտրելու...
Ութ օր եղավ, որ մեր գյուղը դրացիներն ավերեցին,
Իմ մեծ որդիս կռիվին մեջ իբր կորիճ մեռավ, ըսին.
Բայց վերջին լոգանքն ես ըրի, առվակի մը ջրերեն...
Եվ հին օրերու դրացի, բայց այսօրվան թշնամիներ,

Ծերությանս, աղերսանքիս, արցունքներիս գթալով,
Բարեկամներու նման— ալ բարեկամ չէ՛ր մնացեր— ելան եկան,
Նարնջենիի այգիի մը մեջ, օր մը հետո, անոր դիակը թաղելու...
Աչքերուս մեջն ալ արցունք չի մնաց որ՝
Հոգեհատոր թոռնիկիս մահը՝ նստած ես լայի...
Ութ օր է, որ խենթի մը պես վրանե վրան կը շրջիմ...
Ո՛չ քուն ունիմ, ո՛չ արթուն, միայն զինքը կ'երազեմ...
Թո՛ղ աշխարհս քանդեին, բայց թոռնիկս ինծի մնար...
Թոռանս տեղը զի՛ս մեռցուցեք, զի՛ս մեռցուցեք, գոռացի, լսող
չեղավ...

Աղաչանքիս լսող չեղավ... և կիսամեռ պատանին...
Դիակներու սահմանված սայլին մեջը նետելով՝
Վանքին ճամփեն հեռացուցին, ա՜խ իր աչքերը, իր աչքերը դեռ
կը տեսնեմ...
Երկար ատեն աչքերը բաց, հոգին տալով, ինձ նայեցավ,
Սայլին ձայնը դեռ կ'իմանամ, ճռնչելով կը թավալի...
Զարհուրելի հեծկլտուք մը կնոջ մարմինը ցնցեց,
Բայց իր արցունքը կուլ տալով, ինձ նայելեն, դեռ ըսավ.

— Ա՛լ տուն չի կա, տնվոր չի կա, մահվանս հետ մենակ եմ,
Պետք էր տեսնել իմ տնակս, ի՜նչ բարիքի օջախ էր...
Գառնուկներուս, հավերուս և աքաղաղիս հետ ճերմակ,
Բոլո՛ր մեկ, բոլո՛ր մեկ գոմին մեջն այրվեցան...
Աշնան համար, ամբարիս մեջ, ափ մը ցորեն ունեի,
Եվ երդիքիս կտուրին տակ մեղուներու երկու փեթակ,
Այս բոլորը, օրվան մը մեջ, մեր գյուղին հետ վառեցին...
Բուխերիկս, շինված օրեն ամեն առտու կը մխար...
Ի՜նչ կ'ուզեին այս բոլորեն, ի՜նչ կ'ուզեին, դուք ըսեք...
Աջ կողմերնիդ նայեցեք, ահավասիկ ավերակը, տնակիս.
Տեսե՛ք աղբյուրս, որ քարուքանդ պատին տակեն առու կազմած...
Ծաղիկներուս փոխարեն, մոխիրնե՛րս ջրել կ'երթա...
Բայց այս բոլորը թոռնիկիս քով ի՞նչ կ'արժեն...
Ա՜հ, երկու քարեր տվեք ինծի, որ ձեռքս առած գլխիս զարնեմ...
Թթենիս ալ կտրտեր են, մահը գլխիս, թթենիս ալ կտրտեր են.
Ես թոռանս ծնած օրը տնկած եմ զայն, թթենիս ալ կտրտեր են.
Վա՜խ, իր հիշատակն, հասակին պես աչքիս առջև կը բարձրանար,
Յոթը տարին նոր բոլորեց, և ես արդեն իր շուքին տակ...

Գրկիս մեջ թոռնիկս առած իրեն օրորը կ'երգեի...
Թթենիս ալ կտրտեր են, հո՛ս նայեցեք, իր արմատեն թթենիս ալ սղոցեր են...
Դիակներուն սայլը ո՞ւր է, դիակներուն սայլը ո՞ւր է, ես իր ճռինչը կ'իմանամ...
Ես ալ կուզեմ մեջը նետվիլ, թոռանս քով, սայլին մեջը դեռ տեղ մը կա՞ր...
Տեսարանն ահավոր էր։ Թշվառ կինը թթենիին սղոցված ճյուղին փաթթված...
Գետին ինկավ.. Ես չի կրցա իմ հեծեծանքս զսպել...
Մինչ՝ մոխիրներու և մահերու դանթեական ճանապարհին՝
Ինձ ուղեկից ընկերուհիս՝ մանկան մը պես սկսավ լալ...

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ

Տասներկու կոչ տարագիր հայության

ՀԱՅՐԸ ՀՈԳԵՎԱՐՔ

«Վերջին նամակն ինծի տվեք, որ արցունքներս սրբե՛մ...
Ա՜հ, ուրկի՞ց է, որ կրխիք, ո՞ր անդունդեն, ո՞ր աղբյուրեն...
Դո՛ւք մարգարտի ու մարմարի հորդահոսան փշրանքնե՛ր,
Ալ աչքերուս խեղճ կոպերն խոցոտեցան,
Ամբողջ կյա՜նքս, ամբողջ սրտե՛ս, ամբողջ ուղե՛ղս այսօր լացի...
Վերջին նամակն ինծի տվեք... որ աչքերս ձեզմե ծածկեմ...
Մթնշաղի հավախոսին ո՞վ արթուն է ձեր մեջեն.
Ա՜հ, արշալույսին բարությո՜ւնը, բարությունն այս առավոտ,
Սոխակները սիրահարի պես՝ բոլորը մեկ կուլային,

Ու վանդակին կապույտ կաքավը ձյունին կարոտը կ'երգեր...
Բայց ինչո՞ւ դեռ չի բերիք մեր պարտեզին վարդերեն,
Որդուս ձեռքովը տնկված վարդատունկեն քանի մը վա՜րդ...
Ու թերթիկներն այդ շուշան ճակտիս վրան թափեցե՛ք.
Գլխուս վրա՜ն, մազերո՜ւս մեջ, սրտիս վրան սրսկեցե՛ք.
Ա՜հ, կարծես թե հրեշտակի փետուրներ են, որ կըթափին...
Ի՜նչ սրբազան բուրմունք է այս, արքայության հոտը կ'առնեմ.
Սրսկեցե՛ք, սրսկեցե՛ք, ալ պատանքի պետք չունիմ...
Սրսկեցե՛ք, ես իր հոգին ու հասակը հստակությամբ կըտեսնեմ...
Ահավասիկ առջևս է, զիս չե՞ս ճանչնար, մոտեցիր, իմ սիրեցյալ զավակս,
Ես քու հա՜յրդ եմ, բազուկներուս մեջը նետվե, բերանդ ինձ մոտեցո՛ւր,
Քու ծարավեդ ծերացեր եմ, ես քու հայրդ եմ մահաջերմես դողդոջուն...

. . . . . .

Ա՜հ, այդ վարդերեն սրսկեցե՛ք, ի՜նչ երջանիկ երազ էր այս.
Շունչս որչափ կարճ է այսօր, բայց ո՞վ կրնա մրրկին մեջը շնչել...
Կոունկները կոնչելով ի՜նչպես անցան հովերուն հետ,
Մեր երդիքին վրայեն ի՜նչպես անցան, առանց խաբրի՜կ մը բերելու,
Բայց ես գիտեմ, որ կարավանն այս իրիկուն կըհասնի...
Երազիս մեջ ես տեսա, իր մետաքսե վարշամակը գլխին էր,
Ձեր բոլորիդ համար ընծաներու երկու բեռներ,
Ու կարմիր ձին հանդարտությամբ սպիտակին կըհետևեր...
Ա՜հ, սա՛ պատուհանը բացեք, սա՛ փեղկերը ե՛տ շրջեցեք,
Լուսաղբյուրին ճանապարհեն ահավասիկ կարավանը կ'երկարի...
Ջորիներուն բոժոժի ձայնն իբր ավետիս կըհնչե,
Բայց մայրամուտն ալ մոտեցավ, բոլոր ամպերն ալ սկսան կարմրիլ,
Արեգակն արյան նման մեր դաշտերը կ'ողողե...
Թռչուններն ալ բոլորը մեկ, մեռելներու պես լռեցին...
Ու սև գիշերն սկսավ, անապատի ավազին պես վա՜ր հոսի՜լ...
Ա՜հ, աչվրներուս հետին լույսը կարծես ինձմե կըխլեն...
Ճրագները վառեցե՛ք, ճրագները վառեցեք... ինչո՞ւ կուլաք դուք այսպես,

Պանդխտության վերջին օրն է... կարավանը կըմոտենա...
Հարիներուն բոժոժին ձայնը կիմանամ... սա փեղկերը նորեն բացե՛ք...
Ինչո՞ւ կուլաք, շունչս սկսավ սպառիլ։ Մրրի՛կ կա, մրրի՛կ...
Բոլոր ծառերն սկսան, կմախքի պես, մեկզմեկու դեմ փշրվի՛լ...
Ոտքի ելե՛ք բոլորդ մեկ, ոտքի ելեք, դիմավորել չե՞ք երթար...
Կարավանը մոտեցեր է։ Ինչո՞ւ անշարժ նստեր եք,
«Օգնությո՛ւն մեզ, օգնությո՛ւն մեզ, օգնությո՛ւն մեզ» կ'աղաղակեն...
Եթե դիակս ալ ըլլա, չորսերնիդ մեկ, ձեր ուսերուն վրան առած,
Եթե դիակս ալ ըլլա, պետք է որդիս, այս իրիկուն, աչքերս բա՛ց
դիմավորեմ...»։

. . . . . .

ՀԱՐՍԻՆ ԵՐԱԶԸ

«Ու տարիներով միևավորիկ՝ պատուհանիս առջև նստած՝
Ես քու ճամփուդ կընայիմ, իմ սրտահատոր հեռավորս,
Ու այս գրովս քեզի իմ մարմինիս ու մտքերուս
Անտեր սարսուռն անգամ մըն ալ երգելու...
Ա՜հ մեկնած օրվանդ արեգակը չե՞ս հիշեր։
Արցունքիս չափ առատ էր և համբույրիս չափ հրաշո՛ւնչ,
Խոստումներուդ չափ բարի՜ էր և քու դարձիդ չափ արագ,
Մեկնած օրվանդ արեգակը և աղոթքներս չե՞ս հիշեր,
Երբ ջրին կուժն ես քու ձիուդ շուքին վրան սրսկեցի...
Որպեսզի քու առջևդ ծովերն ե՛տ դառնային՝
Եվ ցամաքը ոտքերուդ տակ ծաղկոտեր...
Ա՜հ, մեկնած օրվանդ արեգակը սե՛ գիշերի փոխվեցավ...
Ու սպասումիս արցունքները տարիներու տարափին տակ,
Աչվքներես, այտիս վրան, աստղերու պես հոսելով
Անոնց վարդերն ահավասիկ որ այրեցի՛ն...
Ա՛լ կըբավե, քու ծարավդ ես իմ ծամերս փե՛տտել կուզեմ,
Քու բաժակիդ գինին դեռ գինո՛վ եմ...
Ու բացակա պերճ հաճակեդ սգավոր։
Հիշատակիդ ետևեն հովերուն պես կըհառաչեմ,
Եվ ժամուն դուռը ծնկվըներս խոցոտելեն,
Արևմուտքին դառնալով՝ կըպաղատիմ...

— Մովերն օր մը ծայրե ի ծայր թո՞ղ ցամաքին,
Ու ակնթարթ մը երկու աշխարհը թո՞ղ իրարու մոտենան...
Այնուհետև արքայության ու արևի ա՛լ պետք չունիմ—.
Վերադարձի՛ր մեր տնակին սեմին վրա, ես քու ճամփուդ
կըսպասեմ,
Ձեռքս պարապ քու ձեռքերեդ, սևերովս քե՛զ կ'երազեմ...
Վերադարձի՛ր, մեր պարտեզին պտուղներուն պես անուշ,
Սրտիս սերը քեզի համար իր համբույրը կըպահե։
Ա՜հ, իմ կաթնաբույր կողերս դեռ մայրություն չի ճանչցան...
Եվ հարսանեկան իմ ոսկեթել քողերովս
Դեռ չի կրցա խանձարուր մը զարդարել...
Ու օրորանի մը առջև նստած դեռ չերգեցի՜, դեռ չերգեցի՜
Հայ մայրերուն մաքուր օրորն երկնային...
Վերադարձիր, ա՛լ կարոտս կատար չունի,
Երբ սև գիշերն այսպե՞ս կուգա իր պատանքները քակել...
Երբ բուերը բակին մեջը իրարու դեմ կըվայեն,
Երբ հեծեծանքս կըհատնի և արցունքներս կ'արյունին...
Լքված հարսի երազներուս մեջ մենավոր,
Ես իմ ձեռքովս, դիի մը պես, ալ կըսկսիմ,
Գլխուս վրան՝ իմ մոտավոր գերեզմանիս հողը մաղե՛լ...»։

ԵՂԲԱՅՐՆ ԻՐ ԵՂԲՈՐԸ

«Ներե՛, եղբայր, որ այսօր և քու սիրտդ և հոգիդ,
Մահվան գուժով մը փլատակի մը վերածեմ...
Մեր մայրը մեռավ այս իրիկուն,
Իր աչքերը պատուհանին դեմ սևեռուն,
Ես էի որ, ո՜վ սարսա՜փ, քիչ մը առաջ, ձեռքերովս որդիական.
Մեր մորկանը երկու աչքերը հուսավառ,
Քու ճանապարհեդ հեռավոր, դնպի մահը փակեցի...
Բայց մինչև իր շունչը վերջին,
Հետին սարսուռն հոգեվարքի...
Իր ահավոր գալարումը կյանքեն ի մահ,
Իր թռիչքն ատելության այս աստղերեն.

Դեպի ունայնը մթին...
Քու աչքերուդ, քու հասակիդ ի խնդիր,
Այս իրիկվան արեգակին մոխիրին հետ՝
Իր աչքերը մայրամուտին լույսերովը թաթավուն,
Քեզ տեսնելով, քեզ հուսալով, քեզ օրհնելով խավարեցան...
Եվ ես թշվառս՝ ես եղբայրդ՝ իբր զավակ,
Ես քու տեղդ, խելակորույս, այդ աչքերն փակեցի...

Եվ սնարին վրա դրի,
Գառնուկներուս ճերմակ ճարպեն,
Իր ձեռքերովն անցյալ տարի պատրաստված
Երկու մոմեր և դավաճա՜ն և դողահա՜ր,
Եվ խնկամանը, որով Մնունդը կըտոնեինք,
Իր արծաթե մազերուն դեմ, գլխուն վրա,
Ահավասիկ, որ կըծխա՜...
Ա՜հ, կըխեղդվի՜մ, կըխեղդվի՜մ,
Տունն ամբողջ մահվան բույրովն ամպոտեցավ...
Տունն ամբողջ տիեզերք մ'է մեռելական,
Ուր միմիայն իմ հոգիս կա կենդանի,
Որ դիակի մը վրան ինկած,
Բարձունքներու մրրկին պես կըհեծեծե...
Մինակ եմ ես... տունն ամբողջ ամպոտած է...
Մահվան բույրովն զարհուրելի...

Կես գիշեր է և սոսկումիս մեջ կըգրեմ,
Երբ դրացի, սև լաչակով սգավոր,
Քանի մը կին լացի եկան...
Անոնցմե մին, այրի կին մը դառնադեմ,
Մեր մեռյալ մորն անշունչ մարմնույն վրա ինկած՝
Կտավի մը կտորեն, լույսովն երկու մոմերուն...
Անոր պատանքը կըշափե...
Եվ ժրաջան երկու հարսներ տրտմորեն,
Մեր մորկանը վերջին լոգանքը տալու համար,
Շտապելով՝ մեր աղբյուրեն ջուր կըկրեն...

Վաղն առավոտ ուռենիեն, որ քու ձեռքեդ է բուսեր,
Երկու ճյուղեր պիտի կտրեմ...
Սրտասուքիդ իբր հիշատակ, հողակույտին տանելու...

Եվ ես թշվառս՝ գերեզմաննոցեն վաղն առավոտ պիտի դառնամ
Հին օրերու մեր այս թափո՜ւր տնակին...
Երկու դռներն իբր դագաղ,
Ես իմ վրա՜ս, ես իմ վրա՜ս, խենթի մը պես փակելու...»։

ՄՈՐ ՄԸ ԵՐԱԶԸ

«Երազս քեզ այսօր գրեմ... Մեռելոցի կես գիշերն էր...
Ջորս եղբայրներդ հանկարծակի՝ իմ առջևս ծունկի ինկան...
Ո՛չ պատանք կար իրենց վրա և ոչ ալ հետքը մսի,
Խավարին մեջ սրսփալով, և աչքերնին մեկ մեկ անդունդ,
Եկան իրենց մորկանն առջև հիշատակներ արտասվելու...»։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու արշալո՜ւյս...
Այսօր նորեն չորսերնիս մեկ, մեր հողերեն դուրս ելած՝
Մրրկին հետ, քեզի եկանք, տանդ դռնակը բախելու...
Մի՛ սարսափիր, օտարներ չենք, և մրափիդ մեջ մենավոր,
Սպասե, որ մեռելոցի իրիկունով գոնե քու դեմքդ դիտենք։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու սրբությո՜ւն...
Հողին տակեն, մեր խեղճ գյուղին գերեզմաննոց,
Ես քեզ համար իմ սրտիկես սիրո ծաղիկը ծաղկեցուցի...

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու քաղցրությո՜ւն...
Ես քեզ համար իմ աչքերես, երկու սափո՜ր արտասուքի...

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու երջանկությո՜ւն...
Ես քեզ համար իմ հոգիես հույսի վարդեր հրավառ։

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու հերոսական արիությո՜ւն...
Իսկ ես ալ իմ կրծոսկրես պաշտպանության երկու զրա՜հ...

— Մայրի՜կ, մայրի՜կ... հին օրերու դու աննման գեղեցկությո՜ւն,
Ո՞ր չափ խորշոմ ճակտիդ վրան, ըսավ եղբայրդ երեց...

Ի՞նչպես կրնաս երդիքիդ տակ միս-մինակդ տառապիլ...
Յոթը տարի, յոթն անգամ տանդ դռնակը ծեծեցինք,
Բայց այս գիշեր միայն բաց էր... ո՞ր ճամփորդին կըսպասես...
Տե՛ս, հյուղակդ դագաղներու կույտի մը պես կըշարժի...
Տերևները, տե՛ս, կըթափին, ծառերն ի վար, մըրրըկեն,
Սովակին մեջ աղավնիներն անմեղությամբ կըմեռնին,
Ու սև օձերն, սեմին վրա, մեր շոր արյունը դեռ կըլիզեն...
Պարտեզիդ մեջ ո՛չ կանաչ կա, ո՛չ պտուղ կա, ո՛չ տատասկ...
Զորսերնիս մեկ, ամբողջ տնակը ժուռ եկանք,
Մեր կոտրած սուրերն, ի տես մեզի, անգամ մըն ալ շողշողացին...
Մառանն արդեն դատարկ էր... և գոմին մեջ՝
Ճերմակ գառնուկ մը, մայելով, իր կճղակները կըկրծեր...
— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու առատությո՛ւն,
Ի՞նչպես կապրիս, ի՞նչպես կապրիս տնակիդ մեջը թափո՛ւր։

— Մայրի՛կ, մայրի՛կ... հին օրերու գուրգուրա՛նք, հին օրերու
գթությո՛ւն,
Ի՞նչպես կապրիս, ի՞նչպես կապրիս տնակիդ մեջը թափո՛ւր։

Զորսերնին մեկ լռեցին... բայց անունդ երբ ես տվի՝
Երազիս մեջ՝ մրրըկին պես իմ արձակած հեծեծանքես,
Զորսերնին մեկ, գլուխնին կախ, խենթերու պես սկսան լալ...
Բայց ձեր եղբայրը դեռ ողջ է, ան որ ձեր մահը չի տեսավ,
Ձեր փոքր եղբայրը դեռ ողջ է, անոր համար միայն կապրիմ...
Այս խոսքերս որ լսեցին, շորսերնին մեկ իրենց կողերը կոտրտելով,
Մեռելներու սև արցունքն ահավոր, աչքերուս մեջ թափելեն՝
— Եղբա՛յր մ'ունինք, եղբա՛յր մ'ունինք, մենք կյանքին մեջ
եղբա՛յր մ'ունինք,
Մայրի՛կ, մայրի՛կ... նոր օրերո՛ւ, նոր հույսերո՛ւ թշվառություն.
Ի՞նչպես այլևս մենք մեր հողին վերադառնանք, ի՞նչպես
դառնանք...»։

ԿԱՂԱՆԴԻ ԻՐԻԿՈՒՆ

Թախիծներու մեջ թաղված հի՛ն օրերու իրիկուն,
Անբուժելի կարոտներովս՝ կըվերհիշեմ զքեզ այսօր։
Ձյունն երկինքեն շուշանի պես անդորրությամբ կըթորա,

Դեռ իմ ցեղիս արյուններեն և ավերեն չի կարմրած հողին վրան,
Ձյունն աստղերեն և Աստվածեն՝ մարգարտի պես կըհեղեղի,
Եվ բարյացակամ ու զվարթուն ու լուսաբույր լուսնկան,
Երդիքներուն կամ սպիտակ բարդիներուն կատարեն,
Իր մեծափառ և մտերիմ ժպիտովն հուսալից՝
Ճոխակյացին և անպերճին լուսամուտեն՝ ներս կընայի...
Մարդերը դեռ երջանի՞կ են... Մարդերը դեռ Բնությանը բարիքին
հետ՝
Մեկզմեկու նայվածքի մեջ՝ յուրաքանչյուրն իր դրախտը կըտեսնե...
Նոր տարիի իրիկունն է։ Ամեն երդիք իր խրախճանքի ժամն ունի,
Թոնիրին շուրջ, որուն վրա այգիներուն մրգեղենները կըբուրեն,
Քառասուն անձ՝ մեկ տան զավակ՝ բոլորակի նստեր են։
Ամեն հոգի իր առջևն ցնծությամբ մը կըսկսի
Իր արծաթյա աշտանակին կապույտ ճրագը վառել,
Որովհետև այդ պահուն, երազներու ծաղկեպսակ ճամփաներեն,
Հավերժահարսը կաթնամարմին, մերկ ոտքերով՝ Հույսը ձեռքին՝
կըմոտենա։
Ու մեծ մայրը կըսկսի տնեցիներն իրենց տնովն օրհնելու։
— Խաղաղություն մեր այս տարվա մեռյալին, խաղաղություն ձեր
բոլորին,
Խաղաղությո՛ւն աշխարհներու անգութներուն և ձեր սիրտը ձեզ
ապավեն։
Հետո ոտքի՝ մատղաշ կույսերն ու հարսները համբուրելով՝ անոնց
կ'ըսե.
— Վաղն առավոտ՝ արևածագին՝ կուժն ուսերուդ ջրի գացեք,
Մեն մի տարի իր առաջին արևին հետ՝ իր բարիքը կըբերե,
Որպեսզի ձեր օրերը ջրին նման երկար ըլլան և արևին պես
պայծառ,
Վաղն առավոտ՝ մթնշաղին՝ այգուն երգն երգելով՝
Ջրի գացեք։ Նոր տարիին, աղբյուրներեն, ակնթարթ մը՝ ոսկի է, որ
կ'ըվազե...
Բայց այս օրերն ու երազները մոխրացնող շարիքներեն ի վեր,
Ձյունն երկինքեն և աստղերեն և Աստվածեն,
Գերեզմանին քարերուն պես եղերական, վար կըթափի...
Եվ լուսնկին մահիկը մահվան մանգաղի նման՝
Ինքն իր դեմքն արյուններուն մեջ տեսնելեն զարհուրած,
Կարծես թե իր մեղքին համար ամպերուն մեջ կըդողդողա...
Սև կաղանդի իրիկունով՝ տնեցիներ՝ տանիքին տակ այս պահուս,

Դագաղի մը վրա հսկող սգակիրներ են բոլորն ալ,
Երգող չի՛ կա։ Ժպիտ չի՛ կա։ Համբույր չի՛ կա։ Օրհնությունները մարած են։

Հարսին հույսը մահացեր է և աղջիկներն աղիողորմ կամ գեղանի,
Անկարելի և անստույգ սրտերու է, որ կըմտածեն...
Խեղճ ճրագ մը թոնիրին վրա, մանկան մը պես կըմեռնի...
Եվ մեծ մորը հեծեծանքեն ամբողջ սերունդը կըսկսի լալ...
Հովը դուրսը անհնարին մորմոքներով կըշառաչե,
Մեռյալներու կարավաններ կարծես կուգան շար ի շար,
Հիշատակի մը համար, ամեն մեկն իր տնակին գոց դռնակը ծեծելու...

Հուսահատ մը, ափ մը մոխիր ծունկերուն տակ, դեպի երկինք նայելեն,
Իր բացակա մերձավորին մտածելով՝ դեռ կըսկսի աղոթել...
Մինչ՝ պատմության աղբյուրներն ավերակին տակ կըկոծեն...
Եվ ավանդության ոսկիին տեղ՝ մարդերուն դեմ՝ միայն անե՜ծք կըհոսի։

ՍԵՐ

«Արցունքներս ո՞ր գորովի գրկին մեջն ես լացեի...
Եվ ո՞ր հոգիին հանձնեի իմ այս սիրտս դողդոջուն,
Գիշերն ունիմ մորմոքումիս միայն վկա,
Երբ աստղերուն անդորրությանը տակ նստած՝
Կըսկսիմ ես փնտրել նայվածքներով խելացնոր,
Անթիվներու թվին մեջեն Անոր աստղն ինձ անծանոթ,
Որ՝ աստղիս հետ, ապահո՛վ եմ, սրտիս համար է ծներ...
Բայց բնությունը գարուններուս դեմ բռնավոր՝
Առաքինի իրանիս շուշաններն այս կուսական,
Իր անօրեն օրենքին կրակներովը կայրե...
Միայն հույսին ես ժպտեցա, միայն անոր՝ անծանոթին,
Որ պիտի գար տիրանալու, շքեղությանցն իմ մարմինիս...
Մինչև այսօր և ո՛չ մեկ ձեռք ինձ չընծայեց,
Սիրո վարդն այն վարդերեն նվիրական,
Որ երդումներով՝ արևծագին հետ քաղված՝ կուրծքիս վրան,
Նրազիս մեջ, գուրգուրանքիս տակ թառամեր...
Ո՛չ մեկ համբույր ես չի ճանչցա, որ գար ճակատիս՝
Դեմ դրոշմել գինովության առեղծվածն այն անասելի,

Որուն համար գեղեցկությունս, գիտեմ՝ իրեն խորան պիտի ըլլար...
Ո՛չ մեկ ժպիտ, ո՛չ մեկ նայվածք և ո՛չ մեկ բառ տարփանքի,
Դեռ չեն եկած ալեկոծել վճիտ սիրտս սիրածոր...
Եվ այսպես լուռ, աստղերուն տակ, սարսուռներուս մտածելեն,
Իմ գաղտնիքիս ես անգետ, սոխակի մը պես սերը կ'երգեմ...
Նորեն երկինք կընայիմ, միշտ աստղերը խուզարկելով՝
Եվ երբ տեսնեմ, որ բյուրավոր այդ ոսկեշող վարդերեն մին,
Հանկարծորեն, գլուխս վրան, կապույտին մեջը կըմեռնի...
Ջարհուրանքով կըհարցնեմ ես ինծի...
— Ո՛վ գիտե թե որո՞ւն աստղն էր, որ մոխրացավ այս պահուս,
Անո՞րն արդյոք, որ ճակատագրեն իմ սիրույս էր սահմանված,—

Հետո այսպես իմ քաղցրահոս մազերս ուսերես վար...
Արմունկներս ծունկվընեներուս վրա հենած՝
Եվ իմ երկու ձեռքերուս՝
Մարմար թասի մը ձևը տալով՝
Հեծեծա՜նքով սիրույս կայծերն անոր մեջն ես կ'արտասվիմ...»։

ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԵՆ ԱՊԱՇԱՎ

«Ծռահարյուր հազարավոր նահատակներս ահավասի՛կ,
Արարատյան հողերուն տակ շար ի շար,
Մինչև այսօր ձեզ կըսպասենք, դուք, որ կովեն խուսափեցաք,
Դուք, որ զմեզ կոխոտելով, մեր վրեժին անվրեժ,
Մեր ցասումին անտարբեր,
Մեր արյունին դեմ առ դեմ, ձեր աչքերը փակելեն,
Մեր մարմինները կիսամեռ, իբրև անգո՜ւթ թշնամիներ
Ձեր ոտքերովն կոխոտելեն հեռացաք...
Հոնդյունները մեր հոգեվարքին, չի կրցան ձեր խե՜ղճ խուճապը կասեցնել,
Եվ ձեր սուրերը, վատերու պես, ձեր ետևը նետելեն,
Ձեր կործանվող քաղաքներեն խուճապեցիք...
— Ձեզնե շատերը մեզ մայրերս բոցերուն մեջը թողուցին...
— Ձեզնե շատերն իրենց հայրն իսկ կռիվին մեջ ուրացան...
— Ամուսինս ստվերի մը պես կ'անհետանար,
Մինչ մեր որդին նորածին, դահիճները տապարներով՝
Իմ մերկացված ծունկիս վրան,

Կարապի՞ մը պես կոտորեցին...
— Ես եղբայր մ'ունեի, հողին տակեն դեռ կը հիշեմ,
Պատվույս համար նախ զիս մեռցուց,
Եվ հետո ինք մարտնչելով մահացավ...
— Իմ զավակս յոթը գյուղեր յոթը գիշեր պաշտպանեց,
Զավակիս հետ, այդ գյուղերը, կարծեմ այսօր դեռ կ'ապրին...
— Վատերուն մեջ վատն ես եղա, թշնամիին հանգիման,
Երբ գթություն պաղատելով ես իմ վիզս երկարեցի...
— Ես իմ հայրս չե՞մ մոռանար... ես իմ հայրս չեմ մոռանար,
Այդ ալեոր ծերունին, ավանդական դյուցազնի պես,
Մոտավորին, հեռավորին, անծանոթին սիրույն համար,
Երկար օրեր մաքառելեն մեծ Գաղափարը լուսավորեց...
— Տասը տարու տղեկ մը կար մեր քաղքին մեջ,
— Մեռյալ մորս նման ես, ո՞րչափ նման ես անոր, ոսավ ինծի,
Եվ իր մարմինը պատնեշ ըրած, ոտքերուս տակն ինկավ,
Օր մը հետո, իր դիակն արցունքներուս հետ թաղեցի...
— Ոչ ո՞ք չեկավ զիս մեռցնել...
Գեղեցկությունս գերմարդկային՝ սոսկում կ'ազդեր...
Բայց աչքերուս տեսածներեն՝ առավոտ մը թարշամեցա...
— Ո՞ւր են անոնք, որոնք փախան, իբր տարագիր կամ ստրուկ...
Ազատության ձայները մեր ոսկերքը խենթեցուցին...
Գարուններու ծաղիկները այնչափ հո՞ծ են, այնչափ խո՞ր,
Կարծես իրենց սրմանները մեր սրտերուն կ'երկարին...
Իրենց բույրը վար սուզվելով մեր աչքերը կ'արբեցնե...
Առուները կըկարկաչեն... ես կըլսեմ...
Եվ ո՞վ գիտի վերը՝ մեր աղբյուրը որչա՞փ ջինջ է,
Գառնուկները ծներ են և մեր վրայեն մայելով՝ ճարակելու կըվազեն...
Արձագանքը կիմանա՞ք տեսեք ինչպես կ'ոստոստեն...
— Թռչունն ե՞ր, թռչունն ե՞ր, իմ կարոտես ես մոխիրի
կըվերածվիմ...
— Խնձորենին ծաղկեր է... և մեկը կա, որ ինձ համար,
Իմ աչքերուս սերեն կուրցած... մինավորի՞կը կ'արտա՞սվե...
— Ես փրկության երգերուն ձայնը վաղո՞ւց է, որ լսեր եմ...
Ատելությունը մոխիրներուն տակ մեռեր է...
Բայց ո՞ւր են անոնք, որ հեռացան...
Ըսե՞ք ինծի, մե՞նք ենք մեռյալ, թե անոնք...
— Ծերունիի իմաստությանս հավատացե՞ք,
Այն, որ կռիվը չի սիրեց, արժանի չէ այս օրվան...

Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք։
Անմահությունը մեզի է և ապաշավն անօգուտ,
Ի՞նչ փույթ մեզի եթե մեր ոսկորներեն կերտված՝
Ազատության տաճարներու խորանին
Ծնրադրելու դեռ չեկան...
Ես կըլսեմ ձայները երիտասա՞րդ կամքերուն,
Որոնք ո՛չ փախուստ են ճանաչեր և ո՛չ ալ երդիքն օտար,
Ազգական ալ անոնցն է, Արշալույսն ալ Երջանկության...
Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք...»։

ՄԱՅՐԸ ԻՐ ԶԱՎԱԿԻՆ

«Մաքուր սիրույս և մարմինիս դո՛ւն պտուղս անդրանիկ,
Ես էի, որ կողերուս մեջ սրբության մը պես բեզ կրեցի...
Էությենես քայլ առավ քու գոյությունդ տարագիր,
Եվ ստինքներս՝ երկու գարուն իրենց կաթովը մարգարտե,
Երիտասարդ այդ հասակիդ կտրիճ տեսիլքը տվին։
Ես էի, որ իմ կյանքս բերրի պարտեզ մը ըրի,
Ուր քու կյանքդ անմեղորեն աճեցավ...

Իմ արցունքս քեզ ոռոգեց, ժպիտներս իբրև արև,
Իմ համբույրս իբր օծում, շրթունքներս իբր շուշան,
Եվ օրորներս՝ երգիս մեջեն իբր զեփյուռ...
Այս բոլորն ես անխտիր և լիուլի քե՞զ ջամբեցի։
Օրորոցիդ առջև՝ լուսնկին պես և գեղանի՞, և արթո՞ւն։
Գիշերներու շարոգիներն քու անուրջիդ վարդաստանեն
Ես էի, որ իմ միամիտ աղոթքներովս հալածեցի...
Ես էի, որ քու ծնունդ առած գարունիդ գինովությանը մեջեն,
Առաջի հեղ, ես էի, որ մեր երդիքին վրա ոտքի՝
Քու առաջին նայվածքդ արևին դե՞մը բացի...
Եվ բնության այդ հրեղեն հեղեղին տակ,
Քու նորածինի ծիծաղդ այտիդ վրա՝
Ես էի, որ առաջին հեղ Աստծուս հետը տեսա...
Ա՜հ դեռ կըհիշեմ մեկնած օրվանդ այն աշունը անձրևոտ,

Երբ տերևները ծառերեն. արցունքներուս հետ կ'իյնային...
Եվ տարիները դեռ տարիներու ետևեն դագաղներու պես կ'անցնին.
Բայց ոչ արցունքս դադրեցավ, ոչ տերևներն իրենց մահեն...
Հիշատակես ես կըսոսկամ... երբ դռանը կընայիմ,
Ցորս սևագեմ մեռելկիր ճաղ մը իրենց ուսերուն,
Հորդ մարմինը մինչև այսօր, դեռ, կարծես,
Շտապաքայլ իր տնակեն դուրս կըհանեն...
Այն օրերեն ես իմ գլխիս իմ մոխիրս կըշափեմ,
Ու դուն այդպես դեռ տարագիր,
Այդ դռնակեն մինչև այսօր ներս չի մտար,
Բայց ես կամքիս կրակներովը Աստծուս դեմ պիտի կռվիմ...
Կյանքի՛ն փարած, հույսի՛ն փարած, և արևիս և արևի՛դ՝
Մահվանս դեմ, մոր մը ուժովը պիտի կռվիմ...
Ես կյա՜նք կուզեմ, զավա՜կս, ապրի՛լ կուզեմ, ապրի՛լ կուզեմ...
Իմ մարմինս այս տնակեն գերեզմաննոց պիտի չերթա,
Մինչև որ դուն առավոտ մը նույն սերմերեն ներս չի մտնես...»։

ԱՌԱՔՅԱԼԸ

«Եղբայրնե՛ր, ես ճակատագրիս հավատարիմ,
Մաքառումին ուղիեն՝ Մտածումին մոտեցա,
Եվ այն օրերուն ահավոր, մեն մի սուր, որ կըփշրվեր
Մարտիկներու ոտքերուն տակ,
Մե՛ն մի շղթա, որ օղակ-օղակ՝
Մեր ուսերեն դեպի հողը կըհոսվեր,
Ես՝ այս նոր օրվան Արշալույսին, մանկան մը պես կրծպտեի...
Մարտադաշտին վրա մեռած ընկերներուս քով ծնրադիր.
Անոնց շրթունքն հպարտությամբ համբուրելեն,
Կ'օրհնեի ձեզ, զի դուք անոր ծնունդ տվիք...
Փա՜ռք կուտայի ես ձեր ոսկեղեն կողերուն,
Ո՜վ հայ մայրեր, որ մեզ ծնաք։
Բայց երբ ավերն ու արցունքը դադրեցան,
Երբ Արդարությունը սկսավ շուշանի մը նման ծաղկիլ,
Երբ Ապագան կըլուսնա և Նոր Կյանքը կըծնի,
Ինչո՞ւ համար կըհամենաք Ասպետներու ջահեն հետո,

Մտածումի և մեծության ջահերն ալ դուք վառելու...
Դո՛ւք, Արվեստներու և Գիտության վարդապետնե՛ր,
Արգասաբեր Երազներու կամ Արժեքի ստեղծիչ,
Դո՛ւք, արհեստավոր, ճարտարագետ, Ոստանակերտ կամ Հմուտ,
Դո՛ւք, Իմաստության տիրապետ կամ Գյուտերու խուզարկու,
Դո՛ւք, որ կյանքը կկորզեք և հոծ նյութեն և գաղտնիքեն,
Կռիվեն վերջ՝ որոնումի և մտածման դաշտերը ձեզ կըսպասեն...
Բոլորդ մեկ ձեր ճակատներովը ծանրախոհ,
Հեռուներեն՝ հայրենիքին վերկենցաղմանը հառաջացեք՝
Դարերու սև խավարեն՝ լույսի ճամփան արորելու։
Սերունդնե՜ր կան իմաստության ծարավի,
Ուղեղներ կան ե՛րիտասարդ՝ սերմնացանին սպասող,
Քաղաքներ կան, որ կըհեծեն ավերին տակ ահարկու,
Եվ հողը կա դեռ, հղի պերճանքներով բեռնավոր,
Թաքուն հույսի և հուրերու շտեմարան...
Ա՜հ, գեթ անգամ մը դուք ձեր սրտին դիմեցեք,
Եվ ձեր միտքը Մարդկությենեն պտղավորված՝
Ձեր սրբազան ճանապարհն իր Լույսովը պիտի գծե»։

ՈՐԴԻՆ ԻՐ ՀՈՐԸ

«Հայր իմ, դեռ մինչև ո՞ր արեգակդ ես՝ քու որդիդ՝ քեզ՝ անծանոթ,
Եվ դուն իբրև օտարական պիտի ապրինք...
Եվ քու արյունդ երակներուս մեջ թող եռա,
Թո՛ղ աչքերուս մեջն ես՝ մինչև այսօր ցոլացնեմ
Հիշատակն աչքերուդ,
Թո՛ղ իմ սիրտս քո սիրույդ համար ողողվի...
Թո՛ղ հասակս սկսի քու հասակիդ հար ու նման
Պարմանիի պայծառությամբս ուռճանալ...
Թո՛ղ երազներս քեզմով լեցվին,
Թո՛ղ իմ միտքս իր թևերովն, վայրապար,
Թռիչ առնե, իր ստեղծիչը որոնելու...
Այս ամենը ցնորքներ են ինծի համար,
Մինչև որ քու շրթունքներդ հայրական՝

Չի մոտենա՞ն, իրենց հուրովն, այս ճակատս սպիտակ,
Չի մոտենա՞ն այս ճակատս՝ երազիս մեջ համբուրելու։
Հա՜յր իմ, ես այն ճյուղն եմ զորավոր, դալարագեղ այն ծառին,
Որ հոգնությանդ օրերուն քու նեցուկդ պիտի ըլլա...

Ես այն ջո՜ւրն եմ, հպարտության ասպառաժեն դո՜ւրս ցայտող,
Որ ծարավիդ ժամանակ՝
Բաժակներուդ ազամանդեն պիտի հորդի՜...
Ես փեթակիդ այն ժիրաժիր մեղո՜ւն եմ,
Որ դառնության օրերուդ՝
Պնակիդ մեջ՝ իր ոսկեղեն մեղրը պիտի հյութե...

Ես դալարի՜ դ եմ, ծաղկաստա՜նդ եմ, քու այգիդ եմ...
Ես այն վայրն եմ, ուր հոգնած հայր մը պետք է հանգչի...

Ես այն լարն եմ տիեզերքի այն տավիղին,
Որ միմիայն որդին գիտե իր հորն համար հնչեցնել...

Ես Օլիմպոս եմ, հովանիդ եմ արևին տակ,
Ես աբեղա՜կդ եմ քու հույզերու կամ մրրկի օրերուդ...

Ես էությունդ եմ և սկիզբն եմ քու վախճանիդ,
Իմ մեջն է, որ դուն ինքդ՝ կյանքեդ հետո՝ պիտի ապրես...

Ի՜նչ առնավություն, ի՜նչ խորհուրդ, ի՜նչ գաղտնիք...
Ինծի բսին, թե՝ աչքերուս մեջ, քու կերպարանքդ կ'արտացոլա...
Եվ բիբերուս մեջն ես քու դեմքդ նշխարներո՜ւ պես կրպահեմ,
Բայց չե՜մ ուզեր իմ կարոտես, արցունքներովս պղտորել զայն,
Մինչև որ քե՜զ գրկելով՝ իմ սարսուռս չարտասվեմ...»։

ԱՅԳԵԿՈՒԹՔ

«Աշունը որչա՜փ ուռաս եղավ այս տարի...
Իր արևներն ու օրհնությունը դյուցազնական,
Մեր ցավերեն, մորիներեն ու մահերեն հետո՝

Անհունորեն դաշտ ու հովիտ, գյուղ ու քաղաք,
Անքննելի ճոխություններով պարուրեր են։
Կգրեմ քեզ՝ այն տեսիլքն տարօրինակ զոր ես տեսա...
Այգեկութքի արշալույսն էր այս առավոտ,
Հին օրերու նույն աղբյուրն, հնձանին դեմ՝
Մեր մանկության հայելին եղած ավազանին մեջը կ'երգեր,
Այնպես երգ մը, որ միմիայն որբությունը կըհասկնա...
Այգիներու մեջ, ողկույզները որթերեն վար,
Տաբագրին ճամփաներուն դեմ սպասող՝
Հույսեն վառված սրտերուն պես կ'այրեին...
Եվ բյուրավոր հատիկները ամենօրհնյալ խաղողին,
Հայրենիքիդ կապույտին տակ վերածաղկող՝
Գիշերներու աստղերուն չափ էին անթիվ...
Թթենիին կատարեն, կարոտակեզ կռունկներ,
Իրենց կանչը երգելով, դեպի արտերը իջան։
Այգիներուն խորերեն ցնծության ձայնը կզեղուր,
Արտերուն մեջ իրենց հնձած ցորյանին շուրջ՝
Հայ հարսներն կալերուն դեմ ամբողջ օրը պարեցին...
Այգեկութի առավոտն այս մեր առաջին զարթոնքն էր...
Տարիներու մեր սոսկումեն և սուգեն ետք՝
Հարությունն էր կարծես այսօր և մարդերուն և բնության...
Այս աշխատանքի և գինովության օրեն հետո,
Երբ գիշերն թավիշներու նման ինկավ...
Եվ ոսկեղեն ողկույզները կըհանգչեին դաշտերուն մեջը բլուր-բլուր,
Աղբյուրին քով ուր դուն ինձմե, առավոտ մը, համբույրով մը
բաժնվեցար...
Ես քու քույրդ՝ վճիտ աչքով Որբուհի,
Հանկարծորեն, կարծես մեր վախճանած հայրը տեսա...
Ես՝ սարսափես դողդոջուն... ինք գորովեն զիս գրկելով,
Իր ձեռքերն մազերուս մեջ մխրճելեն...
Ցնծութենեն կամ հին հույսեն հեծեծելով ըսավ ինծի.
— Աղջի՛կ, թերևս դուն չի կրնաս զիս ճանչնալ...
Բայց իմ հոգուս ու սրտիկիս սուրբ պտուղն ես...
Շատերուն պես, ես ալ օր մը, ձեր բոլորին համար մեռա...
Եվ ծնած օրեդ և արևեդ մինչև այսօր,
Այս այն տարին է՝ առաջին,
Ուր հայության այգիներուն որթատունկերը կարմիր,
Գրե՛ եղբորդ, առանց արյան են ծլեր...

Հին քաղցրությանց ստվերն այս՝ հստակ աչքերս թրջեց,
Եվ մութին մեջ, իր պատանքովն աստղերուն տակ հեռանալեն,
Ուրվականը ետ դառնալով՝— իրա՞վ, արդյոք մեր հայրն էր—
Ուրվականը ետ դառնալով՝ այգեկութքեն դարձողներու թափորներուն
ես ըսավ.

— Հին օրերու դրացինե՛ր և ուխտավորնե՛ր աշխատանքի,
Օրհնյա՛լ ըլլաք, երգեցե՛ք, օրհնյա՛լ ըլլաք բոլորդ ալ,
Եվ հավատացե՛ք ավետիսիս, գարուններու ձեր նոր գինին,
Արդարության և ձեր կամքին օրենքին տակ,
Այսուհետև ձեր սափորեն կամ արծաթե դաշխուրանեն,
Հավատացե՛ք, առանց արյան պիտի խմեք...»։

ՀԱՅ ԴԱՇՏԵՐՈՒՆ ՊԱՂԱՏԱՆՔԸ

«Արարատյան աշխարհներեն մինչ հովիտներն Եփրատյան,
Մեր ընդերքներեն բարձրացող պաղատանքն ու պարսավը ձե՛զ
կ'ուղղենք,

Կյանքին հանդեպ դրուժանն՝ ե՛ր, հեռացողնե՛ր, կամ երկչոտնե՛ր,
Հալածական կամ աքսորյալ, դո՛ւն վտարանդի կամ տարագիր,
Ո՞ւր եք, և ո՞ւր են ձեր բազուկները, որ մեր կողերը կ'արորեին...
Ո՞ւր եք և դուք հին օրերու անկաշառ և անկնճիռ ճակատներ,
Երբ ձեր քրտինքն հուժկու և վեհ հողագործի,
Մարգարտի պես կուգար հոսիլ ծալքերուն մեջը մեր ակոսին,
Հին օրերու ձեռվընե՛ր, ո՞ւր եք դուք, ձեռքեր օրհնյալ,
Ձեռքեր անպի՛ղծ, ձեռքեր հուսթի՛ և արգավանդ,
Ձեռքեր բարի՛ և բեղմնավոր, ձեռքեր վսե՛մ և վճռակա՛ն,
Երբ ցորյանին սրբազան սերմը ձեր ափին մեջ,
Հալած ոսկու հեղեղի պես լայնաբուռն կրցանեիք...
Ու գութանին երգը կ'երգեիք... և ձեր եզներն հաղթամարմին,
Իրենց երկաթը շանթերու պես մեր ընդերքը մխրճելեն...
Արտավարե արտավար, հպարտորեն բառաչելով կըհերկեին...
Ու ներդաշնակ անձրևներն և արևը, մեծ օրենքին կշիռներուն
համեմատ,

Կ'իջնեին ձեր հողին հանձնած հատիկները բեղմնավորել...
Եվ երբ ամառը կրծներ կամ աշունին մահեն առաջ՝
Քաղաքներեն և գյուղերեն՝ գերանդիով, մանգաղներով բեռնավոր,
Հազարներով կուգայիք, հայ դաշտերեն Մարդկության իբր ընծա,
Անխտրական ցորյանին հասուն հասկերն հնձելու...
Բայց քանի գարուն և աղաչավո՞ր աշուններ եկան անցան,
Եվ անծաղիկ ու անպտուղ մեր անսահմանը ձեզ կրսպասե...
Ա՜հ, գթացեք հայրենական և հավատարիմ ձեր հողերուն,
Գթացե՛ք այն այրիներուն և վարդի նման որբերուն,
Որ առավոտեն հուսաբեկ և իրիկունեն եղերական,
Իրենց կուրծքերը կոծելով մեր քարացած սև կողերեն,
Երկու բո՜ւռ հունձք, ա՜փ մը ցորյան կըպաղատին...
Ու հայ դաշտեն կհեռանան, կյանքին օրենքն անիծելով՝
Եվ բնությունն ալ, իր բարիքն ալ, իր բերքերն ալ անմատույց։

Հազարավոր տարիներու դուք անարժան ժառանգորդներ,
Օտարության և մոլության ճամփաներեն մեզի դարձեք,
Հույսեն խաբված կամ աղետեն հալածական բայց չարիքին
հաղթահարող՝

Աշխատողներ՝ բոլորդ մեկ ձեր բարեգութ բնությանը գրկին եկեք.
Ամեն բարիք մեր լանջքերեն և լեռներեն կրծնանի...
Ամեն մետաղ մեր խավին տակ հրաշանյութ իր գանձն ունի...
Մեզմե միայն կրնաք կորզել Հույսին ոսկին և գինիներն երազին...
Հաղթանակները մենք կուտանք ու պարտությունները մեզի են...
Վերադարձե՛ք, որդինե՛ր, ձեր գութանին և արորին ժանգը նորեն
սրբելու.

Թո՛ղ նորեն ձեր հնադարյան հայրենի հողը ծաղկոտի...
Թո՛ղ ձեր հունձքերն հովտե հովիտ՝ ծովերուն պես տարածվին...
Թո՛ղ կալերն ու որաները, բլուրեն վեր, լուսնկին հետ բարձրանան,
Թո՛ղ հայ հովիվն, մարգերուն մեջ, իր նախահորը նման,
Իր սրինգին սարսուռներովը իր հլու հոտը հմայե...
Ջորին վրա ջրաղացը խաղաղությամբ թո՛ղ շարժի...
Ու առատությունը թո՛ղ նորեն գա մեր արտերուն վրա լացող,
Հայկյան ցեղի պղտոր աչքերը լուսավառել...
Ամեն բարիք և մարդկային չարիքներու ամեն դարման,
Մեր խորհուրդեն, մեր խավերեն, մեր օրենքեն պետք է հուսալ...
Ու այսպես՝ Ձիթենիին ոստերուն հետ աստվածաբույս,
Սուրն ալ մեզմե կրծնանի, սրբությունն ալ Ցորյանին...»։

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

ՆԵՐԲՈՂԱԿԱՆ

Օշականի ամենասո՜ւրբ գերեզման,
Հանճարի հող՝ ուրկեց այսօր,
Տասնեւհինգ մրրիկյան դարերու
Պատմություն մը պերճաշուք,
Արեւելքեն Արեւմուտք, երկու Հայքն բովանդակ,
Դեպի զՔեզ, ազատորե՜ն աղոթելու կըշարժե...

Օշականի անհո՜ւն մեռյալ,
Դուն բյուրավոր ճյուղերով,
Ոսկեհոս գետ գիտության,
Մտքի Փրկիչ, հույսի Հսկա, կյանքի Կեդրոն,
Դուն անվախճա՜ն փոշիացյալ,
Դուն ջահերու անմարելի շտեմարան,
Ուրկեց ուղեղս, մանկությանս օրերուն,
Ես՝ աղքատորեն եկա վառել...

Օշականի վսեմական վարդապետ,
Դուն վեհիմաստ վանական և Աստծո՛ բաժակ,
Դուն Հիսուսի բազմաբուրյան պատմուճան,
Խոսքի՛ աղբյուր, բանի՛ բարձունք,
Կարողությանց անվե՛րջ կատար,
Դուն իմաստի ավազան և աղոթքի կապույտ անձրև,
Ափ մը հողեդ ամբողջ երկինք մը գեռ կըբուրե...

Օշականի Դուն անկորուստ կրոնական,
Անապատին մե՛ջ մխրճվող ճգնավոր,
Դուն անբասիր և մեհյանական մենակյաց,
Խունկի՛ անտառ, կնդրուկներո՜ւ բուրաստան,
Քրիստոսի աղնիվ խոսքին դուն տիրական տարածիչ,
Եվ գրանիտյա ուղղափառ սյուն,
Եվ մտքի գմբեթ և հոգիի անծայրածիր հորիզոն,
Դո՜ւն շնորհքի աշնանային շատրվան,
Քու հավատքե՛դ հավատացյալ՝ ե՛ս ալ լացի...

Օշականի մեջ անմա՜հորեն մահացյալ,
Անճառելի և անդրանիկ դաստիարակ,
Ես՝ երազային երեխա մը վեցամյա,
Այբբենարանդ ի ձեռին, անմեղորեն զայն հեգելով
Առաջին խաչը, ճակտես սրտիս,
Հավատա՛ ինձ, ո՜վ հայությո՛ւն...
Պատկերիդ դեմ է, որ հաներ եմ...
Եվ լսե՛ այսօր, թոթովախոս ծաղկոցի
Շուշանմարմին մանուկներեն՝
Մինչև ծերերն հողաբույր,
Քու Սուրբ անունդ կ'օրհնեցեն...
Օշականի հանճարանի՜ստ հողակույտ,
Եկեղեցվո խորանին քով անշուքո՛րեն մբափեղ՝
Եվ Եհովայի պատգամախոս մեծ Մատյանին
Դուն սրբագիր թարգմանիչ,
Ոսկեդարու ադամանդյա՜ քանալի,
Դուն հայ դպրությանց անշրջանակ լուսամուտ,
Դուն լեզվի կաճառ, գեղեցկությա՜ն իշխան,
Դուն ճեմարան մարմարային մտածումի,
Ներե՛, որ քու աշակերտդ արբեցյալ,
Տասնեւհինգ դարեր հետո զքե՛զ պաշտե...

Օշականեն մեզի հսկող Մտքի Աստված,
Դուն հասողության հիմնաքար,
Աստղերեն մեզ լույս լեցնող ոսկեհասակ աշտարակ,
Ուր մեր ուղեղը մեզ կըժպտի...
Դուն մտածման ծարավներու արծաթյա ծով,
Դուն Տարոնածին հսկա՜ Մովսես,

Դուն անհպելի մատենագիր մայր-բարբառի,
Թո՛ղ իմ գանգս, վերջալույսիս,
Քնարիս հետ, մոխիրովս առլցուն,
Հուղարկավորներս՝ խնկատուփի մը փոխարեն
Հողակույտիդ վրա վառեն...

ՍՈՒՐԲԻՆ ԱՂՈԹՔԸ

«Լո՛ւյս տուր ինծի, Աստվա՜ծ անհերքելի,
Տիեզերքի անմեկնելի ճարտարապետ,
Ճակատագրի և ճանաչման ստեղծի՛չ,
Շունչի՛ մրրիկ, կեդրոնական կարողություն,
Սուրբ սեղանիդ սարկավագն Մեսրոպ՝
Իր մշուշապատ մեծ երազին՝
Քու ձեռքերեդ հստակությո՛ւն կ'աղերսե...

Օգնե՛ ինծի, մեծապարգև՛ իմաստություն,
Ես՝ անցուպ հովիվ մեծ քարոզիդ,
Ես՝ եղկելի մահկանացու, ես դժգույն անտես
Հայկազնյան ահեղ ցեղին...
Ես՝ տգետ դպիր և անվավեր վարդապետ,
Ես՝ անծածան դրոշ հավատացյալ ամբոխներուդ,
Ես՝ անօժիտ վերծանո՛ղ և անանձրև այգեպան
Ես՝ կույր աղբյուր և կորաքամակ ճանապարհորդ,
Ես՝ անարժան օրհնաբան անվերջ փառքիդ,
Իմ անդպիր հոտիս համար լո՛ւյս կ'աղերսեմ...

Օգնե՛ ինծի, Աստվա՜ծ բյուրեղ...
Ես՝ ողորմելի որոնիչ և անհետևանք խուզարկու,
Ես անքանքար քննիչ և անբերրի հյուսե,
Ես անաստիճան ճգնավոր և անթռիչ հռետոր,
Դառնաժպիտ թափառական և աշակերտ անբանիքուն,
Երազատես մոլորյալ և անտաղանդ անրջող,
Ես սահմանափակ պատուհան և փակյալ դուռ,

Ես իմ հոգիիս հանդեպ փշրող երկա՜թ ալիք,
Ես գերեզմա՜նի պահապան և մեռելո՜ց հաշվակալ,
Ես հրեղեն հացիդ կարո՜տ ցորենաքաղ...
Ես աներդիկ գիշերող և անսափոր ծարավի,
Ես մենավոր մշակ տատասկներու մեջ կորուսյալ,
Ես անճառագայթ աղջամուղջ, ես՝ անլար քնար,
Դեռ անբարբառ Հայկազնյաց հոգիին՝
Բացատրության Բանալի՜ մը կ'աղերսեմ...

Օգնե՛ ինծի, Տարրերու հայր,
Ես աչք աղոտ և տեսողություն անթափանց,
Ունայնամիտ ունկնդիր և չարալուր ականջ,
Աննկարագրելի երաժիշտ և մեղկաձայն երգիչ...
Ես՝ անհողագործ դաշտորա, շտեմարան թափուր,
Սեղանասպաս անհաց և ցամաքյալ գինեբաշխ,
Ես՝ անկոչ հրավիրյալ Հիսուսական հարսանիքին,
Ես անձեթ լուսարար և անմատյան մտածող,
Ես անգորով գգվիչ և սիրազուրկ սիրահար,
Ես անհրապույր քարոզիչ և քարկոծյալ քրիստոնյա,
Օժիտաբեր աղքատ և անուկի հարուստ...
Ես անհամբույր շրթունք և հոգեզուրկ հեծեծող,
Ես սի՛րտ անսեր և կուսություն անկատար,
Ես անբևեռ քալող և երերուն ուղևոր...
Քու փրկության փարոսներեդ կաթի՛լ մը լույս տուր ինծի...
Եվ երկնային դուռներուդ հետ հոգեկան
Կյանքին դռները դրախտին պես թող բացվին...

Օգնե՛ ինծի, անծի՜ր Աստված...
Ես անկարկաջ առվակ և խափանյալ ջրվեժ...
Ես ուսուցիչ անուս և վարանյալ վարդապետ,
Ես դպրության դեռ անպսակ տնօրեն,
Ես խղճերու հանդեպ ինկո՛ղ վարագույր...
Ես որմ մթաշեն, գեհենական բանտարկյալ,
Ես շյուղ կորուսյալ, հո՜ւնտ անպարգև...
Մացառապատ կածան, օձապտույտ գետնուղի...
Ես անհյուրընկալ օթևան և անբազմոց մահամերձ...
Լապտերիդ լույսը մի՛ մերժիր ինձ...

Օգնե՛ ինծի, համագումար Սկզբունք,
Մկրտության ես անմյուռոն ավազան,
Ես աղոթքի կիսակործան գավիթ,
Ես արորազուրկ հողագործ, անգերանդի հնձող,
Ես անբույր օծանող և դառնահամ յուղ,
Ես անբալասան բժիշկ և անբեհեղ վիրակապ,
Ես կոտրած կանթեղ և պապակյալ պատրույգ,
Ես հողմակոծ անտառ և արտասվաթոր ուռենի...
Ես անտաշ ատաղձ և բորբոսյալ գերան,
Ես հողաշեն բուրվառ և անծխելի խունկ,
Ես անողկույզ որթատունկ և վարակյալ վարսակ,
Ես անճշմարիտ ճակատ և անուղիղ ձեռք,
Ես անկարող կարգավոր և աննշխար քահանա,
Ես մենության մեջ մխացող անկարավան անապատ,
Այցելությո՛ւն տուր ինծի...

Օգնե՛ ինծի, ո՞վ անբաղդատ օրենք,
Ես վարանոտ մարդ և հուսահատ անձ...
Ես ահաբեկ անհատ և շվարած շնչավոր,
Ես տարակույսին մեջ տատանող հոգմահալած
Անլսելի աղաղակ և անարձագանք շեփոր...
Ես գոս տերև՝ աշուններեն վա՞ր ինկող...
Ես շորացյալ ճյուղ և անհոտավետ վարդենի,
Ես ուշիմության ուրվական,
Ես կարճիմաստ իմացական և խոնարհած խելք,
Եկեղեցիիդ կամարներուն տակ հեծեծող՝
Քրիստոնյա ժողովուրդիդ դեմ հանդիման
Ես աստվածաշունչ մեծ Մատյանիդ
Օտարալեզու ընթերցող և անհարազատ թարգմանիչ...

Օգնե՛ ինծի, անծայրածիր Սանոթություն,
Գերազոր Տեր, անհուն հնարիչ,
Լույսի զենիթ, անկնճիռ իմաստ,
Ջուր երկնային, անանջրպետ հոգի,
Անհաշիվ բաշխող, երազներու սահանք,
Ճանաչումի քու ծածկոցդ լուսեղեն
Իմ կործանյալ ուսիս վրան թող ծածանի,
Եվ՝ հսկումներու, հեծեծանքի, աղոթքներու

Այս իրիկվան, քառասներորդ գիշերին՝
Աստվա՞ծ անհեղլի, Աստվա՞ծ անափունք,
Արարչագործ ձեռքդ իմ ուղեղիս երկարե,
Հոն իմ գյուտս խմորելու...»։

ՏԵՍԻԼՔԸ

Ո՞վ հրաշալիք, ո՞վ հավատքի աննյութական հուր,
Ո՞վ զարմանագործ զորություն,
Ո՞վ բոցեղեն բժժանք, ո՞վ անլույծ խորհուրդ,
Ահավասիկ Քերովբե մը՝ մրափին մեջ Մեսրոպին,
Իր աջ ձեռքովն լուսագիծ՝
Ակնթարթ մը՝ մենաստանին որմին վրա,
Հայկազնյան Այբբենարանը տառագրեց...
Հանկարծ՝ Սուրբը, մեծ Տեսիլքեն ցնորաշարժ,
Մեռյալի մը պես ընդոստ ոտքի,
Փետուր գրիչն և տախտակն ի ձեռին,
Հրաշքին տակ արտասվելով,
Որմին առջև անհաունարեն ծնրադրեց...

ԳՅՈՒՏԻՆ ՓԱՌՔԸ

Մեսրո՛պ, հայ դարերուն դիմաց կեցող՝
Դուն ադամանդյա ապառաժ,
Դո՛ւն մանուկներու մերկ ուղեղեն
Մինչև հանճարը ցոլքեր ցանող,
Գիտակցությանց անգյո՛ւտ փարոս...
Դուն, որուն կոփյունը կռանին,
Ժամերուն պես, բոպեին հետ անդադար,
Իմացական թանգարանի՞ն արձանները մեզ կը ձուլե...
Դուն աննինջ հսկող, դուն Տիտանյան տեսնող,
Դուն օրորոցեն մինչ գերեզման,

Մեր մեն մի խոսքին մեն մի շունչին,
Գեղեցկաձայն բացատրիչ...
Դուն բարբառի արարիչ, Բանի իշխան,
Դուն անբավ բավիղ տեղողության,
Դուն գոյացության արգավանդ հայր,
Դուն լույսի անիվ, դուն հավատքի հրավեր,
Դուն հայրենի հողին վրա մրրկին պես բարձրացող
Անտա՜ռ անհուն, անտա՜ռ սրտի,
Որուն մեն մի հաստատաբուն ծառերն հսկա,
Մեկ մեկ քնար, մեկ մեկ փանդիռ են մեր շունչին...
Մեկ մեկ շեփոր մեր հագագին ռազմական,
Մեկ մեկ պատնեշ ճակատագրի՜ պատուհասին...
Դուն անվատնելի ցորյանի դաշտ, դուն ձրի՜ հաց,
Դուն հունձք հարուստ, և դուն հնձան հրաշեկ,
Դուն արբեցության և գինիի ավազան,
Որուն մեջ ե՛ս ալ ոսկի սափորս եմ մխրճեր...
Արևներու ծարավես խենթ...

Դուն մեծաթափանց նայվածքներով առաքյալ,
Դուն էիր, որ զքեզ երգող ցեղդ այսօրվան,
Հելլեններեն և հանճարեղ և հրավառ
Ու աշխարհակալ մեծ Հռովմի որդիներեն,
Ու հրապաշտ պարսիկներեն դրացի,
Մայր-բառբառիդ հիմնաքարովն հակինթ,
Հայկազունյաց մեր շառավիղն ազատեցիր...
Դուն երկրո՛ղ Աստված,
Եվ մտածման Դուն առաջի՛ն արարիչ...
Դուն բեղո՛ւն բարիք, սրտի՛ աղբյուր,
Գույներու գանձ, գթության գահ,
Դուն թռչող դարերն մեկզմեկու կամարող
Կամուրջ անգիծ, ուրկից ցեղդ միլիոններով՝
Կամ պերճորեն կամ վատաբար,
Կյանքեն ի մահ, կուգա կ'անցնի...
Դուն Հելլեններեն հռչակված,
Մեծատիտղոս Ակումիտ,
Ո՜վ մենակյաց, ո՜վ Մագիստրոս, ահավասիկ
Երկու Հայքերն «Օվսաննա՜ քեզ» կրգոռան...
Եվ Օվսաննա Վաղարշապատի Հայրապետին՝

Սահակ Պարթև զուգակշիռ արքանյակիդ,
Եվ Վռամշապուհ Արքային,
Որովհետև քու մեծ գյուտիդ զորավիգ,
Մեկն իր Խաչին, մյուսն իր Սուրին համազոր
Քու քայլերուդ հետ՝ քալելով՝
Արարատյան արշալույսին,
Դպրության դուռը մեզ բացին...

Ա՜հ, ամբողջ արյունը Քու ուղեղիդ,
Ի՜նչ տենդերե որպիսի՜ տենդ,
Եվ սարսուռներե ի՜նչ սարսուռ,
Ի՜նչ գեհենական գալարումե գալարում,
Եվ վարանքե վարանք և վարկածե ի վարկած,
Եվ ծովային ծփանքներե ի ծփանք,
Այլակերպիչ նժարե մը ուրիշ նժար,
Եվ կշիռե ի կշիռ, զքե՜զ տարավ...
Ու մեն մի հյուլեն քու հոգիիդ,
Մեն մի ճաճանչը քու աչքերուդ,
Մեն մի կաթիլը քու հանճարիդ կայծերուն,
Հողմային հևքդ և խոլ թափը թռիչներուդ,
Աղոթքներուդ հորձանքներն հրեղեն,
Քառասուն օր՝ տիվ և գիշեր,
Մենության մեջ, մեռյալի մը պես մենավոր,
Զքեզ դեպի Տեսիլքդ տարին...
Եվ անուրջին մեջ ծնանող ծաղկի ծիլեն,
Ու բողբոջեն դեռ անբույս,
Դուն մարող լույսեն, դուն տեսլական ստվերեն,
Անգույն գծեն և երազի վսեմ վարդեն,
Դուն ոլորտեն, անձայն շեշտեն, անգույն բառեն,
Դուն ծածանող և անարմատ ծվեններեն,
Դաշնակության Ալփաբետան ստեղծեցիր...
Եվ Չորրորդ դարու Ոսկի Սեմեն,
Մինչև մեր օրը, մեր արյունովը մթին՝
Ահավասիկ Հայ Հանճարը բազմալար
Քու ձևերուդ մեջ կձուլվի...

Ո՜վ անլուծելի առեղծված,
Ո՜վ ջղերո՛ւ կայծակե խուրձ,

Արյան հնոց, անուրջներու անբիծ ծավալ,
Ո՜վ զարմանալի և տեսական զգայախաբ,
Քնարական ահեղաբի՛ք քիմեռատես,
Դուն Աստվածագիծ ծիածան...
Հաշտության հուրը մեզ բերող,
Դո՜ւն տարակույսին և տարտամին տիրապետ,
Դո՜ւն տարօրինակ և տարագիծ գմբեթ...
Դո՜ւն մեծ կրքերու կրոնավոր,
Ա՜յր Աստուծո, մտքի՛ եղբայր, քնարի՛ քույր,
Քու բաժակեդ թո՜ւյլ տուր որ ես ալ ըմպեմ...

Եվ այսօր քու սրբությամբդ սնած՝
Ես ապաժաման քնարահար,
Եվ անվճար ու անարժան երախտագետ,
Ես՝ քու ցեղիդ հոգիին հայելին քեզ կրբերեմ...
Աչքերուս մեջ անոր աչքեն հուր առի...
Ու իմ խոսքերս անոր սրտեն եմ քաղեր,
Եվ ի՛նչ որ կարդաս ճակտիս վրան,
Ի՜նչ որ կարդաս ժպիտիս մեջ,
Անոր Հույսո՜վն եմ ես գրած...
Եվ թույլ տուր այսօր, ո՜վ Մեսրոպ,
Որ՝ Հայոց հողեն մինչև աստղերը հասնող
Քու ոսկիե սանդուղեդ վե՛ր բարձրանամ,
Եվ հաստատաքայլ, աստիճանե աստիճան
Ու պսակե ի պսակ և լույսե ի լույս,
Իբր զավակ մը մտածումիդ,
Ես ի քե՛զ գամ, իմ այս երգս երգելու...

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

ԾԻԱԾԱՆ

ԶՄՐԱՆ ՊԱՐԶ ԳԻՇԵՐ

Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
Թո՜ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց։

Պարզ, լուսածածան, հրաշալի՜ գիշեր,
Հոսե՜ սրտիս մեջ դյութանքիդ ալիք.
Ճերմակ երազիդ ցայտքերեն մեղմիկ
Պուտ պուտ կաթեցո՜ւր հոգվույս սիրաջեր։

Կ'ուզեմ որ դադրին ձայներն այս պատիր,
Ու նեկտարիդ գողն ըմպեմ ես անհագ.
Կ'ուզեմ որ մեռնի՜ն տիվ ու ժամանակ՝
Ու դաբիրներուդ իյնամ ծնրադիր։

Ու դաբիրներո՜ւդ իյնամ ծնրադիր,
Այս պաղատագին շարժուձևիս մեջ,
Ու մինչ կ'ողողեն զիս ցոլքերդ անշեջ,
Աչքերս ալ մոռնան տակավ այս նատիր։

Ցնորաբե՜ր գիշեր, ա՜հ, ընդունե՜ զիս,
Ընդունե՜, միստիք ո՜վ անդորրություն,
Իմ աղերսակոծ շունչիս սոսավյուն,
Եվ համբույրն անանց՝ զոր կու տա հոգիս։

Սենյակս է լեցուն հուշքերովն աղի
Երեկի հովին վայրագ տարփանքին.
Ու դեռ կը հծծեն խորշերն ողբագին
Վախը գրգանքին անոր կատաղի։

Նե՜րս խուժե ուժգին, նե՜րս պատուհանես
Ու լեցուր խցիկս, մինչև կաթոգին
Քու սրբությունով իր խորշերն հորդին,
Եվ ես արթննամ վաղնջուց քունես։

Համբույրիդ, գիշե՜ր, պատուհանս է բաց,
Թո՜ղ որ լիառատ ծծեմ՝ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու զով շաղերուդ կախարդանքը թաց։

ՍԻՐԵՐԳ

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսեղեն ճամբեն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անույշ է, գիշերն հեշտագի՜ն...

Համբույրներ կու գան հովեն ու ծովեն,
Համբույր՝ լույսեն, որ շորս դիս կը ծաղկի,
Այս գիշեր Տոն է հոգվույս՝ Կիրակի՜,
Համբույրներ կու գան հովեն ու ծովեն։

Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կը մաշի՜,
Շրթունքս են ծարավ միակ համբույրին...
Ցնծագին գիշերն է լույս ու լուսին՝
Բայց լույսն իմ հոգվույս քիչ քիչ կը մաշի...

ԿԱՅԾԵՐ

Հոգվույս դափ ու թմբուկի
Կ'իջնե ծիծաղն այս գիշեր.
Ծնծղաներու պես ցնծուն՝
Ծափ կը զարնեն իմ հուշեր։

Բամբիռներու երգին հետ
Քու շահենի աչքերուդ
Ծիրանեծին բոցն հրրուտ
Կ'այրի հոգվույս մեջ նորեն։

Գինով՝ աննյութ նեկտարեն
Համբույրներուն ծաղկանույշ՝
Հոն խոլաբար կը պարեն
Շարժուձևեր բամբիշի։

Ցայգն համրորեն կը մաշի՜,
Ա՜հ, քի՜չ մըն ալ, քի՜չ մըն ալ,
Կ'ուզե հոգիս գինովնալ
Նայվածքիդ մեջ հրահոսան։

ԹՐԹՌՈՒՄՆԵՐ

Լույսի բիծեր ծիրանի
Կ'ասղնտեն քողքը մութին.
Լուսնի ցոլքեր կ'անհետին
Խորքը ծովուն հոլանի։

Հրմայքներով փողփողուն,
Հեշտություն մը կապույտի,
Հանդարտորեն կը ժպտի
Հոգվույս մըռայլ տենչերուն։

Սիրո հուշեր լուսավետ,
Դողդոջուն ու ցնծագին,
Արագորեն կը ծաղին,
Հրպարտ կ'անցնիմ երբ քովեդ։

Ըզգացում մը բյուրեղե,
Միածանի երանգով,
Ցավոտ հոգվույս մութին քով
Լույս ակոսներ կը պեղե։

ՑԱՅԳԱՆՎԱԳ

Կու գա սիրերգն հեղեղատին
Անտառներու մեջ մենիկ,
Երբ ժըխորներ պահ մ'ընդհատին,
Հասնի գիշերն երջանիկ։

Արևելքի գիշեր մը ջինջ,
Շափյուղազարդ երկինքով,
Ուր հեշտություն է ամեն ինչ,
Ամեն իր լի բուրմունքով։

Ծառաստվերի տակ սխրալի,
Բուներուն մոտ ու հեռու,
Ջինջ հեղեղը կը թավալի
Արծաթացող լույսերու։

Ու կը շրջի անտես ոգին
Հոն անտառի ծառերուն՝
Խարշափն որոնց, թույլ, հեշտագին,
Կը նրվագե օրորուն։

Պիշ կը դիտեմ սաղարթախիտ
Արահետները նրբին,
Ու երազներս ականակիտ
Հետզհետե կը թափի՜ն...

...Դեռ մինչև ե՞րբ, ըսե՜, հոգի՜ս,
Դեռ մինչև ե՞րբ տառապիմ,
Պրպտելով անրջանքիս
Թոշ ծաղիկը մտերիմ։

Գուցե վազը մթնե հոգիս,
Գուցե դա՜ն ալ թարշամիս,
Մ'եղծեր հրմայքն անրջանքիս
Ու ծաղիկը պաշտումիս...

ԵՐԱԶԻ ՊԱՀԵՐ

Լույսը մարած սենյակիս մեջ,
Ուր կը հոսին գալար-գալար
Հորդ ալիքները մութին;
Ու կ'անհետին
Արծաթ շողերն երազի.
Ես կը փնտռեմ մրտամոլար
Ըղձանույշի ձեռքն այն փափուկ, երկնային՝
Որ պիտի տար ինծի ծաղիկն ըսփոփանքին։

Ես կը փնտռե՜մ,
Ըսպասումեն հոգիս համակ պարտասած,
Ու տենչանքով մշտահած.
Ես կը փնտռեմ,
Հորիզոնին վրա նըսեմ,
Լույսի շող մը՝ զոր կը մարեն անդուլ վարանքն ու կասկած։

Ու տակավ,
Կ'իջնե ձանձրույթն երազանքիս,
Հանդիսավոր ու տրտում,
Ու կը պատե իր մըշուշե պարուտակին մեջ հոգիս
Անձկությունով անպատում։

Մրտածումը, ինչպես ճամբորդ ուղեկորույս,
Կ'անցնի փութով, անձկագին,
Երկարաձիգ, մերթ լուսավոր ու մերթ անլույս,
Ճամբաներեն իմ մտքին։

Ա՜հ, կը շտապեն, կը փախչի՜ն
Ճամբաներու լույսերն ամեն,
Հանկարծական խուճապի մը մատնված.
Ճառագայթի հազիվ վերջին
Բիծ ու խաղեր կը համեն
Քովը ճամբուն մթամած՝
Ուր համագրավ կը տարածվի վեհունի ցայգն համորեն։

Ես կը փնտռե՜մ,
Պատրշգամին վրա կանգուն,
Զույգ մը աչքեր՝ մեղեսիկե, որոնց ճրագը վառի
Հոգվույս մեգ ու խավարի
Անդոհության մեջ դժխեմ։

Պատրշգամին վրա կանգուն,
Ձեռքս հոգնաբեկ ճակատիս,
Մինչ կը հոսի գիշերն ինչպես ծով անհուն
Դեպ ի ափունքն երազիս՝
Ես կը սպասեմ հորդ ու վրճիտ լույսերուն՝
Որոնց բոցը պիտի ցոլա անծիր ցայգուն մեջ հոգվույս։

ՇԵՐԱՄԻՆ ՆԻՆՋԸ

Շերամատան մեջ կը հնչեն բոժոժները զիլ՝ դափին,
Որուն հուշիկ կ'ընկերանա ձայնն երգեցիկ կիներու,
Եվ կը մարի մերթ ճարճատուն ծիծաղներուն մեջ ծափին,
Պատուհանեն լուսնի լույսի շափրակներ ներս կը թափին։

Ընթափանքի ժամն է պշրոտ, փափկամարմին շերասին՝
Խածումն որուն՝ կը քթքթա տերևուտքին մեջ դալար.
Ու սատափներ, ու զյումրյութներ, ու շողակներ... միասին.
Մեկ փաղփի մեջ կը նույնանան շերամ, տերև ու լուսին։

Երազանուրբ անասնիկին օրհասն ու մահն ըսպիտակ,
Վերջին քունն ալ դափ ու ծափով պիտի տոնեն վաղ գիշեր,
Օդանույշի ձեռքով բանված զանակածոպ լույսին տակ
Հինգ աղջիկներ հուսկ օրորը պիտի երգեն վաղ գիշեր...

ՄՏԵՐՄԻԿ ՏԵՍԻԼՆԵՐ

Ու կը դառնան ջրրանիվներ ծերունի,
Կափկափելով համբարուի հեքեաթներ.
Թախծապատում բարբառի հո՜ծ կշռություն,
Որ կ'ակոսե լուռն աշնանի գիշերին։

Ու մարմանդին զյումրյութ՝ պայիկն օդանույշ
Նոր կը հագնի լույսի մետաքս թելերով
Շարամանված պատմուճանն իր մըշուշե՝
Ուր մերթ շողակն օդաքարին կը վառի։

Ու բոժոժին ձայնեղ՝ գանգյունն արծաթե...
Ու սայլորդին ըստվերն որ՝ գո՜րշ՝ կ'երկարի՜,
Ու սիկառին ծուխն՝ որ բիլ-բիլ կ'ամպանա՝
Ու լազվարթե գիծը ճամբուն հեռացող...

ՇԵՐՄԱԿ ՎԱՐԴԵՐ

Ըսպիտա՜կ վարդեր, ըսպիտա՜կ վարդեր,
Զոր հովն անտեսեց այս ճամբուն վրա,
Շամբուշ հովն աշնան՝ որ կը դղրդեր
Մոլեգին՝ հոգին ընդերքն համորեն։

Ճերմա՜կ գաղափար, ճերմա՜կ գաղափար,
Աշնան մոլուցքեն դողահար հիմակ,
Համբո՜ւյր շուշանի, դյութանք ձյունեղեն,
Փերթ-փերթ լուսինկա, ապրշում համակ։

Բե՜ր ինծի իղձիդ կաթը խանդաղատ։
Մենավո՜ր վարդեր, որ մելամաղձիկ
Մառախուղներուն մեջ դեռ կը ժպտիք,
Ապրեցե՜ք հոգվույս մեջ հավերժորեն։

ԱՔԱՍԻԱՆԵՐՈՒ ԾՈՒՔԻՆ ՏԱԿ

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
Ի՜նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե։

Աքասիաներ, գինով լույսե ու տապե,
Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.
Մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտեան՝
Զոր խոլաբար հովը գրկել կը շտապե։

Ու լույսն անոնց, անխոս հուրի՜ դյութական,
Հըմայագեղ ու վարսքերով արծաթե,
Շատրվանին կ'իջնե գուռին մեջ կաթե։

Ջուրը ցայտքեն ծաղիկ-ծաղիկ կը կաթե.
Վրձիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
Նրվագն անոր կը հեծեծե հեշտական։

Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե...

ԱՅԳԵՐԳ

Սարերուն մեջ կը կոծկոծի այգուն՝ կոչնակը վանքին,
Եղնիկները մրթնշաղին դեպ ի գետափ կը դիմեն.
Աղջիկ մըն է կարծես հովը՝ գինով մուրտի բուրումեն՝
Որ ջուրերուն վրա կը դառնա սարսուռի պարն հեշտագին։

Վանքին քովի արահետեն կարավանները կ'անցնի՜ն,
Բոժոժներուն երգը լալով գիշերին մեջ տրտմորեն.
Մինչ կըսպասեմ ջինջ լույսերուն՝ որոնք ծագիլ կը համեն.
Ու կը լսեմ շշուկներն՝ որ կը հծծեն մեջը ցանկին։

Կիրճին խորը, ժայռին ծոցն է գյուղանըկարը փռված,
Տարտամորեն, հսկայական, արծիվի մը ձևերով,
Մագիլները խորասուզված խորշերու մեջ մրթմամած։

Արբշիռ բույրեն՝ զոր կը բերե ինծի առտուն անխրոով,
Ես կ'երազեմ ծառերուն տակ ու կըսպասեմ խոլաբար,
Լույս պարիկին՝ որ իղձերըս պըսակելու պիտի գար։

ԳԵՏԱՓԻ ԵՐԱԶԱՆՔ

Գյուղն համորեն կը մրրափե ծոցն արևոտ ժայռերուն.
Տիվանգորրի պահն ըմպած է մեղկ հեշտություն մը սյուքի,
Որ ջուրերուն վրա կը ցանե գինովի դողն իր թրթռուն,
Գետն համբույրի մը երազով դեպ ի ափունք կը թեքի։

Գետեզերյա ծառաստաններ, միջօրեքի այս պահուն,
Ինձ անծանոթ թավուտքներե կը խրկեն բույրն հեշտանքի,
Որ համրորեն կը ծավալի ծաղիկներեն այն լըքուն,
Ասդին-անդին սարտրղնըված՝ որոնց հոգին կը ցամքի։

Եվ հընամի ծառեր զյումրյութ միայնության ընդմեջեն,
Կ'արտածորեն մուշկի բույրեր ու ժպիտներ ալ բոսոր.
Կիսամըրափ կ'երազեմ, գիս աղաղակներ կը կանչե՜ն...

Ձայներ՝ դյութիչ աշխարհներե, տարտա՜մ, անո՜ւշ, հեռավո՜ր՝
Որոնք անդին գիս կը տանին երանաստան մը բաղձոտ
Ու կը նիրհեմ արբշիռ՝ հովին դյութիչ նեկտարն ըմպած հետ։

ԽՈՆՋ ԻՐԻԿՈՒՆՆ ԱՐԱԳՈՐԵՆ...

Խոնջ իրիկունն արագորեն կը խոնարհի դեպ ի խավար,
Բուրմունքներու հաշիշն հոգվույս մեջ կը ցանե հեշտանք
մը թույլ,
Ծրգի խազեր կը կրքոտին տակավ տենդոտ հուզումնավար։

Անօրինակ մըրափի մը մեջ կիսազգած կը թափառիմ,
Յնցված ձայնեն ճոկաններուն՝ որոնք կու լան դուրսը անդուլ.
Պատուհանեն կը խրկե ինձ հովիկն համբույրն իր մտերիմ։

Մութ սենյակիս մեջ կը շրջիմ առջի համբույրն անրջելեն,
Ու շրթունքներս են բոցավառ ջերմութենեն երազային.
Փակ են աչքերս, և կամ հանկարծ մերթ անձկությամբ
դուրս կը նային,
Ա՜հ, լռությունն, որ կը տևե՜, և ըստվերներն, որ կը քալեն...

Շուրջիս անփույթ իրերն համակ հարցումներուս հանդեպ
խուլ են,
Հանդիսատես կ'ըլլամ մտքիս պատկերներուն քայքայումին...
Դուն չե՜ս գիտեր, թե ի՜նչ կըզգամ գուրգուրանքիս երբոր իմին՝
Քեզի համար տենդով հյուսած երազանքնե՜րս իսկ կը խըլեն...

ՑՆՈՐՈՏ ԱՆԴՈՐՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեշտ, փալփըլուն գիշերներու անդորրություն մը ցնորական...
Դոդոշներու մերթ կեղերջներ լուռին սրբույթը կը լլկեն.
Ծովախորշին մեջ ընկղմած լույսե աչքեր՝ որ կը խոկան՝
Հոգնա՜ծ, մաշա՜ծ իրենց տարփոտ, իրենց բոցեղ
տրտմութենեն։

Ցայգն է ժայթքած իր շողակի շատրվաններն անրջական,
Հեռուներեն ուտի մը թավ հեծքը կու գա դողդրղալեն.
Այս գիշեր ջերմ ու երազված կայծեր հոգվույս խորերն ինկան,
Կը մարեմ լույսը լամպարիս, ու կ'երազեմ մըրափելեն։

Շանթե աչքեր, բոցե թևեր մըտածումիս կ'անցնին քովեն.
Եվ հուրիներ՝ նոր հոլանած ալապաստրը իրենց կուրծքին՝
Որոնց համար շրթունքներըս անթիվ իղձեր կը թոթովեն։

Որմին վըրա տրտմություն մը կը ցանե բիլ եղրևանին,
Դաշտերուն մեջ հարսնուկներու բոսոր իղձերը կը ցամքին.
Մինչ ես կ'ըմպեմ հաշիշն անհագ ցընորաբեր այս գիշերին։

ՎԵՐԱԴԱՐՁԻ ԵՐԳ

Կսկիծ կա սրտիս մեջը վիրավոր՝
Զոր արևին լո՜ւյսն անգամ չի բուժեր.
Խորունկ ու ցավոտ մորմոքում մը որ՝
Ա՜հ, պիտի լայնա՜, երբ իջնե գիշեր։

Կը հյուծին ցոլքերն լույսին հեռավոր,
Խարույկի մը պես՝ որ վաղ է մաշեր.
Բայց դեռ կը հուզե զիս տեսիլք մ'աղվոր՝
Զոր ինձ կը բերեն անցյալին հուշեր։

Ու պիտի ապրի՜մ, վիշտը նոր ուժեր
Կը բերե հանկարծ հոգվույս սիրավեր,
Կյանքին կը դառնամ դեռ չըրած գիշեր։

Փուշեր նետվեցան օրե օր վերքիս,
Ու հոն հեծեծանք մը բերին հովեր,
Բայց սիրո հույս մը կ'արևե հոգիս։

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՀԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրիկուններն ես կը խոկամ,
Ամայության երգը կ'անցնի
Պատուհանիս երբ առջևեն,

Անկապ ձայներ զիս կը թողեն,
Հոգվույս մեջէն մերթ Աշունի
Կ'անցնի հանկարծ ուրուն տարտամ։

Գիշերն համբուն ես կ'երազեմ
Ցավը կյանքի Աշուններուն,
Ու շամբուշ հովն՝ որ կը նանի
Դեպ ի տամուկ խորշեր նրսեմ՝
Զորս տերևի տեսիլն աղփուն,
Որ օդին մեջ կը տատանի։

Եվ ցուրտ այգուն միշտ կը դիտեմ
Պարուտակը մրշուշներուն,
Զոր գիշերվան անտես ձեռքեր
Թույլ միջոցին մեջ են ձգեր,
Վրհատության պես մոլորուն՝
Զոր քաշած է սերն հոգվույն դեմ։

Բայց թափառի՛լ կ'ուզեմ ընդմիշտ,
Մառախուղին ու հովուն դեմ,
Ու դաշտերուն մեջ ամայի,
Ուր աչքն ահով միշտ կը նայի,
Դիտել՝ տժգույն ու դալկադեմ
Բարձունքներուն տամուկն ու վիշտ։

Հոգիս հիմակ հափրանքն ունի
Սիրո խանդ ու հրայրքներուն,
Ու ծաղկալից եղկ ջերմության
Վայելքին վերջ բաղմաբույրյան,
Կ'ուզե մրշուշն այս օրերուն,
Ու ցրտագին զովքն Աշունի։

ԱՅԳԵՐԳ

Այգն է ծաղիկ երազով լի ու բալաձիգ՝ թեթևորեն
Մրշուշն անծալ ջրվեժի պես ամբարտակեն վար կը հոսի.

Իր չրփույթին մեջ կը շիկնի ոսկի աղջիկն արշալույսի,
Այգն է ծաղիկ երազով լի ու բալաձիգ՝ թեթևորեն։

Երկու բոցե թևերու մեջ ծովանրկարն է սխրալի՜.
— Կապույտի՜ փառք ամրափակված շրջագիծով ոսկեդրվագ,—
Ուր ցնծալից թևճակներու հեշտերգն ունին կուր ու նավակ.
Երկու բոցե թևերու մեջ ծովանրկարն է սխրալի՜։

Պիտի ըմպե՜մ բոցն արևին, ճառագայթի՜ եմ ծարավի.
Պիտի ծրծեմ բույրն առտրվան՝ հոգվույս համար՝ որ
հիվա՜նդ է.
Հոգվույս համար՝ որ կ'երազեր գգվոտ ու մեղմ շունչն հարավի,
Պիտի ըմպե՜մ բոցն արևին, ճառագայթի՜ եմ ծարավի։

Քիչ մըն ալ դո՜ւն ժպտեիր, ա՜հ, հոգվույս համար՝ որ
հիվա՜նդ է.
Նայվածքի խաղ՝ որով դառնա աշխարհն ինծի ծափ ու ծաղիկ,
Տարիներով իմ երազս էր սիրո գարուն մը խաղաղիկ,
Քիչ մըն ալ դո՜ւն ժպտեիր, ա՜հ, հոգվույս համար՝ որ
հիվա՜նդ է։

Սեր-Արևիդ բոցն երկարե խորերն հոգվույս իմ պատանի,
Ջերթ արևին լեզվակն ոսկի՝ որ կը ծրծե մրշուշն այգուն.
Ո՞ւր է ճաճանչն հուրքը ջերմին՝ որ մառախուղն առնե տանի,
Սեր-Արևիդ բոցն երկարե խորերն հոգվույս իմ պատանի։

ՄԹՆՇԱՂՆԵՐ

Վերջալույսի աղջիկն է իր կուսության մեջ քրքում.
Ինչո՜ւ մինակ մընացի երազիս հետ թախծագին.
Թմբիներու բույրին տակ, նուռիներու ծաղիկին՝
Ա՜հ, ինչո՞ւ ես մընացի գիրկն երազին այս տրտում։

Ո՜վ դուն հիրիկ ծաղկանույշ, երբ անցար հետ լույսերուն,
Բան մը փըլավ հոգվույս մեջ քայքայումով ողբագին.
Դարձիդ քի՜չ մըն ալ ժպտե սա՛ լուսաբաղձ հիվանդին՝
Որ քիչ առ քիչ կը մեռնի՜ կառչած իր խոլ հույսերուն...

Մութը կ'իջնե հոգվույս՝ ուր վաղո՜ւց գիշեր է արդեն.
Ըսպասումի՜ ցայգ՝ ուր դեռ չըշողաց լո՜ւյսն երազին.
Հազիվ քիչ մը բույր ծրծած մոռացումին ես վարդեն
Նորեն քեզի՜ կը դառնամ, ա՜կն արևիս ոսկեծին։

Լուսնի պայծառ տիվին տակ պիտի համբեմ անդադար
Բուստե զարկերն ոգևոր՝ առույգ սիրո երազին.
Ա՜հ, քիչ մը լո՜ւյս, ժպի՜տ մը՝ որ կյա՜նք ինծի պիտի տար,
Եվ փարատեր լըքումն՝ որ կը ծանրանա իմ ուսին։

Եկո՜ւր, արդեն կը մրսի՜ն հեք երազներն իմ որբուկ,
Ա՜լ հոգնած եմ անցնելեն կածաններե մենավոր,
Անձրև կ'իջնե հոգվույս մեջ, կըզգամ մահվան սրսըփուք,
Ջեռքս է պարապ մընացեր դատարկին մեջ սրգավոր։

ՆԱՎԱԿՆԵՐԸ

Նավակներ մեկնեցան ամենն ալ, բաղձանքով ակաղձուն.
Հեռացան ամենն ալ՝ ծրփանուտ Երազիս ափունքեն.
Անձուկին բոցը զիս պաշարե՜ց. Ըսպասման հիվա՜նդն եմ.
Հոգեսարս դողերով և հուրքով միշտ ցայգերն են հրդի.
Գիշերներն ես համբուն կը սպասեմ ծիրանի այն դարձին.
Ու ցայգուն ալ կ'անցնիմ ավազուտ ափունքեն՝ դողահար՝
Սրտաթափ ու խանդոտ երազի կայծերով առլըցուն։
Դարձուցե՜ք նավակներս հողմավար, ջրանո՜ւյշ պայիկներ,
Դարձուցե՜ք նավակներս դյութավար, իրիկվա՜ն հովիկներ...

ՄԵՂՈՒՆԵՐԸ

Տենչանքներըս, տարագնացի՜կ մեղուներ,
Ոսկի երիզ մը բանալով
Ու զանակներ անձրևելեն
Թրռան գացին երամ-երամ.
Անցան գացին դարուղիեն,
Կիսաթափանց մըշուշներու ապրշում քողքը պատռելեն
Եվ հածելեն մեջն արևին ոսկեծաղիկ մառախուղին։

Արևակի, սուտակներու ու զյումրյութի
Փաղփուն երանգը ծրծելով իրենց չորս դին.
Ծործորներեն, բացավայրեն
Ու ցորենի գադիշներեն անցան անդին.
Ես գետափին մոտ մընացի վարատակա՜ն,
Մելամաղձիկ երազս հրդած
Դեպ հեռավոր ծաղկաստաններ՝
Ուր թառեցան մեղուներն իմ տենչանքներուս։

Մեղուներն իմ տենչանքներուս՝
Միջօրետքի պահերեն վերջ,
Որոնց դարձին ես կըսպասեմ՝
Ուղեկորույս զակատելով։
Ահա՜ օրն ալ մըթագնեցավ,
Եվ ես ի զո՜ւր տարաժամ
Դեռ կըսպասեմ անոնց հևքոտ ու մեղրազօծ վերադարձին։

Ա՜հ, այս ցայգուն
Պիտի անցնիմ դարձյալ Վախիս ճամբաներեն.
Ալ հափրացա՜ծ, ուշակորույս,
Գիշերներու ըմպած գինին խավարածոր,
Պիտի անցնի՜մ ես այս գիշեր՝
Երկյուղիս սեպ ճամբաներեն,
Իմ գանկիս տակ
Հույսի ոսկի բոցին անուրջն առկայծելեն։

Ալ հոգնա՜ծ եմ
Ըսպասելեն տենչանքներուս մեղրին անույշ,
Ու տարաժամ այս հածումին մեջ երջանի՜կ պիտի ըլլամ՝
Եթե թունեղ խա՜յթ իսկ բերեն
Ուղեմոլար մեղուներն իմ տենչանքներուս։

ԲՅՈՒՐԵՂԻ ԴՅՈՒԹԱՆՔ

Մանուկ մըն է, որ կայներ դեմս հրրածամ արևին,
Կ'օծե հոգին իր շուշան լուսացնցուղ երազով,
Ու կը ծրծե հոտևան խտղանքն ու դողն այգուն զով,
Մինչ մեղեսիկ աչուկներն Եսին ցոլքով կը վառվին։

Նշուլագեղ ու պայծառ ցոլքով վճիտ իր Եսին՝
Երկինքն՝ որուն հրճվանքի ակեր ունի կապուտակ.
Ու կյանքի սերն հորդած է հոն լեռնածին զերթ վըտակ՝
Ուր կաթիլներ ու ցայտքեր հեազհետ կը հոսին։

Բյուրեղ մը կա ձեռքին մեջ՝ զոր կը ճոճե դարձդարձիկ,
Յոթը գույնին տե՛նչն ունի, լույսի անհուն խաղերուն.
Երանգներու, շողերու կ'ըղձա անուրջն օրորուն,
Եվ արևին կը նայի միշտ կաթոգին ու բաղձիկ։

Ա՜հ, ի՜նչ դյութանք, ծիածան ծոպե՛ր ունի ամեն բան...
Շափյուղանե՛ր... կարկեհա՜ն... զյումրյո՛ւթ, շողակ ու թարշիշ...
Ծովն է լեցուն գույներով ու ծիրերով ոսկենիշ,
Ինչպես դաշտերն ու լեռներ, ինչպես մարմանդն ու ճամբան։

Ծափ կը զարնե, ծիծաղեն ծըլե՛ր է ծիրն իր այտին,
Անո՜ւյշ արև մանկական, ամպ ու մեգի անգիտակ,
Իմ երկինքս ալ կը հրճվի ոսկեծիծաղ լույսիդ տակ,
Ու մոռցրված բուրմունքներ զիս կըզգխեն վերստին։

Պրիսմակ մըն ալ ե՛ս ունիմ, ու կը դիտեմ ցնծագին
Սիրույդ արևը պայծառ, սիրույդ արևը ջերմին,
Ու խանդաբորբ իմ հոգիս հանդեպ անոր պաշտումին,
Մանո՜ւկ մըն է, որ կայներ գեմն հըրաժամ արևին...

ԻՂՁԵՐ

Կես գիշերվան բուրումնահեղց վարդերով.
Որոնք գինով ցող ու շաղի կըսպասեն,
Պիտի հյուսեմ մանյակ մը նուրբ
Շուրջն սպիտակ պարանոցիդ.
Եվ այգուն
Պիտի գտնես ցողված՝ վարդերն այդ անույշ՝
Իմ արցունքիս ցողերով։

Ու օր մըն ալ,
Երբ թարշամի
Քայլն այդ ծաղիկ անուրջին,
Պիտի հյուսեմ նոր նարոտներ ոսկեբար
Անոր հուշքին տեղ բոսոր,
Իմ համբույրիս բոց ու բուրյան վարդերով։
Երազանուրբ ձյունաթորմի ձեռքերուդ
Պիտի բերեմ մեղեսիկն մատնիներ՝
Ու քողեքներ արևակե.
Եվ երբ անոնց ցոլքը մարի աննշույլ,
Տենչանքներուս բազմերանգ
Բոցով զանոնք պիտի վառեմ անդադար։
Ու լարերուն տեղ վինին հինավուրց
Պիտի դընենք արծաթ թելերն ըղձանքներուդ՝
Որոնք հավետ պիտի թրթռան
Տրոփումներովն իմ սրտիս։
Գինով՝ դյութիչ բուրմունքներեն ծաղիկներուն ըզգլխիչ
Ո՜վ դյութանույշն իմ սրտիս,
Պիտի հածինք միասին,
Ընթադրելով բույս ու ծաղիկ ու դալար,
Ու լալով
Բուրումնացան մահն անոնց,
Պիտի հածի՜նք,
Լույսի արծաթ անձրևին տակ
Ու ծոցին մեջ
Թավուտքներու կիսաթափանց գիշերներուն,
Ո՜վ երազին իմ աղջիկ։

ՑԱՅԳԱՆԿԱՐ

Համատարած անդորրության մը մեջեն.
Կիսաթափանց մըշուշներուն մեջ հալած
Ուրվագիծը տուներու՝
Որոնց լայնաքթիթ պատուհաններեն
Կը ժայթքեն
Լույսի ցայտքեր՝ տարփագին ծաղիկներուն պըլլըված։

Ու հեշտոտ ու մարմրրուն
Աղաղակն ալ նրվագներուն լարավոր
Կը ծաղկեցընեն դյութանքն անդորրիկ,
Գիշերվան մը երջանիկ։
Ու կ'երկարի՜, կ'երկարի՜
Խմբանկարը տուներուն՝
Տարտամորեն փաթթրված
Մեջն ապրշում մրշուշին,
Ու լայննալո՜վ, լայննալո՜վ
Դեպ ի ծովափն՝ որ երկչոտ
Կրսպասե
Ալիքներու համբույրին։
Ու եզերքեն հանդիպակաց
Ծայրը դալար հրվանդանին,
Ուր վաղուց
Մեռան ճիչերը ցորեկին,
Ծովին փոթ-փոթ երանգածուփ թավիշին վրա
Միապաղաղ կ'անդրադառնա
Ուրվանրկարը խուսափուկ
Լույսի ծրփուն ծաղիկին՝
Որ կը ծրլի փողփողուն ծովեզերքի փարոսեն։
Ու դեռ հեռուն,
Քաղաքեն ու բացավայրեն ալ անդին,
Կ'ընդնշմարեմ արտևանները ցրցուն
Մանիշակե լեռներուն՝
Մարմաշի մեջ պլլրված,
Հսկա հարսեր հեշտամոլ՝
Որոնց տարփանքը կրզգաս
Հեռուներեն, հեռուներե՜ն...
Ու կը լրսեմ վարերեն թևճակներու նրվագն ալ,
Ջուրերուն վրա թրրթրոուն,
Ու կը լրսեմ ծաղիկներուն ալ երգը
Աղաղակ մը սիրածուփ՝
Սահած ծոցեն դաշտերուն՝
Ուր ցաները կը վետվետին սիրատարփ։
Ուր երկինքն ալ կը քնանա,
Կապույտներու խորհուրդին մեջ երազելով
Վաղորդայններն երջանիկ։

ԱՐԵՎԻՆ

Հարավի մեղմ ու լիաշունչ հովին հետ,
Որ վաղուց երազված համբույրի մը պես
Իմ սիրակարոտ հոգիս հեշտանքով կը լիացնե,
Շողա՜, ո՜վ արև, շառափներովդ ոսկեծայր,
Մառախլապատ Երկունքիս մեջ՝
Ուր Մտածումը կը դեգերի ուղեմոլար,
Շողա՜, շողա՜, բարի՜ արև, հիվա՜նդ եմ...
Պատուհանիս հեղուկ ծոցին մեջ ինկած խելահեղ,
Միջօրեի հեշտադալար ու բոցակապ երազին գիրկը,
Թևատարած կրսպասե՜մ.
Պլլե՜ զիս բոցեղեն ցանցերուդ մեջ
Ու օրորե՜ ջերմագին
Ու կիզանուտ համբույրիդ տակ.
Թող հոգվույս մեջեն անցնին կարգավ
Մանուկներն ընդարմացած։
Մինչև որ
Կանգնիմ նորեն ու անցնի՜մ դարձյալ
Տարփանքիս խանդաղատ ճամբաներեն։
Հիվա՜նդ եմ, բարի՜ արև, շողա՜, շողա՜...
Հոգիս թռչնիկ մըն է,
Օդ ու լույսի, երգ ու ծիծաղի կարոտ,
Բայց երգը, որ իր ալուցքեն կը թռչի,
Անտես ու ստվերոտ սանդուխներու վրա
Կ'իյնա շնչահեղձ։
Շողա՜, շողա՜, բարի՜ արև, հիվա՜նդ եմ...
Ճառագայթող գոլիդ մեջ հեշտագրգիռ,
Մինչ կը խժա տարօրինակ, խոլ պարը զամբուռներուն՝
Հուրքե՛դ գինովցած՝
Ու, մինչ թուփ ու ծաղիկ ծարավեն կը մարմրրին,
Ես կ'ըմբոշխնեմ խտղտանքն անանուն՝ երջանիկ տիվանդորրիս,
Համրորեն ու գիտակից
Գինովությամբ հեշտագին։
Քի՜չ մըն ալ դեռ,
Ա՜հ, շողա՜, շողա՜, բարի՜ արև, հիվա՜նդ եմ...
Վերջին անգա՜մ մըն ալ,

Դեռ իրիկո՞ւն չեղած
Ու, դեռ տամուկ դիշերին վրհուկը զիս չընդգրկած,
Վերջին անգա՞մ մըն ալ,
Փարե՛ հոգվույս խանչարորը ու կաթոգի՞ն,
Հիվա՞նդ եմ, բարի՛ արև, շողա՛, շողա՞...

ՑԱՅԳՆ Է ՊԱՅԾԱՌ...

Ցայգն է պայծառ անհունորեն
Ցոլցլանքովն իր խոլապար.
Օդանույշներ՝ որ մեղմաբար
Քնքշանքով զիս կը պարուրեն։

Բուստ համբույրով՝ որուն կարմիր
Կարոտովն իմ հոգիս կու լար,
Ինչպես փանդիռ մը մեղմալար՝
Պոնդերու տակ մեղկ ու ցանցիր։

Պարզկա ցայգուն անուրջին մեջ
Լրվալ կ'ուզեմ հիմակ հոգիս,
Եվ հրրահրել՝ երբեմնի շեջ
Աշտանակներն իմ երազիս։

Մրտածումըս կ'անցնի նորեն
Շավիղներեն իր լուսավետ,
Հեշտություններ հոգվույս հավետ
Բերելով իր ճամբաներեն։

Գինո՞վ եմ ես ծազկանց բույրեն,
Տարաշխարհիկ ու գրրավիչ,
Ու ձայներեն ալ՝ որ քիչ-քիչ
Իմ երազներրս կ'օրորեն։

Եվ անծանոթ աշխարհներուն՝
Անեզրին մեջ խորհրդազեղ՝
Կ'անդրադառնա մեջն իմ հոգուն
Կրկներևույթը գունագեղ։

Պիտի ըղգա՞մ ես տևաբար
Բուրումն անոնց ծաղիկներուն,
Որոնք հեշտին կը դառնան պար՝
Լուսացնցուղ ցողով լեցուն։

Պիտի ծրծե՞մ ես անդադար
Հոծ երազանքն անոնց բալին,
Ու շողերն՝ որ կը փալփըլին՝
Ոսկեպաղպաջ՝ ինչպես նեկտար։

Պիտի անցնի՞մ ես խանդավառ
Այդ լուսոռոգ ուղիներեն.
Ես՝ ուխտավոր ուղեմոլար՝
Խորհրդածուի թափառելեն։

Պիտի անցնի՞մ ես Անհունին
Հավերժալուռ երկինքներեն,
Մինչև հույզերս ամեն թոշնին՝
Ու ես երկիր դառնամ նորեն։

ԻՐԻԿՎԱՆ ՁԱՅՆԵՐ

Կ'ալեկոծին տարփոտ ձայներն իրիկվան,
Հորձանքին մեջ հոգնակոհակ հովերուն.
Անրջածուփ, նրվաղ բույրերն երերուն
Վերջալույսի մեջ ոսկեզօծ կը հևան։

Խրրախության աղաղակներ հեշտալուր
Կը պլլրվին այդ ցնծաձայն նրվագին
Ու կ'անհետին՝ մեջն այդ ծրփուն հորձանքին՝
Հեշտերգության թույլ ծրվեններ կցկրտուր։

Ջիլ գեղգեղներ ու նրվագներ վրդովիչ,
Ու ջութակի սարսուռին գիծը կարմիր...

Արևմարքին ծաղիկն, որ չի՞ թառամիր,
Ինքն ալ գինով ըզգլխանքեն այս թովիչ։

Աղմըկահար սույլն ու արշավն հովերուն,
Հծծյունները ծաղիկներուն խատուտիկ,
Բարտիներու խարշափն ու ծափն հանդարտիկ,
Եվ համերգը խանդոտ՝ գետին մոլորուն։

Կըստվարանա ալիքն հրճվոտ այս ճիչին,
Ու կը բաղխի հոգվույս պորփյուր քարափին,
Ու կ'ոռոգե զիս փրփուրին մեջ ծրփին
Երբ խնկագույն լույսերն ինձմե կը փախչին։

Արծաթ լույսերն հիմակ տակավ կը ծաղկին,
Ու կը ցայտե թավ հեծեծանքն ուտերուն,
Լազվարթ ժամեր լուսնի շիթ-շիթ կաթիլքին
Մեջ կը թրթռան իրենց համբույրն անանուն...

Եվ հոգիներ կ'իյնան անոնց ծնրադիր,
Սիրերգությանց ըմպած հրմայքն հըրեղեն.
Պայեր անոնց միստիք ճամբան կը պեղեն,
Ու կը ցնծան լույսով՝ զենիթ ու նատիր։

Ու կը բացվի փալփլուն՝ գիշերն երջանիկ,
Արձագանգներ կը խաղան դեռ հոս ու հոն.
Քերթված մըն է ցայգն համորեն, չի՞նչ գեղոն՝
Որ կ'երփներգե ծափ ու ծիծաղ ու ծաղիկ։

ԱՌՏՎԱՆ ԱՐԵՎԻՆ ՄԵՋ

Ահա՞ կ'անցնի ցայգս անքուն,
Մութին ծածքը կը մաշի.
Ու կը կայթե կույսն այգուն
Իր քողքին մեջ մըշուշի։

Անցան սայլերն ալ դանդաղ,
Ու մըշակներն երգեցիկ,
Ու բանվորներն ու հոտաղ՝
Ճամբարներեն բալածիգ։

Ճառագայթներ խուսափուկ
Լիճերուն մեջ կը խաղան,
Եվ հանկարծ թույր մը դեղձան
Կը ներկե ջուրը փափուկ։

Ու բոցեղեն լեզվակներ
Կը ծրծեն մեգն համորեն,
Արևին կյա՞նքն հըրեղեն,
Արևին փա՞ռքն անըստվեր...

Հոգիես ներս կը խուժե
Քրքումն ալիքի նըման,
Եվ հովիկին առտրվան
Գինովությունն հաշիշե։

Լիճը բոսոր հարսնուկի,
Ցորենի ծովը կանանչ,
Կը հծծին տաղն անճանաչ.
Մրտերմասաց շըշուկի։

Ու մարմանդները ճանճկեն,
Ու սարերը կապտորակ,
Եղկ հծծյունով մը կ'երգեն
Լույսին ոսկի պատարագ։

Տունկեր ռեհան ծաթրինի
Կը ծրխեն խունկ մը վայրի,
Որ կ'ամպանա ու կ'այրի
Բուրվառին մեջ արփենի։

Հոգիես նե՞րս կը խուժե
Քրքումն՝ ալիքի նըման,
Եվ հովիկին առտրվան
Գինովությունն հաշիշե...

ՆՈՐ ՏԱՂԵՐ

ՎԱՅՐԿՅԱՆ

Թույլ շրշյուն մը, հետո բույր մը մշկենի.
Եվ համրագին գիրքը ձեռքես կ'իյնա վար.
Երազներու պերճուհին է, որ կ'անցնի,
Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար։

Ու կը փոթի ծովակն հոգվույս մեղմավար,
Եվ ալիք մը թևը բացած կը վազե՝
Գրկել ափունքն իղձիս ոսկի ավազե։

Ո՜վ քաղցրություն նայվածքին իր ծաղիկ.
Ո՜վ պերճություն գընացքին իր հրպարտ.
Ճամբուն վրա՝ իր քայլերուն հետքը վարդ՝
Ուր հեշտորեն կը հածի դեռ իմ մենիկ

Սիրտս՝ բո՜ց մը՝ մրթնշաղի՜ն մեջ անհետ...

ՋՈՒՐԵՆ ԴԱՐՋԻՆ

Երբ բըլուրն ի վար
Աղբյուրեն դարձին,
Իր վարաքի խուրձին
Մեջը սողոսկի
Նուրբ մատիկն ոսկի
Արևի լույսին.
Հիր սափորն ուսին
Երբ բըլուրն ի վար
Աղբյուրեն դարձին,
Մեղմավ ծածանի

Լաչակն հողմավար՝
Թևով թռչունի.
Ու ծիածանի
Թույրով պսպըղա
Աչքն իր գեղանի.
Եվ երբոր ցնծա
Հնչյունը՝ ծնծղա
Զարդոսկիներուն.
Տենչանքով անհուն
Հոգիս պիտ' ըղձա
Գանձեր՝ զոր չունի։
Ծարավ շիղին պես
Պիտ' ըղձա անի
Երկու կաթիլ ջուր՝
Շուրթերուն իր կեզ։
Եվ իր ճակատին՝
Զովացքը ցրտին,
Ճակատին կըրակ՝
Զովացքը ցրտին,
Կարմիր սափորի
Ջուրին սառնորակ
Ցողովը բերրի՝
Կակաչ ձեռքերու...
Ա՜հ, այս իրիկուն
Սափորն իր ուսին
Աղբյուրեն դարձին՝
Սիրույս անանուն
Ջերմ սարսուռներով
Կը դողա սոսին...

ՄԱՌԱԽՈՒՂ

Նայ շոգոլին կապտորակ, թևատարած կը նստի,
Ավաններուն լրռանիստ՝ նրվաղումին մեջ ոսկի.
Կարծես ծուխ մը հողն անդուլ դուրս կու տա իմ ծերպերեն։

Ու կը խայթե իմ հոգիս պարապն այս հոծ կապույտին,
Բիլ պատմուճան լուսաթել՝ որուն փախեր է կույսն հին։

Ու մշուշը կը լայնա, ու մշուշը կը լենա
Արտերուն մեջ՝ ուր խարտյաշ խուրձերն ինկան գիրկ գրկի։

ԱՆՁՐԵՎ

Բացաստանը վարագուրեց անձրևին քողքն ամպային.
Գյուղակն համբուն ողողեր է ջուրին ծափծափն ընդհանուր.
Անդերու մեջ կը կաթոտի ճերմակ փրփուրն արծպային։

Օ՜հ, լիությունն, որ ամեն կողմ հրճվանքի պես կը գեղու.
Օ՜հ, քաղցրությո՜ւնն, ուր կը թառի անուրջս անհագ զերթ մեղու։

Տարափն անդուլ կը լրճանա, կը շափշափե միշտ խայտակ,
Եվ արևի պես կը փայլի ճամբուն սալարկն ըսպիտակ...

ԱՆԴԱՐՁ

Լուսնի լույսը ծառերեն ծաղիկի պես էր կախվեր.
Ապրիմ-մեռնիմ մը ձեռքս՝ սիրույս ճամբան ես ինկա.
Ա՜հ, լըսեի՜ր, տերևին հովը ինչեր կը հծծեր։

«Կը սիրե՛ զիս, չի սիրիր, քի՜չ մը, բընա՜վ... տարփագի՜ն...»
Մեկիկ մեկիկ փետտեցի, գաղձերուն հետ ձանձրույթիս
Եվ արյունող փուշին հետ սրտիս մխվող թախծանքին։

Ինչպե՜ս կրկնեմ բարբառը երիցուկին մարգարե,
Հե՜ք ծաղիկ, զոր խեղդեցի վայրկյանի մը մեջ անհույս՝
Ուր ձեռքիս մեջ կը սուրար ձեռքիդ երազն համպարե։

Ինչպե՜ս կրկնեմ տաղերը նարկիսներուն ու վարդին,
Ու վիպերգը՝ կեռասե բադրոններուն վրա ձյունող
Ճերմակ բուրյան շափրակի բադիլներու մեղեդի՜ն։

Շամանդաղին մեջ՝ թել-թել կ'իյնա ջրցայտքն անտարբեր.
Լուսնի լույսին կ'երկարին առվակի զույգ մը թևեր,
Ու շրջավայրը կ'ըլլա աղապատանք մը տարփոտ։

Ճամբուն վըրա կը կրկնե աղբյուրն անվերջ հեքիաթներ,
Գուռն հիացիկ մանուկի աչքի մը պես է բացվեր.
Ջըրարբքին մեջ կ'ուրվագրե լուսինն աղջկան մը պատկեր։

Թավուտին մեջ թևաբաց, ահա՜, տեսիլդ է կայներ.
Այծտերևին հոտևան մատերն հերքդդ կը շոյեն,
Ու տերևներ վեհերոտ կու տան իրենց համբույրներ։

Մառախուղով կը լենա հիր շրջագիծն երազիս,
Ուր ամբարձիկ մարմինիդ հրպարտ շուշանն է կեցեր.
Հոգվույդ կարմիր կարոտին, ա՜հ, պատարա՜գ ըրե զիս։

Ապրիմ-մեռնիմ մը ձեռքս՝ նորեն դաշտերն ես ինկա
Ու տենչանքներս գրկած լացի մարմինդ ըսպիտակ.
Դարձիս՝ ճամբան՝ սառե՜ր էր՝ տամուկ՝ լո՜ւյս ու լուսինկա...

ՍԻՐԵՐԳ

Տրցակ մը հուսամ ու տրցակ մը ուրց
Բե՜ր, ձեռքերովդդ դիր զույգ քունքերուս,
Խուցիս մեջ ցանե յուղեր հինավուրց։

Դափը ձեռքս առնեմ նորեն այս գիշեր,
Ու ձյուն լույսին հետ հոգվույս ցրցքնե
Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր։

Բամբիռի ծափեր, վարդի թերթ ու շեր,
Բուրյան շոգիներ համպար ու մուշկի,
Որ կ'երփնազօծեն երեկվան հուշեր։

Քիչ մը թեֆարիկ, քիչ մը վարդի ջուր,
Արև ծիծաղի, ծաղիկ ծամերու,
Ջարդոսկիներու բազմաճաճանչ հուր։

Եվ համբույր աննյութ, և համբույր անանց՝
Վարդով գծգծված անհուպ շուրթերու
Կուսածին այգեր՝ փաղփուն լուսացանց։

Անուրջի ցայտքեր, ըղձակաթ գիծեր,
Դո՜ւք, շարժուձևեր կաքավ ու պարի՝
Հոգիս բանտեցիք դղյակին մեջ ձեր։

Հոգիս բանտեցի՜ք դղյակին մեջ ձեր,
Ճերմակ ըստեղներ հուր դաշնամուրին.
Պըղինձի թույրեր, ոսկեցոլ կայծե՜ր...

ՋՐՏՈՒՔ

Նավարշ Միսաքյանին

Հոյհո՜յ, գետը կը թրջե ցայգուն քամակն արծաթված,
Իր հորձքին մեջ ծեծելով անդուլ խարակն ու խութեր.
Հոյհո՜յ, առուն հորդառատ դալարին ծոցն է նետվեր
Գաղջ տարփանքովն իր ջուրին՝ ուր արևը կ'ապրի դեռ։

Հակուրջի մը առկախած գյուղակն անդին կ'օրորեն
Անրջական հյուսվածքով խումբ մը ծայրի ըստվերներ.
Վանքին բակը՝ կ'ողողեն հսկա ծառեր տարորէն՝
Որոնց տամուկ շուքին մեջ Աստվածամարն է կայներ։

Ու գյուղակին դեմ նստած, երիտասարդ ու պչրուա,
Պարտեզները՝ վերեն վար վազող ջուրին կըսպասեն.

Ա՜լ հափրացած խոլ գետին անարգավանդ դարպասեն,
Ու լըռությունը խածնող լուտանքներեն արհավրոտ։

Գիշերային ջրտուքի ժամն է. լույսին մեջ կայնած,
Մըշակն անքուն կըսպասե՜, ոտքը բոպիկ, բահն ուսին.
Պարտեզներուն վրա կ'իջնե թեթև քողք մը միգամած,
Ու ծղրիդներ՝ լուսնակով արբշիռ՝ անվերջ կը խոսին։

Ու կ'երկարի լուսարծաթ ժապավենն այդ բարբառին,
Ինչպես փախչող ասուպի կոթունները կաթնավետ.
Ավազին վրա ջուրերու կ'իյնա շառաչը վետվետ,
Խարույկները՝ ոսկեբաշ՝ ուրեք-ուրեք կը վառին։

Հոյհո՜յ, առուն կը հասնի ցանկապատին քովերեն
Եվ երգի քուղ մը կու գա պլլըված իր գոտիին.
Սյուք մը կ'անցնի, տերևներ ծա՜փ կը զարնեն ցնծագին.
Վարեն ջուրը կը խայտա, կը խնդա լույսն ալ վերեն։

Թումբերն անդուլ կը բացվին, ջուրն անդադար կ'ոռոգե
Վարդենիքը, թրթաստանն և ածուները բոլոր.
Բահի երկու հարվածով նայիս առուն կը թեքե
Օձաճապուկ ձևերով հեղուկ իրանն իր ոլոր։

Ջուրն անընդմեջ կը հոսի, ածուները կը լենան,
Ու, դարձուցե՜ք, կը կանչե ծեր մը մութին ընդմեջեն.
Խիճերուն ու սիկին մեջ, բահերը՝ խո՜ւկ կը հնչեն,
Ու, դարձուցե՜ք, դարձուցե՜ք, կը կոչե ձայնն անխափան։

Աղջըկակ մը, արիշին տակ նստած, շե՜ր կը կանչե,
Որ հոգնաբեկ մըշակին օրորի մը պես կու գա.
Հողը ծրծեց ջուրերուն տարփանքն՝ որ դեռ կը հնչե,
Եվ հիմակ՝ թա՜ց՝ կը խոկա իր երկունքին ապագա։

ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆ

Այսօր կաթվարդ երազե մը արթնցա,
Գիրկս անսահման գրգանքներու է բացվեր.
Այսօր, Հոգի՜ս, պիտի բերեն քեզ ընծա՝
Նոր տարփանքիս թիթեռնիկին հիր թևեր։

Այսօր իղձով իմ հոգիս է կաթոգներ.
Ու վարդի պես կը բացվի սիրտս իբր ընծա
Այն լուսոռոգ պատարագին սրբանվեր՝
Զոր ծափեցին իմ երազներրս ծնծղա։

Երեկ գիշեր իմ հոգիս էր ինկած, ա՜,
Թավիշին մեջ կախօրրանին ոսկելույս՝
Զոր ճոճեցին մինչև առտու, մինչև Հո՜ւյս,
Ըղձանուշներն իմ Տենչանքիս նախընծա։

Այսօր լույսի ծովի մը մեջ արթնցա,
Գիրկս անհամար գգվանքներու է բացվեր.
Այսօր, Հոգի՛ս, պիտի բերեն քեզ ընծա՝
Մանուկ բույրեր և աղջրկան պես հովեր։

Մանուկ բույրեր և աղջրկան պես հովե՜ր՝
Որոնց շուրթերն էին փնտռեր ընդերկար,
Ու գրկանքին խանդաղատ գիրկս էր բացվեր.
Երանությո՜ւն, լույս բոպեին մեջ երկա՜ր...

Եկո՜ւր, անցնինք ծառաստանեն այս Լույսին,
Ու բացատքեն Գույնին, Ձևին ու Բույրին.
Եկո՜ւր, Հոգի՛ս, եկուր երթա՜նք միասին,
Մինչև եդեմն աստվածաձայն, մինչև Կի՜ն...

ԱՆՁՐԵՎ

Համբույրն անձրևին կը թրջե շափշափ
Վարդե գիծն անտես բերանի մը շուրջ.
Օ՜հ, աս ի՜նչ գրգանք, օ՜հ, աս ի՜նչ անուրջ,
Որ կը տամկանա, գաղտ ու հապշտապ,
Իմ ծարավահյուծ, իմ որբևայրի
Իրիկուններուս շուշանին վրա լուրջ։

Անձրևոտ գիշեր, գրթա՜ծ քահանա,
Թոթվե՛ սրբենի այդ տեղատարափ,
Ձերթ մասունքի ջուր, մինչև որ լենա,

Մինչև որ լենա՜ բաժակն այս պարապ
Իմ երազներուս՝ որ ոսկեմբրափ
Կեցեր է ցրտոտ մարմարին վրա։

Օ՜հ, աս ի՜նչ գրգանք, օ՜հ, աս ի՜նչ անուրջ
Կու տաս դուն ինծի, անձրևո՜տ գիշեր,
Դո՜ւն, բարեբարի, գրթա՜ծ քահանա,
Որ հին Լլկանքին ժողվեցիր փուշեր,
Եվ հնչեցուցիր բարբառդ՝ ոսկի՜ մուրճ՝
Որ մտքիս նոր-նոր դուռեր կը բանա...

ԱՆԱՆՈՒՆ

Վայրի՜ ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսե՛, մասուր ու կանանչե՝
Ցանկապատին շուքին նստած,
Վայրի՜ ծաղիկ, անունդ ի՞նչ է։

Ըսպիտակ, կաթ ու մաղտաքե
Բուրող ծաղիկ, անունդ ի՞նչ է.
Ըսե՛, քի՛չ մը գեթ չե՞ս դողար,
Հովիկն անույշ երբոր փրչե...

Հրպա՜ռտ ծաղիկ, անունն ի՞նչ է
Պարիկին, որ անցավ քովեդ,
Հեզուկ ու սև սաթի վետվետ
Ցայտք մը ձրգած իր քամակեն։

Գիտե՞ս, ծա՜ղիկ, անունն ի՞նչ է
Դողին՝ զոր քեզ տրվավ հովիկ,
Ու ձայնին՝ որ զիս կը կանչե...

ԻՐԻԿՆԱՅԻՆ

Հորիզոնեն վար՝ քայքայված ու ցրվուն՝
Ոսկինարգես շառայլի փունջ մը կ'իյնա՝
Իրենց մորկան կաթին կանչող ուլերուն
Ժեռուտ ճամբեն գյուղակ դարձող հոտին վրա։
Բաժնըվեցան իրարմե արփ ու մըշակ,
Լո՜ւռ՝ ձեռքերնին ճակտին դըրած մեկմեկու
Ու՝ թիկնադարձ՝ արևն ա՜լ տուն կը դառնա
Լեռներեն վեր՝ ինչպես մըշակն իջավ գյուղ.
Առանց գոլին զույգ մ'հոգածու ձեռքերու,
Բացավայրին մեջ կը մընան հասկ ու շյուղ,
Գիշերին հետ անգա՜մ մըն ալ միս մինակ...

Սարերուն վրա կանանչ լույս մը կը ցաթի,
Աղբյուրներուն կ'ելլե խմբերգն արծաթի...

ԱՅԳԱՅԻՆ

Տանիքներուն վրա մըշուշը սնդուս լաթեր կը փըռե,
Ճամբաներուն վրա արևը՝ շոգոլիներ ոսկեման։
Որմին մոտիկ սըրինգն անվերջ՝ մեղեդիներ արույրե,
Որմին վըրան՝ աքլորն ըսթափ զարթոնքի ճիչն անսահման.
Որմին դիմաց աղջընակ մը տարփոտ երգեր կ'ոլորե։

Աղավնիներ, լաչակներու պես մետաքսե գունագեղ,
Ճամբե ճամբա կը թռչըտին թույլ ծածանքով վաղանցիկ։
Աղբյուրին լուրջ ջուրերուն մեջ ճառագայթ մը կ'իյնա շեղ,
Աղբյուրին հարթ քարին վըրա՝ ձայնն հոտաղին երգեցիկ,
Աղբյուրին զով ծորակին հուպ, համբույրն հովին առտըվան։

Խա՜չ հանեցեք ու ծա՜փ զարկեք, կարմրություններ հինայի
Եվ արփածին թույրեր հագած՝ առտուն մեզի կը նայի։

Ծառերուն վրա թռչուններու խմբերգն հիմա կ'անձրևե,
Ծառերուն տակ ծիծաղը ջինջ, մանկան՝ հոգնած կաքավե,
Ծառերուն քով բույրը ծաղկին՝ ամեն գույնե ու ձևե...

ՀՈՎՎԵՐԳՈՒԹՅՈՒՆ ՄԸ

Ա. ԳԱՐՆԱՆ ՀՅՈՒՂԸ

Դաշտին գոգը՝ արահետի մը եզերք՝
Հյուղակ մը կա կանանչներով ողողված.
Իր առջևեն կ'անցնի ամեն տրվարած,
Ճնճղուկներուն կը կարկաչե հոն խմբերգ,
Ու տատրակներն ալ՝ ծիածան ուլերով՝
Քմշոտ գիծ մը կը գրծեն շուրջն երազե։
Ու պորերը, խոշոր շարժուն շուշաններ՝
Կ'երազեն մեջն ավազանին տաղին զով,
Ուր ծորակին մեներգն անվերջ կը վազե։
Մասրենիներ, վարդենիներ, մորիներ
Հոն, ձեռքձեռքի, դարձպար մըն են բոլորեր.
Ծաղկանույշներ, ապրիմմեռնիմ, մանիշակ՝
Բուռ-բուռ բերեր որմերուն տակ են ցաներ։
Թաղարներեն մեխակի հույլ մ'աչվըներ
Կը ժպտերգեն հյուղին հրճվանքն անապակ։
Օ՜հ, գաղջ ավիշն՝ որ շորս կողմեն կը պոռթկա՝
Ընձյուղներով, շաքիլներով անհամար.
Օ՜հ, արևոտ խայտա՜նքն արբուն աղջըկա՝
Որ կը զեղու բորբոք, արբշիռ ու հիմար,
Կուրծքեն գարնան՝ որ թևերովն իր բաղեղ՝
Տաթփո՜տ՝ հյուղին կը պլլըվի, ու հեղեղ
Կանանչով մը կու տա համբույրն իր դալար։

Բ. ՀՅՈՒՂԻՆ ԳԱՐՈՒՆԸ

Բերնիս քըսած էր բաժակը մեղրակաթ
Համբույրներու՝ նայատը ծով երազին.

Ու շրջրքած դեռ ափունքները ակատ
Շրթունքներու՝ քունես ընդոստ արթնացա։
Ու գրկիս մեջ գրտա առտուն լուսոռոգ.
Առտուն, մանուկ՝ որ զերթ ծաղիկ կը ցնծա՝
Եվ հոգիին կը բերե բույրն իր նորոգ։
Եվ ամեն կողմ երթալ ուզող զերթ մանուկ՝
Առտուն՝ իմ ալ թևես բռնեց ու տարավ
Բլուրեն վեր, դեպի դաշտերը տամուկ։
Եվ անապակ իր աչքերուն նայեցա,
Եվ աշխարհնե՜ր տրվավ հոգվույս իբր ընծա.
Հորիզոններ՝ ուր լույսն անհուն կը ցնծա։
Եվ հոտևան ձեռքին եղա ուշադիր՝
Որ շեշտակի Գարնան Հյուղը ցույց կու տար,
Որուն դրրան առջին կանգուն կը խայտար
Ծաղկապատար Հյուղին Գարունն անպատիր։
Ծաղիկ մըն էր, ա՜ն ալ, փափուկ ու բուրյան.
Ծաղիկ՝ վարսերն ոսկինարգես՝ ու ծաղիկ՝
Թարթիչներն ու աչքեր, ճակատը շուշան,
Եվ այտերը կակաչ, բերնակն ատրուշան,
Թուշը շափրակ, այծտերևի՝ իր ձեռքեր։
Եվ իր հոգին բուրմունքի հեշտ երգն ուներ,
Արփիացող, ջերմին ինչպես ծաղկանոց։
Ու կը կանչեր գունեղ Գարունն Հյուղին՝ զիս
Իր համբույրին՝ ինչպես նայադն երազիս...

Գ. ԵՐԳԸ

Ժամը վեցն է. հյուղակը ծառերուն դեմ կը խնդա,
Ու չարանճար հովիկն ալ՝ ծաղիկներուն խաղընկեր՝
Կը պղպջա անհանդարտ, պզտիկ երգեր կը կարդա,
Եվ կամ նայիս մերթ գաղտնի լրճակին ծոցն է ինկեր։
Ես երազուն, ջրրեզրի ուռենիին կոթընած,
Միջօրեին մեջ անհետ՝ թելն ըղձանքիս կը փնտռեմ
Մրտամոլոր. և հանկարծ նուրբ կամրջակ մը ոսկի՝
Հյուղեն երգ մը՝ կ'երկարի մինչև ափունքը նրսեմ,

Մինչև ափունքն իմ հոգվույս՝ ուր կոհակ մը հեղակարծ՝
Ոսկի գետեն արևին՝ եղկ ու հանդարտ կը պառկի։
Օ՜հ, Գարունն է Հյուղակին, շատրվանը իմ հոգվույս՝
Որ լուսասփյուռ ցայտք մըն ալ ինծի նրվեր կը խրկե.
Ու միջօրեն բովանդակ մետաքսահյուս ցանց մըն է,
Ուր բռնրված կը կանչե բաղձիկ թռչնակն իմ հոգվույս։
Պիտի սիրե՜ քեզ հոգիս, պիտի սիրե՜, սիրո՜ղ ձայն,
Քու հոգիեդ բաժնրվող ցայտուն կոհակն արծաթի՝
Որուն փրշուրն անհամար աստղերու պես կը ցաթի
Տիեզերքին մեջ հոգվույս՝ ուր ոլորտներ կ'իյնան լայն...

Դ. ՄՐՈՒՐԸ

Իրիկունը, մետաքսներու պես փափուկ,
Իրիկունը՝ շարբաթներու պես քաղցր է.
Իրիկունը բաժակն է՝ շուրթը տամուկ՝
Ջոր նայադ մը հրրամցընել կը բերե։

Օ՜հ, զիս հիմակ հյուղակին դուռը տարեք,
Լուսաշապիկ օդանույշներն իրիկվան,
Ավազանին մոտ, ուռիին շուքին տակ՝
Օ՜հ, զիս հիմակ հյուղակին դո՜ւռը տարեք...

Այս բաժակին հեղուկն ո՜րքան հոտևան,
Այս բաժակին հեղուկն ո՜րքան հեշտին է.
Թավուտքներուն մեջը քիչ-քիչ կը մթնե՛.
Պիտի փշրի՜, ավա՜ղ բաժակն իրիկվան...

Շրթունքներրս վերջին պուտին են ծարավ,
Ու ես Գարնան Հյուղին տարփոտ շուքին տակ
Կը մոտեցնեմ երկչոտ՝ բաժակն իմ բերնիս.
Դիրտ մը կա հոն, զոր հեգ հոգիս դժվարավ։

Ու դառնությամբ կ'ըմպե մինչև իր հատակ.
Հյուղին կույսն է՝ որ մրթնշաղն իմ սրտիս
Կը սեցընե՝ հեծկլտուքով մը գիշեր...

Կը հեծեծե՞, ու չի՞ գիտեր թե քարին
Քսվող սի՛րտս ալ ինկավ ցայգուն մեջ խորին։

Ե. ՀՅՈՒՂԻՆ ԱՇՈՒՆԸ

Այծամարդեր հովին քընարն են կապտեր,
Ու պարտեզին մեջ անդադար կը զարնեն
Խառնանըվագ եղանակ մը խոլական,
Որուն ջուրն ալ կը խառնե մերթ իր կերկեր։
Շահպրակները մընացեր են առանձին,
Լրճակին շուրջ, թաղարներու մեջ թիթեղ,
Ուր կայլակ մը կ'իյնա կարմիր, ամեն հեղ,
Որ հովն անխիղճ ենթարկե ծառն իր ցունցին։
Հյուղն աներազ կու լա ժրպիտ մը դաժան.
Պատուհաններն՝ անվարագույր, անթաղար,
Տժգույն բաղձանքն ունին լույս ու կապույտի։
Ու ցավագին և անթարթիչ զերթ կոպեր,
Ուր անծաղիկ աշնան մը թուխպը խաղար՝
Հոն անանուն թախծություն մը կը փթթի։
Բայց, երիզված ժապավենով ճառագայթ՝
Ամպերու գորշ վիժակներուն ետևեն՝
Կ'երևա բիլ շարեշապիկ մը անգայտ՝
Որ երազել կու տա հյուղին, ոսկեղեն
Պերճությունը նոր գարունի մը կույսին...

ԸԼԱՆՅԻ՛, ԸԼԱՆՅԻ՛

ԻՐԻԿՈՒՆԸ

Սա իրիկունն ըլլայի ես
Եվ հրպեի ճակտին ամեն անցորդի.
Զքնաղագեղ ու նրվաղուն համուրդի
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի երգովը թռչուններուն, մարդերուն,
Ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկո՜ւնն ես ըլլայի,
Թույլ, նազենի, շըղարշային, վարդաբույր,
Ու ծրփայի զերթ ոսկեսար վարագույր՝
Վրան ամեն հոգիի։

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի զանգակին ղողանջներովն երկնաճեմ.
Խնկապատար, օծուն, ջահված ժամի պես
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկո՜ւնն ըլլայի ես,
Իմ անդորրիս մեջ ոգևար աղջրկան
Մարող ճրագին բոցեր տալու իմ ցոլքես.
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Լի գոռ ծափովն օվկիանի ջուրերուն.
Սյուքին ծաղիկ մեղեդիքովն ակաղձուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Որ կը մարի սատափ բարձին վրա ցայգուն.
Թոթափող վարսքը գունագեղ ու ծրփուն,
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

Սա իրիկունն ըլլայի ես,
Համայնական, չքնաղ, քաղցրիկ, լուսագես.
Եվ ամենուն տայի հուրքես, ոսկիես։
Սա իրիկո՜ւնն ըլլայի ես։

ՀՈՎԸ

Ալիքներուն վրա ոստոստող հովն ըլլայի,
Ու ջուրերուն խուլ մրոունչին մեջ ամայի՝

Զկնորսներու ականջն ի վար փսփրսայի
Սիրված երգեր, քաղցրությունով օծուն բառեր։

Հովն ըլլայի կատարներուն վրա պարանցիկ,
Ու ձյունին մեջ սառող մարդուն համար լայի.
Հովն ըլլայի՝ հողվրտիքին մեջ երգեցիկ՝
Ու ծրծեի տակավ գաղտնիքն ես Անդիի։

Ջրմեռներուն ես ամպավար հովն ըլլայի,
Եվ անճրրագ խուղերու ճիչն հորձքիս ձուլած,
Անցորդներու հոգվույն վրրա փշրրվեի
Իբրև ալիք։ Ու տանեի հոն կոծն ու լաց

Տրղաբերին, որ հողին վրա կը գալարի
Եվ անսրվաղ մանուկներուն, ու գրկաբաց
Մատաղատի, որդեկորույս մորն ալ՝ որուն
Տարիքին բոցն հոգվույն մուխին մեջ կը մարի...

ՀՅՈՒՂԸ

Դաշտի ճամբու մը վրրան,
Կամ ըստորոտը լերան,
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյուղն ըլլայի։
Ու գգվանքիս կանչեի
Ես ճամբորդներն անժաման,
Ու ճամբուն վրա մենավոր,
Ու ճամբուն վրա ոսկեման,
Եկվորներուն դիմավոր՝
Ծրխանիս ծուխն ամպեի։

Ու գրգանքիս կանչեի
Ուղևորներ պարտասուն,
Ու բարևի մը փոխան
Հազար բարիք ես տայի։

Հազար բարիք ես տայի.
Գոլը կրակին ճարճատուն,
Կութքը բերրի դաշտերուն,
Բոլոր միրգերն աշունի,
Ու մեղր, ու կաթ, ու գինի...

Ու լրսեի ես ցայգուն,
Քովը կրակին ճարճատուն,
Երգն իրիկվան եկվորին.
Ու ջամբեի ես ցայգուն՝
Երազներով պատարուն,
Նինջ՝ իրիկվան եկվորին։
Ու լրսեի ես այգուն,
Սրտապատար ու տրոփուն
Գովքն իրիկվան եկվորին.
Ու դիտեի ես այգուն,
Ու խոկայի օրն ի բուն
Երթն իրիկվան եկվորին...

Ու ձմեռներն ալ համբուն,
Հրրավիրակ զրվարթուն,
Կանգնեի քովը ճամբուն.
Ու ձայնապատ հեք մարդուն
Ես հայրորեն, լայնաբաց
Երկու թևրս պարզեի.
Մի՞շտ քաղցրագին, նյութացած
Հրրավե՞րն ես ըլլայի։

Ա՜հ, ըլլայի՜, ըլլայի՜,
Դաշտի ճամբու մը վրրան,
Կա՜մ ըստորոտը լերան,
Ուղևորին ժամանման
Ըսպասող հյո՜ւղն ըլլայի։

ԲԱՂՁԱՆՔ

Արտաշես Հարությունյան բանաստեղծին

Բարձունքներու լայնշի ճամբան ըլլայի,
Որ ծաղկահյուս կողերե վեր կը մագլի,
Ու գագաթին հասած՝ նոր ու հեշտալի
Հորիզոնին սնդուս գիծին կը նայի։
Ու տանեի հոն հոգիներն ըսպառած,
Զանձրույթն՝ որոնց ոլորտին վրա կը փլլի,
Ու ցույց տայի՝ լայն հորիզոն անուրջի՝
Բերրի դաշտերն ու ճամբաներն անմոռաց՝
Ուր քաղցրությունն հոգվույն կ'ըլլա հակուրջի։

Կատարներուն, հագած երանգ հինայի,
Մրգաստանին, այգիներուն, դաշտերուն
Մեջ պարագնաց հովին խմբերգն ըլլայի։
Եվ ըլլայի ձայներիզը թրթռոուն,
Աղբյուրներուն, կապուտաչվի ակերուն,
Լիճին խաղաղ, ծալծալ մրմունջն երերուն,
Շառաչն հրզոր՝ օվկիանին, գետերուն,
Համայնական Զայնն ըլլայի, Զայնն անհուն
Ու խնծիղովս անպարագիծ ու կայտռուն
Քերթողներուն լեցվեր հոգին ամայի։

Անտառներու մենության մեջ սխրալի,
Ամբարձուղեղ ծառերու մորճ թևերուն
Վրա թառող լռությունն ես ըլլայի.
Կամ ըլլայի արահետը խնկագույն,
Ծառաստվերի մութ ձորին մեջ պլլըվող.
Կամ ըլլայի կոհակուռույց ալեկուն
Հարևանի հեղեղատին լուսաշող,
Ու քերթողին տաղես վանկեր ես տայի։

Երգն ըլլայի թռչուններուն ծնծղաձայն,
Ու դառնայի ուրախության ճիչ մը լայն,
Բանաստեղծի հոգիներուն մեջ նրկուն,
Ուր կը թախծի խոհանքն ամպոտ, անանուն՝
Ինչպես որի՝ թառած շիրմի մը գլխուն։

Եվ ըլլայի Լույս, Զև, Երանգ, Թրթռում,
Կյանքի փաղփուն պատմուճանը ծիրանի,
Կենսաբաղձիկ հոգվույն երազն անպատում.
Եվ անձրևեն վերջ անարև ու տրտում,
Հառաչաձայնն անձրևեն վերջ երբեմնի,
Նրշուլեի ես վայրկյաններ երջանիկ,
Արևաշող ժրպիտ, ծափեր ու խնդում՝
Բանաստեղծի հոգիներուն մեջ մենիկ։

ՀՈՎԸ

Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին.
Զարաճրճի, ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ ղբրան ետին մոռցրված՝
Պատուհանըս մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին։

Իր ետևեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շրվարուն ու հոգնած.
Ինք խույս կու տա իմ գրգանքես, թևերուս
Պարապնդումն է դատարկ.
Բայց ա՜նառակ՝ երկու ձեռքես կը փախչի,
Մինչ ետևեն կը վազեմ ես շնչահատ,
Ու շրվարուն և հոգնած։

Մինչև դաշտերը կը վազեմ հետապինդ,
Մինչև անտա՜ռն իսկ կ'երթամ.
Բայց ամենուն կրնա ընել ինք դարպաս.
Թուփին, ջուրին, տերևին.
Ու լրճակին գիրկը կ'իյնա, կամ տեսնես
Ծառին կատարն է թառած։

Մանուկի պես կը պլլվի երբեմն ալ
Մայր թուփերու քրղանցքին.

Եվ երբ զինքը կը կանչեմ ես սրդողած՝
Կը քրքրջա ինք անդին։
Շա՜ղ, ապտակ մը կը զարնե մերթ երեսիս,
Նույն վայրկյանին կը փախչի,
Եվ ես ի զո՜ւր կ'իյնամ նորեն ետևեն,
Մինչև դաշտերը կը վազեմ հետապինդ՝
Մինչև անտա՜ռն իսկ կ'երթամ...

Եվ երբ հուսատ կը հեռանամ թիկնադարձ,
Կոնակես վե՜ր կը մագլի,
Կամ մազերըս կ'ուզե համրել, կամ հանկարծ
Ուժգին մեջքիս կը փարի։

Եվ երբ ցասկոտ նորեն ետիս ես դառնամ՝
Վաղո՜ւց փախեր է արդեն,
Ու չորս կողմըս կ'ավրըշտրկե ու վարդեն
Կ'առնե անոր սակավարյուն շափրակներ.
Ու, դարձյալ՝ երբ կը հեռանամ թիկնադարձ՝
Կրոնակես վե՜ր կը մագլի...

ՏԵՐԵՎՆԵՐԸ Կ' ԸՍԵԻՆ...

Ոսկի շաղով օծեցիր
Կապույտ ծաղիկն ակերուն,
Լիճերու պորտը սարսռուն,
Ու գետակներն ափնածիր։
Արև՜, մե՜զ ալ ոսկեզօծե, արև՜, մե՜զ ալ, ա՜հ, մե՜զ ալ...

Ոսկի թույրեր սրսկեցիր
Բլուրներու կողն ի վար.
Փայփայեցիր հողմավար
Դաշտերուն վարսքը ցանցիր։
Արև՜, մե՜զ ալ գգվե մոտեն, արև՜, մե՜զ ալ, ա՜հ, մե՜զ ալ...

Ոսկի մատիկդ հրպեցիր
Եվ համբույրիդ դրրիր բոց,
Իրիկվան մեջ այս հեշտին,
Մարիներուն ու մարդոց,
Աղջիկներուն՝ կաթնածիր
Ու վարդ մըշուշ ճակատին։
Արև՜, մե՜զ ալ ողջագուրե, արև՜, մե՜զ ալ, ա՜հ, մե՜զ ալ...

Ոսկի կյա՜նքը մեզ տըվիր.
Եվ առանցքը դուն եղար
Մեր ավիշին հոծ տենչին.
Տակավին մի՛ բաժնըվիր
Եվ հնչեցուր ոսկելար
Անհուն քընարդ՝ հե՜ղ մըն ալ.
Ուզե քիչ մը համենալ,
Համբուրե՛լ մեզ վերըստին։
Ու չը ծագած դեռ ջնջին,
Բայց անգորով ու ցրտին
Լույսն անհունեն մոլորած
Լուսավորին առաջին
Կենսավետե մեզ ամենս ալ, արև՜, ամե՜նս, ամե՜նս ալ...

ԻՐԻԿՎԱՆ ԻՂՁ

Օրիորդ Նարդիկիե

Իրիկվան մեջ անհետելու հույսն ունենալ,
Եվ հանձնըվիլ նուրբ կածանի մը քըմայքին.
Խորխի մը պես թողո՜ւլ ձանձրույթն ու հափրա՜նքն ալ,
Եվ անդորրով պատմուճանե՜լ հիվանդ հոգին։

Ու լույսերո՜վ պարածածկել հիվանդ հոգին.
Քույր ունենալ ջուրին կարկաչն ու կապույտ բալ,
Եվ ունկնդրել ճամբուն քովերն երգող սյուքին,
Մեծ քաղցրությա՜ն մը խառնըվիլ, ու մենանա՜լ։

Ընկե՞րն ըլլալ ցորենները. մրդատանին
Դուռը բանալ զավկի մը պես, մըտերմորեն,
Ու թողուլ որ շահարիկներ ըզքեզ տանին

Թևապարփակ՝ լայն լըռության մը համորեն։
Հոն շրջասփյուռ ծառերուն հետ եղբայրանա՞լ.
Տարփո՞ղն ըլլալ ծաղիկներուն. ծովածավալ

Իրիկվան մեջ՝ անհետելու հո՞ւյսն ունենալ...

ԻՐԻԿՈՒՆՍ

Բանաստեղծ Վանիրամ Թաքուլին

Իրիկունս է բարի՞, բարի՞, ու լիաձեռն ու հոտևան.
Ոսկի ուղ մը՝ կամուրջ եղած ընդմեջ տիվին ու գիշերվան։
Վարսադիտակ ծառերուն տակ կը կղկաթիմ լույսին համար.
Արևին պերճ լույսին համար՝ որ կը փաղփի քրքմանըկար
Մեջն հոտևան ծայրիներու ծայրածավալ ծաղիկներուն՝
Ուր դիցանվեր բաժակներու քամեց ամբրոսն անհագ մեղուն։
Ծառոց ետին ճաճանչավուխտ պաստառ մըն է արևն ոսկի,
Ուր ծաղկածին ուղեշներու ճամուկ հյուսքը կը սողոսկի։
Ու զեփյուռն ալ, կայտռուն համբույր, մանկությունն մ'է
վերադարձած.
Ու ջրցայտքն ալ՝ փսփսուքն է բարեկամին՝ մըտերմասաց։
Սյուքն աղջընակ՝ որ հյուսիսեն կը քնքշանա հոգվույս վրան.
Ու ջրցայտքն՝ որ լաչակ ի՛ըլլա նարկիսներու գլխուն դեղձան,
Կամ արտասուք՝ աչքերուն մեջ շահարակներու հույլին ցիրցան
Ու քաղցրությամբ կ'օծե մենիկ ծաղիկներուն այդ լըռարան։
Ու թերթիկներ՝ շահարիկի շընորհք, կ'իյնան ափերուս մեջ,
Բաց ափերուս՝ որ կ'երկարին լույսի խուրձին փողփողենէջ։
Ահա՞ կ'անցնի, մըշուշված բիլ կազով տեսիլ մ'ալ զերթ ալիք.
Զարմանուհի մ'է վարսագեղ, կաթ ու վարդի՞ հըրաշալիք...
Հավերժահարս կաթ ու վարդե, ծաղիկ, ճաճանչ, ջուր
ու զեփյուռ...
Շա՞տ էր լեցուն հոգվույս, ո՞վ Տեր, բազմազեղումն այս
շրջասփյուռ...

ԼՈՒՍՆԱԿ ՔՈՒՐԻԿԻՍ

Ա.

Երեկ գիշեր մոռցեր էիր,
Լուսնա՞կ, գիտե՞ս,
Երեկ գիշեր մոռցե՞ր էիր պատուհանիկս իմ համեստ.
Պատուհանիկս իմ անտես՝
Ուր մութ մը գորշ վիժակի պես էր կախվեր։
Հոգ չէ՞ր, այդ մութն ըրի խորան հսկումի՝
Ուր պաշտանքի ո՞չ մեկ ծաղիկ կը թոռմի,
Ուր մութի տակ լոկ նինջ մը կա լուսանվեր։
Երեկ գիշեր անցար քովես,
Անցար, գուցե՞ անգիտակ,
Անցար՝ և ես՝
Քու հեռավոր պերճանքներուդ շլացքին տակ՝
Ջուրի ցայտքի մը պես զըվարթ՝ հծծեցի։
Օ՜հ, պարտեզը չէ՞ մոռցեր,
Եվ արիշն ու սարբինան
Իր լույսերովն է օծեր։
Ու նայեցա հանդիպակաց ծաղկաստանին ալ վրան,
Լեկներուն վրա կապույտ,
Զքնաղ, պշրոտ ու անփույթ՝
Դաստակդ էիր երկարեր։
Ու դիտեցի,
Չէիր մոռցեր սա ծրխանն ալ դրրացի,
Չէի՞ր մոռցեր և ճամբաներն ամայի,
Չէի՞ր մոռցեր...
Չէ՛, այսօր ալ զիս մոռնայիր,
Եթե այդպես պետք էր ըլլար, որպեսզի
Արծաթեիր շուրջս անխրտիր
Ամեն դալար ու ծաղիկ։
Որովհետև ես քեզի
Մտքիս թևո՞վն ալ կը հասնիմ եքշանիկ.
Քանզի նույն իսկ եթե ըլլաս
Ամպին ետին ալ պահված՝
Ես կը հասնիմ անկասկած,
Քու պերճ կայքիդ՝ հեք իրերուն համար անհաս։

Ես կը հասնիմ անկասկած,
Քեզի՜, քեզի՜, քո՜ւյր աստված,
Եթե երբեք իմ հոգվույս
Լուսախորշին մեջ պահված
Վերջին նշույլն ալ՝ անլույս
Խոռոչի մը ծոցն իյնա.
Վերջին նշույլն այն ցոլքերեն՝ զոր գիշերներն եմ ժողված.
Լիալուսնի արծաթաշող գիշերնե՜ր...

Բ

Մահի՜կ ոսկեսար, այս գիշեր նորեն
Սարսռացի լույսիդ մեջ երանական.
Եվ հոգիս մեջ ինկան
Խայտանքի նոր թիթեռներ.
Միածանի սանդուխեն վեր՝
Նոր երանգներ տարորեն։
Մահի՜կ ոսկեսար, այս գիշեր նորեն,
Մոռցրված երգի ծլվեն,
Կամ անուն,
Անհուշության ոլորտներուն
Միգամածին մեջ կորսրված՝
Դուն՝ ծաղիկներ ցնծության
Նշուլեցիր հեղակարծ,
Հոգվույս մեկ փլլուզակին վերև,
Հինավուրց որմի մը բացատքեն։
Մահի՜կ ոսկեսար, այս գիշեր նորեն,
Մեկ լուսեղեն վայրկյանով,
Տարագրեցիր հոգվույս մրռայլն համորեն։
Օ՜հ, աս ի՜նչ ճախրանք, օ՜հ, աս ի՜նչ գորով,
Այս գիշեր, նորեն,
Պատուհանես ներս սահեցար հուլորեն.
Շոշափեցիր վարագույրներն ըսպիտակ,
Եվ աշտանակն արույրե,
Եվ հայլիին մեջ վառեցիր նոր ճրագ։
Եվ ամեն մեկ հրպումիդ
Հոգի՜ս էր, որ ինկավ լազվարթ ձեռքիդ տակ։

Ներե՛, ա՜հ, ներե՜,
Որ վայրկյան մը վերջ, հիմակ,
Սեղանին վրա նյութե լամպարս եմ վառեր,
Ըսելու համար, թե քեզ չե՜մ մոռնար, թե քեզ չե՜մ մոռցեր...

ԻՆՉ ԱՐԲԵՑՈՒԹՅԱՄԲ...

Գեղամ Բարսեղյան բարեկամիս

Ի՜նչ արբեցութեամբ, ծառեր, լույսին մեջ,
Ծառեր հովին մեջ և անձրևներուն,
Վարսավոր ծառեր, ծառեր երկնուղեղ,
Ու ծառեր մատաղ՝ ծովածուփ կանանչ
Ցորենի ցանքին գոգն ինկած շվարուն՝
Ամենն ալ կյանքին կ'ըմպեն հորդ ճաճանչ։
Ի՜նչ արբեցութեամբ խոտն՝ որ հողեն վեր
Կ'ելլե, ըզմայլո՜ւն՝ կը բանա լույսին՝
Վայրկյան մը ապրող իր ցողե աչքեր։
Ի՜նչ արբեցութեամբ ծաղիկներ շաղին,
Ծաղիկներ լույսին, մըտերիմ ձեռքին,
Ըսպասումներուն մեջ կը նըվաղին։
Ի՜նչ արբեցութեամբ ամենմեկ արոտ,
Ամենմեկ բլրակ՝ իր կանանչ ճակտին
Կը կապե երփնած ծաղիկե նարոտ։
Ի՜նչ արբեցութեամբ դաշտերեն խորոտ,
Եվ հարս հովիտեն՝ կարմրրոտանի
Կ'առնե արագիլն իր դարձին կարոտ։
Ի՜նչ արբեցութեամբ սարյակներն, արթուն,
Լո՜ւյսը կը ծրծեն, լո՜ւյսը կը հծծեն,
Մրգաստաններու մեջեն սաղարթուն։
Ի՜նչ արբեցութեամբ ձյուն ճայեր, ծրփին,
Բարձրեն՝ օդաճեմ լյուղ կու գան. արփին
Մեջ կ'ոսկեզօծին ու կը թևանան։
Ի՜նչ արբեցութեամբ տատրակն հարսենի,

Առագաստ ըրած ծառի հովանին՝
Կըսպասե տարփոտ իր վարուժանին։
Ի՜նչ արբեցությամբ թիթեռն է բացեր,
Լեյլակի մանրիկ լիճին վրա փրփրուն՝
Առագաստաշեն իր կաթ թևիկներ։
Ի՜նչ արբեցությամբ ծիրանի դաշտին
Շեկ ծաղիկներուն կը վազե մեղուն,
Ծրծել իգայի պտկունքներն հեշտին։
Ի՜նչ արբեցությամբ ծովերն են կապույտ,
Գետերն՝ հորդաջուր, աղբյուրներ՝ զեղուն,
Լիճեր՝ խաժագույն, առուն՝ շուտափույթ,
Լոռածամ առուն՝ որ կ'անցնի քովեն
Ուռեստաններու գեջ, լսնակապույտ։
Ի՜նչ արբեցությամբ ամպեր կը թոթվեն
Հրաշալի հեղուկն իրենց ըստինքին՝
Որ զերթ ասղանի վար կը սողոսկի՝
Մարելու երկրին պասուքը ոսկի։
Ի՜նչ արբեցությամբ զայն կո՜ւշտ կը խըմեն
Համագրավ տապեն սարսատած հողին
Ծընունդներն ամեն, ծակտիքներն ամեն։
Ի՜նչ արբեցությամբ հոգին կ'ընդգրկե.
Ալյակն հորդահոս՝ ծայրիի բույրին,
Ծաթրին, անանուխ, վայրի ռեհանի
Բազմաբուրումներն ըստաշխ ու խունկե։
Ի՜նչ արբեցությամբ կ'ընդգրկե անի.
Բոլոր ձևերն ու երանգներն ամեն,
Բոլոր գոյությանց, բոլոր տարրերուն
Իր մեջ անդրադարձ ծիածանումեն՝
Աստվա՜ծն՝ որ եկավ՝ չե՜ս գիտեր ուրկե՜...

ԳՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԻՇԵՐԻՆ ԵՐԱԶԱՆՔԸ

Աղջամուղջին մեջ գիշերը կ'երազե
Պայծառ այգուն վառ շրթները կեռասե.

Ու ցնծության լույս աստղերը կը ժպտին
Հրաշափառ գոգն հրճվանքի կապույտին.

Բայց երբեմն ալ մղձավանջի մը մեջ թոնդ
Գիշերն այգը կ'երազե զերթ մեկ անդունդ.
Ու հևքեն վերջ ոռնումներու բիրտ հովին
Անձրևի հորդ արցունքները կը թորին։

ԱՐԵՎԱԳԱԼԸ

Հորիզոնեն վար լույսի պար մը կ'իջնե,
Ընդելուզված՝ ճաճանչներով ոսկեհյուս.
Շուտ կ'անհետի մութն ու խավար կու տա խույս,
Աշխարհ արփվույն հուր գալուստը կ'ողջունե։

Կենդանություն կը հագնին դաշտ ու լեռներ,
Ջվարթ երգերը միշտ կը լսվին գեղջուկին.
Ու զմրուխտի, ադամանդի երանգներ
Կը փողփողին մեջը լույսի վառ գըրկին։

Խորհուրդներու մրոայլը շուտ կը մարի,
Բընության այս հրրատ զարթոնքին հանդեպ,
Ու կը հրճվի հուսահատ սիրտը կարի՜։

Կը սրբըվին թոնուտ աչքերը տըխուր,
Ուրախության ժպիտներուն տակ անհուն.
Ցնծուն երգով կը լեցվի սիրտը թափուր։

ՄԱՐՄՆԻ ՎԵՐՔ, ՍՐՏԻ ՎԵՐՔ

Մարմնի վերքը՝ արտաբացված դանակե՝
Ի՜նչ արցունքներ դառնակայլակ կը քամե.
Ի՜նչ հուզումով ու տխրությամբ համակե,
Մարմնի վերքը՝ արտաբացված դանակե.

Սրտի վե՞րքը, ո՜հ, դառնագույն է, Աստվա՜ծ,
Սևով անքակ, խոցերով ժանտ է պատած.
Խեղճ ու թշվառ կամ տարամերժ ու լքված
Սրտի վե՞րքը, ո՜հ, դառնագույն է, Աստվա՜ծ։

Մարմնի վերքը սպեղանի ունի բույժ,
Անցնելով նա մոռցուկ կ'ըլլա շատ կանուխ,
Զանգակ չունի նա տխրահունչ, մահագույժ.

Սրտի վերքը մինչ գերեզմանն երկարած
Ուղի մ'ունի, արցունքներու զերթ մեկ ուղխ.
Սպեղանին անոր երկինքն է պահված։

ԿՅԱՆՔԻ ԵՐԳԸ

Ահաբեկիչ կնճիռներուն մեջ կյանքին
Լալահառաչ, սուր հծծյուններ ինձ ըսին.
«Ամեն հույսեր մեծ պարապին կը հանգին,
Ունայնություն մը կը պրկե կյանքը սին։

Ամեն ծաղիկ խամրում մ'ունի իրեն մոտ,
Ու ամեն կյանք՝ մութ ստվեր մը իր ետին.
Ծաղիկներու բուրումին պես խնկահոտ
Ամեն հույսեր դեռ չբծլած կ'անհետին»։

Բայց մխացող խոհերուս մեջ ծիրանի
Լույս մը հանկարծ սրպրդեցավ շողալով,
Կյանքի փարփառ երգն ոսկեսար, գեղանի,
Որուն ցվերջ ունկնդրեցի դողալով։

«Տխուր ողբեր թող չքանդեն քեզ,— ըսավ,—
Թող չցնդին ոսկի հույսերդ ցիրուցան.
Իր վերջն ունի ամեն կնճիռ, ամեն ցավ՝
Զինք մոռցնող ժպիտները լուսացան։

Ահա ի՜նչպես, տես, կապույտն ալ կամարին
Մերթ ամպերու գորշությունով կ'աղարտի,
Անձրևին տակ իր ժպիտներն կը մարին,
Անձրևն,— այդ լաց,— սակայն երգն է ավարտի։

Ամեն անձրև արև մ'ունի իրմեն վերջ,
Ինչպես ամեն լաց իր ժպիտն արփենի.
Ու տևական ուրախություն մը միշտ պերճ
Պիտ՝ հաջորդե ժպիտներուն երբեմնի»։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

Լուռ, մարմարակերտ դամբանին խորեն,
Հանճարի աչքերն անքույթ կը նային,
Լույս ոգիներու կյանքովն երկնային,
Ա՛լ մեկուսացած ունայն ժրխորեն։

Մեռա՜վ, խանդավառ սերերն երգելեն՝
Ու պիտի հավետ միտքերն հրմային
Իր թունդ քընարեն, ու երգերն ալ հին
Պաշտումով ըզմեզ միշտ պիտի գերեն։

Հույզով մեռա՜վ ան, հուշքով՝ կ'ապրի դեռ,
Ծառերուն նման՝ որ թարմ ու դալար,
Իր գերեզմանին կ'ելլեն քովն ի վեր։

Հիացքներ կ'երթան իրեն ետևեն...
Եվ իր հուշքերն ալ, հավետ անմոլար
Ու միշտ ոգևոր՝ դեռ պիտի տևե՜ն։

ԵԿՈՒՐ

(Սիրերգ)

Եկո՜ւր, տաղտկալից կյանքըս խաղաղե,
Ըզգալ տո՜ւր ինծի գորովանքն ու հույս.
Պիտի գա օր մ'որ հոգիդ ավաղե
Արագ խուսափումն երազին այս լույս։

Եկո՜ւր. վաղը դուն գուցե՞ թարշամիս,
Եվ գուցե տենդով մը մեռնի հոգիս,
Մի՛ խամրեցըներ հույզը պաշտումիս։

Թո՛ղ որ նայվածքիդ ըմպեմ բոցը ջինջ,
Մոտեցի՜ր, քնքույշ ծաղի՜կը կյանքիս,
Համբույրի մը մեջ մոռնամ ամեն ինչ։

Ա՜հ, այս կյանքն աղվո՛ր որքա՜ն դանդաղ է։
Եկո՜ւր, ձանձրույթը հալեցուր հոգվույս.
Լույս երազի մը մեջը զիս թաղե,
Բե՜ր ինծի սըրտիդ գուրգուրանքը կույս։

ՑԱՅԳԵՐԳ

Դաղրեցան ձայներն ամեն,
Յերեկվան ժըխորներուն,
Կը հընչեն բայց հոգվույս մեջ
Դեռ սիրույդ երգերն անհուն։

Կը հյուծին ցոլքերն հիվանդ,
Գիշերվան մեղկ լույսերուն.
Կը փայլի հոգվույս մեջ վառ
Տարփանքիդ բոցը սիրուն։

Կը նիրհեն քունի մեջ խոր
Թըմբիրով իրերն ամեն.
Կը հուզվի հոգին արթուն,
Քու սիրույդ թունդ պաշտումեն։

Թո՛ղ մարին լույսերն ամեն,
Ու մեռնին հույզ ու ժըխոր,
Կ'ուռճանա, կյանքոտ հավետ,
Սերդ անջինջ իմ հոգվույս խոր։

ԵՐԱԶ ՕՐԵՐ

(Քանթիլեն)

Կարմիր ծաղիկ մը գարունի
Առտու մ'ինծի նըվիրեցիր.
Ըզգացի թե տենդեր ունի
Երազկոտ միտքըս ուշացիր։

Խանդաղատանք մը հորդեցավ
Իմ նըվաղկոտ լանջքիս տակ՝ ուր
Դողաց սիրո սարսուռն անցավ՝
Ու թովանքը համբույրին հուր։

Եվ ըղձակաթ իմ հեգ հոգիս
Ըզգաց սիրտիդ հուրքն արծարծուն,
Ու մետաքսե ուղի մը զիս
Սեր-Ծաղիկին տարավ ածուն։

Հոն ժըպտեցավ կյանքը ինծի,
Հըմայքներու հույլովն անցավ,
Եվ ուրվական մը կասկածի
Անոր մոտեն երբեք չանցավ։

ԱՂԵՐՍԱՆՔ

Կաթեցուր հոգվույս մեջ հույզը կյանքին,
Դո՜ւն, երազներու ծաղիկ դողդոջուն.
Դո՜ւն՝ որ գիշերին մեջեն մըթագին
Հծծեցիր պարերգն իմ տենչանքներուն։

Դո՛ւն՝ որ ժըպտեցար, դուն՝ որ կը ժպտիս,
Ինծի տուր կաթը խանդաղատանքին.
Կիրքե՛ր տո՛ւր հոգվույս, հըրայրքներ սրտիս,
Տենդոտ պահերու հուզմունքներն հեշտին։

Նոր բարբառումներ ու հոգվո համբույր,
Նոր-նոր կսկիծներ ու ցա՜վ տուր ինծի.
Վարդավետ ցոլքով ծաղկին հեշտաբույր
Թող որ շուրջն հըրուա՛ երազանքս հածի։

Պահե՛ր մոլուցքի, տենդի վայրկյաննե՛ր,
Տո՛ւր ինձ երազին ոսկելար նարոտ.
Երջանիկ ըրե սիրտս՝ որ լըռին էր,
Եվ կյանքս՝ որ հիմակ հույզի է կարոտ։

Կաթեցո՛ւր հոգվույս մեջ հույզը կյանքին,
Դո՛ւն, երազներու ծաղիկ հեշտալիր,
Դո՛ւն՝ որ գիշերուն մեջ հեծեծագին
Կյանքի վարդենիքն ինծի ցուցուցիր...

ՄԱՆԻՇԱԿ ՈՒ ՄԱՄՈՒՌ

Ժայռերու զով շուքին տակ
Կանանչ խոտի խուրձ մը կար՝
Որ ունենալ կը ցանկար
Քարին գույնը կապուտակ։

Ինքը ցողի՛ պետք ուներ,
Որ գույներով զանազան
Կազմեր ծաղիկ, ծիածան՝
Երբոր արևը փայլեր։

Քարն երջանիկ էր ո՞րքան...
Առանց ցողի ալ՝ գույներ
Ու ծաղիկնե՛ր կը շիներ՝
Շողերուն հետ օգնական։

* * *

Խոտին խուրձը բարձրացավ
Քիչ մ'ամեն օր քարն ի վեր,
Որուն՝ սրտիկն իր բացավ,
Պատմեց բաղձանքն ու ցավեր։

Ըսավ. Ի՞նձ ալ, ա՜ղբըրուկ,
Տայիր գույներ անուշակ
Ու նրվերիդ փոխանակ՝
Գույնիս ընծա՜ն առ խաժուկ։

Ցանկալի՜ քույր, ա՜ռ, որքան
Կ'ուզես գույներս և ընծան
Տուր կանանչիդ կենսական՝
Երակներուս անկենդան։

* * *

Գիշերն համբուն քաղցրացան
Քարն ու խրձյակը խոտին...
Եվ երբ շողերն ավոտին
Հորիզոնեն բարձրացան՝

Ժայռի շուքին տակ գըտան
Խոտին ծաղիկն ու բաժակ,
Եվ երբեմնի անկենդան
Քարն ալ՝ ժպտուն ու խաժակ։

Եվ այն օրեն մանիշակ
Ծաղկեցավ թուփն, ու դաժան
Ժայռեն եղավ անբաժան՝
Մամուռին գույնն անուշակ։

ԱՐԴԻ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՅՐ ՄԵՐԸ

ՏՈՂԻՐ ԻՆԾԻ, ՏԵՐ

Դուրյան սրբազանին

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ծաղիկներո՜ւ պես զայն ժողվեմ ճամբուս վրան՝
Նայվածքներուն մեջ ամենուն և ամեն օր։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Եվ ես՝ հանգույն երփնալուցկի վառող մանկան՝
Զայն գունաժպիտ տեսնեմ ուրիշ դեմքի մը վրան։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Զանգակներո՜ւ պես զայն կախեմ ամեն դրրան՝
Ու զերթ նարոտ ամեն դրրան զայն պրսակեմ։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ճրրագներու պես զայն բոցեմ բազմաստեղնյան՝
Խավարին մեջ ամեն երդ ու խրճիթներու։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Զայն սրբասաց իմ հոգյակիս ընեմ խորան՝
Զայն իմ մտքիս ծրխեմ՝ զերթ խունկ բազմաբուրյան։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ու չըլլա որ ուրիշներու կոծն ու կական
Խեղդել ուզեմ ջրրվեժին մեջ դափիս ձայնին։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ու չըլլա՜, որ ծափիս ձայնին երգը՝ գուժկան
Եսիս սենյա՜կն ունենա՝ ցո՜ւրտ առանձնարան։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ու սեղանիս վրրա դրված մեն մի նրկան՝
Զույգ մը խինդե՜ր գեթ ունենա թող խաչանիշ։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ու բաղխեմ զայն սրտիս ժայռին՝ իբրև մական՝
Որ բղխեցնե ջուրն աներկմիտ երանության։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Զայն ջուրերուն վրրա ձրգեմ իբրև ուռկան,
Զայն իբր արոր ակոսներո՜ւն ձրգեմ վրրան։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Զայն իբր անձրև ցողեմ ամեն դաշտի վրրան,
Զայն իբր արև բաշխեմ ամեն հորիզոնի։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Զայն ընդգրկած իտեալին ըլլամ որսկան.
Զայն լաստ ըրած ես Լույսերու նավո՜ւրդն ըլլամ։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
Ժողվել՝ հոգվույն մեջ ծերերուն, կույսին, մանկան,
Պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին։

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական՝
Ժողվել՝ հոգվույն մեջ ամենո՜ւն, համայնական,
Հոգվույն ամեն մասնիկներուն մեջ՝ ամեն ժամ։

Ճամբաներեն, ու գետերեն, ու դաշտերեն,
Անտառներեն, ու լեռներեն, ու ձորերեն,
Տանիքներեն, ու տուներեն, ու դուռներեն՝

Տո՜ւր ինծի, Տե՜ր, ուրախությունն անանձնական։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

ՄՈՒՍԱՅԻՆ

— Թևերս, ուղիղ դեպ ի բարձունքդ վըսեմ՝
Քնարըդ կ'ուզեն, կ'ուզեն քընարդ, երկընցո՛ւր։
Կը տրոփե մեջս երգերու սաղմն. կը սպասեմ.
Ե՞րբ պիտ՝ տըրվի անոր ծնուցիչ քու համբույր։

Երգե՞լ կ'ուզեմ,— թող սարսըռա բընությունն
Մատերուս տակ, ինչպես մոր ծիծն հոլանի՝
Մանկան առջի բընազդական դլուխելուն.
Եվ կյանքը թող շրթունքիս վրա լուծանի։

Երգե՞լ կ'ուզեմ.— որոտներն ի՞նչ կ'ըսեն մեզ,
Կ'առնե խոսք մ'հովն ամպեն, հովեն ալ՝ ջաղաց.
Բա՛ռ ունի աստղն.— երգել, երգե՛լ կ'ուզեմ ես,
Չի կը խոսին երգով Բնությունն ու Աստված։

Կ'ուզեմ ծովուն հետ սիրտ սըրտի ես հարիլ,
Իմ անհունիս մեջ այդ անհունը թաղել.
Բուռն իղձն ունիմ մըրըրկին հետ մաքառիլ,
Եվ գլուխս էին գաղտնիքներուն դեմ բախել։

Գրված է Սերն՝ վարդին, Հավատքն՝ աստղին վրա.
Ջանոնք հեգել կ'ուզեմ քնարի շըրթունքով.
Կ'ուզեմ բնությանն հորինել քող մը ծաղկյա՝
Մտածման ամեն ձև իր ներքև քողելով։

Տո՛ւր, ով Մուսա, տո՛ւր այդ քընարըդ բըռնած.
Պիտ՝ իմին սիրտս, իմին աշխարհս ըլլա ան՝
Ուր գաղափարն պիտի բնակի զերդ Աստուած,
Վեհ գաղափարն աչքերով բո՞ց, թռիչքով լա՞յն։

Անոր վըրա պիտի հալի խանդն հոգվույս,
Անոր վըրա պիտի սիրտս հար քըրտընի,
Ինչպես կարմիր և սարսըռուն արշալո՛ւյս
Մը՝ սեզերուն, հասկերուն վրա գարունի։

Պիտի այդ քնարը կապե իմ շրթներուն
Ժողովուրդին շըրթունքը հուր, սիրագին,
Եվ պիտի այդ համբույրն ըլլա բուռն, անհուն,
Համբույրին պես՝ տըրված ծովեն եզերքին։

Երգերն անոր պիտի պատմեն Սարսուռներ՝
Մարմնավորած իմ արյունես, շարժումես,
Ներշընչելով տողեր, փուշի ակոսներ,
Ուր, հողմակոծ, պիտ՝ ծըլի վիշտն աղեկեզ։

Պիտի մոընչեն զարհուրանքները կյանքին՝
Մե՛ջը սուզած՝ արդարության, բարության.
Սըրբազա՛ն քնար, պիտ՝ լարերն իր մըկըրտվին՝
Մարտիրոսված եղբայրության ավազանն։

Ո՛վ սուրբ Մուսա, Մուսա մատաղ, լանջաբաց,
Կարծես դեռ նո՛ր ձըգած աստղե օրոցքդ հուր.
Ո՛վ վարդ կույս, դո՛ւ, ժողովուրդին խոստացված,
Լայն սերերո՛ւ դու խոստացված, քնարըդ տո՛ւր։

Երիտասարդ՝ բայց շուտ ճանչցած շատ բաներ՝
Գիրկըդ կու գամ երազելու առանձին.
Մեկդի թողած եմ ժըպիտ, խաղ ու պարեր,
Նորընծա եմ գաղափարի աշխարհին։

Թևերս, ուղիղ դեպ ի բարձունքդ վըսեմ՝
Քնարըդ կ'ուզեն, կ'ուզեն քընարդ. երկընցո՛ւր։
Կը տրոփե մեջս երգելու սաղմն. կը սպասեմ.
Ե՞րբ պիտ՝ տըրվի անոր ծնուցիչ քու համբույր։

Այսպես ըսի։— Եվ պատասխանն աղեկեզ՝
Մուսան՝ վերեն հովին հանձնեց դեպ ինծի.
— Տենչիդ ըզգո՛ւյշ, այս քընարն է շինված, տե՛ս,
Սև նոճիե, փթթում մահվան ավիշի։

Թըշվա՞ռ հոգի, անոր լարերն են բերված
Փետրոտրված գանգուրներեն որբերուն.
Կ'երթան երգերն, հեհեալով, սրընթաց,
Ուր որ կ'երթա ոտքը բոբիկ՝ խեղճությունն։

Հեռո՞ւ ասկե.— գիտցած ըլլաս՝ որ այս քնար
Քամահրանքով պիտ՝ անտեսեն ձերիններ.—
Չի օտարին ոսկվո՞ւյն քով իսկ՝ ձեր գոհար՝
Աչքերնուդ շո՞ղ մըն ալ, ըստեպ, չի ցայտեր։

Պիտի գոցե իրենց ալիքը բուստերդ,
Եվ փուշերու, եղիճներու մոխիրով
Պիտի թաղեն կայծերն հոգվույդ բոցակերտ՝
Նըվագներուդ ողբը քեզի՞ գարձնելով։

Հեռատեսե՛. ապագայդ խիստ մըթին է,
Հեռատեսե՛. գերեզման մ'է ապագայդ,—
Խանձարուրեդ պիտի օրոցք մը չելլե,
Պիտ' չը գըտնես միջոց թռիչքիդ համեմատ։

Ժողովուրդի՞ն ըլլալ կ'ուզես՝ մո՞ռդ չեղած.
Մնողքիդ արցունքը քու դարձիդ կըսպասե.
Արևմուտքի մեջ ծաղիկներդ ընձյուղած
Պիտի խորշակն Արևելքի ազազե։

Մըտածումի, ըղգացումի այս ճամփուն՝
Խընդի արևը չէ սըփռած իր շեկ բաշ.
Հոն կը շըրջի Աբովյանի մ'հեգ ուրուն,
Հոն Դուրյանն է լացած, տրխրած Պեշիկթաշ։

Ի՞նչ, կ'ուզես քնա՞րն, որուն շանթերը մեջի՝
Պիտի հաճո չը մըռընչեն շատերուն,
Որուն վրայի քողն է սև քող մը խեղճի,
Թեպետ ըլլա մեջն արշալույս մը շողուն։

Ի՞նչ, այս քընա՞րը կ'ուզես, քնար սև փայտե՞,—
Այս՝ վերքերու գործի մըն է, այս է հուր.
Ապագայդ է, այս՝ դագաղդ է, անունդ է։—
Ես, անհողդողդ, ըսի անոր.
— Ըլլա՛, տո՛ւր։—

ՄՈԽԻՐՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՎ

Հյուղն այրեցավ։— Թըխաթույր ծո՛ւխը նյութին
Կապույտ զենիթը սեցուց.
Ան, դեպ երկինք, խեղճ մարդերու հույսերուն
Ոչընչացումն էր գըծուած։

Հովն, որ առաջ կը հեծկըլտար ցըրտագին
Գույքերուն մեջ դիմակաց,
Հիմակ անոնց թույլ մոխրին հետ կը խաղա՝
Հեգնող շըշուկ մը ձըգած...

Կը մորմոքի ընտանիքն իր ջանքերուն
Սին փոշիին հանդիման.
Կուլա՛.— անգո՛ւթ այդ հըրդեհումն արցունքո՛վ
Պիտի ջանար մարել ան...

Մայրն ըստինքին վըրա սեղմած մերկ որդին՝
Ավերին մեջ կը շըրջի.
Մանկան համար ողջ շապիկ մ'ան կ'որոնե
Եվ կամ կըտոր մը քուրջի։

Տարաբա՞խտ մայր, կաթին գունատ փըթթումին
Պատըսպարան չը մընաց.—
Հանկարծ ոտքին կը զարնըվի սարսուռով՝
Օրոցքեն փայտ մը, խանձա՞ծ.—

Ո՛հ, դաժա՞ն բոց, ատիկա բույն մ'էր սիրո՝
Որ քանդեցիր զայրույթով.
Հոն դըժգունած զույգ մը շըրթունք վրայե վրա
Կը ծըծեին սեր, գորով։

Արդ, մոխրին տակ խեղճերուն կյա՛նքն է թաղված.
Ա՛լ դամբան մ'է հյուղն իրենց.
Բախտն, որուն աչքն արդեն կապած է Աստված,
Փոշի, կըմախք հոն ձըգեց։

Ըսե՛, ո՛վ Տեր, հիմա դեպ ո՞ւր պիտ՝ երթան
Այդ թըշվառնե՛րը լալկան.
Դու, որ անոնց տընակն առիր, հույսն առիր,
Օ՛ն, ըսե, ո՛ւր պիտ՝ երթան...

Գեթ անձնըվեր գութ չը տըվիր մարդերուն՝
Որ անոնք հոն կրծկըվին,
Որ մարդկային սըրտերու մեջ՝ գեթ անոնք
Խորշ մը գըտնան ջերմագին։

Ո՞ւր պիտ՝ երթան։— Էրիկն արդեն հիվանդոտ.
Սիրտ մ՝ուրկե ողբ լոկ կ՝ելլե.
Կինը, վատուժ, պինդ շըղթայված իր վըզեն
Նիհար, փոքրիկ թևերե։

Ո՞ւր պիտ՝ երթան։— Գահավեժի մը վերև
Իր կյա՞նքը մին կախելու,
Թե, հուսահատ, մյուսն անպատիվ տան մը մեջ
Մաքուր սերն իր ծախելու։

Ո՞ւր պիտ՝ երթան սև նոճի այդ ծաղիկներ
Ճակատագրեն հողմավար,
Ցուխեն, բոցեն այդ քըշվածները շըլմոր,
Վերքի շիթերն այդ թվառ։—

...Ե՞րբ պիտի գա, ո՛վ Տեր, այն օրը վըսեմ.—
Եղբայրությունն Մարդկության
Ե՞րբ իր շըղթան պիտի ձրգե սըրտե սիրտ՝
Մեծ համբույրովն հաղթակա՞ն։

Ե՞րբ հըրկիզյա՛լը չըքավոր, հուսաթափ,
Մոխրին վըրա ինչքերուն,
Ցուրտ, վիթխարի լըքումին տեղ պիտ՝ գըտնա
Տիեզերական Օգնությո՛ւն։

ՄՈՒՐԱՑԻԿԸ

Միաչյա է. անդամալույծ՝ մեջքեն վար.
Դեղնություն մ՝իր նիհար մարմինն է ծածկած.
Իր խոթ կյանքին աշնան մեջ կ՝ապրի հար,
Մինչդեռ անցքին գարուն մըն ալ չէ ձրգած։

Մեգերո՞ւ շող, հիվանդ ծաղի՞կ եզտյուրի,
Մարդկության մեջ՝ ստվե՛ր ձրգված մեր ճակտին.
Միայնակ է, վըրայեն այս աշխարհի
Բան մը չառավ, պիտի չըտա բան մ՝ալ սին։

Երգեհոնիկ մ՝է միայն՝ իր մեծ հարստությունն՝
Զոր, պատի մ՝տակ, մորն օրհասին նեղ ատեն՝
Անոր ձեռքեն քաշեց հանեց շըլմորուն,
Ահաբեկած՝ անտեր կյանքին ապրուստեն։

Ո՞վ պիտի այդ գործիքն անոր զըլանար,
Պակսած աչքին տեղ այդ երկրորդ աչքն հընչող՝
Զոր տըվավ Տերն, որպեսզի ան թափե վար՝
Գոց բըբին տակ ժողվըված արցունքը ճընշող։

Այդ երգեհոնիկը շատ հին է. գիտե ան
Հիվանդ, տըխեղծ սերունդներու պատմությունն.
Հին արցունքներ չորցած են վրան, որք եղան
Պահարաններն իր նվազած վշտերուն։

Բաբախուն կուրծք մ՝հոն կ՝ընե միշտ ելևէջ
Ուրախ շեշտ մ՝իսկ եկած չէ իր հնքին քով.
Բուռ մը արցունք նետած է Տերն անոր մեջ՝
Մակընթացման, տեղատվության ծրփանքով։

Փողոցին մեջ երգը կ՝երթա դարձդարձիկ,
Ճամփուն ծայրեն մինչև տունի մը ետև,
Զըմնալով շատ հեղ անկե կըտոր մ՝իսկ՝
Գիրգ լանջերու մեկ ժանյակի մ՝ալ ներքև։

Այդ երգեհոնիկն իր մ՝է որ մեզ կը խոսի՝
Բյուր ցավի բյուր լեզու ժողված իր բերան.

Կը բանա այն կյանքերուն քողը մեզի՝
Որոնք մեր կույր ոտքերուն տակ կը վրխտան։

Ահա՛.—

Վիհ մութ, զազրատեսիլ, ահռելի,
Ժրխոր զեռուն, իրարու վրա, կարեվեր,
Ջերդ խրոնըված պոլիպոտներ քըստմնելի,
Տժգույն դեմքեր, տժգույն աչքեր, անգամներ.

Հառաչանքներ՝ հանդիպած պինդ սըրտերու՝
Ինչպես ծովուն թույլ ծփանքները ժայռին,
Ելլող սրունքներ՝ սառին վրա մո՛տ հալելու,
Ինկող գանգեր՝ խորն ստվերին ու գայռին։

Տապլտրկող ուսեր՝ որոնք կը հըրեն
Մերին գոց դուռն՝ որուն բըռնած ենք նիգեր.
Սև փրրփուրներ՝ նետված թյուրակն ալիքեն՝
Որք կը ցնդին մեր ոտքին տակ.— չե՞նք տեսներ.

Դողդո՞ջ քայլեր՝ մերին քայլին ետևեն,
Որուն ճամփան իրենց ճամփա է միայն.
Տմույն այտեր՝ շրբոսորած արևեն.
Իրաններ ցուրտ՝ սարսուռներու գերեզման։

Աչքե՞ր որ լոկ, (Գրթածը մերթ մոռնալով),
Իրկունն, ձեռքին մեր կը սպասեն դողդղագին՝
Թե պիտ՝ արդյոք արձանագրե՞նք գրթալով՝
«Վաղը» իրենց տետրակին մեջ ապրուատին։

Օրոցքներ սո՞սկ շիրմի համար խավարշտին,
Առանց բոցի և համբույրի մը՝ սերեր,
Որոնք իրենց դեռ սաղմին մեջ կը մեռնին՝
Ինչպես չելած դեռ կոկոնեն՝ ծաղիկներ.

Անդամներ գոս, պակաս դրված, և կամ ծուռ,
Ցամքած սըրտեր՝ որոնք վախեն ժանտ Մահվան։
Նույնիսկ տղմի մեջ կը պահեն թաքթաքուր՝
Մեկտեղ իրենց ներկային՝ կույր ապագան։

Կուրծքեր՝ վերքով և արյունով պատարուն,
Հազիվ ծընած փոշի դարձած երազներ,
Եվ արցունքներ հևքով մ'ինկած քուրջերու.
Նըվաղումներ, կոծեր, դողեր, օրհասնե՞ր.

ՀԻՎԱՆԴ Է

Ըստվերին մեջ խանի մ' անկյունը լըքված
Թըշվա՞ռ պանդուխտ, հիվանդ է.
Խոնավությունն անոր մարմինը շիթ-շիթ
Գերեզմանին կը նետե։

Բըժիշկ չունի, եղած դրամն ալ հատավ.
Ցավը ծանր է.— գըթությո՞ւն։
Հոն չը կա սիրտ մ'որ բարությունը քամե
Անոր ծարավ շրթներուն։

Եվ ինքնիրեն մըտերիմներ կըստեղծե
Ցնորքներուն մեջ ջերմին.
Իր վիճակին կարեկցող մեկը չունի
Բացի մամուկը որմին։

Մըթնշաղին մեջ կը մարմրի, կը հյուծի
Մըթընշաղի մը նման.
Լըռությունն հոն կարծես դագաղ մը կ'երկնե.—
Օրոցք՝ տունեն գերեզման։

Երիտասարդ է տակավին, և փեսա.
Պոլսեն մինչև Վան հեռու,
Հոն՝ հաց կ'ուզեն հարսն ու ծնողք, զի՞նք կ'ուզեն.
Դեռ շատ շուտ է մեռնելու։

Ան իր արյունն իր քըրտինքով կը շահեր...
Տե՛ր, ի՞նչ սըրտով կը կոտրես

Թեն՝ որուն վրա կը կրոթրնին մանուկներ
Եվ ծնողքներ ձյունագեմ։

Դուրսն արևին, զեփյուռին տակ կ'ուռճանան
Բախտավորներն աննիազ.
Արտին մեջ աստղն ավշի ելքին կը ժըպտի.
Տե՛ր, զինք ինչո՞ւ կը մոռնաս։

Այդ բազուկներն աշխատանքի համար են՝
Ո՛չ մահվան դեմ կրռվելու։—
Բախտը խուցին մեկ անկյունեն կը խընդա
Օձի ժըպտով մ'ահարկու։

Պիտի մեռնի,— խիստ մահացու հիվանդցավ.
Եվ պատանքին մեջ երբեք
Պիտ' չտանի սիրելիի մ'արցունքներն
Ու սև ուխտերն հուսաբեկ։

Պիտի մեռնի.— և իր բընիկ լուսնին տակ,
Հարսը սիրո ծարավով՝
Պիտի զուր տեղ անոր գալուն սպասե...
Խեղճ վանուհի, ապահով

Հույսի ամեն խոստումներու վայելքին՝
Կը ծիծաղիս աստղին հետ.
Մինչդեռ կյանքի երկընքին վրա կը գըծվի
Շանթը շողին զուգահետ։

Որո՞ւն համար շուշան ու վարդ փոխ կու տան
Իրենց միացումն՝ այտերուդ.
Ինչո՞ւ Վանա լիճն աստղերով կը վառի՝
Նախանձելով աչքերուդ։

Որո՞ւն համար հաջաղիդ տակ կը պահես
Ըմբոստանքներն համբույրին...
Վաղն, հեգ ծաղիկ, պիտի ճամփորդ մը գուժե.
-- «Մեկ աչքը բաց թաղեցին»։

ԱՎԱԶԱՆԻՆ ԶՈՒԿԵՐՈՒՆ

Մըտածողի մը նման
Ջուրին միջև կը շըրջիք։
Ա՛լ գըծված է ձեր սահման,
Ո՛վ լողակներ խատուտիկ։

Հոս պիտի ա՛լ չը գըտնաք
Անհուն, կապույտ այն աշխարհ,
Որուն հորձանքն ու վըտանգ
Կը կըտրեիք հեգնաբար։

Ձերին ճարպիկ թևերով՝
Ազատություն, զվարթություն
Կը գըրկեիք անվըրդով,
Անգե՜տ՝ նենգող խայծերուն...

Արհեստն արդ ձեզ կը պատե,—
Ավազան մ'հին, ձեզի նեղ,
Շատըրվան մ'ալ գրանիտե,
Եվ փոքրիկ ժայռ մը մեջ տեղ՝

Որ գործ մըն է ձեռքերու։—
Այս է ահա ձեր աշխարհ.
Ամբողջ այս է, ո՛վ աղու
Բանտարկյալներըս թըշվառ։

Երբ կը կայտռեք ջուրին վրա՝
Կը զվարճանա անխըռով
Անձնասեր մարդն՝ արծաթյա
Պըղպըջակներն դիտելով։

Ո՜հ, ի բընե չար է ան.
Իր հաճույքին, իր փառքին
Կ'ուզե զոհել ամեն բան.
Բըռնավորն է աշխարհքին։—

...Այս սև ժայռին խոռոչներ
Ձեր շիրիմներ պիտ՝ ըլլան,
Ուր կ՝երկարին բողբոջներ
Բաղեղներու ցիրուցան.

Ուր ջուրերուն թրրթրումունք
Կու գան բախիլ մեղմորեն,
Ցընցըղկելով արտասուք՝
Ողբ ու հանգիստ կ՝եղերգեն։

Ո՜վ իմ դըժբախտ անմեղներ,
Ճիշտ նման է աշխարհս ալ
Ձեր այդ տեղին։ Դեպ ի վե՜ր
Կը ջանա միտքս իմ ելլալ.

Կ՝ուզե ուրիշ մեկ աշխարհ
Ան գըտնելու, ուր անհուն
Ազատությունն իշխե հար՝
Եվ անխարդախ բարություն։

Սակայն ի զուր։ Լոկ բանտող
Գըծուած նյութեր կան չորս դիս՝
Որ թրռիչներս աղամող
Կը ջախջախեն և հոգիս։

Առկայծ հույսով մ՚ո՜ւր կ՝երթամ.—
Կ՝երթամ նույն տեղրս գացած.—
Հոս, կյանքն ու սև գերեզման
Իրարու ձեռք են տրված։

Օր մը ձեզի պես ե՛ս ալ
Պիտի իյնամ, ցուրտ անշունչ,
Մոռացոնքի մեջ մրռայլ.
Հոս ամեն բան է անուրջ։

Պիտ՝ լռռ ըլլաք դուք, ես հող.
Բայց ինձմեն եք երջանի՜կ,
Չի վըրանիդ միշտ լացող
Գեթ շատրվան մը ունիք։



ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ

Ընդ եղեգան փող բոց ելաներ.
Մ. ԽՈՐԵՆԱՑԻ
(Առասպել):

ԶՈՆ

Եղեգնյա գըրչով երգեցի փառքեր.
— Քեզի ընծա՛, իմ հայրենիք—
Սոսյաց անտառեն էի զայն կըտրեր...
— Քեզի ընծա՛, հին հայրենիք—
Եղեգնյա գըրչով երգեցի քուրմեր.
Ընդ եղեգան փող լո՛ւյս ելաներ։

Եղեգնյա գըրչով երգեցի կարոտ.
— Ձեզի ընծա՛, հայ պանդուխտներ—
Ան տարաշխարհիկ բույսի մ'էր ծըղոտ...
— Ձեզի ընծա՛, հեզ պանդուխտներ—
Եղեգնյա գըրչով երգեցի հարսեր.
Ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ։

Եղեգնյա գըրչով երգեցի արյուն.
— Ձեզի ընծա՛, սուրի զոհեր—
Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կընյուն...
— Ձեզի ընծա՛, կրակի զոհեր—
Եղեգնյա գրչով երգեցի վերքեր.
Ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ։

Եղեգնյա գըրչով որբ տունս երգեցի.
— Քեզի ընծա՛, հայր ալեհեր—
Ցամքած աղբյուրեն մեր զայն հոտեցի...
—Քեզի ընծա՛, մայր կարեվեր—
Եղեգնյա գըրչով օջախս երգեցի.
Ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ։

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի.
— Ձեզի ընծա՛, հայ մարտիկներ—
Գրիչս եղավ անթրոց սըրտերու հնոցի...
— Ձեզի ընծա՛, քաջ մարտիկներ—
Եղեգնյա գըրչով վըրեժ երգեցի.
Ընդ եղեգան փող բո՛ց ելաներ։

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՆԵՄԵՍԻՍ

Պաշտե դաճանակե աչքերով աստվածուհին, ով ժողովուրդ. երբ բռնակալությունները կործանես, կործանե այլևս զինքն ալ, և դուն բարձրացիր իր պատվանդանին վրա՝ շուշան մը ձեռքիդ մեջ։

Քերթողն հրսկա, մրրրկավարս, հրրաշվի,
Նրվիրական արվեստանոցն իր մրտավ,
Եվ փակեց լայն պողպատ դրռներն հապշտապ
Փակեց փեղկերն երկրնքին դեմ, որոնց նեղ
Ճեղքերուն մեջ մրնացին
Արեգակին մազերն ոսկի, սանտրրված։
Լեռնակուտակ զանգված մ'ընտիր մարմարի
Այդ շենքին մեջ մրթընշաղ
Կը սպասեր՝ ձևն հագնելու հին դյուցազնի.
Եվ կամ գուցե կը հուսար

Որ աստղերեն իջնելով՝
Պիտի աստուած մը գա իր մեջ բընակիլ։
Զանգվածը այդ ապառաժ մ'էր բարբարոս՝
Որուն մեջ դեռ կը մընար
Կիսավեր բույն մը արծվի.
Եվ խորն իր մեկ խոռոչին
Օձ մ'էր ծվարած, ու կը նընջեր հանդարտիկ։
Քերթողն ինքզինք պահ մ'անհունին մեջ հոգվույն
Ըզգաց Աստված.— Սոթտեց թևերը ջրղուտ.
Ոսկեղեն մուրճը ափին մեջ, դըժգույն, վեհ,
Մարմարին դեմ, գըլխեբաց,
Հրսկայի պես կանգնեցավ...
Նըշմարեցին աչքերը ձեռք մ'այն ատեն
Մութին ծոցեն՝ կարկառուն՝
Որ վիթխարի բըռնած սափոր մը՝ պարպեց
Խորն իր հոգվույն լայնալիճ
Տիեզերքին ըստեղծահյութն հողաբույր։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց։
Արվեստնոցին բյուզանդական գըմբեթեն
Հույսի ձեթով լի սուրբի գանգ մը կախված
Կ'ըլլար ջահն իր լուսատու։
Ան կը տեսներ մարմարին շուրջը ձևված
Հըզոր երազն՝ որ միս կ'առնուր և ծալքեր։
Մըտածումն իր՝ այդ քարին կույս ծոցին մեջ՝
Իր արմատներն հուշիկ-հուշիկ կը խըրեր
Ծառի մը պես ձիթենի։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Ամեն մեկ բուռն հարվածին տակ հաղթ մուրճին՝
Ինչպես թե ռումբ մը պայթող՝
Ուղիս մը կայծեր, քարերու հետ խուռնախիտ,
Կ'անձրևեին պատերն ի վար խավարչուտ
Պրսակի պես քայքայվող։
Դուրսն ողկույզներն հասմիկին
Կը թափեին մուրճին մեն մի թրնդյունեն
Փեղկերն ի վար իրենց կապույտ ծաղիկներ։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց.
Մինչև որ բիրտ վայրենությունը քարին
Նըվաճվեցավ, և ահա գլուխ մը կընոջ
Մարմարին մեջ թարմորեն
Ծաղկեցավ բա՛րձրը շուշանի մ'հանգունակ։
Ջրքնաղ էր ան, միանգամայն էր ահեղ.—
Հելլենական արձաններու կուրությամբ
Կը հառեին խորունկ աչքերն՝ որոնց մեջ
Կարծես՝ հոգին, անդունդն ի վեր մագըլցող
Կարիճի պես՝ կամաց կամաց կ'երևնար։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Բանաստեղծն իր բազուկին տակ կենսադրոշմ
Կը փորագրեր կարծես քերթված մ'ահավոր.
Խոր ծալքերուն մեջ կյանք առնող մարմարին
Մեն մի հարված դաշնակություն մ'էր քնարի,
Հանգ մ'էր, տուն մ'էր, և կամ էր շեշտ մ'օդասլաց։
Մեն մի հարված ռըմբագոռ
Ըմբոստ երգ մ'էր ոսկի մուրճով երգըված՝
Որուն Աստված երկընքին մեջ կ'ունկընդրեր։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց,
Ու ավասիկ ճոխ գանգուրներն այդ կնոջ
Ջերդ ողկույզներ իրար խըռնված օձերու
Ուսերուն վրա թափեցան։
Կերտեց թիկունքն և թիկնամեջը շըքեղ,
Կերտեց թևերն ամազոնի՝ որոնք թե՛
Կարող էին արձակել
Ոսկի փըքինը սիրո,
Եվ թե հրաշեկ կայծակը՝ տեգ մահընկեց։

Եվ քանդակեց, քանդակեց,
Եվ քանդակեց, քանդակեց...
Ո՜հ, ի՜նչ փույթ թե անցան անքուն գիշերներ,
Եվ ցորեկներ՝ անդադար.—

Ծիծե՜ռն ահա, ծիծե՜ռն ահա արձանին,
Ա՜յնքան մաքուր կըլորցըված, պաղպաջուն,
Որ անշուշտ կաթն անոնց մեջ պետք էր ըլլալ
Կամ լույս՝ սառած, և կամ արծաթ՝ հալըված։
Կողերն ահա, ահեղորեն շընչավոր,
Որոնց ներքև կարծես արյամբ մեծնային
Արդարության, վրեժի սաղմերն երկվորյակ։
Շինեց ողն, հո՜ւյր բումբերն, ազդրերը ողորկ.
Շինեց և՛ պորտն՝ որ զանգվածին մեջ հանկարծ
Քառսեն ծնող աստղի պես
Ճառագայթներ դուրս պոռթկաց։

Օ՜ն, հարվա՜ծ մ'ալ, հարվա՜ծ մ'ալ...
Գանգ ջահին մեջ ձեթն ըսպառիլ ըսկըսավ.
Օ՜ն, հարվա՜ծ մ'ալ, հարվա՜ծ մ'ալ...
Եվ քանդակեց, քանդակեց...
Կերտեց գուճերն և սրունքներ.
Կերտեց ոտքերն՝ որոնց տասնյակ մատերեն
Ժահրով, մեղրով խառնըված
Դըդըշահոս լույսի վտակներ բըխեցան։
Եվ շինեց ան վերջապես
Կրնոջ մեջքեն վար ահեղ
Սուր մ'երկսայրի, սուր մ'անպատյան, սուր մ'անբիծ,
Եվ Աստուծո պես արդար։
Այն ատեն հոն մարմարիոնին խորշին մեջ
Քընացող օձն արթընցավ
Եվ փաթթելով զինք մեղմորեն այդ զենքին՝
Կաթիլ կաթիլ ըսկըսավ թույն մը կաթել։

Օ՜ն, հարվա՜ծ մ'ալ, հարվա՜ծ մ'ալ դեռ, և ահա
Պէտի գործն այդ ավարտի։—
Քանդակագործ քերթողն հանկարծ խորշումեց
Մարգարտապսակ ճակատը ջինջ քըրտինքով.—
Այդ ի՞նչ արձան, անունն ի՞նչ էր այդ կընոջ.
Գորգոնա՜ մ'էր, Հերա՞ն քինոտ, թե Իսիս.
Պ. տվանդանին վրա հրսկա
Փորագրեց.— Նեմեսիս։—

Ահա երազն իր, կը շրնչեր, կը խորհեր.
Իր երազն այդ մարմարեղեն՝ զոր երկար
Ատեն սրտին հանքերուն մեջ ան կրրեց։
Արդարության և Վրեժի
Դիցուհին այդ՝ աղջիկն էր իր կորովին՝
Զոր հրդացավ, ողնածուծովը սընույց
Այն օրեն վեր՝ երբ հրլությամբ հարսնացավ
Ժողովուրդին արյան հետ
Գիտակցությունն իր բեղուն։—
Այլևս ի՜նչ փույթ թե մնաց թաղված օրերով
Արվեստոցին դամբանական մութին մեջ։

Ի՜նչ փույթ թե արդ ճակատեն վար կը հոսի
Բարի քըրտինքն հոգնության,
Եվ ուսերուն և գըլխուն վրայ սևահեր՝
Իբրև ըլլար ջաղացպան մ'ան՝ կը նըստի
Ճերմակ փոշին մարմարին.
Եվ խիտ երկար թարթիչներն իր կը նմանին
Աղավնյակի մը թևերուն ըսպիտակ.
Ի՜նչ փույթ թե ան, ա՜հ, չըտեսավ կույս գարնան
Լուսակարկաչ աղբյուրներուն մեջ ժըպտիլն,
Եվ չըքամեց դեռ խաղողի ողկույզներ
Բաժակին մեջ բյուրեղյա.
Կամ չըխառնեց գանգուրներն իր ասպետի
Բլուրներուն վրա պարող
Աղջիկներուն հողմատարիկ վարսերուն։
Ո՜հ, ի՜նչ փույթ կյանքը մեռնող,
Երբոր երազը կ'ապրի,
Երբոր երազն անմա՜հ է։

Մուրճը ձեռքին մեջ բանաստեղծն հաղթական
Արձանին խիստ աչքերուն մեջ կը հառի.
Եվ անոնց մեջ կը ճանչնա
Ինքզի՜նք,— ամբողջ, անթերի։
Կը ճանչնա սուրբ մարմարիոնն այն՝ որ առավ
Բազկին տակ կյանք, որ այդ տեղ
Եկավ զանգված մ'իր բըրտության մեջ նընջող

Եվ արթընցավ Դիցուհի՜.
Ձերթ քարափերթ մ'ըստրուկ ինկավ մուրճին տակ,
Եվ կանգնեցավ Վրիժուհի՜։

Ավարտած էր ամեն գործ.—
Ահա մեջտեղն էր,— Նեմեսիսը— կանգուն,
Պաշտրվելու, ընդունելու ողջակեզ
Այլևոս կա՜զմ և պատրաստ։
Այն ժամանակ քերթողն ուրախ, գոհունակ,
Քաշեց նիգերը, բացավ
Պղընձե դռներն հսկայական գավիթին.
Նույն ատեն լույս մը դեմեն
Երկինքն ի վար ա՜յնպես արձանն ողողեց՝
Որ դիցուհվույն մարմինը շուրջն ըսկըսավ
Ճառագայթներ արձակել։
Խըտղըտեցուց ճերմակությունն իրանին
Աչքերն աղվոր օրիորդի մ'որ դեմի
Պատըշգամին նըստած ժանյակ կը հյուսեր։
Ձյունեղեն ժայռ մ'էր կարծես՝
Որ կը ցըցվեր արևուն մեջ՝ հոլանի։
Կը թափեին ուսերեն վար, կուրծքեն վար,
Շողի հազար վտակներ, հազար ալիքներ։
Քերթողն անգամ մըն ալ անոր նայեցավ.
Եվ ճակատին վրա ճանչցավ
Անգամ մըն ալ դուստրըն իր հեստ արյունին.
Տըվավ համբույր մ'երկյուղած
Մեջտեղն անոր ծիծերուն,
Ուրկե մընաց շըրթունքներեն վար առկախ
Լույսի կաթիլ մը՝ վաղվան
Նոր վրեժներու արգասիչ։
Հետո նետեց ծանրակիր մուրճը ձեռքեն.
Թևը սոթված պատվանդանին վրա դըրավ,
Եվ գըլուխն ալ թևին վրա.
Եվ իբր առյուծ մը պառկող՝
Հոգնած, քըրտնած և վըսեմ,
Աստվածուհվույն ոտքերուն տակ քընացավ։

* * *

Ժողովո՜ւրդն է, ժողովո՜ւրդն է որ կու գա.
Ճամփաներուն, փողոցներուն մեջ Քաղքին
Գետեր են որ թըխակոհակ կը հոսին.
Հարստահարված ժողովուրդն է որ կու գա։
Անոնք տեսան Նեմեսիսի վեհ արձանն,
Եվ քուրմեր են, վրեժի քուրմեր, և ահա
Անո՜ր, անո՜ր կը դիմեն։
Գործատուներն, թիարանեն, բանտերեն
Գըրոհ կուտան։ Արյունոտ են և քաղցած։
Դեռ բեկորներ շըղթայի՝ զոր ջարդեցին,
Մերկ ոտքերնուն հետ ընդքարշ
Սալհատակին շըռինդ-շըռինդ կը հընչեն։
Ոմանք սակրով, ոմանք մուրճով են զինված.
Դեմքերնուն վրա արյունռուշտ
Կը փայլակե կատաղությունն՝ հեռուեն
Մերկացնելով մարգարտաշող կըճըրտումն
Ակռաներնուն՝ մարդու միսի անոթի։
Մերկ են կիներն իրենց ամբողջ ծիծերով,
Եվ մանուկները՝ բոբիկ՝
Որոնց դըժգույն ճակատեն
Գարունն ընդհուպ կը թափթըփի վարդ առ վարդ
Դեռ չավարտած իր բոզբոջումը առույգ։
Ատելության գոռուգոչ մ'է՝ կը պոռթկա,
Կը տարածվի պողոտայե պողոտա
Քաղաքին մեջ բովանդակ։
Ամեն շըղթա կը բեկտի,
Եվ կըփըլչի ամեն բանտ.
Հրապարակին մեջտեղ կրակի կը տըրվի
Կառափնարանն՝ հերոսներուն արյունեն
Վարդակարմիր և ճարպոտ,
Եվ իր մեծ բոցն երկնոլոր
Ամբոխներուն գիտակցության կ'ըլլա ջահ։
Ամեն խըրճիթ ըմբոստ մը դուրս կը պոռթկա,
Ամեն շիրմե նահատակ մ'հաղթ կը հառնու
Նո՜ր միսով, նո՜ր ըղեղով, նո՜ր զենքերով

Ըսպառազեն։ Ժողովո՛ւրդն է հող կրծող.
Մինչև մեջքն իր՝ տիղմին մեջ
Ուրիշներուն դըղյակ շինող ամբոխն է՝
Որ ոտքի միակ մոլեգնադրույթ ոստումով
Նույն իր խորունկ գերեզմանին քարին վրա
Ահավասիկ կը կանգնի։
Եվ մարդկային օվկիանն այդ փըրփրագոռ
Կ'եռա խորքեն իր մըռայլ.
Եվ ալիքներն հառաջ կ'երթան մահադող.
Եվ կը թըքնեն իրենց փըրփուրը հորձքի
Պալատներուն մինչև քիվերն, ու մինչև
Ճակատն արփվույն անտարբեր։
Քըրջավո՛ր են, ահավո՛ր են, բայց այսօր
Հանճարներու, դարերու
Ամբողջ մտածումն, ամբողջ վաստակը խըմող
Գաղափարին արծիվի թևն ըսպիտակ
Եկավ դըպչիլ անոնց դեռ կույս ճակատին։
Եվ անոնք ուղխ ճամփաներե հավաքված՝
Այսօր ունին վըսեմությունն օվկիանի.
Եվ կը մռնչեն, կը հայհոյեն, կ'աղոթեն,
Կը հայհոյեն վերըստին։
Կը մըրմըռան բըռնության դեմ ծուփառծուփ.
— Վըրե՜ժ, վըրե՜ժ, Նեմեսի՜ս։—

Եվ Նեմեսիսն հո՜ն է, հո՜ն է մխիթարիչ
Քենն երկնային. ձյունափարփառ մարմինն իր
Լուսնակին պես ալիքներն այդ կը քաշե
Դեպ ի ծոցն իր մայրենի։
Եվ ժողովուրդն արձանին շուրջ կը դիզվի
Հետք հետքի վրա, խուռնիխիտ,
Եվ կըզակներ կրոթընցրված ուսերու։
Առջև վեհ Դիցուհվույն
Ամեն ոք իր վերքը կուրծքին կը բանա.
Պարմանիներ ցույց կուտան
Թևերն իրենց կոտրած՝ շըղթա կոտրելեն.
Մայրերն ահա վեր կ'առնեն սև-սև քողեր՝
Անոնց ծալքին մեջ բանալով գանգիկներ
Մանուկներու՝ այրուձիին տակ ճըղմված,

Եվ պառավներն անոր առջև կը փըռեն
Քըղամիդները կարմիր
Դըրժված, մորթված դյուցազնական թոռներու։
Եվ կը բերեն ամենն ալ
Իրենց վերջին հարըստությունը՝ նըվեր,
Եվ ծընրադիր՝ անիծախառն աղերսով
Արտասվագին միահամուռ կը գոչեն.
— Ո՜վ Նեմեսիս, Անվրիպելիդ, Վրիժուհի՜դ,
Մեր տառապանքն, անկումը մեր կը՞ տեսնես.
Մեր արցունքի մեկ շիթին
Օվկիանական անհունությունը արդյոք
Քու ափիդ մեջ կըշռեցի՞ր։
Բա՜վ է փառքերն ու հաճույքներն արբեցնենք
Մեր արյունին արյուններովն ու մինչև
Ոսկորներուս քըրտինքով.
Բա՜վ է սվինները պատռեն
Մեր արգանդին մեջ հավետ
Լուսաթաղանթն արշալույսի սաղմերուն.
Բա՜վ է անիվը գործատան փերթ առ փերթ
Խըլե մեր միսն և յուղոտե ճըղուղն իր.
Բա՜վ է, բա՜վ է մեր բովանդակ կյանքին մեջ
Խարազանված թիկունքներուս վրա կըրենք
Մեր շիրմաքարն ու երթանք ա՜յսպես շիրիմ։
Վըրեժի ժամն ա՜լ հասավ.
Նըշկահումի ամպրոպահունչ ժամն հասավ։
Ո՜ւժ տուր մեզի, ոգևորե՜ և մըղե՜.
Դո՜ւ մեզ Աստված, դո՜ւ Տիրամայր, դե՜հ իջիր
Պատվանդանեդ և ձուլե մեզ կամքիդ մեջ,
Եվ օրենքներըդ գըրե
Մեր ճակատին վըրա արյան գըրերով։
Քու ժողովուրդըդ մե՜նք ենք.
Պիտ՝ ըսպանենք մեր աստվածներն հին և նոր
Եվ աճյունին վրա անոնց՝
Ատտիկեի մեհյանեդ ալ հոյակապ
Պիտ՝ քու մեհյանըդ կանգնենք։
Պիտ՝ կործանենք ապարանքներ ու բանտեր՝
Եվ քառանկյուն սալքարերովն իրենց հաղթ
Պիտի բագի՜նըդ կանգնենք։
Ամեն տարի Մահատոնիդ Նեմեսյան
Ատելության ի՜նչ նըվագներ պիտ՝ հընչեն.

Պիտի զարթնուն ի՜նչ մոռցըված մեռելներ.
Եվ խըմելով արյունախա՜ռըն գինին,
Զոր սափորով իրենց շիրմին պիտ՝ դընենք,
Արևուն տակ, զոր կարոտցան, ձեռք ձեռքի
Պիտի պարեն շուրջն արձանիդ՝ հանձնելով
Իրենց պատանքը հովին։
Իշիր մե՜ր մեջ, և բընակե լոկ մե՜ր մեջ.
Օ՜հ, ո՜րքան դու չըքնաղ ես
Եվ ո՜րքան ալ սարսափելի. աչքերդ այդ
Արդարաբար կը սպանեն միշտ, և ձեռքերդ
Աճյուններու մեջ պատրաստ են սերմանել
Շուշան հունդեր շուշանափայլ կյանքերու.
Գանգի մը մեջ բույնն իր ղընող տատրակն ես.
Աղբյուր մ'ես դու ըՍտյուքսի՝
Որ կը բըխի գերեզմանե մը կանանչ։
Ահա քեզի կը կարկառենք մեր քաղցած
Երեխաները. թող որ քո՜ւ ծոցիդ մեջ
Մըկըրտըվին, և ծրծեն կուռ ծիծերեդ
Կաթը վաղվան վըրեժին։
Օ՜ն, Նեմեսիս, իշիր մե՜ր մեջ. մեզ ըրե
Վահա՜ն լանջքիդ մարմարե,
Սո՜ւրը թևիդ անխընա։
Չի մենք ծարավ ենք արյա՜ն,
Արյա՜ն, արյա՜ն, Նեմեսիս։

Կ'ըսեն.— Իրենց գոռուգոչումն ահավոր
Կը սասանե գահերուն վրա կայսրներ,
Եվ կ'օրորե պատվանդանին վրա նընջող
Քերթողին քունն հանդարտիկ։
Կ'ըսեն.— Եվ նվե՜ր Աստվածուհվույն կ'ընծայեն.
Անոր առջև արյունլըվա ձեռքերով
Կը սըփռեն վարդ ու հասմիկ։
Կույս աղջիկներ դալկադեմ
Ասեղներե ծակծակված գիրգ մատերով
Կ'հյուսեն անոր գըլխուն համար պըսակներ։
Գյուղացիներ կ'ողջակիզուն վերջին ուլն
Իրենց թափուր և ցըրտացած փարախին։
Տըղաք կընդրուկ կը ծըխեն.
Իսկ բանվորներն ու ռազմիկները պարման

Թուրերն իրենց, մուրճերն իրենց նվիրական
Կու գան անոր կըռվանին վրա հեսանել։
Եվ ժողովուրդը բովանդակ հանկարծ լուռ
Լուսընկային տակ հանդարտող ծովու պես
Կը խոնարհի աղոթքի...
(Օրհնյա՜լ ըլլաք, հառաչանքի մեջ խեղդված
Ո՜վ արցունքներ, մազերե վար կայլակվող
Ո՜վ արյունի կաթիլներ.
Ո՜վ աղոթքներ նախատոնին կռիվներու,
Մանավանդ դուք օրհնեա՜լ ըլլաք.
Ձեր մեջ է, որ Հույսերը մոտ հաղթության
Իբրև ճերմակ աղավնիներ՝ ամենուն
Ծոցեն արփվո՜ւն կը սլանան)։

Եթերական կրակին խորեն իրիկվան,
Դեմի սարեն զառ ի վայր
Ա՜յն որ կ'իջնե անչափելի քայլերով,
Հերո՜ս մըն է, պերճահասակ քըրմապետ
Նեմեսիսին կուսական,
Եվ անձնուրաց Նախախնամող մարդկության։
Արևը դեռ չըմեկնած
Ճաճանչներն իր ամփոփեր է շեշտուղիղ
Անոր կուրծքին կարմրաբորբ,
Ցայտեցնելով զենուզարդեն պաղպաջուն
Ճառագայթներ՝ նման բամբշի մը գըլխուն
Ծամակալ մեծ ասեղներն։
Արյուն մ'ահա կը կայլակի տակավին
Իր գոտիին արդարադատ կեռ սուրեն։
Կուգա՜,— ճակատն իր արդեն
Շաղակապված դափնիով։
Քայլերը ծանրը փառքեն,
Եվ բրոնությունը ճրզմելեն՝ տենդակոխ
Ահավասիկ կ'երկփեղկեն
Ժողովուրդն այն խոնարհած
Ատելության և աղոթքին բեռին տակ։
Նեմեսիսին ձոնելու
Ան իր նվերը ունի.—
Գըլխուն շուրջեն կ'արձրկե

Դափնեպսակը՝ զոր կույսերն որբացած
Շիրիմներուն նըստած տըրտում շուքին տակ
Իրեն համար հյուսեցին.
Կ'արձըկե զայն և ձախ ձեռքովը բըռնած
Բուրյան ճյուղին մեկ ծայրեն
Մյուսովը զայն կը մերկացնե, սըփռելով
Իր սաղարթներն օդապար
Աստվածուհվույն ոտքերուն վրա անարատ,
Որոնցմե հա՜տ մ'աղվոր տերև մ'արյունոտ,
Կ'երթա կ'իյնա արձանին տակ քընացող
Քանդակագործ բանաստեղծին ճակտին վրա,
Որ գրավված նո՜ր Տեսիլներով երազի
Այդ հրպանցումը փառքին
Ամենևի՜ն չ'իմանար։—

ԲԱԳԻՆԻՆ ՎՐԱ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈԳԻՆ

Ե՞րբ պիտի գաս. երբ մեր գետնին ույծքերեն,
Իբր հարությունն հողին խըմած շողերուն,
Պիտի պոռթկան շունչիդ բոցերն երկնապող.
Կամ մեր երկրին արյուն կաթող ո՞ր աստղեն՝
Դու պիտ'իջնես հրդեհել
Ջենքի տըրմուղ ժողովուրդդ՝
Որուն սըրտեն դարերն հավետ խըմեր են
Թորգոմական արյունն ու ո՛ղը պարպեր,
Որուն համար մեր պապերուն ոսկրոտին՝
Հովտե հովիտ սըփըրված՝
Բաժին են լոկ գայլերու։
Ո՞վ անդրանիկ Աստվածուհի, Իսկուհի՝
Հայ ջըրերուն, կըրակներուն և կավին,
Տե՛ս, քու երկիրդ՝ որ մեր սերմին մայր ըրիր՝

Այլազգներու խըժդրժանքին մատնըված,
Այսօր, ավա՜ղ, սուգ ու արյուն կը բըխե.
Իր կործանած քաղաքներուն վըրա լըռիկ
Կը նըստի կռո՜ւնկն ողորմուկ.
Հողն՝ հերկված միայն սողովն օձերուն՝
Իր աղտաղտուկ խավերուն մեջ կը պահե
Պաղլեղ, և իր սև տափերուն վրա՝ ոքոզ.
Կը մընան մեր այգեստանները՝ առանց
Շերտափակի, և կարասները՝ առանց
Հայրենական գինիին.
Եվ մեր խոյերն ըսպիտակ՝
Ջըգըտնելով խոտնոցներուն մեջ առվույտ՝
Նոթութենե մոլեգնած՝
Մըսուրներուն դեմ կը ջարդեն եղջյուրնին։
Իսկ որդիներդդ թըշվառ
Կամ հեռացած հարենական երկըրեն
Կը խառնակին ազգերու խորդ արյունով,
Կամ նույն երկրին ծոցին մեջ
Կը մեռնին լուծն ուսերնուն,
Ապրողներուն թողլով մաս
Մերկացումը ողջ հայութենեն, խորդացումն՝
Որով կ'ըլլան իրարու դեմ թըշնամի
Եվ թըշնամվույն դեմ՝ ծառա։
Ո՛չ մեր դաշտերն՝ եղած արյամբ ճախճախուտ,
Ո՛չ պարիսպներն ու տաճարներ քարուքանդ
Ջիրենք կըրնան զայրագնել,
Ո՛չ օտարին ծաղրանքն և ո՛չ անարգանք
Կ'արթընցընեն իրենց հոգվույն մեջ ընթարմ
Հըպարտությունն հայկական։
Կը ծառայեն և կ'ողբան
Եվ ողբալով ըստըրկությունն ավելի՜
Իրենց դեմքին կը հորինեն վայելուչ...
Եկո՜ւր, եկո՜ւր.— Ժամանակն ա՛յս է.— Եկո՜ւր...
Ահա ցեղդ մաս մ'ազնիվ՝
Գաղափարի, գուպարի մեջ հալումաշ՝
Ճամփուդ վըրա կը սըփռե
Իր արյունին հետ նոր վարդեր, կակաչներ...
Եկո՜ւր, եկո՜ւր,— Եվ Մասիսի կատարեն

Դյուցազներու, վրկաներու հոգիներ,
Իբր աստղերու սերմընցան,
Տեղա՛ բոլոր իգության մեջ մեր երկրին,
Մեր սրբտերուն խորունկ խորքերը հոսե
Արյունդ անբիծ, զոր շիթ առ շիթ ժողվեցիր
Վարդաններու ռազմահարդար հետքերեն,
Եվ որե մեր օրրաններն
Արշակներու վերածընող շիրիմներ.
Ամեն հայու լանջքին տակ
Իր մեկ հին պապն արթընցուր.
Եվ նվիրական, հավերժական զանգվածով
Ջանոնք խառնե և խրմորե և ձուլե
Եվ ըստինքովդ ապրեցուր։
Ա՛յնպես որ՝ քու մայրենի
Ճաճանչավուխտ թև թռիչներուդ տակ ամփոփ
Տաքնա՛ մեր հողն, և բլուրներուն վրա խայտան
Գարուններն հին, Նավասարդները՝ լեցուն
Մարտիկներու վահաններուն կոփյունով,
Մեր արծիվներն և ուրուրները՝ թողած
Ճախճախուտները նրվաստ՝
Կայծակներու թառերուն վրա կրոընչեն.
Էգ առյուծներն ու էգ վագրերը բոլոր՝
Մայրագորով լիզումով՝
Ըլլան կայտառ հայկակներու կաթընտու.
Մեր ամպրոպները (լեցուն
Ըստվերներովն երգիչներուն գողթական)
Սրբտին մեջ հայ քերթողին
Փոխվին երգի ու չափվին
Կայծակներու շեշտերով.
Բանվորն հեստի՛, հեստի՛ գեղջուկն ու՝ այգուն՝
Երբ իր քայլերն ուղղվին դաշտերն ավերված,
Արշալույսեն արյունի հոտը առնե
Եվ արյունի՛ ծարավի.
Շունչիդ զեփյուռն ու ճառագայթն աչքերուդ,
Նրման գարնան մեր տան շեմերը պրճնող,
Թող Համփորդեն հյուղե հյուղ,
Բնակարանե բնակարան.
Կանգնի՛ն այրերն ու մայրեր,

Ծերը կանգնի՛, կանգնի՛ տղան.
Ու ամեն ոք Ազգին սիրով լոկ արբշիռ,
Ազգին ոգվով հաղորդված
Ա՛յնպես վառի, ապրստամբի, բորբոքի,
Որ Թորգոմա Տունն ըզգա
Թե իր օջախը մարած՝
Այսօր հրաբուխ է դարձեր։

ՈՂՈՐՄՈՒԹՅՈՒՆ

Սովաման ժողովուրդին

«Սով է, հա՛ց, հա՛ց...»,—
Ո՞վ կը հեծե
Շեմին վրրա խրրճիթիս ո՞վ կը հեծե։
Սերբս մարած է օջախիս բոցին հետ.
Մեջս է մոխիր, շուրջբս մոխիր.— օ՛հ, ի՞նչ շահ
Մոխիրներու վրրա արցունք սերմանել։
Բան մը չունիմ, բա՛ն մը. այս օր իմ վերջին
Լումայով թույն գընեցի,
Ներսը թույնս իմ կը շաղվեմ։—
Վա՛ղը եկուր, գերեզմնոց, ո՛վ Անոթի,
Բուքին մեջե, կանուխ, երբոր գյուղին շուրջ
Գայլերը դեռ կը հաձին,
Վա՛ղը եկուր... պիտի ես
Շիրմիս մեջեն, իբրև հաց
Քերթողի սիրտս այդ մախաղիդ մեջ ձրգեմ.
Քերթողի սիրտս արյունդ, արյունն որբերուդ
Պիտի ըլլա ո՛րքան որ Վիշտդ ապրի...
Վաղը եկուր գերեզմնոց, ո՛վ Անոթի։

ՄԱՐԱԾ ՕՋԱԽԸ

Այս տունին մեջ, որուն շեմին վայրահակ
Այսօր կուլա ուռենին,
Եռաց զրվարթ կյանք մի Թորգոմ գեղջուկի։

Ատեն մ'եղան հոն թարմ հարսեր՝ որ լույսին
Հետ արթընցած, վարդենիի պես հագված՝
Աշխատեցան, կաթ կըրեցին սափորով,
Կամ դույլերով հորը ջուրի գընացին։
Ատեն մ'անոր դրռան առջև նըստեցավ
Մերուկն, և թո՛ռը ծունկերուն մեջ առած,
Պատմեց զըրույցն Արտավազդի, Վահագնի,
Անոր հոգվույն տեղալով
Վերջին ազնիվ մնացորդը խոնջ օրերուն.
Կամ՝ իրիկվան տեսավ անցնիլն առջևեն
Հարուստ հոտին՝ զոր իր որդին լեռնեն վար
Դեպի փարախ կը քըշեր.
Եվ ծեր ոունգները բացած
Ոչխարներուն բուրդին բարկ հոտը ծրծեց՝
Օրհնելով թիվն ու ընտիր ցեղը անոնց։
Ատե՞ն մ'էր ան...

Այսօր ոչ ոք այդ տունեն
Կ'ելլե կամ ոտքն անոր շեմին կը դընե։
Կոտրած դրռան արյան չորցած կաթիլներ,
Ներսեն ձայներ ագռավի,
Եվ հարատև մլավյունններ
Կը լեցընեն գեղջուկին սիրտը դողով,
Որ անցնելու վայրկենին այդ փողոցեն
Խաչ կը հանե կամ քայլերն իր կ'երագե։
Կոտորածի օրեն (երբ գյուղը բոլոր
Կյանքն հանձնելով նենգ գայլին քա՛ն թե մարդուն՝
Դիմեց դեպի ճերմակ լեռներն հայրենի)
Այս բնակարանն այս սև խորհուրդն է հագած,
Եվ մեռելի մ'անփակ աչքին հանգունակ
Ան արևուն և կյանքին
Եղած է միշտ բաց, նաև միշտ ալ զրկված։
Ըմբոստ բաղեղն և ուռենին հեզանազ
Կը ծածկեն մուտքն անոր զիրար գըրկելով։
Գավիթին մեջ կա բողբոջումը լըռիկ
Բաղըրջուկին և թավշանման մամուռին,
Որոնց մեջ մերթ կ'երևի
Կոցահարումն աներկյուղ

Վառյակներուն դրացի, մե՛րթ ալ հանկարծ
Փախուստն անոնց կարկաչելով դեպի դուրս։
Ի՞նչ կ'ապրի հոն, ի՞նչ գաղտնիք
Կը մեծնա այդ բնակարանին մեջ խոժոռ.
Արդյո՞ք անթաղ դիակներու ոգիներ
Հոն կը ժողվին լալու կամ դափ զարնելու,
Թե վըհուկներ ճերմակ և թավ հոնքերով
Օձ կը կըրթեն կամ կը հյուսեն պատանքներ։
Իրիկուն մ'էր— լավ կը հիշեմ— սիրտ ըրի
Այդ շեմեն ներս մըտնելու։
Գյուղացիները ետևես, գըլխաբաց,
Աղոթեցին հուսակտուր, ա՜յնքան Աստուած,
Անոնց հոգվույն մեջ և հոգվույն ի խընդիր,
Սատանային սև պատկերն իր պատկերեն
Մեծ և որոշ էր գըծած։—
Մըթընշաղ մ'այն գավիթին մեջ կը տիրեր,
Եվ պատերեն՝ ուր կը շրջեր ցողը մերթ՝
Բորբոսանքի և շիրմի հոտ մը կ'ելլար.
Կը լըսվեին գերաններուն ծերպերեն
Ճիչերը սև չըղջիկներուն սըրաթև.
Բոլոր դրռներն հոն բաց էին. չէր լըսվեր
Հավանոցեն, կամ գոմեն
Ո՛չ եզներու բարի գոչյունն և ո՛չ իսկ
Բեղուն կըռկռոց մը հավի.
Ամբողջ մարագը դատարկ էր, դատարկ էր
Մառանը բաց՝ ուր բուրեցին օր մը մուշկ
Սաթ ողկույզներն հայրենական այգիին։
Այնտեղ ամեն ինչ տըխուր,
Հեգ մնացորդ մ'էր կողոպուտի մը վայրագ։
Ո՛չ մեկ սյունի, ո՛չ մեկ անկյան մը ետև
Կը տեսնըվեր մարդկային ձև, կամ ապրող
Շողյուն մը զույգ բիբերու։
Կը լըսվեին ձայները լոկ հարատև
Թռնրատունեն՝ ուր սարսուռով մոտեցա,
Ու մտա ներս...— Ո՛վ խեղճ տուն,
Լավ էր դու բանտ կամ գերեզման ըլլայիր,
Այդ հողդ ոսկոր փըտեցըներ. սյուներուդ
Մեջ դագաղներ փորեին.

Լավ էր ըզքեզ հորինող մե՛ն մի կրաքար
Ծովափներուն փոշի-փոշի քայքայվեր,
Քան թե կանանչ երդկրիդ տակ ծածկեիր
Մարած օջախ, մեռած սիրտ հայ գեղջուկի՝
Որուն համար կանգնելը հաբկ չէ այլ ինչ,
Բայց թե դամբանն իր և իր հեգ սերունդին,
Ավա՜ղ, շինել իր ձեռքերով...—

Մտա հոն։
Մեջտեղը տան, ըստվերին տակ այն խոնավ
Ներշմարեցի մարդու դիակ մը պառկած.
Կրոնակի վրա, դեմքը ճերմակ կը հառեր
Լուսամուտին՝ ուրկե՝ երդին վրա բուսած
Ճյուղ մ'ոլոռի կարկառուն
Մինչև ճակտին կը հասներ.
Երիտասարդ կուրծքին վրա
Կար վերք մը խոր, և թերաքամ ափին մեջ
Դաշույն մը նույն իր արյունն ծանեգոտած.
Աչքերը բաց, միապաղաղ, կարծես դեռ
Կը նայեին փախած հոգվույն ետևեն.
Եվ թուխ մազերն իր խառնակ,
Արյունթաթախ, շրջասփյուռ,
Կը մնային պի՜նդ մածանված այն սև գետնին։

Ես հոն կանգուն կը խորհիր՝
Թե սյունն էր ինքը այս հարկին, քա՜ցն օջախին,
Որ հաղթվեցավ, որ բիրա ուժին տակ տեսավ
Ծալլըվումն իր գուճերուն.
Եվ մնաց ա՛յսպես ահավոր և միանակ՝
Ըսպասելով ընդունա՜յն
Իրեններուն արցունքին,
Որոնք իր սև բախտին եզան թախտակից.—
Մորթըվեցան այրերն, հարսերը բոլոր
Հանվեցան լեռն՝ հոն լալու
Ճերմակությունն իրենց մարմնույն լըլկըված.
Իսկ ծերուկ հոր հետին մոխիրն արդ գուցե
Թոնիրին մեջ կը սըրսփա դեռ ջերմաջերմ.
Իսկ իր մարմինն երկա՜ր ատեն անտերունջ,
Այսպես առանց շիրմի, առանց աղոթքի,

Կը մընա լուռ, և կեսն արդեն խաթարված.
Միայն կատուն ոիրասեր,
Տան գորշ կատուն, նիհար, նոթի, անդադար
Կը մըլավե շուրջն անոր,
Եվ լի գութով մը կը օպառնա, կը վանե
Ջորս դին երամ մ'ագռավներու աղմկոտ՝
Որ դիակին ախորժեն՝
Լուսամուտեն կը մըտնե ներս, ու հավետ
Ամայի տան ըստվերին մեջ կը դառնա։

Կը խոնարհիմ ես վայրկյան մ'հոն երկյուղած,
Հին վրեժ մ'այդ հին մեռելին վրա կ'երդնում.
Հետո առած զայն ուսիս,
Աղիողորմ մլավյուններովը կատվին,
Կը ճեպեմ դուրս։—

Դուրսը դեռ
Գյուղացիները գըլխիբաց կ'աղոթեն։

ՕՁԸ

Իսկ ապրող Հայերն ալ՝ այսպես ապրեցան

Լեռան կողին, նրման վերքի մը լայնշի
Հեղեղատն այն կը տեսնա՞ք.
Ջուրեն բացված, այսօր ջուրի ծարավուտ
Ան ճամփա մ' է կարմրորակ։
Տըղա կյանքիս, օգոստոսի մ'արևով,
Կ'ելլեի ես անկե վեր,
Դեպի լեռն այն, դեպի դաշտերն ընդարձակ՝
Ուրկե ինձի դյուրին էր

Քաղել աստղեր ու անոնցմով պըսակվիլ,
Շընչել ամե՜ն երկրի հով,

Ու հետևիլ արծիվներուն ընթացքին՝
Մատղաշ հոգիս պարզելով։

Ու կ'ելլեի ես այդ կարմիր ճամփայեն...
Հոն ո՛չ սյուք կար և ոչ խոտ.
Թիթեռնիկներն այնտեղ ինկած դիպվածով՝
Կը փախչեին հևհևկոտ։

Արևն էր լոկ, իմ ուղեկիցս արև՞ն էր՝
Որ մրխած գլուխն հրբարոց
Ավազին մեջ՝ կը խրմեր հողն, ու հազար
Պատիճներովն ոսկեզօծ՝

Կը ճաթեցներ ապառաժները՝ սնելով
Անոնց ծածկած տամկութեամբ։
Ու կ'ելլեի ես այդ կարմիր ճամփայեն
Շուքս ետ թողած,— միակ ամպ։—

Կեցա՛ հանկարծ, ու արևն հետքս կեցավ
Խարբսխբված գլխուս վրրա.—
Վերեն խրամատ ժայռե մը դուրս սրլացիկ՝
Վա՛ր կու գար օձ մը հրսկա։

Ալիք-ալիք օղակներով իր ճապուկ
Դահանակի և լալի,
Ու շրչելով՝ իբրև եղեգ մ'հողմակոծ՝
Ան կ'իջներ, ես կ'ելլայի։

Տեսանք զիրար,— կեցանք— զիրար չափեցինք...
Իր բոլոր զենքը անի
Բերանին մեջ հավաքեց, ես՝ աչքերուս,
Ես, դեռ անզեն պատանի։

Ոստում մ'ըրավ նայվածքներուս ուղղությամբ՝
Ձերթ շանթը դեպ լրսնոսկին՝
Որուն վախճանն հորն է մաքո՛ւր և նվաճո՛ղ...
Ոստում մ'ըրավ մոլեգին,

Եվ փաթթելով ինք զինք մատղաշ իրանիս
Իբրև բաղեղ՝ վարդենվույն,
Կուրծքը կուրծքիս դրրավ, ուղղեց շրթներուս
Կոր գլուխն իր լիաթույն։

Ես պարուրված ոլորտներուն մեջ իր ցուրտ
Մահվան դողով դողացի.
Մինչդեռ աչքերս իր աչքերուն խրմցուցին
Թովչանքն հոգվույս մրտացի.

Դրրին անոնց բոցերուն մեջ դեղնորակ
Իմաստությունը մարդուն,
Ըղեղին լույսն՝ որ քընացուց կամ սանձեց
Բընազդը նենգ կենդանվույն։

Խայթն ամփոփեց.— ու ես կյանքի, մահվան մեջ,
Կյանքի, մահվան արցունքով
Արտասվեցի։— Ան բերանն իր բացած լայն
Կրզակիս տակ, անվրրդով,

Խրմեց շիթ-շիթ կաթող արցունքն այտերես,
Քամեց բիբերրս բերրի,
Եվ մարեց մեջն օգոստոսի արևն հուր
Օձն այդ ծարավ արտոսրի։

Հետո շրչաց ու նոր օղակ մ'ընելով
Շուրջը վրզիս՝ զայն սեղմեց.
Մինչ պոչն իր՝ նո՛ր քաղցով ետևը ճոճուն՝
Կը ջախջախեր քար մը մեծ։

Քընթրոնոցներն ամփոփվելով իրար մեջ՝
Կոկորդս պինդ պրրկեցին,
Ու ես վայրկյան մ'ըզգացի մեջրս փակված
Ջորս ճամփաները կյանքին։

Եվ ունչերես ու աչքերես բրխեցավ
Արյունրս դուրս սորսորուն,
Եվ ըզգացին կարծես շրրթունքրս դողդոջ
Սրրտիս ամբողջ ջերմությունն։

Իսկ ան հեցած կըզակն ուղիղ կըզակիս
Խըմե՞ց արյունս անդեղյաւ։
Մեն մի կըլլված շիթ, որ կ'իջներ՝ կը պպայի։
Իր մարմնույն մեջ, մարմնույս վրաւ

Ինչպես շողերը արեւուն կը սուզին.
Հին ջրհորներուն մեջ ցամքած՝
Ա՛յսպես կարծես երակներս իմ քամվեցան
Որկորեն վար Բրիտամածը։

Կըշտացած էր.— վիդես, մեջրես, ծունկերես
Լուծեց օղերն համբարար,
Միշտ հիշատակն իր օձ-ձևին թեղկլով
Շուրջն իրանիս դալկահար։

Կըշտացած էր իմ արցունքով, արյունով...
Ա՛լ, զերդ ոճիր կենդանի,
Արփվույն ներհակ, միշտ այդ կարմիր ճամփայեն՝
Ան կ'իջներ, ես կ'ելլայի՞...

ՎԱՂՎԱՆ ԲՈՂԲՈՋՆԵՐ

Երբ արտին մեջ երգելով,
Խաղա՛ղ հոգի, կ'աշխատեր,
Ըսպանեցին։— Տարին եղներ ջուխտակ։—
Վրկա չըկար։ Պիտի վրեժն ո՞վ կըշռե.— Դո՛ւ,
Ո՛վ շանթ, անոնց եւեւն շուտ դու հասիր,
Որ լեռան վրա ամպամած
Խոժոռադեմ կը հսկես.
Անշուշտ տեսար ամպի մը մութ բացվածքեն՝
Թե ինչպես վարը, բրոնի,
Յաթաղանին տակ սըրբազան բահն ինկավ,
Եվ պոռթկաց խոնջ ճակատեն
Արյունը տաք, վարդերուն պես Հունիսի։
Գայլի՞ եղեռն։— Մրթընշաղին մեջ հիմակ

Ակոսներու վրրա լուռ
Բըզիկ-բըզիկ կը պառկի։
Գյուղացիի խորշումներուն մեջ աղվոր՝
Ուր արեգակն առողջ արյունն եռեփեց,
Քըրտինքը ա՛լ սառած է.
Աշխատանքի քրտինքը սուրբ և բեղուն
Որ մինչ այսօր, ինչպես արյունը, եղավ
Մրկըրտությունն Արարատյան մշակներուն։
Հերկե խոնջած բաղուկներն ա՛լ անգործ են.
Կուրծքը մրռալլ, թավամազ,
Դեպի աստղերը, արձակ,
Շեջ հրրաբուխ մ'է՝ որ կ'ուզե բոց երկընքեն
Դեպ Անհունին սև սառնության ժայթքելու.
Կողը տված է հողին
Զոր մըշակեց ամրան դեղին հասկերուն
Երազանքեն ժըպտելով։
Շարժմամբ աճած, աղվոր, զորեղ իր մարմնեն
Արյունը խուլ դըդըշյունով կը հոսի.
— Կարմի՞ր հեղեղ, սըրտի ծորեն վար իջած—
Տափանն ու թին նեիկելով
Կ'երթա գուղձերն ողողել.
Ակոսներուն մեջ զետեղել լիազոր
Կարողություն մ'արեգակի, անձրևի.
Թափանցել մութ ծոցն երկրին,
Իբրև ըլլար մարգարեի մրտածում,
Եվ հոն ճըռոցած հունդերուն մեջ ներշընչել
Ուռչում մ'ատոք և առույգ,
Դարձընելով կյանք մ'իր առջի օրոցքին,
Նոր ծաղկումի մը համար,
Եվ հոն հրծծել նախնիքներու փոշիին
Թե— մինչև ե՞րբ իր արյամբ
Հայ գյուղացին պիտի արտն իր ոռոգե։—
Կը լրռե շուրջն ամեն իր։
Լուսնին լայնող աչքերուն
Ամպերը թուխ թաշկինակներ կը դառնան.
Խավարն հոծ է, սև պատանք։
Հեռուն կնոջ մ'հոգին տարտամ կասկածով
Գիշերվան մեջ կը սպասե.

Ջուխտ որդիներն ինկած ծունկին գրգվանուշ
Հույսի մը մեջ վաղամահ, զերդ ծիածան,
Հեծկըլտանքնին կը խեղդեն։
...Ահե՜ղ հանգիստ. դիակին քով արյունոտ
Կյանք մը ծաղկի, աստղի առկայծ ճաճանչներ,
Զույգ մը բիբեր, զույգ մ'հոգեվարք կայծոռիկ,
Արտին մեջ շունչ մ'հովերու
Մեռնող սուրբի մ'հուսկ սաղմոսին պես տրխուր,
Խորշոմներուն և իր գեղջուկ լոդիկին
Ծալքերուն մեջ արևու
Ջերմություն մ'հուր, երգ մը հովեն սորվեցված,
Քըրտինքի շիթ մը սարսռուն,
Հողի բույրեր, կրծու բույրեր ծոթրինի,
Այլևս անդարձ, անվերեժ, լուռ կը մեռնի՜ն...

Ո՜չ.— հանուն հայ մռունչներուն,
Թափված արյունն անմեղին չի՜ մեռնիր.— Ո՜չ...
Վաղն հողը դուրս պիտ' պոռթկա
Արևուն տակ հասկեր առլի, կյանք մը նոր,
Նոր և հրսկա, հրսկայացած դիակով,
Բողբոջ մ'առույգ գեղեցիկ,
Վաղն այս բարի արյունեն վեր պիտ' ելլեն
Խառնըվելով ցորենին
Նոր Սերունդի կարմիր-կարմիր կակաչներ,
Որոնց արմատը կը դրպչի, պայթման մոտ,
Վարն հրաբուխի մ'ապագա...

ԿԱՐՈՏԻ ՆԱՄԱԿ

Կը գրրե մայրս.— «Ո՜վ իմ որդյակրս պանդուխտ,
Դեռ մինչև ե՞րբ պիտ' անծանոթ լուսնի տակ
Օրերդ անցնին, դեռ մինչև ե՞րբ հեգ գրլուխդ,
Ես չըսեղմեմ լանջքիս տաք։

Հերի՜ք օտար սանդուղներե ելլեն վեր
Ոտքերդ՝ որ օր մ'ափերուս մեջ տաքցուցի.
Հերի՜ք ալ սիրտդ՝ ուր իմ ծիծերս եմ պարպեր
Դատարկ սըրտես դուրս հյուծի։

Ջահրակին տակ թևերս աշխատ հոգներ են.
Կ'հյուսեմ պատանքս ա՛լ ծամերովս ըսպիտակ.
Ա՜խ, քեզ տեսնեն անգամ մ'աչքերս ու փակեն
Թող հոգիս ա՛լ իրենց տակ։

Դրռանս առջև կը նըստիմ միշտ տրխրալիր
Լուր կ'ուզեմ վրադ ամեն կռունկե՝ որ կ'սնցնի.
Այն ճյուղն ուռի՝ զոր քու ձեռքով տընկեցիր՝
Վերրաս կ'ընե հովանի։

Իրիկունները զո՜ւր դարձիդ կը սպասեմ.
Կու գան կ'անցնին գյուղին քաջերը համակ.
Մշակը կ'անցնի, կ'անցնի կովարծը վրսեմ.—
Կը մնամ լուսնին հետ մինա՜կ։

Ավերակ տան մեջ անտերունջ եմ թողված,
Մերթ շիրիմիս, միշտ օջախիս ծարավի.—
Կրիայի մը պես՝ որուն աղիքն իր կոտրած
Պատյանին դեռ կը կրցվի։

Եկո՜ւր, որդյա՛կ, հայրենի տունդ շենցուր.—
Դուռն են կոտրեր, մառաններն ո՜ղջ դատարկեր.
Կը մրտնեն ներս լուսամուտեն ջարդուփշուր
Գարնան ամբողջ ծիծառներ։

Այն բազմաթիվ հոտեն, գոմին մեջ, եղո՜ւկ,
Մընացեր է խոյ մը միայն քաջարի՝
Որուն մայրն օր մ'— հիշե՛ որդյակ— դեռ գառնուկ
Կերավ ափիդ մեջ գարի։

Թեփով բրընձի և առվույտով պատվական
Սընունդ կու տամ արդ անոր պերճ դըմակին.
Տոսախ սանտրով կը սանտրեմ բուրդն աղվական.—
Ան զոհ մըն է թանկագին։

Դարձիդ՝ պրճնած վարդերով գլուխն իր համակ՝
Պիտի մորթեմ կյանքիդ համար ծաղկատի.
Իր արյան մեջ պիտի լվամ, քա՛ղցր որդյակ,
Ոտքերդ հոգնած պանդուխտի»։

ԾԵՐ ԿՌՈՒՆԿԸ

Գետափին վրա, կրունկներու շարքին մեջ,
Ան իր գլուխը ծրռեց.
Դրրավ կրտուցը թևին տակ, ու ձեր, խոնջ,
Նվաղկոտ բիբով ըսպասեց
Իր վերջին սև վայրկյանին.
Երբ ընկերները ա՛լ մեկնիլ ուզեցին՝
Ան չկրցավ անոնց թռիչքին միանալ.
Հազիվ բացավ աչքն ու գիտեց օդին մեջ
Խրմբակին չուն՝ որ կ'երթար
Երդերեն վար կոկռալով
Հանձնված լուրեր, բարեներ,
Եվ արցունքներ պանդուխտի։

Ա՜հ, խեղճ թրուշուն. այդ դալկահար գլրկին մեջ
Աշնանային ցուրտ լրության՝ կը մեռնի։
Փո՞ւճ է այլևս երազել
Գարուն մ'հեռուն, գաղջ հոսանքները օդին
Ճախրող թևին տակ զորեղ,
Կամ սրունքներդվ ջլերբաց
Անցքը պաղուկ առվակներե, մեծ վրջին
Մրխրճումները շամբերուն մեջ կանանչ,—
Փո՞ւճ է այլևս երազել։

Թևերը հայ կռունկին
Ա՛լ հոգնած են ճամփորդելե։ Ան եղավ
Հավատարիմ սրրատճքմլիկ պաշտոնին,
Փոխադրեց շա՜տ արցունքներ.

Ո՞րչափ հարսեր իրենց սրրտերն հրրատապ
Իր քընքշական փետուրներուն մեջ դրրին,
Ո՞րչափ մայրեր և որդիներ բաժնրված
Անոր թևերը բեռցուցին համբույրով...

Արդ սարսուռով մ'օրհասի
Ան վրրայեն կը թոթվե
Մեծ վիշտն Ապգի մը նրժդեհ,
Ուխտեր հանձնված, լացեր գաղտ
Նրշանածի մ'որ տեսավ՝ ա՛լ իր հետին
Վարդի թոշնումը դեռ բրնավ չհամբուրված,
Տրրտում օրհնենք մը մամու,
Սերեր, իղձեր, կարոտներ
Ա՛լ վրրայեն կը թոթվե։
Եվ գետափին գորշապատ
Ամայության մեջ բանալով վերջին հեղ
Հոգնած թռիչներն ուղղաբերձ՝
Հայ բլուրներուն, գյուղերուն վրա կիսավեր,
Կրակրռոցովն օրհասի
Գաղթումը ան կ'անիծե՝։
Եվ կ'իյնա, լուռ— խիճերուն վրա կեսափին
Կ'որոշե իր գերեզմանն,
Ու մրխելով կրտուցն հիր
Քարի մը տակ, բրնակարան դոդոշի,
Քարշ ձրգած վիզն իր ճապուկ,
Ալիքներուն երգին մեջ
Դողով մը վեհ կը մեռնի՜...
Հոն օձ մ'որ լուռ, երկա՜ր ատեն, կը դիտեր
Այդ ճրգնաժամն ակընկառույց բիրերով՝
Գետեզրեն վեր կը սողա
Ու վրեժ մ'հին օրերու,
Վատ ոստումով մ'հապշտապ
Անոր մեռած պարանոցին կ'ոլորվի...

ՁԱՐԴԸ

(1895—1896)

Ա

Հրամա՞նը, օ՞ն։— Քարոզին մեջ Պիլալի
Կը ցրցե Ոխն ահա ցուլի եղջյուրներ.
Մըզկիթներու բակերուն մեջ ժիրաժիր,
Մահակներն ալ կը հրդկվին, կը հյուսվին
Խարազանները թունավոր օձերով։
Յաթաղաններն հատու են.
Եվ Ալիսի ու Ճորոխի, Եփրատի
Ափունքներուն վրա դահիճները կրկզած
Կը հեսանեն կայծքարերով կացիններն.
Հրամա՞նը, օ՞ն։— Ալ բավակա՞ն է մեծցավ
Արծիվներու համբույրով
Թորգոմ վիշապն օրոցքին մեջ Մասիսի,
Եվ բավական է՝ որ իր վեհ գոռումով՝
Սան-Ստեֆանի և Պերլինի հողին վրա՝
Թըմրած սըրտերն համակրության խըթանեց,
Եվ վերքերն իր կորյուններուն շըղթայված
Թըվեց թըվովն աստղերուն։
Արդ կը տեսնե՞ք ճիրաններն իր լուսաբուխ,
Որոնց խըրած տեղերն հերձ
Կը ճեղքըվին արշալույսներ, արևներ.
Նոճիներուն մեջ Վոսփորի կը լսե՞ք
Սև մրրկումները վիթխարի իր պոչին...
Հրամա՞նը, օ՞ն։—

Օր մը սև.

(Այն օրն աստղերը ամբողջ թույն կաթեցին.
Եվ բուրեցին ոսկրի հոտ
Վարդերն ամեն հովիտներու)— օր մը սև,
Ելտրզ-Քյոշկի անկյուններուն մեջ սընած՝
Սուլթանական գանգե դուրս,
Որչին բերանը լըրտեսող գայլի պես
Այդ սև հրամանը պոռթկա՞ց...

Բ

Լա՛ց, Հայաստա՞ն, ո՛վ թըշվառ կին, ու փետե՛
Վարսերըդ սև, այդ գըլխուդ վրա դըրժըված
Ցանե տաք-տաք մոխիրներ։
Լա՛ց, ու պատռե ծիծերդ ըզմեզ մեծցընող,
Երակներեդ թող հոսի թույն մ'ոխության
Ու Թեյմրզի, Հրոենոսի, Վոլգայի
Ակերն ամբողջ լեցընե ժահր, սևցընե,
Չի հոն լվացին քեզ դատող
Պիղատոսներն իրենց ձեռքերն ու հոգին,
Երբ հույսերուդ Արշալույսին տակ բոսոր,
Առանց խըղճի, ամոթի,
Քեզ նյութեցին խոր Լրությո՛ւնը մատնիչ։
Լա՛ց,— ավասի՛կ կը տեսնեմ,
Որ քու սա նեղ վայրկենիդ
Բարեկամներըդ քայլերնին կը դարձնեն.
Եվ ճակտիդ դեմ փակելով
Դեսպանական իրենց դրոները՝ կ'ընեն
Սեմերեն ներս, նույն քու մահվանըդ վրա
Ճառեր ծափով ընդունված,
Ծըրագիրներ համակիր,
Որոնք հետո տապանագիրըդ եղան։
Քեզ կը թողուն մինավոր,
Մինչ կ'ամպոտին հորիզոնները չորս դիդ,
Եվ լության մեջ ճամփաներուն կը լըսվին
Կրճրրտումներ ակռաներու թաքթաքուր.
Հազար բուեր ճամփա կ'ելլեն դեպ ի քու
Սարերըդ սև, և գուժկան,
Ոգի մ'իր թուխ թևերը շուրջ կը պարզե,
Եվ Տավրոսեն Մասիս, Մասիսեն Ջամլըճա,
Մեռելության մը մեջ խոր՝
Կոտորածի փողը տրխո՞ւր կը հընչե...

Գ

Փակե՛ որջերդ, Հայաստա՞ն,
Արևուն դեմ մի՛ բանար

Դրոները լայն փապարներուդ՝ որոնց մեջ
Ես կը տեսնեմ դեղին աչքեր գազանի։
Ծոցդ փակե՛, որ խորթ զավակ մեծցնելու
Եղավ սովոր և հուռթի.
Երկու զեղուն ծիծերդ, Եփրատն ու Տիգրիս,
Թող պահ մ'իրենց մեջ խեղդեն
Բարբարոս տոհմը շեյխերու, պեյերու։
Օ՜ն, երախներդդ խըցե՛.
Ի՜նչ, չե՞ս տեսներ՝ որ երդիներդ հարազատ,
Դեռ անպատրաստ է անգեն,
Լոկ մուրճերու, սրղոցի
Ձայնին կ'ըլլան ունկնդիր.
Տըրեխներուն վրա իրենց
Արյունի տեղ կալերու ցեխն է դեղին.
Ի՜նչ, չե՞ս լըսեր՝ որ սաղմոսի մեջ միայն
Գիտեն կանչել արշալույսներն հեռավոր.
Արորներուն վրա հոգնած
Իրենց կուրծքին մազերը դեռ կը բուրեն
Խո՛ւնկ փոխանակ վառոդի։
Օ՜ն, Մա՛յր իմ, Մա՛յր, սա վայրկենիս խեղդե՛, ո՛ն.
Մեջդդ ամեն խուժդուժ, ամե՛ն դահճապետ...
Բայց չե՞ս ուզեր դու ինչ լըսել, և կամ չե՞ս
Կըրնար վրայեդ ըզգետնել
Քաղաքներուդ ավերակներն՝ որոնց տակ
Զըմրոսաբույր մարմինդդ կես կը թաղվի.
Ու կը թողուս, որ ըլլա ժա՛նտ Մահը քեզ
Բազուկներուն մեջ Ղուրանի ճետերուն.
Կը թողուս լո՛ւռ, անկարեկի՜ր,
Եվ ես ահա կը նըշմարեմ՝ որ անոնք
Որջերեն դուրս ազատ ճամփուն վրա կ'ոստնուն։
Միսի գըրգռիչ ախորժակեն կանչըված
Կը հավաքվին ոհմակ-ոհմակ, ոռնաձայն.
Իրենց գըլխուն աստղերն ամբողջ կը դեղնին.
Եվ կակաչներն հազարավոր բլուրներու
Սարսափահար բաժակներնին կը փակեն։
Արյունի քաղցն ու հին փափաքն ավերման
Թևերն անոնց կը սոթոտ,

Թևերն անոնց կը զինե...
Կը հալածեն Հայորդիներն անպաշտպան,
Հայորդիներն՝ որոնք հազիվ վերցուցած
Իրենց գըլուխն աշխատանքի կարկահեն՝
Ըզեղնեբուն մեջ կը զգան
Սույլերը տաք գընդակին.
Կը բարձրացնեն ճիչը կյանքի ծարավուտ.
Եվ զոհական եղնեբու գերդ խումբ մ'օրհնյալ՝
Որոնց մինչև գոմը [illegible] է հրդեհն,
Ուղեկորույս, խոլադոչ,
Կըթատ ծունկով, բիրերով դուրս կըկոցված,
Կը փախչըտին շըփոթ, թատուն, հուսահատ,
Մ'ահվամբ լեցված նայվածքով,
Ծերեր, կիներ, տըղաներ,
Արձակ մազով, ձեռքերուն մեջ սանդալներն,
Փողոցներն փողոց, լեռնե լեռ, մոլոր.
Կյանքի՜ն, կյանքի՜ն, բաղցը կյանքի՜ն կը վազեն։

Ը.

Հոն, կը տեսնեմ քեզ, ո՜վ վայրագ դու Ոգի.
Անգեններուն, տըկարներուն եռանե.
Մրրրրկելով փլատակներու մեջ փոշին,
Ճերմակ ձիուդ վրա դեռ գեղ կը տեսնեմ...
Ապարոշիդ մեջ կանանչ,
Իբրև իժի ծրվարում,
Ալփասլանի հոգին ըզքեզ կը պսակե.
Պարեգոտդ այդ պատանքներուն պատանքն է
Եվ քու ձիուդ դորշ ըսթարին ծոպերեն,
Հավերժական ըրխումով,
Արյուն մը գաղջ կը կաթի...
Եվ դու խնայել չես ուզեր
Բոլոր անոնց՝ որոնք թախծոտ թևերով
Ճամփուդ վրա իրենց արևը կ'ուզեն։
Անձավներե անձավ միայն, վերևեդ,
Կը հընչե բառն ագռավներու կրոնչով։

«Հառա՜ջ, հառա՜ջ»։—

Եվ քու ճորտերդ ավազակ
Կը հետևին մահ սերմանող արշավիդ...
Կուրծքերե կուրծք լյարդաբորբ կը մըխան
Իրենց սուրերն արյան ակեր բանալով.
Կը թավալեն երիտասարդ գըլուխներ՝
Որոնց մազերը սև, մազերը խարտյաշ
Ցեխերու մեջ կը պլըշկին,
Եվ ծերերու կոկորդներեն պինդ բռնած՝
Գանգերն անոնց պատերուն դեմ կը ջարդեն.
Կը բանան մեր մայրերուն
Ծոցերը սուրբ՝ որոնցմե
Կը թափին դուրս եղբայրներ դեռ անանուն,
Հայեր առանց դեռ ձևի.
Կը տրրորեն, կը փըշրեն
Գարշապարի, բիբի, պայտի տակ կողեր,
Գանգե՜ր, գանգե՜ր, անթիվ գանգեր, լեցնելով
Սալհատակի ճեղքըվածքները բոլոր
Ողնածուծով, ըղեղով...
«Հառա՜ջ, հառա՜ջ»:—

Ո՜վ բարբարոս դու Ոգի,
Անցքիդ վրա, ձայներն ոսկրի փըշրումին
Մինչև երկնի խոր անձավներն հըրեղեն
Կը հընչըվին... Անցքիդ վրա կը խեղդե՜ն
Երեխաներն իրենց մոր սև ծամերով,
Ու մեր հարսերն հարաշխատ,
Վավաշ կըրթով մ'ընդգրճած,
Ջըրհորներու պարաններով կը սպաննեն.
Եվ կը զոհեն ո՜վ գիտե ի՜նչ չար դևի
Տաճարներու ցուրտ սյուներուն փաթթըված՝
Սուրբ կուսաններն հերարձակ.
Իսկ արտերուն, ա՜խ, արտերուն մեջ չքնաղ՝
Ուր հայուն կյանքն արև կ'ըմպե և արևն
Հոգիին մեջ կը մեռնի՝
Վաստակաբեկ դիակներով կը կանգնեն
Գողգոթանե՜ր, Գողգոթանե՜ր սըրբազան,
Եվ բոլորն ալ, լի գա՜նկ մ'իրենց ձեռքին մեջ՝
Միահամուռ կը խըմեն
Արյուն ծերի և մանկան,

Արյուն կընոջ, և արյունն
Արարատին վըրա խաչված Հիսուսին։
Ու կը կրկնեն դեռ ագռավներն հարատև.

—«Հառա՜ջ, հառա՜ջ»—

Ո՜վ բարբարոս դու Ոգի,
Այս Սասունն է, Տավրոսն է այս Պրոպոնտոսն,
Ամեն այն տեղն՝ ուր Հայն հունձքին մեջ կանգուն
Հակճիռքս միշտ գալուստիդ՝
Կը խընամե գուցե գարին վաղորդյան
Ջիուդ՝ որուն սըմբակին տակ կը դառնա
Կյանքն հող և հո՜ղը մոխիր։
Ա՜լ տըրորված՝ իր վազքին տակ կը կաթեն
Վարդերն արյուն, և ողկույզներն արտասուք.
Իր գոռ դափրերն անտարբեր
Ինկածներուն գանգերուն մեջ կը ճըխան.
Ա՜լ կը մաշին պայտերն ոսկրի փըշրումեն,
Եվ իր բաշին վրա կարմիր
Անգըղներն հիռ կը դառնան...
Այլևս ահա ամեն ինչ
Փըլատակ է, կողոպուտ է, դիակ է,
Որոնց վրա կը փաղփի
Հըրդեհն աչքեն արյուն ու բոց հոսելով.
Հըրդեհը (իսլամ ցեղերու հի՜ն վրիժակ)
Վարսերը շուրջ կը թոթվե
Եվ վիշապի մրռունչներով կը վազե
Կալերեն գյուղ և գյուղերեն քաղաքներ.
Երկար թևեր բոցերու
Տուն տուներու կը շըղթայեն, կյանք կյանքի,
Ու ամեն տեղ, մոխրին վրա
Մեր պըղծըված Պատիվը լոկ կը սպառնա.—
Բոցերուն մեջ զերդ շեկ Ոգի մը կանգուն
Կը մըռընչե, և մրռունչով կը պոռթկա
Դեպ արևու համբույրին,
Վըրեժի սերմն անդրանիկ.
Մինչ ոտքերուն ներքևե
Խանձումն ու հոտը մարմնի

Մեր սեմերեն, օրոցքներեն դեպ ի վեր,
Դեպ ի երկինք կը ճենճերին՝ որոնց դեմ
Իրենց պինչերը բացած՝
Ելլան ամպին մեջ, Սուլթանը ցեխին
Հատատելով փոխն ի փոխ՝
Կը ժըպտին հաշտ իրարու,
Ու Եվրոպան դեմքն իր եռաև դարձուցած
Կոպերը թաց կը շըփե—
Մեր ծուխեն աչքն իր բազի
Պրսկըծելո՞ւն համար լոկ։—

Ե

Կեցի՛ր, կեցի՛ր, ո՞վ բարբարոս դու Ոգի,
Ելլեսպոնտի եզերքին վրա ա՛լ կեցի՛ր.
Սա սև ժայռին՝ ուր ծովն իր բանտը կուլա,
Թեղ ձիգ խըրված Մեռնողներուն հոընդյունեն՝
Գերմարդկային գուբի մ'ահեղ սարսուռով՝
Իր պինչերեն, իր բաշերեն, ագիեն
Բոլո՞ր, բոլո՞ր մեր արյունները թոթվե։
Կեցի՛ր ու հեղ մը հետքիդ վրա ընկըրկե՛.
Տե՛ս.— ավասիկ ամեն ինչ
Կը գալարվի, կը ճարճատի, կը մեռնի,
Ծուխ է, մոխիր և ավեր։
Արյան ծովու մ'ալիքներեն կը ծըփան
Մարդու ահեղ դիակներ,
Դիակ կույսի, դիակ աստղի և վարդի,
Դիակը մեր Ազգին և մեր Աստըծույն...
Տե՛ս.— Աճյունի, արյունի,
Կարմրածուփ լույծ անապատ մ'է քու առջև,
Որուն մեջե ծանրաբեռնված ավարով՝
Ըսպանիչները գազան
Կը հեռանան լիզելով
Արյունաքամ սուրերն՝ որ լերդ կը հոտին։

Զ

Կու գան ցիները հեռավոր լեռներե,
Եվ անգըղներն հոտառու

Կու գան իրենց ձագերուն կեր տանիլ մեզ,
Հայ դիակի մ'աչքին կըտուց մըխելու
Կ'հասնի Արծիվն այն հրսկա,
Նոթի Արծիվն այն, որ գուցե օր մ'ամպեն
Վեհաժողովը բիզմարքյան կը հրսկեր,
Շուներն ուրախ պոչերով
Բակերե դուրս դիակե դի կը հածին,
Եվ ծույլ լեզվով մը կը լիզեն արյուններն
Մերթ կասկածոտ կենալով
Կիսամեռի մ'աչքերուն
Հանկարծական բացումեն։
...Հետո կու գան Մայրերը ո՛ղջ մընացած
Ու ողջ հարսներն ու բոլոր
Մեր ողջ քույրերը խելահեղ կանչերով։
Նոճիներուն մեջեն խումբն հեգ կը վազե,
Արձակ կուրծքով ու բոբիկ
Դեպ մեռելներն հոշոտված՝
Որոնց արյան տարբեր հոտն
Ըստ սերերու տարբերության կը կանչե
Ջիրենք այն մեծ Ջայլին՝ որուն վրա դեռ
Ապագաներ պիտ՝ ջայլեն։
Ամենն իրենց մեռելներն հոն կը գտնեն,
Կ'իյնան իրենց մեռելին քով ծընրադիր
Եվ լաչակներն ու կըրկնոցներն ըսպիտակ
Ջարթնող սուրբի մ'պատանքին պես ետ նետած,
Մերկ ծոցերով, աղաղակով, ողբանքով
Ծունկերն իրենց կը ծեծեն,
Կը փեթրոտեն մազերնին,
Իրենց կուրծքեն կը ժայթքի բառ մը ոխով,
— Անե՛ծք... ու սև՛ շիրիմներուն մեջ խլամ,
Բոլոր ոսկրերն իրարու դեմ կը ջարդեն.
— Անե՛ծք... ու թո՛ւրք մայրերուն մութ ծոցին մեջ
Կաթը կ'ըլլա սընդիկ կամ խյուս եղիճի.
— Անե՛ծք... ու վե՛ր, Ելտրզ-Քյոշկի երդին վրա
Բու մը հրսկա կը դրեե բույնն իր հրսկա։

Լացե՛ք, լացե՛ք, ո՞վ հեգ Մայրեր, հեգ հարսեր՝
Աստղերե ա՛ստղ ձեր ողբանքը ձրգած՝

Այս օր մեր սև հողին վրա
Սա մորթված Արշալույսները լացե՞ք...
Թող ձեր բիբերն ինկածներուն վրա հաղար
Արտասվելեն իրենց լույսեն պատարկվին։
Վերջին լացն է.— հա՛պա, խածեք ըստինքնիդ.
Հուսահատորեն դագաղներուն վրա ծռած՝
Թողեք մեկտեղ կափարիչի տակ գամվին
Ծայրերը ձեր մազերուն,
Եվ խոշտանգված ձեր իգությունն իր հետին
Տրկարության մեջ փրշրի։
Օ՛ն, հառաչ մ'ալ, արցունք մրն ալ.— վերջի՞նն է.

Չի ավասիկ, ահավասիկ կը տեսնեմ
Արգանդներուն մեջ ձեր լայն՝
Նոր Սաղմեր նոր Որդիներու ըստեղծիչ։
Իրենց մրոայլ ձևին ներքև կը պահեն
Հրզոր ճեմքերն Առյուծներու ապագա.
Ձեր աչքերեն իրենց աչքերը փոքրիկ
Կը բացվին պիշ աստղերու հորդ շողերուն.
Եվ մերթ թաքչած խորհուրդին մեջ ադիքի
Կը թափառին, մեծնալով,
Ավերին մեջ իրենց վաղվան ժառանգին.
Իրենց շրթունքն, ո՛վ Մայրեր, ձեր շրթունքեն,
Կայծակներու ծարավով,
Դեպ ամպերու երակներուն կ'երկրննան,
Կ'երկրննան դե՛պ ի հայկական արյունին
Գերաստվածյան հաղորդության՝ որուն մեջ
Հայրենիքի Սերը վեհ
Կրոնքը կ'ըլլա հազարավոր կրոնքներու։—
Ու վա՜ղը, վա՜ղն, ո՛վ հեգ Մայրեր, լըսեցե՛ք,
Ձեր արգանդե՛ն մի առ մի
Պիտ ելլեն անոնք հրսկա և հերոս։
Մեծ պիտ' ըլլան. մըրրիկն իրենց մազերուն
Պիտի սարսե վերն աստղերուն մեջ Աստված.
Պիտի հագնին արծվի մաշկեղ թրռիչներ՝
Շանթերն իրենց վրրա կրելու միշտ պատրաստ՝
Գլուխնուն վրա Ազատության արաղչինն
Ուլունքի տեղ պիտի հյուսվի աստղերով։

Օ՛ն, լըսեցե՛ք, լըսեցե՛ք այս, ո՛վ Մայրեր,
Վաղն երբ անոնք թամբեն իրենց նրժույգներն
Ու անոնցմով, զերդ պողպատի ջրրդեղում,
Վրրեժին մեջ մրկրրավին.
Երբ թուրք արյան բարկ ծարավեն մոլեգնած՝
Լեռներուն վրա մրոընչեն,
Ո՛հ, այն ատեն, այս օրվան
Մեր Մեռելները բոլոր
Միահամուռ ոստումով
Պիտի կանգնին գերեզմանին մեջ իրենց,
Ու անհամբեր հեռո՜ւն, հեռո՜ւն ակնապիշ
Պիտի սպասեն վարդահեղեղ գալուստին
Արշալույսի մ'Արշալույսի մը՝ որուն
(Հավատացե՛ք ինձ, Մայրեր,)
Ես ոտնաձայնը կ'առնեմ...

ԿԻԼԻԿՅԱՆ ՄՈԽԻՐՆԵՐՈՒՆ

Օտարակա՜ն, բարձրանանք սա դիմացի լեռան վրա՝
Որուն քովեն կը հոսի եղեգներուն մեջ լալով
Սիհոնն՝ ուր վաղը կարմիր քըղամիդներ պիտ' լրվան
Մայրերը մեր ցավագին։— Օտարակա՜ն, ըշտապե,
Չի մերկ ոտքերըս կ'այրին մոխիրներուն վրրա տաք
Եվ ըսկըսավ քու երկար պարեգոտիդ քըղանցքն ալ
Ճապաղիքի մեջ թրրջիլ։— Օտարակա՜ն, ըշտապե՛...

Կիսայրյաց ցուպրս խոսքիս ուղղությամբ ցո՛ւյց կու տա քեզ
Ահա քաղաքն ու գյուղերն ու արոտներն ու ափերն՝
Ուրկե անցավ կրակի Ցեղն Ատտիղասի ձիուն վրա։
Ծուխերն են հոն և բոցե՞րն՝ որ տակավին բլուրեն վեր
Հովին շունչով ալեծուփ կը սողոսկին, կ'ամփոփվին,
Հետո նորեն լեզվի պես կատարն ի վեր կ'երկրննան։
Կը վառի հողն իսկ, նայե՛, բորբ հորիզոնը մեր շուրջ
Հրրափողփող պրսակ մ'է՝ որուն կենտրոնը կանգուն

Մենք կը դողանք սրգավոր ոգիներու պես օտար։
Կը լսե՞ս ձայնն հեռավոր եղեգներուն բրդընկած՝
Որոնց միջև կ'ածիանան հավերժհարսերն անտառին։
Նարընջենի ճյուղերու ի՞նչ խընկաբույր ճարճատյուն,
Ի՞նչ մոխրացող այգեստան, տատրակի ի՞նչ վուվուներ։
Բոցը կ'անցնի, ու քամին գալով անոր եռևեն
Խանձած սեզերը առած սարերեն վեր կը մրրրկե.—
Ո՞վ դողահար մերկություն խրլուրդներու խուղերուն՝
Որոնք նրման ոգնիի արտերուն մեջ կ'հայտնըվին,
Ո՞վ ավերակը բլրան վրա շինված հյուղերուն՝
Ուրկե կ'ելլեր հայ գեղջուկն առավոտյան աղոթքով
Արարչությունը հողին արթընցնելու բահին տակ։
Օտարակա՛ն, կը տեսնե՞ս ինչպես այսօր անակներն այդ
Փըլա՛ծ ու լո՛ւռ կը սպասեն սուգի առջի փիշերին՝
Որ լուսնին տակ արտասվեն ամյունն իրենց թանալով։
Տանիքն անոնց փըլլուցին ներսը վառվող հրաբին վրա.
Դրոներն հրու, զոր զնփյուռն իսկ իր շունչով կը բանար,
Ինկան ջախջախ խուժանին բիբերուն տակ արյունոտ։
Եվ արդ պատերը ժռռատ ծընոտի պես կը ցրցվին,
Որոնց մեջեն խույս կու տան հոգիներ բույլ-բույլ երկինք։
Արտերուն վրա մոխրակո՞ւյտ, իսկ դիակնե՞ր ճամփուն վրա,
Այն ճամփուն վրա ըսպիտակ՝ ուրկե ժիր ցեղն Արամյան
Արևմուտքի աստվածներն, հարաճուն միտրն Եվրոպին
Ջորիներուն բեռցուցած տարավ բաժնել Ասիոյ
Աղբյուրներուն քով զոհե՞ր, ակոսներուն մեջ զոհե՞ր.
Եվ հոն, դիմա՞ցն, ուր ահա տրեր մայր կը մընեն,
Սեպ ժայռին դեմ խաչեր են յոթը այրեր մերկանդամ.
Արյունն իրենց մազերեն (Օտարակա՛ն, կ'աղաչեմ,
Փակե՛ աչքերդ ու միայն եղիր ձայնիս ունկընդիր),
Արյունն իրենց ձեռքերեն և ոտքերեն բևեռված
Հողին վրա կը վազե վիմուտներն այն ներկելով.
Կարծես մեկնող արեգակն հուշիկ-հուշիկ կ'ընկղմի
Մեծ աչքերուն մեջ իրենց՝ սարսափեն բաց մընացած։
Դահճապետներն հեռացեր են խավարին մեջ արդեն։
Խաղաղությո՛ւն, օվասննա՝ բարձունքներուն վրա կարմիր...

Օ՜հ, ծընոտներս ի՞նչ սարսուռ կը կափկափե.— Դարձիր ա՛ջ,
Եվ տես քաղաքն՝ որ ներստած դաշտերուն սա սուգին մեջ՝

Դեռ իր սրրտեն կը մրխա մարդազոհի հնոցի նման։
Ազատության արշալույսն անոր ճակատը կրճյա
Հազիվ էր դեռ բոսորած՝ երբ որ իր հաղթ հիմերուն
Ներքև վիշապն Համիդյան սասանեց տուտն ու թիկունք.
Բարբարոսներն այն ատեն արևուն դեմ թրքնելով՝
Մահվան սերմերը բրռած մեծախընծիր արթնցան.
Եվ քաղաքին մեկ կեսն ալ կործանեց կեսը մյուս։
Յաթաղանին, բրրոցին, եղեռնպվոր բոցին տակ,
Ինչ որ հանճարն էր կանգներ՝ զայն մոխրակույտը կըլլեց։
Արդ տաճարները ո՞ւր են՝ որոնց բուրյան գըմբեթին
Ներքև ծիծառն հազիվ հազ գարնան աղոթքն էր ըրեր.
Ո՞ւր վարժոցներն ու պալատն ապագայի լույսերուն.—
Մանուկներու ողջակեզ սրրտեր հոն խունկ կը մրխան։
Ո՞ւր բաղնիքները հրսատակ, ջինջ մարմարներն, որոնց մեջ
Յոլացին կույս աղջիկներն իրենց լոգցած ժամերուն.
Ո՞ւր շիրիմներն հոյակապ, ո՞ւր կոթողներն հինավուրց,
Որոնց վրա Հեթումներն հաղթանակներ գրրեցին...
Մա՜հ և մոխի՜ր.— Թրխայրյաց պատեր միայն ավասիկ
Իրիկվան մեջ կը ցրցվին բվիճակներ կանչելով։
Օտարակա՛ն, հիմակ այս երկրին անցյալն արթընցուր
Հուշերուդ մեջ, և ուրիշ ցեղի մը դարն ափսոսա,
Խորհե թե օր մ'ըստորոտը Տավրոսի բնակեցավ
Ժիր ժողովուրդ մ'որ կյանքին աստվածացումը երգեց։
Իր կարավանը անցավ, և տարավ միշտ հեղեղել
Բարի ցորյանն ամեն հյուղ՝ ուր ճրրագ մ'հեգ կը պլպլար.
Իր կարավանը անցավ, և Տարսոնի գոհարներն
Աստղերու պես թափեցան բամբիշներուն գոգին մեջ.
Եվ այն ճամփան լեռընդմեջ՝ ուրկե Գանգես արշավեց
Երիտասարդ Մակեդոնն իր շավղին վրա կանգնելով
Բագիններ՝ ուր պաշտվեցավ գեղեցիկ Միտքը Հելլեն
Աթենասի արձանին լուսակառույց ձեռին տակ,
Այդ ջինջ ճամփան Ռուբինյան զավակներուն շինարար
Տեսավ սայլերը ճռընչող Արևելքեն Արևմուտք,
Որոնց վրա բեռցուցած էր Հայ Վաստակն անընվաճ՝
Մարմարն հուռթի լեռներուն, այգիներուն հորդ գինին,—
Ո՞վ նախանունդը երգող և քանդակող ազգերուն։
Անցա՜վ հիմա բոլոր այդ գեղեցկությունը կյանքին.
Կրրակի ցեղը, ավա՜ղ, ժամանակեն ավելի՜

Եղավ քանդող, ժանտախտեն ևս ավելի՛ կոտորիչ,
Ան կը սիրե տերվիշի պես միշտ նըստիլ գոհունակ
Քարի մը վրա փլատակի և կըրծել ոսկրն իր շոպած։

Լըսե՛, քաղքին պատվարին մեջե ձայներ մեզ կու գան.—
Դահիճ Ցեղն ա՛լ կը տոնե իր հաղթանակն արյունոռուշտ,
Կիներ, տղաներ մորթելու հաղթանակն իր վատոգի։
Հեգ ոստանին, որուն վրա լուսինն ահա կ'արտասվե,
Մեկ մասն է այդ գերեզման, հանդիսավայր մասը մյուս.
Տաճիկն ահա բըռընկցուց իր խարույկներն հըրճվանքի,
Հեծեծագին կըմախներ հանդիսաբար կը վառին.
Շուրջը սոթտըված թևերով խուժանն ուրախ պար կու գա.
Արյունազարդ Ոճրուհին հինայագեղ մատներով
Կը զարնե դափ, և Իսլամն, օտարակա՛ն, առջի հեղ
Այսօր գինի կը խըմե մոխիրներուն ի պատիվ։
Կիսայրյացները անդին խավարին մեջ կը հեծե՛ն.
Բայց վիրավոր մ'ավասիկ կը կոթողվի մութին մեջ,
Հետո ծունկի վրա ընդքարշ կը մոտենա խուժանին
Եվ հեգնորեն, քըրքջալիր արյունտողիք կը թըքնե
Խարույկին մեջ տոնական։—

Կ'անցնին հովերն ողբագին
Դիակներուն վըրայեն, և վըրայեն փլատակին,
Եվ արյունի սերմերով, մոծիրներով հըրդեհի
Կ'երթան հեռու աշխարհներ գարուն մ'ուրախ ծաղկեցնել։
Օտարակա՛ն, հովերն այդ ահա ծովուն վրա լուսեղ
Առագաստները նավուդ գոգացուցին փըքուռույց.
Ա՛լ մեկնե սա դառն Երկրեն դեպի խաղաղ ափունքներդ,
Չի տատրակները մեռա՛ն, և դեղձենին խամրեցա՛վ։
Երբ նավդ անհուն սարսափով պատռե ջուրերն ու փախչի՝
Հետապընդված միշտ կայտռուն դըլփիններեն՝ որոնք մեր
Ծովախորշերն արգավանդ եկան փընտրել դիակներ,
Երբ թիկնոցիդ մեջ ծածկած դեռ նայվածքներդ ահաբեկ
Գիրկը հասնիս ոսկի եղբայրներուդ,— չըմոռնա՛ս
Անոնց ըսել թե ինչպես Կիլիկիան մորթեցին
Ազատության դափերուն նըվագին մեջ դավաճան.
Գիտեմ թե այդ եղբայրներըդ մեծագոգ նավերով
Գալ պիտ' ուզեն... օգնությա՞ն... ո՛հ, ո՛չ... մահվան
մնացորդին.

Պիտ' ուզեն գալ լոկ մեր կույս, ատոք լեռները պեղել,
Եվ մեր ծոցվոր հանքերեն կըթել մետաղն հրաշափառ,
Կըթել մետա՛ղն ու իրենց եսին կուռքերը կերտել...
Օտարակա՛ն, ա՛լ մեկնե։— Կ'իջնեմ ես ալ ավասիկ
Այս բարձունքեն, ու փաթթված տառատոկիս մեջ տըրտում՝
Նորեն կ'երթամ թափառիլ քաղաքին մեջ զոհերուն։
Մեռելներն հարկ է թաղեմ, և ողջակեզն օծանեմ։
Վիրավորի մը գըլուխ որձաքարին կը հեծե՛...
Աղբյուրին քով քույր մը, ո՛հ, կ'ոգևարի անտերունջ...
Պետք է փորեմ այս գիշեր գերեզմաններ անհամար,
Եվ լուսեղեն պատանքներ հենում մինչև առավոտ.
Պետք է կերտեմ շիրիմներ, հուշարձանները կանգնեմ
Եվ մարմարին վրա երգերս տապանագիր քանդակեմ։

ԿՐԿԵՍԻՆ ՄԵՋ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅՈՒՆ

Ա՛յսպես երգեց Վերածնուհին՝ երբ բացավ
Թևերն ուղիղ դեպ երկինք,
Երբ մատներն իր մըխըրճեցան մեղմորեն
Կապույտին մեջ լուսածոր.
— Կ'ելլե՛մ, կ'ելլեմ.— նախճիրներու ծընունդ եմ,
Կըրակին չափ գերահզոր, գերբնական
Ինչպես մարդուն գիտակցությունն.— ու կ'ելլե՛մ։—
Վայրկյան մ'ալ դեռ և ահա
Վարդի թերթե ծընած ոգվո մ'հանգունակ
Ա՛լ կ'ազատեմ ոտքերս արյան քողերեն։
Չիս հըղացող արգանդեն
Եվ այն ծոցեն, որ խուճապներս օրորեց
Մեծցած կուսան՝ կը հառնեմ
Վե՛ր, դեպ ի վե՛ր, լըվալու,
Գլուխս աստղերու ալիքներուն մեջ հրաբորբ։
Ոտքերս ա՛լ վար կը թոթվեմ մըզանքներս

Եվ խանձարոտաս և պուտերներս և մրթարս
Ու ամպերեն վրը դիտեմ
Չիս իբր աղեր պատող փողերն հրացանին,
Ո՞վն արյունի դիտինկով խարակված՝
Որ բուստապակ մարմար ճակատս ողորկեց
Եվ ծծանեց մայրորեն
Մազերս ի մրրիկներու համբույրով.
Կը դիտեմ մեծ հոգիներն հայ Հանճարին,
Որոնք իրենց դանգին թատով ղրեցին
Զամբեցին իմ շրթունքներուս մանկական.
Կը դիտեմ գուսպայթած ուսմբերն հրակոկոն,
Այդ կրճեպնկերն իմ սրտոխ,
Որոնց բոցերն արյունս հուռթի կ'ընեին.
Կը դիտեմ վարն նաև մեռած եղբայրներ՝
Նույն արգանդին մեջ սընած,
Որոնց, ինծի հավասար,
Մեր Մայրը կյանք չտրվավ,
Չը կամեցավ իր-փրոը լայն և աստղերն՝
Իրմե զանոնք մոլեբար դուրս վիժելով.—
Գուցե մեր Մայրն այդ լավ գիտնար՝ թե անոնց
Սև սաղմին մեջ կը լայծնան
Եղբայրակուլ անդունդներ,
Եվ թաքված իրարիքներուն փորքին մեջ
Վաղվան համար նենգաբար
Կը դարանին ազգակուլին մատրցի.
Մե՞ծ պիտ' ըլլամ, հավերժական պիտ' ըլլամ,—
Զիս տաքցընող, ո՞վ Սպեր,
Ձեզ տաքցընող ճամանկի նույն թափը չէ՞.
Մոխիրն հրավառ ապագրուս
— Արևու շեջ մընացորդ—
Օր մը կրվանդ մեթն տրավ ահավոր,
Կամ միթե՞ ան՝ մառյանների մեջ այսոր
Դեռ չի՞ սրրսրփար, չի՞ հուսար։
Մե՞ծ պիտ' ըլլամ, հավերժական պիտ' ըլլամ,—
Զարկիս ներքև կը բարաթեն զարկն հուժկու
Մըշեցի, Վանցի.
Մարմարեղեն գաղուկներուս թափն ընդոստ,
Փայլանն աչքիս, կուրս հոգվոյս մռունչն անվեհեր,

Կ'ըսեն թե ներսը կ'ապրի
Սիրտ մը մատակ առյուծի,
Սիրտ լի պղընձե սիրով, վիժեցիվ քինատենչ,
Որ կը խոտե վարդերն հարսի վանվաշոտ,
Եվ հանգըստի անկողնույն մեջ կը տեսնա
Մեկոնարարությունքներով ծնվելիությունն
Որ կը խեղդե համբուրելով։ Կը ճանչնամ,
Կը ճանչնա սիրտն այդ՝ թե հրդեհով ինք միշտ,
Ինչպես Ապրիլն՝ հրդեհ ատոք գարունով;
Ինչպես մրրրիկն՝ ազատությամբ հեղաթեն։
Գիտե, որ մեջն հանճարե լուսաբեր ծորած։
Բոց է, և է բոց ապագան։— ան գիտե՞
Որ հավատքով գաղափարին խաբբսմնված՝
Պիտի բանա կայծակավոր դուռը Դիպտին։

ԿՈՎԻ ԵՐԹ

Երթա՞նք, երթա՞նք, Հայուհի՛;
Դու, ո՞վ արծվիկ, հեղեղատին բոմբյունով
Լեռան կողին օրորվված և մեծցած,
Երթանք արդար բախումին։
Անդի՞ն, անդի՞ն կը մորթեն
Կյանքն արտին մեջ; և գաղափարը՝ գանգին.
Դեռ արևուն շողը սերմին չըհասած՝
Անդի՞ն, անդի՞ն կը մորթեն։
Ո՞վ սեաչվի, ավելի բորբ սիրով քեզ
Պիտի սիրեմ; եթե մեկտեղ տրրոփեն
Քու զամբիկդ, իմ խարրստին։
Կրկոցը թո՞ղ, որուն շաչող ոլորտներ
Ներշընչեցին քեզ երգն հանդարտ սրրտերու.
Ալ թո՞ղ երդիքն՝ որուն վրա
Կ'ուռճանայիր գարնան արձակ հովերեն,
Մերթ ըլլալով սրրտաթիռնդ
Վառյակի մ'հեգ ճրվոցեն՝
Զոր ցինն արտին մեջ կըտցահար կը խեղդեր։

Հիշե՛ այն լեռն՝ ուր քեզ առջի հեղ տեսա
Նախ վարդի թուփ կարծելով,
Մենք գիշերվան մեջ անկե վար պիտ՝ իջնենք
Նրժույգ հեծած, զուգահետ,
Խավարակուռ դաշտին մեջ
Դաշույնիդ ցուրտ փայլին հետ, ո՛վ մարտկուհիս,
Շանթերն աչքիդ ցայտած վրեժի երկրնքեդ՝
Ռազմի ճամփան պիտ՝ ցույց տան։
Մազերդ արձակ պիտի նետես ուսերուդ՝
Թողլով որ գոռ մրրրիկն անոնց մեջ երգե
Բարբարոս երգը բնության։
Եվ երբ ասա՛նկ ընթանանք,
Երբ նրժույգիդ ամեն մեկ խրոխտ ոստումին
Մրկանունքներդդ ցունցերեն զորեղնան,
Երբ այն ծաղիկն՝ որ լանջքիդ վրա պիտ՝ բուրեր՝
Սրմբակի տակ ճըմըլվի,
Ես այն ատեն գրգվանքի տեղ փափկասուն
Պիտի դիմեմ փոթորկատիպ, կորովի,
Եվ մեղրածոր համբույրի՞դ։
Ի՞նչ, երբ տեսար գրասեղանիս միշտ առջև
Այս իմ մրռայլ հոգիս, ո՛վ կույս, կարծեցիր
Թե պիտի հե՞ղգ մընա միշտ.
Ի՞նչ, կարծեցիր թե չե՞մ կրրնար ես ընել
Գրիչըս դաշույն, և կաղամարըս՝ կարմիր
Սիրտը գազան ոսոխին։
Ես շատ, շա՛տ լավ կրրնամ Երազը փոխել,
Մերկացնելով իր զեփյուռե ըզգեստեն՝
Աստղեր ցընցող մրրրիկն անոր հագցընել։—
Երբ որ անդին միշտ կու լան
Չի կը մեռնին, ու կը մեռնին, զի կու լան՝
Ինձմե հեռո՛ւ թուղթ և գիրք.
Դանտեն բոցին ես կը նետեմ,
Գերեզմանոց կը նետեմ ես
Դուրյանն՝ որ ա՛յնքան ժամանակ սիրեցի։

Ազգո՛ր աղջիկ, ուրիշներու արցունքին
Գիտե՞ս թե ո՛րչափ աշխարհս է անտարբեր.
Մենք իր քունով չընիրհենք.—

Իր վերմակին տակ՝ տրոփոտ՝
Աստղիկն անուշ կը բոզանա, ու լըլկված
Թեմիսը հոն նոր Բագոսներ կը ծընի։

Բըզիկ-բըզիկ, արյունլվա,
Հոն վարը մեզ կը սպասեն.
Ես կապարճիս մեջ դընելու չըմոռցա
Հրաշեկ շանթերը Արեսի երկրնքին.
Հիմա սիրո նայվածքե մ'իսկ ուժեղ եմ,
Եվ անհողդողդ՝ ճակատագրեն ավելի՝
Քանի որ կույսն է ընկերս,
Ու սերն հրաթև ռահվիրաս։
Դու, ո՛վ վարդ կույս, հոն լափող բոց պիտ՝ ըլլաս.
Դու, ո՛վ տատրակ, կարշնեղ արծիվ պիտ՝ ըլլաս.
Քանի որ այրն է ընկերդ,
Ու գաղափարն ռահվիրադ։
Ես թերևս հոն պիտի մեռնիմ— իցի՞վ թե—
Երկա՞ր ատեն բաղձացի
Արյունն ինծի վերմակ ընել, բարձ ընել
Կողը ձիուս՝ ինկած վերքի խըրխինջով։
Մեռցընելե վերջ մեռնիլ
Երկա՞ր ատեն բաղձացի։

Լուսնին վրկա նայվածքին տակ քանի մ'հեղ
Լեցընելե վերջ ոսոխին արյունով
Մեծ սաղավարտը Հայկին՝
Հոգ չէ թե ա՛յսպես իյնամ.
Երբ օր մ'հոգիս լայնախոց
Հայրենական հողին մեջե արթընցած
Պիտի տեսնե որբն հաց և հացն՝ ապահով,
Մըշակն անվախ արտին մեջ, արտն՝ անավեր,
Կյանքը ազատ, ազատությունն՝ հառաջադեմ,
Հոգ չէ թէ ա՛յսպես իյնամ.—
Գիտեմ որ իմ շիրմիս քով
Պիտի երբեք օձ չըսողա, պիտի միշտ
Կապույտ մընա անմոռուկդ, ո՛վ Հայուհիս,
Եվ հաղթական առյուծ մ'հոն թաթը դըրած
Բորենիի մը կուրծքին

Աստղերն ի վեր, լիաթոք,
Պիտի հավետ մըրընչե՞...

ՀԱՅԿԱԿՆԵՐՈՒՆ ՕՐՈՐԱՆԸ

Շինված է ան նոճիով՝
Եվ արյունով ներկըված,
Կ'երգեն բուերն իրեն քով,
Կ'օրրե մըրրիկը կատաղած։

Կամարեն վար կը կախվին
Կապույտ կապույտ ուլունքներ.—
Արցունքներն են երկընքին՝
Ինկեր ցուրտեն հոն սառեր։

Խոնավության մեջ, մութին,
Որով խըրճիթն է լեցուն,
Լուռ կը ճոճի օրոցքն հին,
Հին վրեժին պես իմ հոգվույն։

Անդունդ մ'է ան՝ ուր հայն իր
Վիշապներն հեստ կը ծընի,
Ուր համբույրներն, վարդերն հիր
Կը բուրեն հոտն արյունի։

Ոչ մեկ գիրգ ծոց ծնողական
Հոն կը բանա իր երկինք.
Խավարներն հոն մայր կ'ըլլան,
Եվ կայծակներն ալ՝ ըստինք։

Ու ճիչերու մեջ, լացի
Տըժգույն արդան կը մեծնա,
Բարեկամի, դիպվածի
Ձեռքերուն մեջ կը մեծնա։

Եվ գուցե վաղն ան ըլլա
Ռազմիկ մ'հրաշյա, շանթող ամպ.
— Մեզ մսուրն Հիսուս մը կուտա,
Իսկ հայ օրոցքն՝ Ապըստամբ...

ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐ

Լեռնե՞ր, լեռնե՞ր հայրենի, անմահական դըշխոներ՝
Որոնց արփին կը դնե թագ և մըշուշն ալ պատմուճան.
Լեռներ, սառե ծոցերով, գըլուխներով ձյունահեր՝
Զոր կ'օծանե լուսընկան։

Ձեր ճակատները կույս են լոկ Աստուծմե համբուրված,
Թըխակարկառ ուսերնիդ կը լվա կապույտն երկընքին.
Վիհերու մեջ, ուր լիճեր կը քընանան մենակյաց,
Աստղերը սոսկ կը ծաղկին։

Քարայրներեն՝ որոնց մեջ հովը գայլի պես կ'ոռնա՝
Գետեր բըխած գարնան դեմ կը գահվիժին փըրփրահեր,
Եվ կ'երթան ձեր ոտքերուն սըփռել գորգեր միշտ ծաղկյա՝
Ուր կը նըստին հովիվներ։

Կը սողա շանթն օձի պես ձեր գըլխուն շուրջ կրանիտե,
Որմե բոընկած կը մըխան եղևնիներ օրերով.
Արծիվն այդտեղ աստղերեն միայն իր կուտը կ'ուտե,
Կը խըմե ջուրն ամպեն զով։

Օրհնյա՜լ ըլլաք, ո՜վ լեռներ, օրորոցներ ադամանդ,
Ուր մեր պապերն առջի հեղ իրենց աչքերը բացին,
Եվ վագրի մորթ մ'ուսերնուն՝ իջան դաշտերն արգավանդ,
Կըրթեցին եզը՝ լուծին։

Փայլակնաբիբ ամպրոպին մեջեն— երկնի գոռ գազան—
Մեր արքաներն որսալու ելան փախչող սատրապներ.
Իրենց ձիուն խըրխինջեն՝ անդունդներուն մեջ սուզան
Ժայռին մրափող վիշապներ։

Օրհնյա՜լ ըլլաք դո՜ւք՝ որ տվիք գրրկե՛րը ձեր շաղածին
Անակորդվույն, Տրրդատին պատրսպարան և անդույր,
Որոնք քաշված այրերու մեջ՝ լուսնին տակ կարդացին
Ժամագրրքեր խրնկաբույր։

Դո՜ւք՝ որ տեսաք փապարի մեջ կույսերու ոսկրրներ՝
Զոր հետո լույս մ'երկնային փոխակերպեց շուշանի,
Դո՜ւք՝ որոնց մեջ ճրգնազգեստ քուրձերով են վախճաներ
Արքաներ նման տիտանի։—

Արծաթն, ոսկի՛ն կ'եռան ձեր արգանդներուն մեջ հրագանձ,
Որոնցմով հայ տիկիններն իրենց զարդեր շինեցին,
Հայրապետներն ըսկիհներ, և ասպետներն հերապանծ
Նետերն իրենց մահածին։

Ձեր մայրենի ծոցին մեջ կաթը մարմարն է առատ՝
Զոր կրթեցին մեր հայրերն օր մը ձեռքով ժրրաջան,
Ու կերտեցին աստվածներն ու բագիններն անարատ՝
Ուր տատրակներ մորթվեցան։

Կառույց Երվանդ իր քաղաքն ու Երվազն ալ իր մեհյանն.
Հրսկա սյուներ խոյագլուխ Մասիսի պես շողացին,
Ու ձեր մարմարն արփացող հագավ ձևերը տիտան
Մեր պապերուն հանճարին։

Արշակ կապեց կամուրջներ Եփրատին վրա դիվաձայն՝
Որոնք այդ խեռ դիցուհվույն ճապուկ մեջքը պարուրող
Եղան գոտի ալեսանձ՝ որոնցմե վար կախվեցան
Մորմենիներ աղամող։

Քանդակվեցան ձեր կուճով դամբարաններն Անիի
Եվ սափորները լեցուն Արշակունի աճյունով՝
Որոնց մեջե ծըլեցավ իբրև ընձյուղ կաղնիի
Բագրատունին մարտախռով։

Լեռնե՜ր, լեռնե՜ր, սև՜ լեռներ, այլևս ավա՜ղ թափուր եք
Շողապըսակ փառքերեն, հերոսներեն հինօրյա.
Դիոսի տեղ ամպ մ'այսօր՝ զերդ քողն այրի կընոջ մ'հեգ՝
Կը նստի ձեր գըլխուն վրա։

Թող ձե՛զ դառնա նոր Սերունդն, ըլլա դրացի արևուն,
Իրեն դըղյակ թող ընե իր հայրերուն օրորանն.
Արծվի թևերն իր վրա՛, իր վրա՛ երկինքը անհուն.
Թող շանթերո՛վ զինվի ան։

Փրրկությունն ա՛լ ձեր մեջ է, ձեր փապերուն մեջ մրթին,
Սեպերուն վրա՛ է՝ ուր այծն ելած վիհին կը նայի,
Հոտ ջրրվեժներն՝ որոնց քով վարդենիներ կը ծաղկին՝
Կու տան հրավեր պայքարի։

Թող ձե՛զ դառնա նոր Սերունդն, աստղահամարզ ըլլա զորք,
Թըշնամվույն դեմ բերդ եք դուք, դյուցազներու՝ ապարանք.
Լոկ քաջերո՛ւն համար ձեր ժայռերը լալ, ջրողորկ,
Կ'ըլլան գահեր ոսկեզանգ։

Եվ թող տրոփեն վեհորեն լոկ քաջերո՛ւն ոտքին տակ
Հրրաբուխներն ըսքողված, ձեր սրրտերն այդ ծրծմբաեռ.
Եվ վաղը թող շինվին ձեր մարմարներեն ըսպիտակ
Հերոսներու արձաններ։

ՎԱՀԱԳՆ

Ո՛վ աստվածն իմ հայրերուս,
Կը մոտենամ ահա բագնիդ, և ինձ հետ
Իր պախուրցեն քաշելով
Կը բերեմ ցուլ մ'հովիտներեն Տարոնի։
Տե՛ս, պարարտ է զոհս իմին.—
Երբուծին մեջ կաթնաթույր
Հողին ամբողջ կյանքը կա.
Պարանոցն իր մրսուրն ի՛նչ է չի՛ գիտեր.
Ան սրնած է արոտներուն մեջ ազատ.
Ու ակռաներն իր լրվացված են միայն
Հացյաց Դրախտի աղբյուրին մեջ նվիրական։
Երբ կը հևա՝ իր հրզոր շունչն առջևեդ
Կը վանե հողն ու ավազները գետնեն,

Եվ կու գա սև ռունգերեն հոտը ամբողջ
Դաշտային թաց կանանչին։
Տե՛ս, զոհս իմին գեղեցիկ է ու վրսեմ.—
Գլխուն վրա կոր եղջյուրները խարտյաշ
Փառքի պրսակն իր կ'ըլլան.
Կը բորբոքին աչքերուն մեջ ամեհի
Հրզորության սև խունկեր.
Եվ թավամազ իր ագին
Իբրև լորտու կողերուն շուրջն հարասող
Գոռեխներեն, բոռերեն
Մարմինն անբի՛ծ, մարմինը սո՛ւրբ կը պահե։
Ո՛վ դու Վահագն, աստվածահա՛յր զորության,
Ո՛վ Տիգրանի սերմին մեջ
Դու մարդացած Արեգակ,
Լրվա՛ հոգիս, ճառագայթով մը օծե
Շընթռունքներս այս, զի ավասիկ կ'համբուրեմ
Բագինդ սուրբ, և առած մուրճը ահեղ
Ըսպասարկու հաղթ բազուկով կը ջարդեմ
Ցուլիս ճակատն և իր արյունն հորդավեժ
Կը նվիրեմ ծունկերուդ։
....Արդեն ահա կը մբխա
Նվիրական խարույկն առջևդ ճարճատուն.
Կը շրջի բոցն ոստերուն մեջ ձիթենվո,
Եվ գիերուն հալած խեժեն արբեցած
Կ'ոստնու ուղիղ, և կ'երգե
Վերափոխումն իրերուն ջինջ հոգիին։
Ա՛ռ.— արյունոտ ասոնք կոդերն են զոհիս.
Ցրուկն է այս, ասոնք ճարպոտ գիստերն են.
Ահա՛ ըղեղն՝ որ ուղղեց բնա՛զդն ու շընչեց
Եղջյուրներուն խեռություն,
Ահա ջերմ սիրտն՝ որ տակավին կը սրրսփա,
Եվ իր լեղին՝ զոր ազգրին վրա կը դընեմ
Հույսով մ'որ ան պիտ' առչորի ամբողջ.— ա՛ռ։—
Եվ բոցն՝ որ արդ նետած պրսակն իր ծուխի
Վրճիտորեն կը բարձրանա, կը տանի
Ցուլը ճենճեր առ ճենճեր
Վերն, ապարանքդդ երկնային խրնկելու.
Ո՛վ դու Հրզոր, ընդունե

Նրվերներս իմ՝ զոր մաքրափայլ սափորով
Կրրակին վրա կը հեղում։
Ահա գինին.— պինչերդ բա՛ց ու շընչե
Քաղցրաբույր հոտն, և հաշտվե՝
Աստվածային գինովությամբ մը զրվարթ՝
Այս օրվան քու Ժող'վուրդիդ հետ կրոնափոխ։
Ահա հոման.— առջևդդ զայն կը թափեմ
Մաքո՛ւր, անո՛ւշ և առա՛տ,
Ինչպես թափեց ծառն իր կուրծքեն վիրավոր
Իմ յոթն անգամ լրվացված
Թակուլկներուս մեջ շրքեղ.
Զայն ընդունե, համարե
Ինչպես արյունն երեխայի մը՝ անմեղ,
Ինչպես քրրտինքն հրդիներու՝ թանկագին։

Ո՛վ վեհ, գո՞հ ես, տրվի քեզի ի՞նչ որ կար
Խրրճիթիս մեջ և հոգիիս,— քեզ տրվի
Թրշնամին ի՞նչ որ մոռցած էր այս օրվան
Այրիացած հԱշտիշատիդ մեջ ամա։
Արդ մեր տոհմին իբրև վերջին Վահունի՝
Բագնիդ առջև ծունկի կու գամ երկյուղած,
Կը համբուրեմ հողն՝ ուր քու
Հոգիեդ մաս մ'արմատ կու տա շոճերուն,
Եվ վերցուցած քեզի՞, քեզի՞ կարկառուն
Սա սոթտրված թևերս՝ որոնց արմուկեն
Ցուլին արյունը տակավին կը կաթի,
Ո՛վ դու Վահագն, ո՞վ աստվածն իմ հայրերուս,
Կ'աղոթե՞մ ես... կ'աղոթե՞մ...

Ուժի՞ն համար, կրոնքի՞ն համար բազուկիդ,
Որով դու օր մը պատռեցիր բերաններ
Վիշապներու, երկրնքին մեջ սրփռեցիր,
Ջերդ արևու հունդեր, աստղերն Հարդգողին.
Ուժի՞ն համար՝ որ թրռիչն է և հոգին
Արարչության անվախճան,
Որուն անհուն համբույրին տակ կը ծընի
Աշխարհներեն մաս մը ծաղիկ, մաս մը բոց,
Կ'ապրի սկզբունքն Անմահության հյուլին մեջ

Եվ ըղեղին և կամքին,
Որուն հրզոր մատին տակ
Կը ճեղքվին սերմերն, ավիշն երգելով
Կաղնիներուն մինչև գագաթը կ'ելլե.
Ուժի՜ն համար՝ որ կը լեցնե ստինքներ,
Կ'օրորե մեր օրրանն, ու մեզ, մահեն վերջ,
Մինչև աստղերը կը տանի, ու մինչև
Երկրորդ կյանքի մ'արարչագործ պատճառին,
Որ կը կանգնե Ազգ մ'ինչպես խումբ մ'առյուծի,
Բազուկդ անոր բազուկին մեջ կը հեղու,
Եվ զերդ հրեղեն վարագահավ՝ իր լուսեղ
Թրռիչներուն ամփոփման տակ կը թրխսե
Մեր մայրերուն ծոցին մեջ
Դյուցազուննե՜ր, հանճարնե՜ր,
Այդ սուրբ Ուժին համար կ'ըսեմ՝ որուն դու
Իմացական աղբերակն ես հորդահոս,
Ո՜վ դու Վահագն,— ահա քեզի կարկառած
Բազուկներս իմ արյունոտ,
Կ'աղոթե՜մ ես... կ'աղոթե՜մ...

ԴՅՈՒՑԱԶՆԻ ՄԸ ՍՈՒՐԻՆ

Երբ զենքերով թաթաղուն գոտիեդ դուրս քաշես զայն՝
Ամպին ծոցեն սրլացող կայծակին պես կը փաղփի։
Երկաթն ի վար ցոլցոլուն կը վազե լույս մ'հրահոսան
Նայվածքներուդ տակ արփի։—

Անոր մետաղը Վրեժին ճոխ հանքերեն են պեղեր։
Գեհենական հաղթ դարբին մ'է կըռեր զայն փողփողեջ,
Հետո հրսկա հասակովն աստվածաբար ջրրդեղեր
Արդարության լույսին մեջ։

Իր փրղոսկրե դաստապանն է ո՜րքան պերճ ու փարթամ.
Շուրջն են հեռեր մարգրիտներ արցունքներու պես պայծառ.
Զայն բուռդ հազիվ թե սեղմե՝ աչքերուդ մեջ կը կարդամ
Մահվան վրճիռն անաչառ։

Ո՜հ, իր սայրին նըրբավարտ, աներևո՜ւյթ իր սայրին՝
Որուն վրրա ճաճանչն ալ նույն իսկ թառիլ չի՜ կըրնար.
Ադամանդն իսկ լուսակուռ, մըտածումն իսկ մարդկային
Ան խաղելու ունի հնար։

Շե՜ղբը հետո պաղպաջուն, իր շեղբը մերկ և արու՝
Որուն կարծես կիսակոր կաղապարին ձևին մեջ
Լույս մ'է սառեր, աղոտ լույս մ'արյունահեղձ կյանքերու
Քերովբեի կրովեդ վերջ։

Ես կը պաշտե՜մ Սուրդ արդար՝ մահիկին դեմ լուսնային
Ժամերով ծունըր դընող սուրբ հընդիկի մը նըման.
Ազատ մարդուն պատասխանն, հովվացուպն է Յահվեին.
Ան ցուրտ լեզո՜ւն է Մահվան։

Փայլակնաթափ հարվածն իր՝ թագերուն վրա ոճիրե
Կ'երգե հանգի՜ստ զոհերուն, գերիներուն ավետիս.
Հին արյունով նոր օրենք դարերուն վրա կը գրրե...
Ան հավա՜տքն է իմ սրրտիս։

Հերո՜ս ընկեր, մոտեցիր իմ այդ հավատքիս պողպատ
Ես քրրմորեն վար կախեմ գոտիեդ այդ կարմրավերտ,
Սուրրդ կախե՜մ, դրրած իր պատյանին մեջ թավշապատ
Համբույրիս հետ իբր ողջերթ...

Դարձյալ քանդել ըսկրսան բարբարոսները դրժեմ.
Կացիններուն տակ նորեն կ'արյունին մեր մարմարներն.—
Հերո՜ս ընկեր, մոտեցիր, մոտեցիր Սուրրդ կախեմ...
Ան ըսպանե թող եղեռն։

Արշալույսին կառքն արդեն կը սպասե մեր դրռան քով՝
Պետք է մեկնի՜լ.— Սակայն հոն խառնուրդին մեջ հարվածի
Զմոռնաս՝ որ Սուրիդ վրա իմ ոսկեղեն հերյունով
Ես «Կյանք կա՜մ Մահ» գրրեցի։—

ՎԻՐԱՎՈՐԸ

(Հայ-թաթարական կռիվներուն առթիվ գրված)

Այստեղ ինկավ.— ազատության ճամփուն վրա,
Խոցը կուրծքին, զենքն ափին
Այստեղ ինկավ, երբ հոգնած
Վերջին կաթիլն իր քրտինքին ըսպառեց
Իր վերջին սև գընդակին հետ։ Վերքն է խոր.
Հրաբորբ արյունը՝ ուրախ
Գրտած ազատ իր անցքին
Դուրս կը վազե։ Կարմրած ծոցին մեջ մազոտ
Մեզի համար նոր Արշալույս մը կ'եփի։—

Դեռ չէ՛ մեռած.— և եթե վարն՝ ալքին տակ՝
Իպլիսի թուխ բազուկն իրեն կը մրդե
Մոռացոնքի լայն գերեզման մ'հուպ ընդհուպ,
Իր սուրբ անվանը համար
Մեր սրտերուն մեջ կը հյուսվին շանթերով
Անմահության օրոցքներ նոր և կարմիր։
Դեռ չէ՛ մեռած.— վերջին անգամ վեր կ'առնե
Թրխահեր գլուխը բանվորի, հերոսի,
Որուն մեջ բույնը դրրավ
Կովկասի վրա աստղերեն հար լույս խրմող
Ազատության արծիվը վեհ ու կարշնեղ,
Եվ կը նայի, շուրջը կ'նայի թե արդյոք
Իր արյունեն նունուֆարներ պիտ' ելլե՞ն,
Կամ պիտի օր մը ծրլի՞ն
Հեստ բաղեղներ ցախերը սև ընդուլնող։
Կը դիտե դրոշն և ծուխն հրագոռ վառոդին՝
Որ կը մրխա գանգերե դուրս՝ շընչելով
Իր ռունգին կյանք և գրրգիռ։
Կը նայի վերն աշտարակին վրա թառած
Նոթի անգղի մ'աչք աչքի,
Եվ կը խորհի գուցե տարված իր սրտին
Կամ աղիքին մասերը դե՛պ ի ամպեր,
Դեպ ի աստղերն ու Աստված։
Կը պրշնու վարն հորիզոնին՝ գրտնելով

Ռազմի դաշտին երկինքը շա՛տ մոտ իջած.
Հետո կ'հառին աչքերն հրսկա նոճերուն՝
Որոնց թաքուն արմատներեն դեպ ի վար՝
Որոնք իսլամ իշխաններու բրոնավոր
Գերեզմաններ կ'ակոսեն
— Ո՛վ պատուհաս հոգեվարքի— կը հոսե
Սև անեծք մ'իր արյանը հետ ֆրշշացող։
Եվ անդի՞ն, անդի՞ն կզակ կրզակի, հույս հույսի
Բախվող ռազմին, սակրրներուն, բռունցքներուն
Եվ բոցափթիթ ռումբերուն մեջ, ո՛վ սարսուռ,
Կանանչ ոստի՞ մը արդյոք,
Աստղի՞ մը նոր՝ որուն շողն հերձ պիտ' լայնե
Ծիրն աշխարհիս և մարդուն,
Բառի՞ մ'հրաթև, Մեսիայի՞ մ'ըսպասված,
Ո՛հ, ո՛վ գիտե.— ան վերջին ցուրտ ղողումով
Հանդարտորեն, անհունորեն կը ժըպտի՞։
Ժըպտե՛, ժըպտե՛.— ո՛վ եղբայր,
Մեծ՝ ինչպես մեծ է խավարումն արևու,
Սուրբ՝ Նըշխարին նըման բեկվող.— դե՛հ, ժըպտե՛։
Ժամն է՝ որ քաջ հայ մարտիկներն ա՛լ ժըպտին.
Զի մենք իրենց և քու վրեժիդ ի խընդիր,
Մենք, ռամիկ Ուժ գիտակից,
Թարմ բողբոջներ շըղթաներու, գերիներ
Ապըստամբած՝ որոնց ճակտի՛ն տակ այսօր
Իբրև բոց պորտն Ապագային զետեղեց
Աստված իր աստղը փըրկիչ,
Մենք, բաց կուրծքեր, մազոտ կուրծքեր, սոթտրված
Բազուկներ, մե՛նք, սուրբ Գործին
Ընտրրվածներ, պաշտվածներ
Գաղափարեն նոր ու լայն.
Մենք, ժողովո՛ւրդ.— պրղընձակերտ աստվածներ
Բաֆֆիներու, ...մենք զինված
Հրացաններով, բահերով,
Եվ մուրճերով, հավատքով,
Դիիդ առջև, կուռ մոլուցքով մը սևցած,
Ավասիկ վեհ, ոտքի՛, ոտքի կեցեր ենք։
Եվ կ'երդնո՛ւնք քեզ, կ'երդնո՛ւնք քեզ,
Որ երբ դագաղդ ուղղվի դեպ ի գերեզման՝

Պիտ՝ սալարկեն անցած ճամփան իր ամբողջ
Սուրերը մեր ծանրակիր
Թշնամիին արյունշաղախ գանգերով.
Թափորիդ ջահ պիտի ըլլան, դեմ դիմաց,
Հրդեհն անո՜նց տուներուն՝
Որոնք իսլամ ժանիքը մե՛զ ուղղեցին։
Եվ կ'երդնունք քեզ, ընկե՛ր, կ'երդնունք որ այսօր
Մինչ հազար՝ վաղն աստղերու չափ պիտ՝ ըլլանք.
Վաղը, այո՛.— երբ մենք՝ իբրև կարմիր փունջ՝
Շիրմիդ ոտքին մեկ ցիցի վրա նիզակենք
Գլուխը Ցարին կամ Սուլթանին.— Բրոնությունն.
Մեր որդիներն հա՜ղթ, զրվա՜րթ,
Պիտի սնարիդ դընեն վարդե պսակը ծանր
Ազատության։— Կ'երդնո՜ւնք, ընկե՛ր, կ'երդնո՜ւնք քեզ։

ԴՅՈՒՅԱԶՆԱՎԵՊԵՐ

ՀՈՎԻՎԸ

Ա. Անառոնյանին

Տարին անգամ մը միայն իր հոտին հետ գյուղ կու գար՝
Երբ ձյունաբեր հովն արդեն խոտերուն կյանքը տրկար,
Լեռներուն վրա խրված էր։ Խաշինքին էջքն հազիվ հազ
Կը տեսնեի՝ սարն ի վար, ես դեռ տրղա, վազն ի վազ
Դիմավորել կ'երթայի հովիվն՝ որ պապս էր թիկնեղ։
Կը գբրկեր զիս, իշուկին կը նըստեցներ, ու մեկտեղ
Կը մտնեինք գյուղին մեջ, երբ իրիկվան աղոթքին
Կոչնակն ընդհատ կը հնչեր ծառերուն մեջ զովագին։
Օ՜հ, վերադարձն ի՜նչ քաղցր է երդիկին տակ գեղջկական
Ոչխարներուն՝ բեռնավոր բարիքներով նվիրական։
Ձերդ փըրփրուն գետ դեպ ի գոմ փողոցն ի վար կ'հոսեին՝
Դըրած մեկը դունչը գիրգ՝ կըռնակին վըրա մյուսին։
Խըրոխտ խոյերն ունեին ձյունահյուսի պես դըմակ.
Մաքիներուն լուսակիզ բուրդն ապըրշում էր համակ.

Մացառներեն վիրավոր կաթնեղ ծիծերն այծերուն
Կը սրղմեին հազիվ հազ իրենց ազդրին մեջ բեղուն։
Դեռ մոտակա գետակեն չանցած՝ արդեն կը լըցվեր
Գյուղը ամբողջ մայունով և բույրերով լեռնաբեր։
Երբ առջևեն կ'հաչեին գոռ գամփռները հոտին՝
Գեղջուկ տըղաք սըրտաթունդ տունն իրենց խույս կու տային,
Եվ հեգ պառավ մը վիզով կըրիայի թեփաթափ,
Մըրթմըրթալով կը փակեր խըրճիթին դուռն հապըշտապ։
Կու գար հովիվն ետևեն։— Կը հնազանդեր խաշինքն ողջ
Ցուպին՝ կիսովն իր օծված դեղին տիղմով մը ամբողջ։
Գըլխուն ուներ փոյուգական գըլխարկ մը գորշ թաղիքե՝
Ուր մըխած էր կապուտակ փունջ մը նարգիս ծաղիկե.
Կարճ թեղանով սև արջու մորթե հագուստը երկար,
Ձըգած էր ձախ ուսն ի վար՝ որուն տակ իր պարկը կար։
Այսպես հըսկա և վըսեմ՝ խընկելով մե՛ն մի քայլին՝
Բարբարոս հոտ մ'ուղխերու, և կույս բույրեր լեռնային՝
Կը մըտներ բակն։ Համբույրով մը վար կ'առներ զիս էշեն,
Համբո՜ւյր մ'որուն մեջ հոգիս կ'ըմպեր բնությունն հոյաշեն։

Բ

Ձըմեռն ահա...
Թոնրատունն անդորրությո՜ւն կը տիրեր,
Անդորրությո՜ւն նաև տաք գոմին մեջ տանն առընթեր՝
Ուրկե միայն մեզ կու գար հոտին շըշուկն որոճման,
Կամ գառնուկն իր ծընանող ոչխարի ձայն մը դաժան։
Քաջ ծերունին կը կախեր պարկն իր դիմաց պատն ի վար՝
Ուրկե օթեկ պանիրի կը տարածվեր հոտ մ'ըստվար։
Անդին կատուն մերթ պըրծած իմ ձեռքերես շարշըրկող՝
Անոր տրեխները մեծդի կ'երթար լիզել գաղտագող,
Որոնց վըրա կ'ըլլային շատ հեղ չորցած արյուններ
Մարդագայլի կամ գայլի՝ զոր ան հաղթած, մորթած էր։
Իսկ նըստած մայրըս թոնրին քով կ'աղոթեր սուրբերուն,
Մերթ մրափելով, մերթ ալ խաչ հանելով դեմքը սարսռուն՝
Երբ հովն հեռուն լեռան վրա թավալ տալով ձյան հյուսեր՝
Կու գար ոռնալ երդին վրա և բուխերիկը սարսել։
Այն ատեն ես կ'ըսեի դըվարածին ալևոր.
— Պապո՜, պատմե. լեռներու կ'ուզեմ հեքիաթ մը աղվոր։—

Կու տար համբույր մը ճակտիս, հետո ձայնով սիրամած՝
Որուն մեջ դաշը սյուքին ամպրոպին բամբն էր մեղմած՝
«Ա՜խ, թոռնիկդ իմ, կ'ըսեր ան, լեռներո՜ւն վրա, լեռներո՜ւն
(Մեծցիր դեռ քիչ մ'ու քեզ ալ պիտի տանիմ հոն հեռո՜ւն՝
Որ իմ տրկճորըս զարնես), լեռներուն վրա պապական
Մեր հովիվին վեպն է շատ, և իր թոռին շահեկան։—
Ու կը սկսեր պատմությունն՝ որ գրեթե միշտ ա՛յն պահուն
Կը լըմբննար, երբ ճրագին կը սպառեր ձեթը պլպլուն...
Դուք տեսա՞ծ եք հայրենի լեռները մեր խրոխտապանծ
Պսակված՝ ամպի մեջ բուսնող անտառներով անթափանց՝
Զոր կը հոտեն լոկ շանթերն, ու լոկ հեղեղը դեղին
Հոտված ծառերը մինչև կը բերե մոտը գյուղին.
Դուք տեսա՞ծ եք կիրճերու խորն անձավներ՝ որոնց մեջ
Կ'ապրին (կ'ըսեն) ջատուկներ կրթելով էգ գայլ մ'անվերջ,
Եվ որոնք մերթ լուսնին տակ երգելով երգ մ'հրապուրիչ
Վա՜ր կը կանչեն սարին վրա նըստող կովարծը կըտրիճ.
Դուք տեսա՞ծ եք մարգագեղ անծայրածիր արոտներ՝
Ուր գառնուկներ կ'արածին թիթեռներու առընթեր,
Ուր կը սահի արևուն միահեծան փառքին տակ
Գետակ մը ջինջ՝ կաթի պես, և եղկ անոր հանգունակ.
Դուք տեսա՞ծ եք փոթորկեն վերջ (երբ փայլակը հեռուն
Դեռ կը խաղա՝ ցույց տալով մերթ արևն ծոցն ամպերուն)
Նըստած հովիվն իրիկվան դեմ փարախին քով՝ անհոգ՝
Կը շորցրնե շանթահար կաղնիին դեմ հրաբորբոք
Իր թաղիքե տառատոկն անձրևին տակ ծանրացած,
Կամ կը հյուսե տրրեխներ մացառներեն քրճքրճած.
Դուք տեսա՞ծ եք կամ ինչպես ան կը մորթե այծ մը հույր
(Որուն արյունը կ'հոսի ձար մորուքեն մամռաբույր)
Եվ շամբրելով զայն կրակին վրա կը դարձնե, իբրև ճաշ,
Թողլով որ քաղցր հոտն ընե շուրջի գայլերն հալումաշ.
Կամ տեսա՞ծ եք կեռակտուց անգրդ մ'ահեղ որ խրլած
Մորթը քերթված նույն այծին՝ կ'ելլե երկինք վերասլաց»։
Ահավասիկ այս բոլորն, այս պատկերները խուժդուժ
Իր հեքիաթներն էին, նախ՝ երգված սրրտի՛ն մեջ անուշ։
Կը լսեի ես զանոնք սևեռած խորն աչքերուն՝
Ուր միշտ հոգի՛ն կը խոսեր՝ իր լրությանը պահուն։
Ան իր սրրտին մեջ սուրբ էր, բազուկներովը՝ հերոս,
Մեր ցեղին պես միշտ բարի, մերթ նենգ ու մերթ բարբարոս։

Կը զմայլեի ժամերով հասակին վրա, վեհ պատկեր,
Որ ոլիմպյան աստվածի մը կաղապարն էր հագեր.
Կը տեսնվեին ճակտին վրա և ծոցին մեջ թրխագույն,
Խածած տեղերն հուլիսյան ոսկեատամ արևուն.
Հովին, տոթին տակ թրծված կուրծքը հընոց մ'էր երաշտ,
Նըման անոր՝ որուն մեջ պապերը մեր կրռապաշտ
Իրենց ազնիվ նըվերներն աստվածներուն կ'այրեին։
Կը թորեին հոնքերեն առատ բույրեր լեռնային։—
Մինչ իմ հոգիս այդ հրզոր մարդու ձայնին օրորով
Կը մեծնար ի՛նչպես եղեգ մ'ամպրոպին մեջ երգելով,
Մինչ կ'անցնեինք գիշերներն հիշատակովն իր կյանքին,
Եվ սիրտս իր խոսքը կ'ըմպեր՝ բոցն ինչպես ձեթը ճրագին,
Դուրսը քամին կը թրուշեր, լեղապատառ կը ճըչար,
Եվ վերն երդին վրա նըստած և ձյուններուն մեջ պայծառ՝
Շունները մեր կ'ոռնային գայլի մը կուշտ, տըղընդեր,
Որ դիմացի ըսպիտակ սարալանջին կ'ոստոստեր...

Գ

Գարունն ահա...
Մեր երդին ջորդաններեն՝ ուր հրլու
Աղավնիներ իրենց ջուրը կու գային խըմելու՝
Ձյուններն հալած կ'հոսեին դրռանը քով խոխոջուն.
Ժայռեն հեղեղը կ'իջներ արևուն տակ պաղպաջուն.
Գետը (կարծես ոսկեղեն հանքե բըխած) ընդհոլով
Կը տարածվեր դեղնորակ՝ գյուղին առջև մոընչելով.
Իրենց կանանչ քողերուն մեջեն մեղմիկ արթընցած
Բլուրներեն, դաշտերեն երբ կու գար սյուքն համբընթաց,
Մեր տընակին բանալ դուռն,— հովիվն ընդոստ կը
կանգներ.—
Հողին հոտն իր առնական լայն ռունգներուն դրպած էր,
Հողին հեշտ հո՜տը՝ նըման բեղուն հարսի մը մարմնույն
Գաղջ բուրումին՝ որ նեկտա՜րն է փեսային ցընծամույն։
Ջունի տընակը հաճույք, չունի թոնիրը հեշտանք՝
Երբ մարդ սրրտին մեջ կը զգա գարնան երգին արձագանք։
Կու գար բնության բոցերուն ջահը բռընկիլ հեղակարծ,
Լեռան կարոտ այդ հովվին թարթիչներուն տակ արծարծ։
Կ'առներ թիկնոցը ուսին, կ'առներ տրկճորն՝ որուն մեջ

Տիեզերքին սիրտն ամբողջ պիտի առներ ելևէջ,
Եվ կ'ըսեր մորըս.— «Մարո՛, պարկիս մեջ դիր պանիր, հաց,
Եվ ցուպըս տուր. լեռ կ'ելլեմ. ա՛լ փարախին դուռը բաց»։
Ու կը մեկներ գոհունակ։— Կը տեսնեի դիմացի
Կանանչ սարեն բարձրանալն հոտին՝ որ լուռ կ'արածի։
Ուրախ էին ոչխարներն, էշն ալ ուրախ կը թըվեր,
Եվ ընչապտուկ շուներն ալ՝ տընկած ցռուկնին դեպ ի վեր՝
Կը հաչեին վեհ արծվի մ'օդը վերեն վար հերձող,
Կը լափեին մերթ կանաչ ճանճ մ'արևուն մեջ թըռչող։
Այն ժամանակ— ո՜վ սըրտիս անմահական հիշատակ—
Մեր հովիվին ետևեն կը վազեի ես շիտակ
Ու թիկնոցին թեզանեն բռնած,— Պապո՛, պապո՜ ջան,
Ձիս մեկտեղ տար, կ'ըսեի, հովիտներուն մեջ շուշան
Քաղել կ'ուզեմ, կ'ուզեմ ես քովըդ խաղալ սարին վրա։—
«Դեռ փոքրիկ ես, կ'ըսեր ան, կես ճամփան շունչըդ կ'հևա.
Ժայռին ծայրեն անցնելուն մըրրիկը քեզ կը տանի»։
Եվ մեծաքայլ կ'անհետեր սարին ետև գեղանի...
Ըզկըծանքես լալով ետ կը դառնայի մենակյաց.
Բայց հովն արցունքըս սըրբած կըլլար ես գյուղ չըմըտած.
Եվ երբոր տուն կ'հասնեի՝ մոռցած էի պապս արդեն.—
Կա՜մ մորըս փունջ մը ծաղիկ բերած էի հետս արտեն,
Կա՜մ ունեի ափիս մեջ թիթեռնիկներ նահատակ.—
— Ո՜վ արդ ցամքած իմ սըրտիս անմահական հիշատակ։—

Դ

Օր մ'ալ եկավ ան դարձյալ, աշնան օր մ'էր չարաշուք.
Արևն հիվանդ կ'օրհասեր գյուղին ետև անշըշուկ.
Ծառերուն մեջ չէր լըսվեր կոչնակին ձայնն անուշակ.
Ծուխն երդերեն չէր ելլեր, չըկար կալին մեջ մըշակ։
Երբ գյուղ մըտավ ծեր հովիվն ըզգաց սարսուռ մ'ահավոր,
Կարծես քալեր ամայի դամբարանի մը մեջ խոր։
Տըղաք փողոցը ինչո՞ւ չէին խաղար այն օր վեգ.
Ինչո՞ւ շեմին վրա նըստած չէր աղոթեր պառավն հեգ։
Հովիվը դեռ քիչ մ'անդին տեսավ տուներ ավերակ,
Դուռը կոտրած խրճիթներ՝ ուր ո՛չ ձայն կար, ո՛չ կըրակ.

Տեսավ մարագ մը այրած՝ որուն պատին վրա մըրոտ,
Պառկած հոգին կը փըշեր անտեր կատու մը բորոտ։
Տեսա՜վ զասոնք, ու մինչև ոսկըրներուն ծուծը ան
Համակվեցավ տըխրությամբ, դողաց նոճի մը նըման։
Կարծես անցավ բնազդորեն հոտին մեջ իսկ բովանդակ,
Ոչխարներուն գըլուխներն հակող սարսուռ մ'ընդարձակ։
Շուներն երեք հեղ հովվին երեսն ի վեր նայեցան,
Սակայն ոչինչ չհասկըցած՝ երեք անգամ ողբաձայն
Լըռության մեջ ոռնացին, մահաշըշուկ փորելով
Արյունազանգ հողն՝ իրենց վերջի հըզոր ոտքերով.
Ծերը հասավ տան առջև. իբրև սուգի նըշանակ
Հանեց նետեց գըլխարկեն դըրած փունջն իր մանիշակ.
Վըրա՜ն կոխեց, ու մըտավ...

Մեր տընակն այն իրիկուն
Ըստվերի մեջ թաթախված՝ դատարկ այրի մ'էր հանգույն.
Խահի արծաթ ըսպասներն որմին չէին շողշողար.
Հընձանը ո՛չ գինի կար և ո՛չ արկղին մեջ գոհար,
Ճըրագին ձեթն, Հո՛ւյսն հարկին՝ խաղաղության մեջ ծաղկող,
Հոն հատակի՜ն թափած էր դըժոխային ձեռք մը գող։
Մայրս այնտեղ էր, թոնրատան մըթարին մեջ մենակյաց.
Մազերն ըսփյուռ խուփին շուրջ և երեսի վրա ինկած՝
Խեղդուկ կու լար, արցունքն իր կարծես սըրտե՜ն կը բըխեր.
Թոնիրն այն օր չէ՜ր վառված։— Գընաց հովիվն ալեհեր
Սովորական իր տեղն հոն նըստավ առանց խոսելու։
Միշտ աստղերու ավազան իր աչքերուն լույսն աղու
Կը փոխվեր թուխ բոցի մ'հոծ թարթիչներովն հըրահրուն։
Երկար ատեն մընաց լուռ նայվածքը դռան սևեռուն։
Պայծառ հոգին հասկըցավ, լույս ճակատն իր մըթընցավ.
Ըրեր էին մարդ-գայլերն իր շեն տընակը անձավ։
Կամաց-կամաց ըսկըսավ ըղեղին մեջ արթընալ
Սև մըտածում մ'իր փոսեն ելլող զերդ օձ մը ծալ-ծալ։
Խաղաղությունն հոգվույն մեջ ալեծըփանք մը կ'երկներ.
Ճակտին վրա բյուր ծալքեր, ծալքերուն մեջ սոսկումներ
Իրարու վրա դիզվեցան քողի մը տակ լըռության,
Քող մը՝ զոր հուսկ որոշում մ'եկավ պատռել հաղթական.
Եվ ան մռունչով մը ահեղ վեր խոյացավ իր տեղեն՝
Փոթորկելով ուսին վրա գանգուրներն իր ձյունեղեն.

Բոցն աչքերուն տունն ամբողջ լույսերու մեջ կ'ողողեր.
Ան նման էր հեռուեն եկող մըրրկին սևահեռ՝
Որ կը սրփռե շուրջը նախ մութ անդորրանք մը խորունկ՝
Իբրև մտածմամբ մը հըզի ըլլար ամեն քար ու տունկ.
Հետո մինչև ձորերուն մեջ կ'իջնե մռայլ քայլերով՝
Ծառերուն գլուխ դանդա՜ղ խորախորհո՜ւրդ շարժելով.
Գույներ կ'առնե նարինջի, մեղեսիկի, հակինթի,
Եվ վերջապես օդին մեջ անձրևաթափ կը ճայթի.
Որոտը միշտ մըռմռալով կ'երթա զերդ քարբ գալարուն
Ջախջախելու գրանիտները շըրջակա լեռներուն.
Եվ վեհությունն այս ցասկոտ ա՛լ կը սկսի պըսակվիլ
Կայծակներու շողշողուն նարոտներով հրատեսիլ։
Այսպես եղավ հովիվն ալ։ «Մարո՛, Մարո՛, գոռաց ան,
Դուստրը, կանգնե՛. հայրենի տանն ու գյուղի՛ն ես զուրրան։
Ղըզըլբաշներն էին— չէ՞— միշտ այդ շուներն անուղղա՝
Որ օջախս այս մարեցին. թափի՛ մոխիրն իրենց վրա...
Դուստրը, կանգնե՛. պարկըս տուր՝ զոր նետեցի շեմին մոտ,
Բայց մեջը ո՛չ պանիր դիր, ո՛չ հաց, լեցուր լոկ վառոդ,
Դուստրը, կանգնե՛, բայց մի տար հովվական ցուպս
անվտանգ՝
Որ լոկ հոտիս կ'ազդե վախ, և շուներուս պատկառանք,
Հրացա՜նըս տուր այս անգամ՝ զոր գոմին վրա, գաղտնափակ,
Ձեղնահարկեն կախեր եմ Քըրիստոսի խաչին տակ։
Ես լեռ կ'ելլեմ. ա՛լ կ'ուզեմ ըլլալ հովիվ գայլերու.
Ժանիքի դեմ ես ժանիք, թաթի դեմ թաթ վրիժառու.
Թող այդ թուրքերը գիտնան՝ որ խաշնարածն այս երկրին,
Պիտ' չըթողու որ հանգիստ ուտեն խըլած ոսկորնին։
Ա՛լ կարգն իմս է՝ որ իջնեմ սարն ի վար ձեռքս հըրազեն
Տըված կաթիս փոխն առնել իրենց սըրտին արյունեն»։
Այսպես ըսավ։— Ու երբ իր ուզածն առավ, ան առանց
Ողջույն տալու իր հոտին, կամ լըսելու մորս թախանձ,
Դուրս խոյացավ հապշտապ, բայց ես նորեն անդադար
Իր ետևեն կանչեցի. «Պապո՛, պապո՛, զիս ալ տար»։
Ետև դարձավ այս անգամ, նայեցավ հեղ մ'հասակիս.—
Այլևս հըզոր էր բազուկս, ու բոցերու մեջ հոգիս.
Խոյանքներու հասունցած կորյուն մ'էի պընդացայլ։
Ձեռքես բրոնեց ու մեկտեղ ելանք սարեն հաղթաքայլ։

Վրեժը մեզի սնունդ տըվավ, մահն եղավ մեզ դաշնակից.
Եվ ձորերուն մեջ մերին, լեռներուն վրա ծաղկալից,
Ան ծեր հերոս մը եղավ, եղա աշուղ մ'ես փոքրիկ
Եվ իր փառքերն երգեցի իր տըկճորովը գողտրիկ։

ՀԵԹԱՆՈՍ ԵՐԳԵՐ

Ես կ'երգեմ Դինին.— Բազիններուն ծիծաղը
և խոռաններուն արյունը:
Դարերու Կյանքը կ'երգեմ, ճանուն ճանույի
և տառապանքի գեղեցկության:

Փառք սարբինային.— Բազառ կը պսակվի:

ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՆԻՆ

Կ'ուզեմ ըլլա քու մարմարիո՜նըդ պեղված
Ոլիմպոսի ամենեն խոր արգանդեն.
Եվ իմ մուրճիս տակ ըզգենու հըրեղեն
Միս մը կընոջ, լույսով, տենդով սըրարբած։

Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի՝
Հավերժին մեջ անմահացած ըզգա զինք.
Գիծերդ անեղծ ըլլան, քու ըստ՛նք
Դաշնակություն մ'ուր կենսահյութը հուզի։

Մերկ ըլլաս դուն բանաստեղծի մ'հոգվույն պես,
Եվ հեթանոս այդ մերկությանըդ ներքև
Տառապի՛ մարդն ու չըկրնա դըպչիլ քեզ։

Թե հարկ ըլլա զոհ մը ընել քեզ պարգև,
Բագինիդ ե՛ս պիտի ուզեմ մորթըվիլ՝
Որպեսզի կուռդ ըմպե արյանս հուսկ կաթիլ։

ՎԱՆԱՏՈՒՐ

...Ամենաբեր նուրց պտղոց տանից
հիւրընկալ դիցն Վանատրի.

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Նըստած պարարտ եզիդ վրա, ո՛ Վանատուր,
Մեկ ծագեն մյուսը կ'անցնիս
Հայրենական դաշտերուն։
Մեռա՞ն բոլոր մեծ աստվածները, իրենց
Բագիններուն վըրա մամուռը կ'աճի։
Անմահ եղար դո՛ւն միայն
Նըման հողին և կըրակին, ու նըման
Օվկիանոսի աղերուն։
Ուսերուդ հիր պատմուճանեն դեռ կու գա
Գինիի հոտն Ամանորի տոներուն։
Հակառակ ա՞յնքան դարերու ավերին՝
Բիբերըդ դեռ զըվարթություն կը բըխեն.
Ու կենեղուտ դեմքիդ վրա
Արբեցողի կարմիր ծիծաղն է ծեփված։
Ու երբ պարարտ եզիդ վըրա կ'այցելես,
Ծաղկամիսեն Միգաբեր,
Անեզրությունն հայրենական դաշտերուն՝
Կ'հոսի ալի՛քը կյանքին
Ակոսներեն հայրենակա՞ն դաշտերուն։

Ահա գարունն ու զարթումներն իր առույգ,—
Հերիկներո՞վ պըսակվե, ո՛ Վանատուր։
Ճամփուդ վրա ճառագայթներ կը հոսին

Երակներո՛ւդ պես զեղուն.
Եվ կը թաղվին կանանչին մեջ ցողաթուրմ
Բոլոր քարերն ըսպիտակ։
Կըտուրներեն գեղջկական
Կը բարձրանա ծուխը, խունկի պես խաղաղ։
Թող ես վարդով և ուլունքով գեղաշար
Քառամանյակըս կախեմ
Պարանոցեն քու եզիդ,
Հըլու եզիդ՝ որ դարձած՝
Մերթ կը լիզե բոբիկ ոտքերդ աստվածի։
Օ՜, իր պոչյունը գերազոր, որ ահա
Քարանձավե քարանձավ
Կ'արթընցընե թըմրած օձերն ու արջերն
Ու խաղաղ կյանքն արևուն տակ կը պոռթկա։
Աստղերը մեղրը կը ծորեն երկընքեն
Նայադներու սափորներուն մեջ մարմար,
Արշալուսված աղբյուրներուն եզերքին
Աղավնիներ կը լոգնան
Իրենց կտուցեն մարգարիտներ սըրսկելով։
Ծիծաղե՛, ո՛ Վանատուր,
Քու հեթանոս ծիծաղներովդ վըճիտ,
Չի բընությունն արթընցա՛վ իր քողերեն.
Եվ բերկրությունն, արգասավոր և անհուն,
Օդին մեջեն կ'անցնի կ'երթա, ու նըման
Մեծ կարապի մը վայրի,
Քու հաղթանա՞կըդ կ'երգե։

Ահա ամառն ու իր անդերը խարտյաշ.—
Որաներո՞վ պըսակվե, ո՛ Վանատուր։
Պըճեղներուն տակ եզիդ
Մատղաշ ցորյանն անտառացավ. այժըմ իր
Ծովերուն մեջ ոսկյա լոգանքըդ ըրե՛։
Թուփերուն տակ ծաղկահեղց
Բույներն են լի՛ օրհնությամբ,
Եվ արտույտին երգն արևե՛ն մեզ կու գա։
Քու արգավանդ անույշ շունչդ է՝ որ կ'անցնի
Դալարավետ բըլուրներուն կողն ի վար։
Երդիկին վրա քընացող

Կեղջուկին աչքն ա՛լ կը բանա՝ Արշալույսն,
Եվ կը փակե՝ Լուսընկան։
Ճյուղերն են լի համեմներու բույրերով,
Ավերակներն իսկ մոխրասպառ՝ են զեղուն
Եղիճներու, մոլոշներու հունձքերով։
Ուռենիին տակ, Վանատո՛ւր, կը զոհեմ
Նոխազը, քեզ նվիրված,
Նոխա՛զն, որուն լուսեղ մազերն հորդահոս
Քամակին վրա՝ ակոսի պես կը ճեղքվին.
Նոխա՛զն որ միշտ կը կրծեր
Սուրբ շերտափակն այգիդ։
Արյո՛ւն խըմե ու մի՛ս կեր, ո՛ Վանատուր,
Քու հինօրյա խըրախներովդ հեթանոս,
Չի հասկաթուռ ցորյանին մեջ փայլակող
Գերանդիներ քե՛զ կ'երգեն։

Ահա աշունն ու արյուններն իր հուռթի.—
Որթատունկո՛վ պըսակվե, ո՛ Վանատուր։
Նիզակըդ ա՛ռ՝ որուն վըրա ոլորուն
Բարունակներ կը ծաղկին.
Թող ես եզիդ եղջյուրներն
Ողկույզներո՛վ զարդարեմ։
Մըրգածառերն, հրդի կընոջ մը նըման,
Կ'հևան իրենց բեռին տակ.
Բուներն համակ կըպչուն են քա՛ղցըր հույզով.
Կորիզն ամեն պըտուղի
Քու սերմովըդ է պընդացած.
Եվ քու եզիդ շողիքով
Օծված է հողը բեղուն։
Ամբարներն ողջ՝ խաղաղությամբ կը լեցվին,
Եվ կարասներ՝ ցընծությամբ...
Թող, թեղերուն մեջ, ուտե եզըդ գարի՛ն
Աստղերու պես։ Իսկ դուն, Աստվածըդ զըվարթ,
Աստվածըդ գեր, վարդերես,
Ա՛ռ դաշխուրանդ, ըմպե՛ արյունը աշնան։—
Աղբյուրին քով ես քեզի
Մատրովակեմ թող գինի՛,
Մատրովակեմ թող բոցե՛ր։

Ծիծաղե՛, ո՛ Վանատուր,
Ո՛, Վանատուր, կաքավե՛.
Չի այգիեն տերևաթափ՝ կ'երևան
Հավերժհարսերն, երկայնքն ի վեր ցանկերուն,
Եվ աղջիկներ, նուռ լեցուցած զոգերնին,
Դեպ ի մեհյանըդ կ'երթան.
Չի դուն անմահ ես՝ դիքերեն վերջ մեռած՝
Օվկիաններու աղին պես,
Չի տաղտկալի ձրգման մեջ,
Հայրենական օջախներուն քով խաղաղ,
Ամեն կիթառ քե՛զ կ'երգե։

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Ապարանքին մեջ մարմար կախարդական Երազին
Ուր աստղակուռ ջահեր լույս անձրևելով կը վառին,
Ես Արքա մ'եմ այս գիշեր Արևելքի ճոխությանց,
Եվ ունիմ գահ ու գանձեր, ճերմակ կիներ հերապանծ։
Բազմոցիս վրա՝ զարդարված հովազներու մորթերով՝
Գըլուխս հեցած դաստակիս, և հեշտության մեջ գինով,
Ընկողմանիկ կը դիտեմ Ջերքեզուհի մը անձնյա՝
Որ կը պարե իմ առջև, մարգարտահեռ գորգին վրա։
Իր հոտևան մազերեն և մարմինեն ծալ ի ծալ
Կը հոսի ծով մ'հեշտության՝ ուր կը սիրեմ ես լողալ։
Ըզգեցեր եմ փառահեղ պատմուճաններս ըսպիտակ
Բանված հազար աստղերու արցունքներովը սուտակ.
Շուրջը գլխուս փաթթեր եմ ապարոշս իմ ձյունափայլ՝
Ծանրը՝ նըման իմ փառքիս, հանճարիս պես՝ բյուրածալ։
Մատնիներով ադամանդ ծանրաբեռնված ձեռքիս մեջ
Համրիչս հի՛ռ կը գըլեմ մեծ սաթերով փողփողեջ։
Ինկեր են վար ոտքերես անխնամ գորգին վրա քըրքում
Հողաթափերս ոսկեհյուս և թաշկինակս ապըրշում։
Իսկ զետեղված է իմ քով, կենսաժըպիտ, փըրփրադեզ,
Հըսկա բաժակը գինվո, որ հըրաշքով մը կարծես
Դեռ նոր հոսված արյան պես կը պըճըլտա իմ առջև։

Սակայն բիբերը ծարավ գույն ու մարմնո գեղաձև՝
Մարգարեի մ'աղոթող բիբերուն պես տեսլացած՝
Անհունորեն սուզեր են հորձանքին մեջ ճախրասլաց
Այն թրխաշվի աղջկան, Ջերքեզուհվույն համպարե՝
Որ իմ առջև կը պարե՞, միշտ կը պարե՞, կը պարե՞...
Իր շարժումն հո՞ւյլ է երբեմն, ու իր հասակն է նման
Հողմնասարսուռ եղեգին, բույր ու փըրփուր, երգ համայն.
Իսկ երբեմն ա՛յնքան զորեղ թափ մը կու տա ոտքերուն՝
Որ խարույկված բոց կ'ըլլա՝ քամիներեն ծըփծըփուն։
Օ՜, ան միսին ձևերուն և ծալքերուն հանճա՞րն է.
Գիտե հեղուլ հորդառատ նայվածքներե, մարմինե
Բոլոր հրապույրը կընոջ և տըռիփները հեշտին՝
Որոնք նման ծովերու առջևս անզուսպ կը փըրփրին։
Ու կը պարե՞, կը պարե՞, հորձանապտույտ կը պարե՞...
Քըրտինքներով կը պըտղի ճակատն հըստակ փայլարե։
Վեհ հասակն իր կախարդի՝ մազերուն տակ ծածկըված՝
Ուռենիին խոռվքն ունի՝ լըճակին վրա ցոլացած։
Մերթ դեպ ետև կը թեքի, մերթ ալ դեպ ի ընդառաջ.
Հազիվ եղած շամբ ճըկուն, կ'ըլլա բարտի մ'աննըվաճ.
Եվ մերթ ցընցուն ոստումով՝ կարծես իրանն հրաշագեղ
Հանկարծակի կը փշրե փոշիաբար զերթ բյուրեղ.
Ու հազիվ հազ դաշնակում մ'իր մարմինեն եղծանած՝
Նոր թեքումով կ'հորինե նո՛ր դաշնակում մը հանկարծ։
Մարգարտահեռ մուճակներն, ուր ոտքերն իր ձուլվեր են,
Կարծես հազիվ կը հրպին գորգին վըրա նրկարեն.
Ու իր հատուկ ճախրանքեն կառնու հով մ'ա՛յնքան ծավալ,
Որ կը մարե երդումն հա՛պ ու կ'արծարծե երբեմն ալ
Իր ականջին օղերուն փայլատակները լազվարթ
Ու իր բոլոր քայլերուն ճառագայթները զըվարթ։
Ու կը պարե՞, կը պարե՞, կատաղորեն կը պարե՞,
Միշտ հրպատա՛կ ցոփ կամքիս՝ որ զինք ընդմիշտ կը վարե։
Գլուխեն վե՛ր կը նետե նուրբ պատմուճանն հապշտապ.—
Կը մերկացվին ըստինքներն ու պարանոցը կարապ,
Ու որովայնը բարի՝ իր սև պորտով կընքըված,
Եվ հույր բումբերը, բոլո՛ր մյուս մասերն առեղծված,
Համակ խորհուրդը միսին ու իր անճառ ձևերուն՝
Ուր դըրեր է իր վերջին հանճարը միտքն Աստծուն։
Երբ կը տեսնե իր աչքով մերկությունն իր բյուրեղյա՝

Հրապույրներու այդ բոլոր շռայլման վըրա կ'ամբընա.
Այն ատեն ցունց մը կու տա փոթորկալից մազերուն՝
Որոնց քամին թափընդթափ, կ'երթա մարել սըրսըփուն
Ադամանդե ջահերն այն մարմարակերտ պալատին,
Մարմարակերտ պալատին ձեղնալույսերը ոեդին։
Ո՜վ մերկություն հրաշագեղ, Հավերժահա՜րս ամոթլյած՝
Որ խորհուրդի մը նման մըթության մեջ ես ղողված...
Այն ժամանակ կ'ոստնում վեր կիրքերուս մեջ ծարավի՝
Թողլով որ ձյուն ապարոշս իյնա ոտքիս տակ լուծվի։
Մըթարին մեջ առխարխափ Ջերքեզուհին կը գըտնեմ՝
Առաջնորդված իր կուրծքին հևքերեն բուռն ու վրսեմ,
Եվ քըրտնաթոր դաստակեն պինդ բըռնելով՝ մեկուսի
Կը պառկեցնեմ բազմոցիս մորթերուն վրա հովազի։
Օ՜, մագնիսով և լույսով թըրծուն մարմինն աղաջրի՝
Որ թևերուս մեջ կաթի, արյունի պես կը փըրփրի.
Օ՜, իր մազերն հորդաձուփ՝ որոնց մեջ ես կը լողամ
Խորը անոնց խեղդվելու վրտանգներով հարաժամ.
Օ՜, ջերմությունը սատափ բազուկներուն տարփակեզ՝
Որոնցմով վիզս զորեղ կը պարուրե օձի պես։
Հուսկ իրարու կ'միանանք մենք համբույրով մը հըզոր...
Երբ կը ծրծեմ բերնիս մեջ առած շրթներն իր բոսոր,
Երբ ժամերով կը քամեմ բյուր երակներն, հուլորեն,
Օ՜հ, այն ատեն ճաշակած կ'ըլլամ կարծես համորեն
Հին դարերուն հեթանոս դահամունքներն հազածո,
Հընդկաստանի համեմնե՜րն, համայն խունկե՜րն Արաբիո։

Ո՜, ՏԱԼԻԹԱ

Կարմրաշառայլ լույսերուն մեջ կը վառի
Կապելադ, ո՜, Տալիթա։
Բե՛ր գարեջուրն, և թող փրփուրն հոսանուտ
Մատերդ ի վար պրղպրջա։

Ի՜նչ փույթ թե ես ազնըվական կը թվիմ,
Ունիմ ձեռքեր քընքշենի.

Եվ ի՜նչ փույթ թե դուն աղջիկ մ'ես ջլեբաց,
Որ բանվորներ կ'ընդունի։

Կ'ատեմ կիներն՝ որոնք դիմացն հայլիին
Դիմաներկեր կը շաղվեն.
Կը ծրծցընեն Ներակույտի անդամներ
Տրուփանքներով տարրորեն։

Դահլիճներուն փարթամ կիները կ'ատեմ,—
Իրենց կավատն է՝ ոսկին.
Ձիրենք սիրողը կը սպառեն, և իրենք
Տան շընիկեն կը սպառին։

Բե՜ր, Տալիթա՜, բե՜ր գարեջուրն, ու նըստե
Ծունկիս վրա, թույլ տալով
Որ աղախնի կարճ քըղանցքեդ երևնան
Բումբերդ՝ սև գուլպայով։

Թող ճըրագներդ հյուծին մինչև առավոտ,
Եվ թող շեմին վրա երգե
Գինով աշուղն՝ հառած բիբերը մեզի,
Բիբերը զուրկ կըրակե։

Թող մազերուդ ոսկի հյուսկերը քակես
Գավաթին մեջ բյուրեղյա,
Եվ ծունկերես վար սըրունքներդ օրորես՝
Մինչև որ սերս հասուննա։

Ինծի ի՜նչ փույթ թե շրթունքներդ են խածեր
Նավաստիները կոպիտ,
Եվ հոսեր են քըրտինքն իրենց տրուփանքին
Աչքերուդ մեջ ու ծոցիդ։

Այսօր կ'ուզեմ կուրծքիդ վըրա գինովնալ
Ինչպես զինվոր մը արբուն.
Կ'ուզեմ պարպել գավաթդ, և դուն ալ պարպես
Սիրտըս՝ նուռի պես հասուն։

Այսօր կ'ուզեմ դահլիճին մեջ ծաղրըված
Սերըս առջևդդ պըղծել,
Խաբված հոգիս բերել ռամիկ աղջըկան
Գարեջուրով մը ծախել։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱՂԱՆԻՔ

Մորճագըմբեթ բաղնիքին ներքնադուռն հո՜ւյլ կը բացվի։
Երեկոս դո՜ւռն հաստաբեստ՝ որ կը ծեծվի միշտ թակով,
Եվ անընդհատ կը քըրտնի, կը ճըռընչե ուժասպառ
Հուրիներուն ետևեն՝ որոնք դանդա՜ղ կը մըտնեն։
Բոլոր մե՜րկ են ու չըքնա՜ղ,— թևերն իրենց ծալեր են
Լանջքերնուն վրա հոյաշեն՝ որոնց վրա կը դիզվին
Կույտերն իրենց ծիծերուն, պըտուկներով թըխագեղ։
Սատափազօծ սանդալներն հատակին վրա կը հընչեն.
Սրտերնուն հևքն աղվական, ձայներն իրենց քաղցրանույշ
Բաղնիքեն ներս կը փոխվին անդրնդասույզ ղողանջի.
Աստղերուն պես՝ լողացող մառախուղին մեջ աղոտ՝
Իրենց աչքերը խոնավ նըշողյուններ կ'արձակեն,
Եվ գոլորշին, իր տամուկ շըղարշներով, կը պատե
Մարմինն իրենց՝ որ պըտղիլ կը սկըսի ա՛լ քրտինքով։
Հուրիները կը լոգնա՜ն.— Պորտաքարին կիզանուտ
Ոմանք պառկած նըվաղկոտ նայվածքներով կ'երազեն։
Լուսացընցուղ գըմբեթեն՝ արևուն շողը ճերմակ
Ներս կը մաղվի՝ մարգարտյա հորդ անձրևի մը նըման.
Եվ ծրփանուտ գոլորշին կը դառնա ծով մ'արծաթյա՝
Ուր լյուղ կու գան կարապներն Արևելքի Հեշտանքին։
Ըսպածանին՝ որ կըպած է զիստերնուն լոռի պես,
Ա՛լ կը նետվի. մարմինները կը փոխվին արձանի.
Եվ մազերնին հյուս առ հյուս, ծովերու պես կը քակեն,
Ուրկե երբե՜մըն կ'իյնան գոհարներու հատիկներ։
Օ՜, ծամե՜րն այդ, ծամե՜րն այդ, որոնցմով ա՛լ կը ծփա
Կարծես բաղնիքը ամբողջ. և պորտաքարը մարմար
Կը թըխանա անոնց հորդ սևափըրփուր ալիքով։
Գըլուխն իրենց կը սանտրեն ոսկեդրվագ սանտրերով

Երկա՜ր, երկա՜ր, մինչև ծայրն անծայրածիր մազերուն
Կ'երթան իրենց մատվիները ծեքծեքուն ու դանդաղ
Միշտ լողալով կայծերուն մեջ մատնիի ադամանդ։
Անոնք երբե՛մն կը զգան նրվազումներ, ու երբեմն
Հանկարծակի կը սարսռան՝ երբ գմբեթեն կը կաթի
Ցուրտ ցող մ'իրենց ծոծրակին հեշտագրգիռ փոսին մեջ։
Ահա հարյուր ծորակնե՜րն, ահա մարմար ծորակնե՜րն
Իրար ետև կը բացվին՝ աղմկահույզ կարկաչով.
Մոխիրի պես գորշ շոգին կը բարձրանա ծուփ առ ծուփ.
Դատարկ գուռերը բոլոր կենդանություն կը ստանան.
Ջուրը կ'հորդի ամեն կողմ, ջուրը կ'երգե քաղցրահունչ.
Հուրիները կը լոգնա՜ն.— Գուռերուն շուրջ հավաքված
Գանովայի՛ Շընորհներ, կարծես իրար կը փարին։
Եվ կը խառնեն ծիծերնին, կը խառնեն ժիր թևերնին
Եվ սրրունքնին պաղպաջուն, և պորտերնին կոշարա՝
Ուրկե մուշկի հատիկներ, տարրալուծված, կը բուրեն։
Մարմարներուն վրա նստած զիստերն իրենց կ'ընդլայնին,
Ու կը խրմեն հեշտությունն իրենց տակեն սահող ջրին։
Ոսկի թասերը ահա քարերուն վրա կը հընչեն։
Տոսա՜խ թասերն, որոնք մերթ սիրտերու պես կը ճայթին՝
Այդ անպատում մերկությանց ծառայելու ժամանակ։
Կը քրրքրրի կավն ահա, ծոթրինաբույր կավը զով,
Ծաղկահյութով զանգրված՝ զոր մեր նախնիք կ'ուտեին։
Մազերն անով կը ծեփվին, ու կը դառնան ապրրշում։
Լանջքերն անով կ'օծանվին ու կ'ըլլան նման փրփուրի,
Անոր խյուսովը պաղուկ, և լրպրրծուն շաղախով
Կը զովանան հուրիներն, որովայննին կը հրդկեն
Գետի խիճին պես ողորկ ու թավշորեն օծանուտ։
Կ'եռան ջուրերը, կը լվան Կրրակներն այդ պաշտելի.
Կը փրրփրրին օճառներն՝ Մաքրություններն անգամ մ'ալ
Իրենց մածան լույսերուն մեջ մաքրելու ի խընդիր։
Ջուրն, որ ամեն կողմանե, պորտաքարին շուրջն ի վար,
Կ'հոսի կ'երթա՝ կոյուղին իսկ բուրումով լեցնելու,
Գո՛րշ է կավով ու կիրով, լեղի կիրով հերաթափ,
Եվ իր ուղխին հետ մեկտեղ մերթ կը գըլե, կը տանի
Թրխակուտակ թընճուկներ, անութներու գանգուրներ,
Եվ խրոիվներն աղվամազ այդ կիպերյան լուսեղեն
Արձաններուն կենեղուտ՝ որոնք այլևս ուժաթափ

Կը լեցընեն հուսկ թասերն, թասերը հուսկ կը պարպեն։
Գուռերն հե՛ղ մ'ալ կը հորդին, բաղնիքն հեղ մ'ալ կ'աղմըկի,
Ջուրն եռեփուն կը վազե, հե՛ղ մ'ալ կ'լողան հուրիներն։
Կը բըռընկի մորթերնին վարդի մը պես բոցավառ.
Եվ նրվազուն բիբերով, թասերն՝ իրենց գըլուխին,
Կուրծքերնուն վրա միշտ գրկած դեզերն իրենց ծիծերուն՝
Այլևս դուրս կը փութան, շարան-շարան, հևասպառ,
Անգայտացած շոգիով, կակաչներու պես բոսոր...
Օ՜, գանգուրներն հորդառատ՝ իրենց կուրծքին վրա մերկ,
Օ՜, գանգուրները խրխում, կաթիլներով ծանրացած,
Որոնք բոբիկ ոտքերնուն սատափ ցողեր կը ծորեն...
Ի՜նչպես պատմել ձեր օծումն, ի՜նչպես պատմել ձեր զարդերն՝
Երբ մարմիննիդ կը սըրբեք, և կուռքի պես կը հագվիք...
Թող համբուրեմ մատերնիդ՝ զոր դուք այս օր կը թաթխեք
Հինաներու գուշին խորն՝ իբր արյունոտ սըրտի մեջ։
Թող համբուրեմ մազերնիդ՝ կընդրուկներով օծանուտ՝
Որոնք, գիշերը, լուսնին տակ, կը բուրեն բարձին վրա.
Եվ հոնքերնիդ ծարուրված, ամպանըման թարթիչնիդ,
Եվ լա՜ նջքը ձեր՝ որ փաղփուն մանյակներով ոսկեշար
Ամուսնական անկողնին նըշողուն ջա՜հը կ'ըլլա.
Թող համբուրեմ պորտը ձեր՝ ուր ծըրարած կը ծածկեք
Թե՛ Արաբիո հաշիշներն և թե մուշկերն Ափրիկյան։
Ձեր տուներն ա՛յժըմ կ'երթաք գոհարներով բեռնավոր...
Թող սալարկները Քաղքին ձեր քայլերեն թարմանան...
Ցուրտը խածնե թուշերնիդ ու այտերնիդ բոսորե։
Վարշամակեն ձեր տամուկ, քըղանցքներեն ծրփծրփուն
Արտաբուրե՛ և հորդի՛ լոգանքին հոտը ծոթրին,
Եվ լեցընե գրոեհներն, հրրապարա՜կն և ուղի՜ն.
Ավելցած մասն այն հացին՝ զոր դուք բաղնիք կը տանիք,
Ջոր թասին մեջ կը դընեք, և կը ծածկեք ղենչակով,
Թո՛ղ արձակե՛ բուրումն իր՝ տարաշխարհիկ համեմով,
Չի այն ատեն փողոցներն Արևելյան Քաղաքին
Պիտի ըզգան թե Մայիսն հետքերնուդ վրա կը ծաղկի,
Եվ թարմացած մայթերեն Գարո՜ն, Գարո՜ն կ'անցնի։

ԳՐԳԱՆՔ

Անոր որ պիտի գա...

Ափը լճակին մենավոր՝
Ուր տընակս իմ կախարդորեն շիներ եմ՝
Ձեռն ի ծընոտ ըսպասեցի իր գալուն։
Նրռենիին տերևներուն տակ բոսոր,
Նուռի մը պես ճեղքված,
Սիրտս, շիթ-շիթ, արյոսն թորեց ծունկերուս՝
Կարոտը սե՜ռ արյունեց.
Եվ ամիսներ բովանդակ
Եղնիկի պես լացի գոհար արցունքներ՝
Ափը լճակին մենավոր։

Ու վերջապես ան եկավ
Այգիներեն քաղցրաբույր՝
Ուր ողկույզներն, ըստինքներու պես լեցուն,
Հողին վրա կը կախվին,
Մոր մը գրկեն, որ իր մազերը խարտյաշ
Ամեն առտու, ճաճանչներու պես, սանտրեց,
Շուշաններու պարտեզեն՝
Ուր տատրակներն Անմեղությո՛ւն կ'երգեն՝
Ան վերջապես ա՛լ եկավ։

Ո՛վ վարսագեղ հովվուհիս,
Որ աղբյուրին լույսեն ծըլած խոտին մեջ,
— Գալու համար իմ սիրույս—
Լըքեց անթիվ գառնուկներն իր մոլորուն.
Եվ զարնելով փարախին դռան քարին վրա
Խորտակեց սրինգը տոսախ՝
Խենթի մը պես կռկռողագին ողբալեն,
Ո՛վ վարսագեղ հովվուհիս։

Երբ ներս մըտավ իմ շեմես՝
Ձյուն կարապներս օձաճապուկ վիզերնին՝
Կարկառեցին դեպ անոր,
Դեպ մարմարե իր ոտքերուն համբույրին։
Եվ շունս հըլու, փորին վրա սողալով,
Եկավ լիզել կրունկներն անոր ադամանդ.

Ժըպիտներով աչքերը լի, վիթի պես,
Ան ներս մըտավ իմ շեմես։

Տնակըս բույրո՜վ լեցվեցավ,
Չի ծոթրիններ ծորեցան
Պատմուճանին բըղանցքեն,
Չի արևով օծված ոսկի մազերեն
Բուրյան մեղրեր ծորեցան.
Եվ բիբերեն՝ մարգրիտներու պես փաղփուն՝
Թափթըփեցան ասուպներ.
Տնակըս լույսո՜վ լեցվեցավ։

Մեզ գըրգարան շինեցի.—
Գարնան բոլոր վարդերը գոգ-գոգ բերած՝
Հարդարեցի մեր անկողինն հիմենի.
Նունուֆարներն՝ որոնց ծղոտները կակուղ
Հոտող սուրիս ներքև արյուն ծորեցին՝
Մեր գըլխուն տակ բարձ եղան.
Ծաղիկներովն հողին և ջինջ ջուրերուն,
Աղվամազով տատրակներու դունչերուն
Մեզ գըրգարան շինեցի։

Վարդերուն վրա փըրփրեցավ
Իր մերկությունն երե՛ք անգամ կաթնային։
Հընդկաստանի յուղերով
Լույսերու պես օծեցի շեկ վարսերն իր.
Եվ ծալերուն մեջ մարմինին՝ իմ բոլոր
Վարդերուն վրա փըրփրեցավ։
Ան, առաջին համբույրիս տակ խըռոված,
Օշնանի պես պըղպըջուն՝
Վարդերուն վրա փըրփրեցավ։

Ու քընացավ կուրծքիս վրա...
Օ՜, մատներս իմ՝ որ ժամերով լողացին
Մազերուն մեջ հորդառատ.
Օ՜, բերանս իմ՝ որ բերնին վրա ըզգըլխիչ՝
Խըմեց սափորն իր սըրտին։
Իրար հյուսված մենք բաղեղներ խանդակաթ՝

Ծաղիկներուն միջև հե՛ղ մ'ալ ծաղկեցանք։
Ան քընացավ կուրծքիս վրա...

Կարապներն ա՛լ թուխս նըստան.
Եղեգնուտին մեջ քամին մեղմ նըվագեց
Մըլարձակման մեծ օրենքները Գարնան.
Նունուֆարի հոտված ծղոտները դարձյալ
Ջուրին մեջեն արձակեցին փթիթներ։
Մերին սըրտերն ունկընդիր
Իրարու մեղմ տըրոփյունին՝ նընջեցին.
Եվ լիճին խորն, աստղերուն վրա թևամփոփ,
Կարապներն ա՛լ թուխս նըստան։

...ՈՎ ԼԱԼԱԳԵ

Կը հիշե՞ս, ո՛վ Լալագե.—
Ես քեզի հետ, ծանր ամիսին հըղությանդ,
Այգիս մեջ ման եկա
Պըտղաբերձ օր մը աշնան։
Մայրամուտին շողերուն տակ դալկահար
Ծառերն էին ոսկեձույլ։
Եվ ողկույզներն աչքերու պես հըրեղեն
Քաղցրություններ կը ծորեին հողին վրա։

Օ՜, իմ այգիս, օ՜, իմ այգիս կութքի՛ մեջ...
Հարյուրավոր ժիր գերիներըս հըլու՝
Երկայնքն ի վեր ցանկերուն՝
Կը կըթեին սարբինան.
Եվ կողովներն հյուսված էին հրաշագեղ
Մայրամուտի ոսկեառէջ նշույլներով...
Անապատի անծանոթ երգ մը՝ շուրթին,
Եթովպուհին խընձորենին կը թոթվեր
Ծիծերն ի վար, գոգին մեջ։
Հոն, տըղաներ խառնածին՝
Կանանչացած, լեղակե թուխ ձեռքերով՝
Կը ժողվեին ընկույզներ։

Անդին բլուրեն վար, դեպ Քաղաքը, ճանչնալուն,
Մեծդի եզներ, որոնց եղջյուրն այգեպանն
Որթատունկի սաղարթներով է պսակեր,
Կը քաշեին սայլերն ամբողջ բեռնաբարձ
Ողկույզներու դեզերով
Եվ ալիքով գինիի։
Եվ փարշին մեջ, աղբյուրներուն վրա բոլոր
Տերևներ լյո՜ւղ, տերևներ լյո՜ւղ կու գային...
Արդ հիշեցի՞ր դուն այն օրն, ո՛վ Լալագե։
Ակոսներուն և կողերուդ ընդմեջեն,
Այն ծանր ամսին հղությանդ,
Կ'անցներ ալիքն հողին հորդող ույժերուն։
Արեգակի արյունին նուռն էր՝ ծոցիդ
Մեջ հասունցած։ Բուներն ի վար ծառերուն
Կը ծորեին շիթ առ շիթ
Հույզերը՝ նման արցունքի։
Քու համբուրված մարմինիդ պես ծանրակիր
Հողն էր թըրջված, էր կպչուն
Քաղցուներով և մեղրով։
Անուշաբույր իր բեռին տակ կը կըքեր
Դեղձենին քե՜զ նըմանակ,
Քու ծիծերուդ նըմանակ
Ողկույզներն այն լեցուն էին՝ ապագա
Ծիծաղներով, ցընծությունով և կայթով։
Ու իրիկունն այն՝ կ'ուռեր կո՜ւրծքը հողին...
Հընձաններուն քովեն անցանք մենք դյութված
Խազմուզին բարկ բուրումեն։
Գերուհիներ, պարեգոտին հանգրըճած
Մինչև իրենց պորտին տակ,
Կը կոխեին խաղողն ատոք՝ թըրջելով
Մինչև իրենց պորտին տակն, ո՛վ Լալագե։
Վայրածբփիկ մազերնուն ծայրը համակ
Կը ներկըվեր բոսորագեղ հույզին մեջ
Եվ քովն իրենց՝ հընաբույր լայն կարասներ՝
Նվիրագործված ամեն տարի, ծոցիդ պես,
Լեցո՜ւն էին գինիներով— ծոցի՜դ պես—
Լեցուն շողո՜վ, հաղթանակո՜վ, բերկրանքո՜վ,
Հավերժակա՜ն կյանքերով։

Հետը անցանք ծիծաղներու, երգերու
Մեջեն առույգ, զոր աշխատող հոգիներ
Կը պոռթկային տերևներուն ներքևեն.
Ու բուրումներն աշունին
Կը հասնեին մինչև աստղերն արծարծուն.
Ու այգին, լի պըտուղներով բազմազան,
Կարծես կ'այրեր, կը ծավալեր խունկ մ'անույշ
Վա՛ղը, մինչև Քաղաքին վրա հեթանոս,
Քաղաքի՛ն վրա, որ միշտ, տոնի խրախճանքի մեջ,
Կը սպառեր հողն ու ավիշները հոգին։
Այն ատեն (թույլ կու տա՞ս ինձ
Խոստովանիլ, Լալա՛գե)
Ես ունեցա ընդվզումներ արյունի,
Ու ցանկացա արեգակին, հողին պես
Ուռճացընել ինձ մերձեցող ամե՛ն հունդ.
Ու— թո՛ւյլ տուր ինձ խոստովանիլ, Լալա՛գե—
Երբ դուն անդին՝ կարկառուն նուռը ծառեն
Կը քաղեիր, ու հետո
Կը խածնեիր լիաբերան հեշտանքով
Անոր բոսոր մարգրիտներուն շարքն անույշ՝
Ես ասդին թուխ Եթովպուհին— որ ջլեբաց՝
Հընձանին մեջ կը ճըմլեր կուզն—
Համբուրեցի՛... բրոնած հընդիկ ծամերեն
Պառկեցուցի՛ ժըպտագին գլուխը կուրծքիս,
Եվ հեշտաբո՛ւրբն շրթներով, Լալա՛գե,
Համբուրեցի՛...

...Բայց դուն ինչո՞ւ կ'արտասվես։
Այն հեռավոր աշունին
Բուրումներուն մատնըչությանը համար,
Ո՛վ աշնագեղ Լալագե,
Արտասվել չա՞րժեր այսօր։

«ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ԴՈՒ Ի ԿԱՆԱՅՍ...»

Մարիա՛մ, այս անկողնին վրա երբ նըստիս
Ու ես առջևդդ, գորգին վրա ծընրադիր,
Համբուրեմ խած երակներն

Այդ ձեռքերուդ՝ որոնցմե լույս կը ծորի,
Մարիա՛մ, տաք շրթունքներուս տակ կը զգամ՝
Էա՛կ մ'որ, լուռ, արյունդ ումպ-ումպ կը խըմե։
Այն գիշերեն՝ երբ մազերդ այդ բարձին վրա
Անփութորեն լեցուցած՝
Ծոցդ հաճույքին բացիր, և բուռն հաճույքեն
Քըրտինք մ'առատ քունքերդ ի վար հոսեցավ,
Եվ կուսությունդդ մեռավ
Արգանդիդ մեջ և աչքերուդ երկնաթույր,
Այն գիշերեն՝ թարթիչներեն կոպերուդ
Մե՛ղրը ծորեց, դուն եղար
Հեզահամբույր, լրռակյաց,
Ջյունափետուր դուն աղավնյակը եղար՝
Որ արևուն տակ կրծկըված կ'երազե
Բույնին վըրա շինվելիք...
Կը դիտեմ, արդ, քաղցրիկ հյուծումը դեմքիդ
Եվ բաց շապկիդ մեջեն ծիծերդ՝ որոնց մեջ
Կը բաժնըվի կյանքդ, և դուն
Բաժնըվելով մա՛յր կ'ըլլաս։
Մեն մի զարկին մեջ երակիդ՝ ես կը զգամ
Տրոփյունը նո՛ւյն իմ սըրտիս
Եվ բողբոջումը արյունիս ծաղիկին՝
Որուն բուրումը կ'արբեցնե զիս և քեզ
Եվ սերն է մեր երկուքին։
...Օրհնյա՛լ ըլլաս, Մարիա՛մ,
Դո՛ւն որ անհուն գորովով
Կողերդ ինձի՛ կու տաս, և ո՛սկրըդ՝ ուրիշ
Ոսկրի մ'համար կը քամես,
Դո՛ւն՝ որ կ'ըլլաս ամենեն
Մաքուր ակոսն՝ ակոսներեն բեղմնավոր,
Ու ամենեն չըքնաղ թաղարը՝ բոլոր
Թաղարներեն շուշանի՝
Օրհնյա՛լ ըլլաս հավիտյան։
Դո՛ւն՝ որ, ըզգոն, կը կըրես
— Խեփորին մեջ ինչպես մարգրիտ մը ազնիվ—
Աստվածատիպ Մարդը խո՛րն այդ արգանդիդ՝
Օրհնյա՛լ ըլլաս, Մարիա՛մ...

ԲԵԳԱՍ

Ընկեր Մուրատին և իր ձիուն կայծակնավազ

Բե՛գաս, հրեղեն ձիս,
Երկնամուխ լեռն արևուն մեջ կը շողա
Ձերթ շափյուղա.
Իր կատարին աստղապսակ՝ պիտի զիս
Տանիս։
Ձետեղեցի քամակիդ ավասիկ թամբրդ՝ ծեփված
Ադամանդով,
Եվ դրրի սանձրդ՝ հյուսված
Շանթով.
Եվ նուսիդ վրա ձերթ մրրրիկ
Ես նետվեցա ավասիկ։
Դե՛հ, թող մրտրակրս՝ հավետ լույսերու մեջ թաթաղուն՝
Կողերուդ շուրջը սուլե օձի նման գալարուն.
Եվ դուն
Անդունդներուն վրրայեն և վրրայեն ձյուներուն
Տար զիս
Արևո՜ւն։

Ահա դափրեց բարձունքն ի վեր բարձրավիզ.
Ռունգներն հրզոր բացվեցան
Լեռնեն իջնող պաղ քամիին հանդիման.
Եվ բաշերն իր լուսալիր
Եկան մինչև թևերուս մեջ փրրփրրիլ։
Գլուխն ընդվիզ
Ա՛յնքան հրպարտ կը բրոներ՝
Որ կը հրպեր
Կրզակիս։
Ու ան վարգե՜ց, վարգե՜ց, վարգե՜ց քառատրոփ...
Լեռը թրնդաց.
Կը ցայտեին սրմբակներեն ոսկեմած
Աստղեր բորբ.
Փապարներուն մեջ ամփոփ
Հրդի օձեր ձագերն իրենց վիժեցին,

Բայց իմ ձին
Լոկ կը լրսեր պինչերուն մեջ մրռընչող
Քամին։
Օ՜, երբուծն հույր՝ մրկանունքով բրլրավետ՝
Ուր արյունն իր զրսպրված հրրաբուխի պես հավետ
Կ'եռար,
Կ'ընդհարեր միշտ սեպերուն դեմ մրրրկաբար
Ու վերքերով կը պանծար։
Օ՜, պոչը իր լուսացրնցուղ, աղեղնաձև,
Որ գավակեն կը հոսեր
Ձերթ արև։
Օ՜, գլուխն իր պերճասոսորդ, մեծդի բիբերն՝ ուր կ'այրեր
Կարծես անհունն արփախայտ.
Եվ սրմբակներն ոսկեկուռ՝ որոնց ներքև իբրև պայտ
Լուսընկաներ գամեցի,
Ժայռերուն վրա Իդեալի մը պողպատ
Կ'երգեին երգն առնացի՝
Զոր խրմելու համար ես սիրտրս բացի
Ձերթ ծովու
Խեցի։

Ու բարձրացա՜վ, բարձրացա՜վ
Վայրենարշավ.
Միշտ նորահայտ միջոցներ անակնկալ բացերու
Նայվածքն հազիվ ընդգրկած՝ արշավն ընդհուպ կը սպառեր
Լեռնալանջին վրրա հրսկա նոճիներ
Եվ գիհիներ խրնկարկու՝
Որոնց մեջեն ան կ'անցնի նմա՜ն կայծակին։
Ի զո՜ւր մազերս հողմավար կատարներուն շոճիին
Կը կառչին,
Ի զո՜ւր ծաղկած վարդենին բռնել կ'ուզե քղանցքե։
Հարսիս պես.—
Անոնց մեջեն ես կը վարգեմ սրրընթաց.
Ուսերս ամբողջ, ասպանդակներս ոսկեմած
Ծաղիկներ հիր կ'ողողեն...
Ես կը վարգեմ թամբին վրրա լուսեղեն
Ձերթ թառած
Շահեն։

Ահա պարեխը կու գա թումբ կանգնելու արշավիս,
Բայց իմ ձիս
Փայլակնաթափ դռույթին տակ կը քանդե զայն քար առ քար,
Կը հեղու
Լեռն ի վար։
Ո՛ւր որ դոփե սմբակն՝ հոն կը բանա վիհ ծուխերու,
Ո՛ւր որ բախե լանջը գոռ՝ կը թոթափե փրշրրված
Կայծ։
Կը բարձրանա ամպին վրա իր կուռակած փոշիին.
Աստեղաբիբ կը լողա լուսալիքին մեջ բաշին.
Կը վրընջե ցընծագին՝
Ռունգները բաց
Անհունի՛ն։

Վա՛ըը, այնտեղ, երանավետ այգիեն
Ցանկապատին վրա ծրռած ողկույզներու բիբեր մեն
Ի զո՛ւր, ի զո՛ւր կը կանչեն
Զիս իրենց.
Եվ ծառեն վար նուռ մը ճեղքված՝ բերնի պես՝
Կ'աղաղակե ետևես։
Եվ կիներ, վա՛ռն, հովիտներու աղբյուրեն
Ի զո՛ւր ինծի կ'երկարեն
Լույս սափորներ՝ ուր կրթեր են հեշտությունն
Իրենց մարմնույն
Եվ համբույրի մ'անձկությունով՝ համորեն
Գինին իրենց ծոցերուն։
Փոխան իրենց օրորին՝ երիվարիս ցունցը խեռ
Սիրեցի,
Փոխան իրենց գրգվանքին՝ հոգիիս վրա լիզումներ
Բոցի։
Շուրջս ի զուր ջրվեժներ կը մոլեգնին ու կ'երվեն՝
Կաթի նման փրրփրադեզ.
Հետո մեղմիկ կը սահին զմրուխտ մարգին ընդմեջեն
Օձի պես.—
Իրենց ջուրեն՝ ես ավելի կը սիրեմ
Գաղջ փրրփուրներն երիվարիս երախին՝
Զոր խրլած բո՛ւռն քամին
Կը լրվա

Անոնցմո՛ւ բոց աչքերս իմ, կամ արևուն երկնաճեմ
Աչքն հրսկա։

Վե՛ր, դեպի բարձո՛ւնքը, Բե՛գաս...
Կրռանակուռ լույս պայտերդ ահավասիկ կը թաղես
Պորտերուն մեջ ոպնիազ
Վիշապներուն.
Եվ դուն
Ջախջախելով հրեշներուն
Կուռ պատյանին մեղեսիկներն հրրակեզ՝
Կը ծառանա՛ս, կը ծառանա՛ս մոլեգին
Կատարն ի վեր հաղթական
Լեռան։
Ընընջող գազան մ'ավասիկ խրրխընջյունեդ արթնցած
Նետվեցավ ծոցը վիհին
Զարհուրած։
Եվ անգրղներ ժայռերու կատարներեն կը թափին
Զորերուն խորը մրթին։
Ահա փախչող վարազահավ մ'իր մախիզ
Խրլուրդ բզրկտող կրտուցեն,
Վերեն,
Շիթ մը արյուն կայլակեց իմ գրլխարկիս
Արծվային
Փետուրին...
Ա՛լ քեզ համար ամայի՛ են գագաթներն ահարկու.
Ո՛չ ջրվեժի մրռունչ կա, ոչ հրրավեր կիներու.
Մեզի չի՛ հասնիր կալին մեջ պոռոչող ձայնն երինջին,
Կարծես արդեն մեր գլուխները աստղերու կամարին
Կը դրպչին։

Վե՛ր, վե՛ր, Բե՛գաս...
Բայց, հեռուն, ի՞նչ սպիտակ տարածություն լուսափառ
Ճառագայթեց աչքերուդ մեջ ամեհի.
Ցուրտ սլաքներով դրժպրհի
Լուսնակին պես կ'արյունին ահա բիբերդս փարփառ.—
Օ՜, Բեգա՛ս,
Կատարներուն ձյունն է այս.
Ջրմեռներու մեջ բյուրավոր՝ բյուր աստղեր

Իրենց ծոցեն սառնաշիթ
Հո՜ն են, հո՜ն են տեղացեր
Ձյունն այս վճիտ։
Բե՛գաս,
Այդ ծովուն մեջ բյուրեղե
Նետվե՝
Դրլբնի լանջքով հորդե ուղիդ երկնահաս։
Լողա՜, լողա՜...
Անապատի ավազին մրրրիկներուն փոխարեն՝
Փորիդ ներքև կը փրրփրին
Մրրրիկնե՛րն այդ լուսեղեն
Ձյունին։
Նա՜վը եղիր կենդանի՝
Որ զիս առած կը տանի
Աստեղազարդ նավահանգիստն հեռակա
Երկնի։
Լողա՜, Բեգա՛ս, լողա՜...
Մեր Երազին ճեղքե՛ ակոսը հրսկա։
Բացած փոսերը պայտերուդ լուսագին,
Հետքիդ վրրա, շուշանի պես թող ծաղկին։
Ի՜նչ փույթ թե ձյունն իր տակ ծածկած է հավետ
Նենգությունն անդունդին,
Եվ մենք կրրնանք ըլլալ հանկարծ գահավեժ.
Միշտ Աստղերո՜վ թաթախված պիտի իջնենք խորն ալքին
Ձերթ ջրրվեժ։
Բե՛գաս, Բե՛գաս, կաղնիացո՜ւր վիզրդ վեր.—
Ահավասիկ ձյունահյուս մ'աստվածաբնակ գագաթեն
Մրրրրկելով ճամփուն վրա փրփրուն փոշի մ'համորեն
Կու գա մեզ։
Ո՜հ, ի՜նչ պայքար, Բեգա՛ս.—
Անոր վրրա պերճասոսորդ կը խոյաս.
Առջի ոտքերդ լուսաղրրոշմ պայտերով
Աշխույժով
Արդեն ահա փրխրուն ծոցին մեջ անոր
Կը մրխրրճին ահավոր...
Ո՜վ Ձիս-Աստված,
Այն հյուսն արդեն պորտիդ ներքև է լայնշի
Եղած

Փոշի՜։
Լո՜ղա, Բե՛գաս, լողա՜...
Ձգեցեր ենք պատմուճանն կույս տարին փողփողուն,
Բուքը կ'հալի լանջքիդ տակ, ռունգներուդ մեջ բաբախուն։
Դե՛հ, խոյանք մ'ալ, ոստում մ'ալ,
Ձի բարձունքները շողալ
Կը սկսին,
Հորիզոնները ծավալ
Կը բացվին։
Դե՛հ, խոյանք մ'ալ, ոստում մ'ալ.—
Նրպատակի կատարին ադամանդները անհալ
Շողացին.
Եվ իմ ձին
Փայլակելով Գաղափարն աչքերուն մեջ ռոշնական՝
Կոթողվեցավ— պինչերը բա՜ց արևուն—
Լեռան
Գրլխո՜ւն։—
Օ՜, Բե՛գաս։
Կողերուդ մեջ գալարվող լիաթոք հեքրդ ահա
Ռունգներեդ դուրս՝ ողողեց հորիզոններն հեռակա։
Օ՜, Բե՛գաս,
Ահա Կապույտը վրճիտ՝ շողակնաշող ալիքով՝
Ձերթ ծով.
Ահա Արևն հրրմազ
Լոկ ի՜մ վրաս...
Տիրապետման մեջ լույսին կանգուն՝ թագն ենք աշխարհին,
Երկինքը՝ թագը մերին.
Եվ մեր ներքև Երկիրն՝ բուռ մը ցեխի հանգունակ,
Ամպերն են մեր ոտքին տակ՝
Որոնք ծույլ-ծույլ կը սողան կայծակներով բեռնաբարձ.
Կը տեսնե՞ս վարը,— հանկա՜րծ
Թուխ ամպրոպի մը խորեն փայլակ մը աչքն ամեհի
Կը բանա,
Հետո դարձյալ՝ խուլ որոտ մ'արձակելով կը թաղվի
Երկրիս ցեխին մեջ հրսկա։
Կը տարածվի քու խրխինջդ անհունին մեջ ալեկոծ։
Եվ աստղերուն ժայռակույտերն ոսկեզօծ

Շունչեդ ահա կ'արծարծվին
Իբրև բոց։

Բե՛գաս, ահա՛ վաթ կիջնեմ թամբիդ վրայեն ջերստին,
Բաշերուդ հետ կը հանձնեմ անտառներն իմ մազերուն
Հովերո՛ւն.
Եվ կը թողում՝ որ Մրրիկն իր պատմուճանը ծրփուն
Հագցընե հաղթ մարմինիս,
Եվ լոգցընե Արեգակն իր շողերով ոսկեզօծ
Աստվածացած միսրս բոց
Եվ հոգիս։
Տե՛ս, աշխարհիս զառամած քամակին վրա կոթողուն՝
Իր հերկերուն մեջ թափուր՝
Սիրտս, ուր հանճարքս կ'ապրի, կը սերմանեմ լիաբուռ.
Ի՛նչ որ Արևն ինձ կու տա՝ զայն կու տա միտքս Մարդուն.
Տե՛ս, աստղերու ժրպիտներ և հուր վարդեր անթառամ
Կը տեղամ
Որդիներուն մեջ կավի.
Կը տարածեմ Երկրիս վրա արշալույսի ծիրանին.
Մինչդեռ դյուրավ կբրնայի
Տարածել շուքն հասակիս՝ Երկրագունդին վրա փանաք
Ու խավարե՛լ զայն համակ։

Բեգա՛ս, Բեգա՛ս, այժմ երբ ե՛ս կը պարզեմ
Առագաստները Մտքիս լույսին վրրա ծովացած
Եվ քընարիս լարերով՝ քու բաշերովդ հյուսված՝
Կ'երգեմ
Արեգդեմ
Ազատությունը Մարդուն և գերությունն Աստուծո,
Բեգա՛սդ իմ հաճո,
Դուն իմ քովիկիս կանգուն
Բաշերդ ու պոչդ հանձնելով ցրտաասարսուռ քամիին՝
Վիզդդ ծռեե սիրատուն,
Ծռե՛— և քու առջի ոտքովդ նրբին
Փորե՛ ընդթափ կույտ ձյունը կույս բարձունքին.
Փորե՛, Բե՛գաս, փորե՛, մինչև որ գտնես
Լուսածաղիկ Էտելվայսները անտես,
Եվ ճարակիս— նոթի Մտքիս հետ միասին—

Էտելվայսներն Երազին։
Հոս, ձյուներուն ու լույսին
Մեջ թաթախված՝ խաղաղորեն կը ծաղկին
Էտելվայսներն Երազին։

ՀԱՐՑԸ

Փա՜ռք սարբինային.— Ներոն կ'արքենա

... զի յոյժ գեղեցիկ էր, և երգէր ձեռամբ։
Մ. ԽՈՐԵՆԱՑԻ, ԳԻՐՔ Բ

Ա.

Գարնանամուտ երեկո մ'իր պալատին մեջ մարմար
Բակուր, Սյունյաց Նահապետ, շքեղ հանդես մը կու տար,
Երբ Ուղևոր մը հանկարծ մրրրկարշավ կը հասնի
Լուսընկափայլ ճամփայեն՝ մեծ դրոան քով արքենի։
Ձին կը հևա, ու բերնին փրրփուրն հողմեն միշտ խլված՝
Կը թրրջե թամբն համոբեն, ասպանդակներն ոսկեմած։
Հեռուներեն ան կու գա, զայս կը մատնե թե՛ փոշին,
Որ դիզվեր է խավերուն մեջ թիկնոցին թավիշին,
Թե՛ նրժույգին վրրընջյունն աստեղացունց մաքրությամբ՝
Որ կը խընդրե ախոռին գոլուտ հանգիստը անթամբ։
Բակուր այդ հյուրն իր անձեն և անունեն կը ճանչնա.—
Բագրատունի Տրդատն է, հզոր իշխան, ու փեսա
Տիրան հայոց արքային, որ կը փախչի Մարաստան.
Կը փախչի ան՝ զի կինն իր, Տիրանի դուստրն աննըման,
Գանապծեր էր խրստիվ, պալատեն դուրս արտաքսեր,
Խուզելով, իրր անարգանք, անոր խարտյաշ գանգուններ։
— Տրդա՛տ, կ'ըսե Նահապետն, այս գիշեր քուկդ է իմ տուն.
Մարաց աշխարհն հեռու է, և դու անշուշտ պարտասուն.
Մըտի՛ր սըրահը տոնին, թող իրարու դեմ փըշրին
Մեր բաժակներն, ու մեր սերը մրկըրտե թող գինին։—

Եվ կոչունքի կը բազմի Բագրատունին վտարանդի
Աջ կողմը ճիշտ Բակուրին՝ որ իր կարգին կը նըստի
Գահի մը վրա՝ որուն լայն թիկնատեղն է քանդակված
Բագոսը՝ եզ մ'որթերով պըսակելու ըզբաղած։
Սեղանին շուրջը արդեն Մեծամեծներն հայկազուն
Դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն
Աստիճանին համեմատ, այլ սուրերու մեծության։
Հոն են ճորտերը Սյունյաց գավառներուն երկտասան,
Լեռան ազատ զավակներ, միշտ զրահի մեջ կուրծքերնին՝
Որոնք հըզոր կումբի պես ջահերուն տակ կը փայլին։
Հոն կան նաև բըդեշխներ, ազատանին քաջարի՝
Որ կը պատմեն թե ի՛նչպես կ'որսան վարազը վայրի։
Ազնըվատոհմ սեպուհներ ոսկեճարմանդ խլաներով,
Գինվո բաժակ ի ձեռին կը ծիծաղին կես գինով։
Պալատին մեջ ծով մը կա ծիծաղներու և լույսի՝
Որ գաղջորեն ծուփ առ ծուփ դռներեն դուրս կը հոսի։
Կոչնականները զարմիկ պատերն ի վար կախեր են
Որսի գալար շեփորներն ու վահաններն ոսկեղեն.
Եվ նիզակները, դեռ թաց վարազներու արյունով,
Տըրձակ-տըրձակ կը հանգչին հըսկայափեղկ դըռան քով։
Լայնակոնք սրահը քըսան սյուներով է կառուցված՝
Որոնց վըրա կը շողան քըսան ջահեր դեմ դիմաց.
Եվ այն քըսան սյուներուն մեջեն քըսան գերիներ
Կը բերեն թանկ սաներու վըրա՝ խորված երեներ՝
Որոնց շոգին քըմպարար կը բարձրանա ոլորուն
Ջահերուն շուրջ կազմելով խըլատեռեր ծըփծըփուն։
Ըսպասներն ալ սեղանին մեծարժեք են. և կարծես
Արծաթազօծ դրգալներն ու դանակները նույնպես
Փողփողումին տակ լույսին փայլակներ են աղմըկոտ՝
Որ կը ծըփան դիպակյա նըվարտանին վրա փութկոտ։
Ծաղկակալներ են դըրված երկայնքն ի վեր սեղանին,
Որոնցմե եղկ բուրումներ շուրջը արբշիռ կը սըփռին.
Ծաղիկներուն ընդմեջեն, քըրքիջներուն հետ թըրթռուն,
Կը նըշմարվին ըսպիտակ ակռաներն հույր ճորտերուն.
Եվ գինին թանձրը հոտն և խահերուն գոլորշին
Վեր բարձրացած՝ կը սքողեն կատաղությունն այդ ճաշին։
Կու գա համեղ գերերին՝ որով Սյունիքն է առատ,
Ջոր եփեր են տատրակի սըրտիկներով անարատ։

— Աղավնիի սիրտ ուտենք,— կը գոչե ճորտը Բալի,—
Որ ունենանք վագրի լյարդ։— Ես այդ մասին ավելի,—
Կը կատակե հանկարծ մին, կ'ընտրբեմ սի՛րտը կընոջ։—
Ծիծաղներով այն ատեն կից վերնատունը ամբողջ
Կ'ալեկոծի, ուր ժողվված հայ տիկիններ բազմական
Կ'ընեին նույն խրախճանքները նույն շուքով տոնական։
Այն ատեն ներս կը մտնեն երկու ջուխտակ գերիներ,
Կրելով երկու ջուխտ վարազ՝ սաներու վրա ոսկեհեռ.
Եվ ուրիշները նույն թիվով՝ իրենց ուսին վրա ունին
Ըսկուտեղները նուռին, սափորներն հորդ գինիին.—
Հաղթանա՜կն է այս խրախին։ Հեղեղ մ'հանկարծ վարդերու,
Իբրև ամեն տիկին վար արձակեր սիրտն իր աղու,
Վերնատունեն կը տեղան կոչնականաց վրա գինով։
Քանի մ'ասպետ կը կոփեն վահանն իրենց աշտեով։
Աղավնիներ ավասիկ կամարին տակ կը ճախրեն,
Եվ ծայրն իրենց թևերուն մըխըրճելով ծուլորեն
Շատրվանին մեջ՝ որ լույս կ'ողբա բակին առընթեր,
Կու գան իրենց թռիչներեն վար անձրևել մարգրիտներ։
Ու վարդ, տատրակ հոն խառնված հեղեղներով ճաճանչի
Կ'ստեղծեն դրախտ մ'ուր կարմիր Հեշտության նուռը կ'աճի։
Մատրվակներ ավասիկ կարապնավիզ սափորով
Բաժակներուն մեջ գինին կ'հեղուն դեմքով մ'անխըռով։
Բագրատունին այն ատեն, կորովաբիր Տըրդատես,
Դաշխուրանն իր վեր կ'առնու. և.— Ասպետնե՛ր,— կ'ըսե,— ես
Վանատուրին սերմնահորդ, և տըրփածոց Աստղիկին,
Անոր՝ որ հուրն է արու, անոր՝ որ հողն հեշտագին,
Կ'ըմպե՜մ ի փառս։ Անոնց տոփին ու համբույրները հավետ
Այգիներուն մեջ ձեր թող ծավալանան ծաղկավետ։—
— Ձեր թագավոր աներոջ,— կ'ըսե Բակուր,— սուրբ կյանքին
Ըմպենք, որ մեզ կը պահե խաղաղության մեջ հեշտին։
— Թագավորի՜ն, որ կ'հանգչի,— աղաղակեց ճորտ մ'հանկարծ,—
Ձյուներուն մեջ Մասիսի։— Այս հայտնությունն հեղակարծ
Ներկաները ապշեցուց։— Մեռա՜վ Արքան մեր հայոց...
— Արդ իր դիակը կ'իշխե հավերժանիստ սառին ծոց։
Գուժկան մ'երեկ ագռավի երագությամբ հոս հասավ,
Պատմեց. թե ի՛նչպես Տիրան խեղդըված էր բըքազրավ։
Կ'ըսեն թե թագը միայն ձյուներեն դուրս է մնացած,
Որուն վըրա կը շողա դեռ հայ արևը Մասյաց։—

Շրջան ըրավ սև լուրն այս պալատին մեջ բովանդակ
Գինեփրրփուր բաժակ մ'ավելի և՛ըս արագ,
Որ միմիայն արբեցուց բերկրանքներով անպատում
Տրդատի սիրտն՝ որ մինչև արքային մահն էր տրրտում։
— Խրմե՛նք, ըսավ, ու տոնենք Արշակունի գահերուն
Թավալումներն անդունդի և մեղկանքի մեջ փրցուն։—
Եվ հազիվ հապ շրթունքներուն դրրավ գավաթն հրահրուն՝
Վերնատան մեջ աչքերն իր գույգ մ'աչքերու դիպչցան։
Կին մը իրեն կը նայեր, կը զարդ սրրտին մեջ շրմար.
Իր կազմին վրա կ'հիանար, առնագեղ, խրոխտ և հրզոր։
Հրզոր՝ վիզովն ադուծի և բիբերով աստղահեռ՝
Որոնց բոցեն այրելու համար անգամ մ'իսկ բավ էր։
Որ անոնց մեջ հանդրգներ առնարտաղծ կին մը նայիր։
Հրզոր՝ մարտիկ գլուխով, լայնշի լանջքով անաբդել՝
Որ ճոշանին մեջ կ'ուռեր կռհակի պես փրրփրազեղ.
Հրզոր՝ թիկնոյ մեծադիր, բազուկներով առնագեղ՝
Որոնց միջև կը սիրեն կիներն թրբ օ՛ձ գեղածալ
Բյուր ձևերով գալարվիլ ու ծրվարիլ ու տաքնալ։
Վերնատան կինը տարտաց։ Տրդատ մեկ ձեռքը հենած
Սեղանին վրա, մյուսով տաշտը բերնին, գլխիբաց,
Անոր կապույտ աչքերուն հառած աչքերն իր մրթին՝
Խրմեց երկա՛ր— փրրփուրեն մինչև մրրուրն— իր գինին։
Հետո ծոցեն դուրս քաշեց խուրձ մը դեղձան մազերու,
Մութ ամպեն դուրս մացառվող ճաճանչներու պես ադա,
Եվ անով իր գինիոտ բերանն աղեկ մը սրրբեց...
Անոնք մազերն էին իր գառոզ կնոջ՝ զոր բրածեծ
Ըրավ ու ա՛յսպես ահա ծաղրեց այն էգն անուղղա,
Եվ ապշեցուց ամենքն այդ իր անսովոր գործին վրա։
Հազիվ Տրդատ սեղանին դրրավ գավաթը թափուր՝
Լույսերու հոծ ծովուն մեջ թնդաց սրրահն ընդհանուր.
— Վարձա՛կն ահա, տեղ բացեք, վարձա՛կը, վարդ տեղացեք.
Մազերուն մեջ, ոտքին տակ մարգարիտնե՛ր լեցուցեք։—
Սանդուղներեն վերնատան վար կ'իջներ կին մը խաժակ.
Կը թրովռային դրլխուն շուրջ ադամանիներ ըսպիտակ։
Ճաճանչավուխտ քողին մեջ սասրդ մ'էր ան՝ որուն մեծ
Աչքերուն մեջ սևեռուն Տրդատ գինին իր խրմեց։
Այն ժամանակ սրահ մրտան հինգ ծերունի գուսաններ,
Ուսերնուն վրա վիժանուտ գանգուրներով լուսահեր.—

Ոլորակեց տավիղն հեշտ, փանդիռն հնչեց փառակոչ,
Նրման արծաթ կարկուտի երգ ջաղբեց դա՛փը դողդոջ.
Եվ յոթնաղի քընարին որովայնին մեջ տոսախ
Նրվագի ծով մ'ըսկըսավ մրրրկոտիլ աղեբախ։
Հետո հանկարծ միացած բոլոր լարերն իրարու
Պանծացուցին անգամ մ'ալ փառքերը հին դարերու,
Երգը հրզոր դիքերուն, Դիցուհիին ոսկեմայր,
Երգն աստղահմա քուրմերուն՝ որոնք բագնին վրա մարմար
Վրզան օձեր այրեցին բոցերուն հետ ծառացող.
Երգն ասպետի մը զարմիկ, դյուցազներու զինաշող՝
Որոնք նրման կայծակի՝ տեգերն իրենց պիրկ ձեռքին՝
Փաղանգներուն կազմը կուռ արյունառուշտ ճեղքեցին.
Հընչեցուցին երգերն հուսկ մահենական պարերու,
Սերն հայկազուն կույսերուն և հարճերուն գինարբու՝
Որոնք այգվույն զովալից հովանիին տակ պառկած
Լույս ծոցն իրենց կը թողուն սեպուհներուն համար բաց։
Կոչնականները համուռ դեպ գուսանները դարձան,
Որոնց մեջ տեղ ըսկըսած էր պարել կին մը դեղձան։
Վարձակն էր ան, Նազենիկ նազելագեղ անունով,
Հասակն ամբողջ կը թրրթռար բարտիի պես հողմախառով.
Դաշներգը իր ջիզերուն դաշներգին հետ լարերուն
Կը միանար, կը սրփռեր համանրվագ մ'հարաճուն։
Յոթն հարճեր հերքը խարտյաշ մատվրներով նախանձոտ
Արաբական յուղի մեջ օծաներ են քաղցրահոտ.
Եվ գլխուն շուրջը պրսակ մը վարդերու հյուսեր են՝
Որոնք եթե ճրզմրվին անշուշտ արյուն կը ծորեն։
Կը շողշողան ունկերուն ծայրը օղեր փողփողէջ
Աստղերու նման ցոլալով անրակներուն փոսին մեջ.
Արմուկեն վեր աջ բազուկը կը խաչնե սեղմարեն
Լուրթ մարգրիտով հեղուզված ապարանջան մ'ոսկեգեն.
Իսկ վիզեն վար մինչև ծայրն ըսատինքներուն անապատուկ
Կը բոլորվի վառ մանյակ մը լույսերով հեզեղուկ.
Եվ այնքան նուրբ է զառաջն՝ որ կը բրխե դեպ ի դուրս
Ազդրներուն գաղջաթյունն և կաթնագույնը սքնդուս.
Մուճակներուն մեջ խարտեշ կապապարված ոտքերն ա՛լ
Դոուլթ տալով կը սկըսին հատակին վրա պար գառնալ։
Կոչնականները լրտիկ հիացումով քարացած,
Մարմնակարկառ, ապշոպյալ, աչվրներով լայնաբաց,

Կը դիտեն զինք։— Նազենիկ նախ կ'օրորե մեղմորեն
Ալապաստրե ուսերուն վրրա գլուխն հրրեղեն՝
Ներկաներուն շրրջելով զույգ մը աչքերը աղվոր՝
Ուր կ'ընկղմի մարդ հեշտին, բայց դուրս կ'ելլե վիրավոր։
Վեր կը վերցնե հոլանի բազուկներն իր հուլորեն
Լայնշի քողին կապուտակ խաղաղության ընդմիջեն։
Զույգ մը տոսախ բամբիռները մատերուն մեջ ճարտար
Հանկարծակի կը հրնչեն, կ'ըլլան պարին կառավար։
Մարմինն ընհուպ կը զոփա, կու տան ոտքերը դրոույթ,
Եվ ան իր իսկ շարժումին անդունդին մեջ հորձանուտ
Կարծես վայրկյան մը այլևս աչքերե կ'անհետի՝
Ինչպես երկնի մեջ կորսվող լուսադայլայլ մեղեդի։
Օ՜, այդ մեծ պարն հեթանոս՝ որ Աստղիկի կը ձոնեն,
Գեղեցկության այդ աղոթքն, աղոթքը այդ մրսեղեն.
Օ՜, այդ իրանը ճապուկ ելևէջովն ըստինքին՝
Որոնց մեջ կաթն իսկ կ'եռա հուզումներեն սաստկագին.
Օ՜, թևերն իր լուսածղի՝ օձերու պես պարարակ՝
Կարծես երկար կըրթըված կախարդ սրինգով ներդաշնակ.
Եվ զիստերն իր սարսռագեղ, գեր երաստանը շամբույշ.
Եվ բոլորին իբր առանցք մեջքն ուռիի պես քընքույշ՝
Որուն շուրջ մարդ պիտ' ուզեր բաղեղի նման փաթթըվիլ,
Եվ վերջապես հյութասպառ բաղեղի նման թառամիլ։
Բամբիռներն իր կը հրնչեն ձեռքերուն մեջ սաստկորեն
Իբրև օրենք մարմինին բյուր ձևերուն հոյաշեն.
Բամբիռնե՜րն իր կը հրնչեն, ու անոնց երգը բյուրեղ
Կը քաղցրանա մեղրի պես ջահերուն տակ լուսազեղ.
Եղունգներով հինայված մատերեն վար աղածրի
Դաշնակություն մ'հրաշալից մազերուն մեջ կը ծորի։
Բամբիռնե՜րն իր կը հրնչեն, այնքան ճարտար՝ որ կարծես
Անոր ձեռքերն Ապողոն թաթախեր է տարփակեզ
Սըրտին մեջ իր տավիղին։ Գործիքին ձայնը կերկեր
Կը զեղու սրահն՝ ուր շատոնց գուսաններն ա՛լ չեն նվագեր։
Կոհակներուն մեջ լոգցող աղկիոնին հանգունակ
Ան կը լողա մատերուն երգերուն մեջ ներդաշնակ՝
Որոնց ի լուր տատրակներ ահա կու գան խառնըվիլ
Ցանցին մեջ իր մազերուն, իր մազերուն հիատեսիլ՝
Որոնք, ալիք առ ալիք, կ'երթան սրփռիլ ման ի ման
Ասպետներուն գլխուն վրա արշալույսի մը նման։

Կոշնականները գինվո մեջ թաթախված, տրոփագին,
Բոլորը լուռ, սալացած՝ ըզմայլանքեն գեղեցկին,
Կը դիտեն մրրիկն այդ կընոջ գանգուրներուն մետաքսե։
Ան կը ճախրե՜, կը ճախրե՜, կատաղորեն կը ճախրե՜։
Երբոր ետև կը թեքի՝ կուրծքին վրրա հոյաշեն
Բլուրի պես կը դիզվին ըստինքներն իր սարսռալեն.
Եվ վարսերն իր վիժանուտ, ուսերն ի վար հոսելով,
Կ'երթան փրրփրիլ հատակին, հոն կազմելով ոսկի ծով.
Ան կը ճախրե՜, կը ճախրե՜, սանձակոտոր կը ճախրե՜...
Հոգվույն մեջ՝ ծով, շուրջը՝ լույս, ան Կիպերյան Աստղիկն է՝
Որ իր չորս կողմն հավաքած աղավնիները լուսեղ՝
Փորձեր կ'ընե թրուչելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ,
Ու հևհևուն, ծիծաղկոտ, վարդի մը պես բրոնկած,
Վերջին թափով կը սուզի կապույտին մեջ վերասլաց,
Թողլով որ քողն ամպերեն հորձանապտույտ իյնա վար
Տիոնիսյան բազնին վրա, գինիին մեջ հրրավառ։
Այսպես պարեց վարձակն ալ, մինչև որ քողն հոգիին
Հոն թաթախեց դիրտին մեջ ամեն մարդու բաժակին։
Ա՛լ հոգնած էր ու քրրտնած, կ'ուռեր ծոցն իր լուսեղեն,
Երբոր վերջին ճախրին մեջ Տրրդատ բրոնեց բազուկեն
Եվ ծունկին վրա նրստեցուց, գգվեց գլուխն ոսկեհեր.
Վարսերն ի վար շիթ առ շիթ կը ծորեին քրրտինքներ.
Ձեռքերուն մեջ դեռ տենդոտ, Բագրատունվույն ճոշին վրա
Կը դողային բամբիռներն իր մարմնույն պես դյուրազգա։
Տրրդատ մատերը անոր համբուրելով մի առ մի
Եվ շամբշելով անոր հետ զերթ սեղեխներ վաղեմի,
— Նահապե՜տ, ո՞վ է,— ըսավ,— վարձակը այս լուսաստինք։
Եթե Աստղիկ երկնի մեջ Վահագնի օր մ'հանձներ զինք,
Ու կաթիլները սերմին ըլլային նույն իսկ աստղեր՝
Դարձյալ այսքան չրքնաղ ծնունդ մը երբեք չէր բողբոջեր։
Այս կինն ինձ տուր, եթե չէ օրեն՝ որ մենք ընենք վեճ.
Արշալույսին թող մեկնիմ՝ արշալույսն այս գրկիս մեջ։—
Բազմականներն ըսկրսան նախանձահույզ քրրքրջալ.
Բակուր ծածուկ մախանքե մ'ակռաներն իր ձյունափայլ
Սեղմեց. և նուռ մ'որ ձեռքին մեջ բրռնած էր այն ատեն,
Ըսկրծանքեն ըսկրսավ ճրմլել։ Ըսավ.— Իշխա՜ն քաջազեն,
Վրրաց երկրեն, ուր կիները կը ծաղկին վարդի պես,
Ձայն նիզակովս եմ շահեր, մարտիկներու ընդդեմ վեհ

Մղելով երկար պայքարներ։ Այժմ ներե, որ ըսեմ՝
Թե իմ հարճս է, և չըլլար քեզ աղախին մը նըսեմ։
Եթե կ'ուզես՝ որ մեր զույգ բաժակներն այս մըտերիմ
Հազիվ թափուր գինիե, չեցվին արյամբ ոխերիմ՝
Թո՛ղ զայն, իշխան։— Բնավ չանսաց Բագրատունին
սըրարբած,
Սեղանեն վեր բարձրացուց դաշխուրանն իր գինեմած
Ու ձեռքովն իսկ զայն խմցուց, ծունկին վըրա, վարձակին՝
Որ կը ժըպտեր ըմպելու ատեն ժըպտով մ'հեշտագին։
Իր գողտրիկ բերանին երկու կողմեն ընդհոլով՝
Թափվեցավ քիչ մը գինին ու ծոցն ի վար սահելով՝
Գընաց լճակի պես կարմիր ժողվիլ պորտին մեջ անհայտ։
Երբ դեռ բոսոր էին կզակն ու շրթունքները, Տրդատ
Զանոնք առած բերանին մեջ համբուրեց կըտղանքով՝
Զվարթ հեղուկին մնացորդն ըսպունգի պես ծծելով։
Լըռեց սըրահը համուռ։— Բոլոր դարձան Բակուրին
Կը նայեին, որ կը լմեր դեռ նուռը մեջն ագուռին։
Ամեն մարդ հոն թափվելիք արյան մը հոտը կը զգար...
Նահապետն ա՛լ վեր ցատկեց տեղեն իբրև քանասար.
Գընաց՝ որ հարճն ազատե, ջախջախե գլուխն Ասպետին՝
Որ կինն իր տան մեջ կը լլկեր՝ իբր իր ողկույզն իր տաշտին։
Այս որ տեսավ Տրդատես՝ վարաղացավ ու խոպաց.
Հրեղեն սյունի մ'էր նըմսն, դահլիճին մեջ՝ վերամբարձ.
Կոպիճներուն մեջ աչքերն ըսկըսան ժիր թավալիլ
Մերթ ծովուն խորն ընկլուզվող գունդերու պես հրատեսիլ։
Ձախ թևով հարճը գըրկեց, հետո— Հա՜, հա՜, քրքրջաց,
Էգ վագրին հոտն ըմբոշխնել արու վագրի՜ն է տըրված։—
Եվ միշտ ժայռի պես կանգուն, շընչելով բոց աչքերեն,
Հուժկու ձեռքով սեղանին վրայե խըլեց, իբրև զեն,
Մեծաքանդակ ըսկուտեղ մ'ամբողջ պղնձով կուռ ձուլված,
Գազանացավ, փըրփրեցավ, շամբշոտեցավ ու մըխաց,
Եվ ուղղակի արձակեց զայն Բակուրի ճակատին...
Վերնատան մեջ ահեղ ճիչ մ'արձակեց տան տիրուհին,
Ճորտ ու սեպուհ բոլորն ալ դուրս պուղեցան զահանդած,
Որոնց բազուկն էր միշտ վատ՝ երբ հոգին էր սըրարբած։
Սակայն կարծես մըրրակալն այն վրիպեցավ հրաշքով,
Եվ Բակուրի լոկ մեկ ունկն արյունառուշտ խըլելով՝
Գընաց բախիլ դիմացի մարմար սյունին մեծադղորդ՝

Թոթափելով անկե վար կուռեր, կայծեր լուսահորդ։
Ոմանք սատար փութացին Նահապետին կարեվեր՝
Որուն խըլված ականջեն ճըմլված քունքեն կը հոսեր
Հոն գինիի սափորին մեջ արյունն իր թըխագույն։
Այն ժամանակ Նազենիկ սարսափահար, հանկարծույն,
Փաթաթվելով Տրդատի պարանոցին՝ ողոքեց.
— Այս հարկին տակ, ո՜վ ասպետ, ա՛լ բաժինս է գան ու ծեծ.
Դուն որ գիտցար զիս վտանգել, ազատե արդ շուտափույթ.
Երբ ես հոժար խըմեցի ձեռքեդ գինին քու սիրույդ՝
Հարկ է ասկե վերջ խըմեմ Բակուրի թույնն ոխության.
Դուն հոս արյուն թափեցիր, և պիտի ե՛ս քավեմ զայն։
Զիս հեռացուր այս երկրեն, եթե չէ գործ՝ մ'արքենի
Որ ասպետի մը վրիպած հարվածը կին մ'ընդունի։—
Ու ավելի ցած ձայնով հարեց.— Ես քեզ կըսպասեմ
Արշալույսին՝ որ մոտ է։ Մեծ ղրան քով արեգդեմ
Կա թուզի ծառ մը որուն սաղարթներուն ընդմեջեն
Պատուհանիս ճրագն առկայծ ճամփորդներն հար կը տեսնեն։
Հոն կըսպասեմ ես քեզի վարդենիի մը նման.
Որ կոկոններն իր բանա պիտի կուրծքիդ վրա տիտան։
— Զիրուս առջի խըրխինջեն պատրաստ եղիր, Նազենի՛կ,
Դեռ ճրագդ արփվույն շառայլեն չընըվաղած՝ կը մեկնինք։—
Ըսավ Տրդատ։ Թուրը մերկ միշտ ափին մեջ շողարծարծ,
Տալով կամա երևույթը մեկնումի մը անդարձ,
Գընաց թամբեց երիվարն ու խավարին մեջ, անտես,
Անհետացավ քառատրոփ, փայլակնացայտ սմպի պես։

Կոչնականներն ահաբեկ. կոչնականներն հիազարհուր,
Գինո՜վ ու վա՜տ, մի առ մի պարպեցին սրահն ընդհանուր.
Լոկ կույր գուսան մ'երգին մեջ անվերադարձ տեսլացած՝
Դեռ լռության մեջ կը նվագեր սյունի մը հաղթ կոթընած։

Բ

Ահա առտվան շողերեն հագեր է վարդ ու սուտակ
Պատուհանին առջևի թըզենի ծառն ընդարձակ՝
Որուն ետև հարճն արթուն.— Ինչո՞ւ չեկավ,— կը խորհի,—
Արտույտն ահա արձակեց կալին մեջ երգը բարի.
Եվ պալատին պահապան շունն արթընցած ման կու գա

Բակին մեջ՝ մերթ միզելով պատերն ի վեր շրջակա։
Ինչո՞ւ չեկավ, ո՜վ Երկինք։— Հորիզոնեն հեղակարծ
Արփվույն ճաճանչն անդրանիկ սլացավ ինկավ շողարծարծ
Նազենիկի խուցին մեջ.— դալկացավ լույսը ճրագին։
Օ՜, ի՞նչ խրխինջ, ի՞նչ դոփյուն, ի՞նչ փոթորկում թանկագին...
Կու գա իշխանն ազատել զինք Բակուրի նախանձեն։
Պատուհանին ներքև՜ է Տրդատ ձիուն վրա արդեն։
Բերկրանքեն հա՜րճը խայտաց. զեղան աչքերը վրդով
Անպատմելի խընդությամբ, ինչպես երկինքն՝ արևով։
Գիշերն ամբողջ ինք հոն էր, զով խավարին մեջ արթուն.
Հանդերձներովը պարի, բամբիռներն ալ՝ մատերուն։
Աստղերուն տակ աղոթող բագոսուհվո մ'էր նման՝
Վարդերը դեռ հանդեսին մազերուն մեջ ցիրուցան.
Եվ լանջքը մերկ՝ որուն վրա թափված գինին խրրախին
Տակավին միշտ կը սրփոեր իր զրվարթ բույրը չորս դին։
— Ձեռքդ երկարե,— ըսավ Տրդատ։— Դու գիրկդ բաց, կը
ցատկեմ։
— Գլուխդ,— ըզգո՜ւշ,— չըփըշրես լանջապանիս զրահին
դեմ։—
Եվ Նազենիկ անհամբեր հեղեղին հետ վարսերուն
Ասպետին մռայլ ծոցին մեջ նետեց ինքզինքը սարսռուն.
Եվ զայն հեղ մ'ալ ողողեց մազերովն իր դարալիր։
Դափրեց նրժույգն և ռունգները փեռեկած լայնալիր՝
Հորիզոնին դարձուց գլուխն ու մըտրակի մ'հարվածով
Թաղվեցավ իր արշավին ամպրոպին մեջ փոշեծով։

Փա՜ռք մեծազոր կենցաղին ասպետական դարերուն՝
Ուր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորությունը արբուն,
Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցիկին, Զորության՝
Փըրփուրներու Դիցուհին ըստինքներով ռոշնական։
Փա՜ռք ձեզի միշտ, գանգրահեր ո՜վ ասպետներ արդընկեց,
Որոնց զրահով վերտրված լանջքերուն տակ բաբախեց
Սիրտ մը հավետ անձնվեր՝ տրկարներուն, ընկճվածին,
Եվ գեղանի կիներուն, անոնց մարմնույն բյուր գանձին։
Փա՜ռք ձեզի միշտ ձիամարտեր, մկունդխաղեր շանթասլաց՝
Որոնց օդին մեջ շաչուն տեգերն հանկարծ բրռընկած
Կայծակներու խաղն եկան երկրիս վրա փոխադրել.
Վիշապասպան սուսերներ, ժանգոտելու անընտել.

Կառարշավներ փոշեմուղ, գուպարահաղթ ոգորներ
Շառափնաթափ տեգ տեգի, կումբ կումբի դեմ ոսկեհեռ։
Փա՜ռք ձեզի միշտ, ո՜վ որսեր, թըրթռուն ձայնով շեփորին,
Երբ լիճին քով վիրավոր կ'իյնա եղնիկն ողբագին,
Եվ վարազներ արդնահար կը թավալին մարգին վրա՝
Որոնց կողեն արյունն հորդ կըրակի պես կը մըխա։
Փա՜ռք ձեզի միշտ ավարներ, հափափումներ կիներու՝
Որոնք տրվին իրենց տարին ու համբույրները աղու
Առյուծներու քաջության, և ո՜չ ոսկի հորթերուն,
Որոնց սիրտերն առավ լոկ սուրերու ծայրը փաղփուն։
Փա՜ռք ձեզի միշտ, ո՜վ դարեր ասպետական կենցաղին,
Ուր մարդիկ հզոր և անկեղծ էին նըման գինիին։
Առաքինի քաջության տեղ նենգն այս օր կը տիրե.
Փոխան տեգին հոլանի՝ պատյանի մեջ դաշույնն է՝
Որ կը շողա մութի՜ն մեջ, կը ժանգոտի՜ արևին.
Ոճիրներն արդ խավարի լրության մեջ կը դարբնվին
Մրխոտ ճրագի լույսին տակ ծրռած գունատ մարդերեն։
Երբ արեգակը նընջե՝ մեղքերն հայնժամ կը գործեն։
Ձեն պաշտեր կնոջ մարմինին դաշըն ձևերն հրրահրուտ՝
Լոգցրված բյուր ջահերու շառայլներով հոսանուտ։
Կինը մարդուն միացնողը Աստղիկի սիրահոդ
Լուսեղ մատերը չեն բնավ, այլ շանսբխուրը ցեխոտ։
Գեղեցկությունը ծընունդն է Զորության հորձանքին՝
Ինչպես մարգրիտն օվկիանի անդունդներուն մոլեգին։
Բայց այսօր չե՜ն քանդակեր սուսերներով կորովի
Գեղեցկության սուրբ Բագինն՝ ուր իգությունը խընկվի։
Բավական է լի գավաթ մը Մյունիխի գարեջուր,
Որ աճուրդի հանված սերը գնեն մարդիկ քրեիքուր։
Սեր վաճառվա՜ծ, ոչ նվիրված՝ ինչպես պըսակ սարդենի
Զոր հերոսին համար սուրն աստվածներեն կ'ընդունի։
Եվ այժըմ մարդն այս դարուն, մարդն ըղեղին տակ կըքած,
Ո՜վ ասպետներ հեթանոս, եթե բախե ոտքն հանկարծ
Ձեր բազուկի մեկ ոսկրին՝ որ հողին տակ ճերմկած է,
Անոր հրսկա զանգվածեն կը սարսափի, կը կարծե
Ձեզ առասպել դարերու առասպելյալ գազաններ,
Ո՜վ ասպետներ հեթանոս, ո՜վ ասպետի ոսկորներ։

Գ

— Տե՜ս, Նազենիկ, ինչպես դաշտն ըսպառեց ձիս վրզանուտ,
Ա՜յնքան երագ՝ որ կարծես մոխիրի մեջ բոցանուտ
Սրմբակներն իր խրրվեին։ Այն հպարտ է, իմ Սիրուն,
Երբ այդ մազերդ խառնված կը զգա իր հորդ բաշերուն։
— Ո՜վ իմ ասպետս և իմ քաջըս, մրտրակե՜ անդադրում՝
Մինչև որ սա անիծված Սյունյաց սահմանը թողում։
Սարսափն է դեռ սրրտիս մեջ, բայց մեն մի դռույթը ձիուդ
Հոգիիս մեջ կը սպանե երկյուղի տրոփ մը անգութ։
Ո՛վ իմ ասպետս և իմ քաջըս, մրտրակե՜ անդադրում։—
Այսպես անոնք խոսելով՝ հրրճվանքով մ'անպատում
Կ'արշավեին դեպ Շիրակ։ Տրրդատի լայն կուրծքին վրա
Կը հանգչեցներ՝ հարճն ամփոփ՝ գլուխն իբրև լուսընկա,
Մերթ ոտքերն իր կը զարներ ձիուն փորին տրզրնդեր,
Մերթ Տրրդատին անութին տակեն ետև կը նայեր,
Հորիզոնին շրրջելով կապույտ աչքերն՝ որոնց մեջ
Բերկրրանքներ կը հյուսեին շողերն առէջ առ առէջ՝
Միշտ մեծցնելով հույսը զվարթ՝ ծախված ճամփուն
մեծությամբ։
Շանթ կը տեղար արեգակը երկրնքեն վար անամպ,
Իր տոթին տակ խեղդելով կենդանությունը շուրջի.
Կարծես հողին մեջ ղողված ըլլար ամեն մեկ ճրճի,
Մի միայն մերթ կը լսվեր բրզզոցը թավ զամբուռին,
Որ ա՛լ հոգնած ընկղերկար հալածելե կենդանին՝
Արշավանքին փոշվույն մեջ կ'անհայտանար խորամուխ։
Անոնք իրար փաթթրված կ'ամբարտակեն սարին գլուխ։
Խուլ ղրրնդյուն մը հեռվեն եղավ հանկարծ լրսելի,
Կարծես գետնին ընդերքեն անցներ ամպրոպ մ'ահռելի։
Տրրդատ շրուշակը դարձուց, և երիվարը խոկուն
Ծամծրմելե դադրեցավ պահ մը լրկամը փրրփրուն։
Վարը, ղեմի հովիտեն դեպի գագաթ ծառացան
Ձիավորներ զինավառ՝ մրրրկարշավ ու դաժան։
Ոմանք աղեղ ունեին և ոմանք լարիտ ու տապար,
Ոմանց տեգերն ուղղաձիգ արեգակին տակ փառփառ
Հանկարծակի սարեն վեր փայլատակներ ճայթռեցին.
Բակուր մեջտեղն էր անոնց՝ աշտանակած ահեղ ձին.
Կու գար լուծել իշխաններն վրրեժ, պատժել հարճն անխիղճ՝

Սորթելով հոն՝ փոխանակ զայն փրրկելու աղծապիղծ։
Կոչնականները բոլոր զինված էին արդ իր հետ.
Երեկ գինվով հրդփացած, այսօր արյան հակամետ։
Երբ Բագոսեն վերջ օրրեց զանոնք Արսեն արդրնկեց՝
Հանդիսատես վատության հուշն հոգինին զայրագնեց.
Ըսկուտեղին արհավիրքը սյուներուն ընդմեջեն՝
Հետո իրենց սրրտին մեջ վառեց վրեժի մը գեհեն։
Տրրդատ երկար նայեցավ դեպ ի հրոսակն հալածիչ,
Աչքերեն թույն կ'հոսեին մոլուցքի զույգ մը կարիճ.
Գրրկին մեջ հարճը հանկարծ արձակեց ճիչ մը տրտում.
— Ո՛վ իմ ասպետս,— ողոքեց,— օ՜հ, մրտրակե՜ անդադրում.
Գերին ըլլամ քու սուրիդ, անոնց գերին մ'ըներ զիս.
Ահա տեգերն ուղղեր են միահամուռ կոկորդիս՝
Ուր համբույրիդ տաքությունը դեռ, ավա՜ղ, չէ պաղեր։—
Ըսավ։ Թաղեց ասպետին ծոցին մեջ գլուխն ոսկեհեր։
Հա՞րկ էր արդյոք ճակատիլ. ո՛չ. պիտի կռիվն ունենար
Անհավասար հաղթանակ, թեև վրսեր մ'հավասար։
Ու Տրրդատես թոթվեց սանձն երիվարին հողմասլաց,
Երկրադրղորդ թրնդաց դռույթն, փոշին ելավ և սուրհաց։
Ու ըսկրսավ հալածումն հրսկաներուն սանձարձակ։
Ողոքեց հարճը նորեն.— Ո՛վ իմ ասպետս վրիժակ,
Ես կը տեսնեմ անութիդ տակեն զանոնք՝ որ կ'իջնեն
Բլուրն ի վար, աչքերնին մեյ մեկ անդունդ լուսեղեն.
Հարյուր ձիեր կարկառեր են վիզերնին դեպ ի մեզ,
Որոնց շունչերը կ'ելլեն պինչերեն տաք մոխրի պես։
Օ՜, մտրակե՜, մտրակե՜, երբ բրռնեն զիս՝ վագրի նման
Պիտի կրծեն ոսկորներս, լակեն արյունըս լրման։
— Հեղեղին մեջ մազերուդ փակե աչքերդ, իմ Աղվոր,
Եվ կուրծքիս վրա քընացիր օրորումովն այս հրզոր,
Անոնք այս տեղ չրհասած՝ մենք Շիրակ ենք գիրկ գրրկի։
Ու լայնալանջ երիվարը մրտրակեց ուժգնակի։
Անցավ խորունկ փապերեն, հեղեղատեն մեծագոգ,
Ընկրղմեցավ խորն հովտին, ճեղքեց ավազն հրաբորբոք.
Եվ ուղղաբերձ, մեծաշունչ, համբարտակեց սարն հրսկա
Թավալելով հետքն ի վար ապառաժներ՝ որոնց վրա
Լուսնանրման կուռ պայտերն իրենց դրրոշմը դրրին.
Կատարներեն լեռներուն թրռավ նրման արծիվին՝
Ճապաղներուն մեջ սրսն իր սեղմելով միշտ ավելի.

Ժայռերն ի վար խոյացավ ջրվեժին պես փրփրալի՝
Հորձանքին մեջ տանելով լեռան ծաղիկ մը կարմիր՝
Իբրև դաշտին մեկ ընծան տրված վիհին լայնադիր։
Ու մըտրակե՞ց, մըտրակե՞ց, երբ որ հանկարծ լրսվեցան
Իր ետևեն սուլումները նետերու դավաճան։
— Ասպե՞տ, ասպե՞տ, մահն հասավ մեր թիկունքին, կը շչա.
Օ՜, կը վախնա՞մ, կը վախնա՞մ. ուսիդ վրայեն նետ մ'ահա
Հըրախայթոց օձի պես շըշըչալով սըլացավ։
Վայրկյա՞ն մըն ալ և անոնք կու գան կ'հասնին մեծարշավ.
Աղեղներեն լայնալիճ կարծես արյուն կը կաթի
Եվ կը ներկե ձիերուն հորդ հորդ բաշերը կաթի։
Ասպե՞տ, ասպե՞տ, մի մատներ զիս անոնց խեռ մոլուցքին,
Ես քու գերին, ձիդ ըլլա թող գերին քու մըտրակին։—
Այսպես ըսավ Նազենիկ. լալ ըսկըսավ դառնահեծ,
Եվ Տըրդատի կուրծքին վրա գըլուխը ա՛յնքան սեղմեց՝
Որ զրահին մեջեն իսկ կը լսեր տրոփը սըրտին։
Գանգուրներն իր հողմածուփ ձիուն բաշին կը խառնվին.
Ինք կը սարսռա վարմն ինկած աղավնիի մ'հանգունակ։
Սարսափելի էր տարափը նետերուն մահարձակ՝
Որոնք ջուրին նըման օդն եռանդնահորձ ճեղքելով
Կ'երթային մահը երգել փախըստական զույգին քով։
Այն ժամանակ Տըրդատես գլուխն իր դարձուց մըրրկահեր
Եվ հեգնորեն մըրընչեց.— Հալածեցե՛ք, դե՛հ. գայլե՞ր,
Մինչև շընչատ վար կախվին ձեր լեզուները դողդոջ.
Արձակեցե՞ք կրոնակիս ձեր ասեղները կրնոջ։—
Ըսավ. և նժույգն այս անգամ խթեց այնքան ուժգնալի՝
Որ արշավանքն եղավ շտապ մըտածումեն ավելի։
Ահա ձո՛րն ինք կը սուզի, սարի՛ն մյուսները կ'ելլեն.
Կը փայլակե ինք սարին, անոնք ձորին խորերեն
Կը փոթորկին։ Եվ նըման զույգ մ'ամպրոպի մոլեկան
Լեռնահարթին վրա անգամ մ'այնքան իրար մոտեցան,
Որ պիտի շանթը ճայթեր, պիտի պոռթկար նետն արյուն՝
Եթե Տըրդատ ըզգեցած չըլլար քեմուխտ հաստատուն։
Անոնց հանած փոշիներն իրար միացան՝ կազմելով
Հըրատապ ամպ մը խարտյաշ՝ կարծես հրդի արյունով։
Այն ժամանակ պիտ՝ հազիվ արձակեր տեգն իր Բակուր՝
Որ ճեղքե թիկն ասպետին, և հարճին լանջքը փըրփուր,
Երբ վիհ մ'հանկարծ դժոխորկոր լեռան գըլխուն փեռեկված

Արհավիրքով մ'ընկըրկեց հալածողները սրընթաց։
Ճողոպրեցավ Տըրդատես և լեռն ի վար ուղղակի
Դիմեց անտառ մը մըռայլ՝ որ սահմանն էր Շիրակի։
Բակուրի խումբը կեցավ հառաչակուլ, ոգեսպառ,
Կատաղության խարույկով ամբողջովին բոցավառ։
Ա՛լ հուսահատ՝ աղեղները պըրկեցին տըղընդեր,
Լարերն եղան լայնալիճ, անձրևեցին փըքիններ.
Նետե դատարկ կապարճներն եկան լեցվիլ վրեժ ու ոխ։
Հազիվ թե ծոցն անտառին կ'ընդգոգեր զույգը փախչող՝
Բակուր իր նետը վերջին, հերձակ մ'ամբողջ ժահրաշիթ,
Արձակեց ա՛յնքան զորեղ, թիրախին ա՛յնքան ճըշգրիտ,
Որ օձի նման շըշալով թունոտ լեզվովը սաղապ
Տըրդատեսի անուքին տակեն սողոսկ անցավ թափ,
Ու մըխվեցավ վարձակին ծոծրակին մեջ լուսաբուխ
Եվ հոն մընաց՝ հորդառատ մազերուն մեջ խորամուխ։
Երեք անգամ սըրսըփաց զարնված աղվոր աղավնին,
Երեք անգամ չուզելով կարծես թողուլ իր հոգին։
Այս բանը ո՛չ Տըրդատես նըկատեց, ո՛չ ալ Բակուր.
Իրենց անզուսպ մոլուցքին փոշիներեն դարձած կույր
Բնավ չըտեսան թե ի՛նչպես կը փըշրըվեր ու կ'իյնար
Դաշնակության ու գեղի աստվածակերտը գոհար.
Միայն նըժույգը վրընչեց ու երեք հեղ սարսռաց,
Երբ սառեցավ փորին վրա զարնըվող ոտքը հանկարծ։

Դ

Իջևան մ'է կառուցված սահմանին վրա Շիրակին,
Գործ արքունի ճոխության, մեծազանգված, ահագին։
Լայն դրռներն իր կը բացվին ճամփուն վըրա հրատոչոր.
Դուրս շընչելով զովություն և աղբերուն հոտը չոր։
Արևուն դեմ կիզանուտ ապաստան մ'է մըշտազով.
Ճամփորդներն հոն կը հասնին տոթեն թխացած ծոցերով
Եվ հոնքերնին բեռնավոր փոշիներով տապախարշ.
Հո՛ն կը հասնին սայլերն հույլ գոմեշներե ծանրաքարշ,
Եվ կաղացող ջորիներն ու կարավանն էշերու՝
Քաղցրաողկույզ խաղողին կողովներուն տակ հըլու։
Հո՛ն կը հասնին շար ի շար ուղտերը հաղթ՝ բեռնավոր
Տարաշխարհի զանազան համեմներով քաղցրածոր,

Եվ կը պառկին ծընկածալ, խրոխտավիզ կ'որոճան
Անծանոթ խոտն հեռավոր երկիրներուն արփական։
Թանձրակառույց իշխանը բարիք մ'է երկնատու,
Երբ կը հրսկե ճամփուն վրա՝ որուն ծայրերը երկու
Հորիզոնին խորհուրդին մեջ տաղտկորեն կ'անհետին,
Երբ կը վառե անկենդան լրոության մեջ լեռնային
Իր պանդուխտի օջախներն ամեն մարդու անխբտիր
Եվ հոն ամռան ջերմությունը մարելու ի խընդիր
Թանին ալիքը կ'հոսի երակներու մեջ ծարավ։
Բայց միշտ հասնիլն հոն՝ անկե մեկնելեն քաղցր չէ բնավ.
Ավասիկ այդ իշխանն է՝ ուր կու գա Տրդատես
Ապաստանիլ նետերուն և արևուն դեմ հրակեզ։
Ծալքերուն մեջ թիկնոցին և կուրծքին վրա զրահակուռ
Պարուրված է Նազենիկ մարմարի պես ջարդուփշուր.
Այլևրս, ո՜հ, չի հուզեր ոչ մեկ սարսուռ, ոչ մեկ վանկ
Ցրքնաղ մարմինն իր սառած լուսարձանի մ'հանգունակ։
— Արդյոք քնացա՞վ (կը խորհի՝ ասպետն հասած իշխան)
Թե սարսափեն մարեցավ, ճբրագի պես, կուրծքիս վրան։
Ի՞նչպես կրրնա սալանալ այնքան եռանդ մ'հանկարծույն
Եվ տարածվիլ սրրտիս վրա շիրմաքարի մը հանգույն։—
Խորհելով ա՛յսպես Տրդատ վար կը ցատկե նրժույգեն
Եվ կ'իջեցնե վարձակն ալ, բայց աչքերն իր կը տեսնեն
Մազերուն մեջ Բակուրի նետն ըսպանիչ, արյունն հիր՝
Որ հոսած է ծոծրակեն ժապավենի պես կարմիր։
Կընոջ մարմինը անշունչ գիրկը կ'իյնա ցրրտագին.—
Կատաղություն ահավո՜ր ասպետական խաբկանքին...
Մազերն ամբողջ կը քրստմնին՝ երբ սիրտն անոր կը տեսնե
Տիեզերքի մը սրրտին նրման՝ դաղրած տրոփելե,
Երբ կը խորհի թե կինն այդ մեկ թարթափին մեջ աչքին
Գեղեցկության հեթանոս ուներ գանձերը անգին,
Թե իր մարմինն էր լոգցած երկնի շողովը անշեջ,
Մեղր ուներ իր թուշին տակ, լույս ուներ իր ծիծին մեջ.
Եվ իր ձեռքին ու ոտքին մատերուն ծայրն էր խրտացած
Տիեզերքն այս հարդարող ճարտարությունն առեղծված.
Եվ խորհեցավ վերջապես՝ սրահին մեջ Բակուրին
Աստվածացումն իր միսին, փոթորկումները պարին,
Եվ առջի հեղ ըլլալով ապառած մարդն այդ լացա՞վ...
— Ո՞վ պատրանքի արցունքներ հերոսներուն մեծհամբավ,

Որոնք երբեմն սրրտի խորեն կ'հոսին տրխրամած
Հին օրերու հաղթության պրսակներուն վրա դեղնած։—

Ե

Բարտի մը կար հինավուրց՝ զոր ձեռքերովն իր բարի
Իշխանին քով տընկեր էր Դիցանույշ մ'անտառի.
Սակայն այդ օրն ոստ առ ոստ ան կը չորնար տրտմորեն
Տերևներն իր դալկահար հողին վրա ողբալեն։
Ո՛վ գիտեր ո՛ր մբրրկածուփ գիշերվան մեջ Արամազդ՝
Զարկեր, պատռեր էր անոր սիրտն իր շանթով մեծասաստ.
Եվ գլուխն իր գեղուղեշ՝ որ կը հասներ արևին՝
Արդ սոսափներ չէր երգեր, կը նիզակվեր դեպ երկին։
Հո՜ն, ահա այդ բարտիին շուրջը եկան հավաքվիլ
Անտառաբնակ չորս քուրմեր՝ հագած կընգուղ և ջանջիլ.
Ու Տրդատի հրամանով, անոր բունին ճիշտ ներքև,
Միահամուռ փորեցին Նազենիկի փոսը սև.
Ու երգեցին Աստղիկին։ Տրդատ սրրտեն շանթահար՝
Անոր դեռ թա՛րմ դիակն առած գրկին մեջ կու լար։
Երբ զայն փոսին հանձնեցին մազերուն մեջ շաղապատ
Դեռ Բակուրի նետն ոսկի կը փայլակեր լուսացայտ։

Իշխանին քով տնկված վաղընջական այն բարտին
Վերընձյուղում մ'ըստացավ՝ բուժելով վերքն իր սրտին՝
Երբ որ Հարճին լույս մարմնույն ավիշներով կենսահորդ
Թաթախվեցան հողին տակ արմատներն իր խորդուբորդ,
Եվ ըսվեցավ թե անոր տերևուտրին մեջ դողդոջ,
Ցրքնաղ հոգին վարձակին բընակեցավ դար մ'ամբողջ,
Լուսընկային ժրպտեցավ, ծոծրակին վերքը տվավ՝ ցույց,
Հովերուն հետ պար եկավ, բամբիռներն իր հնչեցուց։

ԳՈՂԳՈԹԱՅԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Փա՜ռք տարբինային.— Քրիստոս կը պատարագի։

ՃԱՆԱՊԱՐՀ ԽԱՉԻ

Ո՛վ մասնված Հիսուս,
Դուն որ փրշապատ գլուխ մ'ունեցար՝
Գրթա՛ իմ գլխուս.—

Դերաներդ զայն քարկոծեցին հար
Եկեղեցիին սալաքարերով։
Վերքերես բղխող ըղեղը կերան
Իշամեղուներն ամբարբշտության։
Տե՛ս, մազերուս վրա եղյամն է նըստեր.—
Ես շա՜տ եմ տանջվեր։

Տառապա՛ծ Հիսուս,
Դուն որ ունեցար արտասվող աչքեր՝
Գրթա՛ աչքերուս.—
Անոնք ավելի արտո՛սր են քամեր
Քան թե խըմեր լույս։ Դագաղներու վրա
Միշտ մահն են հսկեր մոմերու հետ շեջ։
Բիբերս են ինկեր վիշտի հորի՛ն մեջ։
Տե՛ս, կոպերուս վրա աճյուն է ցանվեր.—
Ես շա՜տ եմ տրքներ։

Ապտակվա՛ծ Հիսուս,
Դուն որ ունեցար ձեռքեր կալ ու կապ...
Գրթա՛ ձեռքերուս.—
Ափերս են տաղեր պայտերով հրատապ,
Եվ մատվընքերես, ըստինքներու նման,
Արյունս են կըթեր։ Դաստերս ճաթած են
Կըրելեն երկաթ, հողը փորելեն։
Տե՛ս եղունգներըս սիրտս են հոշոտեր,—
Ես շա՜տ եմ խոցվեր։

Թըքնըվա՛ծ Հիսուս,
Դուն որ ունեցար ձաղկըված կողեր՝
Գրթա՛ կողերուս.
Անոնք աղբյուսի վրա են պառկեր՝
Եվ վիշտը քունեն ճանչցեր հաղթական.
Բուծաներ են միշտ գրկած Մահը կույր՝
Իրենց քաղցն անոր տալով կերակուր։
Տե՛ս, փողոցի շուն մ'է կողըս պատռեր.—
Շա՜տ եմ հալածվեր։

Մահապա՛րտ Հիսուս,
Դուն որ բևեռված ոտքեր ունեցար՝
Գրթա՛ ոտքերուս.

Արյուն սրբսկելով թափառեցան հար
Ավերակներու եղիճներուն մեջ։
Զանոնք չլլլվաց ձեռք մը սիրական
Ոչ մեկ լականթ մեջ ասպընջական,
Ոտնամաններես կը հոսին մոխիրներ.—
Ես շա՜տ եմ քալեր։

Մ՚վ խաչված Հիսուս,
Դուն որ նիզակված սիրտ մ՚ունեցար՝
Գրթա՛ սրբտիս հույզ.—
Օր մ՚որ անոր մեջ բաբախեց աշխարհ՝
Հույսին տեղ այսօր ոչի՜նչը կ՚ապրի։
Սիրտս սափոր մ՚է, աճյունս՝ անոր մեջ,
Զոր պիտի հովերն առնեն մահես վերջ։
Տե՛ս, տե՛ս, սրբտիս վրա դաշույն մ՚է խրբվեր,—
Ես շա՜տ եմ սիրեր։

ԼՈՒՅՍԸ

Դուն կը փայլիս մեծության և զոհաբերումին համար։
ՌԻԿ-ՎԵՏԱ

Կ՚երթամ աղբյո՜ւրը լույսին...
Ուղին երկա՛ր է. ապարկված է ուղին
Կայծքարերով, ցանկված՝ մուրտի փուշերով.
Ուղին շեղ է ճառագայթի մ՚հանգունակ։
Անկե կ՚ելլեմ հենլով դողդոջ ծունկերուս,
Եվ ծունկերես, զոր գամեցին եղբայրներս,
Արյունըս տաք կը բբխի։
Հևքն է՝ կուրծքիս, թարթիչներուս վրա՝ փոշին։
Սիրտըս սափորն է դատարկ,
Ու ես կ՚երթամ դեպի աղբյո՜ւրը լույսին...

Լույսն աղվոր է, բարձրության մեջ՝ հոսանուտ,
Խոնարհումին մեջ՝ արդար։

Օր մը տեսա էուրենեն մաս մը սուրբ
Մորս հոգվույն մեջ ճաճանչագեղ, և ցաթած
Մեր գյուղակին մեջ վաղեմի հերոսին
Հողակույտին վրա դալար։
Միջօրեին՝ զայն տեսա
Որ՝ նման մեծ թիթեռնիկի մ՚բսպիտակ՝
Կը քալեր գաղջ պատուհանիս քարին վրա,
Որ մայթերեն կամ աղծապիղծ ճամփայեն,
Ներողամիտ գրթությամբ,
Կը հոսեր նոր կրթված կաթի մը պես եղկ,
Որ իրիկունն, հորիզոնե հորիզոն,
Կ՚երիզանար գետերու պես հակինթի,
Կամ կը կազմեր, երկինքներուն վրա խաղաղ,
Անընջական ավազաններ, որոնց մեջ
Կը բոնկեին նունուֆարե կրղղյակներ։
Զայն ես տեսա՜,— և հոգվույս մեջ արթընցավ
Պանդուխտի տենչ մը անորոշ և լլլկիչ,
Դեպ ի գավառ մ՚անծանոթ, լի արևով.
Եվ արդ կ՚երթամ դեպի աղբյո՜ւրը լույսին...

Լույսն է Մբտքիս հարսը, աղջիկն՝ Աստծո,
Ան գինին է Տիեզերքի բերկրության,
Որ իրիկուն մը, կողեն դուրս Հիսուսին,
Հեղեղորեն հոսեցավ,
Ներումի պես հոսեցավ, վա՜ըը, Մեղքին
Սեղանին շուրջը հավաքված մարդերուն
Անհոսության ըսկիհներուն մեջ դատարկ։
Լույսը արյունն է բնության,
Գիշերվա թագն, ու պատմուճանն է օրվան.
Աստվածային Ակնին է՝
Որ, երկունքի մեջ մեռած մոր մը նման,
Կը ստեղծե իր վախճանելու ժամանակ,
Ակնին՝ հրեղեն բիբերով,
Որուն հոգին ամեն գաբուն կը ասրտփե
Հյուլեին մեջ և մարդկային մբտածման,
Որուն համար զոհերով դեռ կը մբխան
Նբվիրական ափերը հորդ Գանգեսին։

Ու ես կ'երթամ դեպի աղբյո՜ւրը լույսին...

Լույսը մարմարն է երկնային հանքերուն.
Որով Արվեստն, անմահական երազով,
Կը քանդակե ձյունամարմին աստվածներ։
Իր ծոցին մեջ կը ծընին
Մոայլ Տանդեներն ու Հոմերները հրսկա,
Իր ծոցին մեջ իմաստությունը երգ մ'է՝
Զոր գիշերվան մեջ խորին
Բանաստեղծները կը խրմեն աստղերեն՝
Որ նրվագեն ցերեկվա մեջ՝ Մարդերուն։
Ան ամենո՜ւն զինքը կու տա, ամենո՜ւն
Կը բաժնրվի, և կը մնա անբաժան
Նրշխարքին պես.— ան նրշխարքն է՝ որ կ'իջնե
Ամեն առտու, սեղաններուն վրրա մեր,
Մարդեղության արյունլրվա խորհուրդին։
Ու ես կ'երթամ դեպի աղբյո՜ւրը լույսին...

Քանի՞ հազար, քանի՞ հազար տարիներ
Պետք է որ ա՜յսպես քալեմ.
Քանի՞ անգամ պետք է իյնամ, կարեվեր,
Ճանապարհիս վրա բացված
Նրպատակիս ժայռափրշուր մուրճերով.
Զրգիտե՜մ ես.— միայն թե, ո՜վ եղբայրներ,
Ո՜վ խաչ հանող եղբայրներ,
Թողուցեք զիս ճամփորդությանս մեջ մինակ,
Ա՜յնքան մինակ և ա՜յնքան լուռ, որ լրսեմ
Տրոփը սրրտիս, զոր ընտրրած նրվագս է
Նրվագներուն մեջեն բյուր.
Արևով լի և արևները տանող
Ուղիիս վրա մի՜ սրփռեք
Ձեր շուքը, մոայլ թևի մը պես ուրուրի։
Եվ ոչ ալ զիս կանչեցեք
Խրնճույքներուն ձեր զրվարթ՝
Ուր բոզությունը կը զարնե նվագարան։
Ընդունա՜յն է խոստանալ
Սրրտիս կույսեր,— սիրտս սափորն է դատարկ,
Ու ես կ'երթամ դեպի աղբյո՜ւրը լույսին։

ԱՌԿԱՅԾ ԾՐԱԳ

Հաղթանակի գիշերն է այս տոնական.—
Հա՜րս, եղ լեցուր ճրրագին։
Պիտի դառնա կռիվեն տրղաս հաղթական.—
Հա՜րս, քիթը ա՜ռ պատրույգին։

Սայլ մը կեցավ դրռան առջև, հորին քով. —
Հա՜րս, վառե՜ լույսը ճրագին։
Տրղաս կու գա ճակատն հրպարտ դափնիով.—
Հա՜րս, բե՜ր ճրրագը շեմին։

Բայց... սայլին վրա արյո՞ւն և սո՞ւգ բեռցեր են...
Հա՜րս, ճրագդ ասդի՜ն երկարե։
Հերոս տրղաս հոն զարնրվա՜ծ է սրրտեն.—
Ա՜խ, հա՜րս, ճրրագրդ մարե՜...

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆ

Պատուհանիս տակեն, ամեն առավոտ,
Ուրվականի պես կ'անցնիս.
Եվ կուսագեղ գրլուխիդ վրա կ'արտասվե
Տերևաթափ վարդենիս։

Լուռ թաղին մեջ կը լրսեմ քայլդ, ու զարթնող
Շունն՝ որ վրրադ կը հաչե՜.
Կամ կը լրսեմ քունիս մեջեն ձայնն հազիդ՝
Որ ծոցդ աղվոր կը տանջե։

Եվ կը խորհիմ թե քընատ ես և նոթի.
Իրանդ հովեն կը դողա.
Եվ կը նրստի գանգուրներուդ վրրա, քո՜ւյր,
Եղյամն իբրև շափյուղա։

Կամ մուճակներդ են պատրաստած, փողոցին
Ջուրն անոնց մեջ կը ճողփա.
Կամ ետևեդ շրվայտորեն կը սուլե
Սրրիկա մը անոպա։

Եվ կը խորհիմ թե, տան մեջ, մայրդ է հիվանդ,
Ցամաքած է ձեթն ալ ճրագին.
Ու դուն կ'երթաս գործատան մեջ աշխատիլ՝
Լույսին համար ու կյանքին։

Ես կը խորհի՞մ— և խենթի պես կը բաղձամ
Վար իջնել, քո՛ւյր դալկադեմ,
Քո՛վդ իջնել, համբուրել ձեռքդ նիհար,
Եվ հրծծել.— Քեզ կը սիրեմ։—

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագույն,
Կը սիրեմ կուրծքդ քանդված՝
Որուն մեջ դեռ կը համառի Սերդ երգել
Արտույտի պես սրբարբած։

Կը սիրեմ քու անոթությունդ ու ծարավդ,
Եվ ոսկորներդ ուժասպառ.
Ես կը սիրեմ կույս աղիքներդդ ցամքած,
Մազերուդ սուգն՝ ուսեդ վար։

Եվ ես կ'ուզեմ ամփոփել քեզ սրրտի՞ս վրա՝
Տատրակի պես տարագիր,
Տալ ուժը քեզ, մրրցանակներդս փառքի,
Եվ ազգանունս անբասիր.

Կուրծքս վահան ընել կուրծիդ նրշավակ,
Եվ քողն ըլլալ պատիվդ,
Գրանիտե բազուկիս տակ պաշտպանել
Սեռդ ու գեղդ անժրպիտ։

Կ'ուզեմ քեզ տալ ինչ որ պայքարն ինձ տրվավ,
Ինչ որ խլեցի մարտերով.
Քեզ պրսակել արյունիս գույնն ունեցող
Հաղթանակիս վարդերով։

Միայն թե դուն չըլլաս դըժգույն ու քաղցած,
Արևուն տակ չըհազաս,
Մորդդ վերև չըմարի ճրագն, ու,— ո՛վ քույր,—
Դուն գործատուն ա՛լ չերթաս։

ՍՊԱՍՈՒՄ

Ահավասիկ շուրջն ընթրիքի սեղանին
Նըստան տղաքն ու կինը ծեր բանվորին։
Մեջտեղը լուռ կը պաղի
Ոսպապուրն իր գոլորշիին մեջ անդորր։
Մայրը հացերը լեղի
Իր սրրտին պես բաժնեց կըտոր առ կըտոր
Տըղոցն համար և ամուսնույն՝ որ գործեն
Պիտի դառնա...— կը սպասեն...

Մըխոտ ճրագին շառ լույսեն
Հացերն ամբողջ կարմիր են.
Կարծես անոնք թորեին
Արյո՞ւն նրման Քրրիստոսի մը կողին։
Ջուրը գույնով քացախի
Կ'երազե հոն ըմպանակին մեջ մեծդի։
Խաղաղավետ օրհնությունով մ'ընդհանուր
Օծված սեղան, հաց և ջուր,
Կ'ընեն աղոթքն ըսպասումի մը երկար,
Երբ իրիկունն հոգնած բանվորը չի՛ գար։

Ի՞նքն է.— ահա գոռ սանդալներ կը հընչեն
Մայթին վրրա փողոցին...
Ի՞նքն է.— ո՛հ, ո՛չ.— գրրացին՝
Որ տընակին առջևեն
Կ'անցնի դանդաղ երգին հետ իր քայլերուն։
Խե՞ղճ որդիներ, կի՞ն դրժգույն...
Նորեն գլուխնին կը խոնարհեն հուսակտուր
Սեղանին վրա՝ ուր կը պաղի ոսպապուրն։

Ո՜հ, ուշացավ ծերունին.
Անոնք գիտեն՝ որ ունին
Աշխատանքները վրտանգ.
Ունի պայթում ամեն հանք.
Անոնք գիտեն՝ որ սանդուղներն որմնադրին
Մատնըշորեն կը կոտրին։
Եվ մեքենան կը կասկե
Զինքը կըրթող թևը ժիր.
Անոնք գիտեն՝ որ աշխատիլն է ոճիր,
Երբ լուսընկան երդիկին վրա կը հըսկե։
Կու գա՜.— ահա դուռն հյուղին
Լալաճըռինչ բացվեցավ իր շեմին վրան.
Ի՜նքն է.— ո՜չ, ո՜չ.— է քամին՝
Որ բոթաբեր դըրացիի մը նըման
Ներս կը մըտնե, կը սողոսկի ճրագին մեջ՝
Ու բոցին տակ ծըխահարույց կը մեռնի։
Նոթի տղաներն աղիողորմ աչքով գեջ
Կը նային մորն երեսն ի վեր տըխրունի...
Ինչո՞ւ չեկավ... ո՞ր անիծված ընկերներ
Զինքը իրենց ճամփուն մեջ են մոլորեր։
Սուրբ զո՞հն եղավ բանթողի,
Թե կը խըմե արդ օղի
Գինետան մեջ, սեղանին տակ թըքնելով։
Չեկա՜վ.— ահա մորը կուրծքին վրա խորով
Կրտսերագույնը լալեն
Նընջեց...— և դեռ կը սպասեն։

Ո՞վ կը հազա դըռան առջև.— ա՜ն է, ա՜ն։
Անոնք հազն այդ կը ճանչնան։
Կը ճանչնա կինն ամուսնույն
Շուքն իսկ ջուրին վրա հոսուն։
Ան կ'երևա՜ ավասիկ.
Գլուխն է փոշոտ, փոշոտ լոդիկը բըզիկ,
Եվ իր կապույտ տաբատն հին
Շըպարն ունի շաղախին։
Դըժնե բիբերը արյունի մեջ ի լող
Կը թավալին կոպերուն տակ շըլամորուն։
Կը նետե մուրճը փողփող

Օջախին մեջ.— ու դըռան մեջը կանգուն
Սեղմած կռուփները ջըղուտ
Կ'աղաղակե կընոջ՝ մռունչով մ'առյուծի.
— Բո՜զ հերատուկ, չըսպասեցի՞ր դու ինծի։—
Շունչը՝ լեցուն գինվո հոտով ժանտաժուտ՝
Կը հուզե հյուղն համորեն։
Կինն ու տղաները զարհուր
Կու լա՜ն... լացով կ'օծանեն
Սեղանն՝ որուն վրա պաղե՜ր է ոսպապուրն։

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՍ

Ծերրա՜ռա, երբ քու ամայի պալատներդ քար քարի վրա չմնան՝
քերթողի մը բանտը փառքիդ մեծագույն տիտղոսը պիտի ըլլա։
ԼՈՐԴ ՊԱՅՐՐՆ

— Ըսե՛, ծիծեռնա՛կ,
Ճանճ մը կըտուցիդ կ'երթաս ծաղկավետ ո՞ր այգեստաններ.
Ո՞ր աշտարակն է՝ որ գաղջ արևու մեջ է ընկըղմեր.
Ըսե՛, ծիծեռնա՛կ։
— Մետեխի բանտին պատին նորոգել կ'երթամ բույնս ամա՝
Որուն մեջ ձյո՛ւն է տեղացեր ձմեռն, ու այն տեղ հիմա
Օձ մը ծըվարած, գլուխը պոչին տակ, լուռ կը մըրափե։
Օձի շապիկով կ'երթամ կարկըտել բույնըս կանեփե։—
— Ա՜խ, գընա՛, ծիծա՛ռ, երգը կըտուցիդ։
Միայնությյան մեջ մեծ Ծղրայր մ'ունինք մենք հոն կալանված.
Թեզաններն ի վար կը հոսեն թոքերն արյուն մ'անձնուրաց։
Հաց մ'են դրեր իր քով, մոխիրո՜վ թըրուն, դառնահամ բըլիթ,
Եվ կուժ մ'որուն մեջ ծըռած կ'արտասվեն մողեզներ դեղին։
Ծիծա՛ռ, շող մը տար լուսնեն՝ որ օծե բիբերն անժըպիտ,
Երգ մ'որ ըսփոփե հոգին՝ ուր տրոփեց հողը մայր Երկրին։
Ա՜խ, գընա՛, ծիծա՛ռ, համբույրըս կտուցիդ։

— Ըսե՛, իմ կըռո՛ւնկ,
Դեպի հորիզոն նետի պես սլաքած վիզըդ բոցեղեն՝
Այսպես ո՞ւր կ'երթաս ուրախ կրկռոցով երդիկիս վրայեն.

Ըսե՛, իմ կրո՛ւնկ։
— Կովկասը լիճեր ունի՝ որոնց մեջ եղեգներ ջով-ջով
Բարձրը ուռճացած արև կը շընչեն փըրփրուն կատարով,
Ու լըքվածներու տընակներ կան հոն՝ որոնք կը բաղձան՝
Որ իրենց շեմին երգեմ, իրիկունն, երգերս ըսփոփման։
— Ա՜խ, գընա՛, կրո՛ւնկ, հույսը կըտուցիդ։
Բայց բանտի մ'երդին պահ մը ամփոփե թևերդ հոգնած։
Հոն Արվեստի քուրմ մը կա՝ որ նվագեց Վիշտն համատարած
Ըստեղնաշարին վըրա աստղերուն՝ մատերով վրճիտ։
Արդ իր գանգին ջահն արյուն կը ծեփե պատերն Ոճրի Տան։
Կրո՛ւնկ, պըսակ տար իր ջախջախ քնարին սա ճյուղը
փըթիթ՝
Զոր մենք ամենքնիս օծանեցինք մեր ողբովն հավիտյան։
Ա՜խ, գընա՛, կրո՛ւնկ, արցունքըս կտուցիդ։
— Ըսե՛, արագի՛լ,
Գորտ մը, զմրուխտի նըման, բերնիդ մեջ դեպ ո՞ւր կու տաս
խույս,
Ո՞ւր տեղ օգոստոսն իրենց փոսերեն իժերն հանեց դուրս.
Ըսե՛, արագի՛լ։
— Հեռո՛ւն, կը տեսնեմ գըլուխներն ադամանդ լեռներուն
Կովկաս՝
Որոնց կողերեն ձորերը կ'հոսի արևն հըրամազ։
Գարունն է պճներ հոն հարսի նըման բարտի մը վրսեմ,
Իր սոսափյունին մեջ բույնս ուտիով ես պիտի հյուսեմ։
— Ա՜խ, գնա՛, արագի՛լ, կարոտը կտուցիդ։
Հոն կապանքի տակ Հայրենիքն ունի հանճար մ'ողջակեզ։
Գրիչը մատերուն մեջ խորտակեցին ճառագայթի պես։
Արագի՛լ, վրայեդ փետուր մը ձգե բանտն իր մահառիթ՝
Ուր ան օրե օր իր գերեզմանին համար կ'հասուննա։
Ի՞նչ փույթ թե խլված փետուրեն՝ թեդ այդ արյունի շիթ-շիթ.—
Անով հաղթանակն ան պիտի գրրե իր Ուխտին հրսկա։
Ա՜խ, գնա՛, արագի՛լ, սիրտըս կըտուցիդ։

— Ըսե՛, խրո՛խտ բազե.
Ճեղքելով անտառը կայծակներուն, ամպերուն խորեն,
Ի՞նչ կատարի վրա կ'երթաս քըթվըտել պորտդ լուսեղեն.
Ըսե՛, խրո՛խտ բազե։
— Ռուս հորիզոնեն դագաթող մրրիկներն ինձ հոտը բերին,

Հոտ դիակներու, հունդերը կարմիր բեղուն ժանտախտին.
Հըզոր թռիչներիս վար գաղջ արյուններ ես անձրևելով՝
Կ'երթամ արածիլ մարդկային բիբերն ու սիրտերն համով։
— Ա՜խ, գընա՛, բազե՛, կայծակը կտուցիդ...
Բայց մեռելներն այդ զոհերն են լույսի,— անոնց մի՛ դըպչիր։
Սիրտեր՝ որ վրեժեն չեն գիտեր պաղիլ.— անոնց մի՛ դըպչիր։
Այլ այնտեղ Պայքարն Առաքյալ մ'ունի բանտին մեջ գրանիտ.
Թևերովդ հուժկու զա՛ռկ, փըշրե՛ խախամն իր լուսամուտին,
Եվ շանթը կտուցիդ՝ Հույսն երգե՛ թառած իր ուսին վրճիտ։
Ըսե՛ թե շուտով մենք պիտի կանգնենք արձանն իր փառքին,
Ա՜խ, գընա՛, բազե՛, դափնի՛ մը կտուցիդ։

ՄԵՌՆՈՂ ԲԱՆՎՈՐ

Քամին կ'ոռնա ու տընակն իր հիմերեն կը ցընցե
Իբրև ահեղ դամբարան։
Ցյուրախտավոր բանվոր մ'հոն կը վախճանի մազկըռինչ՝
Խարին վրա հոտևան։

Հանո՛ւն պատառ մը հացի՝ գործատան մեջ թաղեց ան
Ճառագայթներն հոգիին.
Տրվավ փերթ-փերթ՝ որ ուտեն մեքենաները վիշապ
Միսերն հուժկու կըռնակին։

Անիվներուն ակռաներն ողնածուծո՛վն օծանեց,
Եվ սըրբեց իր մազերով.
Հընոցին դեմ՝ մերկալանջ, ժահրոտ օդին մեջ՝ մըղձուկ
Ապրեցավ միշտ մեռնելով։

Արդ տապալող նոճիի հանգույն բան մ'է այդ տըղան,
Այդ հա՛ղթ ռամիկն երբեմնի։
Երկաթներու հետ պայքար մ'եղավ իր կյանքն հարատև.
Արդ կը փըշրի զերթ վանի։

Գերեզմանին դեղին հո՛ղն իր աչքերուն վրա կառչուտ
Սըփոեր է Մահն անժըպիտ.

Մեղրամոմի պես մարմինն ահավասիկ կը հալի
Մատերն ի վար շիթ առ շիթ։

Ի զո՞ւր գարունն երազեց, և հովերուն մեջ ազատ
Կաղնիացումն հասակին.
Ի զո՞ւր տենչաց երգով լի շրթունքներն իր երկարել
Աղբյուրներու ջինջ ակին։

Արևուն տեղ՝ դալկություն, շուշաններու տեղ՝ մրրուր
Պրսակեցին ճակատն իր։
Սիրո երգին փոխարեն՝ եկավ փրրփրիլ շրթունքին
Հրատապ հազ մը կարմիր։

Արդ կը հազա՞, կը հազա՞ իր զոհի գլուխը դրրած
Ծոցին մեջ մո՞ւրն աղեկե՞զ՝
Որուն կուրցած աչքերեն իսկ արտասուք կը բբխին՝
Հողեն պրտղող ջուրին պես։

Վար կը կախվի սընարեն Հիսուսի խաչը կարմիր,
Բայց ճակատին վրա չինկած
Շիթ մ'Արյունեն փրկության— որ սառե՞ր է խաչին վրա—
Ինք կը մեռնի, վաստակած։

Քամին կ'ոռնա և տընակն իր հիմերեն կը ցընցե՝
Իբրև ահեղ դամբարան...
Ու սև կատուն տընակին կը մըլավե՞ խելահեղ՝
Ճանկրռտելով շեմքը դռան։

ԴԱԴԱՐ

Միջօրեի դադարն է գեհենամռունչ գործատան,—
Ինչպես վիշապ մը թըմրած՝ կը նիրհե հնոցը տիտան,
Բուխերիկին կլափին մեջ պահ մը ծուխն է խեղդըվեր.
Ներսը գլանները արշավ, և անիվներն ընդհոլով
Հանկարծ կեցեր են՝ իրենց ընթացքին մեջ խոկալով.

Այդ անդորրին մեջ միա՛յն կարծես կ'ըլլան լըսելի
Մեքենական ճախրանքին հոգնած հևքերն ահռելի։
Ընկե՛ր, թույլ տուր շողշողա երկաթներուն գագաթին
Բանվորներուն քիրտն առատ, գոհարն իրենց ճակատին.
Թույլ տուր որ ներս մացառվող արևուն մեջ, թոշըտուն,
Ջըմրուխտ ճանճերը բըզզան՝ հեգնելով կյանքը մարդուն։
Կանգնե՛ դուն մայր-դռան քով.—

Տե՛ս, պատառուն շապիկով
Անոնք փողոց կը խուժեն, և կ'ընդլայնին իբրև ծով։
Ռամիկ ուժին բանա՛կն է, և հանճա՞րն է վաստակին՝
Որ կըրեր է դարերու կոթողն իր հաղթ քամակին։
Սա փոշիով և կուպրով ծեփված գլուխները տիտան՝
Որոնց վարսերը երբեք աստղերուն մեջ չըլոգցան՝
Կը կարկառվին խենթի պես, դեպի հովերը քաղցրիկ,
Գարնան բույրով կ'ողողեն իրենց բիբերը հրթիռ։
Մերերն ունին կրոնակներ ծալված մինչև գերեզման՝
Որոնց խորեն կը լըսվին ճարճատյուններ ողբական
Համրորեն վար թավալող ողնային փուտ սյուներու։
Եվ կույսերն են դալկահար, կմախներ թոռոմած վարդերու.—
Թիթեռներուն թևին վրա զո՞ւր կը շողա թանկ փոշին,—
Հնոցին մոխի՞ռն է ցանվեր իրենց երկար թարթիչին։
Ահա մայրերն աղճատված, և արգանդները անբավ՝
Ուր սերմի հունդն արցունքի կաթիլներու փոխվեցավ.
Ահա ծիծերը, քամված ողկույզներու հանգունակ,
Որոնցմե բյուր սերունդներ խըմեցին մաղձ ու պատրանք։
Հարյուր հազա՞ր են անոնք.— բանակներ են զոհերու՝
Զոր կը տանին միշտ Ոսկյա Հորթին առջև մորթելու.
Ունին դաղված դաստակներ, և կրոնակներ ողընտեռ,
Ծուխերուն մեջ լողացող մեծ բիբերնին աստղահեռ
Այժըմ միայն թիթեղի կ'արձակեն փայլը աղոտ.
Իրենց սըրտին ծաղիկներն են խամրած, ծղոտ առ ծղոտ։
Ճակատնե՞ր լի խորշոմով, խորշոմնե՞ր լի քըրտինքով.—
Արյունոտ հաց մ'են կրեր՝ իրենց հոգին ծախելով։
Գիտեն որ այդ վաստակով պատանք մը լոկ կ'ստանան.
Բախտ մ'է սակայն ունենալ կուշտ փոր մը օրը մահվան։
Հարյուր հազա՞ր են անոնք.— անոնք են որ կանգնեցին
Անմահությունն բուրգերուն և խորհուրդներն ըսփինքսին։

Կմախքին, մարմար առ մարմար, սանդուղ եղավ գահերուն՝
Ուրկե Դենպետն ու Արքան ելան մինչև աստղերուն,
Մինչև այսօր, հիմին տակ պալատներուն, կը գրտնես
Շուշանն անոնց կրծոսկրին, անբավ սրտերն ողջակեզ.
Անոնց արյան շաղա՜խն են պատերը մռայլ Ծլտրզին.
Վատիկանի կամարներն, հողաթափերը Պապին
Անոնց լուսեղ քրտինքին մարգրիտներով են ծեփված.
Անոնց խոփին նախ հանձնեց կորդ բընությունը՝ Աստված.
Կուռքերն անո՜նք դրոշեցին, և նույն անո՜նք զոհ եղան.
Խաչն անոնցմով ճաճանչեց, բայց ուրիշներ փրրկվեցան.
Հըզկեցին միշտ իրենց հաղթ ոսկորներով կարծրացած
Հաղթողներու նժույգներուն լայնշի պայտերը արծարծ։
Փեռեկտեցան պարեխներն անոնց ուժին դեմ ռամիկ՝
Եվ հոսեցին ոսկիի և արյունի ջերմ ալիք։
Եվ մեր դարուն Հաղթության Կամարն այսօր կը հանգչի
Հարյուր հազա՜ր բանվորի ուսերուն վրա արճիճի։
Ու երբ այս օր ելլելով գործատունեն՝ կը ցրվին
Կորագլուխ, մերկալանջ, անոնք նման են գերիին՝
Զոր աճուրդի կը հանեն տոնավաճառ օրերուն։
Նման գետին, որ ակեն դուրս ժայթքելով փրրփրրուն
Կը բաժնվի սրրընթաց առվակներու անհամար,
Անոնք կ'երթան ծավալիլ գռեհներուն մեջ հազար.
Բյուրապատիկ գլուխներու անդընդածին ալիքով
Քաղաքն ամբողջ կ'ողողեն՝ ամեն անկյուն հորդելով։
Բոլոր քաղցա՜ծ են, քաղցա՜ծ, քոստած շան մը նման՝
Զոր խաշնարածը հոտեն հալածեր է անգուման։
Սակայն իրե՜նց է ինչ որ կ'իյնա կտուցեն վար ցինին.
Իրե՜նց է խյուսը թեփին, բայց ո՜չ նրկանն ալյուրին.
Խոնապուրներն իրե՜նց են՝ զոր գրլխահակ կը լակեն
Ճակատներե վար՝ անոնց մեջ քրտինքներ հոսելեն.
Նեխած միսերն ի՜րենց են, ու բորբոսները հացին՝
Զոր կը գրնեն ումպ մը ջրով կրրպակներեն փողոցին.
Երշիկն իրե՜նց է, լեցված ճարպովը ծեր ջորիի,
Հետո ծխամո՜ւրը սկցած,— միակ ըսփո՜փն հոգիի։
Ահա՜ բոլոր հույան անոնց, երազն անոնց փորերուն՝
Զոր կ'երազեն գործատան միջօրեի հեշտ ժամուն...

Ու կը քալե՜ն, կը քալե՜ն, փոշվով, կուպրով միշտ ծեփված,
Նեղ կու գան այդ ուղիներուն պողոտաներ լայնաբաց։
Իրենց հորձանքը կարծես խուլ զայրույթով կը փորե
Դղյակներու հիմունքներն, ու սալարկներն որձքարե։
Կարծես մեռե՜ր են Քաղքին մեջ մյուս կյանքերն ինքնագոհ,
Միայն Սարսափն այդ ահեղ բանակներուն՝ կու տա գրոհ.
Սրրտերն հրզոր կը տրոփե՜ն, և միշտ կ'ըլլան լրսելի
Սովալրլուկ կողերու բաբախյուններ ահռելի.
Կը կրճրտին ակռանե՜ր, ու կը ծամվին լեզունե՜ր.—
Քաղցը ինքզինք կը կրծե, գազանի պես շաղղակեր։
Ախորժակներն, ավելի գրրգրված եղկ արևեն,
Կը զայրագնին, ու քարեն իսկ հացի հոտը կ'առնեն։
Դուն կը լրսե՞ս, ո՜վ Ընկեր, գրռեհներեն բյուրավոր
Մրշտագալար փորերու խուլ աղաղակն ահավոր։
Բիբերն հանկարծ կ'ընդլայնի՜ն, և ըղեղները կ'եռա՜ն.
Կը սեղմրվին բրռունցքներն՝ ուր կը ձուլվի Ապագան.
Ճարճատյունին ընդմեջեն կրմախներու տրրտմագին
Աստվածային ոճիրներ կանչող ձայնե՜ր կը լրսվին։
Օ՜, այդ սիրտերը հրսկա, որոնց տրոփները, նրման
Փոստապետի մը բրիչին հարվածներուն, կը թընդան.
Օ՜, բազուկներն այդ ըստրուկ, խարանված բորբ երկաթով,
Որոնք կարմի՜ր պիտ՝ ըլլան օր մը գանգե՜ր դարբնելով,
Օ՜, այդ քայլերն, որոնց բիրտ սանդալներուն հունչը գոռ
Փողոցներուն թե՜ երգն է, թե՜ մահազանգն ահավոր.
Օ՜, իրաններն այդ ռամիկ, այդ մարդակներն՝ որոնք ցանգ
Աշխարհը վեր են բրռներ, ու փրտեր են անոր տակ...
Ատոնք բոլոր մրրրի՜կ են, ատոնք բոլոր կայծա՜կ են՝
Որոնք գոռան պիտի՝ օր մ'ու Մարդկությունը սարսեն։
Վաղն, ո՜վ Ընկեր, պիտի այս ամբարտավան Քաղքին վրա
Ճայթի Ամպրո՜պն, ու վառե հազար ջահերն իր հրսկա,
Զի կը տեսնե՞ս գրռեհներն, հույր աղիքները անոր,
Գետնահարկերը խոնավ, կոյուղիներն աղբաթոր.
Եվ կը տեսնե՞ս անոնց մեջ Քաղցին ճիվաղն հոգնահեռ՝
Որ քինահույզ կը սողա, կուշտին կը կրե կայծակներ.
Վաղն, ո՜վ Ընկեր, ո՜վ Ընկեր, Քաղքին վրա այս գոռոզ
Պիտի Ամպրո՜պը ճայթի, վառե ջահե՜ր բարբարոս։

ՄԱՅԻՍ ՄԵԿ

Քընարս այսօր, կըտրըտելով լարերն իր,
Ձե՞զ կը կանչե Արևելքեն Արևմուտք,
Ո՛վ դուք
Հացի՛ զոհեր, որ ունիք միշտ արևու
Պասուք։

Այս առավոտ՝ գրտա հասակըս թաղված
Հեղեղին մեջ շուրջըս ծաղկած վարդերուն...
Եվ կանգուն՝
Խմեցի ավիշն հողին, երգերը բոլոր
Բույներուն։

Ինծի՛ եկեք, ես կախարդն եմ Մայիսին.—
Ձեր քըրտինքն ես կ'ընեմ գոհար ցողն անգին
Վարդին.
Կը հեղում ձեր ոսկորներուն մեջ ցամքած՝
Արփին։

Ինծի՛ եկեք գործատուներն՝ ուր երկար
Շաղվեցիք դուք մեր Աշխարհին ցեցակեր
Նո՛ր հիմեր.
Փուռեն՝ որ ձեր գըլխուն, սըրտին վրա՝ մոխիր
է ցաներ։

Ինծի՛ եկեք նավարաներն՝ ուր կռեցիք
Նավեր, վաղվան ձեր դագաղները պողպատ։
Ելե՛ք արդ
Աղիքներեն հողին, ճահճին արգանդեն
Դա՞շտն ու ա՞րտ։

Ինծի՛, ինծի՛ եկեք այսօր բոլորնիդ.
Սիրտս ա՞յնքան բոց ունի, հոգիս ա՞յնքան լույս՝
Որ ձեր խյուս
Ցեխերեն իսկ կը շաղվեմ նո՛ր Մարդկություն
Եվ նո՛ր Հույս։

Հերի՞ք հյուծաք նրկուղներուն մեջ խոնավ,
Եվ ունեցաք միշտ կարոտ, նման խրլուրդի,
Օդի,
Եվ ժանգի պես երկաթներուն փարեցաք,
Նոթի՞։

Թող ձեր մուրճն ա՛լ չրկայծակե սալին վրա.
Մրխվա՛ծ մընան թող ատամները սղոցին՝
Հեցին.
Կոճղին խրրված՝ թող խեժերեն ժանգոտի,
Կացինն։

Ի՞նչ փույթ թե որբ մընա շարժիչ մեքենան,
Եվ գործատան մեջ ճիվաղներ սողան լուռ.
Ինչ փույթ թե ո՛ւր
Դառնա ճախրակն, ու խորտակվին լույծ փոկերն
Ընդհանուր։

Դե՛հ, քրտնաբույր ձեր շապիկներն հանեցեք.
Թող ճենճոտած ձեր գրդակները նետվին
Հնոցին.
Գլուխնիդ այսօր պիտի սուզեմ արևուն
Բոցին։

Ինծի՛ եկեք, եկեք ինծի՛, Եղբայրնե՛ր,
Ձեր ամենուդ այսօր տոնն է Մայիսի,
Վասն զի
Հողն ըստեղծիչ, ձեր ըստեղծիչ արյան լոկ
Կը խոսի։

Ձեփյուռն ահա՛,— ո՛վ տառապյալ հոգիներ,
Ձեր կուրծքերուն բացե՛ք վերքերն՝ իր անգին
Խունկին.
Աղբյուրն ահա՛,— թող գըլուխնիդ իր լույսին
Հակին։

Դեղձին ահա՛,— ծաղիկներն իր կ'անձրևե
Ձեր կոշկոճված ձեռքերուն վրա արյունոտ.

Եվ կարոտ
Կը զգա մայրին՝ որ գրրկեք զինք թևերով՝
Վիրոտ։

Ահա Արև՜ն, Արև՜ն ահա. լոկ ձեզի՜
Այսօր կ'նայի, կը համբուրե միայն ձե՜ր
Ճակատներ.
Ան՝ բոլոր մյուս ճակատներուն վրա իշխող
է թրքեր։

Ձե՜րն են դաշտեր, ձե՜րն է Քաղաքն, որուն լուռ
Փողոցներեն պետք է անցնի լոկ այսօր
Ձե՜ր թափոր,
Դրոշներ ծրփան, ծաղկին հույսեր, և գոռա
Շեփոր։

Հանգի՜ստ երգեն թող ձեզ բոլոր արծիվներ.
Հանգի՜ստ երգե քընարս, որուն, ձեզ համար,
Իբրև լար,
Ես արծիվի տրվի այսօր աղեքներ՝
Որ գոռար։

Թող ձեր շեմերը ողողվին վարդերով։
Երբ գա լուսինն ու իր բիբերը բոցե
Հածե՝
Բալասանո՜վ թող այս դիշեր ձեր դուռներն
Օծե...

ԵՓՐԵՄ

Դաշտն արդեն փակվեցավ.— վրրան վարդեր Ճիրազի,
Սուր մը հրսկա, դեռ ջերմիկ, ուրկե արյո՜ւն կը հոսի։
Կափարիչին տակ կը նիրհե. անմահություն սպասրրած,
Շանթն Աստուծո՝ խորտակված։

Զինվորներ լուռ կ'արտասվեն. թընդանոթները կ'ողբան
Ահեղ անունը անոր, բարձունքներուն վրա լերան,
Եվ ձորերուն մեջ՝ իրենց պողպատակուռ երախեն
Կ'հեղուն արցունք հրրեղեն։

Եփրե՜մ... անունդ ավասիկ քանդակվեցավ խորասույզ
Արծիվներուն կուրծքին վրա, և ճակատին վրա դարուս,
Անուն մ'որ միշտ կայծակո՜վ փորագրրված պիտի մնա
Ազատության սուրին վրա։

Երիվարիդ վրա անցար՝ ինչպես ամպրոպը կ'անցնի՝
Տանելով կրակն երկնային իր ծոցին մեջ հոլանի.
Դուն լոկ պատանք ըզգեցար, սրփռեցիր քու ծիրանին
Ժող'վուրդներու քամակին։

Կարիպալտին՝ Հռովմինն է, և Բոնաբարդ՝ Ոճիրին.—
Կը պատկանիս դո՜ւն միայն Ազատության Ոգիին։
Ըզքեզ խրրճիթ մը ծընավ, հայ վիշտը քեզ օրորեց.—
Այդ վիշտին չափ եղար մեծ։

Հայրենիքն այն, զոր քու մեծ ըստվերով խսկ լեցուցիր,
Ի՜նչ փույթ թե օր մը հյուղիդ քարերն ըրավ ցանուցիր,—
Գերիներու շըղթան ա՜յժմ էր քավությունը ինքնին
Հազկերտներու Ոճիրին։

Պատառ-պատառ կը հոշվեր ձեռքերուն մեջ Բրոնության
Հաֆզներու Երկիրն հեգ, սոխակներու Վարդաստանն։
Հարկ էր փրրկե՜լ Գեղեցիկն ու Գաղափարը ցանված.—
Կապեց սուսերդ՝ Աստված։

Նրժույգդ հեծար, հեծար այդ կայծակնավազ կենդանին՝
Որուն չհասան քամիներն ու ետևեն հևացին.
Մռունչը փողիդ թավալեց գոռոզ վաշտերն հրրեղեն՝
Եվ Ահրիմանն՝ երկինքեն։

Քաղաքներուն ապրստամբ դրոներն ի փուլ բացվեցան
Հրանոթներուդ կատաղի շունչին առջև հրահոսան։
Խրլեցիր թագն Իպլիսին, ու զայն գրրիր վերրստին
Մանուկի մ'հեղ գրլուխին։

Փախան Շահերն առջևեդ.— Պատմուճաններին պատառուն
Հազիվ բավեց ըլլալու պատանքն իրենց զորքերուն։
Սիրեց նրժույգդ հաղթական դընել անոնց գահին վրա
Լուսաբուղխ պայտն արյունլվա։

Դուն սիրեցիր ողջունել ծագող Արևն Իրանին
Աստվածորեն միշտ կանգնած թընդանոթիդ կատարին,
Կառքիդ ետև շղթայված՝ բերիր գերի բանակներ
Ժողովուրդիդ գերդ նրվեր։

Բայց ակոսն այն, զոր սուրովդ հողին լանջքին վրա բացիր
Պետք ուներ քու արյունիդ՝ որ բողբոջեր լուսալիր.—
Եվ մարմարյա՛ ճակատեդ պոռթկաց Արյունդ հըրաշող
Արշալույսին պես ծագող։

Ինկար... նման արծիվին՝ որ կ'իյնա վար ամպերեն՝
Ճանկին մեջ շանթը շոպած, հոգվույն մեջ մաս մ'արևեն.
Անհունին մեջ քու անկումդ՝ ինչպես նաև սըրտերու՝
Բացավ ակոս մ'ահարկու։

Ով որ զարկիր թուրիդ տակ՝ դյուցա՛զ մ'ըրիր զանիկա։
Դյուցազնացար ավելի դուն քու մահվըդ հրսկա։
Ա՜յս է վրճիռն.— երբ Աստված կարկառե պսակը փառքի՝
Հանճարն հարկ է խոնարհի։

Խոնարհեցար արյունլվա՝ խորության մեջ անհունին,
Ինչպես Արևն հրրավառ կ'ընկըղմի ծոցն օվկիանին.
Մարմինդ՝ Անդունդը առավ, սուրդ առավ՝ Եհովան,
Անունդ առավ՝ Ապագան։

...Կ'երգե Իրանն հաղթանակ, արդեն կուգա նոր Գարուն,
Եվ կը հյուսվի դափնիի ճյուղ մը՝ քնարիս լարերուն։
Իսպահանի լիճերուն մեջ կարապներն աղվական
Մարգրիտներով կը լոգնան։

Զո՜ւր է, Եփրե՛մ.— Մինչ ազատ ժողովուրդները արդեն
Պըղընձախույսն արձանիդ Արշալույսով կը շաղվեն,
Հո՜ն, շիրմիդ վրա, հերարձակ Մայր մը կա միշտ ցավագին
Լըքվա՜ծ Վիշտին մեջ կըրկին։

ՄԱՏՅԱՆՆ ԱՀԱ...

Հովհաննես Պալյանից

Մատյանն ահա՝ զոր խոստացա...— Երբ գըտնես
Հոն դարերու կյանքին Երազն անհատակ,
Եվ Բագոսի քըրմուհիներ վարդերես,
Որ կը պարեն բըլուրին վրա, լուսնին տակ,

Եվ աստվածներ՝ որ կ'ուզեն սիրտն Հոմերին
Դեռ ողջակեզ, կամ Մեսալին մ'հըրաշյա՝
Որ պատանքի տեղ կը սըփռե ծիրանին
Սերեն մեռած ասպետներուն մարմնին վրա,

Երբ հոն գըտնես դուն Պոմպեի գիշերներ,
Նո՜ւռն՝ հրաբուխին բարանին վրա հասունցած,
Հետո այս Դարն՝ Հիսուսի պես կարեվեր՝
Արշալույսի մը երկունքեն բըռնըված։

Երբ հոն գըտնես սըրտեր ճրագի պես մարող,
Մաքառումներն երկաթներուն ու մարդուն,
Ցեխեն կանգնող Ոճիրը խեթ, անըսքող,
Որ կը խըմե արյունն անմեղ վարդերուն,

Ո՛վ բարեկամ, խորհե թե Երգս է պատմեր
Ցավն հաճույքին և հաճույքները ցավին.—
Սիրտն ըսկիհ մ'է՝ ուր երբ լեցվին գինիներ՝
Աստվածներու սուրբ արյունին կը փոխվին,

Խորհե թե սանձն արևաբիր Բեգասիս
Ոչ ոք կըրցավ իր ափին մեջ ամփոփել.
Ագռավներու կըռընչյունները մախիզ
Խըրտչեցընել չըկըրցան վազքն անարգել.

Խորհե թե միշտ քընանդատն է միաչյա,
Եվ ներքինի՝ բարոյագետը խոհեմ.—
Տառապած Սիրտն ո՞վ պիտի կշռել կարենա
Նրժարին մեջ՝ Տիեզերքին դեմ առ դեմ։

Ա՛ն լոկ կըրնա ճանչնալ Երազը սրարբած՝
Ով կ'արբենա կյանքի դիրտովն ու խունկով,
Ա՛ն որ Մարդն է՝ լույսով, ցեխով թրրծրված,
Ա՛ն որ Մարդն է՝ սրբագործված արցունքով։

ՀԱՅԻՆ ԵՐԳԸ

ՍՈՒՄԱՅԻՆ

Թե ջրլապինդ մըշակն ի՛նչպես կը փարի
Իր կոր մաճին, կըպատռե բանչն հողերուն,
Եվ սահանքին տակ արփական շողերուն
Ի՛նչպես կ'ըլլան լերկ ակոսները բերրի,

Թե շիկագույն ցորյանն ի՛նչպես կալին մեջ
Կը բրրգանա, և աղորիք կը մարնչեն.
Ի՛նչպես կ'հորդի քացխած խըմորը տաջանն,
Զոր հուսկ կ'եփեն գեղջուկ փուռին մեջ անշեջ,

Թե կը սրփռե Հա՛ցը, Հա՛ցը սրրբազան
Ի՛նչ բերկրանքներ, արարչական ի՛նչ կրքով.
Սորվեցո՛ւր ինձ, ո՛վ հայրենի իմ Մուսան.

Սորվեցո՛ւր ինձ.— պսակե քընարս հասկերով,
Զի կալին մեջ, զով շուքին տակ ուռիին
Ահա կը նստիմ, ու նրվագներս կը ծրնի՛ն։

ԱՐՏԵՐՈՒՆ ՀՐԱՎԵՐԸ

Գյուղակներեն հորիզոնները մինչև
Կը տարածվի մեր մայրությունը հողի։
Գարունն եկա՛վ.— չի բավեր ձյունը թեթև
Ա՛լ ծածկելու մեր մերկությունը հրդի։

Վերադարձեք մեր ծոցը, ո՛վ մըշակներ,
Առավոտներն արդեն Ապրիլ կը բուրեն.
Սառեն լուծված կը կարկաչեն առվակներ.
Մեր տաք կողեն ծըլավ նարգիսը արդեն։

Մեզի եկեք.— ձեր սերմով լի բուռերուն
Մենք կը սպասենք կիներու լուռ ըղձանքով.
Ճաճանչն արդեն խըրվեցավ մեր սիրտերուն։

Պիտի լեցվին քըրտինքներու համրանքով
Հասկերը շեկ, ու պիտի ո՞րքան բերկրինք
Երբ առջի հեղ խոփը ճըմլե մեր ըստինք։

ՄՇԱԿՆԵՐԸ

Մշակնե՛րն են իմ գյուղիս, դաշտի հրզո՛ր զավակներ,
Քրտինքներով մարգարտյա՝ բընությանն թա՛գն են հյուսեր։
Կը բաբախե սիրտն հողին իրենց բրրդոտ կուրծքին տակ.
Ու իրենց լայն երակին մեջ կը հորդի արեգակ։

Երբ որ քալեն՝ մայր-երկիրն իր արգանդեն կը սարսռա.
Բայց չի խամրիր ծիլ մը իսկ գարշապարնուն տակ հրսկա։
Գրլուխն իրենց, զոր կ'հակեն առջևը սուրբ խորանին,
Պրսակված է միշտ ռակի փոշիներովը հարդին։

Ակոսներուն մեջ անոնք խինդ կը ցանեն, և Աստված
Իրենց ճակտին ակոսեն բարություններ կը հընձե։
Ավիշներու հոսուն երգն անո՞նք միայն են լրսած։

Եզին շողիքն ի՜նչ փույթ թե իրենց ձեռքերը կ'օծե,
Եվ ախորի հոտ կու գա իրենց նախշուն լոդիկեն.—
Նախ անոնց լայն ափի՜ն մեջ կը ծլին սերմերն համորեն։

ՀԱՐԿԻՔ

Եզներս են խարտյաշ, լույս ճակատներով՝
Ջոր պաճուճեր եմ նուսխայով կապույտ։
Գարունի առտվան օդեն են գինով.—
Կը նային, խաղա՜ղ, դաշտերուն անքույթ։

Ջրմեռը զանոնք խարո՜վ սընուցի.—
Մեհյանին պարարտ կուռքերն են կարծես։
Իրենց սանտրված պոչը թավարծի
Կը լիզե իրենց կողերն՝ օձի պես։

Կը սիրեմ անոնց նուսը բյուրածալ,
Ռունգերնին տամուկ, բիբերնին խոշոր՝
Ուր կա դաշտերուն երազն անայլայլ,

Եվ ճոճքը իրենց, և պոչյունն հրզոր
Հորիզոններե՜ն,— երբ կ'երթան անվերջ
Եզջյուրնին մրխած Արշալույսին մեջ։

ՀԵՐԿԵՐ

Հո՜, հոո՜ հոո՜ հոո՜.— Հողին տակ հրուընդյունն է արորին.
Լուրթ մշուշին մեջ առտվան, կողին վրրա բրլուրին
Կ'երթան եզները հուժկու՝ զանգակներով դաշնավոր,
Ու մսուրին վերջին հարդը կ'որոճան գլխիկոր։

Սարին ուսեն ծրլացող արևն ահա կը ծագի
Ու մշակին ճակտին վրա կ'դնե համբույրը ոսկի։
Մարդը կ'երթա երգելով՝ մաճն ափին մեջ պընդաջիղ,
Ու իր ճամփան կը գրծե իր հոգիին պես ուղիղ։

Հո՜, հոո՜ հոո՜ հոո՜.— Ակոսները կը բացվին մրխալով,
Եվ կը դիզվին արգավանդ հողակոշտերն իրար քով։
Մեկ ծագեն մյուսն հուլորեն կը սողա խոփը պողպատ,
Կը հեղեղե հերկերուն մեջ իր լույսերը արծաթ։

Իր տակ ճրմլված, կարեվեր, կը գալարվի հույր ճրճին.
Կ'ահաբեկին խրլուրդներ իրենց խուղին մեջ մրթին։
Բունծերն ահա կ'ոռոգվին մերթ օձերու արյունով,
Ջոր ըսպանած է արորն անոնց գլուխեն անցնելով։

Արևն արդեն կը հոսե իր երակներն հրածորան
Ակոսներուն նորաբաց արգանդին մեջ հոտևան։
Հո՜, հոո՜ հոո՜ հոո.— Անդաստանն է կորդացած այս տարի,
Բայց հերկերուն շարքն արդեն անհունորեն կ'երկարի։

Եզները հաղթ թափ կու տան, դողացնելով մերթ ընդ մերթ՝
Սուր խրթանեն՝ ըստևներն իրենց փորին լուսաշերտ։
Ի՜նչ փույթ թե ճղուղն արորին խութին դեմ հա՜նկարծ կու լա,
Եվ կը ծորի մրշակին քիրտը ամեն գուղձի վրա։

Դեռ սուրբ կոչնակը գյուղին՝ սարին ետև չըհընչած՝
Բլուրին կողը ամբողջ պիտի ըլլա թրխացած,
Եվ պիտի լայն ակոսները շար ի շար ավարտին՝
Օծված շաղովն իրիկվան, շողիքներովն հարկիքին...

Այն ատեն երբ արտին ծայրն հասած, ճիգով մը դողդոջ,
Տրղմուտ արորն հողին մեջ հանկարծ կասի,— Մշակը խոնջ
Պիտի խորհի անկասկած— հանո՜ւն վաղվան հունձքերուն—
Թե կարասի՜ մ'ոսկելից կառչեր է խոփը իսկույն։

ՑԱՆ

Սերմանո՜ղն է։— Հաղթահասակ կը կանգնի
Մայրամուտին շողերուն մեջ ոսկեթույր։
Ոտքին առջև անդաստաններն հայրենի
Կը տարածեն մերկությունին անպարույր։

Ի՞ է ամբողջ ցորեններով աստղահատ
Խորունկ գոգնոցն։ Հերկերն հերվան՝ ծարավի՝
Կը սպասեն իր լայնշի բուռին, և բուռն այդ
Արտերուն վրա՝ զերթ արշալույս՝ կը բացվի։

Մըշա՛կ, ցանե՛.— հանուն տանըդ սեղանին
Թևիդ շարժումն անպարագի՛ծ թող ըլլա.
Վաղը՝ նետած ցորեններդ այդ կը թափին
Օրհնության պես թոռնիկներուդ գլխուն վրա։

Մըշա՛կ, ցանե՛.— հանուն նոթի թըշվառին
Թող գոգնոցեդ կես չելլե ափըդ բընավ.
Աղքատ մ'այսօր ճըրագին մեջ տաճարին
Վաղվան հունձքիդ համար վերջին ձեթը դրավ։

Մըշա՛կ, ցանե՛.— հանուն Տիրոջ նըշխարին
Թող մատերեդ հորդին սերմեր լուսեղեն.
Վաղը ամեն մեկ հասկի մեջ կաթնային
Գիտ՝ հասուննա մաս մ'Հիսուսի մարմինեն։

Ցանե՛, ցանե՛.— նույն իսկ հեռու սահմանեն,
Աստղերու պես, ալիքներու պես ցանե՛։
Միտերն ի՛նչ փույթ թե հատիկներդ կ'ավարեն.—
Տեղը Աստված պիտի մարգրիտ սերմանե։

Լեցո՛ւր ակոսն, հորդե՛ հերկերը բերրի,
Հողին ծոցեն ոսկի լույսեր թող հոսին։
Օրը ահա կ'իրիկնանա.— կ'երկարի
Շուքը թևիդ հորիզոննե՛ն աստղային։

ՏԱՓԱՆ

Տափա՛ն, տափնե՛, կոշտերն հարթե,
Թաղե ցաներն հողին մեջ.
Ցորենն՝ ոսկի, սերմն՝ հակինթ է,
Երբ միանա հողին գեջ։

Տափա՛ն, թևերդ տարածե,
Գըրկե արտերը հուռթի.
Հատիկն այժմու՝ վաղը հունձ է՝
Երբ գուղձին տակ կ'անհետի։

Տափա՛ն, ըմբոստ խութը փըշրե,
Գոցե վերքերը խոփին.
Հերկն աննըվաճ ալիք մըն է՝
Զոր կ'անդորրես դուն հեշտին։

Տափա՛ն, տափնե՛, կոշտերն հարթե,
Փակե բերանն ակոսին՝
Ուր ամեն մեկ ցորեն սաթ է.—
Թող սարյակներ չը տանին։

Տափնեց տափանն, հարթեց կոշտեր,
Հըղկեց անդերը անհուն...
Այժմ հողին տակ կ'ուռին հունդեր՝
Ինչպես ծիծերն ուլերուն։

ԱՌԱՋԻՆ ԾԻԼԵՐ

Ջեղուն ավիշն հողերուն տակ պայթեցուց
Սերմերն։ Արտերս այս գիշեր
Կանանչցեր են լուսընկային տակ գարնան...
— Մայրի՛կ, ինծի ծիլ մը բեր,
Քըրտինքիս ցողը վերան։

Կատաղորե՛ն, կատաղորե՛ն հորդեր են
Տե՛ս, ցորեններն աղարծի։
Դաշտերն հագեր են զմրուխտե պատմուճան...
— Քույրի՛կ, ծիլ մը բեր ինծի,
Եղիս շողիքը վերան։

Կը փողփողին ուրտավարե արտավար
Կարծես կանաչ մոմիկներ։

Ամեն ընձյուղ մարգրիտ մ'ունի իր բերանն...
— Հոտա՜ղ, ինծի ծիլ մը բեր,
Արևուն շողը վրան։

Կը զարդարե ամայությունը հողին
Մատղաշ ծաղի՜կը հացի։
Կանանչին մեջ կոշտերը թուխ կը լողան...
— Հարսնո՜ւկ, ծիլ մը բեր ինծի,
Մատերուդ բույրը վրան։

Ծիլ արտերուս մեջն է ծրլեր նըշենիս,
Հոն միսմինա՜կը ծաղկեր...
— Մայրի՜կ, քույրի՜կ, հոտա՜ղ, հարսնո՜ւկ սիրական,
Բերեք անկե ծաղիկներ,
Բերեք վարդագույն ծաղիկներ,
Հընձվորին հո՜ւյսը վրան։

ԳԱՐՆԱՆ ԱՆՁՐԵՎ

Դաշտերուն վրա իր տրտմությամբ համառող
Անձրևը չէ՜ ասիկա։
Գարնան ջաղբն է՝ որ ցանքերուն վրա անհուն
Լուսացընցուղ կը տեղա։

Աստղերն անհայտ, կարծես հալած արևեն,
Տեղատարափ կը թափին,
Եվ կը լըվան իրենց լույսին մեջ փաղփուն
Անդաստաններն ու այգին։

Կապույտն հանկարծ կու լա բուրըն ծիծաղեն,
Եվ կը տեղա ադամանդ.
Կը լուսնան կույր աղբերակներն ու կ'երգեն
Իրենց ծընունդն արգավանդ։

Անհունն ի վար կը հեղեղվին շառաչով
Մեծ կաթիլներ շափյուղա,
Լի արևով, ցընծությունով, կապույտով,
Ծիծաղներով սատափյա։

Մարգերը թաց կ'արտաշընչեն զովություն...
Կը լըվացվին գառնուկներ...
Բո՜ւյրը հողին, հողին բո՜ւյրը, ծավալուն,
Կը լեցնե գյուղն ու եթեր։

Ու արտերո՜ւս, արտերո՜ւս մեջ քրտնաշատ
Իմ ցորյաններս համեցող
Նոր ուժերով հորդահոսա՜ն կ'ընձյուղին
Կայլակներու մեջ ի լող։

Եվ մաքրըված անտառին մեջ, այս պահուս,
— Ըստ իմ գյուղիս հեքիաթին—
Կը ծնի եղնիկն, գոտիին տակ ծիրանի,
Եղնորդ մը՝ նման լուսինին։

ՑՈՐՅԱՆԻ ԾՈՎԵՐ

Հովե՜ր կ'անցնին.—
Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կ'արթընան.
Իրենց խորքեն կը հոսի դող մ'անսահման։
Գեղադալար կողերն ի վար բըլուրին
Ծովե՜ր կ'անցնին։

Հովե՜ր կ'անցնին.—
Ա՜յնքան կ'հորդի, կը կատղի դաշտը հուռթի՝
Որ պիտի հոն արածող ուլը խեղդի։
Գոգին մեջեն ալետատան հովիտին
Ծովե՜ր կ'անցնին։

Հովե՜ր կ'անցնին.—
Ու ցորյանին պատմուճանները ծրփուն

Մերթ կը պատռին, մերթ կը կարվին փողփողուն։
Ըստվերի մեջ, լույսերու մեջ փրրփրագին
Ծովե՛ր կ'անցնին։

Հովե՛ր կ'անցնին.—
Քիստերուն տակ կ'ալեծրփին եղիներ՝
Ուր լուսնակն իր սափորին կաթն է հոսեր։
Կալերեն գյուղ, գյուղեն մինչև աղորին
Ծովե՛ր կ'անցնին։

Հովե՛ր կ'անցնին.—
Զըմրուխտներով կը ծրփա դաշտը անհուն։
Միտը կ'երգե թառած հասկի մ'օրորուն՝
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին
Ծովե՛ր կ'անցնին,
Հովե՛ր կ'անցնին։

ԿԱԿԱՉՆԵՐ

Քո՛ւյր իմ, ցանքին մեջ կակաչներ կան, քաղե՛.—
Ահա սիրող սիրտերու պես կ'արյունին։
Պիտի իրենց բաժակներեն բյուրեղե
Խըմենք ալիքն արևին։

Անոնք ա՛յնչափ բըրընկեր են՝ որ կաթեն
Հըրդեհն իրենց կ'այրե դաշտերը անհուն։
Պիտի իրենց բաժակներեն հըրակեզ
Խըմենք կայծերն աստղերուն։

Քո՛ւյր իմ, քաղե՛, լորի մը պես ծածկըված
Ցորեններուն մեջ՝ որ մեղմիկ կը նագին։
Պիտի իրենց բաժակներեն բոսորած
Խըմենք արյունն ակոսին։

Անոնք ծրռած արտույտներու բույնին վրա
Լալ շողերով ողկույզ-ողկույզ կը ծրփան։
Պիտի իրենց բաժակներեն հակընթյա
Խըմենք խոստումը Գարնան։

Քաղե՛, քո՛ւյր իմ, կակաչ չէ, բո՛ց քաղե դուն.
Հըրդեհն իրենց լեցուր գոգնոցըդ կույսի։
Պիտի իրենց բաժակներեն փափկասուն
Խըմենք կրակներն Հունիսի։

Մաղկե՛ր, ծաղկե՛ր են թերնիդ պես քնքշենի,
Կը խոսակցին ցորյանին հետ օրորուն։
Պիտի իրենց բաժակներեն ծիրանի
Խըմենք գաղտնիքն հասկերուն։

Քաղե՛, քո՛ւյր իմ, պիտի պսակվինք անոնցմով
Վաղվան զըվարթ տոնին համար գյուղակին։
Եվ պիտի այդ բաժակներեն, պարելով,
Խըմենք գինին Տարփանքին։

ԱՆԴԱՊԱՀԸ

— Էհե՛, էհե՛, արտերուն մեջ մարդ մարդաձայն չը մընա՛։
Հովերուն հետ սարեն եկող անդապահին աղաղակն է։

Ուսընդանութ պարկը կախած և մասրենի ցուպ մը ձեռքին՝
Ցորյաններու զըմրուխտին մեջ կը թափառի ան առանձին։

Արևներուն մեջ կը լողա ինչպես ամռան իշամեղուն։
Աչքերուն մեջ կը ծավալի կանանչ երազը դաշտերուն։

Գիշերը մերթ սարին նըստած լուսինին դեմ կ'ածե սըրինգ.
Խրտվիլակը ցանքին մեջեն, միակ ընկեր. կը լըսե զինք։

Երգերուն տակ անդորրական հասկերն համայն կը ծոցվորին.
Կը կատաղի՝ երբոր զանոնք իր թևի տակ լըլկե քամին։

Ան սարսափն է բոլոր անոնց՝ որ կ'ավրեն անդ ու
անդաստան.
Կը խըռովեն շողքն արևուն, կը կոխկըրտեն հացը վաղվան։

Ի՜նչ խլուրդներ է ըսպանած, և պնդագլուխ ի՜նչ գոմեշներ
Հարվածներեն իր ճարահատ ճահիճներն են ապաստաներ։

Ան դեռ երեկ քաղվորներու չըքնաղ երամ մ'հալածելով՝
Հարսի մը ոտքը ջախջախեց սատկած իշու մ'հաղթ ծընոտով։

Ու սարին վրա միշտ հովերո՜ւն, հովերո՜ւն հետ կ'աղաղակե,
— էհե՜, էհե՜, արտերուն մեջ մարդ մարդաձայն չը մընե՜։

ՀԱՍՈՒՆ ԱՐՏ

Արտըս ոսկո՜ւն է...
Նըման բոցերու,
Ցորենն է բընկեր՝
Առանց այրելու։

Արտըս ոսկո՜ւն է...
Երկինքն է կըրակ.
Հողը խորխոլած
Ծըղոտներուն տակ։

Արտըս ոսկո՜ւն է...
Քառաշար հասկեր՝
Քառաշար սաթով
Արև՛ են հագեր։

Արտըս ոսկո՜ւն է...
Բոռ, մեղու, պիծակ
Քիստերուն մեջեն
Կ'անցնին զերթ փայլակ։

Արտըս ոսկո՜ւն է...
Մերթ կ'ելլե, հովեն,
Դեղձանիկ մը թի՛ռ,
Ոսկեծուփ ծովեն։

Օրո՜ր, ոսկո՛ւն արտ,
Օ՜ր տուր, հասո՛ւն արտ,
Գամ ոսկիդ հընձեմ
Մանգաղով արծաթ։

ՀՈՒՆՁՔ

Թող սոթտըվին թեզանիքներ, գերանդիներ թող հեսանվին.—
Այս օր երկու հազար մըշակ կ'հնձեն ցորե՛նը և գարին։

Քա՜ղցր է թաղվիլ հասկերուն մեջ՝ որոնց քիստերը
խարշափուն
Կը խառնըվին բաց կուրծքերու անտառացած թուխ մազերուն։

Քա՜ղցր է լողալ համառորեն որաներուն մեջեն հեղեղ,
Ըզգալ ուռիլը բազուկին երակներուն արևազեղ։

Ահավասիկ գերանդիներ, կատաղությո՛ւն փայլատակի,
Ցորեններուն մեջ իբր արծաթ կ'ընկըղմին, դուրս կ'ելլեն՝
ոսկի։

Հասկեր կ'իյնան շարվե շարան, և կ'արյունին կակաչներ լուռ,
Բլուրներուն կողը խարտյաշ կը ծալըվի լայնասարսուռ։

Ծըփանքներ նո՛ր ծըփանքներու ներքև ընդմիշտ կը
փըլուզին.
Ալիք կ'ըլլան ակոսին մեջ՝ ծովե՛ր, ծովե՛ր, ծովե՛ր դեղին։

Ու կ'ընդլայնին դաշտեր, սարեր, խոզաններով միշտ
քըստմընած.

Հովիտին մեջ հեղեղներ կան՝ որ կը ցամքին կամաց-կամաց։

Հանկարծ թուփեր կը հայտնըվին, կամ կը ցըցվի քար մը ճերմակ.
Առվակ մ'հեռուն կը փալփըլի, որ կը նիրհեր վարսակին տակ։

Մըշակներ կան՝ որ փարշն իրենց բերնին դըրած, Արևՙն ի վեր,
Կ'ըմպեն երկա՛ր ջուրը գըլգլուն՝ զոր աղբյուրեն հարսն է բերեր։
Ոմանք իրենց ափերուն մեջ՝ մերթ կը փըշրեն հասկ մը ատոք,
Եվ կ'օրհնեն թիվն հատիկներուն, ու կը ծամեն հետո զանոնք։

Հոտաղներ կան արտերեն արտ՝ որ ժիրաժիր կը հեսանեն
Աղոտ մահիկը մանգաղին՝ աղմըկելով լուռ միջօրեն։

Եվ կը հընձե՛ն.— միշտ կը հընձե՛ն, թվի ամեն լայն շարժումի
Ամառներու բերկրությունն է՝ որ քիստե քիստ կը ծավալի։

Օ՛, ի՛նչ կոծեր, հորիզոնե հորիզոն ի՛նչ նըվաճումներ,
Ի՛նչ հեծկըլտանք հաճարներու, ի՛նչ փըլուզվող օվկիաններ։

Ու կը հընձեն, դեռ կը հընձե՛ն.— մինչև շուքերը երկարին
Եվ շըփոթվին խրարու հետ ա՛լ սահմաններն անդաստանին։

Այն ատեն լուռ ճամփուն վըրա կը տեսնըվին, շարան-շարան,
Հընձվորները՝ որ դեպ իրենց աընակներուն ճրագը կ'երթան։

Գերանդիներն անոնց ուսին կը ցոլցոլան լուսընկայեն,
Կը հովանան անոնց քըրտնած կուրծքերն անուշ ծըմակներեն։

Իսկ անդորրին մեջ դաշտերուն ահա ծըղրիթ մը արթընցած
Կը լեցընե իր երգերով ամբողջ Անհունն աստեղամած։

ՀՈՒՆՁՔ ԿԸ ԺՈՂՎԵՄ...

Հունձք կը ժողվեմ մանգաղով,
— Լուսնակը յարս է—
Ակոս-ակոս ման գալով։
— Սիրածըս հարս է։—

Գըլխաբաց եմ ու բոբիկ,
— Անո՛ւշ են հովեր—
Արտերուն մեջ թափառիկ։
— Մազե՛րն են ծովեր։—

Ցորեն, կակաչ, կարոտով,
— Կաքավը կու լա—
Կապեցի մե՛կ նարոտով։
— Ձեռքերն են հինա։—

Հասկերուն մեջ, վերևեն,
— Ասուպը անցավ—
Աստղեր մյուռոն կը ծորեն։
— Դեմքը լուսացավ։—

Քանի՞ խուրձեր շաղերով,
— Վարդենին թաց է—
Ես կապեցի խաղերով։
— Ծոցիկը բաց է։—

Արտըս խոզանով մընաց.
— Կ'երթա՞ լուսնակը—
Դեզերով լեռ եմ շինած։
— Սի՛րտս է կըրակը։—

Մանգաղըս քարին եկավ.
— Յարըս յա՛ր ունի—
Քարեն լորիկը թըռավ։
— Լե՛ռըս կ'արյունի։—

ՍԱՅԼԵՐԸ

Գյուղին ճամփայեն սայլերը կ'երթան
Հունձքով բեռնաբարձ։
Մայրամուտին մեջ շարժուն բուրգեր են՝
Ճանճանչներ հագած։

Թխադեմ տղաներ, դեղերուն վրրա,
Կը խրթանեն մերթ
Մեծդի եզերուն կողը սրրսրփուն,
Կողը լուսաշերտ։

Գոմեշներ, համառ, ետև կարկառած
Իրենց մութ լեզուն՝
Կը քանդեն որան՝ որ կը հեղեղվի
Իրենց նուսերուն։

Ցորեններ ի լյուղ պերճ արյունին մեջ
Իրիկնադեմին՝
Նոր պրսակ կ'ըլլան պրսակին վրրա
Անոնց եղջյուրին։

Ճամփան, արտերեն կալերը մինչև,
Կը ծրփա հասկով՝
Զոր ուշ մընացած հավեր կը քրրքրեն
Զրվարթ կրտուցով։

Ճամփան խարտյաշ է, կարմիր է ճամփան,
Որուն եզերքին
Արյուն կը ծորե չափազանց հասուն
Փոշոտ մորենին։

Սայլերը կ'երթան, անդորրության մեջ
Աղաղակելո՜վ...
Կը տանին արև, հրրդեհ կը տանին
Հրսկա դեզերով։

Կը տանին հեղեղն ահա լեռնացած
Քրրտինքի, Հույսի,
Որ լուծեն մինչև անիվներուն վրա
Առատ կը հոսի։

Կ'երգե՜ն տրղաներ, խրթանելով միշտ
Կողը եզերուն...
Ջինջ անհունին մեջ զիրենք կ'օրորե
Ցունցը դեզերուն։

Կ'երգեն ճրպուռին, մանգաղին նրման։
Կ'երգեն հովի պես,
Մինչ հասնին կալերն, ու հոն տարածեն
Հունձքը ծովի պես։

ՃԱՐԱԿՈՒՄ

Բրլուրին գաղջ կողին վրրա ընկողմանած
Սրրինգ կ'ածեմ.
Եզներրս լայն հովիտին մեջ, սրրտի երգով,
Ես կ'արածեմ։

Լուսնակն իջած է մանգաղված լուռ արտերուն
Մակերեսին.
Կը ծավալե խոզաններուն մեջեն հեզիկ
Կաթը լույսին։

Ջինջ գիշեր է։— Երգս անհունե անհուն, խաղաղ,
Կը ծրփծրփա.
Եվ սրրինգրս, հովերուն հետ, իր ծակերեն
Շաղե՜ր կու լա։

Հեռո՜ւն կը լսեմ բոժոժներն իմ նախիրներուս՝
Որոնք կ'արծին
Ցորյաններուն ծիղն՝ ոռոգված մեղրերուն մեջ
Ծիր-կաթինին։

Կը լրսեմ մուշ-մուշ ճարակումն՝ առվեզերքի
Թուփերուն մեջ՝
Ուր մոգին իր դունչը մրխած՝ կը բրզրկտե
Խոլորձը գեջ։

Ցուլերն ամեն, գրլուխնին կախ, կարծես դյութվա՜ծ.
Ինձ կ'երևան.
Գոմեշներուն բիբերն ահեղ՝ աստղերուն տակ
Մերթ կը շողան։

Կ'ընե միջատ մը, շուրջն անոնց, ճաճանչաթիռ
Միշտ ելևէջ։
Ճերմակ եղը կարծես կուռք մ'է, ձուլված լուսնին
Արծաթին մեջ։

Կը ճարակի՞ն,— հովուն տրված թավ պոչերնին.
Եվ կը խրմեն
Իրենց մազոտ ու բաբախուն ականջներով
Սրընգիս ակեն։

Կը ճարակի՞ն,— բութ ակռաներն իրենց մինչև
Կանանչանան,
Եվ որովայնն անպարագիծ լեցվի՛, լեցվի՛
Մարագի նման։

Այն ատեն ա՛լ դաշտերուն մեջ կը մակաղին
Մեծազանգված,
Մեկը մյուսին կրոնակին վրա, որոճալով,
Դունչը դրած.

Մինչև որ ա՛լ Արփին ծագի, լույսն արտին վրա
Իջնե սարեն,
Եվ ժողվե ցողն, հակինթ-հակինթ, անոնց խոնավ
Եղջյուրներեն։

ԽԱՉԲՈՒՌ

(Աստվածամոր սեղանին)

Քեզ կը բերեմ, Մա՛յր, հունձքերուս նախընծան։
Զոհագործե՛ սեղանիդ վրա՝ ուր, դարե՛ր,
Փեթակներուս մեղրամոմերը դեղձան
Լույս ու արցունք են հոսեր։

Դո՛ւն, սուրբ պաշտպան հայրենական հողերուս՝
Որոնց տրվիր անմահությունը գրախտի.

Միլը ծաղիկ ըրիր, հույսը՝ Արշալույս,
Որ խրրճիթիս կը ժըպտի։

Դո՛ւն, խաչբուռն այս, զոր իմ ձեռքով եմ հյուսեր,
Ընդունե՛, Մա՛յր։ Բյուր հասկերուս մեջ ասոնք
Կը նազեին կույսերու պես շիկահեր,
Արևահե՛ղց և ասո՛ր։

Գերանդիս տակ, գըլուխնին դեռ ցողով,
Լուսնեն հնձված ճառագայթի պես՝ ինկա՛ն։
Ոչ մի արտույտ քանդեր է իր կըտուցով՝
Անոնց շարքերը լըման։

Ես հյուսեցի զանոնք, գիսակ առ գիսակ,
Տալով խաչին ձևը Որդվույդ կարեվեր՝
Որուն արյունն, ամեն Զատկի, սո՛ւրբ կըրակ,
Մեր ակոսներն են խրմեր։

Իմ հույսերուս, իղձերուս հետ հյուսեցի։
Անոնց մեջ է հույզը արտին, հուրն արևուն,
Խոփին փայլակն ու թևիս թափն առնացի,
Պաղատանքն իմ թոռներուն։

Մա՛յր, խաչբուռն այս օրհնե՛. և տուր արտերուս
Ամառն՝ ոսկի, ինչպես գարունը՝ մարգրիտ.
Որքան ամբարքըս լի ըլլան՝ ջահեր լույս
Պիտի տան քու խորանիդ։

Ըրե այնպես՝ որ— նըման հի՛ն օրերուն —
Երբ դաշտերե դաշտ ժուռ գալու դուն ելլես՝
Փուշեր չըգա՛ն ոտքերուդ տակ՝ այլ սարսռուն
Կակաչներ՝ մեր սրտին պես։

ԿԱԼԵՐ

Կալերուն մեջ ես կը նըստիմ երազուն
Հովանիին տակ էշիս՝

Որ քովը սա կոճղին կապված՝ կը շրփե
Աղու ծընոտը՝ ուսիս։

Տափաստանին վրա, խաղաղ, կը փրովի
Ճերմակ ալիք մ'արևու՝
Որուն մեջ լյուղ կու գան դեզերն, և կըրիան
Եկեր է հոն տաքնալու։

Թևը հովին, ծանրացած գաղջ բույրերով,
Հազիվ ծույլ-ծույլ կը շարժի։
Կովին ըստվերը փառահեղ լույսին վրա՝
Սև կարկըտան մ'է լայնշի։

Ցինականն իր կահն ու կազմածը բերած՝
Հոն հիմներ է նո՞ր գյուղակ...
Հեռուն՝ լըքված իր մամռապատ շեմին վրա
Կը հըսկե գամփռը մինակ։

Կալերուն մեջ դեզը՝ ծեփված արևով՝
Կարծես տընակն մ'է ոսկի։
Տերևախիտ ծառին զով շուքը կ'ըլլա
Առագաստ մը նոր հարսի։

Ու ես նըստած հովանիին տակ էշիս՝
Կ'երգեմ քաջերը հողին՝
Որոնք մանգաղն հազիվ կախած պատն ի վար՝
Կը կըրթեն ցուլը կամին։

Կ'երգեմ հոտաղն՝ որ կը հարթե կալատեղ՝
Լողքարի՞ն զինքը լըծած,
Մինչ քըրտինքով կը թըրջըվի շապիկն իր
Կուրծքին վրա՝ պատրոտած։

Կ'երգեմ հարսերն՝ որ հինան դեռ մատերնուն՝
Կը մաղեն ժիր-ժիր՝ գարի.
Կը թափթրփին իրենց մաղին ծակերեն
Կարծես շիթեր գոհարի։

Կ'երգեմ մշակներն՝ որ սայլերուն կատարին
Աստվածներու պես կանգուն՝
Երկժանիով կատաղորեն կը քանդեն
Ճակատն հըսկա դեզերուն։

Կա՞մ կերգեմ՝ որ կը նավե շուրջն հունձքին
Իբրև հրագույն լիճի վրա,
Հետո ցորե՞նն աշխարհածուփ՝ որ արդեն
Հարդերուն մեջ կը լողա։

Օ՜, ի՞նչ քաղցր է երթալ խառնվիլ էությամբ
Այդ սըրբագույն վաստակին.
Տըրեխներեդ մինչև մազերդ համակվիլ
Մըղեղներուն մեջ դեղին։

Փուռի կայծի՞ն, տաշտի հացի՞ն ի խնդիր
Ըլլալ Պա՞նը կալերուն,
Վերադարձնել ջաղացքներուն սըրտին մեջ
Իրենց երգերը անհուն։

ԿԱԼԵՐՈՒ ԳԻՇԵՐ

Ամառվան քա՜ղցրը գիշեր,— գլուխը կամին վրա դըրած
Աշխատանքի սուրբ Ոգին կալերուն մեջ կը նընջե։
Կը լողա մեծ Լըռությունն աստղերուն մեջ ծովացած։
Անհունը՝ բյուր աչքերու թարթափով՝ զի՞ս կը կանչե։

Կ'երգեն, հեռուն, ծըղրիթներ։ Ջուրերուն մեջ լըճակին
Կ'ըլլա հարսնիք մը ծածուկ նայադներու՝ այս գիշեր։
Սյուքն հուզելով ուռենին ափերուն վրա գետակին՝
Կ'արթընցընե անծանոթ լարերու վրա նըվագներ։

Ծոթրիններու բույրին մեջ, պառկած կատարը դեզին՝
Ես կը թողում որ սըրտիս դըպչի ամեն մեկ ճաճանչ.
Ու կ'արբենամ գինիովն Անհունի մեծ կարասին՝
Ուր կը ճըմլվին ասուպներ քայլի մը տակ անճանաչ։

Հե՞շտ է մըտքիս ընկըղմիլ կապույտին մեջ լուսալիք,
Նավաբեկիլ— թե հարկ է— կըրակներուն մեջ վերին,
Գրտնել աստղեր նորանոր, կորսըված հի՞ն հայրենիք՝
Ուրկե ինկած հոգիս դեռ կու լա կարոտն թռերին։

Վերանալ քա՞ղցր է ինծի թևերուն վրա յըոության,
Լըսել միա՛յն Միջոցին շընչառությունն անխըոով,
Մինչև աչքերըս գոցվին քունի մը մեջ դյութական,
Ու կոպերուս տակ մընա Անհունը իր աստղերով։

Ա՛յսպես, ա՛յսպես կը կընջեն գյուղին մարգիկը ամեն.—
Հոտաղն է իր սայլին վրա, վերմակին տակ լուսածոր,
Հարսն է դեզի կատարին՝ ծոցը բացված զեփյուռեն՝
Ուր կը պարպե Հարդգողն իր կաթը սափոր առ սափոր։

Եվ այսպես՝ օր մը պառկած փողփողումին տակ երկնի,
Իմ ծընողներըս մըշակ՝ զիս հըղացան կաթոգին,
Զիս հըղացա՞ն սևեռած իրենց աչքերը բարի
Վերն ամենեն մեծ Աստղին, ամենավառ Հաբրայրքին։

ԿԱՄՆԵՐՈՎ

Կամ կը քըշեմ վազվան հույսով՝
Արևն առած Ճակտիս վըրա։
Հորիզոնը, անհուն լույսով,
Իմ աչքերուս մեջ կը լողա։
— Դարձի՛ր, կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Նվաճե դեզերը հունձքերուս, ժիր, ժիր։—

Կը թըռչըտի շուրջը կալին
Իշամեղուն, բոնկած գոհար,
Ու թափ տալով խըռպոտ տաքին՝
Լրծկանն առաջ կը մըղե հար։
— Դարձի՛ր, կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Քանդե պըսակն որանքերուն, ժիր, ժիր։—

Վարոցըս սուր, հըսկա մասուր,
Հոտված՝ սըրտեն անտառներուն՝
Իմ ծույլ եզիս կողեն հաստույր
Մերթ կը քաղե կաթիլ մ՚արյուն։
— Դարձի՛ր, կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Խուզե հասկին բոց մորուքը, ժիր, ժիր։—

Հորձանքին մեջ աշխետ հունձքին
Ես կը լողամ երգերուս հետ.
Մըղեղներուն հետ միասին
Կ՚ըմպեմ խարին հոտն արփավետ։
— Դարձի՛ր, կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Կույս հատիկին պատռե քողը, ժիր, ժիր։—

Ի՞նչ փույթ քաղցած ըլլան եզներ,
Ու մըշակներն ալ՝ ծարավի.—
Խոտն է կանանչ ձորին մեջ դեռ,
Թանն աղբյուրին մեջ կը պաղի։
— Դարձի՛ր, կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Հասկին սըրտեն սուտակ թափե, ժիր, ժիր։ —

Զուր տեղը չէր, կա՛մըս աղվոր,
Որ օծեցի քեզ կուպրերով,
Զինեցի պորտըդ սևավոր
Կայծքարե սուր ակռաներով։
— Դարձի՛ր, կամըս, արագ դարձիր, հիռ, հիռ.
Կըրծե՛ հարդին ոսկիները, ժիր, ժիր։—

Ցորե՞ն ահա, ցորե՞ն ահա,
Մըշուշին մեջ մըղեղներուն,
Անհունորե՞ն կ՚արշալույսնա։
...Զըվարթությո՞ւն խըրճիթներուն.
— Կեցի՛ր, կամըս, ա՛լ կեցիր դուն,
Խաղաղությո՞ւն խըրճիթներուն...

ՄԻՋՕՐԵ

Այս այն ժամն է՝ երբ կալին մեջ Աշխատանքն առած կանգ՝
Արևուն տակ կը հևա։
Կը նընչէ մեն մի մըշակ։
Քարայրին մեջ հեռակա
Հեծեծագին կը մեռնի զով Զեփյուռը ամբափակ։

Միջոցին սիրտն՝ հըրեղեն ցանցի մը մեջ սեղմված՝
Կը բաբախե հազի՞վ հազ։
Լըռության մեջ շողարծարծ
Ի՞նչ հըծծյուններ, ի՞նչ երազ,
Եվ ի՞նչ բույրեր առտրվան եղեգներուն կըտրըրված։

Կը քընանան անտառներ թուխ կողերուն վրա սարին՝
Արծաթահյուս քողի տակ.
Կապույտին մեջ, առանձին
Կ'երթա ամպ մը կաթնորակ
Փափուկ բուրդեն ծրվեններ թողլով ժայռի կատարին։

Կ'ընդունի հողն իր սըրտին մեջ՝ իր սըրտեն ճեղքվելով՝
Լույսին նիզակն արյունոտ։
Աղբյուր մը հոն, ծառին քով,
Կը հեծեծե նըվաղկոտ՝
Իր ոռոգած ծաղիկին վըրա մեռնի՞լ չուզելով։

Գոմեշներ՝ լուծը լըքած ճահիճին մեջ կը պառկին
Իրենց բերնեն հոսելով
Թելերն արծաթ շողիքին։
Սայլերն, անդին, դեզին քով,
Հըսկա ցուկները ցրցած՝ դատարկությա՛ն կը նային։

Այս այն ժամն է, ո՞վ հոգիս, որ ճրպուռին պես մինակ՝
Կատարներուն վրա մընաս.
Անդորրին մեջ անապակ
Դուն քու երգով արբենաս՝
Ինչպես արևն իր լույսով, իր լույսին հետ մի՞ս-մինակ։

ԳՈՒՌԸ

Իրիկվան մեջ, գյուղին քով,
Կը մըրմընչե գուռն ուռիին տակ շըքեղ։
Ջայն կը լեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
Ատաղը՝ բյուրեղ արցունքով։

Խորհուրդին մեջ ըստվերին
Կընունքի ջինջ ավազան մ'է կարծես ան՝
Ուր քաղցրորեն կը մըկըրտվի լուսընկան՝
Տըղու մը պես նորածին։

Հոգնաբեկ խումբն եզներուն
Հոն կը դիմե արահետեն ճախճախուտ՝
Ուրկե կ'հոսի, ճապաղելով, ջուրն անփույթ՝
Մարգերուն տակ՝ պըսպըղուն։

Կողեր կողի դեմ ահա՛,
Եվ գավակներ գավակներու կ'ընդհարին,
Հանկարծ մոլուցք մ'եղջյուրներու ահագին
Կը տատանի գուռին վրա։

Միահաղույն կ'երկարեն
Վիզերն իրենց, և ռունգերնին հարդամած
Հըստակ ջուրին ադամանդին մեջ մըխած՝
Հավերժորե՞ն կը խըմեն։

Կ'ըմպեն ալիքն անապակ,
Լույս ծյուրումը պարեխներուն սառնակերտ.
Ու չե՞ն խըրտչիր լուսընկայեն՝ որ մերթ-մերթ
Կ'լողա իրենց բերնին տակ։

Կը վերցընեն երբեմն, հա՛գ,
Հըզոր գլուխնին, ու կը նային սարերո՞ւն...
Կը սորսորա իրենց դունչեն՝ քարերուն՝
Ջուրը, երակ առ երակ։

Անդեորդն, հոն, մահակին
Վըրա կըռթնած՝ կը սուլե երգն հեշտօրոր,

Մինչև վեռ-վեռ ցամքի հեղուկը բոլոր,
Մընա մամուռն՝ հատակին։

Կ'երթան հետո, օրորուն,
Գոմին խաղաղ գավիթին մեջ պառկելու։—
Կը կարկաչե գյուղամեջեն, զերթ առու,
Զանգակն իրենց վիզերուն։

Ու երբ դարձյալ գան առտուն,
Պիտի գտնեն հրսկումին տակ ուռիին
Գուռը նորե՛ն լեցված երգովն աղբյուրին,
Եվ արցունքովն՝ աստղերուն։

ԵՐՆՈՒՄ

Իրիկվան մեջ հովերն հևուն
Երբ դուրս կ'ելլեն քարայրներեն՝
Մեկ ծայրեն մյուսը կալերուն
Ա՛լ կամնրված հունձքը կ'երնեն՝
Հրծծելով երգն Աշխատության.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։—

Հարս ու աղջիկ, պարմանիներ,
(Ժրպտուն վարդեր մասուրի քով)
Իրենց ճեռքին հոսելիներ՝
Կը ճեղքեն թեղն, հույսերու բով.
Ու կը պոռթկա երգն հաղթական.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։—

Ժիր շարքերուն մեջ ի՞նչ խուճապ
Ելլող իջնող բազուկներու...
Հեզեղներ են՝ որ հապշտապ

Վեր կը նետվին՝ սաթ տեգալու.
Ու կ'եռա երգն ալեռատան.
— Երնե՛, էրան, երնե՛ էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։—

Հովեր կ'անցնին, խարտիշահեր,
Թողլով որ վա՛ռը երկարին
Հարդագողի լույս ճանապարհներ՝
Ուր սարյակներ կը թափառին՝
Սուլփլով երգը ցընծության.
— Երնե՛ էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։—

Ուսերե վեր ի՞նչ փոթորիկ,
Ի՞նչ փաղփումներ մազերու մեջ...
Ցորենին հետ, հատիկ-հատիկ,
Կը թափի ցոզն իրիկվան գեջ։
Ու կ'ըղձա երգն երանության.
— Երնե՛ էրան, երնե՛ էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։—

Ու երբ ոսկվով ծեփվին կալեր,
Հարսերն ոսկի քողեր առնեն,
Եվ ցորյանի ձուլվին սարեր՝
Զոր գա լուսնակն օրհնել վերեն՝
Պիտի նվագի երգն ազվական.
— Երնե՛, էրան, երնե՛, էրան.
Հարդը քեզի, մեզի ցորյան։—

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Ափ մը ցորյան ափերուդ մեջ
Թող լեցընեմ, կըտրի՛ճ Որդիս.
Կըտրիճ Որդիս, գոտի՛ն մեջքիս.

Թող մաճակալ բաղուկներեդ
Քըսան ցուլի արյուն անցնի,
Եվ եղևնի քու հասակեդ
Քըսան տունի սյունը կանգնի.
Ու երբ Թիվովը մատերուդ
Սերմանես քու սերմընցուն՝
Հընձես Թիվո՜վն աստղերուն։

Ափ մը ցորյան գըլուխդ ի վար
Թող որ Թափեմ, Թոռնի՛կ սիրված,
Թոռնիկ սիրված, ցուպրս ծաղկած,
Թող ճակատիդ վըրա գըրվի
Հարյուր սաղմոս իմաստության,
Եվ ուսերուդ վըրա դըրվի
Տապանակը ըզգաստության.
Ու երբ հոտիդ օր մ'այցելես՝
Թող քու ափիդ գարիին
Հազար ոչխա՜ր երկարին։

Ափ մը ցորյան մազերուդ մեջ
Թող որ տեղամ, վա՜րդ Թոռնուհիս,
Վարդ Թոռնուհիս, պըսա՛կ շիրմիս.
Թող այտերուդ վըրա շողան
Ամեն գարուն նո՜ր կակաչներ,
Եվ աչքերուդ մեջը լողան
Ամեն ամառ նո՜ր ճաճանչներ.
Ու երբ տընկես ճյուղ մ'ուռիի՝
Ամեն ապրիլ դուն տեսնես
Իր շուքին տակ կանա՜նչ քեզ։

Ափ մը ցորյան ծոցերուդ մեջ
Թող որ ցանեմ, Հա՜ըսըս աղվոր,
Հարսըս աղվոր, սե՜րս հեռավոր.
Թող անկողնիդ ակոսին մեջ
Հասկ մը ծըլի՝ լըման շարքով,
Եվ օրորած օրոցքիդ մեջ
Արշալույսնե՜ր նընջեն փառքով,
Ու երբ կըթես քառսուն երինչ՝

Դույլերուդ մեջ մակըրդի
Կաթը՝ արծաթ, դալն՝ ոսկի։

Ափ մը ցորյան, ափ մը ցորյան,
Ա՜յ իմ պառավ, ա՜յ իմ Աննա,
Մեր գըլխուն ալ Թող որ տեղա.—
Թող չըսառի՜ արևն աշնան
Մեր մազերուն ձյուներուն մեջ,
Չը մարի՜ մեր մոմն իրիկվան
Ժամուն մարմար սյուներուն մեջ.
Ու երբ դըրվինք ա՛լ գերեզման՝
Մեր ներքև հո՜ղը, Աննա՜,
Քիչ մը կակո՜ւղ Թող ըլլա։

ՎԵՐԱԴԱՐՁ

Այս իրիկուն ձեզի կու գանք, ե՜րգ երգելով,
Լուսնակ ճամփով,
Ո՜վ գյուղակներ, գյուղակներ.
Ձեր բակերուն մեջ ամեն
Թող գամփռներն արթընանան,
Եվ աղբյուրները նորեն
Դույլերուն մեջ քրքըջան.—
Ձեր տոներուն համար դաշտեն՝ մաղերով
Վարդ ենք բերեր՝ խաղերով։

Այս իրիկուն ձեզի կու գանք, սե՜ր երգելով,
Սարի ճամփով,
Ո՜վ հյուղակներ, հյուղակներ.
Եղջյուրներուն դեմ եզին
Թող ա՛լ բացվին ձեր դուռներ,
Թոնիրը մխա, պըսակվին
Կապույտ ծուխով կըտուրներ.—
Ահա ձեզի հարսները՝ նո՜ր մանչերով՝
Կաթ են բերեր՝ փարչերով։

Այս իրիկուն ձեզի կու դանք, հո՜ւյան երգելով,
Աթտի ճամփով,
Ո՜վ մարագներ, մարագներ.
Ձեր պատերուն մեջ խավար
Թող նոր արև նըշողե,
Երդիկներուն վրա դալար
Լուսնակն ալյուր թող մաղե։—
Ահա ձեզի բերեր ենք խար՝ խուրձերով,
Հարդը՝ անուշ ուրցերով։

Այս իրիկուն ձեզի կու գանք, հա՜ցն երգելով,
Կալի ճամփով,
Ո՜վ ամբարներ, ամբարներ.
Ձեր մութ ծոցին մեջ հըսկա
Թող բերկրության շող ցաթի.
Սարդոստայնը ձեր վըրա
Թող ըլլա քող մ'արծաթի.
Չի բերեր են սայլե՜ր, սայլե՜ր շարքերով՝
Ցորե՜ն՝ հազար պարկերով։

ԱՄԲԱՐՆԵՐ

Տընակին մեջ մըթընշաղ, կըտուրին տակ հայրական,
Ամբարնե՜րն են, շար ի շար, ձեր բերքերով ծոցվորած։
Իրենց լայնշի արգանդեն՝ թանձը բույրերը կու գան
Աշուններուն պըտղալից և արտերուն մանգաղված։

Հո՜ն է վիգը թեխահատ, հո՜ն է գարին իլաձև.
Հո՜ն, քամվելով ակռեն ու հոսելով սարդի՜ վար,
Ցորյանն հեղե՜ղ է կապմեր։ Անոնք ոսկի և արև
Գըրկած կարծես թե ըլլան արշալույսներ ամպածրար։

Գերաններեն ծըխապատ, և մենավոր պատերեն
Սարդն անոնց վրա է փռեր արտամուճակները մոխրոտ։

Մերթ անոնց վրա կը ցաթե շեշտակի լույս մը վերեն
Տատամսելե վերջ երկա՜ր շոթչն երդիկին արևոտ։

Անոնք իրենց ծոցին մեջ գանձերն հողին ծըրարած,
Կարծես լըռիկ կը հեգնեն ձըմեռն ու սովը վաղվան...
Իրենց առջև, մշտարթուն, թավ պոչին մեջ ծըվարած,
Կը հըսկե տանը կատուն, Համբարուի մը նման։

ՄԱՐԱԳՆԵՐ

Առվույտի՜ մարագ, լեցուն բույրերով
Խունկի, հաշիշի.
Երբ դուրդ բանամ՝ ցուլերը բոլոր
Ճակատով լայնշի
Կը պոռոչեն, խո՜լ, կըտրելով իրենց
Վըզտեքը կաշի։

Ոլոռնի՜ մարագ, լեցուն լեռնաբույր
Հազար ծաղիկով.
Երբ մըսուրներուն խուրձերդ տանիմ
Կողով առ կողով՝
Կը խընկե ծոցիս, թեզանիքիս մեջ
Համեմդ՝ օրերով։

Հարդերո՜ւ մարագ, երդիկեն նայող
Արևով լեցուն.
Դու՝ որուն կակուղ դեզին վրա պառկած
Կը ցրկնի կատուն,
Դու՝ որ կ'արծաթես դունչը գառնկոտն՝
Օրհնյա՜լ ըլլաս գուն։

ԱՂՈՐԻՔ

Է՜յ աղորիք, դարձի՜ր, դարձի՜ր,
Նըստած կանանչ խորը ձորին.
Աղաղակե՜ երգըդ խորին
Դեպի լուսնակն արծաթածիր։

Դուն դողդոջուն տընակ մըն ես
Ալյուրոտած պատերով՝ ուր
Կարծես կու լան հիազարհուր
Ջըրանույշներ հագած բեհեզ։

Միշտ կը հըսկե մեջըդ, արթուն,
Աղորեպանը ճեփ-ճերմակ,
Եվ ըստ պետքի՝ մեղմ կամ արագ՝
Կը լարե սի՛րտըդ բաբախուն։

Է՜յ աղորիք, բանտվա՛ծ մրրիկ
Ծառերուն մեջ.— Աղա՛, աղա՛,
Փըրփուր խըմե՛, ալյուր տեղա՛.
Քարե կուրծքեդ տեղա՛ բարիք։

Կեցո՛ւր գետակն ընթացքին մեջ
Իր ծփանուտ բաշեն բըռնած։
Ջըրվեժն ահեղ երգի փոխած
Պոռթկա վիհեն վար գահավեժ։

Սայլե՛ր, սայլե՛ր անծայրածիր
Ջաղացքներուն ճերմակ ճամփեն
Աղոնն իրենց քեզ կը բերեն...
Է՜յ աղորիք, դարձի՛ր, դարձի՛ր։

Ցորեններ թող ալյուր ըլլան
Պորտին մեջ ժիր երկաններուն՝
Որոնք բռնված տենդով մ'անհուն՝
Կը մըռըլտան ու հիռ կու գան։

Ցորեններ թող ըլլան փոշի՝
Ջիրար գըրկող քարերուն տակ.
Ջիրար կըրծող ժայռերուն տակ
Ցորեններ թող ըլլան նաշիհ։

Մինչև լեցվին շարան-շարան
Պարկերն ու վե՛ր կանգնին նորեն,
Եվ սայլերն ալ ճըռվողելեն
Ոսկին թողած՝ լույսով դառնան։

ԳՐՔԵՐԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆՈՒՇԱԿ

Առի ըզքեզ իր ձեռքեն,
Որ շուշա՜ն մ'է անարատ.
Արդյոք սըրտին լուսեղեն
Դըրա՞վ գաղտնիքը վըրադ։

Դու կապույտ գույնն հագեր ես
Իր աչքերուն խոր, հրափա՜յլ.
Աչքեր դյութող, աչքեր վե՜ս՝
Զոր չը կրցա ես մոռնալ...

Արդ կը հանգչիս՝ տըխրունակ
Սըրտիս խորունկն, հոգվույս քով.
Վըրադ կ'հակիմ, մանուշակ,
Գուրգուրանքով, արցունքով։

Եթե դրավ ան ծոցիդ մեջ
Վարդ շուրթերեն համբույր մի,
Ձայն տուր պահեմ մինչև վերջ,
Մինչև հատա՜կը շիրմի։

Եթե, ըսե՛, թերթերուդ
Ինկավ արցունք մ'իր աչքեն՝
Այդ արցունքին խորը՝ շուտ
Մ'հոգիս խեղդեմ հեշտորեն։

Ինքն է հեռո՜ւ, դու մոտ ես,
Քընքուշ թերթերդ կ'համբուրեմ
Հուշերու մեջ, խենթի պես.
Անոնք իր սիրտ կը բուրեն։

Իր կարոտովն ես միակ,
Դու ալ ողբես բոցարկու՝
Պիտի խամրինք և ըլլանք
Ցուրտ շիրիմներ մեկ մեկու։

ՎԱՐԴԵՐ

Ո՜վ գողտրիկ վարդեր,
Վարդեր անուշակ,
Այտեն ո՞ր սուրբին
Թաղարս ինկաք։

Կապույտ գաշտերեն
Աստղե՞ր եք իջած՝
Մեր պըլպուլներուն
Երգեն կախարդված։

Երեկ, ես տեսա,
Փունջ չինեց ձեզմով
Սիրուհի դրացիս
Դըրավ ծիծին քով։

Նայվածքներուն տակ
Հիմա դուք կ'ապրիք,
Խմելով աչքերեն
Սիրտն ու իր գաղտնիք։

Պատվեր մը ունիմ
Հանձնելու ձեզի.—

Ակնարկներդ կուրծքին
Մեջ թող լա՜վ սուզի։

Որ ետքն ինձ ըսեք.—
Սեր բառին դիմաց
Ան որո՞ւ անուն
Մըրտին է գրած։

ՈՐԲՈՒՀԻՆ

Աշնան ծաղիկ մըն եմ, ծաղիկ արցունքի՝
Որ շողերու ըստվասումով կաթոգին՝
Վըհի մը նենգ եզերքին կը ցամքի.
Ցամքում մը լուռ, անզգալի, և հեշտի՜ն։

Սըրտիս որբի կըսկիծն ունիմ հյուծող զիս.
Գեղըս նախկին ճանկրոտեցին զըրկանքներ.
Եվ անհրաժեշտ գրգվանքներ իմ տարիքիս
Չը ճանչցա ես և չը գրտա սիրուէս՝ սե՜ր։

Ցուխ ու մուրի և սարսուռի խըշտյակին
Զիս թողուցին անօգնական, մենավոր.
Ո՜հ, քամահրանքը սեմիս վրա գըրեցին,
Եվ մոռացոնքն՝ որ կը ստվարի օրե օր։

...Ո՜, խեղճ ծընողք, ըսեք, արդյոք ձեր աչքեր
Ո՞ր սև ամպեն, և կամ երկրի ո՞ր խորշեն
Ձեր այն բոկոտըն ճըռզածին են հառեր՝
Զոր անոթի թափառումներ կը մաշեն։

Տեսեք, կյանքի փոթորկին մեջ ինչպես ան
Միշտ կը կըրե և կ'արյունի լըկման տակ.
Համբույրով մ'իսկ ձեր չըհուզած ճակտին վրան
Կը դալկանա, տեսեք, շուշանն ըսպիտակ։

Է՞ր դու եզերքն հեղեղատի մ'արյունի
Տընկեցիր քու թույլ եղեգնի՛կըդ վախկոտ.
Դու, ո՛վ մըշակ, ո՞վ դու մըշակ եղեռնի,
Դու, ո՛վ մայրիկ հիշատակի մը աղոտ...

...Ո՛վ մարդեր, դուք որ ինձ գութով կը նայիք,
Մի տաք ինծի ձեր հաց պատառը՝ զոր է
Թըրած օտար աշխատության մը քըրտինք,
Եթե զանի նույնիսկ Սերն ալ խըմորե։

Մի՛ տաք, մի՛ տաք ինծի ձեր ծածկքը ջերմին՝
Ուր և սակայն բընիկ ոգին չի շընչեր.
Մի՛ տաք ինծի մարխերը ձեր կըրակին,
Կամ հանգըրվան մը ոտքերուս կարեվեր։

Մի՛ կըտրատեք ձեր խնդությունն ինձ համար.
Թողե՛ք որ իր մացառուտին մեջ խեղդի
Կյանքիս ծաղիկը վայրահակ, դալկահար.
Հոգ չէ թ'ըլլամ թոշնած, լալկան կամ նոթի։

Այլ.— սա բոլոր դաշտերուն վրա խանձոտած՝
Ուր շուշանին ցամքած է սերմն իսկ վերջին.
Սա վերիվար բըլուրներուն սրգազգյաց՝
Ուր սոսկ եղիճն ու բաղբրջո՛ւկը կ'աճին.

Արաքսի սա սև փրփուրներն արցունքոտ՝
Ուր անընդհատ կը ծփան ցուրտ դիակներ,
Եվ հոշոտված քըղամիդի մահահոտ
Պատըռվածքները խութերու են կառչեր.

Սա արյունի գետեր բերող լեռներուն,
Կամ բերնին քով քարայրներու՝ որք եղան
Մարդ գիշատող անգրդ-մարդու մը սև բույն,
Եվ թաքըստոց հափափումի մը դաժան.

Փըլուզին մեջ տաճարներու, տուներու,
Ուր տեղ թաղված գանկեր երկա՞ր կը նընջեն,
Եվ կը մաշին կուրծքեր, թևեր ահարկու,
Ուր կ'իջնա սոսկ լուսնին արցունքն ուղխորեն։

Վերջապես սև ու սուգ ամեն այն տեղիք,
Ուր վանդալի մը կը տեսնվի երթևեկ...
Ո՞վ մարդեր, դո՞ւք, որ ինձ գութով կը նայիք,
Մորըս միայն գերեզմա՞նն ինձ ցույց տվեք...

Ո՛Վ ԴԱՐ, Ո՛Վ ԴԱՐ...

Ո՛վ Դար, ո՛վ Դար, Ապագան արփագունդի մը նման՝
Արշալուսված արգանդեդ պիտի ելլե շողարձակ։
Վերջալույսին գինիներն, և անուշ կաթն աստղերուն
Հրսկայական քու ծիծերդ գեղեցկորեն կ'ուռեցնեն։
Ոճիրներու քըստմնելի անկողնին մեջ պառկեցար—
Թալթըլեցավ մեծ երազդ արյուններու լիճին մեջ.
Բայց վերևեդ սավառնող հյուսիսայգերը բոլոր
Կողերուդ մեջ ծորեցին արարչահյութն Աստուծո,
Եվ գաղափարն, իր թևերն արծիվի պես տարածած,
Կը հրսկե քու երկունքիդ գալարումները հրզոր։
Պիտ՝ ըլլաս ջա՛հն Հավերժին, հո՛ւյսը Կյանքին պիտ՝ ըլլաս։
Ժամանակի պարեխին ճակատին վրա երկնամուխ՝
Ամպրոպաճայթ կայծակներ պիտի անունդ կըռեն.
Մարգարտահեռ պիտ՝ ըլլան մագաղաթներն՝ որոնց մեջ
Կամքիդ հրդեհն ու մուրճիդ կայծերն պիտի ծրարվին։
Ո՛վ, Դար, ո՛վ Դար, Եփրեմի ասպետական քա՛ջ Ոգի...
Ժողովուրդներն ավասիկ կը խորտակեն շըղթաներն
Եվ անոնցմով տերն իրենց կատաղորեն կը ձաղկեն։
Արևելքն իսկ կը զարթնու՝ նըման այն թարըմ հարսին՝
Որ վարդի պես դուրս կ'ելլե առագաստի քողերեն.
Ավանդական Քաղաքներն՝ անրջանքով պարըսպված՝
Արդ կը խռովին ծովու պես, և հընոցի պես կ'եռան՝
Ուր կը հալի լուծն երկաթ, Օրենքն ոսկի կը ձուլվի։
Մոխիրի և կապարի հրեղեն անձրև կը տեղա
Իրանին վրա։ Կը մեռնին կարապներն ալ Մեղկության

Իսպահանի արքունական վարդերուն տակ՝ գլխիկոր...
Կը սասանի Սասանաց Տունն հիմունքին վրա զաղփաղփ։
Էնճումանի շեմին վրա կը կոտրի թուրն արքային...
Ի՜նչ վատ փախուստ Շահերու, Սատրապներու կրուտրված՝
Որոնք կ'երթան ծառայել Արևմուտքի թագերուն՝
Գոգնոցի պես առջևնին կապած իրենց ծիրանին։
Ամեհագեղ երիվարն աստեղաբիր Զինյալին՝
Հրեղեն պայտն իր կը դնե Դարեհներուն գահին վրա՝
Թողլով որ իր հետքին վրա ծըլի Հույսի վարդենին.
Եվ արյունած ժողովուրդն, հավատքով լի, կ'օրորե
Շիրիմին վրա Իրանին՝ Պարսկաստանի օրորան։
Հո՜ս, ուր Սուրը կը հնձեր Հայաստանեն Բյուզանդիոն,
Նո՜ր արշալույս կը պոռթկա նահատակներուն շիրիմեն։
Հայը՝ լքված դարերեն, բայց Հավերժեն ընտրված,
Նո՜ր Իսրայել, մոխիրով ու կայծովն իր օջախին
Գիշերը ռումբ կը շաղվե, առտուն պատանք կ'զգենու՝
Եվ իր արյան օվկիանին վիհին հատակը իջած՝
Կը խուզարկե իր սրրտով, հանճարովն իր կը գտնե
Ազատության մարգարիտն, ո՜վ Դար, թագիդ իսկ համար։
Աչքերը ա՛լ մարդկային եղեմին արփվույն կը բացվին.—
Կրնա դահիճը նընչել՝ զի Մոնղոլն ա՛լ կը զարթնու.
Ու եղեռնի սուսերներն այսօր ահա կը շողան
Ավելի՛ բարձր ու արդար հաղթանակի մը համար։
Ըստամպոլի ուղիներն, առջի անգամ ըլլալով,
Ժողովուրդի հեղեղներ կ'առաջնորդեն դեպի վեհ
Դրպատակի մը ազնիվ, այսօր այլևս հասկըցված.
Դուրս կը փրսխե բռնակալն իր արյունները լակած.
Եվ Ասիո շեմն արդեն ծիրանեփայլ կը կարմրի...
Մինչդեռ անդին գեղեցիկ խոյացումով կը քանդեն
Գոգն ու Մագոգն իրենց հատ, ավանդական պարիսպներն,
Եվ զըմբռված կուռքերուն, կրնքըված հին օրենքին
Խավալման ձայնը կու գա շնփորներու երախեն.
Ասդին՝ արդեն ռուսական Մարգերուն վրա կ'որոտան
Հրավերները կռվին, և խոստումներն Երազին...
Բևեռներուն մեջ ռումբերն ամպերու պես կը գոռան։
Սառնակույտերը, նման ոգամանդյա ժայռերու,
Կը թավալին։ Արջերն խակ ընդվզումի շնփորեն

Սարսափահար աչքերով հյուսիսայգին կը նային։
Մինչ կը կանգնեն բանտերն հաղթ՝ անդին կ'իյնան
պալատներ՝
Հավնոցներու պես անարգ՝ մըրրիկներեն գերփրված։
Կ'անցնին ռումբերն Ֆինլանտեն մինչև Կավկասը խրոխտ,
Եվ պայթումին մեջ իրենց, իրենց բոցին մեջ աղվոր,
Վարդենիի հրավառ անտառակներ կը ծաղկին։
Կ'արթննան ճիշմ հասակներն, ուժ ստեղծող կ'արթննա՝
Բոցն ու արյունը իրենց հեղեղին մեջ հափափիշ
Կ'առնեն, կը գլեն, կը քշեն, կ'ընկղմեն վիհն Անցյալին
Կրոարձաններն ոսկեձուլ, քրմապետներն ընչաքաղց,
Օրինագիրքն յուղոտած և գայիսոնը ցեցոտ։
Կ'անցնի՜ն, կ'անցնի՜ն Աստվածներն, անմահացած
մարդորեն,
Պրոմեթեներ, որոնք հաղթ հասակներով արփամերձ,
Վերն, Աստուծո ոտքին տակ մանգաղն իրենց երկարած՝
Կը հնձեն դաշտերն աստղածուփ, անդաստանները լուսին,
Ու երկնային կրակով երկիրը մեր կը ցանեն։

Ո՜վ Դար, ա՜վ Դար, Ֆերրերի արյունթաթախ խրոխտ Ոգի...
Կ'ըլլա Սպանիան հրաբուխ, և Պորտուգալը՝ հրդեհ։
Յուլ ժողովուրդն եղջյուրներն իբրև շանթեր կը ցցե
Մատրիտի մեկ գահին դեմ, ճորան Հռովմի Աթոռին։
Կուստաուլուփ կը կարմրի ըմբոստներու արյունով,
Եվ իր սահանքը կ'երգե պարեխներու մեջ,— վրե՜ժ...
Անտալուզի աղջիկնե՛ր, շուշանով պըսակված,
Խոստովանիլ չեն երթար, այլ փաղանգին մեջ ըմբոստ
Կ'առուգանան։ Դրոշակներն ընկերահաշտ հայրենյաց
Քամինքաուն կը հանձնեն մազերնուն հետ թխածուփ։
Մարդկային Միտքն Ընկերվար կո՛ւ գա բանալ վերջապես
Իմաստության ըսփինքսին ապառաժե շրթունքներն.—
Հրեշն ամենուն կը խոսի, կը սորվեցնե ամենուն.
Կը պատրաստ անխքնա ճիրաններուն տակ աքնոտ
Ստության Գիրքը բոլոր դասակարգյալ քուրմերուն։
Արևելքեն Արևմուտք և Հյուսիսեն մինչ Հարավ՝
Քաղցը կ'ռանա շան մը պես, Քաղցն Հիսուսի պես նոռ լա,

Ու վերջապես միակ Զոհ, ու վերջապես միակ Ույժ
Իմաստությունն ա՛լ կ'ըլլա՝ ցարդ Տառապյալն ըլլալուն.
Ա՜ն, աշխարհի իբր առանցք կ'ըլլա օրենք մ'աննման՝
Զոր չը ճանչցավ Սոկրատես, հազի՛վ Քրիստոս երազեց։
Ո՜վ Դար, ո՜վ Դար, դու Նեռի աշխարհացունց մռա՛յլ Ոգի...

Եկեղեցին կը սարսի իր սեմերուն վրա կավե։
Բոլոր շրջան Իմաստակ Ուսուցումին չի՛ զորեր
Ավետարանը լծել անոր ոգվույն հետ անհաշտ։
Հովիվներուն սրտին մեջ կը հայտնվին գայլերն հին,
Կը նախընտրեն ա՛լ հոտերն, հոգիներն ա՛լ կը սիրեն
Երթալ ազատ. թափառիլ աստղերուն տակ խորհուրդին՝
Քան թե հրլու մակաղիլ ճիրաններու տակ նենգող։
Լոմաներու փոխարեն՝ Պապերն ի զուր կը տրքնին
Բանալ դռները Դրախտին՝ բալլիքներով ժանգոտած։
Վանքերու մեջ բոզությունը շվայտորեն կը կրտղի.
Զույգ մեղքերն այր ու կնոջ՝ կ'ապրին միակ ցանկությամբ...
Կ'ըլլա Հռովմ՝ նոր Սոդոմ, Երուսաղեմ՝ նոր Գոմոր։
Աստուծո գառը ի զո՜ւր իրենց խրոխտ բազնին վրա
Անոնք կ'հանեն աճուրդի, շռայլորեն կը բախեն
Արքայության հաճույքներն ու կրակները Դժոխքին.
Մենաշնորհով կրոնքներուն անոնք ի զուր կը սպառնան.—
Ժողովուրդն ա՛լ կը մրոնչե՞ վերքին ցավեն դարավոր.
Կ'ուզե որ Աչքն Աստուծո՝ ազատ մարդուն խիղճին մեջ
Ազատորեն ցոլանա... Սավոնառի հեստ հոգին
Ահա նորեն կ'արբենա մենաստանի մեջ ապրող
Անկեղծներուն սրտին մեջ.— Ըմբոստությունը նո՛ւյնիսկ
Բաղեղնապատ վանքերուն կամարին տակ կը փրրփրի։
Զորս ծագերու չորս գոռող Եկեղեցիքն ահավասիկ
Իրարու դեմ անգամ մ'ալ ընդդիմամարտ կը փըշրին։
Ո՜վ Պռունտ, այն խարույկն՝ ուր սուրբի պես այրեցար,
Եվ որուն կայծը— ըսե՞մ— բուրվառե մ'իսկ դրրվեցավ,

Այժըմ վրեժիդ ի խընդիր զայն կ'արծարծեն զավակներդ,
Եվ անոր մեջ կը նետեն Հասուններուն կեղծ ուրարն,
Աղերսական կոնդակներն, բոլոր թուղթերն իմաստակ,

Եվ հիշատակն արյունոտ Գալվիններու, և մատնին
Քարձ Պապերուն, որով քսան դարեր ամբողջ կընքեցին
Ճըշմարտության լույս բերանն, ու լույս ըղեղը մարդուն։
Պատրիարքներ գահազուրկ, Պատրիարքներ ընկեցիկ,
Որոնք եղան ներքինին Համիդներու Հարեմին,
Որոնք իրենց լանջախաչն արյուններով պըճնեցին,
Կը թավալին ավասիկ ճակատագրին մրրրկեն,
Եվ Մարդկությունն ողջակեզ, ու Մարդկությունը հերոս,
Ճակատագիրը իսկ է, արդարադատ Նեռն իսկ է՝
Զոր ինքն Աստվա՜ծ խոստացավ, զոր ինքն Աստվա՜ծ
ուղարկեց։

Ո՜վ Դար, ո՜վ Դար, դե՜հ անցիր, և թող քու մեջ միշտ ապրին
Ջըղաձիգ մարտ, ողջակեզ, պայքար, անկում, հաղթանակ...
Հավերժության ծոցին մեջ Սափոր մ'ես, լի արյունով,
Ե՛վ ըղեղով, և՛ կամքով, և՛ զոհերու հավատքով։
Վառ հընոց մ'ես՝ ուրկե դուրս, ճակտին դրրած Արշալույս,
Պիտի աշխարհը ելլե նորոգվա՜ծ ու գեղեցի՜կ
Եվ պիտ՝ ըլլա արժանի Արևին շուրջ դառնալուն...

Ո՜վ Դար, ո՜վ Դար հուսագեղ, դու Մարդկությա՜ն Առավոտ...

ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՆ

Հողակույտն էր ավերակ
Արքաներու արքային՝
Որուն ոսկի գահին տակ
Արքաները կու լային։

Միշտ պատերազմ ան ըրավ՝
Որ սուրն երբեք չըպաղի։
Հողն արյունի էր ծարավ,
Ինքը ծարավ էր հողի։

Հողակույտեն ծրուած վար
Ըսի.— Աշխարհ թող պիտնա՝
Որ բանաստեղծ մ'ընկերվար
Անգութ Արքան կը գրթա...

Ըսե՛, ի՞նչ բան դուն կ'ուզես.—
Շիրիմ կանգնե՞մ քու վրրա։
Ըսավ.— Հո՞ղն առ վրրայես,
Հո՞ղն առ,— սիրտրս թեթևնա։

ԳՈՒԾԱԿԸ

Ձեռքրս բռնեց գուշակն, և իր
Քարայրին քով ինծի ըսավ.
— Ափիդ մեջ կա երեք կնճիռ,—
Երեք ճամփա առջևդ ելավ։

Մին ցամաքեն քեզ կը տանի
Լուսնի լույսով մինչև անտառ՝
Ուր կը պարե կույս մ'հոլանի...
Ցուպրդ կոտրե՛ ու մի՛ երթար։

Մյուսը ծովն է ակոսվեր.
Քեզ կը տանի կըղզին դալար՝
Ուր կը վազեն ոսկի գետեր...
Ղեկրդ փշրե՛ ու մի՛ երթար։

Երրորդ ճամփան է երկինքեն.
Պարզե՛ թռիչներրդ սեփական.
Մինչև աստղերը սիրտդ այրեն՝
Շարունակե՛ դուն այդ ճամփան։

ԼՈԳԱՆՔԵՆ ՎԵՐՋ

Լոգանքեն վերջ՝ հեագ առանձին՝
Քալենք, քալենք ծովափին վրա,
Հուրբերուն տակ արեգակին,
Մինչև որ թաց հերքրդ չորնա։

Նուրբ ավազին ծոցը ջերմիկ
Թաղվին ոտքերրդ հոլանի՝
Զոր հևիհև մեն մի ալիք
Գա համբուրել ու չը հասնի։

Հուսկ արքենա ծովով, երկա՛ր,
Բերանրն ծով աչքերուդ վրա.
Արևուն տակ, ուսերդ ի վար,
Մինչև որ թաց հերքրդ չորնա։

ԴԱՎԱՌ ՃՅՈՒՂ

Կը կարդայի Դանտեն մրոայլ
Սատվածային Դրժոխքն իջած.
Պատուհանես եկավ շոգալ
Լույսն առաջվան, ցողով դեռ թաց։

Հոն— արևո՛տ, արևո՛տ էջ—
Ֆրրանչեսգա Տա Ռիմինին
Դեռ կը քավեր, արցունքի մեջ,
Տաղին համբույրն՝ իր բերանին։

Երբ երևցա՛ր...— դրրիր մոր պես
Գիրքին մեջ, հո՛ն, ճյաղ մը դալար.
Ըսիր.— Հերի՛ք. Իջնենք պարտեզ,
Վա՛րդ մ'է բացվեր քեզի համար։

ԼՈՒՍՆԻՆ

Ճերմակ լուսին, ո՞ւր կ'երթաս...
— Հյուղակներուն խավարին
Կը տանիմ շողն լույսին։
Գնա՛, լուսին, դյուր կ'երթաս։

Գոհար լուսին, ո՞ւր կ'երթաս...
— Դույլերուն մեջ արծաթի
Կը տանիմ կաթ հիվանդի։
Գնա՛, լուսին, դյուր կ'երթաս։

Լռիկ լուսին, ո՞ւր կ'երթաս...
— Կերթամ բերել ես քեզի
Ցարիդ խոստումը կույսի։
Լուսի՛ն, լուսի՛ն, զո՞ւր կ'երթաս։

ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Հանճա՛րդ Հայկյան, Նավասարդյան սա տոներուն
Արևափառ՝
Ա՛լ վերածնե փլատակներեն, և փառագոչ
Քնարըդ ա՛ռ։

Հանո՛ւն Ույժին, հանո՛ւն Գեղին, մտիր մեհյանն
Աստվածներուն.
Ջահը ձեռքիդ՝ բագնե բագին համասրփռե՛
Հուր ու արյուն։

Եվ բարձրացուր Անահիտի ծիծերն ի վեր
Բաժակըդ նուռ,
Հետո զոհվող քերթողներուն սրրտին վրա
Լեցո՛ւր, լեցո՛ւր։

Զի մենք, հանուն Սերին, Սերմին, քու հին Ցեղիդ
Մարմարեն կույս,
Մե՛նք, Ջավակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նո՛ր Արշալույս։

ԱՆԴԱՍՏԱՆ

Արևելյան կողմն աշխարհի
Խաղաղությո՛ւն թող ըլլա...
Ո՛չ արյուններ, քրտինք հոսին
Լայն երակին մեջ ակոսին.
Ու երբ հընչե կոչնակն ամեն գյուղակի՝
Օրհներգությո՛ւն թող ըլլա։

Արևմտյան կողմն աշխարհի
Բերրիությո՛ւն թող ըլլա...
Ամեն աստղե ցող կայլակի,
Ու ամեն հասկ ձուլե ոսկի.
Եվ ոչխարներն երբ սարին վրա արածին՝
Միլ ու ծաղի՛կ թող ըլլա։

Հյուսիսային կողմն աշխարհի,
Առատությո՛ւն թող ըլլա...
Ոսկի ծովուն մեջ ցորյանին
Հավետ լողա թող գերանդին.
Ու լայն ամբարն աղուններուն երբ բացվի՝
Բերկրությո՛ւն թող ըլլա։

Հարավային կողմն աշխարհի
Պրտղաբերում թող ըլլա...
Ծաղկի՛ մեղրը փեթակներուն,
Հորդի գինին բաժակներուն.
Ու երբ թխեն հարսերը հացը բարի՝
Սիրերգությո՛ւն թող ըլլա։

ՍԻՐՈՒ ԳԻՐՔԸ

ԻՆՉՈՒ

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՞ղք էր,
Փոքրիկ ծոցիդ թիթե՞ռ պետք էր,
Դուն ծե՞ր արծիվ մը բանտեցիր...

Կապույտ աչվիդ երբ որ բացիր,
Կապո՞ւյտ աղջիկ՝ պլպուլն երգ է՞ր,
Քե՛զ ալ սիրո մրմունջ պետք էր,
Դուն գուժկան մոռ՛նչս ընտրեցիր...

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր,
Քեզ սիրո մեղմ սյո՛ւք մը պետք էր,
Դուն փոթորկի՛ն կուրծքդդ բացիր...

Կ'այրի՛ն աչերդդ սևածիր,
Պիտի մեռնիս, այդպես մ'երգի՛ր,
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սե՛ր-Աստվածը սիրեցիր...

ՍԵՐԸ

Քնարիս յո՛թն աղիքներեն կանացի
Յոթը որբուկ հառաչանքներ հանեցի.
Եվ մի՛շտ ժպտիլ կը կարծեի, մի՛շտ լացի՛...

Սերն՝ հեթանոս երջանկությո՛ւնն է խաչվա՛ծ.
Սերն ա՛յն կուռքն է, որուն առջև ծնրադրած
Որբի՛ մը պես պիտի ողբար ի՛նքն Աստված...

Սերը ճերմակ անհունին մեջ կույր ա՛չն է.
Սերը՝ սիրո օվսաննան չէ՛, իր խա՛չն է.
Իր ցավերուն ընդդիմացող ո՞ր քաջն է...

Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ.
Սերն անդունդին մեջ ընկլուզումն է անվա՛խ.
Սերն՝ աչքը գոց ցայգաշրջի՛կն է անահ...

Երջանկության սեղանին վրա խրախճան՝
Բեհեզ-կարմիր ծածկույթին տակ պատմուճան՝
Սերը կրմա՛խք կոչնականն է դավաճան...

Սիրե՛լ, սիրվի՛լ.— Ոսկեղենիկ սո՛ւտ աղվոր.
Սիրե՛լ առանց սիրվելու.— Սո՛ւգ ահավոր.
Սակայն ավա՛ղ անսեր կյանքին.—Կյա՞նք է որ...

Կը տեսնե՞ս սա վիհին վրա Սեր-ակը.
Հազարնե՛ր կուլ է տրվեր այդ Սև՛ ակը.
Իր ջուրեն օր մը խենթեցավ Սևակը։

ԳԻՆՈՒՎ ՍԵՐ

Դուն Հրա՞շքն ես, դուն Երա՞զն ես, դուն Սե՛րն ես.
Տարաշխարհի չքնաղ ծաղի՛կն ես աղվոր.
Միսթիքական խնկումներով թունավոր՝
Դուն մըսեղեն խենթեցընող տաճարն ես.
Դուն Հրա՞շքն ես, դուն Երա՞զն ես, դուն Սերն ես։

Սև մազերովդ սիրե՛ զիս, գըգվե՛ զիս,
Անոնց խորհուրդը պատմե ինձ առանձին,
Որովհետև անոնք հոգիս կապեցին,
Իրենց ցանցին մեջ կապտեցի՛ն իմ հոգիս.
Սև մազերովդ սիրե՛ զիս, գըգվե՛ զիս։

Թաց աչքերդ վրա՛ս հառե տրտմապես,
Անոնց թո՛ւյնը ներարկե ինձ մկդմբեն,
Որովհետև քու աչքերդդ աղվոր են,
Խորհրդամո՛լ անտառներու շուքին պես,
Թաց աչքերդ վրա՛ս հառե տրտմապես։

Տըղու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վըրայ,
Հանգչեցուր զիս ու այտերս կըրակե՛
Քո ձյունեղե՛ն բազուկներուդ մեջ գրկե,
Ու թող մարմինդ մարմնիս վրա սարսռա՝
Տըղու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վրա։

Ահա շրթնե՛ըս կարոտովդ կ'այրին,
Ու կը լայնա արտասուքի շիթ մը տաք
Իմ մթաստվեր թարթիչներուս շուքին տակ.
Անոնց վրա դուն ցո՛ղը դիր համբույրին,
Ահա շրթներըս կարոտովըդ կ'այրին։

Բազուկներդ կը գալարվի՞ն, կը դառնա՞ն,
Տենչին կըրա՛կը նայվածքըդ կը թովե,
Որովհետև քու մո՛ւթ հոգին գինով է,
Սիրախտավո՛ր գիշերներուն պես գարնան...
Բազուկները՞դ կը գալարվին, կը դառնան։

Ժա՛մն է, աղվո՛ր, երանութեան ժամն է աս.
Շըրթներուս վրա դիր շըրթունքները՛դ բոցե,
Մոռցի՛ր կյանքը, աղվոր աչքե՛րդ ալ գոցե...
Ի՞նչ, կ'արտասվե՞ս, ու հուզումեդ կը դողա՞ս.
Ժամն է, աղվո՛ր, երանության ժամն է աս...

ՍԵՐՈՎ, ՍԵՐՈՎ...

Սերո՛վ, սերո՛վ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՛վ խոցեցիր,
Սիրտըս ջահել՝ վարդի՛ պես բաց,
Դագաղի՛ պես գոցեցիր...

Դուն քաղցրությամբ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՛վ լափեցիր,
Սիրտըս ջահել՝ վարդի՛ պես բաց,
Մեկ համբույրով խաբեցիր...

Երգո՛վ, վերքո՛վ օրրեցիր զիս,
Սրտիս տատա՛սկ ցանեցիր,
Ջահել սրտիս վարդերը բաց,
Հովին տվիր ցանուցիր...

Երանությա՛մբ լացուցիր զիս,
Սըրտիս դրախտներ ցուցուցիր,
Սիրտըս ջահել՝ վարդի պես բաց,
Ջահի՛ մը պես լուսցուցիր...

Ըսե՛, մի՞թե կրնա ըլլալ,
Որ մեռնի սերն անձանձիր,
Սիրտըս ջահել չի՛ կրնար լալ,
Սիրտըս կրակեն ցամքեցիր...

Արգիլեցիր մուտքն ինձ հոգուդ,
Սրտիդ փեղկն ինձ գոցեցիր.
Լռելն՝ անգո՛ւթ, լա՛ւն՝ անօգո՛ւտ,
Շվարեր եմ մտացի՛ր...

Ա՜յ, ի՛նչ ընեմ ես այս կյանքով,
Սրտես վարդեր փետտեցիր,
Ու կը խլեմ ես ի՛մ ձեռքով
Կոկոններն որ ձգեցիր...

Ա՛լ փակեր եմ հոգիս անլաց
Իմ խավարիս մեջ անծի՛ր,
Բայց անուրջիս դռներն են բաց,
Մի անգամ եկ ու անցիր...

Սերո՛վ, սերո՛վ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՛վ խոցեցիր,
Սիրտըս ջահե՛լ՝ վարդի պես բաց,
Դագաղի պես գոցեցիր...

ԿԱՐԱՊՆԵՐԸ

Գիշեր է լուռ, հանդա՛ռտ գիշեր ամառվան,
Մութը պատեր է երկինքը համորեն.

Հեռուներեն քանի մը լուսեր միայն,
Իրենց ձյունը վար կը կաթեն հուլորեն։
Ո՞չ մի շշուկ, լռությունը կը թրթռա,
Անծա՛յր, անծի՞ր լայնության մեջ օդերուն.
Ու բացխբվող աչքերու պես, ափին վրա,
Քաղաքներու կը պլպլա լույս հեռուն։
Բարձրը, մութին ալքերուն մեջ, հեռակա,
Ժյուրաներու ստվերը լուռ կը մրափե,
Ավելի՛ վեր արհամարհոտ ու հրսկա
Ալպյաններու սեգ ճակատն է սատափե։
Զույգ ալեփառ շղթաներու դարավոր,
Օրրանին մեջ ընկողմանած հոլանի՛,
Լեռներու վեհ հուրիներուն պես աղվոր
Կը քնանա կապույտ հոգին Լեմանի։

* * *

Գիշերն է լուռ. լիճը տրտում։ Հեռուեն,
Ճաճանչներու, փրփուրներու պես աղվոր,
Քնացող ջուրին երեսին վրա մեղմորեն
Երկու կարապ կը սահին լուռ մենավոր։
Իրենց մարմինը քնքուշ է, գեղեցիկ.
Իրենց թևերն արծաթակերտ, ձյունագեմ
Ու մարմարի իրենց վիզը սըլացիկ՝
Երազային տաճարներու սյունին պես
Կը մոտենան անոնք իրար մեղմորեն
Ու կտուցնին իրար կուռան ուղղակի,
Այնպե՛ս ինչպես ո՛չ մի շրթունք տակավին՝
Այնքա՛ն սիրով չէ՛ մոտեցած շրթունքի։

* * *

Ու ձյունափառ իրենց թևերն կառնեն վեր,
Կը գալարին իրենց վիզը երկնասլաց,
Այնպե՛ս ինչպես երկու բազուկ անձնվեր
Այնքա՛ն սիրով իրարու չեն գալարած։
Գյուղերու լո՛ւյսը կը ցոլա հեռուեն,

Վերը շուքը ժյուրաներուն հեռակա,
Ավելի՛ վեր Ալպյանները համորեն,
Ավելի՛ վեր Երկի՛նք կանգներ է վրկա։
Վա՛ր քնացող ջուրին վրա տրտմաբար,
Վեհ պարտքի մը գիտակցությա՛մբ լեցված,
Բերան բերնի, վիզը վզին անբարբա՛ռ
Կարապները կը մնան լո՛ւռ, քարացա՛ծ։

ԵՐԳ-ԵՐԳՈՑ

Երա՞զ. տեսի՞լ, անգո՛ ստվե՞ր մ'անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ.
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդյոք ցընորքի.
Քու մշուշոտ գիծերուդ ի՞նչ անուն տամ.
Երա՞զ, տեսի՞լ, անգո՛ ստվե՞ր մ'անհոգի։

Քու կապույտդ վճիտ, աղվոր ջուրերու
Եթերային անրջանքի՞ն է հանգույն.
Ու քու կարմի՛րդ Պենկալյան վարդերու
Երազամած կարմրության պես տժգո՛ւյն.
Գոգն աչերուդ կապո՛ւյտն ունիս ջուրերու։

Արցունքիդ մեջ նայադներ պար կը դառնան։
Այդ ի՞նչ հեշտանք, որ շրթներուդ մեջ կ'ըմպես.
Շունչդդ գինո՛վ է հովերու պես գարնան,
Ձայնդդ տարփոտ՝ աղբյուրներու երգին պես...
Արցունքիդ մեջ նայադներ պար կը դառնան։

Կը հմայե՛ն զիս քու աչքերդդ, կը շոյե՛ն,
Ու մարմինդդ ծորող խունկը մեղավո՛ր,
Ավելի քա՛ղցր է Քանանու գինիեն...
Հազարբուրյան ա՛յս պատարա՞գն է, աղվո՛ր,
Թե լո՛ւյծ աչերդ, որ մութ հոգիս կը շոյեն։

Հրաշագո՛... ո՛հ, քու անդրիդ բյուրեղե,
Սրունքներուդ սարսռացող ձյունն հրաշեկ,

Ու անանո՜ւն ցոլքը, որ քեզ կ'ողողե,
Մորթիդ թաքուն գանգուրներուն խուրձը շեկ...
Հրաշագո՜... ո՜հ, քու իրանդ բյուրեղե։

Տենչերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր,
Որ բազուկնե՜րըս չփընտռե՜ն քեզ իմ քով,
Սիրտս ո՜ւր էր, որ կուրծքեդ ոչինչ չհիշե՜ր,
Մինչև առտու պիտի հալե՜ր արցունքով...
Կիրքերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր։

Իզո՜ւր։ Հոգիս թաղվի՜լ կուզե հուլորեն
Ստինքներուդ մտերմությանը մեջ կույս.
Ու անութիդ որոշ մեկ ծալքը նորեն
Գիտեմ, որ զիս պիտի տանջե մինչև լույս...
Քու մե՛ջդ հոգիս թաղվիլ կուզե հուլորեն։

Տժգույն աղջի՛կ, հյուսիսայգի աչքերով,
Կոպերուդ վրա ու բիբերուդ մեջ խոնավ
Այդ ի՜նչ անճառ երանություն, ի՜նչ գորով...
Ո՛չ մեկ արգանդ քե՜զ պես հըրաշք չըծնավ,
Տժգո՜ւյն աղջիկ, հյուսիսայգի աչքերով։

ՍԻՐՈ ԱՂԲՅՈՒՐ

Ահա՛ կուգամ երջանկության ակերեն,
Արյունըս դեռ երազորեն կը հևա,
Ու արցունքներ արտևանունքըս կ'այրեն։

Աղբյո՜ւր, աղբյո՜ւր, ինչ հրճվանքով տենդագին,
Երկարեցի թշվառ շրթնե՜րս ակիդ
Ու ի՜նչ սիրով ըմպեցի ջուրը՛դ անգին։

Ո՜հ, կ'ուզեի մընալ հավետ ակիդ քով,
Նիհար ճակատս կոթնցընել քու քարիդ,
Թաղվի՜լ ջուրիդ երջանկությա՜ն պատանքով։

Ու կ'ուզեի հալիլ կուրծքիդ մեջ անհետ,
Լույծ մարմնույդ մեջ կաթի՜լ մ'ըլլալ, կե՛տ մ'ըլլալ,
Երգե՜լ, հևա՜լ, քեզի նման, քեզի հետ։

Ի՜նչ մոգություն կար մարմինիդ մեջ համակ,
Ի՞նչ կ'ըսեին ալիքներդդ վազելով,
Ու ի՜նչ հմայք կար փրփուրիդ մեջ ճերմակ։

Շրթունքս դե՜ռ քեզ կը փնտռեն տենդագին,
Ու հըրատապ այտերես վար մեղմորեն
Դողդրդալով կը սահի ցո՜ղը կյանքին...

Ահա կուգամ երջանկության ակերեն։

ՍԻՐՈ ՄՐՄՈՒՆՋ

Անոնք գացին՝ խորհուրդով ու գաղտնիքով բեռնավոր,
Գացի՜ն նավերը սիրույս իմ աչքերուս առջևեն,
Ցրուկնին վեր, դեպի մո՜ւթ եզերքները հեռավոր,
Առագաստնե՜րը գինով, մայրամուտի գա՜ղջ հովեն։

Ու տեսա որ, հինավուրց դիցուհիի պես աղվոր,
Իրենց ձյունի անարատ սրբության մեջ համորեն,
Թևերնին վեր, անծանո՜թ ափունքներու ուխտավո՜ր,
Անրջանքիս կարապները սահեցա՜ն համրորեն...

Իրիկուն է։ Կը դիտե՜մ ես լույծը անհուն ջուրի,
Հովը լռիկ կը պատմե՜ ինծի հուշքեր երջանիկ,
Ու անպատում խորհուրդով անսահման ջուրը կ'ուռի...

Քար ու փրփուր ափին վրա կը համբուրվին իմ առջիս...
Ես կը դիտեմ հեռավոր հորիզոններն, ու լռի՜կ
Գացին նավերը սիրույս ու կարապներն անուրջիս։

Անոնք գացին՝ խորհուրդով ու գաղտնիքով բեռնավոր...

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պատասխանը դեռ չըգրեց թղթիկիս.
Ուր տրտմության մը նոպային մեջ գինով՝
Դըրի ամբողջ իմ սերս, ամբո՛ղջ իմ հոգիս,
Ու ղրկեցի վարանումո՛վ, հուզումո՛վ։

Ըսի իրեն՝ թե սիրտս իրմո՛վ է առլի,
Ու գիշերներս իր երազով օրորո՛ւն,
Թե կարոտի վայրկյաններուս դառնալի
Ես կը սպասեմ վերադարձի՛ օրերուն։

Ըսի իրեն թե հուշքերըս կը թրռչին,
Կը թևածին իր պաշտելի դեմքին քով,
Թե բաժանման տրտում վայրկյանը վերջին
Աչքերըս դե՛ռ կը պղտորե արցունքով...

Ըսի՝ թե ես գինո՛վ եմ իր նայվածքին,
Թե կախարդող իր աչքերուն մեջ ծավի՝
Հավետ սուզի՛լ կ'ուզեի ես տրտմագին,
Շրթունքներըս իր համբույրի՛ն ծարավի...

Ու ըսի դեռ ինչ որ ուներ՝ ախտավոր՝
Ստվերամոլ բանաստեղծի՛ իմ հոգիս,
Պաշտամունքնե՛րս, արտասուքները՛ս բոլոր...
— Պատասխանը դեռ չըգրեց թղթիկիս։

Կը կարծեի՛, թե հուզումեն պիտի լա՛ր,
Ու նամակըս պիտի տաներ շրթունքին,
Կը կարծեի՛. — այնքա՛ն գորով ու սեր կար
Իր հրաժեշտի համբույրին մեջ տենդագի՛ն։

Թերևս հեգնեց իմ հառաչնե՛րըս երկչոտ,
Որոնց ամբո՛ղջ հոգիս հանձնել կարծեցի.
Բառերուս վրա թերևս խնդա՛ց ան պչրոտ
Իր նենգամիտ ժըպիտովը կանացի...

Ու մտածե՛լ՝ թե շատ չանցավ այն օրեն,
Ուր պաշտումիս առարկա, դեռ ան քովս էր,

Երբ աչքերը կես մշ փակած, մեղմորեն,
Երջանկության քաղցր երազնե՛ր կը հյուսեր։

Ու մտածե՛լ՝ բաժանումի իր հետին,
Ավա՛ղ, հետի՛ն համբույրին վրա սիրակեզ,
Երբ անկարող իշխելու ի՛նք իր սրտին՝
Գլուխը կուրծքիս՝ կը հեծկլտա՛ր տըղու պես...

Ո՛վ կընոջ սիրտ, պաշտամունքով, արցունքով,
Ու կեղծիքով հրաշակերտված սի՛րտ աղվոր,
Ուր կարկաչող սիրո չքնա՛ղ ակին քով՝
Մոռացության անդո՛ւնդը կա ահավոր...

ՀԱՄԲՈՒՅՐԸ

— Հոգի՛ս, դուն հո՞ս...— հեկեկաց ձայնը լալեն։
Գիշերն ուշ էր, գաղջ գիշեր էր ապրիլի,
Իր գրկին մեջ լուսնակն առած սխրալի՝
Թուփերն ի վար ջուրը կ'երթար հեալեն...

— Հոգի՛ս, դուն հո՞ս...— Ու տեսա որ ոչ հեռու,
Գետափին մոտ, հանկարծաթափ, ուժգնովին,
Հովերու պես, որոնք իրար կը ձուլվին,
Երկու ստվեր կը նետվեին իրարու...

Տարօրինակ ինչ ուներ օդն այդ գիշեր,
Որ դեռ կուրծքիս տակ հեաքն ունիմ սարսուռի,
Ու բիբերուս մեջ խոնավ կետ մը կուռի...
Ես այդ գիշերն առանց հույզի չեմ հիշեր։

Ու կը տեսնեմ աչքիս առջևն են ահա՝
Իրար ձուլված, անքակտելի՛, տենդագին,
Բերան բերնի, հուժկու բազուկը մեջքին,
Ու մազերու ծովը, որ լայն կը դողա...

Օ՜, երջանիկ տարիք, ուր մարդ կրնա գեթ
Տաք համբույրի մը անհունին մեջ մոռնալ
Գոյութիյո՛ւնն ալ, Տիեզերքն ալ, ինքզինքն ալ,
Ու աշխարհքին ժպտիլ անփույթ ու անդետ։

Օր մը Սիրո ծաղիկները կը դեղնին,
— Ե՞րբ անբաժան եղան փուշերը վարդեն—
Պետք է տքնիլ, ցավը ըմպել ու արդեն
Քիչ հետո ժամն է խորհելու սև հողին...

— Հոգի՛ս, դուն հո՞ս...— Երկար, երկար քարացան,
Այս դիրքին մեջ բերան բերնի անձնվեր,
Իրենց շունչերն կարծես իրար հանձնվեր՝
Այնքան սեր կար այդ պաշտումին մեջ անձայն...

Ու ես լռիկ, ու ես անշարժ, երկյուղա՜ծ,
Կը նայեի իրենց երկա՜ր, ու վաղվա՜ն,
Կը խորհեի, հաջորդ վաղվան ու մահվա՜ն,
Երբ զգացի թե էութիյունըս դողաց...

ՊԻՏԻ ՍՊԱՍԵՄ

Սարերի վրով գնաց, յա՜ր, յա՜ր։

Երեք տարի։ Դեռ կը սպասեմ ես իրեն։
Ահա տարտամ հորիզոնը հեռավոր,
Ահա ճամբան, որ կերկարի տրտմորեն,
Լռիկ ճամբան, որ զայն տարա՜վ մենավոր։

Ու ահա հո՜ն գյուղին վերջին տունը ցած՝
Որուն ետին՝ եղևինի ծառին քով
Երկա՜ր, երկա՜ր ես մնացի քարացած
Ու իր մեկնիլը դիտեցի արցունքով։

Երե՜ք տարի։ Այս հեք ճամբուն եզրն ի վար
Երեք անգամ ծնան մարգերը դաշտին,

Երեք անգամ ձյունի փաթիլն հողմավար՝
Անձայն հյուսեց անոնց պատանքը ցրտին։

Հուսա՜լ, հուսա՜լ վերադարձի օրերուն,
Բայց ո՞վ իրեն պիտի երթար պատմելու,
Թե երկրի մութ մեկ անկյունին մեջ հեռուն,
Ես կը սպասե՜մ իրեն՝ սիրույս իմ հրլու։

Երե՜ք տարի։ Մութ ձայն մը կա անդադրում,
Իմ վիրավոր հոգվույս մեջ չար ձայն մը կա,
Լացող ձայն մը, որ գիշերիս մեջ տրտում
Կ'ըսե ինձ... «Խե՜ղճ աղջիկ, ան չի պիտի գա...»

Ա՜խ, կը ճանչնամ քու բողոքի ձայնըդ, վի՜շտ,
Սակայն իզուր, այս է իմ գիրքս նրսեմ,
Գնա՜ պատմել տարիներուն՝ թե ես միշտ
Պիտի սպասե՜մ, պիտի սպասե՜մ, սպասե՜մ...

ՆԱՄԱԿԸ

Կես գիշեր է. ես կը գրեմ քեզ նորեն։
Չեմ գիտեր ինչ միսթիք խորհուրդ մ'է անտես,
Որ գիշերին մեջ սիրույս մութ դաշտերեն,
Ձեռքը ձեռքիս՝ կտանի զիս տրղու պես
Հեռվե՜ հեռու կածաններե անհամար,
Դեպի հոն, ուր անուրջիս մեջ կանացի՝
Քու ստվերիդ բնակությանը համար
Առասպելին դրդյակները կանգնեցի...

Կես գիշեր է. ո՛չ մեկ շշուկ, ո՛չ մեկ կյանք,
Ես կը գրեմ, լռության մեջ մեռելի.
Գրիչս է, որ սրտիս կուտա արձագանք,
Օ՜հ, մտերիմ, մենամոլ ձայն սիրելի...
«Խե՜ղճ սիրուհի» կը հեծծե ան անդադրում,
Ու պատիս չոր էտըլվեյսներն ալ կարծես,

«Խեղճ սիրուհի»... կը հանգերգեն ինձ տրտում,
Անո՜նք զոր քեզ հետ քաղեցինք, մոռցա՞ծ ես։

Մոռցա՞ր նաև այն մեծ դիշերը վրսեմ,
— Բայց ինչո՞ւ սիրտս այնքան ուժով կը տրոփե.—
Վարը Ռոնն էր, իր երգը դե՞ռ կը լսեմ,
Ալպիաններուն վերը կողն էր սատափե,
Պատշգամբեն կ'երկարեր ձեռք մը նիհար,
Որուն վրա անհունորեն՝ երկնային
Երկու շրթունք կը վառեին տենդահար. ..
Ձեռքը իմս էր, շրթունքները քուկդ էին...

Ու կը տեսնես, որ գրիչըս կը սարսռա,
Ես հիվանդն եմ հին հուշքերուս, կը ներես,
Այս խոնավ բի՛ծը նամակիս թուղթին վրա,
Արցունք մ'է, որ հիմա ինկավ աչքերես...
Բախտը մերժեց ինձ, որ սիրտերն ուզեցին.
Դուն քո ճամբեդ քալե մինակ ու հրլու.
Քենե հեռու, քենե անգետ, առանձին,
Ես միշտ հոս եմ, քեզ տենչալու, քեզ լալու...

Պիտի սիրեմ քեզ այսպես միշտ հեռուեն,
Ավա՜ղ, հեռվեն, դեռ վայրկյան մ'ալ, մինչև որ
Հոգիս երթա երազներուս դաշտերեն,
Առասպելին դղյակները հեռավոր։
Ու կը փակվին արդեն աչքերս արցունքով,
Նախազգացում մը կ'ըսե ինձ լիահույս.
«Պիտի գտնես զայն այս գիշեր ակին քով»
Ու այն ատե՜ն... ա՜հ, այն ատեն... մինչև լո՜ւյս...

Գիշեր բարի, դո՛ւն ճառագայթն արևոտ։

ՍՊՀԱՆԶԳԱՑՈՒՄ

Այսպե՜ս, այսպե՜ս... Անո՜ւյշ, անո՜ւյշ Սիրական,
Մոտեցուր մա՜նը մատներդ մանկական
Տաք կուկերո՜ւս, տաք կոպերո՜ւս դժոխքին,
Զգո՜ւյշ, զգո՜ւյշ, ա՜խ, չըլլա որ բորբոքին։

Կուրծքի՛ս հակե փոքրիկ գլուխդ հաղթական,
Լսե՛, դեռ հոն հոնդյուններ, ողբեր կա՞ն,
Լսե՛, անուշ իմ Սիրական։ Ս՜հ, անգին
Արբանք մ'է այս, որ կը խնկե իմ հոգին։

Մեռնի՜լ, մեռնի՜լ. .. Անմահանալ մահվան մեջ.
Մեռնի՜լ... գրկիդ գոգն, այսպե՜ս, մեր սերն անշեջ՝
Անհունին մեջ ծառացընել տիրական...

Մեռնի՜լ... Կուլա՞ս... կը խորհեի, տիրակա՜ն...
Թևերուդ մեջ քարանալու հաճույքին.
Քո՜ւյր, մահանո՜ւյշ, քույր, մահազոր, մահագին...

ԱՆԿԱՐԵԼԻ ՍԵՐ

Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենակ կ'անրջեմ,
Անհնարին, երկնագորով
Սեր մը, որուն տերը չեմ...

Այրող աչքերս քուն չունին,
Կը տեսնեմ մերթ մեգի պես
Զույգ մը աչեր, որ գույն չունին,
Բայց կը ապանեն տեգի պես...

Կուզեմ մեռնիլ դյուցազնային
Սիրո մ'համար աղջրկա,
Հետո աչերս վար կը նային՝
Ո՞ւր է այն Սերն, ա՜խ, չըկա՛...

ՎԵՐՋԻՆ ԿՈՉԸ

Երբեմնի Դշխոս երևեցավ ինծի,
Վար քաշեց դեմքես թևերս պղնձի.
«Կ'արտասվե՞ս, Ասպետ։ —Ո՛չ, հեծկլտացի։

Ինչո՞ւ եկեր ես նորեն խոովել զիս,
Ղրկեր եմ արդեն զինվորներն Հույսիս,
«Գիտե՞ս ուր», ըսավ։— Ո՛չ, հեծկլտացի։

Սուրացի՞ն, նետերն արձակելով վեհ,
Արևուն դեմ, օ՛րն անիծելուն պես,
«Կը դառնա՞ն», ըսավ։— Ո՛չ, հեծկլտացի։

Ահա մինակ եմ, անզեն, հուսահա՛տ,
Ու ահա դեմս ես, ո՛ւշ է արդեն, վա՛տ,
«Սիրե՛ զիս», ըսավ։— Ո՛չ, հեծկլտացի։

ԵԿՈՒՐ

Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներեն անուրջիս,
Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդե՛ս,
Վերջի՛ն անցորդ տառապանքի կամուրջիս,
Երգի մը պես, քրոջ մը պես, մոր մը պես,
Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներեն անուրջիս...

Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛ ու գերի՛.
Ե՛ս, մեղապարտ անոթը Սո՛ւրբ համբույրիդ,
Հևքս աղոթքի պես դեմքիդ շուրջ կ'դեգերի՛,
Պաշտամունքիդ ես խնկանո՛թ միամիտ։
Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛ ու գերի՛...

Քու տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողդոջ.
Ու դուն մարմի՛նն ես անմարմին երգերուս,
Խենթեցընող հավերժահա՛րսը բողբոջ,
Ցո՛ղ՝ մահացնող սրտի հազա՛ր վերքերուս,
Սուրբ տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողդոջ...

Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս,
Քե՛զ երգելեն արյունեցան, խենթացա՛ն
Յոթը վերքերն իմ բարունակ սրինգիս,

Սրտիդ ճամբուն վրա մերկ ոտներս այրեցա՛ն,
Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս...

Բա՛ց ինձ կարմի՛ր շրթներդ, կարմի՛ր վերքի պես,
Բա՛ց ինձ թևերդ, հավերժակա՛ն բանտ անո՛ւշ,
Բա՛ց ինձ հոգուդ հրաշքներուն մուտքն անտես,
Ու տո՛ւր ինձ հոն անէանալ, լո՛ւռ, անհո՛ւշ,
Բա՛ց ինձ կարմիր շրթներդդ, լայն վերքի պես...

Ահա՛ թոշնած շուշաններով քեզ կուգամ,
Ահա՛ ոտքի՛դ տակ փառքիս խեղճ սարդենին.
Ահա սրտիս խոպան դաշտն, ուր մի՛ անգամ
Ջծաղկեցավ սիրուս նիհա՛ր վարդենին,
Ահա՛ իմ սև շուշաններովս քե՛զ կուգամ ..

Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթոգին
Ո՛վ չի սիրեր պիտի մեռնի առհավետ.
Սերը պե՛տքն է, երա՛զն է, կյա՛նքն է կյանքին.
Սերը Մահվան մեջ Անուրջն է արփավետ.
Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթոգին։

ՍԻՐՈ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԵՐԳԸ

Իմ կյանքս թող աղաչավոր ե՛րգ մ'ըլլա,
Եղերակա՛ն ու միամիտ, սև՛ ողբերգ.
Իմ սիրտս թող անհունին մեջ վե՛րք մը ըլլա,
Հսկայական ու տխրորեն քա՛ղցը վերք,
Իմ կյանքս թող աղաչավոր երգ մ'ըլլա...

Ես կը սիրեմ իմ տրտմությունս դյութական.
Իմ տրտմությունս աստվածներո՛ւ ցավին պես,
Քո՛ւյր, սրտիս մեջ ի՛նչ խավարներ, վիհե՛ր կան,
Ջոր նայվածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես.
Ես կը սիրեմ իմ տրտմությունս դյութական...

Եկո՜ւր ինծի, լուսնյակին պես գեղեցիկ,
Եկո՜ւր ինծի, լո՜ւյս ու ցնծում հևալով,
Քու արծաթի շողերուդ մեջ սլացիկ
Լուսավորե՛ ավերակները լալո՜վ,
Ես Մահն եմ, ե՛կ ինձ Կյանքին պես գեղեցիկ...

Իմ կյանքս թող առվին երգին պես ըլլա,
Ու երգս անվանդ կրկնումն ըլլա թող հավե՜ր,
Իմ կյանքս թող մո՜ւթ ջրվեժին պես ըլլա
Ու դեպի քեզ անկում մ'ըլլա գահավե՜ժ,
Իմ կյանքս թող առվին երգին պես ըլլա...

Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՜ պես,
Ուր խավարներ կը փոթորկին մոլեգի՜ն,
Երկու աչերդ՝ աստվածներու սկիհին պես,
Տուր ինձ անոնց մեջ սրբացնել իմ հոգին,
Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՜ պես...

Եկո՛ւր ինծի, քե՜զ կ'ըղձա շունչըս անզոր.
Եկո՛ւր, ես մո՜ւթ բաներ պիտի քեզ ըսեմ,
Սիրո պես քաղցր՜ ու Մահվա՜ն պես հրզոր.
Գերեզմանինս լացող սյուքի՜ն պես նրսեմ,
Եկո՛ւր ինծի, քե՜զ կ'ըղձա շունչըս անզոր...

Իմ կյանքս թող կորած նավուն պես ըլլա,
Շունչդ ուռեցնե ծեր առագաստը անա՜հ,
Մի՛, մի՛ լսեր հոգնած՝ հոգիս որ կուլա,
Տա՜ր զիս սիրո կղզիներեն դեպի Մահ,
Իմ կյանքս թող կորած նավուն պես ըլլա...

ՊՁՏԻԿ ՍԻՐՏԸԴ

Ես մերթ կխորհիմ, թե աստղերն ի՞նչ են,
Սիրող աչերու պես քաղցր ու ջինջ են.
Ու ամպերն ի՞նչ են, ու Աստված ո՞վ է...
Նախանյութն առջին մարմի՞ն է, հո՞վ է...

Ու չէ՞ կարելի մեծ տիեզերքին
Մրտովի հասնիլ օր մը եղերքին.
Ու Անհունությունն իրավ անհո՞ւն է,
Ու Անմահությո՛ւնը լոկ անո՞ւն է...
Հիմար եմ, որ այսպես խոր կըխորհիմ,
Ես, որ չի գիտցա դեռ, պաշտելիդ իմ,
Ինչո՞ւ օր մը զիս սիրով սիրեցիր,
Թե կըսիրեիր՝ ինչո՞ւ լքեցիր...
Չկրցա ճանչընալ պզտըլիկ սիրտդ,
Իմ մեկ ափիս մեջ փշրելիք սիրտդ,
Բայց դեռ կըխորհիմ՝ երազիս մեջեն՝
Թե աստղերն ի՞նչ են... Սիրո պես ջի՜նջ են...

ԳԻՆՈՎ ԳԻՇԵՐ

Օդին մեջ խունկ կա, օդին մեջ համբույր,
Օդին մեջ գգվանք, օդին մեջ գաղջ բույր.
Բյո՜ւր, բյուր դիցանույշ կարծես շշնջեր՝
Զորս դիս, այս գիշեր օդին մեջ ինչե՜ր...

Ցայգին մեջ թրթռում մը կա անդադրում,
Սիրո պես հրզոր, սիրո պես տրտում,
Հազար աստղ կարծես մեկմեկու պաշեր
Վերևս, այս գիշեր երկնին մեջ ինչե՜ր...

Լիճն արծաթ փրփրով վե՜ր կելանա,
Ամեն ալյակ մեկ-մեկ սիրենա,
Ինձ կախարդ հրավեր կարծես շշնջեր.—
Այս գիշեր լճիս ծոցին մեջ ինչե՜ր...

Ա՜խ, տաք սիրտ մ'ըլլար, երկու թաց աչեր,
Գլուխըս սիրո կուրծքին վրա հանգչեր.
Թևերս իր մերկ թևին վրա խաչեր...
Այս գիշեր գինո՜վ սրտիս մեջ ինչե՜ր...

ԽՈՀԵՐԻ ԳԻՐՔԸ

ՀՈԳԻՍ

Հիվա՜նդ տերև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն։
Ի՜նչ աղվոր էր գարունը, փափուկ հովեն օրորուն,
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն ալ բյուր գույնով,
Կը խնդայի՜ն լռելյայն գաղջ արևին տաք գինով։

Բայց գարնային, կենսավե՜տ այդ պահին մեջ օրորուն,
Հիվանդ տե՜րև մը տեսա, կանաչին մեջ դաշտերուն,
Ջորցած տե՜րև մը նիհար, որ զեփյուռին հրպումով,
Մեռելամերձ կը դողար՝ մարգերուն մեջ ակնաթով։

Սիրտս անհո՜ւն ցավով լի, ես ծռեցա սրգահար,
Մատներուս մեջ առի զայն, ու իր մարմինը նիհար,
Գուրգուրանքո՜վ, արցունքով մոտեցուցի շրթունքիս։

Անժամանա՜կ թարշամած գարնան տերև մ'է հոգիս.
Ծաղիկներուն մեջ կյանքին, զեփյուռին տակ մայիսի,
Ա՛լ ժըպտալու անկարող, ան կը դողա՛, կը մըսի՜...
Հիվանդ տե՜րև մը տեսա կանաչին մեջ դաշտերուն...

ՄԵՆԱԿ ՄԱՐԴԸ

Հորիզոններու վրա հեռավոր
Խավարը իջավ, քալե՜, ուղևոր,
Խավարը իջավ. քու բույնն ո՞ւր է որ,
— Հորիզոններու վրա հեռավոր...

Հորիզոններու վրա հեռավոր
Խավարը իջավ. մանո՜ւկ, ալևո՜ր

Քաշվեր են իրենց բույնին մեջ աղվոր,
Խավարը իջավ, քու բույնդ ո՞ւր է որ...

Մինա՞կ ես, տունուտեղ չունի՞ս հեռավոր,
Մենությունն մահվան չափ է ահավոր,
Խավարը իջավ, գլուխդ ալևոր
Ջղջիկներ պիտի հրպին սրգավոր...

Կը տեսնես լույսեր խավարին մեջեն,
Հոն սիրող զույգեր զիրա՜ր կը շնչեն.
Վա՜խ, դո՜ւն ալ չունի՞ս լույս մ'ուր քեզ կանչեն
Հորիզոններո՜ւ վրա հեռավոր...

ԵՐԹԱՂ...

Երթա՜լ, երթա՜լ, երթա՜լ անձայն, անհանդես.
Երթա՜լ առվի՜ն պես՝ մարգերու տակ անտես.
Կապույտին մեջ հեզ, հողմավա՜ր ամպին պես...

Երթա՜լ՝ առանց գիտնալու, թե դեպի ո՞ւր.
Երթա՜լ՝ հեռո՜ւ ոստաններեն այս տխուր.
Երթա՜լ՝ խավար գիշերին մեջ թաքթաքուր...

Երթա՜լ, երթա՜լ, երթա՜լ առանց ճրագի.
Երթա՜լ՝ առանց սուգի, լացի, փափաքի.
Երթա՜լ՝ առանց սովի, առանց պապակի...

Երթա՜լ՝ մարդոց կույտին մեջեն լռելյայն.
Օտար մընալ իրենց Ցավին, Գիտության.
Երթալ տգետ, խուլ, համբ՜ր, կո՜ւյր հավիտյան...

Աննյութանա՜լ, անրջանա՜լ, վրսե՜մ, վե՜ս,
Երթա՜լ՝ անցայգ, անայգ երթա՜լ վերջապես,
Աչքերը գո՜ց, ցայգաշրջի՜կ խեղճին պես...

Զըգիտնա՛լ, որ հոս Իտեալը չիկա...
Ուխտագընա՞ց երթալ ափերն հեռակա,
Դեպի ուղին Երջանկության մշտակա...

Երթա՛լ, երթա՛լ, չճանչնալ Մարդ ու Աստված,
Զո՞ւյգ երթալ՝ ձե՛ռքդ քո՛ւյր ձեռքի մեջ դըրած՝
Անըրջանքի՞ն ու Սիրույն պես—աքսորվա՞ծ...

ԵՐԵԿ, ՋՈՒՐ

Ո՞վ պիտի երգե քու անփառունակ
Կյանքիդ միամիտ տաղը, մատա՞ղ ջուր,
Որ լո՞ւյծ դայլայլի մը պես շարունակ
Կը փրփրիս, կ՝երթաս դաշտերուն մեջ ուր՝
Դարե՞ր դարերով ե՛րգդ է գոհունակ։

Ո՞վ պիտի պատմե վազքերդ մշտոլոր՝
Վայրի վարդերու երազանքն ի վար.
Ո՞վ պիտի ցույց տա փրփուրներուդ խոր,
Հև ի հև կյանքիդ իղձերն հոգեվար,
Վետ-վետ սեզերու շրյանքն ալ բոլոր։

Լուռ անրջանքի պահուն ցայգալին,
Ո՞վ պիտի պատմե խիճերուդ լեզուն,
Ու հեքիաթունակ սերն ուռենիին,
Երբ մութ գիշերով իրեն աղազուն
Ոստերը, փախչող հոգվույդ կը հայի՛ն....

Միամի՞տ վտակ, դարերե ի դար
Դուն մամռոտ ճամբեդ կ՝երթաս անմոլոր.
Ու երբ կը մեռնին շուրջդ անմխիթար՝
Գարնայնի գույն-գույն ծաղիկներդ բոլոր,
Երկու քարի մեջ կ՝երգես անդադար.

Երնե՞կ քեզ, վտա՛կ, մեռնիլ չունիս դուն.
Արցունքե մարմինդ կը վարես անվերջ,
Գիշերներու մեջ միայնակ, արթուն,
Անսկիզբն, անվերջ, վտիտ փոսիդ մեջ
Կ՝երդես, երնեկ, ջուր, վախճան չունիս դուն...

Ու երբ այս տողերն մրոտող նիհար
Ձեռքեն օր մը լոկ պուտ մը հող ապրի,
Ուրիշ քերթող մ՝ալ, ինձի չափ հիմար,
Պիտի գա հարկավ երգերդ վայրի
Հանգի, չափի տակ առնելու համար։

Մինչև հավերժորեն կյանքո՛տ, զվարթո՞ւն,
Պիտի կարկաչե քու ջուրդ հարաշարժ՝
Հեգնելով արվեստն ու կյանքը մարդուն. ..
Ո՞վ անմահության ըստվեր գետնաքարշ.
Վտա՛կ, երնե՞կ քեզ, մեռնիլ չունիս դուն։

ԱՐԳԱՍԱՎՈՐՈՒՄ

Մառախուղի առավոտով, ծե՞ր, ձիերը կը քաշեն,
Դանդա՞ղ, անիվը չի ճռար ձյունին վրա։ Միայն, շե՞ն,
Խարազանն է, որ կը խոսի թաց ոգերու մռայլ սուգին,
Ու կ՝երկարե՞ ճամբան, մինա՞կ՝ անհորիզոն, ահագին։

Ինքնասուզվա՞ծ, նախատիպար այդ կառքին մեջ գյուղաշեն,
Ես կը դիտեմ սառած ձյունը կախված իրենց լա՞յն բաշեն։
Ծե՞ր, կը քաշեն։ Խեղճ ամոլը։ Աջն արուն է, ձախն՝ էգին,
Խորշոմ Ծաղիկը կ՝երևա, պոչին շարժքեն, ցավագին...

Հալածվա՞ծ զույգ։ Ու կը խորհիմ, թե այդ երկո՛ւքը միայն,
Մշտնջենական Տառապանքն է զոր կը տանին լռկլայն,
Եվ թե մե՛կը մյուսին բավ է՝ խեղճ բնազդի մը հլու՝
Տառապագին սերունդի մը ամբողջ սերմը դընելու...

Այսպես, թշվա՜ռ, արքայափառ մտրակի մը ներքև շե՜ն,
Հավիտյանին Անեծքն իրենց Արգանդին մեջ ախտաշեն,
Մառախուղի առավոտով, ծե՜ր, ձիերը կը քաշեն...

ԳԱՅՈՂ ՄԱՐԴԸ

Չեմ գիտեր ո՜վ, չեմ գիտեր ո՞ւր
Կ'երթա... Հի՜ն, հի՜ն ասպետ մը լուռ,
Կ'ըսեն ձիու վրա տխուր՝
Կ'երթա շուտ-շուտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կը տեսնեմ մեծ շուքն իր նիհար՝
Վերջալույսին, ամպերեն վար,
Սև նժույգին վրա հոգեվար
Սարե՜ն կ'երթա, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'երթա, շո՜ւտ, շո՜ւտ, ու չի տեսներ,
Որ ետևեն բյուր կմախքներ
Ա՜լ վազելեն շատ են հոգներ,
Ան կ'երթա շո՜ւտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'ըսեն՝ դղյակ մ'ունի աղվոր,
Կամ ուխտ մը սուրբ, սեր մ'հեռավոր,
Եվ հո՜ն կերթա... Եվ գիտեմ, որ
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...

ՄԵԾԴ ԱՍՏՎԱԾ

Ահա ջուրերդ։ Աղվոր լիճե՜րդ ահա,
Ահա ծովերդ, օվկիանոսներդ մըթին,
Որոնց վրրա շունչդ կյանքոտ կը խաղա՝
Փայփայելով հսկաներն այն անդունդին։

Խոտերուն մեջ սահող հեզիկ առվակեդ
Մինչև ջուրե՜րը դարավոր Նեղոսի,
Մինչև հո՜ն, ուր Նիագարան փրփրավետ
Գահավեժին մեջ գոռալով կը հոսի։

Ահա հողերդ։ Լուռ անդունդներդ մթաստվեր,
Ուր քու հոգիդ մենավորիկ կ'երազե՜.
Ու բոցավառ արևուն տակ կենսավեր
Տոչորող լա՜յն անապատներդ ավազե։

Կանաչավետ քու դաշտերեդ լայնածիր,
Մինչև ձորերն ու անդունդներդ ահավոր,
Մինչև լեռներդ, որ դուն ձեռքովդ կանգնեցիր,
Ալպիաններեն՝ Հիմալայան ալևոր։

Ահա՛ երկինքդ։ Երազամոլ, կապտագե՜ղ,
Անծիր, անծա՜յր տարածությունը անհուն,
Լույս մատներեդ վառված աստղերդ շքեղ՝
Խորհրդաստվեր կամարիդ վրա պլպլուն։

Ու արևուդ բոցափայլ գունտը կրակի,
Ու լուսնյակիդ սիրախտավոր դեմքն աղվոր,
Ու տրտմանույշ վերջալույսնե՜րդ ոսկի,
Ու կենսալիր արշալույսներդ փառավոր։

Ահա՛ Մարդերդ։ Ահա՛ Մարդերդ ալ, Աստվա՜ծ,
Տխուր հյուրերն այս հրաշագեղ աշխարհքին,
Թափառական, վաղորդյանե՜ն ընկճված,
Ճղճիմ, թշվառ, հողին կառչած, ախտագի՜ն։

Ճակատագրին մտրակին տակ խելահե՜ղ,
Անոնք կուլան ու կը վազեն մտացի՜ր,
— Իրենց ճակտին վրա Մահվան գիրն ահեղ—
Անոնք զոր Դուն պատկերիդ վրա ձևեցիր...

Ահա՛ Մարդերդ, ահա՛ Մարդերդ, Մեծդ Աստված։

ՑՆԾՈՒՆ ՄԵԼ

Քերթողն ըսավ.— «Անո՜ւշ վըտակ,
Շյուղերու տակ, ճյուղերու տակ,
Ո՞ւր կը վազես աննըպատակ...

Վարդեր կուլան շուրթիդ վերև,
Սեզեր կուտան քեզ բյուր բարև,
Քե՜զ կը կանչեն ծաղիկ, տերև...

Լուսնակի ցոլքը ծոցդ առած,
Դաշտերու մեջ լայնատարած,
Ո՞ւր կը վազես դուն շվարած...

Կյանքդ արդեն կարճ է, ա՛յ վըտակ,
Մի՛, մի՛ վազեր ծովն անհատակ
Պիտի թաղե քեզ ալյաց տակ...

Վտակն հծծեց.— «Թող անդադրում
Վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում»։

Թո՜ղ, որ երգեմ լույսն ու մութին,
Ի՜նչ փույթ, թե մահն է քայլ մ'անդին,
Ես սիրահար եմ մարմանդին...

Ու մինչ քերթողը կ'երազեր՝
Լալո՜վ, վըտակը եռուզեռ,
Երգով իր մահը կը վազեր...

ՍՊԻՆԳ

Ո՞վ խեղճ սըրինգ, տարաբախտ ոստ,
Ան ո՞ր անգութ ձեռքն էր անտես,
Կամ ո՞ր կայծակն որոտընդոստ,
Որ խլեց, չորցուց քեզ ոսկրի պես...

Ո՞վ ծակոտեց քու նիհար ցող,
Չի կա նեկտար մ'ալ, որ ըմպես,
Ո՛չ իսկ կաթիլ մ'առավան ցող,
Ցամքե՜ր, հյուծե՜ր ես ոսկրի պես...

Մոտեցո՛ւր կուրծքդ համբույրիս,
Թող օծեն վե՛րքդ արցունքներս,
Գիտեմ պիտի չըդալարիս,
Բայց կյա՜նք փչեմ երակեդ ներս...

Բաբե՜, սըրինգ, սիրտդ խոց է,
Հին ծաղիկներդ ալ չեն ծլիր,
Բայց տաք շունչես ծնին գուցե
Վերքեդ երգի՜ ծաղիկներ հին...

Եկուր սիրենք, եկուր սիրվինք,
Եկուր պատմեմ քեզ մեկուսի,
Գաղտնի՜, ահեղ սեր մը, սըրինգ,
Որ տակավին մեկուն չըսի...

Երթանք կապո՜ւյտ սարն հեռակա,
Մարդերեն վե՛ր, աստղերուն տակ,
Մեր լացին լոկ սերը վրկա,
Ու ձայնակից ըլլա վըտակ...

Երգե այնպես, ինչպես կուլար՝
Երբ գիշերի սյուքն աշնայնի
Կը սարսռացներ ոստդ դալար...
Շունչս ալ սյուքն է գերեզմանի...

Ո՞վ իմ սըրինգ, ոստե երկնատուր,
Չոթցած կուրծքիդ ես տամ հոգիս,
Ու դուն երգ տուր, դուն վերելք տուր,
Երկինքներ տուր հիվանդ շունչ իս...

ԳԻՇԵՐՆ ԻՋԱՎ

Գիշերն իջավ անամպ, անհուն,
Բյուր բյուրեղեն ի՜նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն.
— Ա՜խ, ապրելո՜ւ երջանկություն...

Կանէանա նավն հեռակա,
Լիճն երազ մ'է, կա ու չըկա.
Ջուրի շշունջն է լոկ վրկա,
— Շշնջելո՜ւ երջանկություն...

Վերն հազար աստղ, վարն հազար լույս,
Կիսաստվերին մեջ հոգեհույզ,
Կը խոսակցին քար, վրտակ, բույս.
— Ա՜խ, իրերո՜ւ երջանկություն...

Ու կը ձայնե մատուռն հստակ.
— Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրության մեջ բովանդակ
Քարանալո՜ւ երջանկություն...

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ

ՈՎ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ...

Կիլիկիո արյունին

Ցայգն ի՜նչ անույշ է, ցայգը ի՜նչ գինով։
Ցավերիս տարված կը քալեմ երկա՜ր
Լեմանի ափին՝ խոր տրտմությունով։
Ի՜նչ խաղաղություն, ի՜նչ անճառ նրկար,
Ու ցայգն ի՜նչ անույշ, ցայգը ի՜նչ գինով։

Հեռուեն թևճակի շառաչներ դողդոջ
Երգը կ'օրորեն սիրող զույգերու,
Ջուրին մեջ աստղեր ինկեր են բողբոջ.
Ու տարփոտ մութին մեջ հեռուն հեռու՝
Թևճակներու թա՜ց համբույրն է դողդոջ։

Լուսնակն ալ ահա՜ շքեղ կը ծաթի,
Առասպելներու լույս-դշխոյին պես՝
Ալպիաններու ձյո՜ւն-հրաշքեն արծաթի։
Նոր հովվերգությանց հի՜ն հանդիսատես՝
Տժգույն տարփավորն ահա կը ծաթի։

Ի՜նչ անհունություն, ի՜նչ երազ, ի՜նչ շունչ...
Լռին լեռներու կողեն սատափի՝
Մինչև՜ սխրացած անտառն անշշունջ,
Ու մինչև դաշտերն, ուր Ռոն կը թափի,
Ի՞նչ անհունություն, ի՜նչ երազ, ի՜նչ շունչ...

* * *

Ով դո՜ւն, ո՜վ դժբաղդ երկիր հայրենի,
Որ արյունի տա՜ք շամանդաղի մեջ,
Զոհ՝ գազաններու խաղին վայրենի,
Ու համայնասպա՜ռ բոցերու անշեջ,
Կը մրխա՜ս, դժբա՜խտ երկիր հայրենի...

Ո՜վ իմ հայրենի՜քս... Ու դո՜ւք, հեռավո՜ր,
Եփրատ ու Արաքս ու Վանա ծովակ,
Ո՞ւր են կարապնե՜ր սիրախտավոր,
Որ իրենց երազ թևերով ճերմակ
Ճեղքեին կարմիր ձեր կո՜ւրծն ախտավոր։

Հովվերգություններդ ո՞ւր են սխրալի,
Ո՜վ Արարատյան ձյունափա՜ռ հսկան։
Ու դո՜ւն միամիտ, Դրախտն առասպելի,
Ինչո՞ւ այսքան մո՜ւթ է քու լուսնկան.
Հովվերգություններդ ո՞ւր են սխրալի։

Վեռանույշ կուսանքդ Հայաստանի,
Ո՞ւր են ձեր սիրո երգերն անհամար,
Որ հովը դեմի բլուրը տանի,
Ուր սրինգ մը խեղճ կուլա ձեզ համար...
Ո՞վ հավերժահարսք կույսք Հայաստանի։

***

Բաբե՜։ Վայո՜ւններ են, որ կը լսեմ,
Հերքերնին ցրված, փախչող խելահեղ.
Ընդդիմադրումի մը պահուն վսեմ,
Պիղծ յաթաղանով ընդկիսված ահեղ՝
Կույսերու վայո՜ւնն է, որ կը լսեմ...

«Հո՜ւ, մենք ենք, մեղք ենք, եղբայրնե՜ր, քույրե՜ր...
Մենք ենք, լափլիզված բոցերե անշեջ...
Մերկ սուսերներով հալածված կույրեր...
Մե՛նք ենք, կը վազենք մութին, մահվան մեջ,
Հո՜ւ, մե՛նք ենք, մե՛րկ ենք, եղբայրնե՜ր, քույրե՜ր...

Մե՛նք ենք, դիվահար ծնո՜ւնդ արյունի,
Հի՜ն, շքե՜ղ ցեղի զավակներ հետին,
Բոբիկ երեխա՜, դողդոջ ծերունի՜,
Մե՛նք ենք, ո՛ղջ գանկերն, որ կ՚իյնան գետին...
Մե՛նք ենք, դիվահար ծնո՜ւնդ արյունի...

Հո՜ւ, նզո՜վք, նզո՜վք։ Մեր վերքին փրփրուն
Շոգին խավարե՜ր է ձեր աչքերը, ա՜հ,
Մեր արյունը ձեր զավակա՜ց գլխուն.
Թո՜ւյն շնչեիք դուք, ու ըմպեիք Մա՜հ...
Հո՜ւ, նզո՜վք, նզո՜վք ձեր սերունդներուն...»

***

Ցայգն ի՜նչ անուշ է, ցայգը ի՜նչ գինով։
Երգեցեք սիրո համբույրներ զվարթ,
Ու դո՜ւք երգեցեք երանությունով,
Դո՜ւք երազ ափեր, ալյակներ, լաղվարթ,
Ձեր ցայգն ի՜նչ անուշ, ցայգը ի՜նչ գինով,—

Կը քալե՜մ։ Քալե՜, հիմա՜ր տարագիր,
Ժպիտ մը շուրթիդ՝ կարապի՜ն համար,
Ներքնապես լալով՝ միտքդ դե՛պ երկիր,
Շեղջված մահերու վրայեն անհամար,
Քալե՜, դուն քալե՜, հիմա՜ր տարագիր։

Քնարի զառամա՜ծ թելի մը փարած,
Թալանե՜, բոցե հեռո՜ւ, ա՜հ, հեռո՜ւ,
Քալե՜, դուն, քերթո՜ղ հայրենահալած,
Հո՜ւր, արյո՜ւն երգե ազատ լեռներու.
Քնարի զառամա՜ծ թելի մը փարած...

Քալե՜։ Մինչև ե՞րբ։ Քալե՜ կուրորեն,
Քալե՜ մինչև որ Արևն հրակեզ
Իր մարը մտնե նորեն ու նորեն՝
Ու օ՜ր մը այլևս չի ծագի քեզ. ..
Բաբե՜... Կյա՞նքն է այս... Քալե՜ կուրորեն...

ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵՄՆ...

Քերթո՜ղ, պատմե՜ մեզ հայրենի հուշքերեդ,
Երգե՜ մեզ հին օրերու երգ մը անհետ,
Թափառական թրուպատուրի երգ մը զո՜վ,
Արբշիռ ու զով մեր Գողթանի ողկույզով։

Մեռելի շեն երգ մը հանե թոքերեդ,
Հի՜ն, կռապաշտ ա՜յն երգերեն որոնց հետ՝
Մեր ասպազին քաջերն արույր թափորով,
Սաղավարտնին շողացնելով, ջահերո՜վ,

Արքայական հանդեսներու, վայրա՜գ, վե՜ս,
Կը պարեին, ասոված ներու պարի՜ն պես...
Երգե՜ մեզի հին օրերու հի՜ն հուշեր։

Մենք դարավոր մեր մահացումն այս գիշեր
Պիտի պարենք եղեռնորե՜ն, շե՜ն, խելա՜ռ...
— Քերթողը, ծե՜ր, չըխոսեցավ։ Ան կուլա՜ր...

ԶԱՆԳԱԿՆԵ՞Ր, ԶԱՆԳԱԿՆԵ՞Ր...

Զանգակնե՜ր, բարի՜, բարի՜ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն,
Խոսք ելլել կ'ուզե արյունը վազուն...
Կը լռե՞ք, բարի՜, բարի՜ զանգակներ։

Արդյո՞ք ձեր միսթիք հագագն արույրե,
Ուր կեղև՜ պատեց աղոթքի փոշին,
Եվ ուր կ'երազե՜ր խունկի գոլորշին,
Հեղակարծ ցավեն՝ անզո՜ր, կը լռե՞։

Ո՜չ։ Ձեր դարավոր հոգին պղնձի՝
— Որ շա՜տ, շա՜տ հաճախ տեսեր է Բարին
Հաղթված Չարեն—այժմ իր բարբառին
Ու իր Աստծույն վրա կը կասկածի...

Ա՜խ, որովհետև տեսաք ձեր բարձրեն,
Հավատավորներ հազարով, բյուրով,
Ինկած հեթանոս տապարով, բիրով—
Ձեր ոտքերուն տակ, երկյուղածորեն...

Ու ձեր գմբեթեն դիտեցիք անձայն,
Թե ինչպես խնկոտ տաճարներու մեջ՝
Որբ, կին, ծերունի, բոցերով անշեջ,
Իրենց Աստծույն գահին զոհվեցան։

Բայց... գիտեք նաև թե մեր դարավոր
Դիակներու բուրգը ամպերեն անցավ,
Ու մեր արյունի ժահրեն նեխեցավ
Սրբությունների ծույլ գունտն երկնավոր։



Արդ՝ ո՞ւր եք, չքնաղ խոստումներ խաչին,
Եղբայրության զուր բարբառներ, ո՞ւր եք,
Կրակ կը փսխե հողն ամենուրեք,
Դիտերն արյունով, դիակո՞վ կուշին...

Ու կ՚իյնա այն, որ կը ծնկե ահով,
Չի թուրն ավելի արդար է խաչեն,
Չի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,
Անոնց, որ կապրին ուրիշի մահով...

Որովհետև դեռ հեռու է օրն այն,
Երբ գայլն ու գառնուկ սիրով արածին...
Թե ապրիլ կ՚ուզե գառը նորածին՝
Պետք է իր ակռան սրե լռելյայն...

Լուռ եք, զանգակնե՞ր, Աստված է մեռեր։
Գույժ տվեք վաղվան, զի հասկը մեռավ.
Գույժ տվեք հայուն, զի ազգը մեռավ։
Զանգակնե՞ր, ծերո՞ւկ, բարի՞ զանգակներ...

Ինչպե՞ս կուզեի ես ձեր պարանին
Կախվել ու ցնցել երկաթ բազուկով.
Անոնք որ ինկան բյուրով, քովե քով,
Ձեր զողանջին հետ՝ լալու պետք ունին...

Հոգիս հազար խուլ զանգակներով
Գոռացեք զանգեր ու կատաղորեն
Գահավիժեցեք ձեր երկաթ թառեն,
Ուրկե միայն լալ ցիտցաք դարերով...

ԿԻՎԻԿՅԱՆ ԵՐԳԵՐ

Ա.

ՎՐԵԺԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Քե՛զ, ցասումի վայրագ հեղեղ գահավեժ,
Արդարության փայփայելի մո՛ւթ հրեշ,

Խավարներու ահե՛ղ ծընունդրդ, Վրե՛ժ,
Ողջո՛ւյն, տաղե՛րս քեզի՛...

Մոխրի՛ն կուտամ սրտիս վերքերն ախտագին...
Ամենո՛ւն վերքն, անսահմա՛ն վերքը ազգին,
Արդարության ծարա՛վը, մա՛հն հավատքին,
Երգին՝ տաղե՛րըս քեզի՛...

Սանձերնին լայն երիվարներ ասպաղեն,
Ալիք ալիք թոթվելով սեգ բաշն ուսեն,
Թող հայրենի աշխարհիս կուրծքն ակոսեն,
Սուրա՛ն՝ տաղե՛րս քեզի...

Ու ես կուգա՛մ.— Մո՛ւթ շանթերու սերմնացան—
Այդ ակոսեն, ուր արյուններ լճացա՛ն,
Գիշերներով, չար հովերով, ցիրուցա՛ն,
Ցանել՝ տաղե՛րս քեզի...

Բաբե՛, եթե այս բազուկս կարեվեր
Ջրսորվեցավ զարնել... գոնե անվեհեր
Ցանքես Մահու առաքյալնե՛ր, հսկանե՛ր
Կը ծնին՝ տաղե՛րըս քեզի...

Բ.

ՀԱՅՈՒ ՈՐԲԻԿ

Ա՛յ հայու որբիկ, ա՛յ անտեր որբիկ,
Մանրի՛կ, արյունո՛ա ոտքերդ բոբիկ,
Ո՞ւր կը քաշկրոտեք այսպես մոլորուն...
— Ջա՛ր քամիներուն...

Ա՛յ որբիկ, բոցեր գյուղե՛րը հասան,
Անտառներու մեջ մայրերնիդ կ՚որսան։
Անպաշտպա՛ն, մերկ, ո՞ւր այսպես, որբիկ ջան...
— Մո՛ւթն ինձ պատմուճան...

Քեզ համար մարդերը գո՛ւթ, հա՛ց չունին,
Ա՛յ որբիկ, շյո՛ւղ իսկ չրկա թռչունին,
Ծերեր սովահար կ՚իյնան ժամե ժամ...
— Արյուն կ՚որոճամ...

Հայրդ պատուվա՜ծ նետեր են սարին.
Ծղնիկներու պես քույրերդ տարին.
Աստվա՜ծդ իսկ մատրան մեջն է խողխողված...
— Վրե՛ժն ինձ Աստված...

Դե՜հ, գնա, մեծցիր ահեղ որբն հայուն,
Սնիր արյունով ու փսխե արյուն
Մարդկության ճակտին, ու սարսափ ու հուր...
— Այդ՝ պարտքս է տրխուր...

Գ.

ՎԵՐՋԻՆ ՕՐՈՐ

Օրո՜ր, օրո՜ր... Օրո՜ր ըսեմ՝ քնանաս,
Վիրավոր հորդդ ճիչերն ա՜լ չիմանաս,
Ծիծես ծըծածդդ թույն է... կաթ չի գիտնաս...
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս։

Արյուն-հեղեղ հորդեց այս սուրբ ձորերե,
Բայց չի փախի՛ս, փարե՛ երկրիդ, զայն սիրե՛,
Հողիդ վրա գերի մ՚ըլլար, այլ տիրե՛...
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս։

Հորդդ վըրա եթե անշո՜ւնչ ինկա ես,
Չի ուխտեցի՛ Հռոմի էգ գայլին պես,
Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքես...
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս։

Բազուկներուս՝ պարա՜ն, ոտքիս ալ կացի՜ն,
Ստինքիս զո՜ւյգ պտուկներն, ա՜լ կտրեցին։
Վերքես արյունըս ծծե, որդյակ միածին...
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս։

Ահա կ՚իյնամ... Հայաստանը մա՜յր քեզի,
Կտակ կուտամ այս կոտրած սուրն երկայրի՝
Ուր հայրիկիդ դեռ տաք արյունը կ՚այրի...
Օրո՜ր ըսեմ՝ քնանաս։

ԽԱՊՐԻԿ

Հովերն ի՞նչ ըսին քեզի, ո՜վ ճամբորդ,
Որ հեռվեն կուգաս, հեռվե՜ն արփավետ.
Այն հեռվեն կուգաս, ուր աչքերես հո՜րդ
Արցունք է ինկեր սրտիս արյան հետ...

Հովերն ի՞նչ խապրիկ, հողերն ի՜նչ եղեռն
Պատմեցին քեզի, ո՜վ ճամբորդ ընկեր,
Այն հովերն հեռվի, այն հեռվի տեղերն
Ուր ամեն քայլիս արցունք մ՚է ինկեր...

Հովերն ի՞նչ ըսին, հողե՜րն ինչ ըսին,
Անո՜նք կը ճանչնան միայն իմ հոգիս,
Այդ սուրբ տեղերուն վրա, լուսնակ լույսին,
Արցունք մ՚է ինկեր իմ ամեն քայլիս. ..

Այն մեծ, գորշ թռչունն, որ համակրորեն
Կը դադրեցներ ողբիս՝ իր երգեր,
Հոն չէ, գաղթա՜ծ է անշուշտ այն երկրեն,
Ուր ամեն քայլիս արցունք մ՚է ինկեր...

Ու առվակն ալ որ հոն կը խոխոջե,
Իմ առվակս չէ՛, նույն երգը չերգեր,
Ան ծո՜վ թափվեցավ. այն նո՜ւյն ջուրը չէ՛,
Ուր ջուրերու պես արցունքս է ինկեր...

Խամրա՜ծ են անշուշտ սեղեր ալ դալար,
Ուր կը խեղդեի ողբերըս կերկեր,
Նոր ծլած մարգերն ինձ չե՜ն, չե՜ն ճանչնար,
Ո՜ր տեղին վրա ո՞ր արցունքս է ինկեր...

Բայց հողն ինչ ըսավ. այն որ մայրաբար
Աչքիս ցողին հետ ծծեց իմ հոգին,
Ան զիս կը ճանչնա՜ր. ծաղիկ մը նիհար
Ջրսա՜վ թե ինք ծիլն է իմ արցունքին...

Ու հո՞վն ինչ ըսավ. ան զիս կ՚ել թովեր.
Լո՜ւռ խապրիկներով ամեն իրիկուն,

Ինձ սիրեկանիս սիրտը կը գովեր,
Կը չորցներ թա՜ց աչքերդս անքուն...

Չա՜ր հովիկ, սրտիս միա՜կ լրաբեր,
Գիտնալո՞վ, գութո՞վ կը խաբեիր զիս,
Գնա՛, ըսել իրեն, թե հեռո՜ւ ափեր,
Կը փախչի՜մ իրմե՝ ճամբեն արցունքիս...

...Հովերն ի՜նչ ըսին քեզի, ով ճամբորդ,
Որ հեռվեն կուգաս, հեռվեն սրգավետ.
Այն հեռվեն կուգաս՝ ուր աչքերես հո՜րդ
Արցունք է ինկեր, սրտիս արյան հետ...

ԱՌՋԻ ՀԱՅԵՐԸ

Ես հոն էի, երբ Արարատեն վար,
Վայրագ ջրվեժի մը պես ալեոր,
Իրենց գնացքին ներքև ահավոր՝
Կողը փշրելով սարին ալեոր՝
Առաջին կյանքի խինդովն երկնային,
Խավա՜ր աշխարհին կյա՜նք տալ կ'ջանային
Առջի հայերը...

Առջևեն կ'երթար նահապետը Հայկ
Ու լուսնակին տակ—Հայաստանի՜ ցա՜յգ—
Հազա՜ր հազարներ անզե՜ն, անզրահ,
Բնության գիտակից ույժո՜վը անահ,
Կ'իջնեին գետի պես արագահոս,
Դեռ վե՜ս, դեռ հպարտ ու դեռ հեթանո՜ս
Նախնի հայերը...

— Ահա մենք կուգանք,— կ'երգեր ցեղն արի,
Հոգին պես բեղուն, լույսին պես բարի,
Հովին պես ազատ, աստղին պես անշեջ,

Մենք Անմահության սերմն ունենք մեր մեջ.
Չենք ճանչնար ստրուկ լուծ, կրոնք, աստված.
Թող ա՛յսպես ապրեն իսպա՜ռ հալածված
Անսպա՜ռ հայերը...

Հազար տարի վերջ անցա ես նորեն
Ազգ մը, հայրենիք մը կ'ելլեր հողեն,
Հայը կըցաներ, կ'ոռոգեր առուն,
Կարավանը հա՜ց կըկրեր հեռո՜ւն...
Կ'որմնեին ստրուկ ցեղեր անհամար.
Ըսի՝ «այն բերդերն են, որի համար'
Ըսին «Հայերը...»

Ու տեսա, որ վեհ իր կառքին վրա
Արշակ Առաջին արքայից արքան
Կ'անցներ իր ոսկի անիվներուն ցա՜ծ՝
Յոթը կո՜ւյր ստրուկ թագավոր լծա՜ծ.
Թափորը կ'անցներ ծանր արքայակա՜ն,
Իր ետին՝ թափորի ոգով հաղթական
Բոլո՜ր հայերը...

— Ահա մենք կուգանք,— կ'ըսեր ցեղն հպարտ
Մեր սայլին վրա կրելով անպարտ
Թագեր, որ ստրո՜ւկ ըրինք մեր Ույժին,
Գարշապարներուս տակ սարեր կըշարժին՝
Պողպատի սուրին փայլն է մեզ օրեն,
Մասիսի դյուցազն հովեր կ'օրորեն
Ծնող հայերը...

Բայց դյուցազնությունն, որով մենք սնանք,
Լքվե՜ր էր սնանկ, ու տեր ու տնանկ
Ու սարե ի սար, ու վանքե ի վանք
Պեղենք լեզունե՜ր ահեղազանգ,
Մե՜կ խոսք ունեին ու մեկ արձագանք՝
«Մարտիրոսներ ենք, Աստվա՜ծ, քեզ կուգանք...
Փրկե հայերը...»

Հազար տարի վերջ՝ անցա ես նորեն,
Հավատացող, հավատք, խունկ, խաչ, համորեն
Կհրդեհվեին։ Դարավոր. . . . . *

* Անանդ Զեռնելի

Կարմրեր էր վերը՝ հայակեր հուրեն
«Քրիստոնյա՛ Աստված,— գոչեցի.— ո՞ւր են
Քո ստրուկ հայերը...»

Դրախտին մեջ իսլամ մինարեին քով
Գերման ծխնելույզը կ'ելլեր .. . . . *
Հոս, հոն, Բյուզանդիա . . . . . * տակ ցած
Դեռ քանի մը հայ գտա պոռնկացա՛ծ...
Արարատին վրա՝ նոր ազգ մ'է օտար
Չհասկցավ իմ մայրենի բարբառ,
Հեգնեց՝ «Հայե՞ր...»

Ախուրյանի քով՝ քար էր, ավերակ
Քաղաք մը, աշխարհ մը գտա ճերմակ.
Ձայն մ'երգեց՝ «Մի լար փառքերուն վրա սին,
Նայե տապանիս մյուս երեսին.
Ազգերը կնքեր են վրան՝ «Մա՛հ հայուն»,
Բայց մյուս երեսին վրա՝ «Անմահություն»
Գրեր են հայերը...

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞վ կուլա այսպես խշտյակիս շեմքին.
— Քո՛ւյր, ղարիբն է, բա՛ց...

Կմա՞խք մը կ'անցնի դուրսեն լալագին.
— Սովն է, դուռդ բա՛ց...

Տապա՞ռն է ջախջախ դռանըս կուրծքին.
— Ջա՛րդն է, դուռդ բա՛ց...

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ

Ե. Սրբ. Դուրեան բանաստեղծին

«Յարիճան, հա՛յ, հո՛յ, հա՛յ Աստված չիկա.
Յարիճան, հա՛յ, հե՛յ, հայություն չիկա.
Հեռու յարերուն սրտիկը խոսի...»

— Շրջանակ կազմած բոլորն ուս ուսի՛,
Հա՛յ, հե՛յ, սիրտ սրտի կը պարե՛ն, կ'երգե՛ն,
Ծերունի՛, տղա՛, հա՛յ, հե՛յ, իրենք են,
Պանդո՛ւխտ Հայերը...

Ո՛չ մարդ, ո՛չ բանվոր, հասարակ գրա՛ստ,
Կը ճոճեն մարմինն, ու մուճակնին հաստ
Կը ծեծե օտար երկրին հողը տար։
«Ափ մը հայրենի հող ո՞վ պիտի տար,
Հա՛յ, հո՛յ, Հայաստա՛ն, քու հողդ է հալա՛լ...»։
Կ'երգեն պարելով, բայց կ'ուզեին լա՛լ
Թշվա՛ռ Հայերը...

Հարս ունինք մեզի հարսնևոր չիկա...
Սուգ ունինք, մեզի սգավոր չիկա...
Ո՞ր մեղքին համար, ո՞վ է անիծեր՝
Հինգ հազար տարվան այս խե՛ղճ ազգը ծեր...
Չո՞ւս միլիոնին մե՛կ ապաստան չիկա,
Յարիճան, հա՛յ կա, հայություն չիկա...
Կ'երգեն Հայերը...

Թառն առին, դագաղ մը տվին հայուն.
Մեր փառքն անցավոր, Մա՛հն է կայուն...
— Արշա՛կ մեծ, որու բանակն ահագին
Տեգով կը ծածկեր փառքըն արեգակին,
Ոտնակոխ կորած գերեզմանեդ դուն
Գլո՛ւխդ վերցնեիր, տեսնեի՛ր անտուն,
Անտե՛ր հայերը...

Հայրենի՛ք, ո՞ւր են ազգիդ ախոյան...
Անմահ Պապիլոն լռեց հավիտյա՛ն.
Աթենքեն՝ ավե՛ր, Մեմփիսեն՝ ավա՛ղ,
Հռովմեն՝ ափ մ'աճյո՛ւն մնաց հազիվհազ...
Մահերու վրա Դուն դեռ կ'իշխես, աղե՛,
Բայց քո հոգեվարքդ որքա՛ն դանդաղ է...
Կուլա՛ն Հայերը...

Յարիճա՛ն, հա՛յ, հո՛յ, կ'երգեն միաձուն։
— Պարագլուխն է ծե՛ր պանդուխտ մ'անշշունչ...

Քանինե՞ր այսպես պարել է ովեր,
Քանի՞ տարի է, քամինե՞ր մեռեր...
Հոգնե՞ր է ալ, վա՜ղն իր կարգն է գուցե...
Մեր կինը հոն չէ, որ աչքը գոցե...
Ա՜խ, խեղճ Հայերը...

Պանդուխտի նկուղ-սրճարան մ'է ցա՜ծ.
Կաղանդ գիշերով Հայերն են լեցա՜ծ.
Փայտի այդ երկար տախտերուն վրա ծեր
Իրենցմե քանի՞ն ծներ է, մեծցե՞ր...
Ու հիմա, հա՜յ, հո՜յ, կը պարեն, կ'երգեն...
Օտարն արցունքով կը նայի փեղկեն,
Կ'ըսե «Հայե՞ր»...

Օտա՜ր, տեսա՞ր դուն գաղտնիքով լեցո՜ւն
Ու տար աշխարհի բույրերո՜վ օծուն
Նավե՜ր հսկա, սև՜ նավերը մեծ,
Որ հազա՜ր, հազա՜ր, հազա՜ր դառնահեծ
Հոգով ծանրածանր, կը կտրեին ծո՜վ,
Թափելու ափե՜ ափ, լո՜ւռ թախիծով
Փախչող Հայերը։

Տեսա՞ր դուն մեռած գյուղերն անխռով,
Հյուղերը փլած՝ կարմի՜ր պատերով,
Հողմաղացքներ լո՜ւռ թևերով կոտրած,
Մերուկ դիակներ սարին վրա կորա՜ծ,
Մատուռներնին ավե՜ր՝ զրկված խունկե. ..
Ա՜խ, հո՜ն է, հո՜ն մեր հայրենիքն, հոնկե՜
Կուգան Հայերը...

Օտա՜ր, տեսա՞ր դուն աղբյուրները զո՜վ,
Գեղջուկ այգիները գա՜ղջ ողկույզով...
Դեռ կը մխա՞ ցած տանիքն հայրենի.
Դեռ կը ծաղկի՞ հոն թուփը վարդենի.
Դեռ կ'երգե՞ այդ հի՜ն պլպուլը ցայգին...
Հո՜ն, հո՜ն կ'երազեն, կուլան տխրագին
Աքսոր Հայերը...

Ա՜խ, ո՜ւր է հովվին սրինգը բարի,
Ո՞ւր են տուն-տանի՜ք, օճա՜խ խանդակաթ. ..
Հո՜ս ամեն ինչ քա՜ր է, ածո՜ւխ, երկաթ...
Ըսե՜ք մեր երկրի տանուտեր Հայուն,
Որ ծո՜ւխ կը շնչեն, կը թքեն արյո՜ւն
Պանդուխտ Հայերը...

Այս զրահապատ երկրին մեջ օտար
Խեղճ հայ ջահելին ով, ով պիտի տար
Ավոտն հայկական, սյուքը Մասիսի,
Դարապատում մո՜ւթ բարբառն Արաքսի,
Ու թուփերու մեջ իրիկվան պահուն՝
Նազելի համբույրն երկչոտ հայուհո՜ւն...
Ա՜խ, խեղճ Հայերը...

Անոնց կարավա՜ն է երկրի գոտին՝
Արարատեն մինչ Այրեցեալ-Գոտին...
Նեղոսեն Հռենոս, Գանգեսեն Վոսփոր՝
Կազմեր են սուգի մի հսկա թափոր...
Ուրալեն մինչ Ալբ, ու մինչ Ափրիկե,
Իրե՜նք, իրե՜նք են... Թող Աստվա՜ծ փրկե
Անտե՜ր Հայերը...

Մի՜ դպիր անոնց հոգվույն փլուցո՜ւն.
Անոնք կ'անցնին լո՜ւռ գաղտնիքով լեցո՜ւն.
Անոնք գիտեն բյո՜ւր պատմություններ մութ,
Անո՜նց, որ կորան արյան մեջ տղմո՜ւտ,
Կախաղաններու քաջե՜ր համորեն...
— Հազա՜ր մահով ծանր՝ Կենդանի-Մա՜հն են
Ապրող Հայերը...

Յարիճա՜ն, հա՜յ, հո՜յ...— Մակա՜ն ծերունի
Պանդուխտն հոգներ է. վա՜ղը պիտ'մեռնի...
Որդին երկիր է դրկեր կռվելու.
Վաղն ա՜ն ալ պիտի խողխողվի, հլո՜ւ...
— Ու, վա՜խ, մի՜ առ մի այսպե՞ս պիտ կորչի
Դյուցազուններու ցեղի մը վերջի՜ն,
Վերջի՜ն Հայերը...

Ո՛չ, ո՛չ։ Արշալույսն իրենց պիտի գա...
Ու եթե չի գա ավոտն ապագա՝
Պի՛տ կովին։ Մինչ ե՞րբ... Մինչև հավիտյա՛ն։
Ու երբ դեռ երկրի վրա Ազատության
Համար մեռնին ա՛փ մը մարդեր չնչի՞ն,
Անոնք պիտ՝ ըլլան Մարդկության վերջի՞ն,
Վերջին Հայերը...

ՔԱՌՍԸ

ԴՐԱՄԻՆ ԱՂՈԹՔԸ

Խեղճերուն

Հողագունտիս կեղևին վրա տրտմածին
Թափառահած իմ ոտքերս քալեցին՝
Եղբայրության տաքուկ շունչը փնտրելեն,
Ու ամեն տեր իմ հեք աչքերս լալեն
Տեսան փարթամ մեծատունին դրրան քով
Աղքատ մայր մը՝ որ կը սպասեր արցունքով։

Ո՞վ ես, ուրեմն, թշվառության դու գործի՝
Դրրամ՝ որուն լուռ ցոլքին մեջ կ՝արծարծի
Ճակատագիրը տառապող մարդկության։
Ըսե՛, քու կամքդ պիտի իշխե հավիտյան,
Ու պատմե ինձ, պիտի ըլլա՞ն միշտ, ավա՜ղ,
Ըզքեզ լալով մեռնողները անսրվաղ։

Մարդն, առաջին այն մարդը, որ տենչավար
Պեղեց, խուզեց հողին արգանդը խավար,
Ու շարանենդ թաքստոցեդ դարավոր

Խրլեց զքեզ, հղկեց, մաքրեց փառավոր,
Այն մարդը, վա՜խ, ժանտ ցոլքերուդ մեջ ժպտուն,
Ջընշմարե՞ց տխուր անկումը Մարդուն։

Տառապանքի, անհուսության որբեր խուլ
Կը խեղդըվին քար պատերու տակ խարխուլ,
Սովալըլուկ բյուր թշվառներ տրտմորեն
Իրենց նիհար ձեռքերը քեզ կ՝երկարեն,
Ու տենդահար, փողոցին վրա, ամեն դի
Քանի՛ փոքրեր կան՝ մայրազուրկ, անոթի։

Իշի՛ր, իշի՛ր խոնարհորեն, մեղմորեն,
Իշի՛ր ոսկի սանդուխներուդ մատներեն՝
Թշվառության խշտյակներուն մեջ խոնավ,
Ուր քու ցոլքերդդ նըշուլած չեն բընավ.
Ցամքած շյուղեր բոլորը քեզ կը դառնան.
Իշի՛ր, իշի՛ր անձրևներու պես գարնան...

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿԸ

«— Անոթինե՛ր, անգործներու կո՜ւռ բանակ,
Փոս աչքերնիդ դեպի երկինք զո՜ւր բանաք,
Տառապանքի՜ ոստանյակներ, ի կրո՜ի...
Ի զե՜ն, կինե՛ր, ի զե՜ն, ծերե՜ր ալեխռիվ...»

***

Դուրսը ձմրան սույլին միջեն կը լսվեր
Բողոքի ձայն մը գալարվող կարեվեր,
Ընդհատված խո՜ւլ հոնդյունով կատաղա՜ծ,
Ու արձագանք կուտար երկար. «Հա՜ց, հա՜ց, հա՜ց...»

Ի՞նչ կար։ Կուրծքիս տակ ուժգին սիրտս դողաց։
Ջյուն-ձմեռո՜վ, այսպես գիշեր ատեն՝ հա՜ց...
Դաղջ անկողնես վար նետվելով, մրափված,
Պատուհաններն բացի փութով, ու, Աստվա՜ծ...

Մի՞թե... Ամեն բան հասկացա ու լացի...
Բոլոր վայրագ պայքարողները հացի,
Հազարներո՜վ, հո՜ն, վա՜ռն էին, խեղճ ու վե՛ս,
Կուտվա՜ծ, կատղա՜ծ, մրջյուններու շեղջի պես...

Ցո՜ւրտ, իրենց վրա դանդա՜ղ կ'իջներ ձյունն համակ
Անհուսության ծաղիկներու պես ճերմակ։
Ցո՜ւրտ, կը պատեր զիրենք գիշեր անսահման,
Թըշվառության մթին դավի մը նման։

Իրենց մեջտե՛ղ, խեղճ կառքի մը վրա խարխուլ,
Հազարներու հրոնդյունին մեջեն խուլ,
Աշխատանքի նոթի ստրուկ մը ալեփառ,
Կանգնա՜ծ, դողդո՜ջ, կը բողոքեր, կը պոռթկար։

Ու իր խոսքերը կ'իյնային փրփրադեզ,
Անիծապարտ հեք ամբոխին վրա այնպե՛ս՝
Ինչպես ժայռեր օվկիանին մեջ կատղած...
Ու օվկիանը կը ճողփար. «Հա՜ց, հա՜ց, հա՜ց...»

* * *

«— Ինչո՞ւ ոմանք սնդուսներով օրորուն,
Ոմանց գլուխը՝ մայթին ձյունոտ քարերուն...
Ինչո՞ւ մեկը՝ ձեղուններու տակ ոսկի,
Մյուսը՝ խոնավ խշտյակի մեջ սողոսկի...

Մեկուն դիակին վրա դամբա՜ն, վա՜րդ, մարմա՜ր,
Ողջը չունի բարձ մ'ուր հանգչի՜լ կարենար...
Բույն-ընտանիք ունի թռչունն օդաշու,
Ան ե՜րգ ունի, իսկ մենք՝ Անեծք միայն. ինչո՞ւ։

Ինչո՞ւ հազա՜ր պերճ տաճարներ հրաշակա,
Աստուծո մը հոգվույն համար որ չիկա...
Մեր խեղճ որբերը կըհալվին, տեղ չի կա...
Մեր խեղճ կիներն են հոգեվար՝ դեղ չի կա։

Ինչո՞ւ, ինչո՞ւ, ու մինչև ե՞րբ, սեփական
Մեր քրտինքով պիտի շաղվին պատվական

Համադամներ մեծատունի՜ն, իր շունին,
Մինչ աշխատող բազուկներ չոր հաց չունին...»

* * *

Մերը դողդոջ իջավ կառքեն այն խարխուլ,
Ու կատաղի գոյություններուն մեջեն խո՜ւլ,
Կառքին գեղջուկ բեմին վրա՝ հյուծահա՜լ,
Խեղճեր եկան խոսք առնելու, կինե՜ր ալ...

Կը խոսեին—անո՜ւս դեմքեր ապաքեն—
Ինչ որ պոռթկար իրենց նոթի աղիքեն,
Իրավունքի կոպիտ բառեր ինքնաբեր,
Ջոր կապուտցած իրենց շրթունքը թափեր։

Խո՜ւլ աղաղակը կը ընդհատեր պահ մը. «Հա՜ց»,
Ու ամբոխը լուռ կ'ունկնդրեր ծարավա՜ծ
Արդարության չքնա՜ղ ձայնին այդ տրկար,
Արդարությո՜ւն՝ որ երբե՛ք չի պիտի գար...

* * *

Վայրա՜գ գոյություն մը գիշերին մեջ թնդա՜ց.
Ձյունոտ ցայգին անբա՜վ սուգին մեջեն թաց,
Բոցերու պես շըքեղ, տեգի՜ պես հրպարտ,
Կարմիր դրոշա՜կը բարձրացավ անհանդարտ...

Ու ամենքը խլրտեցան, շարժեցան,
Թափորի մը պես ահավոր ու անձայն,
Կռապա՜շտորեն լծված—սուգի սև հանդե՜ս—
Խարխուլ կառքին՝ Արդարության բեմին պես...

Ու ես տրտո՜ւմ, ու ճմլվա՜ծ, անբարբա՜ռ,
Կը դիտեի որ կ'երթային տրտմաբար,
Ձյունի՜ն մեջեն, մութին մեջեն անսահմա՜ն,
Գրաստներու սև բանակի մը նման...

Ո՞ւր, դեպի ո՞ւր... Քաղցած կյանքեր համորե՞ն,
Իսպառ լքված աստվածներե՞ն, մարդերե՞ն,
Լո՜ւռ կ'երթային, խո՜ւլ բնազդի մը հլո՜ւ,
Նո՜ր Օրենքի նո՜ր Նժար մը կերտելու...

Ու ինձ այնպե՜ս թվեցավ թե լռելյա՜ն
Ճակատագրին թևը կ'իշխե՜ր իրենց վրան.—
Բայց կ'երթային անոնք Ի ՉԵ՜Ն, Ի ՊԱՅՔԱ՜Ր,
Արդարությա՜ն կը դիմեին խո՜նջ, տրկա՜ր,

Արդարությա՜ն, որ ա՛յս կերպով պիտի գար...

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Բանաստեղծ ընկերներուս

Թրուպատուրնե՜րն են. տեսե՛ք, իրե՛նք են.
Եռանդո՜ւն, անփո՜ւյթ, գո՜հ կը նվագեն
Հրակեզ արևուն տակ հրապարակին։
Կիսախուփ փեղկերե տարեց, տղա, կին
Կ'երևան քիչ-քիչ։ Կեսօրի տապեն
Շատ քիչերն են, որ տեսնիլ կ'շտապեն
Թրուպատուրները։

Տարորե՜ն դեմքեր։ Ամե՛նքն, է՛գ, արո՛ւ,
Բախտեն կատաղի հալածվողներու
Անտուն ընտանիք մը քայլամոլոր։
Փողոցի ստո՜ւյգ հանճարներ բոլոր,
Նվագելու համար պետք չունին նոթի,
Կ'ապրին երգելով, կը մեռնին նոթի
Թրուպատուրները։

Բախտը, տառապանքն, հարափո՜խ հովեր
Իրենց դեմքին մո՜ւթ ժպիտ մ'են տվեր,

Կյանքը ճանչցողի ալեկո՜ծ ժպիտ։
Ու իրանց բոնի՜ ձևին մեջ հտպիտ,
Խռիվ մազերուն ներքև ալևոր,
Աշխարհքն հեգնելու հո՜վ մ'ունին ալևոր
Թրուպատուրները։

Անոնք երգելո՜վ անցան համորեն
Բոյի գինեզվարճ այգեստաններեն
Մինչև Նեղոսի ավազուտը շեկ,
Մինչև Ուրալներն, մինչև հրրաշեկ
Ափերը դերբուկ Հրո-Երկիրին։
Քանի՜ ընկերներ ճամբուն հող դրին
Թրուպատուրները։

Մեքենայության այս դարը երկա՜թ
Չընկճե՜ց դեռ իրենց հոգին խանդակաթ.
Ու ոստաններու միջև դրամապաշտ՝
Թշվառության հետ գլո՜ւխ գլխի հաշտ
Կ'ապրին նախնական կենցաղով ազատ,
Ազա՜տ Բնության որբերն հարազատ.
Թրուպատուրները։

— Առե՛ք ինձ ձե՜զ հետ, երկիրե երկիր
Տարե՛ք այս թշվա՜ռ սիրտս սրգակիր,
Ապրի՜նք հեգնելով, ողբանք երգելով.
Ու երկրագունտին հետ մշտահոլով
Մեր մորթն անօգուտ քըշե՜նք մշտերեր.
Մշտնջենական մութ ուխտավորներ,
Թրուպատուրները։

Չի մե՜նք ենք, մե՜նք ենք, բանաստե՜ղծ, պուետ,
Մե՜նք, պատառոտուն բեհեզով վե՜տ-վե՜տ
Երգի իշխաննե՜ր՝ իսպա՜ռ հալածված,
Մե՜նք, նոթի՜, հպա՜րտ, երբեմնի Աստվա՜ծ,
Մե՜նք, չըհասկըցվա՜ծ, մե՜նք եղերակա՜ն,
Մենք, Բանաստեղծնե՜ր, մե՜նք ենք իրական
Թրուպատուրները։

Մե՜նք՝ որ մեր վերքեն երգեր կը շինենք,
Մե՜նք, զրկվածնե՜ր ճակատագրեն նենգ։

Ու մինչ ուրիշներ առատ կը ջամբեն
Խինդի՛ սեղանեն, մուսային ճամբե՛ն—
Մենք կ՚երթանք ստո՛ւյգ Մահվան անսվա՛ղ.
Մե՛նք, հի՛ն Մարդկության ո՛ւշ ծընած,— ավա՛ղ—
Թրուպատուրները։

Բայց ի՛նչ փույթ։ Մե՛նք ենք հոգիով հարուստ.
Մե՛րն է ներշնչումն, որ կուգա վերուստ.
Մե՛րն է մարգը թա՛ց, վերջալույսն անխո՛ս,
Փթիթը վարդի՛ն, առուն մշտահո՛ս,
Մե՛րն է մթին սյո՛ւքը գերեզմանին.
Հի՛ն աստվածներու ցեղին կը նմանին
Թրուպատուրները։

Մե՛նք ենք, որ անփո՛ւյթ գրչով կը հեգնենք
Այս նենգ աշխարհքին պսակները նենգ։
Քնար մը ձեռքներիս, անտո՛ւն, մահագի՛ն,
Ջե՛նք ցանկար ստրուկ—պետի դղյակին։
Ազատ բարբառի ապետներ անա՛հ,
Կ՚ապրին մեռնելո՛վ, կ՚մեռնին անմա՛հ
Թրուպատուրները։

Մարդկության հտպի՞տ պետք է անպատճառ,
Մեր սրտե՛ր մենք հաներ ենք վաճառ.
Մեր վիշտեն, սուգեն, խաբված սերեն նենգ՝
Ռամիկին համար երգե՛ր կը շինենք։
Ո՞վ ըսավ «Մահը մի է». ամե՛ն օր
Կը մեռնինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր
Թրուպատուրները։

Սակայն մեզ ի՛նչ փույթ ծիծաղն ամենուն,
Լքումը ստո՛ր, քաղցը անանո՛ւն.
Մե՛նք գառանց հովվին պես սիրագորով՝
Հավա՛տքն ունինք մեր սրինգին ծայրով
Առաջնորդելու Մարդկությունն ամբո՛ղջ.
Մեռա՛ծ Արվեստին մե՛նք տակավին ո՛ղջ
Թրուպատուրները։

Այս ի՛նչ դարերու հասեր ենք, Աստվա՛ծ,
Փշրեցի՛ն ինչ որ կար վսեմ կերտված,

Թե դեռ սի՛րտ ունիք՝ թաղելո՛ւ տարեք,
Ոսկիին նենգ ձա՛յնն է ամենուրեք։
Մի միայն մե՛նք ենք, որ դեռ անարգել
Սիրե՛լ կ՚երազենք. ո՛վ կուզի սիրե՛լ
Թրուպատուրները։

Մեռա՛ր, հնավանդ Արվեստ սրբանվեր,
Երբ դեռ կյանքն երգո՛վ կ՚ապրեր, կ՚օրորվե՛ր.
Ու երբ երջանի՛կ, թափառի՛կ, գինո՛վ։
Իրենց ծիրանի լա՛յն կրկնոցներով
Դղյակե դղյա՛կ, փայտի երկնային
Տավիղին թրթռո՛ւմը կը տանեին
Թրուպատուրները։

Ես կ՚երազեմ հայր թրուպատուրն Հոմեր,
Որ աստվածներու ակեն կը խմեր,
Ու իր հսկանե՛րը բարձրաղաղա՛կ
Կ՚երգեր տավղին վրա, քաղաքե քաղաք։
Ու թրուպատուրնե՛րը բյուր՝ որ կ՚երթա՛ն
Դարերու մեջեն. կ՚երազեմ Գողթան
Թրուպատուրները։

Կ՚երազե՛մ զիրենք. ու լո՛ւռ, շվարո՛ւն,
Կը նայիմ փեղկես ա՛յս թշվառներուն,
Որ բռնի կերպով կ՚երգեն, կը խաղան։
— Վա՛խ, արծաթն Արվեստն հանեց կախաղան։
Հի՛ն աստվածաբընա՛կ դարերը մեռան.
Ու հիմա պետք է խնդացնե՛ն, մուրա՛ն
Թրուպատուրները։

Հրատապ արևուն տակ հրապարակին,
Ահա՛ կ՚երգեն դեռ, ու մինչ տըղա՛, կին.
Կը հասնին քիչ-քիչ նեղ ճամբաներե,
Գլխարկն անցորդին լուռ կը կարկառե
Իրենց նահապետ երգիչն ալևոր։
— Տվե՛ք, իրե՛նք են, Նոր Մարդկության նո՛ր
Թրուպատուրները։

ԱՅՍ ԴԱՆԱԿԸ

Մարդը կոթնեցավ իր կընոջ ուսին.
Այսպես երկուքն ալ լացին միասին։
Գետնափոր, տեսակ մը նկուղ էր լայն,
Գետնափո՜ր, ավա՜ղ, խլուրդներ միայն
Չէ՞ որ կ՝ապրին թաց նկուղներու տակ...
Գետինը՝ հարդի տեսակ մ՝այլանդակ,
Անկողնի վրա, լո՜ւռ, հրեշտակայի՜ն,
Երեք փոքրիկներ կը քնանային,
Հարդին վրա, պզտիկ քույրն ալ իրենց քով
Կը ննջեր՝ մահվան ճերմակ պատանքով...

Ո՞վ ըսեր է, որ կյանքը երազ մ՝է,
Ուր սերն իր կապույտ բույնը կը կազմե։
Ո՞վ ըսեր է, որ Այն որ կուտա բույր
Խոպան դաշտերու ծաղկին սխրաթույր,
Ա՛յն, որ ձմեռին մեջ սրգամոունչ
Ապաստան կուտա գայլին անտերունչ,
Այն, որ հունտ կուտա նոթի թռչունին,
Ա՛յն ստեղծեր է անոնց՝ որ չունին՝
Երեներն առատ, հասկերը բեղուն,
Արփավե՜տ գինին, մեղրավե՜տ մեղուն...

Ավա՜ղ, այն ամեն բաներն ապաքեն,
Որ շնորհվեցան մեզի երկինքեն՝
Մարդկային օրենքն արգիլեց մարդուն...
Ու մարդն անոթի՜, ծարավա՜ծ, արթո՜ւն,
Երջանկության հո՜րդ գետին քով՝ հըլո՜ւ
Կը մեռնի առանց ումպ մը ըմպելո՜ւ...
Մի քանիներո՛ւ համար են միայն
Ոսկեգեղ հասկի ծուփ ծովերը լայն,
Լեռներու երեն, անտառի թռչունն՝
Դե՜ռ իսկ չի ծնած... Ո՛վ գիտե ինչո՞ւն։

Դուրսը ցուրտ գիշերը կը կողկողի։
Թաց նկուղին տակ լամբար մը հողի
Կը լուսավորե առաստաղը ցած,

Վտանգին առջև՝ սեղմ ու քարացած,
Ամոլը ծերուկ կ՝արտասվե դողդոջ...
Իրենց դեռ ծաղի՜կ զավակին բողբոջ,
Այսպես անսվաղ, ցրտահար, սառած,
Մահը դիտելե վերջ բազկատարա՜ծ,
Առանց կարենալ բան մը ընելու,
Ի՜նչ լավ է այսպես լալ՝ բախտին հըլո՜ւ...

Մա՜հ... Ի՜նչ տարբեր մահը հարուստ տըղուն.
Ան երազ մ՝է լո՜ւռ ցնծումով բեղուն,
Ան կյանքեն միայն ճանչցավ նրբագույն
Բեհեզները վա՜ռ, ժանյակը գո՜ւյն-գո՜ւյն,
Մանյակներն ոսկի, ընծաներն առատ,
Թույլ իրանին նո՜ւրբ շղարշ անարատ...
Չի գիտցավ, որ թանկ քարերը վզին՝
Հազար խեղճերու մահով կը դիզվին...
Ու մեռավ շա՜տ քաղցր երգի մը պես,
Հծծելով միայն՝ «Ինչ լավ էր այսպես...»

Մինչդեռ այս փոքրիկ մեռելն աղքատին
Ճանչցավ կյանքն իր խո՜ւլ ցավին մեջ հետին.
Ո՜չ ծաղիկ, ո՜չ խինդ, ո՜չ ժպիտ, ո՜չ երգ,
Կյանքը վի՜շտ կարծեց, աշխարհքը՝ մի վե՜րք...
— Ա՜յ հիմար փոքրիկ, կյանքը խոլական
Հանդես է. քանի՜ երջանիկներ կան...
Սակայն դու մեռար ու հիմա հանգչե...
Պատանք մը ճերմակ՝ երկու ափ քուրչե՝
Քու նիհար մարմնիդ համար շա՜տ է լայն...
— Ողջունեցե՛ք, Նոր-Վաղվան սերմն էր այն...

Գլխուն քով, կարմիր կանթեղը հողե՝
Պատանքն իր աղքատ լույսով կ՝ողողե։
Ճերմա՛կ մահն է այդ. մա՜հը անսվա՜ղ...
Նույն հարդին վրա են մյուսներն ալ խաղա՜ղ.
Ծանրը քունն իրենց աչքը կը գոցե,
Կ՝երազե՜ն. ու ա՜լ չարթննան գուցե...
Դուրսը ուժգնորեն ոռնացող քամին
Դուռը կը զարնե. զավակներեն մին

Կ՝աղերսե քնա՜ծ շրթներով կիսբաց՝
«Հայրիկրս բեռա՞վ պատառիկ մը հաց...»

Հա՞ց... Ո՞վ ողորմո՛ւկ երեխա սովա՜ծ,
Հաց չկա՛. այսպե՛ս է տնօրինված...
Դու դեռ շատ փոքր ես, դեռ չես հասկընար
Որ հարուստն ունի իրավո՛ւնք, հընա՛ր
Քեզ մեռցնելու ծանրածանր մահով,
Օրենքն է իրեն պաշտպան ապահով...
Միայն փոքր ուղեղդ կ՝ըգա շվարուն,
Թե ինք իրավունք ուներ արևուն
Տակ բողբոջելու, թերև՜ս, ու կատղա՜ծ,
Կը փղձկի վճիտ հոգիդ. «Մայրի՜կ, հա՜ց...»

Հա՞ց... Աշխատելեն հայրդ դարձավ ծեր,
Հացի խնդիրն ինքն ալ չէ՛ հասկրցեր։
Ինչո՞ւ ոմանք տեր են, ոմանք գերի...
Թե Բախտը կույր մ՝է, որ կ՝դեգերի,
Ինչո՞ւ օր մ՝իրենց դուռին չի զարկավ...
Թե մարդը կավ մ՝է, այս ի՞նչ շունչ, ի՜նչ կավ...
Թե աշխարհ՝ անծիր երկիր մ՝է անհուն՝
Ինչո՞ւ ոմանք քա՜ր մը չունին գլուխնուն...
Թե ամեն տարի հունձքը կ՝ողողի՝
Ինչո՞ւ իրենց հա՜ց մը չիկա հողի...

Գործարաններու դուռները փակ են
Ամի՜ս մ՝է արդեն։ Հազարը մեկեն
Բանվորներն ամբողջ նետեր են փողոց,
Ամենքն ալ հայրեր մի քանի տրղոց։
— Մատուցումը շա՜տ, խնդրանքներ չիկան,
Կ՝ըսեն, ապրանքով լեցվեր է շուկան.
Գործի մե՜ծ օրենքն է տնտեսավար.—
Այդ լա՜վ, բայց նոթի մեռնիլն է դժվար։
Թե բանվորն այնքա՜ն արտագրեր է շատ,
Ինչո՞ւ հաց չունի բանվորն անաշխատ...

Մարդկությո՜ւն, պատի՜վ... թմբուկներ հնչո՜ւն,
Աչքդ գոց հավատա, մի փնտրեր ինչո՜ւն։

Սուրալն ամոթ է, գողնալը ոճիր,
Իսկ թե խելոք ես՝ ոչ ոք չի հաճիր
Հավատալ, որ տղադ մեռավ անոթի,
Կը խնդա վրադ առանց ամոթի...
— Ծերը կոթներ է իր կնոջ ուսին.
Աչքին արցունքներն անդո՜ւլ կը հոսին,
Կը մթնա՜ քիչ-քիչ ներսի դին մաքո՜ւր,
Պարզ հոգին ինչե՜ր կը ծնի թաքթաքուր...

Բայց ահա տղան նորեն լացավ՝ «հա՜ց...»
Հա՞ց... Մայրը ոտքի նետվեցավ կատղած,
Հին դանակ մ՝էրկան տվավ այլայլված,
«Հա՜ց ճարե, ըսավ. հետդ ըլլա Աստված...»
— Էրիկը գնաց։ Գոռոցքը հովուն
Կարծես հաց կուտար իրեն խռովուն՝
«Միթե ոճրագո՞րծ... միթե բարեբա՞ր...
Դանակը ձեռքին զարնելո՜ւ կ՝երթար,
Փրկելու համար անոթի տրղան...
— Բանվո՜ր, այդ ճամբան կ՝երթա կախաղան...

— Ի՞նչ կ՝ընե, երբ ա՜զգ մը մնա նոթի.
Ձեռքեն բահ ու բրիչ կը նետե մեկդի,
Կ՝երթա հաղորդվիլ մատուռ մ՝անխոով,
Կը զինվի տեգով, կը զինվի սուրով,
Ու կ՝երթա ամեն միջոցներով վատ
Ազգի մը կոիվ մղելու հուսահատ,
Թե հաղթվեցավ՝ ավա՜ղ է իրեն,
Իսկ եթե հաղթեց՝ աշխարհ համորեն
Գովեստի երգեր կ՝երգե ամեն օր,
Պատմությունն ոսկի էջ կուտա անոր...

Քամին կը գոռա, ձյուներ կը թռչին,
Բանվորը կանգնած շեմքի մը առջին
Երգը կ՝ունկնդրե — ցուրտեն երերուն —
Գործարաններու բոլոր տերերուն...
Մատուցումը շա՜տ, իսկ խնդրանքը քիչ...
Որո՞ւ փույթ. կուտեն, կ՝արձակեն քրքիջ...
Երբ դուրսը ձյուն է, գինվո շոգիով

Ի՜նչ լավ է ուտել՝ քանի մ'հոգիով...
Գործ չի կա՜, ինչ փույթ, դաս մ'է անխընա,
Որ բանվորը քի՜չ մը խելոք մընա. ..

Բանվորը կուլա. կը գոռա քամին։
Ահա՜ դուրս ելավ այդ տերերեն մին.
Աստվա՜ծ, իր պե՜տն է... Ձեռքը քարացած,
Աչքերը կարմիր, բանվորը գոռաց՝
«Գրությո՜ւն, պարոն, ընտանյաց հա՜յր եմ.
Զգո՜ւյշ մերժելու, Ձեր հոգին կ'այրեմ...»
Հարուստը նետեց այն ինչ որ կար իր վրան,
Ժամացույց, շղթա, դրամ, թղթարան։
Երեկ՝ տեր, հիմա՝ ստրուկ դողդոջուն,
Կը փախեր ինչպես բուե մը՝ թռչո՜ւն. ..

Բանվորը ապշա՜ծ նայեցավ հեռուն,
Իր հարուստ տիրոջ վազքին շվարուն,
Նայեցավ բարի ձեռքերուն ծերուկ,
Նայեցավ հացի դանակին մանրուկ,
Նայեցավ ոսկվույն, նայեցավ իրեն,
Փղձկեցավ հոգին, հուսահատորի՜ն
Ձայնը երկարեց ցայգին մեջ տխուր՝
«Ո՜վ հարուստ, հարո՛ւստ, եկո՛ւր, ա՛ռ, եկո՜ւր...»
Բայց տերն ավելի արագ կ'երթար լուռ.
Ու կը կրկներ ծերը. «Եկո՜ւր, եկո՜ւր...»

— Ո՜վ բարի բանվոր, ծե՜ր բարի բանվոր,
Թե այնքան անպետ ես մարդկության, որ
Ճարելու համար ապրուստ մը հետին
Կ'ապավինիս վատ դանակիդ ետին...
Թե սեփական կյանքդ՝ իժի մը պես՝
Ուրիշի մահով պիտ ապահովես...
Թե պիտի դավես մութին մեջ լռելյայն՝
Հոգ չէ՝ թե զավկիդ համար ըլլա այն...
Դե՜հ, գնա՜ մեռիր,— մեռեր ես արդեն,
Մարդկության ի՜նչ խեր մարդասպան մարդե՜ն։

Թե չե՜ս ուզեր, որ քու դանդաղ մահով
Տերդ իրեն գանձե՜ր դիզե ապահով...

Թե անպե՜տ, թե վա՜տ, թե խեղճ, ցավագին,
Դուն դեռ տե՜րն ես քու սեփական կյանքին...
Թե զավակներուդ չկրցար ցույց տալ
Ապրիլ ատելո՜վ, կյանքին դեմ կուրծք տալ...
Դանակդ աղիքիդ խոթե, ու դարձո՜ւր.
Իրենց քաջաբար մեռնիլ սորվեցուր,
Մեռնի՜լ անտեսված, անճիչ, մթին, վե՜ս...
— Աչքերը գոցեց... Ու ըրավ այնպես։

Տարինե՜ր անցան. հիմա կը դիտեմ
Լուռ սենյակիս մեջ առկախված իմ դեմ
Այս համեստ դանակն արդեն ժանգոտած,
Որ ձմեռ առտու մը, արյունով թաց,
Ես գտեր էի անհուն գուրգրանքով,
Ձյունին մեջ մեռա՜ծ գործավորին քով...
Քարացա այդտեղ, պոռթկաց իմ հոգիս,
Ու դողդողալով տարա շրթունքիս
Խորհրդանի՜շն այդ՝ մութին մեջ լռելյայն,
Տառապո՜ղ, մեռնո՜ղ, այլ քա՜ջ մարդկության...։

Ու քանի անգամ քու առջիդ լացի,
Ո՜վ բարի՜, ժանգոտ դանակդ հացի.
Դո՜ւն, վերջին պաշտպան զրկված մարդուն,
Դո՜ւն, հավետ լռիկ, այլ հավետ արթուն.
Դո՜ւն, այնքան համեստ ու այնքան խելոք.
Եվ որ կրնայիր շարժումով մը լոկ,
Արյա՜ն վրա հիմնել Օրենքդ ապագա,
Բայց կը սպասես, որ խաղաղությա՜մբ գա,
Արդարությա՜մբ գա, գա՜ տարվե տարի.
Զրկված մարդկության երազը բարի...

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

ՍԵՐ

ԵՍ ՍԻՐԵՑԻ

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե՝
Ջինքը որքա՜ն սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտե։

Ամենեն մեծ հրճվանքիս,
Ամենեն սուր վիշտերուս
Ներշնչողները, ավա՜ղ,
Ջիս չեն ճանչնար այս պահուս։

Սերըս կարծես այն գետն էր,
Որ իր հոսանքը անբավ
Առավ լեռան ձյուներեն,
Ու լեռը զայն չտեսավ։

Սերս այն դուռն էր կարծես,
Ուրկե ոչ ոք մտավ ներս.
Ծաղիկներով ծածկրված՝
Գաղտնի պարտեզ մըն էր սերս։

Ու եթե սերըս ոմանք
Երկինքին վրա՝ անսահմա՜ն
Տեսան ծուխի մը նման,
Կրակն անոր չտեսան...

. . . . . .

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներես գիտցավ թե՝
Ջինքը որքա՜ն սիրեցի.
Ո՞վ կարդալ սիրտը գիտե...

ՔՈՒ ՀԻՇԱՏԱԿԴ ԱՅՍ ԳԻՇԵՐ...

Քու հիշատակդ, այս գիշեր, զիս լալու չափ կը հուզե.
Կարծես մեկնած էր սրտես, և գաղտնաբար այս գիշեր
Ետ կը դառնա, իր հին տեղն ու հին զգվանքը կ՝ուզե,
Կը սեղմվի գրկիս մեջ, կը բարձրանա կուրծքս ի վեր...

Քու պատկերդդ աչքիս մեջ և քու ձայնդդ՝ ականջիս,
Կը թրթռան այս գիշեր, երակներուս մեջ կարծես
Քաղցրահոտ շունչդ է լեցված, որ կ՝զգլխե, կ՝օրրե զիս,
Մինչ երեսես ալ կ՝անցնին կարծես մատներդդ անտես։

Ետ կը դառնան մի առ մի մեր հին ժամերն անկորուստ,
Կարավանին հետ աստեղց անոնք կ՝ուգա՜ն վերստին,
Հոգիս փարա՜խն է բացվող ընդդեմ իր քա՜ղցը հոտին։

Հիշատակովդ, այս գիշեր, կ՝զգամ անչա՜փ զիս հարուստ,
Այնչա՜փ բարի, երջանիկ... որ գթությամբ մը անհուն՝
Կը մտածեմ զայն բաժնել երկրի բոլոր խեղճերուն...

ԱՆՈՒՆԴ

Ինչո՞ւ անունդդ այստեղ չկարենամ գրել ես
Եվ աշխարհի չհայտնեմ, թե քեզ ինչպե՜ս սիրեցի...
Երկու վանկե՛ը անոր կը զրուցեմ գաղտնապես,
Եվ այն ամբողջ կը թվի սիրո մատյան մը ինծի...
Ինչո՞ւ անունդդ այստեղ չկարենամ գրել ես...

Հիմա հեռո՛ւ իրարմե՝ միայն անունդդ ունիմ
Բերնիս վրա, համբույրի մը պես աննյութ և անուշ...
Գիշեր ատեն, սենեկիս մենության մեջ մտերիմ
Ես զայն կ՚ըսեմ և ահա քեզ կը տեսնեմ քաղցրահուշ...
Հիմա հեռու իրարմե՝ միայն անո՛ւնդ ունիմ...

Գեղեցկությունդ ու իմ սե՛րս հորինեցին զայն կարծես...
Սիրտըս իր անդուլ տրոփմամբ անընդհատ զա՛յն կը հեգե՝
Թեպետ վաղո՛ւց մտքիս մեջ քեզ ամբողջ գոց գիտեմ ես...
Քեզ չճանչցած ունեի՞ր դուն այդ անո՛ւնը միթե...
Գեղեցկությունդ ու իմ սե՛րը հորինեցին զայն կարծես...

Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՞ր ես զայն հանձնել աշխարհի.
Երկու վանկովն իր կ՚ուզեմ խնկել իմ կյա՛նքս միայն,
Եվ երբ վերջին արևիս վերջին ճաճանչը մարի՝
Անունդ ի շուրթ դեռ կ՚ուզեմ ողջունել ա՛յգը մահվան.
Ո՛չ, չեմ ուզեր, չեմ կրնա՞ր ես զայն հանձնել աշխարհի...

ԱՂՎՈՐՆԵՐԸ

Աղվորն ա՞ն է հավիտյան՝ որ անցավ օր մը քովեդ
Եվ աչքերդդ օծեց,— աստվածային այցելո՛ւ,—
Գեղեցկությամբ մը որուն ա՛լ չդարձար նայելու,
Եվ չուզեցիր հանդիպել անոր անգամ մըն ալ գեթ...

Աղվորն ա՞ն է տակավին,— հավիտյանե հավիտյա՞ն,—
Որ նայվածքիդ արևին տակ կը մեծնար համբորեն,
Որ զերդ ծաղիկ մ՚օրորվող գարնան անուշ հովերեն,
Երբ մեկնեցար՝ մտքիդ մեջ մնաց միշտ թարմ, միշտ բուրյան...

Եվ աղվո՛ր,— դուն գիտես օրհնյալ անունը անո՛ր,—
Անիկա է որ կարծես պիտի կրնար քեզ սիրել,
Որ սերդ անշուշտ գուշակեց և սպասեց ակընկոր,

Որուն սակայն լավ է, որ չուզեցիր սիրտը խռովել...
Աղվորն անոնք են միայն, որ տենչանքիդ ընդմեջեն
Անցան գացին ու հիմա քեզ հեռուե՞ն կը կանչեն...

ՀԱՆԸՄԸ

Միակրտուր սև-անփայլ մետաքսն ամբողջ զինք ծածկած
Եվ քայլերուն մետաքսե խոր շրշյունո՛վը թեթև՝
Որ ազդրերուն քնարին կարծես նվա՛գն ըլլար ցած,
Կ՚երթա՛ հանըմն՝ հուզելով մուշկի ալիք մ՚իր ետև...

Ժանեկահորդ թևեն դուրս կը բխի ձեռքը պզտիկ՝
Զոր նախանձոտ սև ձեռնոց մը կը պահե կիսովին,
Մինչ ուղղանկյուն ճակատեն ինկած քողն ալ լուսանցիկ
Ծանրածարիր աչքերուն կ՚անթեղե հո՛ւրքը խորին...

Կամուրջին վրա, հորդազեղ վերջալույսի մը ներքև,
Կ՚երթա հանը՛մը այսպես, հորիզոնե հորիզոն,
Մթնցնելով Ոսկեղջյուրն ու դյութելով երեկոն...

Կ՚երթա՛ հանըմն՝ անմատույց, քողածածուկ, հոյաձև,
Կի՛ն կամ ոգի, պահ մ՚ելած պալատներեն Պոլիսի,
Պոլսո Ոգի՛ն, խուսափուկ, անքննելի՞, սխրալի՞...

ԱՀԱՎԱՍԻԿ ԿՈՒԶԵԻ...

Ահավասիկ... Կուզեի շարունակել և ըսել՝
«Լավագույն սերը ան է, որ լռության մեջ կ՚անցնի.
Գեղեցկագույն թռչունը այն թռչունն է անընտել՝
Որուն ճախրը կը դառնա ոլորտներուն մեջ երկնի»։

Ահավասիկ... Կուզեի երազիս մեջ փայփայել
Գողտր գլուխ մը քումայթ և հասակ մը արքենի,
Մենավորիկ պտրտիլ բաղձանքներու մեջ անել
Եվ դառնալ ետ և գտնել սերս միշտ նույն, միշտ գաղտնի։

Երազս է այս, սիրական և ընտանի հի՜ն երազ,
Եվ միմիակ կարելին անկարելի տենչերուս,
Որուն մեջ, ա՜հ, թե կենար տարիքիս անցնող վազն ի վազ։

Բայց չի՜ կենար, և դուն, խեղճ, իմ խե՜ղճ հոգիս, կը թողուս,
Որ հին ընկերդ՝ մարմինն, կյանքի գետին մեջ տղմուտ
Ձքեզ վարե ու տանի և քեզ զարնե խութեխութ. ..

ՆՈՐԵՆ, Ո՞Վ ՍԵՐ

Նորեն, ո՜վ սեր, զիս զարկիր և թողուցիր վիրավոր...
Դանակին ծայրը սրտիս դպավ, սրտիս մեջն է արդ.
Եվ արյունիս այդ վերքեն կը զգամ բխումը զվարթ,
Եվ չեմ կրնար, չեմ ուզեր խլել դանակը աղվոր...

Իմ էությունս ընդառաջ ցատկեց իսկույն այդ վերքին,
Ընդունեցի զայն, ինչպես հաղորդությունն սկիհեն,
Դանդաղեցի, բայց ինչպես կույրերը, որ կը տեսնեն
Հանկարծակի, նշտրակի մը հարվածեն առաջին...

Եվ եթե վերքս այսքան ինծի անուշ է հիմա,
Անոր համար է, որ զիս կը դարձնե անցյալին,
Անոր համար, որ սրտիս իր հին արևը կուտա...

Ո՜վ քաղցրություն... Հոգիես մեծ հառաչներ կը թռին,
Անրջազօծ աչքիս մեջ մերթ արցունք կա, մերթ ժպիտ,
Եվ կը տեսնեմ ամեն ինչ արցունքներուս պես վճիտ։

ՏԵՐ, Ի ՎԵՐՋՈ

Տե՜ր, ի վերջո, երբ նվաղի լույսը կյանքիս,
Վերջին շնորհ՝ պիտի ուզեմ, որ դեմս ըլլա
Անոր պատկերն այն տարիքին, ուր սիրեց զիս,
Նույն աչքերով և նույն ժպտովն ալ անուղղա...

Թող ատիկա ըլլա իրկուն մը ամառվան,
Երկինքը թող առնե իր գույնն ամենանուրբ,
Խաղաղություն մը պարուրե թող ամեն բան,
Եվ թող մտքիս վրա իջնա ստվեր մը սուրբ...

Որոշապես պիտի գիտնամ թե ալ կ՝անցնիմ...
Ոչ մեկ զղջում պիտի կրծե սիրտս սակայն.
Թե այս միակ կյանքս իսկ ըլլա, օ՜հ, աստվա՜ծ իմ,
Անոր համար շնորհակալ եմ քեզ միայն...

Եվ այդ պահուն հանկարծ ծովե մը լուսավոր
Իմ անցյալիս օվկիանեն խաղաղադեմ,
Ինչպես կղզի մը, թող հառնե պատկերն անոր,
Ու ես հուզված և հմայված զանի դիտեմ...

Զայն ընդերկար, հավերժության երկար վայրկյան
Մը թող դիտեմ, ծաղկասպիտակ ու հեշտագիծ
Այդ փոքր կղզին, որ թարթիչներս երբ որ իյնան՝
Թող ինձ թվի, թե ճիշտ հասա իր ծոցն անբիծ...

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երջանկությունն այս է լոկ... Երկու հոգի ըլլալ հոս,
Երիտասարդ ու հարուստ, գեղեցկադեմ, քաջառողջ,
Որ կ՝ունկընդրեն իրարու, երբ կմնան իսկ անխոս,
Եվ իրարմով են ամբողջ...

Երկու հոգի մեկ տան մեջ, մեկ սենյակի մեջ միանակ՝
Երբ իրիկվան լամպարին կը զեղու լույսն ընտանի,
Երբ տուն կուգա այրը որ՝ ծնած բարի աստղի տակ,
Կինն աստղին մեջ կը տանի...

Երկու հոգի, հավիտյան խորհրդակից իրարու,
Որ չեն պահեր և չունեն իրարմե բան մը ծածուկ,
Որոնց աչքին բնության առեղծվածն իսկ ահարկու
Կը պարզվի անշշուկ...

Երկու հոգի, աստվա՛ծ իմ, հազարներու, բյուրից մեջ,
Որոնց մին ես ըլլայի, ինչպես մյուսն ալ անիկա,
Ան, որուն դեռ կը պահեմ սրտիս մեջ հույսը անշեջ,
Եվ որ պիտի՝ ա՛լ չգա...

ԱՄԱՌՆ ԱՆՑԱՎ

Ամառն անցա՛վ, ու սիրո ծարավս անհագ մնաց միշտ...
Դաշտերը զիս առանձին տեսան ցերեկն ու երբեք
Գիշերն ալ վրաս չծորեց ո՛չ հեշտություն և ո՛չ վիշտ,
Ջնայեցա աստղերուն՝ հուսալից կամ սրտաբեկ...

Անցավ ամառն առաջին՝ այս հողին վրա, ուր երբեմն
Այս խեղճ սիրտը խենթի պես տրոփեր էր և հյուծեր.
Այս գյուղն, այս ծովն, այս բլուրն եղած էին կյանքիս սեմն,
Ուրկե տղա բաժնված՝ կը դառնայի իբրև ծեր...

Կը հուսայի, աստվա՛ծ իմ, և կը հուսամ տակավին,
Որ հեռավոր, հյուրամերժ այլուրներուն մեջ հոգնած
Եվ շիթ առ շիթ իր արյունն իզուր վատնած այս հողին
Պիտի գտներ զինք այստեղ կենդանացնող ջուրն ու հաց...

Այս հողին վրա, որ այնքան զիս հրճվեցուց ու լացուց,
Իր վրայեն լուսանցնող տեսքովը գողտր հասակին,
Պիտի չըլլա՞, աստվա՛ծ իմ, որ գեթ սեր մը վաղնջուց
Իր դամբանեն արթննա ու զիս գգվե վերստին...

ՓԱՓԱՔ

Անուշ հոգի մը ըլլա՛ր,
Ես այն հոգվույն սիրահար,
Ան իմ երկինքս ըլլար...

Ես այդ հոգին պաշտեի՜
Ինչպես երկինքը ծավի,
Զայն հեռուե՜ն պաշտեի...

Ան ցոլանա՜ր սրտիս մեջ
Իր լույսերովը անշեջ,
Ես սուզվեի՜ անոր մեջ...

Անուշ հոգի՜ մը միայն,
Ու գրկեի՜ ես անձայն
Զայն հոգիիս մեջ միայն...

ԱՆԿԱՐԵԼԻՆ

Կ'ուզեմ մեկը—ուզելու վարժությունն իսկ կորուսեր,
Կարծես մոռցե՜ր եմ հիմա—
Որ փույթ չէ թե ինձ համար չզգա ոչ տենչ ու ոչ սեր՝
Բայց որ իմ սերըս գիտնա...

Գիտնա՝ գառնուկը, ինչպես զինքը սիրողը գիտե,
Գիտե թռչունն ալ ինչպես,
Ու կ'որոշե զայն իսկույն ուրիշ ամեն մարդերե,
Անոր հետ քաղցր է ու հեզ...

Ջսիրելով հանդերձ զիս՝ երախտագետ ինձ ըլլա
Զինք սիրելուս համար շատ.
Սիրե՜ սիրվիլը ինձմե ու դնե վիզն ուսիս վրա՝
Վստահությամբ մը ազատ...

Իր բառերուս փոխարեն, որոնք մանկան մը ըսված
Անուշ բառեր պիտ՝ ըլլան,
Ան մերթ ինծի ձեռքն իր տա և մերթ հուզված, երկյուղած
Երկար նայվածք մը միայն...

Ազվոր չըլլա՝ բայց ըլլա դեռահասակ ու մաքուր,
Մաքո՜ւր՝ սրտով ու մարմնով.

Ըլլա հաճախ ան ուրախ, բայց և երբե՛մըն տխուր,
Լույս և ստվեր քովե քով. ..

Փափուկ ու տաք մատներով հպի՞ երբե՛մըն հոգվույս՝
Նման վերքի մը ցավոտ.
Չիս սփոփել կամենա, ինձ ներշնչե՞ քիչ մը հույս,
Գիշերս ընե՞ առավոտ...

Այսքանը բա՛վ է ինծի, կ'ուզեմ այսքա՛ն միմիայն,
Եվ գիտեմ թե չունենա՞մ
Պիտի այս քիչն ալ հիմա ... մոռցե՞ր եմ ահա զայն,
Մոռցե՞ր՝ ուզելը անգամ...

ԱՏԵՆՈՔ

Ատենոք հունտ մը հույսի՝ հոգիիս մեջ կը բանար
Ուրախության ծառ մը մեծ... Լուսածաղիկ, լուսավառ
Աչք մը՝ սուզված աչքիս մեջ, ձեռք մը ձեռքիս մեջ թողված
Կը վազցներ հնիհև սանձակոտոր սիրտս հանկարծ։

Բայց խենթ սրտին հետևեն կը հասներ միտքը խելոք,
Միտքը խելո՞ք, խելացի՞, և ինչպես Զևսն ատենոք
Պրոմեթեն ապստամբ՝ զայն կը զարներ շղթայի
Ու կը ձգեր զայն մինակ, իր ժայռին հետ ամայի։

... Կը հիշե՞ս ձեռքդ այն գիշեր, այնտե՞ղ, դարձին այգիեն,
Մեջքիդ վրա, ձեռքիս տակ թռչունի պես դողացող...
Եվ կը հիշե՞ս խավարին մեջ շիթ առ շիթ լուսաշող
Ինկող բառերը մերին, ու հառա՞շդ ալ տարորեն։

Այդ փափուկ պահը կյանքիս մեջ կը կմնա տակավին,
Մեռած կյանքիս մեջ մեռած աղավնիի մը նման,
Ու կը մնչե ընդմեջեն իր կիսաբաց կտուցին՝
Իր բացակա ընկերոջ շա՞տ անուշ բան մը... ի՞նչ բան...

ԱՆՈՆՔ

Մեկո՛ւն հոգին տեսա ես
Ու սիրեցի՝ ձևերեն
Ու քայլերեն՝ որ կ'ելլեն,
Կարծես միշտ վե՛ր աշխարհես...

Մեկն իր ձայնին նվագով
Չիս քնացուց, արթնցուց,
Ձա՛յն ջուրերու հինավուրց,
Հեզամրմունջ, թարմ ու ղով...

Հետո մազերը մեկուն
Խենթեցուցին պահ մը զիս՝
Բռնած իրենց մեջ հոգիս...

Բայց ուրիշի մը ժպտուն
Աչքերն այնքան քաղցր էին՝
Որ հիվա՛նդ եմ տակավին...

ԵՐԵԿ ԳԻՇԵՐ

Երեկ գիշեր—չեմ գիտեր երե՞կ էր ան՝ թե երազ—
Սիրո մոտեն ես անցա, եղա այնքա՛ն մոտ, այնքա՛ն՝
Որ, ա՛հ, դրպա՛ իսկ անոր ու ան փախավ հազիվհազ
Եվ դեռ մատներըս կարծես գլխու պտույտ կ'ունենան...

Երեկ գիշեր՝ անսահման ուրախության ի հաշիվ
Ես ժողվեցի իրական, անմահական փշրանքներ,
Որոնց վրա մտածումս, զգայարանքս հեշտի՛վ
Կը մնան այժմ առկախ՝ ջահերու պես տարուբեր...

Երեկ գիշեր երջանի՛կ եղա միայն այդքանով,
Երազն ու կյանքը մութին մեջտեղ եկան քովե քով,
Կյանքս երազո՛վ հորդեցավ, ինչպես երազս ալ կյանքով...

Եվ այսօր բեռ մը կարծես հոգիիս մեջ կը տանիմ,
Հոգիիս մեջ ու մարմնույս՝ բեռ մը գաղտնի, մտերիմ,
Որուն տակ մերթ կը հևամ և մերթ անո՛վ կը թրռիմ...

ՍԵՐ ՄԸ ԳԱՂՏՆԻ

Սեր մը գաղտնի՝ դանդաղորեն հասունցած,
Իրար գրկող նայվածքներով խուսափուկ,
Եվ շեշտերով, մրմունջներու մեջտեղ ցած,
Որ ակամա բացվող դուռներ են ծածուկ,

Սիրտե ի սիրտ գացող ճամբան կը հորդի
Մերթ արևով, մերթ ամպերով կը մթնե.
Ի՜նչ փույթ սակայն, եթե վայրկյանը արդի
Մեզ նվաղիլ, մեռնիլ կուտա հուզումե...

Եվ տենչանքներ, շյուղերու պես կը ծլին,
Կանաչ այնպես, այնպես անձայն, աննշմար,
Սիրտե ի սիրտ գացող ճամբուն մեջ լռին...

Օր մ՚ալ այնտեղ երկու բերան դողահար
Միակ բառով մը ամեն թումբ կը քանդեն
Եվ կը կազմեն... օ՜հ, նույն համբույրը արդեն...

ԽԱՂԻ ՀԱՄԱՐ

Խաղի համար թող ըլլար՝ բայց թո՜ղ անգամ մը գոնե
Ինձի նայեր ու ժպտեր ու ըսե՜ր մեկն անոնցմե,
Զոր սիրեցի ես անձայն՝ թե կը սիրե ինքն ալ զիս...

Շահու համար թող ըլլար՝ սակայն թո՜ղ պահ մը այնպես
Հավտացըներ մեկն ինծի, թե կայծ մը, թռած իմ սրտես,
Զինք վառած է ու կ՚ուզե մարիլ վրան իմ կուրծքիս...

Թո՜ղ զիս հեգներ ու ծաղրեր ու շարշարեր ան վերջեն,
Պիտի ըլլար կյանքս իրմով, հոգ չէ թե քիչ մը ատեն,
Նման ուրիշ կյանքերու, խռով ու գոհ ու անդորր...

Եվ բախտը թող հավիտյան ինծի նորեն չժպտեր,
Վերջին պահուն տեսնեի պիտի քեզ դեմքս, ով սեր,
Զարութենեդ մերկացած ու ընող մահն իսկ աղվոր...

ՈՂՋՈՒՅՆ

Ամեն անո՜նց, որոնք երբեք չգիտցան
Իրենց համար իմ սրտիս մեջ բարձրացած
Սեղանին վրա ծխվող խունկը սրբազան...
Ամեն անո՜նց որոնք իբրև առեղծված

Մը զիս տեսան, աչքիս բոցով և լեզվիս
Լռությունով, և քայլերո՜վրս փախչող...
Որոնք գտան իրենց ճամբուն վրա զիս՝
Պտտցընող սեր մը անձայն ու անշող...

Անո՜նց, անուշ էակներուն, այժմ ողջո՜ւյն
Իմ անցյալիս գեղեցկության մեջ անմահ,
Անոնց ողջո՜ւյն՝ այս բառերով դողդոջուն...

Իրենցմե բա՜ն չեմ ուզեր ես ա՜լ հիմա,
Զի ստացա, ինչ որ ինձ տալ կրնային,
Զի իրենցմով հիմա շեն է ամային...

ԵՍ ԵՐԱԶԻՍ ՏԻՐԵՑԻ

Ինչպես տիրեց Շամիրամ իրմե փախչող Արային,
Ես երազիս տիրեցի՝ մեռցընելով զանիկա,
Եվ տարփավառ թագուհվույն պես, որ լացավ դառնագին՝
Իր դիակին վրա ինկած կը հեծեծեմ ես հիմա...

Ամենուրեք, աղոտած մահագաշտին վրա մտքիս՝
Կովեն հետո խենթի պես փնտրրեցի զայն երկա՜ր,
Գտա զքեզ հետքերեն վարդ արյունիդ, սիրելի՛ս,
Զարդուզենիդ մեջ պառկած և ճիշտ սրտիդ նետահար...

Համբույրներովս հիմա զո՜ւր կենդանացնել կ՚ուզեմ քեզ
Եվ կը կանչեմ հուշերուս հնօրյա գունտն հարալեզ
Լիզել վերքերդ անբույժ.—դուն արդ մեռա՜ծ ես իսպառ...

Բայց, ո՛վ Երազ, զոր կ՚ուտեն արդեն որդերը քանդիչ,
Կ՚ուզեմ խաբել ես աշխարհն, ինչպես ինքզինքս ալ մի քիչ,
Թե դուն կ՚ապրիս մի՜շտ աղվոր, հոգիիս մեջ՝ մի՜շտ պայծառ...

ՍԻՐՈ ԿՈՉ

Եվ հեռաձայնը անթել
Ինձ լուր բերավ թե հեռուն՝
Ամազոնի ափերուն,
Կին մը կ՚ուզե զիս սիրել...

Լուրը բերող ալիքներն
Ես գգվեցի հուզումով.
«— Իրա՞վ, եղա՞ք իրեն քով,
Ի՞նչ մույնք ու աչք ան ուներ...»։

Բայց ալիքները չըսին
Ուրիշ ոչինչ, ո՛չ մեկ բառ...
Ու չեմ գիտեր ես իսպառ

Ճակատագիրն էակին
Որ խեղճ, մենակ էր այնքա՛ն՝
Զիս կանչելու աստիճան...

ՔԵԶՄԵ ՈՉԻՆՉ

Քեզմե ոչինչ, ինձմե՝ ամեն բան, ամեն.
Քեզմե միայն խաղաղություն, լըռություն,
Մինչ իմ սրտիս մեջ ժպիտներ կիսարթուն՝
Դատապարտված, նորեն մահվան կ՚սպասեն...

Դուն չես գիտեր, ինչպե՞ս գիտնալ դուն կրնաս,
Թե ինձ համար շատ ավելին ես քեզմե,
Իմ կարոտս ես, որ զիս մեղմիվ կ՚սփոփե,
Իմ մթությունս՝ որ իբրև լույս կ՚իջնե վրաս...

— Ով Սերըդ իմ, մինակ, առանց վայելքի,
Եվ փոքրագույն առանց հույսի մը անգամ,
Մահվան արև, որ հոգույս դեմ կը ծագի...

Ի՞նչ փույթ, նորեն ես ընդառաջ քեզ կուգամ
Ու կը խնդրեմ, ես կը խնդրեմ այս միայն,
Որ իմ սրտիս միշտ ցանկալի պահես զայն...

ԻՆՉՊԵ՞Ս ԽՈՐՀԻՍ

Ինչպե՞ս խորհիս, սիրական,
Որ խորհուրդներս ամեն
Քեզ կը գգվեն, կը շնչեն,
Վրադ խենթի պես կ՚իյնան,

Մարմինդ ամբողջ կը ծածկեն,
Կը հեծկլտան, կը դողան,
Եվ սարսուռովն հեշտության
Կը վայելե՜ն քեզ արդեն...

Ինչպե՞ս խորհիս, բայց ինչպե՞ս
Կարենամ ես ալ քեզի
Հաղորդվի՜լ այլապես...

Արյունս ամբողջ կը կասի՝
Երբ կը խորհիմ թե կրնաս
Միայն խորհի՜լ դուն վրաս...

ԹԵ ՊԱՏԱՀԵՐ

Թե պատահեր որ նորեն՝ դուռս մեղմիվ զարնըվեր
Այս առավոտ, քիչ հետո, վայրկյանե մը, ահ, հիմա...
Ու սրտատրոփ պատասխան տայի... և, ահ, անիկա՝
Արքեհասակ, վարանոտ, ներս գալով զիս բարևեր...

Ի՞նչպես հանկարծ վեր թըռած՝ պիտի ձեռքեն բռնեի
Եվ պահ մը լուռ կենայի պիտի՝ դեմքին նայելով.
Նայվածքիս մեջ այնքան սեր, այնքան ըղձանք ու գորով՝
Որ դանդաղեր պիտի ան, իբր հեղեղե մը լույսի...

— Կ՚սպասեի քեզ, եկուր, եկուր, եկուր, քովս եկուր...
Դուն գիտեիր, այնպես չէ՞, որ անցյալ օր, խենթի պես,
Երկարորեն, քաղցրորեն՝ մեկնումեդ վերջ լացի ես...

Թող որ ըզքեզ համբուրեմ, ճակտիս՝ ճակատըդ մաքուր,
Աչքիս վրա աչքդ ու կուրծքիս դեմ մեղմիվ կուրծքդ բռնած
Եվ այդչափ՝ երազեմ քեզ նորեն լուռ, երկյուղած...

ՁԸՍԻՐՎԵԼՈՎ...

Ձսիրվելով սիրելե
Հոգնած, հոգնած եմ հիմա.
Գիտեմ թե ձեր գործը չէ,
Բայց պետք է Իրը ըլլա։

Կը գանգատիմ Աստուծո
Ծարավ, չորցած բերանով՝
Որ այս սրտին հնածո
Ձցուցուց պուտ մը գորով։

Անով իմ կյանքըս ծաղկեր
Պիտի աղվոր ծառ մ՚իբրև
Ու պիտի տար վառ միրգեր...

Մինչ անպըտուղ, անտերև՝
Կը նմանիմ ես այսօր
Ցանկապատին փայտին չոր...

ՁԵՌՔԻ ՄԸ

Օ՜հ, այն գիշե՜ր, այն գիշե՜ր... Մութը ի՞նչ մեծ բարեկամ
Մ՚ինծի եղավ ու ներեց համարձակիլ ու պնդել...
Ինչպե՜ս այսքան ատեն վերջ դեռ իր բարիքը կ՚զգամ,
Ձայն կը տեսնեմ՝ մեր վրա նետված զերդ քող մը անթել...

Դուն քովս էիր ու ծունկիդ վրա թաղված քու ձեռքիդ
Ձեռքըս դրպավ, դիպվածո՜վ, թե ոչ կամավ, չեմ գիտեր...
Ձքաշեցիր դուն զայն ետ և հանկարծ լույս մը վրՁիտ
Հոգիիս մեջ բխեցավ ու իր հետ տենչ մ՚անհամբեր...

Ձեռքըս մնաց ձեռքիդ քով ու զայն գգվեց մեղմաբար,
Մատներեդ վեր սահեցավ ու թաղվեցա՜վ ափիդ մեջ
Եվ դաստակիդ սահմանին վրա կեցա՜վ անհամբեր...

Կը մեծնար դողս տակավ ու կը ցնցեր զիս անվերջ,
Երբ համբորեն, մութին մեջ, մոտեցուցի շրթունքիս
Ձեռքն, որ հետո փախչելով պիտի ճմլեր, ճզմե՜ր զիս...

ԼՈՒՍՆԻ ԳԻՇԵՐ

Լուսնի գիշեր մը կ՚երգեր
Մարդն անծանոթ ու անտես...
Բաց դաշտին մեջ, տանըս մոտ,
Ձայնով մը տաք, հորդաբուխ,
Խենթեցածի պես, ազատ՝
Սիրո ցավ մը ան կ՚երգեր՝
Հեռանալով քայլ առ քայլ...

Գիշերն հանդարտ էր ու լուռ՝
Զոր մարդն այդպես կը հուզեր...
Ես, սենյակիս մեջ մութ,
Պատուհանիս առջև բաց՝
Կը լեցվեի քիչ առ քիչ
Վայրի ցավովը խորունկ՝
Այդ վայրի երգն երգողին
Ու կըսեի մտովին.

«Իրեն այս բաց դաշտն է պետք,
Որպեսզի սերն իր գոռա
Եվ ափոփվի, թեթևնա...
Մինչ ես իմ ցավըս խորունկ
Գոց տեղերու մեջ հազիվ
Մրմնջաձայն եմ երգած
Ու թեթևցած չեմ բընավ...»

Ու կ'երթար մարդն երգելով,
Ու երանի, երանի՜
Ես կուտայի այժմ իրեն՝
Որ դաշտը բաց ու լուսինն
Ու հեռավոր ատղերն ալ
Բռնած վկա իր սերին...

ՀԱԹՎԵՀԱՐԳԱՐ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

(Զոն)

Հոգիս իմս է և որքան թվիմ հանձնել զայն այստեղ,
Անցորդներուն անծանոթ, յուրաքանչյուր էջի վրա,
Հոգիս ի՛մս է և ոչ ոք պիտի ամբողջ զայն ճանչնա
Իր լույսերովը պայծառ, իր մթությամբը ահեղ։

Հոգիս հանքի մ'է նըման—ոսկի՞, ածո՞ւխ, թե կապար—
Որուն հազիվ հեղեղներ քրքրեցին խավը վերին,
Մերթ հրճվանքի ու հաճախ սև հեղեղները ցավին,
Մինչ հրաբուխ մը խորունկ անոր ներքև կը գոռար...

Հոգիս ի՛մս է և այսօր կը մտածեմ, թե հա՞րկ էր
Եվ ո՞վ գիտե դեռ որքա՜ն այսուհետև նոր վիշտեր
Պիտի պեղեն ու փորեն զանի հարված առ հարված...

Հոգիս ի՛մս է և այսօր կը մտածեմ, թե հա՞րկ էր
Զայն այս չափով ալ միայն՝ անցորդներուն ճանչցընել,
Մինչ կ'ուզեի քիչերո՛ւն ամբողջովի՛ն զայն հանձնել...

Կ'ԱՆՁՐԵՎԵ, ՏՂԱՍ

Կ'անձրևե, տղա՛ս... Աշունը թաց է,
Թա՛ց աչքերուն պես խեղճ խաբված սիրույն...
Պատուհանն ու դուռը գնա գոցե
Եվ դեմըս եկո՛ւր նստիլ վեհագույն

Լռության մը մեջ... Կ'անձրևե, տղա՛ս...
Կ'անձրևե՞ երբեմն հոգիիդ մեջ ալ,
Կը մսի՞ սիրտըդ, և կդողդողա՞ս՝
Խորհելով պայծառ արևին անցյալ,

Դռան մը ներքև գո՞ց ճակատագրին...
Բայց կուլաս, տըղա՛ս... Մութին մեջ հանկարծ
Ծանրը արցունքներ աչքեդ կը գլորին...

Լա՛ց անմեղության արցունքը անդարձ,
Լա՛ց չգիտնալով, խեղճ, անգետ տղա՛ս,
Խե՜ղճ որսը կյանքին, ա՛հ, լա՛ց, որ մեծնաս...

ԳԵՂՋԿԱԿԱՆ

1

Պզտիկ տուներ հեռուն ինծի կը ժպտին...
Գյուղ մ'է թաղված մեծ ծառերու շուքին տակ,
Անտառախիտ լեռան մը կողը ետին
Եվ առջևեն հոսող ջուրով մը հստակ։

Եվ կը խորհիմ... Ես այդ գյուղին բնակիչ,
Մենավորիկ և մոռցված հոն կ'ապրիմ,
Հոգիս հանձնած իր անդորրին ամոքիչ,
Հովին, հողին և ծառերուն մտերիմ։

Ինչ անո՜ւշ է գիշերն այնտեղ քնանալ...
Կյանքն հոն կանուխ, արշալույսին կ'սկսի.
Մշուշասքող հեռուի լեռն ու դաշտն ալ
Հորանջելով ոտքի կ'ելլեն. մեկուսի

Առվակն այգուն կ'ըսե աղոթք մը կարծես՝
Ալյակներուն համրիչն անվերջ քաշելեն.
Կը բուրվառեն ծառի ճյուղերն, և անտես
Ճպուռներն ալ առվակին դեմ կը բռնեն։

Օ՜, անոնցմե, որոնք մեկ-մեկ կը բանան
Արևին հետ դուռը իրենց տնակին,
Որոնց միտքը թերևս հողեն ալ խոպան՝
Սակայն հարուստ, բարի ու պարզ է հոգին։

Անոնցմե մեկն ալ ջինջ առտու մը հարկավ
Կը դարձընե քաղցր նայվածքը վրաս,
Եվ դիպվածավ իր լույս ժպիտը անբավ
Ինձ կը նետե՝ ինչպես միրգ մը նորահաս։

2

Անո՜ր, ո՜վ տեր, լուսաբացի այդ պահուն
Ես ալ հոգիս ի վեր ընծա կը ղրկեմ,
Եվ օրերուս վրան առկախ, օրորուն՝
Կը տեսնեմ միշտ անոր պատկերն այգագեմ։

...Օ՜հ, այն գյուղը՝ մեծ ծառերու շուքին տակ,
Որուն, ո՜վ տեր, ես ըլլայի բնակիչ.
Ան քայլերուս ըլլար սահման բովանդակ,
Հոնկե ի մահ ընթանայի քիչ առ քիչ...

ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՆԱՆ ՀԻԾԱՏԱԿԸ

Եթե լեռը վայրկյան մը սրտիս աղմուկը անկարգ,
Եթե պահիկ մը դադրե կիրքին խուճապը քանդիչ,
Ստվերին մեջ իրիկուն մ'եթե աչքերս անարգ
Ջրվառեին տենչանքով ու գոցվելով քիչ առ քիչ

Ձիս ամփոփվիլ, հանդարտիլ ու սպասել անցյալին՝
Իր գույներով, բուրումով, պայծառությամբ, թարմությամբ,
Վերադարձին հեզորեն զիս սպասել թույլ տային...
— Ինչպե՜ս ահա կը բանա երկինքն իր ծոցը անամպ,

Իր կապույտովը շքեղ մայիսի ջինջ առտվան,
Բլուրը ի՜նչ թավշաթույր կողեր ունի վետվետուն,
Ի՜նչ աղվոր է դեռ թրջած խոտերու մեջը գալ ման
Եվ երկննալ, և դիտել հեռուի լեռը ժպտուն...

Հո՜ն գարիի նորաբույս արտը շղարշ մ'է նրբին,
Որուն ներքև կը շողան հարսնուկները հակնթյա,
Հոս՝ եզերքեն, բուռերով երիցուկներ կը հորդին
Եվ կը հոսին՝ մարգրտի զերդ հեղեղ մը ճամբուն վրա...

Քիչ մը անդին՝ հեշտացրիվ հոտը հովվին կ'արածի,
Գառնուկները կը մայեն և կը ցատկեն անդադար,
Եվ ուլերը տոպրակված ծիծերուն տակ մայրենի
Կը քսվրոտվին և կուզեն իրենց բաժինը արդար...

Ինչպե՜ս ահա զեփյուռն ալ կուգա դաշտին այցելու,
Թիթեռնիկները կուգան թալթըլելեն, դողալեն,
Մինչդեռ ծառերն ալ կարծես կ'ըսեն գաղտնիք մ'իրարու,
Երբ որ հովեն գլուխնին իրարու վրա կը ծռեն...

Մատաղերամ տղոց խումբ մ'ալ կը խաղա անոնց մեջ.
Անոնց հնչուն ծիծաղեն ես կ'ունկնդրեմ ցնծությամբ.
Օ՜հ, անոնց մեջ է անշուշտ իմ ծիծաղս ալ վաղաշեջ...
...Ինչպե՜ս ինծի կը բառա Անցյալն իր ծոցը անամպ...

ՁՈՐՑԱՎ ԱՂԲՅՈՒՐԸ ՍՐՏԻՍ

Ձորցա՜վ աղբյուրը սրտիս, քաղցրակարկաչ այս սրտին.
Որուն անուշ, հորդաբուխ հին ջուրերուն վազքն անգամ
Հիմա հազիվ կը հիշեմ և հազիվ մերթ կը մնամ
Անջրասույզ՝ թե անոնք թերևս նորեն կը բխին...

Ձորցավ աղբյուրն՝ ավելորդ զոհողության մը նման
Ձորցավ՝ ի տես իր ուղխին ավազներեն ծծվելուն,
Եվ զի շատոնց չբուսավ ծաղիկ մը եզրն իր ճամբուն
Եվ ուղևոր մը շատոնց չհակեցավ իր վրան...

Հիմա, ցամքած այդ ակեն կը մնա լոկ մեկ ճակատ
Ավազալից իր գուռով և քարերով մամռապատ,
Որ կը զատվին օրե օր և կը թափին աննշմար...

Ձորցած աղբյուր, չէ՞ր կրնա ըլլալ սակայն, որ վերջին
Անգամ մըն ալ սանձաբեկ ջուրերդ հանկարծ ժայթքեին
Եվ շենքդ ամբողջ անոնց տակ մեծաշառաչ վար իյնար...

ԵՎ ՆՈՐԵՆ ԽՈՆՋ ԵՆ ՇՐԹՈՒՆՔՆԵՐՍ

Եվ նորեն խոնջ են շրթունքներս երգելեն,
Եվ այս սրինգն, աստված, ճաթա՞ծ է արդյոք,
Եվ տենչանքներն, որ մութին մեջ կ'այցելեն,
Որոնց ի տես կը դողայի հրճվանոք՝

Մոլորեցա՞ն արդյոք ճամբան... կամ հոգիս՝
Մեհյա՜ն իրենց, աստվածներու թափառիկ,
Շատ հի՞ն գտան ու լքեցի՞ն արդյոք զիս,
Եվ պիտ մնա՞մ ա՛լ առանձին անոթիկ...

Շրթներս խոնջ են երգելեն, հավիտյա՜ն.
Բոլոր հույսերս մի առ մի կը կրքին,
Եվ սիրտս խոնջ է տենչալե Տենչանքին...

Այսպե՜ս թողեք զիս վաթժվիլ լռության,
Հիշատակնե՜ր, ո՜վ դուք, որ դեռ կը ճչեք,
Հիշատակնե՜ր, գիտցեք մեռնիլ՝ լո՜ւռ և սեգ...

ՏՂՈՒ ՄԸ

Եթե ճիշտ է, որ զքեզ հանկարծ քայլերդ տարին
Դեռ նոր անշուշտ, օ՜հ դեռ նոր խորհրդավոր ու շքեղ
Այն պարտեզն ուր երաշներ՝ մեծ ծառերու կատարին
Եվ համբույրներ՝ բաժակին վրա ծաղկանց կը թառին...

Եթե իրոք այս ամառ միայն մտար դուն այնտեղ,
Հանկարծակի՝ օր մը, երբ անոթ չէիր սպասեր,
Եվ շլացած աչքերուդ դեմ ծագեցան բյուր լույսեր,
Եվ չգիտցար բավական ատեն, թե սերը այս էր...

Եթե վերջեն, զարմանքիդ վախ մը հանկարծ հաջորդեց,
Խորունկ հաճույք մը գտար տառապելուն մեջ լռիկ,
Մերթ հեռանալ ուզեցիր, և ծառերուն կուրծքդ հեց՝
Հոն մնացիր ու լացիր, ու գիտցար, թե որքա՜ն մեծ

Էր դյութությո՛ւնը տեղվույն... Եթե իրոք, ո՜վ պղտիկ,
Սիրո գաղտնիքը անհուն այսօր այլևս գիտես...
Եկո՜ւր, եկո՜ւր, զի սրտիս դուն շափազանց ես մոտիկ,
Եկո՜ւր, անցյալս ու ներկադ թող դրկվեն գաղտնապես։

ՀԵԹԵԹԱՆՔ

Կը պատահի ալ երբեմն, որ ցավս հպարտ ընե զիս.
Ես առանձին եմ, կ'ըսեմ, իր ճանկին մեջ գալարվող,
Եվ իր ճիշերն ալ՝ խորունկ անդունդներուն մեջ սրտիս
Կրնամ խեղդել ու մնալ լուռ, անտարբեր, մթասքող...

Սակայն երբե՛մն, երբ կանցնի երջանկություն մ'ալ քովես,
Երբ անապատն, որ հուսաց փոթորկին մեջ շիթ մ'անձրև,
Կը տեսնեն լոկ վերհառնումն ավազներուն հրակեզ,
Ես կ'անիծեմ տառապանքս ու կ'ընկճվիմ իր ներքև...

«Աստվա՛ծ, աստվա՛ծ, կը գոչեմ երեսանկյալ գետնին վրա,
Ահա գնաց ան, որ զիս պիտի ըներ երջանիկ,
Ան, որ կ'երթա հավիտյան ու պիտի ալ չդառնա...

Ինձմե ի զատ ի՞նչ օրհնյալ, ի՞նչ բախտավոր են մարդիկ.
Հետին աղքատն ալ երբեմն իր պզտիկ գանձն է գտած.
Զիս անոր և ամենուն նման ըրե՛, ո՞վ աստված...»։

ՏԱՂ ԱՌ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ

Ատելությո՛ւն, քեզ այսպես բացած չէի կուրծքս դեռ...
Սեր ունեի, կամ գոնե կը ներեի՞ շատերուն.
Կը դառնային միշտ աչքերս երկինքն ի վեր լուսահեռ՝
Միշտ լեցվելու, լեցվելու աստեղց ժպտովը քթթուն...

Բայց ի՞նչ տգեղ են մարդիկ, հետզհետե ի՞նչ տգեղ
Եվ անդադար մութին մեջ ինծի ինչպե՞ս կը դավեն...
Եվ կ'ուզե՛ք, որ տակավին Ատելությո՛ւնը շքեղ
Զսրբե՞ սուրն իր ժանգոտ՝ պիղծ օրերուն անիվեն...

Թերևըս քաղցր էր ապրիլ հանդարտորեն, բարությամբ,
Ժպտի՛լ երբեմն ու հաճախ խորհրդածե՛լ անայլայլ...
Սրինգը քա՞ղցր էր թերևս՝ քան շեփորին երգը բամբ...

Կ'ուզեմ նետել ես հիմա, զերդ ծեր սատան մը շռայլ,
Ատելությանս հուրը բորբ չորս անկյուններն աշխարհի...
Եվ ի՞նչ փույթ, թե այդ հուրեն իմ էությո՛ւնս ալ այրի...

ԽԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Ես՝ պարտըված մը կյանքեն, վիրավորված մը անկե,—
Մենք մեզի ենք, ո՛վ հոգիս, խոստովանինք ասիկա,—
Ինչպես կ'ըլլա, կը խորհիմ, որ նորեն ժամ մը կուգա,
Ուր սրտիս խորը հանկարծ կյանքին հաճույքը կ'երգե։

Բառ մը հաճախ կը բավե հորիզոններ բանալու,
Ճառագայթ մը անցյալեն՝ կ'ըլլա լույսը ներկային,
Եվ աչքերեն, որ վայրկյան մ'ինձ բարությամբ կը նային՝
Ապագայիս վրա անվերջ երջանկություն կը հեղու։

Եվ անձնատուր այս անհուն արբեցության, զոր ընդմիշտ
Կը կարծեի անհնար, ես կը մոռնամ ամեն վիշտ,
Ամեն կասկած ու կյանքին հետ նորեն պար կը բռնեմ։

Հիմարությո՛ւն, ստությո՛ւն՝ կ'ըսեմ վերջեն ինքզինքիս,
Երբ կը մնամ ես նորեն տրտմությանս դեմառդեմ։
— Բայց այդ սուտին դուն ինչպե՞ս կը փափաքիս, ո՛վ հոգիս...

ԵՐԱԶՆԵՐ

Ահավասի՛կ... ալ չեմ լար և ալ ոչինչ չեմ խնդրեր
Կյանքեն, որ այնչափ եղավ ինձ խոժոռ ու ագահ.
Ես կը դառնամ Երազին, որ զիս երկար տարիներ
Տեսավ առջին ծնրադիր, զերդ թագուհի մը ի գահ...

Ես Երազին կը դառնամ, անդավաճան սիրելույն,
Որ մերձավոր և հեռու, որ հստակ է և տարտամ,

Որ անշարժ է, անբարբառ, և բարութիւն գերագոյն
Կը խոստանա լռութեամբն ամեն ինչ, որ կը ցանկամ...

Կեանքին վրա, կեանքեն վեր կը բնակի անիկա,
Ան աղվոր է, ամենեն աղվորներեն ավելի,
Գուրգուրացված՝ զավկի պես, կնոջ նման՝ տարփալի։

Անկարելի չունի ան, և ամեն ժամ է ներկա,
Եվ ան այնքա՛ն է բարի, այնքան սիրող, հոգածու,
Որ քնիս մեջ իսկ կուգա իր սփոփանքն ինձ տալու...

***

Ով իմ Երազս, երեցար ինձ այս գիշեր դուն նորեն
Անծանոթի մը դեմքով,
Ինձ երեցար ու անցար և պահեցի քաղցրորեն
Այդ պատկերն ալ հոգեխռով...

Ինձ թվեցավ, թե սակայն ուրիշներե ավելի
Նման էր ան Երազիս,
Հասակ մը վեհ, գեմք մը նուրբ, աչքեր ուներ լուսով լի՝
Ողողելու համար զիս...

Եվ կարծեցի նույնիսկ, թե Երազ մը չէր ան միայն,
Թե կրնայի մոտենալ,
Ժպտիլ անոր, բռնել ձեռքն ու փայփայել, գրկել զայն,
Սիրել զանի, սիրվի՛լ ալ...

Ո՛վ քաղցր Երազ, լեցուցիր այս գիշեր կեանքս քեզմով,
Ու հեռացար, մարեցար...
Նորեն մինակ եմ հիմա, ինչպես նավակ մը ի ծով,
Ալետատան, հոգմավար...

***

Եվ հմայքով մը հանկարծ՝ տարիքիս բեռն ավելորդ
Կթափի վար ուսերես, խորհուրդներես ու սրտես...

Տե՛ս, տասնվեց տարեկան կ՚ըլլամ նորեն և, անցո՛ղդ,
Ճամբուդ վրա վերստին զիս հոգեզմայլ կը գտնես...

Կը կանչեմ քեզ գաղտահար, երբ որ անցած, գացած ես,
Քեզ կը կանչեմ անձկագին իմ Երազես ծաղկահոտդ
Պարտեզին մեջ, ուր կուգաս և ուր կ՚օրհնեմ, կ՚օծեմ քեզ,
Ուր կը բանամ, հո՛ն միայն, քեզի իմ սիրտս անհաղորդ...

Ի՜նչ երջանիկ, ի՜նչ ուրախ կ՚ըլլամ քեզ լոկ տեսնելով,
Երբ դուն կ՚երթաս այնչա՛փ սեգ, այնչափ փափուկ ու ճերմակ,
Ջիս ձգելով ընկճված շնորհներուդ գանձին տակ...

Ի՜նչ երջանիկ դեռ հետո, երբ Երազին ծաղկանց քով՝
Կը մտածեմ միշտ վրադ, քեզ կը խառնեմ միշտ անոնց,
Եվ կը պահեմ քեզ միշտ հոն՝ երբ դուն մեկնա՜ծ ես շատոնց...

ԿԱՍԿԱԾԸ

Հավատքս հոն ձգեցի բզիկ-բզիկ, հեռավոր
Ճամբաներուն վրա ամեն, ուր իմ սրտես ալ մասեր
Արյունլվա կը մնան, և ուր ոչ մեկը կ՚ըսեր,
Թե կ՚անցնեի ընդմեջեն մաքառումի մ՚ահավոր...

Ամեն ինչ վերք կուտար ինձ—բառ մը, նայվածք մը միայն.
Կը բացվեին սրտիս մեջ սերերն հանգույն վերքերու.
Շնչելն իսկ ցավ մըն էր լոկ, կը տանեի զայն սակայն,
Վասնզի հույսը հաճախ կուգար վերքերս փաթթելու...

Հույսը հոգնած հավատքիս կուտար կազդույր և սփոփ,
Բայց զի կռիվը տևեց՝ հոգնեցավ Հույսն ալ տակավ
Եվ տեսա, որ ճամբուն վրա կը հեռանար թևամփոփ...

Եվ օր մըն ալ դիմացես եկավ Կասկածն ու կերավ
Իր կտուցով կեռածայր, մագիկներով բզկտիչ,
Եվ տիեզերքը ամբողջ քանդեց, փշրեց քիչ առ քիչ...

ԱՆՏԱՌԻՆ ՄԵՋ

Ես կը ճանչնամ անտառին մեջ, ուր գարուն է,
Ձոր մը պզտիկ, ձոր մը ծաղկած, ուր երիցուկ
Եվ շուշաններ ձյուն կը տեղան, ուր կ՝արյունե
Կարմիր հարսնուկը շիթ առ շիթ վերք մը ծածուկ։

Մանուկ գարնան ան օրորոցն է հոն կարծես...
Երկու ճկուն ուռենիներ՝ մեն մի ծայրին,
Թեթև հոգին տակ կ՝երերան երբ համբապես,
Ժանեկապատ ձորակն օրրել հոն կը թվին։

Եվ հոն, տեսե՛ք, երկու մանուկ, ուրկե՞ եկած,
Անտառին ո՞ր երկու մուտքեն հանդիպակաց,
Կը կամրջեն ձորը սերով մը լռակյաց։

Երկու մանուկ օրորոցին վրա գարնան
Իրենց անբիծ սերը կ՝օրրեն... Օ՜հ, չճանչնան
Տերևաթափն և տրտմությունն իր անսահման...

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հոգիներո՛ւն վշտացած, անո՛նց, որ սեր հուսացին
Եվ չգտան, և անո՛նց, որ շատ սիրով հյուծեցան,
Մեծ լռությունն իբր սփոփ ծնավ ծոցեն այդ հուրին,
Եվ ան կ՝երթա աշխարհեն՝ գորովասփյո՛ւռ, սիրացա՛ն...

Վիրավորված սիրտերուն կը մոտենա անիկա,
Եվ սիրտերուն կարծրացած՝ իշխանաբար կը բախե...
Եկ, ո՜վ հրաշք, վերքն անոր ներկայությամբ վարդ կ՝ելլա,
Եվ, ո՜վ դյութանք, կը բխին աղբյուրներ քա՛ր սիրտերե...

Ան ամեն տեղ կ՝երևա, մթնոլորտին մեջ առկախ,
Մերթ գեղջկուհվո մը նման և մերթ հանգույն թագուհվո,
Ու երբ կանցնի՝ չի գիտեր, մարդ տխո՞ւր է, թե ուրախ,
Կամ տխրությա՛մբը ուրախ՝ միշտ սփոփված է հետո։

Կուգա՜, կ՝անցնի՜ հուզելո՛վ միջոցը, զոր կը լընու
Ամբողջ իրմով, և միջո՛ցն ալ կը գրկե զայն հեշտիվ,
Ձայն կտանի օրրելով, մեջեն կապույտ ծուխերու,
Մինչև այն պահն, ուր գրկին մեջ կը մեռնի՜ ան մեղմիվ...

Աշխարհներու հեռավոր հոգին իր մեջն ունի մերթ,
Եվ հոգիին վրա դժգոհ՝ երկինքն անոնց կը բանա.
Անոնց լերանց վեհվեհումն ու ծաղկա՛նց ալ թերթ առ թերթ
Տեղատարափն է փափուկ, հպումներո՛վը թավշյա...

Հեք մըն է ան՝ որ հևալ կուտա կուրծքերը իր հետ...
Որ տենդ կուտա ձեռքերուն և աչքերուն ալ արցունք...
Որ կը հառնե հեթանոս խնջույքներեն տարփավետ,
Ինչպես հարկեն Աստված՝ ուր կ՝ընծայվի պաշտամունք...

Սակայն անո՛նց մանավանդ, անո՛նց, որ սեր հուսացին
Եվ չգտան... և անոնց, որ շատ սիրով հյուծեցան՝
Մեծ լռությունն իբր սփոփ ծնավ ծոցեն այդ հուրին,
Եվ ան կերթա աշխարհեն՝ գորովասփյո՛ւռ, սիրացա՛ն...

ԻՆՁ ԿԸ ԹՎԻ ԹԵ ԱՊՐԱԾ ԵՄ

Ինձ կթվի թե ապրած եմ էլլադայի մեջ հին ատեն,
Սոկրատին պես վճիտ հոգվով իմաստասեր մըն եմ եղած,
Աստվածային գաղտնիքին դեմ կեցած եմ լուռ ու երկյուղած,
Սքանչահար զայն դիտելու և լուծելու զայն զբաղված...

Սակավընտիր աշակերտներ զիս ցերեկին կը շուրջպատեն
Հովանավոր ծառի մը տակ, Ակրոպոլի ոտքին ներքև,
Զիս կ՝ունկնդրեն անհագորեն, և մերթ բառով մ՝արփիաթև՝
Անշրպետին մեջ իրենց հետ կը վազեցնեն զիս հևիհև...

Այր չափահաս և ծանրախոհ, այդ թարմերամ խումբին մեջտեղ
Ես իմ հոգիս անդրադարձած անոնց աչքին մեջ կը գտնեմ,
Քնարական ձև ու ձայնով, խաղաղավետ ու լուսադեմ՝
Անոնք կանաչ կղզիներ են՝ խորհուրդներու ծփանքին դեմ...

Իմաստությո՛ւն, դուն կը բիւս առատահորդ և մաքրազեղ
Հորիզոնին վրա կանգնող սա հեշտագիծ բլուրներեն,
Սա երկնքեն մաքուր ու նուրբ, և այս տողոց խումբին նորեն՝
Որոնք, աղբյո՛ւր մշտանորոգ, տիեզերքի թարմությունն են...

Ի՞նչ փույթ, թե զիս չհասկրնան, դատապարտեն ալ ուրիշներ,
Ի՞նչ փույթ, եթե զիս քարկոծեն, ճամբուս վրա հայհոյ բառնան,
Թե ի վերջո ինձ երկարեն նաև բաժակն ալ սև մահվան,
Եվ արտասվոք ինձմե զատվեն աշակերտներս անտիական...

Իմաստությո՛ւն, միշտ կը ծռեմ առջիդ գլուխս ալեհեր...
Կյանքս ամբողջ պաշտամունքիդ նվիրելե հետո՝ հիմա
Իր հուսկ ժպիտն ալ իմ հոգիս ահա վրադ բեռ կը բանա,
Եվ այդ ժպիտը կը մնա այս լեռներուն, հողին վրա...

ԵՐԿՈՒ ՄԱՀԵՐԸ

Ես այս երկու մահերն ալ, ո՛վ տեր, սիրով կ'ընդունիմ...
Կա՞մ ունենալ գյուղական խրճիթ մ'ուր սերը տիրե,
Շարժի՛լ շունչին մեջ կնոջ մ' ու գիրքերու մտերիմ
Եվ իրիկուն մը մարի՛լ շրջապատված վարդերե...

Եվ կա՞մ հանկարծ վրայես անցնող հովեն մարտագոռ
Տարվիլ դաշտերը կովո, վրիժաբորբ, հրաշվի,
Թափելով մերկ սուսերիս ծայրեն վերքեր բյուրավոր,
Եվ իյնալով անոնց մեջ՝ զերդ անկողնո՛ մը վարդի...

Եվ այս երկու մահերուն կը փափաքիմ փոխն ի փոխ,
Անոնք ինձի կը ժպտին և կը ժպտի՞մ ես անոնց,
Անոնց մեջտեղ իմ հոգիս կարծես կեցած է շատոնց...

Ո՜հ, եթե կյա՛նքս եղավ պարտեզ մը զոր ոտնակոխ
Ըրին դիպվածն ու ահեղ ճակատագիրը դժխեմ՝
Գոնե թույլ տո՛ւր, Աստված իմ, որ ելքն անոր ե՛ս ընտրեմ։

ԳԱՅԼԻՆ ՀԱՊՈՒՄԸ

Ձյո՛ւն... Անդունդները լեցուցեր, և լեռներուն
Կողերն ի վար, և դաշտերուն ծածկած վրան.
Գյո՛ւղ մը, հյուղեր՝ ճամբորդներու կարծես նման,
Բլուրին ոտքը թավալած, ինկած նկուն։

Լո՛ւռ իրիկուն միապաղաղ դաշտին վրա.
Ճերմակ ծառեր կը խոնարհին մինչև գետին.
Դեպի քաղաք ճամբան անհետ կը քնանա...
Վերադարձող կուսության ի՞ղձ մըն է հետին։

Հորիզոնին անփայլ լուսին մըն է փակեր...
Կյա՛նքը հանկարծ... Գյուղին վրա, կաթիլ-կաթիլ,
Ինչպես արյուն՝ կարմիր լույսեր կուգան թափիլ։

Եվ կը դառնան նայիլ մարդիկ բլուրն ի վեր,
— Ձյունին երեսն երկարած շուքն իր ահավոր՝
Գայլ մը, անշարժ, գյուղին վերև կը հսկե կոր...

ԶԱՎԱԿՍ

Զավկի մը շնորհն անգամ, ո՛վ Ցեր, զլացար
Ինձի ընդմիշտ, և այդ մասունքը սիրույս
Արգիլեցիր փականքներու տակ անհույս,
Եվ զիս իմ մեջ սպանեցի՞ր շարաշար...

Երբ ես ծռիմ՝ ան բարձրանա՞ր քովս ի վեր,
Իմ սպառած կյանքիս հյութովն առլցուկ.
Ե՛ս հովանի անոր և ա՞ն՝ ինձ նեցուկ,
Ու նո՞ր արև՝ աչքին մեջ աչքը՞ս գոցվե՞ր...

Մինչդեռ հիմա դուռնե՛ի դուռ, մինչև վերջ,
Քիչ մը գորով պաղատելով՝ պիտի գամ
Օտար տղոց քով թաւ՛ առկիլ հարաժամ...

Օտար տղոց աչքերուն, հոգվույն մեջ
Դողդոջագին պիտի տղա՜ս որոնեմ,
Եվ անծանոթ՝ պիտի մեռնի՜մ անոնց դեմ...

ԵՐԵՔ ԿՈՉԵՐԸ

Առտուն կանուխ՝ ո՞վ է, որ
Դուռըս այսպես կը զարնե...
Դո՞ւն, սպիտակ ու աղվոր
Երա՜զ... կուգա՜մ, ըսպասե՛.
Աշխարհի ծայրը մինչև,
Մինչև լուսին ու արև՝
Ով սպիտակ, վետիվետ
Երա՜զ, կուգա՜մ ետևեդ...

Ցերեկ ատեն՝ ո՞վ է, որ
Կը բախե դուռըս այսպես,
Ընդհատ-ընդհատ, զորավոր...
Ա՜հ, այո՛, դուն, դուն Պարտքն ես՝
Հրամայող, խոստացող,
Ո՛վ պարտք՝ որուն դող ի դող
Կը հետևիմ ես ահա՝
Բացած դժնե ճամբուն վրա...

Իրիկվան մեջ՝ ո՞վ է, որ
Կը ցնցե դուռըս մեղմիվ...
Այս ի՞նչ ձայն է՝ դաշն ու խոր՝
Ջոր կը լսեմ ես հազիվ...
Մա՜հ գեղեցիկ, Մա՜հ վսեմ,
Կ՝սպասեի քեզի ես
Ու հետդ ահա կը քալեմ՝
Խելոք ու լուռ, զավկի՜դ պես...

ԴՈՒՆ ՀԵՌԱՎՈՐ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ահ, եթե դուն չճանչնաս՝ ալ ո՞վ կրնա ճանչնալ զիս,
Դո՛ւն, հեռավոր մանկություն՝ որմե եկա համրաբար
Եվ որ հիմա անցյալին վրա պառկած կ՝երևիս՝
Երազափայլ ու գացած կարծես աշխարհ մը օտար։

Բայց կ՝արթննաս դուն երբեմն ու զիս երկար կը դիտես՝
Մինչ գրկաբաց կ՝սպասեմ քեզի հուզմամբ, անձկությամբ.
Աչքերս խունկ են ամբողջ ու կը մխան գորովես.
Կը ցոլանա աչքիս մեջ աչքիդ երկինքը անամպ։

Բայց կը թվի, թե վախցար ու հոգվույս մեջ վերստին
Խորշե ի խորշ կը փախիս ու պահվըտիլ կ՝երթաս դուն՝
Զիս ձգելով ավելի հիմա տրտում ու նկուն։

Կը հասկանա՜մ, չես ճանչնար դուն այս հոգնած ծերունին,
Զոր պահ մը հայրդ հուսացիր և որ եղբայրդ է միայն,
Քեզմե հեռու չարաչար մեծցած եղբայրդ անարժան...

ԵՍ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Ես այս գիշեր կը ծախեմ հիշատակներըս ամեն...
Կես գիշերի լուսնին տալ կ՝ուզե՞ս որ մենք սակարկենք.
Ինչպե՞ս, չունի՞ս դուն ինծի բան մը տալիք փոխարեն.
Բայց միայն շուքդդ տղա՜ս, հասակիդ շուքը աննենգ...

Սուրբ քաղաքին անհամար խորաններուն վրա կ՝ուխտեմ
Ահա քեզի, որ սիրով պիտի զանոնք հանձնեմ ես,—
Առ տա՜ր ամենքն իմ ամբո՜ղջ այս գիտությունըս տրտում.
Անցյալս անվերջ կրելե զիս ազատե՜ վերջապես...

Եվ տուր ստվերդդ ինծի... Անապատին մեջ երբ որ
Երթամ մինակըս նորեն, մերկ՝ հոգիով ու մտքով,
Ընկերանա՜ թող ինծի օրորուն շուքդդ աղվոր՝

Իբրև ինձմե իսկ ծնած թեթև հոգի՝ մ'հոգվույս քով,
Իբրև իմ իսկ պաշտամունքս հողին վրա երկարած,
Հողեն ելած ու հողին տվող համբ. էյր մ'երկյուղած։

ՄԵԿ ՀԱՏԻԿՍ

Իմ հատի՛կըս հիմա, որ կը դիտես զիս վհատ,
Հայելիին ջրհորեն,
Քեզի նման ու քեզմով կը նայիմ ես ալ վրադ
Երկարորեն, ծանրորեն...

Ե՞ս արդյոք քեզ, թե դուն զիս կը մեղքընանք ավելի,
Երբ զիրար լուռ կը դիտենք...
Քովը եղբայրը է մեռած, քու հին ընկե՛րդ լույսի՝
Զոր դեռ այսօր կ'ողբանք մենք։

Նոր զարնըված էր երբ որ գիշեր մ'երազըս տեսա՝
Թե մութին մեջ, հևիհև,
Կը քաշեի կարասի փոխադրող կառք մը հսկա՝
Քովըս շուքի մը հետ սև,

Որուն հաճախ կ'ըսեի անձկությունով ու վախով.
«— Ընկե՛ր, լավ չեմ տեսներ ես,
Դուն կը տեսնե՞ս...» և թեև կը քալեինք քովե քով՝
Բայց ձայն չբկա՛ր ընկերես։

Չէի գիտեր, թե արդեն մեռած էր խեղճն այդ պահուն.
Այնուհետև չարթնցա՛վ,
Չխոսեցավ ան երբեք. վերջեն տեսար զինքը դուն.
Ան չտեսա՛վ քեզ բնավ...

Հայելիին ջրհորեն մինչ կը նայիս դուն ինծի,
Ու կը նայիմ ես քեզ մեջ,
Կը նշմարեմ՝ ջրամույն որպես գլուխ մը ոսկրի,
Անոր ձիգ՝ էջ անվերջ։

Իմ մեկ հատի՛կս... օհ, ինչպե՞ս սիրալս վրադ կը դողա՝
Երբ կը տեսնեմ քեզմով քեզ.
Քու արցունքովդ քեզի կը պաղատիմ ես հիմա՝
Որ դուն ալ զիս չքնես...

ԱՊԱԳԱՆ

Ապագան ահա կը ժպտի՝ նորեն՝
Ենծ կերած, լացող տղու մը նման,
Որ կը նշմարե փողոցին խորեն
Կապիկ մ'ու իր տերն՝ որ կը մոտենան։

Կը ժպտի՝ ինծի Ապագան՝ որ սև
Քող մը երեսին՝ այրի մըն էր լուռ.
Կը ժպտի՝, և իմ նայվածքիս առջև
Կը բացվին, կարծես, դռներ ոսկեհուռ։

Ապագա՛ն՝ թեև չըլլա անսահման,
Ինչպես ատենով— անսահմա՛ն հույսեր,
Սերեր, հրճվանքներ՝ անմահությյան

Արևին ներքև ինծի կ'երևեր—
Սակայն կը ժպտի՝ ու կը խոսի՝ ալ,
Տես, հոգի՛ս, դեմքովն ու ձայնովն անցյալ...

ՎԻՇՏ ՄԸ

Վաղուց է, որ կյանքն ինծի ամեն հրճվանք զլացավ։
Եվ վարժվված եմ ատոր.
Բայց չունենալ ո՛չ մեկ վիշտ, հարատևող ո՛չ մեկ ցավ,
Որ հոգիիս մեջ պղտոր

Հստակությունն իր դներ և կազմեր կապն օրերուս,
Որ միայն ի՛մս ըլլար,
Իմ թաքստոցս՝ ուր հաճախ մարդոց աչքեն տալով խույս,
Պահվտեի դողահար...

Ջունենալ վիշտ մը շքեղ, տոկուն ու կարծր ինչպես վեմ,
Որուն վրա հակած միշտ,
Կյանքս աշխատեր ու կերտեր անկե անդրի մը վսեմ...
Ջունենա՜լ զայն, ա՜հ, ի՜նչ վիշտ...

ԵՐԵՍՆԱՄՅԱԿ

Երեսունի հրվանդանին առջևեն՝
Ահա՜ իմ նավս առագաստները պարզած,
Փրփուրին մեջ կը հետևին մինչ իրեն
Շնաձուկի սև կլափներ լայնաբաց...

Կտավին վրա կարկտաններ կան անթիվ,
Եվ ծռեցավ շատ անգամներ ղեկն անոր...
Երեսունի հրվանդանին ի պատիվ՝
Կրցածիս չափ նորոգեցի զայն այսօր...

Մեծ մրրիկներ չանցուցինք մենք, բայց հավետ
Եկավ մեզ հետ կարծես կոհակ մ'ընդծովյա,
Նավը անդուլ տատանելով, ու իր հետ
Քայքայելով հոգիս, մարմինս անխնա...

Պատահեցավ, որ հույսս մերթ կտրեցի
Երեսունի հրվանդանին հասնելու.
Բան մը սակայն կ'ազդարարեր միշտ ինծի,
Թե հոն իյնա՜ր պիտի կոհակն ահարկու...

Եվ մենավոր, մռայլ ճամբուն վրա ջուրին՝
Ես ունեցա շատ մը մահեր նավուս մեջ,—
Մանուկ Իղձերս անգղերն ադին ու տարին
Եվ ծովամույն կորավ Հավատքս վայրէջ...

Շատ մը Սերեր՝ թևերուս մեջ մեռնելով,
Եզերքեն դուրս, կամաց մը ջուրն եմ նետած.
Շա՜տ Երազներ ինքնիրենին ինկան ծով,
Եվ ես վերեն աղոթեցի գլխաբաց...

Հույս մը միայն, որ մեծցուցի, սնուցի
Երկար ատեն, հոգվույս ամբողջ զորությամբ,
Որ իր տեսքին նշուլանքով առնացի՝
Երբ կ'երևեր՝ կը փարատեր ամեն ամպ,

Իմ Հույսը օ՛ր մը ըլլալու ա՜ն զոր չեմ,
Ըլլալու ա՜ն, որ առաջ տե՛ր ինքզինքին՝
Հետո անհաղթ պիտի կռվեր տարերց դեմ,
Իմ այդ Հույսս ալ չար ոգինե՛րը զարկին...

Եվ նավուս մեջ պառկեցուցած եմ զանի,
Ալետատան, հեծեծելով, տրքալով,
Հիվանդ այնքա՜ն՝ որ քիչ օրեն կը մեռնի,
Մինչ կը մընամ ծալաբազուկ՝ մահճին քով...

...Երեսունի հրվանդանին առջևեն՝
Ահա՜ իմ նավս, ու ծովն է նո՛ւյն վայրենին...
Շնաձուկեր կը հետևին միշտ իրեն
Եվ կ'սպասեն իմ մեծ Հույսիս դիակին...

ԾՎԱՐՈՒՄ

Աստվա՜ծ իմ, եթե կարելի չէր՝ որ
Ամենքն ըլլային սափոր օրհնված՝
Լեցուն բարության գինիով հզոր,
Ընեի՜ր ամենքն իրարու դիմաց

Պողպատյա վահան, և թույլ չտայի՜ր,
Որ տկարը միշտ, ա՜ն ալ քու որդիդ,
Իյնա՜ և արյան իր քողով կարմիր
Ծածկե՜ ամչցող մարմինն իր վտիտ...

Բայց չերի՛ր այդպես... Կ՚ըլլան ոտնակոխ
Ուժովեն՝ նվազ ուժովներն ամեն,
Եվ կը զարնվի եղբայրն եղբորմեն...

Ի՜նչ խորհուրդ է այս. մարդ մարդու ոսոխ
Եվ Դուն հավիտյան տկարին ընդդեմ...
Աստվա՛ծ իմ, ինչպե՞ս զքեզ ըմբռնեմ...

ԳԻՐՔԵՐ

Գիրքերու մեջ կան ի՜նչ վեհ զգացումներ, խորհուրդներ...
Ինչ որ ունի լավագույն՝
Մարդը խլեր է իրմե, ծալեր, ի պահ է դրեր
Կողքերու տակ գույնըզգույն։

Եվ հրպարտ է անոնցմով... Օր մը երբ որ Հրատեն
Այցելուներ գան երկիր՝
Իր գիրքերուն մեջ պետք է մարդը գտնեն ու դատեն,
Մարդը՝ վսե՜մ գրագիր...

Աստվածը ինքն է գրտած, գտած՝ գիրքի մեջ գամած.
Երբ Անոր պետք ունենա
Ընդդեմ մեկուն կամ մյուսին,— իր բանտերեն մթամած
Կ՚երթա հանել զԱնիկա...

«Մի ըսպաններ—ի՜նք ըսած է Աստուծո որ ըսե—
Քանզի ամենքդ եք եղբայր...»
Եվ զինվորին ինք կանգնած է մարմարե, պղինձե
Հուշարձաններ անհամար...

Բայց գիրքն ուրիշ, կյանքն ուրիշ. գիրքը տղոց, ծերերուն,
Խենթերո՜ւն պետք է միայն.
Տկարներո՜ւն՝ վերջապես. մարդը ուժեղ ու բեղուն
Չի՛ գրեր, չի՛ կարդար զայն.

Զորավոր մարդը կ՚ապրի՜ մոռցած գիրքերը բոլոր
Եվ գիրքերուն հակառակ
Կ՚ստեղծե նոր ճամբաներ՝ հոգ չէ թե ծուռ ու մոլոր...
Միայն Աստված է շիտակ...

Արդարությո՛ւն, բարությո՛ւն, մարդը ձեզ լավ կը ճանչնա՝
Ինչպես աստղերն երկընքին.
Զեզ կը ճանչնա հեռուե՜ն, կը հիանա ձեր վրա,
Զեզ կը քննե վերըստին

Եվ ձեր շքեղ պատկերին կը հավելու միշտ նոր գիծ,
Միշտ նոր գույն մը հմայիչ...
Տկարին ձեռք կուտան հոն՝ մինչ կյանքի մեջ կուտան կից.
Կյանքը տարբե՜ր է... մի քիչ։

***

Գիրքե՛ր՝ ամոթը մարդուն, կուզն ու վերքերը անոր
Ծածկող շքեղ քղամիդ,
Բըզկըտեի ես զքեզ ու երևնար մարդը նոր,
Մարդը հին և ճշմարիտ...

Գիրքե՛ր, մեռած սրբությանց, գեղեցկությանց դամբարա՜ն,
Ձեր շեղջակույտը մթին
Օդն հանեի՝ որ թերևս հոգիին մեջ մարդկության
Ծագե՜ր շող մը վերըստին...

Գիրքե՛ր, միակ սփոփանքն, հացն ու հաճույքն իմ սրտիս,
Փչացընել ձեզ կ՚ուզեմ,
Որպեսզի ա՛լ չխաբեք ու չխաբեմ ես ալ զիս,
Չիյնա՜մ միշտ ձեր սուտին դեմ...

Գիրքե՛ր, գիրքե՛ր կեղծպաբիշտ, ես կ՚ուզեի միմիակ
Մեծ գրատան մը մեջ ձեզ
Ամբողջովին հավաքել, ձեռքովըս տալ ձեզ կրակ,
Եվ ձեր փոշին հրակեզ
Ցրվե՜լ չորս ծագն աշխարհի, տա՜լ երկնքին անհատակ...

ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ

Հաշվեհարդար. ի՞նչ մնաց, կյանքեն ինծի ի՞նչ մնաց.
Ինչ որ տվի ուրիշին, տարօրինա՜կ, ա՛յն միայն.
Խանդաղատանք մը ծածուկ. օրհնություններ անիմաց,
Երբեմն հատնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն...

Ինչ որ գնաց ուրիշին՝ վերադարձավ անուշցած
Ու զորացած՝ հոգիիս մեջ մնալու հավիտյան.
Ինչ որ տարավ սերն ինձմե՝ չկորսընցուց զայն Աստված,
Տվավ ինձի ետ ու ըրավ կյանքիս անով միշտ բուրյան...

Եվ այժմ, ո՛վ Տեր, հակառակ իմ տանջանքիս, հակառակ
Ինծի համար սա՛ չորցած երջանկության աղբյուրին,
Հին գինիով հորդաբուխ ես կ՚արբենա՜մ տակավին...

Ու չեմ ըսեր «Ի՞նչ մընաց...» Ի՞նչ կը մնա հողին տակ
Եղեգներեն դյուրաթեք, կաղնիներեն հաստաբուն.
Արևն ըմպած ըլլալու մխիթարանքը անհուն։

ԻՄ ԳՅՈՒՂՍ

Իմ գյուղս, մի՜շտ, իր լայն ու լույս երկինքով,
Իր արտերուն հղությունովը հանդարտ,
Մանկությունովն աղբյուրներուն իր թոթով
Եվ լեռներուն լրջությունովը զվարթ,

Ուր որ երթամ՝ կը դառնա՜ շուրջը մտքիս,
Ծովահայաց ճամբաներուն մեջ իրեն,
Մերթ կը բռնե հոգնած աչքերս ու հոգիս,
Մերթ կը փչե՜ երեսիս հով մ՚իր հովեն...

Իր աղոցով գյուղս կ՚աճեր ու կ՚երգեր,
Կը սարսռա՜ր իր սերերով ծաղկավետ,
Կ՚օրհնաձայնե՜ր իր ծերերուն շրթանց հետ...

Իմ գյուղս, տե՜ր, արդյոք ի՞նչ զով զեփյուռներ,
Հով արևներ, ծով ստվերներ կը տեղա
Իմ հոն թողած, իմ հոն թաղվա՜ծ սրտիս վրա։

ՏԱՂ ԱՐԵՎԻՆ

Քեզ գիշերին մեջեն կ՚ոգեմ, մեծ Արև՛,
Որ ամեն բան կ՚ընես ինքզինքը քեզմով,
Որ Աստուծո դեմքն ես կարծես մեր վերև՝
Անոր նման մենե հեռու և մեր քով...

Քեզ գիշերին մեջեն կ՚ոգեմ, Արև հին,
Դուն գիշերին ալ հեղինակը միակ,
Ինչպես Աստված է ստեղծիչն ալ չարին,
Երբ դուն՝ աշխարհն, ու ան զմեզ կը մոռնաք...

Սակայն կ՚ոգեմ, կ՚ոգեմ, զքեզ, Արև՛ նոր,
Խոր գիշերին մեջեն, որ արդ պաշարեր
է իմ հոգիս և անհամար հոգիներ...

Ու կ՚սպասեմ, ժողված ուժերիս բոլոր,
Որ այս անհուն դաժան խավարը ճեղքես,
Եվ բարձրանա նորեն բոց մ՚ալ իմ սրտես...

ԱՅՍ ԵՐԱԶԸ

Պիտի քալե՜մ հավիտյան այս երազին ետևեն,
Ո՛ւր որ ըլլամ, ո՛ր աստղին կամ ո՛ր ամպին ալ ներքև,
Սիրտիս ուրախ թե տրխուր, քայլերիս ծանր կամ թեթև,
Շուրջիս ամպրոպը գոռա, թե զեփյուռները թևեն...

Այս երազին ետևեն պիտի քալե՜մ հավիտյան,
Հիմա, ավա՜ղ, գիտնալով, թե զայն պիտի չբռնեմ՝

Բայց տենչալով այդ տեսիլքն իմ անցյալիս քաղցրադեմ
Հետքս հավետ ունենալ, անով երթալ գերեզման...

Անով՝ անցյալն ինծի հետ, իմ առջևես կ՚ընթանա
Ու կըլլա միշտ ապագա ու զայն կ՚ընե ցանկալի.
Անոր սառին վրա իբրև շող մ՚արևի կը փայլի...

Այդ երազին ետևեն աս բոպեին ալ ահա՛
Կը հևա սիրտս այնքա՛ն՝ որ զայն գրկա՛ծ եմ կարծես,
Որ կը խորհիմ, թե արդեն ես սիրվա՛ծ եմ իմ սերես...

ԳԻՏԵՄ ԳԱՂՑՆԻՔ Մ՚ԱՀԱՎՈՐ

Գիտեմ գաղտնիք մ՚ահավոր.—Այս Աստվածն է սուտ Աստված,
Որ խաբած է մարդը միշտ և մարդը զայն է խաբած,
Եվ այժմ անոնք հուսկ ուրեմն եկած կեցած դեմառդեմ,
Ջիրար կովի կը կանչեն՝ դիմակաթափ, ծաղրադեմ...

Ուրիշ ոչինչ, այս միայն. և այս տռամը՝ երկար
Պիտի տևե տակավին, բայց ոչ մեկ բան չի կրնար
Փոխել վախճանը անոր, որ չէ այլ ինչ եթե ոչ
Մահն այս երկու կովողաց ճիչով մը խառն, ահագոչ։

Պիտի մեռնի այս Աստվածն այս մարդուն հետ գիրկընդխառն,
Որ բուն Աստվածն՝ աքսորված սրտեն, մտքեն իր զավկին,
Վերադառնա ու կազմե նորեն անոր նոր հոգին։

Պիտի մեռնի մարդը այս—հրճվանքս է մեծ, թեև դառն—
Իր գործերովը բոլոր ու պիտի նոր մարդը ծնի
Բանաստեղծի մը թերևս՝ երգեն սիրո, ցասումի...

ԱՊՐԻՂ ԹԵ ՈՉ ԵՐԱԶԵԼ

Ապրի՞լ թե ոչ երազել.— չուծեցինք հարցը դեռ.
Վայելքը ո՞ւր փնտրրել, երազի՞ն մեջ, թե կյանքին,
Չվճռեցինք տակավին... և մինչև ժամը վերջին
Այս մեծ խնդիրն, ո՛վ հոգիս, վրաղ ըլլա պիտի բեռ...

Քանզի երազն էր կյանքեն ավելի դյուր ու հեշտին
Եվ իր արշավն ալ՝ անծայր, դաշտե ի դաշտ, լեռնե լեռ,
Եվ ուներ ինքը միայն զոց դուռներուն բանալին,
Որոնց հետև լուսասփյուռ կային գանձեր ակնահեռ։

Մենք սիրեցինք երազին երթալ ճամբեն ծաղկալից
Մինչև անդունդը երբեմն, մինչև բարձունքը երկնից,
Եվ, խե՛ղճ հոգիս, երկուքեն ալ սպառած ետ դարձանք։

Չի երազին վերքերուն կյանքը չեղավ բալասան,
Եվ հոգնության ալ կյանքին չեղավ երազն ապաստան,
Չառինք երազ մը կյանքեն, ու երազեն չառինք կյանք։

ՊԱՏԻԺԸ

Պզտիկ ու ջինջ, ջինջ տղան ինչպե՞ս մեծցեր է հիմա
Փախեր գացեր է առաջ ու զարնըված ժայռերու,
Դարձեր է ետ, աղտոտած, ու դեմս ուղիղ կը կենա
Անխոս, անշարժ, անհլու...

Կը մոտենամ. ծնոտիս գլուխն հազիվ կը հասնի,
Ալեծածան իր մազերն ունին ոսկվո մութ ցոլքեր.
Կը բարձրանա անոնցմե բուրում մը բարկ մեխակի,
Ջոր, ո՛չ, շնչել չեմ ուզեր...

Եվ զայրացած կը դիտեմ ես վերեն վար այս տղան՝
Բայց և տակավ կը կարդամ զինքը գիրքի մը պես բաց...
Հետո մեջեն տողերուն, անոնց ներքևն ու վրան՝
Գիրքն իմ կյանքիս մոռցըված...

Իր մեջը զիս կը տեսնեմ այս տարիքին՝ երբ նույնպես
Իմ գաղտնի կյանքս ունեի, մղումներով իր գաղտնի...
Բայց դեռ փոքր է, ու տարբե՞ր կը կարծեի զինքը ես...
Ո՛չ, պետք է ան պատրժվի...

Կը ծռիմ քիչ մ՝ալ վրան ու խոպոպ մ՝իր մազերեն
Ճիշտ երեսիս կը քսվի... Ե՞ծ թե խրատ իրեն տալ,
Ուսը ափիս մեջ կ՝առնեմ ու կը սեղմեմ ուժգնորեն,
Ուսը և թևն, արմունկն ալ...

Եվ մինչ կ՝ուզեմ զայն պատժել՝ վրան ողորկ իր ճակտին
Կ՝իյնան շրթունքիս բացվող... Տղուն հասակը հանկարծ
Ճյուղի մը պես կը սարսի, տաք կաթիլներ կը գլորին
Երեսներեն բռնկած...

«Հայրի՜կ, հայրի՜կ», կը գոչե՝ հևքին, հեծքին մեջ անվերջ
Հիմա ինձի փաթթված, համբուրելով ինքն ալ զիս...
— Երեկ գիշեր ես այսպե՞ս մեղքը առի քընիս մեջ
Իմ չունեցած զավակիս...

ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ ՎԵՐՍՏԻՆ

Այս իրիկուն վերստին ես սաստկորեն զգացի
Անբուժելի թշվառությունը կյանքիս.
Ա՜հ, չէ թշվառ ինձի չափ ա՜ն, որ կարոտ է հացի,
Զի ավելի ի՜մ անոթի է հոգիս։

Այս իրիկուն վերստին... Սակայն ի՞նչ պետք և ի՞նչ սիրտ
Կրնա հոգիս դեռ ունենալ ու պատմել
Ինչ որ կյանքին առօրյա իրեն տված վերքըն է բիրտ՝
Որուն կարծես եղած է ինքն ալ ընտել...

Կեղեցկության նոր դեմքին, սիրո հույսի մը դեմ նոր՝
Իմ էությանս ընդոստ ոստնումը հանկարծ.
Երջանկության նոր տեսիլք, իմ կոչը խոր ու հզոր,
Եվ վաղընդփույթ անոր փախուստը անդարձ...

Հույսին փախուստն՝ ինքնիրմեն իսկ սարսափած, դողահար,
Ճակատագրին դուռը առանց բախելու,

Ջսպասելով, որ սիրված ձեռքը թերևս զայն բանա՜ր,
Եվ կամ փակվե՜ր ան գուցե խորն աչքերու...

Երջանկության տեսիլքեն պահել պատկեր մը միայն,
Ինչպես դիակ մը նորածին զավակի,
Կուրծքիդ վրա զայն սեղմել և աշխատիլ ընդունայն,
Որ քո շունչեդ ան շունչ առնե և ապրի...

Միշտ ըսպասել և հուսալ, հուսա՜լ, ինչպես հուսացի,
Եվ հավիտյան նորեն մինակ գտնել զիս...
Ա՜հ, չէ թշվառ ինձի չափ ա՜ն, որ կարոտ է հացի,
Զի ավելի ի՜մ անոթի է հոգիս...

ՈՍԿԵՄԱՐՏԸ

(Ողբերգություն վեց օրով)

Ա

Երկիրը երգ է ամբողջ՝ իր հովերով, ծովերով...
Կը խաղա լույս մը անմեղ՝ երեսն հողին ու ջուրին...
Երջանկությունն իբրև ուլ մը կ՝ոստոստե Մարդոց քով...
Ոսկի է սիրտը Մարդուն, ան գտած չէ դեռ Ոսկին...

Բ

Երկիրն երգել կ՝ուզե միշտ ու կը խաղա Լույսը դեռ՝
Երբ կը սահի Մարդուն մեջ խռովք մ՝ու տենդ մը գաղտնի...
Կը փնտրե այժմ ան միշտ, կը քրքրե դաշտ ու լեռ
Ու կը գտնե՜ վերջապես հոն պահված կույսը Ոսկի...

Գ

Ոսկին ժպտուն, պսպղուն՝ հիմա կ՝երթա ձեռքե ձեռք...
Հացի, կյանքի փոխարեն կուտա ու ետ կ՝առնե զայն...

Կ՚ըլլա վայելքը հյուծում և ցանկությունը իր՝ վերք...
Եվ կ՚սկըսի Ոսկեմարտն՝ անագորույն և ունայն...

Դ

Ո՞ւր գնաց կույսը անմեղ... Երկիրն ինչո՞ւ ա՛լ չերգեր...
Ի՞նչ փոթորիկ ծառերուն կը նետե վար տերևներն
Ու վեր՝ ջուրերը ծովին։—Մարդ մը, աչքերն իր փակեր,
Կովեն հեռու, կը հևա՝ երկրի սուզով ծանրաբեռն...

Ե

Ատելավառ խառնուրդին ու ժխորին վրա մթին՝
Ահա հանկարծ կը պայթի կշռավոր ճիչ մ՚անսահման...
Շանթի նման կը նետվի Քերթողը խորը կովին,
Կը խրլե կույտը Ոսկի, զայն կուտա եռ Բնության...

Զ

Ի՞նչ փույթ արյունն առվակող Քերթողին լայն ճակատեն՝
Կը խաղաղի քիչ առ քիչ մարդոց գուպարը ահեղ...
Ի՞նչ փույթ ավերն ու զոհերն, որ զայն ամբողջ կը ծածկեն,
Կ՚երգե երկիրը դարձյալ ու կը պարե լույսն անմեղ։

ԿԸՍԵՄ ՄԵՐԹ ԱԼ ԻՆՔԶԻՆՔԻՍ

Կ՚ըսեմ մերթ ալ ինքզինքիս.—«Բավական է, բավական,
Ինչո՞ւ միայն դարձդարձել ժամանակին մեջ անցյալ,
Ու չթոիլ անկե դուրս, չէ՞ որ քուկդ է և՛ ներկան,
Ե՛վ ապագան ու կրնաս անոնցմով ալ արբենալ...

Ուրվականի տեղ կրնաս բռնել, գրկել առարկան,
Որ ձեռքիդ տակ է հիմա, և արշավել ու սուրալ
Անհունության մեջ վաղվան՝ որ է նույնքան իրական,
Որքան Երեկը գոնե և ավելի հյուրընկալ։

Կ՚ըսեմ երբեմն ինքզինքիս, ու պատասխան կ՚առնեմ մերթ.
«Խաղաղությո՛ւն ճամբորդին, որ կուգա խոնջ ու խոցված,
Անապատի ճամբայեն, որ զինք լքած էր Աստված...

Անապատին մեջ սակայն ան կը գտներ յուրակերտ
Այնքան շքեղ պալատներ ու պարտեզներ ու լիճեր,
Որ բաժնըվիլ անոնցմե ա՛լ չը կրնար ու չուզեր...»

ՎԱՐՊԵՏԻՆ

Է՛ն տրխուր բանը կյանքին,
Տխուր՝ քանզի ծաղրելի
Անցնիլը չէ, ավելի՝
Կենալն է իր տեղը հին։

Մտքով կենալն է այնտեղ,
Ուր կոխեցինք ատենով,
Կառչիլ լաստի մ՚ապահով,
Կախված փակե մը ուժեղ։

Շուրջդ կ՚անցնի ամեն բան,
Նորություններ կը հառնեն՝
Ամեն վայրկյան՝ գետինեն
Ու երկինքեն կը տեղան...

Թիթեռնիկներ ոսկեթև,
Գաղափարի, ճաշակի,
Կը վազեն վրադ շեշտակի,
Կուգան ետև առ ետև...

Ջերմիկ շունչեր օդին մեջ
Ու ճաճանչներ երկրի վրա՝
Կը վատնվին անխնա,
Կը փայփայեն քեզ անվերջ...

Եվ դուն կ՝ըսես, թե մտքիդ
Ու արվեստիդ երբեմնի՝
Որ արդ թոշնած կը մեռնի,
Ծաղի՞կն է լոկ ճշմարիտ...

Եվ կը խորհի՛ս թե այդպես
Ժամանակի ժանգին դեմ
Դուն՝ խելացի ու խոհեմ՝
Ինքզինքդ անեղծ կը պահե՞ս...

...է՛ն տխուր բանը կյանքին,
Տըխուր՝ քանզի ծաղրելի,
Անցնիլը չէ, ավելի՝
Կենալն է իր տեղը հին...

ԵՐԱԶ ՈՒ ԿՅԱՆՔ

Ես չգտա կյանքին մեջ,
Իր էջերուն մեջ հազար՝
Ճանճանչավոր ոչ մեկ էջ՝
Իմ երազիս հավասար...

Ես չկրցա երազես
Ապրիլ ոչ իսկ տող մ՝երբեք.
Խավարին մեջ կ՝երթամ ես
Այս մտածմամբ սրտաբեկ...

Երազն ինչպե՞ս կը ծնի,
Այնքան աղվոր, լուսավոր,
Կյանքի մութեն դժպըհի...

Բայց չէ՞ արդյոք կյանքն անոր՝
Երազին ծնունդն անկատար,
Զայն չգտնող, խնդրո՛ղ հար...

ՀԱՅԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ԱԶԳԻՆ

(Զ ո ն)

Գիտնալով, լա՛վ գիտնալով, որ պետք չունիս դուն անոր՝
Ահա նորեն ես իմ անձս հոս էջերով քեզ տվի...
Ներողությո՛ւն նվերին համար անպետ, անշնորհ.
Ոտանավորն ի՞նչ ընել, «ոտանավորը կ՝ուտվի՞...»

Պատանիին՝ թույլ կուտաս, երիտասարդն՝ ինչևէ.
Բայց չափահաս, բայց մեծցած մարդն համառի՞ տակավին
Տողեր քաշել ու հանգեր գամել ետև ետևե
Ու կախել վար անոնցմե մութ կանթեղներն իր սրտին...

Ո՛չ, գիտեմ, չե՛ս սպասեր, չսպասեցի՛ր դուն երբեք
Ուրիշ բանի, բայց եթե զավակներուդ քեզ համար
Տառապանքին, հեծության, գալարումին վշտաբեկ...

Ա՛ռ և նետե՛, մարդակե՛ր, մոռացումի վիհն ի վար
Այս մասնիկներն ալ սրտի մ՝որ ամեն օր հյուծեցավ
Քեզ և ինքզինքն իր վրա ծանրակրելո՛ւն պատճառավ...

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Սիրեցինք Քեզ նախ՝ Դրոշա՛կի մը պես...
Մեզ ըսեր էիր, երբ փոքր էինք դեռ՝
Թե լերանց կատարն էիր պանծացեր,
Թե ծալլեր, նետեր էին հիմա Քեզ,
Բայց թե պիտի գար այն օրն ուր նորեն

Պիտի ծեծվեի՞ր դուն լայն հովերեն
Ու լուսավորե՞ր պիտի ցոլքդ մեզ...
Սիրեցինք Քեզ նախ՝ դրոշա՞կի մը պես...

Իբրև Ուռենի՞ մը Քեզ սիրեցինք...
Հերարձակ գլուխդ կ՚օրրեիր մեղմիվ՝
Նայելով կոտրած ճյուղերուդ անթիվ...
Կանցնեին քովեդ ժանտադեմ անձինք՝
Հաստաբուն կոճղիդ զարնելով կացին...
Օ՜, Քեզ մեր աչքերը ծով-ծով լացին՝
Երբ այլք ոստերեդ շինեցին սրինգ...
Իբրև Ուռենի՞ մը Քեզ սիրեցինք։

Սիրեցինք զՔեզ, վրիժառու Դանա՜կ...
Հողին տակն էիր՝ երբ ձեռք մը անտես
Քեզ մեջտեղ հանեց, շողացուց զքեզ...
Դահիճը զգաց Քեզ կոկորդին տակ
Եվ պահ մը դողաց, բայց պա՜հ մը միայն...
Կոտրեցար, ժանգո՜տ դանակ, նույն հետայն,
Եվ Քեզ ծաղրելո՜վ թողուցին մինակ...
Սիրեցինք զՔեզ, վրիժառու Դանա՜կ...

Կը սիրենք Քեզ արդ, գերության Շղթա,
Որ ըմբոստացման կը մղես զմեզ...
Մեր միսերուն մեջ, մեր վզին շուրջն ես,
Եվ ամեն շարժում զոր կընենք հիմա,
Մեզ կը գալարե ցավերով անգութ...
Բայց պիտի սիրենք հետքն ալ վերքերուդ
Այն օրն, ուր ջլաա գուն կապ մը ծաղկյա...
Կը սիրենք Քեզ արդ, գերության Շղթա...

ԴՈՒՆ ՄԵՐԻՆՆ ԵՍ

(Հայաստանին)

Եվ արդ նորեն ես Քեզի՝ իբր առտվան մեջ կյանքիս,
Կը մտածեմ ուժգնությամբ և ուժովցած կ՚զգամ զիս...
Դուն մերի՞նն ես... Կը բավե այսքանը լոկ, միայն Դուն,
Դո՛ւն մերինն ես... և ահա անջրպետեն գարերուն

Կ'զգամ դառնալը ինծի և միանալը Քեզմով
Իմ պապերուս հոգիին՝ որ համակ ուժ ու կորով
Եվ փափկություն ու լույս էր, շինված Քեզմե, քու հողեդ,
Քու ջինջ օդեդ ու ջուրեդ, հոգի՛ն, որմե շիթ մը գեթ

Երակներուս մեջ կ'ապրեր, գաղտնածածուկ կ'ապրե՞ր դեռ
Եվ զքեզ գալ գրկելու զիս արժանի դեռ կ'ըներ...
Դո՞ւն մերինն ես... Թեև քեզ մենե խլած ըլլային,
Քեզ կոխկոտած ու քամած և ա՛լ կմա՛խք ցավագին՝

Քու մերկ լեռներդ ու դաշտերդ ըլլային լոկ մեզ թողած...
Բայց Դուն մերի՞նն ես, կ'ըսեմ ու կը կրկնեմ երկյուղած,
Եվ զերդ տըղա մը հիշող իր նշանածն հեռավոր՝
Հրճվանք մ'ու դող մը հանկարծ կը լեցընեն սիրտս այսօր...

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻՆ ՄԵՋ

Ա

ՄԱՍԻՍԻՆ

Դուն Մասի՛սն ես... Եվ կը նայիմ, կը նայի՞մ քեզ,
Անհագ աչքով, մինչ սիրտըս ալ ա՛չք մ'է կարծես՝
Որ ընդլայնած՝ քեզ կը գրկե ամբողջապես,
Քեզ կը ծըծե՝ զերդ ջուրը հո՛ղն արևակեզ...

Կը տեսնե՞ս զիս, ո՛վ Մեծ Վկան մեր անցյալին,
Եվ կ'զգա՞ս, թե նայվածքիս մեջ որքա՞ն նայվածք
Եվ հոգվույս մեջ գահակործան քանի՞ աստվածք
Քու անսասան գահիդ առջև կը կողկողին...

Արշալույսին մեջ ծիրանի կը հագնիս դուն,
Ջինջ օդին մեջ կը ծփծփաս, բայց չես ժպտուն,
Քեզ գրաված է հիշատա՛կն հին դարերուն...

Եվ տխո՞ւր ես, զի իշխանաց փառապսակ
Հսկայաքայլ տեսար անցնի՛լն ոտքերուդ տակ,
Եվ զի հույսի հորիզոններն են բոլո՞ր փակ...

Բ

ԱՎԵՐԱԿՆԵՐԸ

Իզո՞ւր, ավա՞ղ... Դարերն իսպառ անցեր են
Եվ հազիվ թե ավերակներ են թողեր,
Հետքեր միայն անոնց կյանքեն ու փառքեն,
Որ էր երբեմն հոս կ'ապրեին իբրև տեր...

Սավառնաթև կա հիշատակ մը այստեղ՝
Մեծ տրտմությամբ մը ծանրացած, մթընցած...
Կը նետե վար անցյալն իր շուքը ահեղ՝
Իր օթևան սեպ սարերեն ամպամած...

Քանի մը քար, քանի մը բառ հոս ու հոն՝
Տապանագի՞ր գերեզմանի մը անծայր,
Եվ մինչ ծռած՝ կուզես կախել սիրտդ ի ձոն

Ազատ արանց, որ հայրերուդ էին հայր,
Ո՞վ խեղճ ստրուկ, անցյալը չի ճանչնար քեզ
Եվ ձեռքիդ մեջ սիրտդ փոշի՛ կը գտնես...

Գ

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ

Երկնի անթիվ աստղերեն՝ մերն է միայն անիկա...
Ամեն գիշեր, վերը հո՛ն, Արագածի գլխուն վրա՝
Ան կը շողա առանձին, այնքան անջատ մյուսներեն՝
Որ ուրի՛շ ձեռք մը կարծես զանի վառեց գաղտնորեն...

Կարծես թե ան հոն կախվա՛ծ է մեզ համար, հավիտյա՛ն...
Ան կանթեղն է՝ լույս առած Լուսավորչեն Հայության,
Անկե լցված, անոր ջինջ արտասուքեն՝ յուղի տեղ,
Պլպլացո՛ղ քաղցրությամբ, պլպլալի՛ք միշտ կանթեղ...

Այդպե՜ս հավտաց ու այդպե՜ս դեռ կը հավտա հայ հոգին՝
Որ միշտ դարձավ, նայեցավ և հառեցա՜վ անձկագին
Առտո՜ւն՝ ձյունոտ Մասիսին և գիշերնե՜րն ալ՝ անո՜ր...

Այդպես և ե՜ս, ո՜վ Մեծ Սուրբ, հավատարծարծ կանթեղիս
Զգացի, որ հոգվույս մեջ կը ծագեր շո՜ղը վճիտ,
Եվ կը մեծնար, կը մեծնա՜ր, մինչև կ՚ըլլար Ա՛յգ մը նոյ

Դ

ՀՐԱԶԴԱՆ

Հոն Հրազդանն է հիմա... Եվ իր գոռումը ահեղ
Կը լեցընե տարածությունը շուրջի.
Ով խուլ ժխոր՝ որ օդին մաքրության մեջ լուսահեղ՝
Ձերդ բզզյուն մը մեղվանոցի կը կախվի...

Կը մոտենաս և տակավ կը համակե ձայնը քեզ,
Կը մտնե ներս ականջներեդ և սրտեդ...
Մինչ դաշտին մեջ ալ կարծես կը ծովանա փրփրադեղ
Եվ կ՚ընթանա՜ քեզ վարելով իրեն հետ...

Իջած է մութը հիմա Մասիսի հին երկինքեն՝
Ուրկե այնքա՜ն արևներ ալ բարձրացան,
Իջա՜ծ է լուռ ու հանդարտ, փոշիի պես ձյունեղեն,
Կամ անցյալի իբրև աճյո՜ւն սրբազան...

Երբ կամուրջեն անցնելով ա՛լ կը հասնիս Երևան՝
Գետին աղմուկն արբեցուցած է զքեզ...
Իր ջրվեժող ալյաց տակ անհետացած է Նեքկան,
Պատմության մեջ, պապերուդ հետ կը քալես...

Եվ ի՜նչ հմայք քիչ հետո՝ երբ հովվատունը Հայոց,
Ուր կը մտնես իբրև դղյակդ հայրենի,
Բերդի մը պես կը կենա գետին վերև ցասմակոծ
Եվ այդ անվերջ մռընչունով կ՚օրորվի...

Գիշերվան մեջ կը մնաս պատշգամբին վրա անոր...
Ցերեկվընե Մասիսն աչքիդ մեջ է դեռ...
Եվ կը խորհիս. «Հայության Մասիս իրանն է հրզոր,
Եվ Հրազդան՝ իր աղաղակը անմեռ...»

Ե

ԶՎԱՐԹՆՈՑ ՏԱՃԱՐԻՆ ՄԵՋ

Այս տաճարին մեջ, ո՜վ Տեր, աղոթեցին անո՜նք, որ
Իրենց ցավի ծուխին խառն՝ հրճվանքի բոց մ՚ունեին...
Իրենց մաքուր քրտինքին հետ արյան ուղխ մ՚ալ բոսոր
Շաղախած էր այս հիմերն ու բուրումին հետ խունկին

Կը բարձրանար անոնց հոտն ու կ՚սփոփեր միշտ զիրենք...
Խաղաղություն ամենուն հոգիին մեջ կը տիրեր,
Եվ հավատքով մը ամուր ու շրթներով ալ աննենգ՝
Մարդիկ քեզ, Տե՛ր, կ՚օրհնեի՜ն, զի կ՚օրհնեի՜ր զիրենց, Տե՛ր...

Հիմա այստեղ ծածկվա՜ծ են դարերու փոշիով,
Անոնք, որոնք հայերուս եղան հայրերը ազատ,
Անոնք, որ հոս ատենոք ծնրադրեցին քովե քով,
Խոնարհեցան, բայց նաև ուղղվեցա՜ն անընդհատ...

Մինչդեռ այսօր այս փլած տաճարին շուրջ կը տեսնեմ
Տարածասփյուռ ամեն կողմ, մինչև հեռուն, շա՜տ հեռուն,
Անոնց սերունդը ամբողջ, միշտ ծնրադիր, թախծադեմ...
Տե՛ր, արձակե՛ ալ զանոնք ի սե՛ր իրենց պապերուն...

ՏԱՂ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻՆ

Քեզ, Հայ լեզո՛ւ, կը սիրեմ մրգաստանի մը նման...
Մեր Անցյալին թանձրախիտ ստվերներուն մեջ՝ կարծես
Մեյ-մեկ պտո՛ւղ՝ քու բոլոր բառերդ ինծի կ՚երևան,
Որոնց մեջեն կը քալեմ ու կը քաղե՜մ զանոնք ես...

Մրգաստանի մը նման կը սիրեմ քեզ, Հայ լեզո՛ւ...
Մեր հայրենի պալատեն, պարտեզներեն մնացորդ՝
Դալարագեղ դուն պուրա՛կ, որ դիմացար դարերու,
Եվ կը մընաս միշտ առույգ, հին ավիշովդ կենսահորդ...

Ծառերուդ մեջ հովանուտ կ'երթամ խինդով մ'անսահման,
Արմատներուդ, ճյուղերուդ վրա նայելով հիացիկ,
Զարմանալով, թե ինչպե՛ս դուն մնացիր՝ երբ սաստիկ
Քամին քու շո՛ւրջդ փչեց և տապալեց ամեն բան...

Մեյ-մեկ պտուղ գույնզգույն՝ ամբողջ բառե՛րդ ահա՛,
Հյութե՛ղ բառերդ՝ զոր որքա՜ն հասունցուցին արևներ,
Բառե՛րդ, որոնք այս պահուս շրթա՛նցս վրա եմ բռներ,
Բառերդ, որ քիմքիս կ'օծեն և կ'սփոփե՛ն սիրտս հիմա...

ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Օդը գաղջ է այս գիշեր՝ առագաստի՞ մը նման,
Կարծես հանկարծ երկընքին մեջ աստվածները ոսոխ
Եղբայրացած ըլլային... ու ծաղիկներն ոտնակոխ
Մեղմիվ հոգի առնեին... և կույսերուն՝ ավետման

Երևնային հրեշտակներ, մեծ շուշաններ ի ձեռին...
Օդն այս գիշեր այնպե՛ս գաղջ. այնպե՛ս քաղցր է ու խաղաղ՝
Որ աշխարհի վրա կարծես, միայն սերեր կան չքնաղ
Ու շուրթե շուրթ համբույրներ միայն, կարծես, կը թրռին։

Օդը քա՜ղցր է... Եվ ահա՛ այս քաղցրության մեջ անճառ՝
Օղակ-օղակ, երկինքեն իջնող օձի մը հանգույն՝
Կ'իջնա վրաս մտածումն Արհավիրքին գերագույն—

Հո՜ն միլիոններ այս պահուս, կատաղությամբ մ'անսպառ,
Մահ կը տեղան միմյանց վրա... Անթիվ մայրեր հոն կուլան...
Հո՜ն Հայ աշխարհը կ'ըլլա լռիկ դամբա՜ն Հայության...

Օդը քաղցր է այս գիշեր՝ առագաստի՞ մը նման...

ՀՈՒՅՍԸ

Քու ցավիդ մռայլ երեսին վրա
— Նեխած, բորբոսած լիճի մը նման—
Երբ հանկարծ ճաճանչ մ'արևի կ'իյնա,
Երբ որ կը փայլի՞ Հույսը մեկ վայրկյան,

Ինչպե՜ս վերստին դուն կը պսպըղաս,
Դուն կը մաքրըվիս, կ'աղվորնա՜ս նաև,
Եվ ինչպե՜ս, Ազգդ իմ, կ'արձակես վրաս
Ջիս լուսավառող կայծե՛ր հրաթև...

Եվ ես կը հավատամ, ո՛վ ազգս, այդ պահուն,
Թե քու ծոցիդ մեջ, քու ցավիդ մռայլ
Երեսին ներքև, արեգակնափայլ

Ադամանդներու գանձեր կան անհուն,
Գանձե՛ր, զոր կարծես խորքեդ անհատակ
Կհանեն, բուռ-բուռ, Հույսը՝ մե՜ծ սուզակ...

ՍՈՒԵՏԻԱ

Պզտիկ Գյուղե՛ր, դուք մեծցաք,
Անհունորե՜ն մեծցաք դուք՝
Երբ բնակիչ չունեցաք...

Ու ձեր այն Լեռը մեծցավ,
Լեռն անծանոթ, մշուշոտ
Պայծառացա՜վ, հայացա՜վ...

Պզտիկ Գյուղեր, ի՞նչ մթերք
Էր քաջության, մեծության՝
Ձեր ծոցին մեջ հավաքված...

Ո՞ր հեռավոր, լուսավոր
Աղբյուրներեն Հայության
Այդ ուժը հոդ էր հոսած...

Պզտիկ, խաղաղ դուք Գյուղե՛ր,
Երբ թշնամին սպառնաց՝
Եղաք հանկարծ բանակներ,

Օրհնյալ անհաղթ բանակներ,
Որոնց դիմաց թշնամին
Ճանչցավ հայու սիրտն անհաղթ...

Օրհնյալ ձեր հողն ըլլա միշտ,
Զի Հայաստանն ալ ամբողջ
Ինքզինք ճանչցավ ձեր վրա...

ԵՎ ՆՈՐԵՆ ՄԻԾՏ

Եվ նորեն՝ միշտ, հավիտյան, այս կրճքտումը սրտին՝
Ինչպես ջաղացք մը, որուն քարերն իզուր կը դառնան.
Այս թալթըլումը հոգվույն խորն երկնքի մը ցրտին,
Գոց դուռներու դեմ մտքին այս ընդհարումն անվախճան...

Ամեն երազ՝ բզկտած և ամեն հույս փետրաթափ...
Վաղորդայնին կարկառիլ հրատոչոր շրթներով...
Հանգրվանի մ՝ ի խնդրե քալել, քալե՛լ առ խարխափ,
Եվ անդունդի մը հանկարծ գտնել բացվածքն ոտքիդ քով..

Ա՜հ, ո՞վ պիտի վերջապես մեր հիվանդ սիրտը մեկ օր,
Հիվանդ տղու մը նման, անհուն սիրով դարմանե,
Ո՞ր անիծյալը մեզ պես, կամ ո՞ր օրհնյալն ի տյառնե...

Պիտի գտնե՞նք մենք արդյոք վաղը հրեշտակ մը հզոր
Խաղաղեցնող մեր հոգին, թե ոչ սատա՛ն մը բարի
Զայն բորբոքող և ընող շա՜նթ մը գլխուն աշխարհի...

ԱՀԱՎՈՐ ԲԱՆ ՄԸ ԱՅՆՏԵՂ...

Ահավոր բան մը այնտեղ կը կատարվի մութին մեջ...
Դժոխային այս տոամն ինչպե՞ս կրնա պատմըվիլ...

Ազգ մը ամբողջ, խորհեցե՛ք, երեկ կ՚ապրեր, կ՚ոգորեր,
Միտքը լույսին կը բանար և տակավ սիրտն ալ հույսին,
Կը բարձրանար ճահիճեն, ուր խրած էր ատենոք,
Թևերն արդեն կը թոթվեր, ինքզինք արդեն եթերին,
Ամպերուն մեջ կը կարծեր... և ահա՛ ճիշտ այդ պահուն
Ոսոխ Աստված մը անշուշտ՝ որ դարանած կը դիտեր՝
Անոր վրա արձակեց ամբողջ չարիքն աշխարհի,
Ոտքի հանեց բովանդակ հրեշությունը ի քուն՝
Մեծ օձերու, վագրերու, շակալներու դեմքերով,
Փաթթըվեցավ ոտքերուն, խածատեց կուրծքն ու հասավ
Անոր վզին, աչքերուն և իր ժանիքը մխեց
Ճիշտ ուղեղին մեջ անոր՝ զոր արյունին հետ ահա՛
Ան կը լըզե հեշտագին, ան կը ծծե՛ ղգլխած...

Ահավոր բան մը այնտեղ կը կատարվի մութին մեջ.
Կ՚սպանե՛ն ազգ մը այնտեղ, որ կյանք ուներ և շնորհ,
Ուներ հանճարն ապրելու, նորոգելու ալ ինքզինք,
Գեղեցկացած էր տակավ ու թարմացած, ա՜հ, որքա՜ն,
Եվ այդ ազգը մերինն էր, և կ՚սպանե՛ն զայն հիմա,
Զայն կ՚սպանե՛ն... Օգնությո՜ւն... ա՜հ, օգնությո՜ւն,
օգնությո՜ւն...

ՏԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հեղեղ մը սև դեպի հարավ կը քալեր՝
Ճամբան, տակավ, ավազին մեջ ցամքելով,
Ճամբան, երբեմն ալ կազմելով նոր ուղիներ...
Ան կը քըշեր կոճղ ու ծաղիկ քովե քով,
Եվ իր վերև՝ ճանճերն իբրև գոլորշի,
Եվ իր մեջեն՝ լաց մը իբրև դդրյուն,
Կուգային հետն՝ ընկե՛ր դուրսի և ներսի...
Երկնավիշապ Արևը, հո՛ւր և շողյո՛ւն,
Առավոտեն մինչև իրկուն, ամեն օր
Զայն կը ծծեր, կը կուրցներ, կ՚սպառեր,
Եվ մինչև լույս, ամեն գիշեր, Մութը նոր

Կուտար անոր դժոխքի նոր սարսուռներ,
Մերթ խորշակներ, անապատեն անսահման,
Մերթ մարդկային բորենիներ չորս կողմեն,
Կը խուժեին վրան այդ հեք բազմության.
Եվ կ՝իյնային ահա ոմանք փափկորեն
Ու գողցրված՝ կը տարվեին ուրիշներ...

Հեղեղ մը սև դեպի հարավ կը քալեր,
Քշելով հետը նաև Հուր մը անհուն՝
Որ թաղված խորն հիմա հյուծած սրտերուն,
Պիտի վառեր ու բորբոքեր, ու այրեր
Վրեժի բոցով՝ վաղը, ամե՛ն հայ սրտեր...

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Կարենալու համար ապրիլ այսուհետև,
Օդի, ջուրի, հացի նման՝
Մենք պետք ունինք Հպարտության,
Պետք ունինք, որ մեր անունն ալ սավառնաթև
Երկրե երկիր թռչի երթա.
Հնչեցընել կ՝ուզենք զանի՝
Ինչպես շեփոր մ՝երկրի վրա,
Կ՝ուզենք, որ ան ծածանի
Ինչպես դրոշ մը պայծառ.
Եվ ինչպես ջա՛հ մը կուզենք՝
Որ ան ըլլա բոցավառ.
Եվ ինչպես զե՛նք՝
Մ՝ան պատկառանք ազգե և ահ,
Եվ իբրև գո՛րծ մ՝արվեստի՝
Ըլլա հանուրց պաշտելի
Եվ ըլլա՜ անմահ...

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՆՉՆ Է ԱՀԱ

Հարության շունչն է ահա, ջարդակոտոր Ազգդ իմ,
Հորիզոնեն ծայր տված, որ կը փչե մարմնույդ վրա...
Ամայությո՜ւն, լռությո՜ւն... Օրորոց չէ, այլ շիրի՜մ
Երկիրն ամբողջ՝ ուր երեկ դուն զոհվեցա՜ր անխնա...

Բայց հարության շունչն է այս. ու զայն զգաս պիտի դուն
Գերեզմանիդ իսկ խորեն՝ կուրծքի՛դ վրա ջախջախված
Ու շուրթերուդ մսաթափ, և քու աչքերդ ի քուն,
Մարած աչքերդ արթննա՜ն պիտի լույսին նորաբաց...

Քու արյունեդ բողբոջած խոտերը քեզ քսվելով
Պիտի տան քեզ նոր կյանքի գթոտ գգվա՜նքն առաջին,
Մինչ, կառչելով դուն անոնց, համբ սակայն ապահով
Շարժմամբ ոտքի պիտ ելլես՝ թափած պատրանքը հողին...

Մեղմի՜վ, մեղմի՜վ, վախնալով քեզ տալ հուզում մը սաստիկ,
Պիտի անցնին գարնային ծիծեռնակներն երկինքեն.
Մեղմի՜վ կռունկը իջնե պիտի ձեռքիդ քու մոտիկ
Եվ սոխակները հեռուն պիտի մեղմի՜վ դայլայլեն...

Բայց դուն արդեն մոտեցած ես առվակի մե, ահա՛
Եվ քու վերքերդ իր ջուրին մեջ խնամքով կը լվաս,
Ջայն կը խմես, և հանկարծ իբր հայելվո մը վրա՝
Ո՜վ խռովիչ տեսարան, քիչ մ՝արդուզա՜րդ ալ կուտաս...

Ու փլատակներդ ահա կը հարթվին քիչ առ քիչ,
Մոխիրներուդ ներքևեն փոքր ածուներ կը հառնեն,
Ամենուրեք կը շարժին արոր ու բահ ու բրիչ,
Եվ լուսասփյուռ դաշտերուդ սա՛ կանաչ քողն է ցորեն...

Ու զորացած, աղվորցած՝ հունձքի գիշեր մը երբ որ
Դուն կը հսկես գորովով զավակներուդ վրա կայտառ,
Որ արտին մեջ կը նիրհեն, ահա՛ աստղերը բոլոր,
Ո՜վ հարուցյալ, գլուխդ շուրջ կ՝ըլլան պսա՜կ մը պայծառ...

ԸՄԲՈՍՏՈՒԹՅՈՒՆ ՍՐԲԱԶԱՆ

Օր մը հանկարծ վառեցար...
Երկինքներեն հեռավոր
Ինկած կայծե մը կարծես՝
Օր մը հանկարծ վառեցար
Մեր գյուղերուն ու քայլերուն մեր մեջտեղ,

Համայնածախ ո՛վ կրակ,
Ըմբոստությո՛ւն սրբազան...

Խորշակներեն բռնության
Մեր հոգիներն, որպես խոիվ,
Ջորցեր էին ու մութին մեջ մեր բախտին
Հիմա լուռ-մունջ կ'այրեին,
Քեզմով փունջ-փունջ կ'այրեին,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Կուպր ու կապար գիշերվան
Վրա ժայթքող շառափեզ
Սարսափեցան չղջիկներն
Ու վեր ու վար, աջ ու ձախ
Թրթռաթիռ նետվեցան.
Բուերն երկար վայեցին
Երդիկներուն մեր վերև.
Հին խլուրգները դաթձան
Իրենց ծածուկ ծակերուն,
Եվ աղվեսները շվար
Կծկըվեցան, պահվեցան,
Եվ գայլերն իսկ կատաղի
Ընկրկեցան քու փայլեզ,
Ըմբոստությո՛ւն սրբազան...

Ծուխեդ կուրցան աչվըներ,
Ան երկինքն իսկ կծածկեր,
Կ'ըներ աստղերն իսկ անտես...
Անջատ բոցերդ հիմա
Իրարու ձեռք կուտային,
Մերթ գետերու պես կարմիր
Կը վազեին հողին վրա,
Մերթ, շատրվա՛ն շառագույն՝
Կը ժայթքեին գեպի վեր,
Եվ հորիզոնը ամբողջ, մինչև հեռուն, շա՜տ հեռուն
Կը պատրոտեր քու թռչրտուն սուրբերեզ,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Եղա՜վ, ո՛վ հուր գեղեցիկ,
Որ պահ մը դուն հանգեցար...

Բայց քիչ անդին կը սարեր
Վերստին հողը սկսած,
Եվ դուն, ուժգի՛ն ավելի,
Կը պոռթկայիր գետնեն դուրս,
Կարծես գետնին ներքևեն
Քալած, վազած ըլլայիր,
Կարծես բոլոր քաջերուն,
Հերոսներուն, սուրբերուն,
Որ հոն ինկած, թաղված են,
Աղիքներեն, գանգերեն,
Մեկեն մյուսին անցնելով,
Աճած, մեծցա՜ծ ըլլայիր,
Կարծես ամբողջ նախահարց
Սիրտը սնունդ քեզ գտնելով վառվեիր,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Օ՜հ, վերջապե՛ս, վերջապե՜ս...
Նայե՛, առտու է հիմա
Ու փոթորիկն ահա դադրեր է արդեն...
Մոխրացե՜ր է մեծ զնդանն
Ու ժըպիտ կա սավառնող
Մեր աշխարհին ամայությանը վերև՝
Փոխան լացին զոր չորցուցեր,
Ըմբոստությո՛ւն սրբազան։

Բայց մեզի պե՜տք ես դուն դեռ,
Դուն մնացի՛ր, բնակե՛
Մեր մտքերուն մեջ հիմա,
Ըմբոստությո՛ւն սրբազան.
Ջանոնք տաքցո՛ւր, բորբոքե,
Ըրե՛ հնոց մ'որուն մեջ
Մերին ժանգերը հալին,
Մեր մասնիկները բոլոր
Իրար ձուլվին, ամրանան,
Մետաղն ըլլա կարծր ու ջինջ
Եվ փայլփլումն իր երգե՜ փա՛ռքդ հավիտյան,
Ըմբոստությո՛ւն սրբազան...

ՈՐԲԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ

Կ՚ելլե ճաճանչ մը, կա՛ծես, այս անհամար ձեռքերեն,
Ձեռքե՞ր՝ մեծցած մինակնին, ո՛չ շատ, դեռ թույլ, դեռ անմեղ,
Դեռ ոչ ոքի չխառնած կամ չխրզած վատորեն
Բախտին թելերը՝ ձեռքեր, սիրակարոտ, սիրազե՞ղ...

Ձեռքեր՝ հազիվ թե հիշող ջերմությունն հոր մը ափին,
Որ զույգն իրենց կը ծածկեր՝ երբ որ թաթիկ էին դեռ...
Տախտակներու վրա չոր, ձեղուններու տակ ցրտին
Հիմա սառող քովե քով՝ հայ որբերու ո՞րբ ձեռքեր...

Անոնք երբեմըն հանկարծ կը խլլբրտին գաղտնապես,
Անոնք բռունցք կ՚ըլլան մերթ, կը զարնըվին իրարու,
Կ՚ըլլան դրոշակ, կը բացվի՞ն հաղթանակին վազելու...

Կը խլեն գիրքը անոնք, կատաղորեն, հացի պես.
Մարդոց ոճիրը զանոնք զերդ մեյ-մեկ սուր է դարբնած.
Ա՜հ, ջրդեղե՛, կարծրացո՛ւր, մեծցուր զանոնք, կա՛րծր
Աստված։

ԳԵՂՈՆ ՀԱՅ ՈՐԲԻՆ

Մորդ գիրկեն դեռ նոր իջած՝
Դեռ նոր քալել կը սորվեիր,
Երբ որ աշխարհ, երբ որ Աստված
Քո աչքերուդ հետաքրքիր
Եվ նորազարդ մտքիդ դիմաց
Հանեցին ծո՛վ, որուն վրա՝
Կոտրած, կարմիր, մեկ քով ծռած,
Տեսա՞ր օրորոցդ, որ կը լողա...

Մայրդ էր անոր ուժգին կառչեր
Եվ անոր հետ կ՚երթա՞ր հեռու...
Մայրըդ՝ դեմքին ժպիտ ուներ,
Սառած ժպիտն հիմարներու։

Քույրերդ ամբողջ՝ փետրրտրված
Վարդեր էին ջուրին վրա...
Եվ հորրդ աչքերն էին դեռ բաց,
Բայց քեզ չէի՞ն տեսներ հիմա...

Դուն հոն էիր ու չէի՞ր հոն.
Քեզ իրարու հաջորդաբար
Կ՚անցնեին սուսերահոն
Սև ճիվաղներ... Կ՚առաջանար
Միտքդ ամպի մը ընդմեջեն՝
Կտրրտրված փայլակներով,
Եվ կը հալե՞ր մյուռոնդ արդեն՝
Փոթորկին մեջ արյունահով...

Տարիներ վերջ քեզ ժողվեցին
Ծիրանաշող այգի մը մեջ...
Ժանգովըդ նոր, փայլովդ հին,
Խորաններուն համար անշեջ
Ձերդ կորսրված կտոր ոսկին՝
Քեզ ժողվեցի՞ն անկյուններե...
Մտքեդ հողեր կը թափեին
Ու կ՚աճեի՞ր ամեն բոպե։

Հիմա, սակայն, մարդիկ ինչո՞ւ
Կը նային քեզ ու չե՞ն հիշեր,
Թե նման չես ուրիշներու,
Թե աչքերդ են հոգետուննե՞ր՝
Լեցուն անուշ մեռելներով,
Որ կը շարժին՝ երբ կը տեսնես
Տղայք՝ իրենց հայրերուն քով
Ու մոր գիրկե՞ր՝ հրաշքի՞ պես։

Մարդիկ հիմա կը նայի՞ն քեզ
Ու կ՚սպասե՛ն, որ շո՛ւտ մեծնաս.
Դեմքդ ու հոգիդ դժոխակեզ՝
Մարդիկ մոռնա՞լ կ՚ուզեն, տղա՛ս...
Մարդիկ, մարդիկ... բայց անոնց դուն
Ներե՞ ու միշտ գիտցի՞ր հիմա,

Թե մենակ չես, թե օրնիբուն
Կ'ավելնա մեջդ ու կը հուսա
Քեզ փաթթված կարոտագին՝
Ծնողներուդ միսն ու հոգին...
— Դո՛ւն միայն լա՛վ մեծցի՛ր, տղա՛...

ԵՓՐԱՏ

Արաքսն իր պորտը քեզմե կտրած կ'երթա՞, կը վազե՞
Հայ աշխարհին մեջտեղեն, զայն երգերով կը լնու,
Զայն կ'ողողե տուրքերով, մերթ կը գոռա՞ ահարկու
Եվ մերթ ուրախ ու թեթև կը ցատկե վար ժայռերե...

Բայց դուն, Եփրա՛տ, որ մեր սեպ լեռներուն մեջ կը ծնիս,
Զմեզ հանկարծ կը թողուս, և դարձդարձիկ ու երկար
Կը թափառիս դաշտերու, ավազներո՛ւ մեջ օտար,
Մինչև որ քեզ փաթթվիլ կուգա քու զույգդ՝ Տիգրիս...

Ո՛չ ծնած տեղդ հիշեցիր, ո՛չ ալ անոր քեզ անվերջ
Բաշխած մարմինն ու հոգին, երբ հեռավոր վազքիդ մեջ
Առիր անթիվ Հայեր ծոցդ ու անտարբե՛ր խեղդեցիր...

Դժոխքի գե՛տն եղար դուն, եղար դժո՛խքը դուն բաց,
Եփրա՛տ՝ անո՛նց որ էին՝ քու պատճառովդ ալ կոչած
Իրենց երկիրը՝ Երկի՛ր դրախտավայր, սո՛ւրբ երկիր...

ԿԱՄՈՒՐՋ

Մերթ ալ կ'ուզեմ իմ ազգիս
Սիրույն համար ու բարվույն,
Ընել կամուրջ մը հոգիս,
Իր անցյալեն խորագույն
Դեպ՝ ապագան սլացիկ
Կամո՛ւրջ, մ'ուրկե մեր նախնիք
Եվ մեր սատվածք համբորեն

Առաջնան ու բանան
Մութ, անծանոթ, գո՛ց ճամբան,
Ցեղը կրկի՛ն հոն երկնեն...

Կ'ուզեմ նետել կամուրջն այդ՝
Խավարին մեջ ներկային
Իբրև երկար ճառագա՛յթ,
Իբրև թև՛ մը լուսնային,
Մինչև որ իր ներքևեն
Ընկղմողները ամեն
Իրենց նայվածքն առնեն վեր
Եվ իր լույսին մեջ հանկարծ
Իրենց թևերը տեսած՝
Ընեն կյանքի՛ շարժումներ...

...Կամո՛ւրջն ահա, մութին մեջ,
Ամբախարիսխ, ապահով...
Ու կը քալեն անընդմեջ՝
Կշռված, ծա՛նր քայլերով,
Մեծ ստվերները բոլոր
Մեր անցյալին դարավոր...
Ի՜նչ գիտություն, Աստվա՛ծ իմ,
Եվ ի՜նչ անհուն գթություն
Խորը անոնց աչքերուն...
Ի՜նչ կշտամբանք մտերիմ...

Տեսե՛ք, ահա կը նային
Ու կը ջանան ելլել վեր՝
Խարակներեն ներկային
Տժգույն ու խոնջ հոգիներ...
Հրա՜շք, անոնք կը ճանչնան,
Հիմա այն ո՛ւժն անսահման՝
Որ արյունեն նախահարց,
Անոնց սրտե՛ն ու մտքե՛ն
Մեկնած՝ իրենց էր եկած.
Եվ անոնք լո՛ւրջ են արդեն...

...Ի՜նչ փույթ, թե իմ կամ ուրիշի՝
Պետք է հոգի մը սակայն,

Արևաշող, աստղանիշ,
Որ հոգիին Հայության
Ըլլա ճամբա ու ճաճանչ.
Ըլլա՛ անոր բազմատանջ
Կյանքին, հույսին ապավեն...
Ըլլա՛ ամբա՛րն այն՝ որուն
Մեջ լեցվի հունձքն հայրերուն
Եվ փրկե՛ ազգը սովեն...

ՊԻՏԻ ՄՈՌՆԱՆՔ

Պիտի մոռնա՞նք մենք զմեզ, մեր վիշտն ու վերքն ահագին,
Պիտի մոռնանք, այնպես չէ՞, երբ մեր երկիրը դառնանք,
Ու աշխատի՞նք ունկնդրել տակավ զարնելն իր սրտին
Եվ մենք ու ան իրարու քիչ առ քիչ ուժ տանք ու կյանք...

Պիտի մոռնա՞նք անսահման մեր կսկիծին հետ՝ նաև
Մեր հոգիները այրող Ատելությո՛ւնն անսահման,
Ու մեր աչքերը պայծառ ու մեր քայլերը թեթև
Պիտի ըլլան վերստին՝ մեր հողի՞ն վրա մայրական...

Մարդոց չարիքը մեզի և քո՛ւ չարիքդ, Աստված իմ,
Պիտի գա՞ օր մ'ուր այլևս պիտի կրնա՞նք չհիշել,
Պիտի կրնանք մենք նորեն երգե՞լ, սիրե՞լ անարգել...

Օ՜հ, դեռ, գիտե՛մ, կանուխ է, զի բախտն է դեռ ոխերիմ...
Սակայն, ո՛վ Տեր, մոտեցո՛ւր այն առավոտն ուր նորեն
Պիտի կրնանք քեզ օրհնե՞լ հոգիներուն մեր խորեն...

ՀՈՒՅՍԵՐ, ՄԵԾ ՀՈՒՅՍԵՐ...

Հույսեր, մեծ հույսե՛ր, մոտեցեք մեզի,
Թև առած երկնի խորերեն կապույտ,
Ամենեն խորունկ խորերեն երկնի,
Ամենեն մաքուր, ամենեն անքույթ...

Հույսեր, մեծ հույսեր, եկե՛ք լեցուցե՛ք
Մերին նոր լուսցող աշխարհը ձեզմով,
Երգեցեք երգեր հրճվալից ու սեգ,
Մեր գլխուն վերև դարձեք անվրդով...

Հույսեր, մեծ հույսե՛ր... Բայց լսեցեք մեզ,
Դուք ուրկե՞ եկաք, ո՞ւր էիք երեկ,
Երբ մեր ծաղիկներն ինկան տոթակեզ,
Երբ մենե շատերն մեռա՞ն հոգնաբեկ...

Հույսեր, դուք թեթև, ոսկեթև հույսեր,
Երգեցեք... Բայց ա՜հ, խնդրեմ, քիչ մը ցած,
Հոս դեռ սրտեր կան խոցված կարեվեր,
Հույսեր, դուք կամաց մոտեցեք, կամաց...

ՄԱՀԵՐԳ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Անոնց համար, որ ինկան
Զմեզ ազատ ուզելով՝
Սրտերը մեր քովե քով
Կ'ըլլան այսօր մեկ խորան։

Անոնց հոգվույն պաշտամունք
Մեր մեն մի խոհն է հիմա,
Դեպի անոնց կ'ամբառնա
Մեր հույսն ու սերն՝ իբրև խունկ։

Եվ մեր ցավի սկիհեն
Անոնց մարմինն ու արյունն՝
Իբր անսահման սրբություն,
Մենք՝ կ'ընդունինք սրբորեն։

ՀԱՅ ՀՈԳԻԻՆ

Թոթված, ինչպես ցուրտն ու ձմեռն այսօրվան,
Ես կը խորհիմ առավոտուն այն դարնան՝
Ուր հին կոճղեն նոր բողբոջներ պայթեցան։

Ես կը խորհիմ թոհուբոհին գետնին տակ,
Որուն մեջեն խուժեց ավիշն համարձակ
Եվ բարձրացավ և սարսռացո՜ւց ծառն համակ։

Ես կը խորհիմ ճնճղուկներու ճվոցին,
Սոխակներու դայլայլիկին ցայգային՝
Որ անվհատ կոճղին զարթոնքն ոգեցին։

Հեղեղներո՛ւն, կայծակներո՛ւն անհամար
Ես կը խորհիմ, որ իր զարթմանը համար
Արմատներուն քրքրեցին հողը խավար։

Եվ միշտ, և միշտ՝ իր բունին գորշ մոխիրեն
Հրափայլող այն կայծերուն ծաղկեղեն
Ես կը խորհիմ, որ հոգիիս դեռ հույսն են։

Եվ այդ հույսին, այդ հույսի՛ն մեջ կը տեսնեմ,
Բացված ընդդեմ օվկիանին ժանտադեմ,
Հայ Հոգիին հոդմակոծ ծա՛ռը վսեմ...

ՍՓՅՈՒՌՔ

Զանգվածն, ահա, դեռ կ՝երեքա հեծելով։
Անտառի պես կամ ծովու,
Ո՜վ կամ անտառ՝ զոր կը շարժե ո՛չ թե հով,
Այլ երկրաշարժ մ՝ահարկու...

Եվ հնօրյա այս զանգվածեն մարգկային
Ահա՛ մասեր մի առ մի
Անվերջորեն կը բաժանվին, կը մեկնին...
Եվ ան տակավ կը պակսի...

Խլված իրենց արմատներեն ամենքն ալ՝
Մեր հին, հին ազգը ահա՛,
Որ չի կրնա՞ր իր հողերուն վրա մնալ,
Զորնալ ուրիշ տեղ կ՝երթա...

Աստվա՛ծ, ես ի՞նչ աղոթք կրնամ ուղղել քեզ,
Տա՞ս անոնց կյանք մը անվիշտ,
Հանգչի՛ն, հանգչի՛ն այլևս—թե ոչ վրիժակեզ
Այրին ու ե՛տ նային միշտ...

ՓՈՇԻ ԱԶԳ

Այդքան պզտի՛կ, պզտիկցա՛ծ, պետք է որ դուն տակավին
Քու խարակեդ ընես մեծ, մե՛ծ շարժումներ՝ կարծելով
Ըլլալ կենտրոնն աշխարհի և կարծելով թե ինքնին
Կրնաս լնուլ, խափանել, ցամքեցընել ամեն ծով։

Պզտիկ, պզտի՛կ դուն անկյո՛ւն, ո՛չ իսկ անկյուն՝ այլ կետեր
Ցրված հոս հոն և որոնց գիծերն որմերն են ինկած,
Պե՞տք է հուսաս տակավին պալատը մեծ՝ զոր կերտեր,
Կանգներ էր միտքդ, ավա՛ղ, այդ փոշիով գետնամած։

Ու երբ քու շուրջդ հիմա ամեն հին շենք վար կ՝իյնա
Ու ձև կ՝առնեն նոր շենքեր անոնց ինկած տեղին վրա,
Ինչպե՞ս, փոշի՛, դուն կազմել նման հին շենք մը կուզես։

Մեն մի ցնցում քեզ կրնա անհետացնել վերջապես,
Աշխարհ չընե՞ր պիտի հոգ. հոգը քեզի՛ է. հուսա՛.
Դիզվե՛, փոշին լոկ այդպե՞ս պիտի նորեն քար ըլլա...

ԼԵԶՈՒՆ, ՈՐՈՎ ԳՐԵՑԻ

Լեզուն, որով գրեցի՝ երկրի երեսը քիչեր
Կը կարդային զայն արդեն ու պակսեցա՞ն անոնք ալ...
Հարյուր տարի վերջ միայն, իր այս ձևով, այս սխալ
Կամ ճիշտ ձևով ու հնչմամբ՝ լեզուն անուշ, զոր խոսեր

Էին անուշ տղաքներ, գուցե խոսող չունենա,
Եվ քերթվածները, որոնց մեն մի բառին ու վանկին
Վրա ես սիրտ հատցուցի՝ դուցե անկյուն մը պառկին,
Առանց որ մեկը դնե իրենց բուն շեշտն անոնց վրա...

Տե՛ր, ցավ մ՚ալ այս է հիմա, ցավերեն ետք անհամար,
Որոնց մեջեն անցնելով, որոնցմե շիթ մ՚առնելով
Ես կազմեցի այս տաղերն ու հոս դրի քովե քով...

Զի եթե միշտ և միայն երգած եմ ես ինձ համար,
Զիս սփոփած եմ նաև՝ մտածելով թե խոցված
Հոգիս կրնա իր երգով սփոփե՛լ սիրտը ոմանց...

ԵՐԲ ՕՐԸ ԳԱ ՎԵՐՋԱՊԵՍ...

Երբ օրը գա վերջապես և ըլլա մարդը մարդուն
Վայելքի մեջ, ի հարկին զրկանքի ալ հավասար,
Ուղղե միայն բնությա՛ն գոհություն կամ դառնություն,
Նմանին ո՛չ, հագուրդին կամ նորությունն իր համար...

Երբ ա՛լ շղթան փոխանցման ըլլա ու ո՛չ կաշկանդման,
Ուժին հետ խելքն ու խելքին հետ վազե սերը նաև՝
Բոլոր ազգերն իրարու զոդող կապին այդ վրան
Ու կազմե մե՛կ ընտանիք մե՛կ աշխարհին այս վերև...

Երբ հիմա մոտ, մոտեցա՛ծ այս Արշալույսը ծագի՝
Գիտեմ ես Ցեղ մը ցրված ամբողջ երեսը երկրի,
Որուն բոլոր դամբաններն ու օրրանները բոլոր

Պիտի հանկարծ արթննան, պիտի զոչեն հրճվանքով,
Երդե երդիկ, փոսե փոս, հայրը՝ որդույն, որդին՝ հոր,
Թե ա՛լ կրնա՝ մին աճիլ ու մյուսն հանգչիլ ապահով...

ՆԵՐԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ա

Ներե՛, որ քեն ըրի քեզի քիչ մը ատեն
— Մինչև երեկ — ու դեռ տաք չեմ բոլորովին...

Բայց կը խըլե շունչդ ինձմե կայծեր արդեն՝
Զփայլած հին ու փայլելիք բոցին հաշվին...

Սրտես առաջ մի՛տքս հարեցավ, փարեցավ քեզ...
Սիրտը ունի հիշողություն մ՚ավելի խոր
Եվ չէ՞ր կրնար ան չհիշել Սո՛ւրբն ողջակեզ
Խարույկին վրա ուրկե Փյունիկ՝ ծնար դուն նոր...

Ու գոհացա՛վ միտքս քեզմով, սփոփվեցա՛վ,
Ուրախացա՛վ մինչև անգամ. քեզի դիմեց
Ու կը դիմե հիմա՝ ինչպես կա՛նձի մը մեծ...

Տարբե՛ր ես դուն մեր երազեն,— ավելի՛ լավ.
Ավելի լավ՝ կ՚ըսեմ, այո՛, անզիղջ, անգութ,
Զի դատակնիքն է չեղածին փա՛ստն բլլալուդ...

Բ

Հո՛ղ այնտեղ և հողին վրա ցեղ...
Այնտեղ նոր աշք բացող մանուկին,
Այնտեղ նոր բարձրացող հասկերուն,
Նո՛ր շենքին, նո՛ր հենքին, մտքին նո՛ր
Կը նայի հրճվանքով մը սովոր,
Կը լեցվի անդորրո՛վ մը անհուն...

Հո՛ղ այնտեղ՝ բարեկամ, բարերար.
Կը կոխե ցեղը զայն, կը մրխե
Անոր մեջ կամքն ուժեղ ու անշեղ
Եվ նորեն կը քաղեմ ուժ անկե...

Հո՛ղ վստահ՝ ուր ամեն մարդ ու կին,
Զփախչող ոտքին տակ. վեր բռնող
Մարդոց մեջքն, ու գլխուն մեջը հար
Վերածվող ճամբայի լուսաշող...

Գ

Երկիրը հո՜ն իր զավակինն է այլևս...
Անոր ճակտեն հոսող քրտինքը կ՝երթա
Մեծ հայրերուն մինչև կրծոսկրը թերևս՝
Հաստատելու իր տանը հիմն անոր վրա...

Ո՜չ ոք այնտեղ ա՛լ իրեն ծուռ կը նայի...
Ավերակներն անգամ ժպիտ մ՝ունին արդ,
Երբ կը տեսնեն դեմք իրենց՝ ամայի
Գետնեն ելլող շինության շարքը հպարտ...

Եվ հո՜ղը, հո՜ղն իր գերությունն ա՛լ թոթված,
Իր քնգերքեն ոչ միայն ուժ՝ այլ և խելք
Կը հայթայթե Հայուն ի մեն մի հարված...

Եվ շղթային՝ Արևմուտքեն Արևելք
Վերակապվող կյանքի ամո՜ւր շղթային՝
Կըլլա մեր պինդ ազգը օղա՜կը նախկին...

ՀՈՆ ՀԵՌՈՒՆ, ԱՀԱ

Հոն հեռուն, ահա,
Մասիսի կողեն
Քու ակըդ նորեն
Բխած կը սուրա.
Քու առուներդ ենք,
Ո՛վ հորդ Հայություն,
Կ՝աճիս, կ՝ուռիս դուն
Եվ կը լեցվինք մենք...

Մեր շուրջն անապատ,
Մեր դեմն են ժայռեր,
Բայց հավատքը մեր
Անապատն ազատ

Կ՝քնե, կը հարթե
Ժայռն աղետալի
Եվ կը թավալի
Ջերդ գլան մ՝երկաթե...

Մենք քու զավակներդ,
Սրտով սիրակեզ
Ահա կուգանք քեզ,
Հայաստա՜ն, որ զերդ
Մայր մը ճշմարիտ
Մեզ կը կանչես արդ...

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖՅԱՆ

ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Դեռ կը հևամ.
Դեռ մահամերձ վարդերու պես տժգույն եմ.
Հոգիիս մեջ, դեռ գիշերը Տառապանքին
Հսկա բուի իր թևերը կը փռե...
Բայց արդեն իսկ կապույտ լեռնե՛րն են ահա,
Զոր երազեր եմ երկար.
Կապույտ լեռնե՛րն, ու իրենց վեհ կողերն ի վեր
Լռությո՛ւնը անրջական՝
Որուն համար արցո՛ւնք թափեր եմ երկար,
Երբ պատանի հոգիս միանակ կը մնար,
Մութ գիշերներ, աստղերուն տակ...

Մատներիս դեռ կ՝արյունին.
Ի՛նչ դժվարին վերելք էր այս,
Ապառաժե ապառաժ,
Վիշտերու բեռը ուսիս...
Եվ ահա մութ, կապույտ լեռնե՛րն են իրավ.
Շքեղ՝ ինչպես մերկ հոգին,
Թեև տժգույն ու հեռավոր տակավին...
Գիշեր չեղած՝
Ինչպե՞ս նայիլ ամբավին...

Բայց այս հուզո՛ւմը հստակ.
Ա՜հ, կարծես թե,
Այս խորտակված կուրծքիս տակ,
Տրտմության հին աղբյուրն է որ,
Ավերակե ավերակ,

Լուսնի լույսովը օծուն,
Հոգվույս ճամբան կը փնտրե.
Ա՜հ, սփոփա՛նքը իր երգին...
Խաղաղությո՛ւն...

Այս իրիկուն,
Աստղերն որքա՜ն են վճիտ,
Ինչպես շիթերն արցունքի՝
Որ կը թափին երբ մարդ կ՝իյնա աղոթքի...
Խաղաղությո՛ւն։

Ու այս ձա՜յնը.
Բայց ծաղիկե զատ ո՛չ մեկ իր կա այստեղ.
Ա՜հ, այս ձա՜յնը, այսպես խաղաղ ու տրտում...
Անհո՞ւնն է.
Զայն կը լսեմ, կարծես թե,
Լռության այս անրջահև երգին մեջ...
Խաղաղությո՛ւն։

ՆՈՐ ՀՅՈՒՂԱԿՍ

Ի՜նչ լուսակերտ և սպիտակ խրճիթ է այս,
Հստակ՝ ինչպես կույսի մ՝հոգին,
Թշվառ՝ ինչպես ի՛մ հոգին.
Օ, տրտմությունս ի՜նչ հեշտանքով պիտի ապրի
այս երգին տակ։

Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին՝
Ի՜նչ մտասույզ ու վերացած անդորրանքով
Կրնամ երեսիս ձեռքերուս մեջ ծածկել
Ու արտասվել...
Երբ մարդ կուլա խաղաղության երգին տակ՝
Իր աչքերեն, արցունքի տեղ,
Հոգիին մութ վարդե՛րն են որ կը մաղվին...
Եվ այդ բույրո՛վ է որ միայն մարդ կրնա,

Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին,
Ժպտի՜լ, ժպտի՜լ՝
Ցավին համար այս կյանքին...

Որքա՜ն կանաչ մարգերուն մեջ.
Որքա՜ն նվագ թռչունի.
Հարկավ ամեն իրիկուն, սա հեթանոս
կատարներեն,
Հովը, մազերը թափած,
Կուգա երգել այս դրացի ու դյութական
անտառին մեջ...
Խաղաղության ու Տրտմության այս հյուղակին
սեմին նստած,
Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին,
Ինչպե՜ս, ինչպե՜ս պիտի ըմպեմ հաշիշը
մութ գույներուն,
Ու երազեմ, աչքերըս գոց, նվաղագին,
Երբ սկսի քերթվածն հիվանդ երկնքին...

ՀՈՎՈՏ ԳԻՇԵՐ

Մոմըս տակավ կը մարի.
— Հոգիս դատա՛րկ է նորեն—
Գիշերվան հովն ուժգնորեն
Հին ցավերուս կը փարի...

Մտածումներս կը հատնին.
— Հոգիս դատա՛րկ է նորեն—
Ցուրտ բարձերուն ծայրերեն
Ցավոտ հուշեր կը ծընին...

Սիկառս հուշիկ կը սպառի.
— Հոգիս դատա՛րկ է նորեն—
Կապույտ ծուխը հեղգորեն
Կ'երազկոտի, կը ցնդի...

ՀԵԳՆԱՆՔ

Քանի՜ կ'աճի ցավը մարմնիս,
Ժպիտն աչքիս վարդ կ'ըլլա.
Ցուրտ հոգիս կ'անցնի մայիս,
Ու լո՜ւյս կ'իյնա ճակտիս վրա...

Եվ այս վարդով, այս գարունով,
Կը հեգնեմ Ան որ կուգա.
Ան որ կուգա՝ հողին քունով
Քընացընել Ցավն հսկա...

ԿԱՐԵԿՑՈՒԹՅՈՒՆ

Պզտիկ աղջիկ մ'ինծի կ'ըսէ
Թե զիս խենթի պես կը սիրե.
Պզտիկ աղջիկ մը զիս սիրե՜...

Գիշերն անհուն իմ աչքերուն
Երևի դեռ նա չէ տեսեր.
Պզտիկ աղջիկ մ'ինծի տա սե՜ր...

Երևի դեռ նա չէ նայեր
Հոգվույս խավար անդունդն ի վար.
Պզտիկ աղջիկ մ'ինձ սիրահա՜ր...

Եթե լսեր թե ո՛չ մեկ սեր
Այդ անդունդին մեջ կը շնչեր՝
Հեք պզտիկը չէ՞ր հառաչեր...

Ուստի եղբոր մը պես ըսի,
Թե լուսնին տակ մարդ կը մսի.
«Գնա՛, գնա՛, ննջե՛», ըսի.

Հետո գացի հեռուն լացի...

ՉԸՍԻ՞

Մութը չիջած, իրիկվընե,
Իրեն ըսի, թե ինձ համար
Սերը ժժգույն ծաղիկ մըն է,
Զոր շունչիս տակ չէի կրնար
Ապրեցընել—լուռ, կը խնդար...

Մութը չիջած, իրիկվընե,
Իրեն ըսի թե ինձ համար
Սերը հիվանդ կարապ մըն է,
Զոր շրթունքներս չէին կրնար
Կյանքի բերել—լուռ, կը խնդար...

Մութը չիջած, իրիկվընե.
Իրեն ըսի թե ինձ համար
Սերը մեռնող նշույլ մըն է,
Զոր իմ հոգիս ա՛լ չէր կրնար
Բոցավառել—լուռ, կը խնդար...

Ու լուսնին տակ, կեսգիշերին,
Երբ կ'իջնեինք բլուրն ի վար՝
Կը կշտամբեր զիս հոգևին.
«Տե՛ս, հիվանդ եմ, ու չե՛ս գթար»
Կը մրմնջեր ու լուռ կուլար...

Բայց ես իրեն չըսի՞, չըսի՞,
Իրիկվընե, մութը չիջած,
Թե ցուրտ Հովեն եթե մսի՝
Այս հոգիովս, ցավեն շիջած,
Չէի՛ կրնար հո՛ւր տալ, չըսի՞...

ԵՐԿՈՒ ԱՎԵՐԱԿՆԵՐ

1.

Հին օրերուն,
Երբ դեռ սիրտըս վարդի մը վեսս փթթումն ուներ,

Ու երազը դեռ աչքերուս հույլ-հույլ քերթված կը ծորեր,
Հին օրերուն,
Լիբանանի սոճիներուն կախարդանքը արյունիս մեջ՝
Ես կ'երթայի Բաալբեքի ավերակները դիտելու։
Ի՞նչ մռայլ փառք էր, ի՞նչ հեթանոս շքեղանք,
Արևելյան մայրամուտի կանաչ-բոսոր շողերուն տակ,
Փռված անոնց կիսակործան սյուներն ի վար.
Ի՞նչ լուսեղեն, մեծվայելուչ քերթված էր այդ՝
Կանաչ-բոսոր շողերուն տակ...
— Չկա՛, չկա՛,— կը խորհեի, հիացումի արցունքներով,
— Այս կործանած պալատներուն փառքն ունեցող
Չկա՛, չկա՛...
Ու, Գեղեցկին ես սիրահար ու միամիտ պատանի՝
Մութ նախանձի մ'անմեկնելի գալարումը կ'ունենայի
Այդ քարերուն հանդեպ տրտում, ջարդված...

2.

Հին-հին օրերը անցան.
Սիրտս ոչ ևս վարդի մը վեսս փթթումն ունի.
Ալ երազը աչքերուս մեջ հույլ-հույլ քերթված չի ծորեր։
Եվ ալ չերգեր, արյունիս մեջ,
Կախարդ երգը Լիբանանի քնարերգակ սոճիներուն.
Հին-հին օրերը անցան...

Հիմա, սակայն, շատ իրիկուն,
Երբ կը քալեմ այս գունաթափ երկնքին տակ,
Ու կը խորհիմ, այնպես հանկարծ,
Բաալբեքի հին, կործանած պալատներուն՝
Ալ չեմ ըսեր.
— Չկա՛, չկա՛ անոնց մռայլ փառքն ունեցող.
Ալ չեմ ըսեր, ինչու որ կա՛...

3.

Ահ, հոյակա՛պ քերթվածը իմ հոգիիս,
Իմ ավերակ, իմ քարուքանդ հոգիիս...

ԱՇՆԱՆ ԱՌԱՎՈՏ

Տակավ մռայլ ույժ մը կուտա հովն իր թափին.
Երկինքըն արդեն մոռցավ ժպտիլ, քանի օր է.
Ատելության շունչ մը հիմա զայն կը վարե,
Հեք տերևներն արտասուքի պես կը թափին...

Հաստ բունի մը գլուխքս հեց, ականջ կուտամ,
Նոր ծայր տվող եղերական այս նվագին՝
Ուր հոգիներ կարծես, հույլ-հույլ լուռ կը կքին
Ցավի մը տակ հանկարծահաս ու դեռ տարտամ...

Վաղը, սակայն, երբ փոթորիկն անցնի ծովեն,
Ու գա թոթվել երազն հպարտ մայրիներուն՝
Այս հառաչը պիտի ըլլա բողո՛ք մ'անհուն,
Խուլ ընդվզո՛ւմը իրերուն անապավեն...

Եվ այն ատե՛ն մանավանդ պետք է որ ես գամ
Այս բունին տակ, իբրև եղբայր մ'այս ծառերուն,
Ու պահանջեմ, ու պաղատի՛մ քիչ մ'ալ դարուն՝
Տակավ շիջող սրրտիս համար արյունաքամ...

ՄԻ ԴՊԻՔ

Գիտե՞ք որքան թախիծ կա
Հոգիին խորն այդ տղուն.
Մի՛ դպիք, թող քրքջա՛.
Խենթին քրքիչն է բեղուն...

Հոգիին խորն այդ տղուն
Իջեր եմ ես ու տեսեր
Երա՛զ մը ծեր, նվաղուն,
Եվ անկյուն մը՝ փլած սեր...

Ահ, մի՛ դպիք այդ տղուն.
Խենթը միակ կրթողուն...

ՄԱՀԸ ԿՈՒԳԱ...

Հևքը կուրծքիս տակավ-տակավ կը շատնա.
Մա՜հը կուգա իր արծաթե մանգաղով.
Եկո՛ւր, քընար, դեմ դանք անոր նո՛ր տաղով,
Նա արքա՛ն է արքաներուն, մե՛ծ է նա...

Տե՛ս, իմ քընար, ոսկին շուտով կը հալի
Սա իրիկվան երանգներուն. ահ, արդեն,
Տե՛ս, գիշերը կ՝առաջանա համրորեն՝
Հանդերձանքը հագած իր է՛ն թախծալի...

Եկո՛ւր, նստինք սա ծառին տակ քեզի հետ.
Աս այն ճամբան է ուրկե Սե՛րը կ՝անցնի՝
Երբ արշալույսը նո՛ր է որ կը ծնի
Ու մահը՝ երբ կ՝ըլլա Երազը անհետ...

Ու երգե՛ երգ մը բառերով սառույցե.
Ցուրտ ու խորո՛ւնկ, ինչպես երկինք մը ձմռան՝
Ուր լոկ քանի մը սև թռչուն կը սուրան.
Կ՝ըսեն թե Մահը չ՝ախորժիր շատ ցույցե...

Ահ, լոկ երգե Արհամարհա՛նքը շըքեղ,
Զոր ունեցանք ցավին համար այս կյանքին,
Եվ թե ինչպե՜ս չհավատացինք երկընքին՝
Ուր կարդացինք Սո՛ւտը ոսկի և ահեղ...

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Բոնկեցա՜ն վերջապես
Մեռնող գույներն երկընքին.
Կ՝ուզեի, որ ճիշտ այսպես
Մեռներ հիվանդ իմ հոգին...

Բոց մը հրզոր և հրպարտ,
Հոգ չէ թե շուտ մարելու
Պերճ հրդեհում մը հանդարտ՝
Բոպե մ՝անհունն ապրելու...

Ու հետո մահը թող գար,
Ինչպես եկավ երկընքին.
Ո՞վ այսպես մահ չի բաղձար՝
Ուրկե աստղե՛ր կը ծնին...

ՈՐՈՇՈՒՄ

Ոչ իսկ հառա՛չ մը հանել
Ճամբուն վրա այս անել.

Հրրամայել որ ցամքի՛
Վերջին կաթիլն արցունքի.

Ո՛չ ոքի ձեռք երկարել,
Որ գա հրդեհն այս մարել.

Գիշերին մեջ, լուռ, անտես,
Դիտել հեռո՜ւն, կուռքի պես.

Դիտել ծովափն, ուր այնքա՜ն
Աստղեր սրտես դուրս ինկան.

Ու ժայռն այն ծեր՝ ուր հոգիս
Վարդի մ՝համար լքեց զիս...

Հետո ժպտիլ ու քալել
Ճամբուն վրա այս անել։

ԼԵՌՆԵՐՆ ԻՄ ԵՐԱԶԻՍ

Հոգիս գրկած թևերուս մեջ, ձեզի՛ կուգամ,
Ձեզի՝ լեռներն իմ երազիս, նո՜ր երազիս.

Հոգիս պճնած գեղեցկության շքեղանքով՝
Ձեզի՜, լեռներն իմ երազիս, ձեզի՜ կուգամ...

Տեսե՛ք ինչպես բեռնավորված եմ գանձերով.
— Աստղերու խոր անդորրությունն աչքերուս մեջ,
Դեմքիս վրա ազնվական թախիծը լուռ վիշտերուն,
Հպարտ ու ցուրտ ճակտիս մթին ծալքերն ի վար՝
Մահվան խորհուրդը հեշտանքի մը պես փռված,
Տիեզերքը հեգնել գիտցող պզտիկ ժպիտ մ՚ալ շրթունքիս.
Ահա, այսպե՛ս կուգամ ձեզի՜...

Լո՜ւռ վշտերեն ծյուրած տժգույն այտերով,
Հին երազիս գիշերի գույն ավերակներն հոգիիս մեջ,
Բայց աստղերուն անդորրությունն աչքերուս՝
Ահա այսպե՛ս կուգամ ձեզի,
Ձեզի՝ լեռներն իմ երազիս, նո՜ր երազիս,
Թևերուս մեջ գրկած հոգիս...

Ի՜նչ հեշտություն է այս փռված՝ ճամբուդ վրա.
Կողերդ ի վեր կը մագլցիմ առանց հնքի,
Մայրամուտի թե՛ լույս թե՛ մութ շողերուն մեջ
կարծես հալած...

Հոգի՜, հոգի՜ եմ համակ,
Կամ մեղեդի մը ներդաշնակ՝
Որ երկրեն վեր, վե՛ր աստղերուն կը ձգտի՜...
Ինչքա՜ն հեռու են, ինչքա՜ն օտար, ինչքա՜ն վար՝
Հողն ու դողը աշխարհի...
Շշուկ մը իսկ չի հասնիր հոս, վարի հրսկա ժխորեն,
Այնքա՜ն վերն եմ...
Բայց դեռ այնքա՜ն, այնքա՜ն վերն է
Վարդագույն ձյունը կատարիգ, օ՜, բարձունքն
իմ երազիս,
Նո՜ր երազիս...

ՏԻԵԶԵՐՔԸ ԵՎ ՀԱՄԲՈՒՅՐԸ

Այս թրիկուն՝
Մանիշակներն իր աչքերուն

Երբ համբուրել կ՚երթայի,
Հանկարծ կեցա՝ օրորուն
Եզրը կապույտ ջուրերուն...
Մրտածեցի.—
Ո՞րն է հարգի,
Մեկ մանիշակն իր աչքին,
Թե մարգրիտներն երկընքին։
Ու գտա որ
Մեծ Բնակիչն երկնավոր
Նվա՛զ հարուստ էր քան ես.
Իր Տիեզերքն, իրավ որ,
Այնչա՜փ էր փոքր՝ համբույրես...

ԿՅԱՆՔԻ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԵՐԳԵՐ

ՆՈՅԵՄԲԵՐ

Պարտեզներեն Ջնջումն անցա՜ծ է արդեն՝
Վարդենիները թախիծե կը դեղնին...
Ու մայրիներ երազն իրենց կ՚ավարտեն՝
Երկընքին դեմ թոթվելով սեգ կատարնին։

Վերը, ամպեր՝ լիճերու պես սպիտակ։
Տեղ-տեղ կապույտը կ՚երգե դեռ Երգը հին։
Ո՜չ մեկ խռովք։ Աստուծո խիղճն է հրստակ։
Թռչուններ լուռ, կը գաղթեն, սուգն հեռերնին...

Վարդենիները թախիծե կը մեռնին...

ԱՆ ՉԷ...

Հոգիս կը տանջե
Ջութակ մը հեռու.
Իզո՜ւր շուքերու
Կը նայիմ — Ան չէ՜...

Ահ, նվագը՜ն այս խոր
Ամառ գիշերվան.
Կարծես թե կուլան
Աստղերը բոլոր...

Իզո՜ւր շուքերու
Կը նայիմ — Ան չէ՜,
Հոգիս կը տանջե
Հոգի մը հեռու...

ՊՁՏԻԿ, ԱՂՎՈՐ ԱՂՋԻԿ

Պըզտի՛կ աղջիկ, աղվո՛ր աղջիկ.
Ինձմե հեռու.
Կը վայլեն քու վարդ ու հասմիկ
Լոկ աստղերու...

Իզո՜ւր ճակատդ ինձ կ'երկարես,
Որ համբուրեմ.
Թախիծն առավ լույսն աչքերես,
Ու ես կո՜ւյր եմ...

Ու ես քեզի, տես, կը բերեմ
Հոգի մը ծեր...
Աստղերո՜ւն տար — ես կը ներեմ —
Համբույրդ ու սեր...

Պըզտի՛կ աղջիկ, անո՜ւյշ աղջիկ.
Ինձմե հեռո՜ւ.
Կը վայլեն քու վարդ ու հասմիկ
Աստվածներո՜ւ...

ՀՈԳԻՍ

Հոգիս պզտիկ աղբյուր մըն է արծաթե,
Գիշերին մեջ գըլգըլացող ու լացող,
Որ քեն չունի ժայռերուն դեմ, կ'աղոթե՜,
Ու լուսնակեն կը սպասե լոկ շիթ մը ցող...

Ո՛չ մեկ ուռի՝ ճամբուս վըրա ամայի.
Կործանեցան բոլորը մե՜ծ հովերեն.
Հոս-հոն ագռավ մը լոկ ջուրիս կը նայի՝
Բայց ես կ'երթամ գըլգըլալեն ու լալեն...

Ինչու որ, օ՜, գիտե՛մ թե օր մը աղվոր
Պիտի գա Կույսըն, անտառներու խորերե,
Ու հակելով ջուրիս վըրա մենավոր՝
Պիտի ափին մեջ մարգրիտնե՛ըս համբե...

ԱՀԱ ԱՐԴԵՆ

Ահա արդեն կյանքը նորե՛ն
Ու մեն մի աստղ իմա՜ստ ունին.
Ահա արդեն մարմանդներեն
Կ'անցնի սարսո՜ւռը անհունին...

Նորե՜ն, նորե՜ն, մարմանդներեն՝
Երազն աչքիս՝ կը դեգերիմ.
Հավա՜տք նորեն խնձ կը ծորեն
Սև նոճիներն իսկ մբտերիմ...

Եվ ավերակ սրբտիս խորեն,
Նորե՜ն, նորե՜ն, ահա կ՝երգե
Կյանքի Սրբինգը մեղմորեն.—
Վա՜րդ կը բացվի մեն մի վերքե...

Եվ այս լռին մարմանդներեն
Մինչ կը քալեմ՝ արցունքն աչքիս՝
Դուն չե՜ս գիտեր, քույր, հեռուեն,
Թե քեզ որքա՜ն կ՝օրհնե հոգիս...

ԵՐԶԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ես այսօր
Ճառագա՜յթ մ՚եմ բոսոր...

Աչքերուս, հեշտօրոր,
Այնքա՜ն լույս ունիմ, որ
Կը ժպտիմ
Մբտերիմ
Արևին...
Ու վարդե՜ր կ՝երևին
Արևին
Ոսկեղեն
Հոգիեն...

Ես այսօր, ես այսօր
Արեգա՜կ մ՚եմ բոսոր...

ԿԱՐՈՏ

Կ՚ուզեմ երթա՜լ ես նորեն
Հին օրերու Ազբյուրին.

Ահ, որքա՜ն քաղցր էր, դյուրի՜ն,
Ըմպել այդ ջուրը ցուրեն,
Ծունկի վրա, համբորեն...

Կ՚ուզեմ ըլլալ ես նորեն
Այդ Ազբյուրեն, ահ, գինո՜վ,
Կ՚ուզեմ բանալ, քովե քով,
Հիվանդ ձեռքերդս, ժամերո՜վ
Ըմպելու ցուրտ այդ ջուրեն...

Երթա՜մ Ազբյուրը նորեն...

ՍՊԱՍՈՒՄ

Այս իրիկուն,
Ահ, տարորե՜ն քաղցրությունը իմ աչքերուս...
Իմ աչքերուս՝ որոնց շրջեղ գիշերին մեջ՝
Ահա՜, ահա՜,
Հոգիս եկեր կը քընանա...

Իրա՜վ, իրա՜վ, աչքերուս մեջ,
— Ահ, չե՞ք տեսներ—
Հոգի՜ս է, որ պառկած հիմա
Հստակ, հստակ կը քընանա...
Կը քընանա՝ անտառներու կույսի մը պես,
Իր երազին շղարշներով փաթթված...
Ու երազին մեջ կ՚երգե.—
Ան հիմա
Պիտի գա՜...

Այս իրիկուն.
Ահ, տարորե՜ն քաղցրությունը ճամբաներուն...
Իրա՜վ, իրա՜վ, չե՞ք լսեր դուք,

Ե՞րգը՝ երկինք նետվող շըքեղ սա հասկերուն,
Որ հովին հետ կը պարեն պար մը հեթանոս՝
Արեգակին ու աստուծո փառքին համար...
Ա՜հ, անոնց Կյա՜նքը խորունկ...
Եվ Ո՞ւժն անոնց
Քարեն ավիշ ստեղծող սեգ արմատներուն...
Եվ անոնց Սե՜րն, ու անոնց Կա՜մքն ըլլալու...

Տեսե՛ք, տեսե՛ք, ինչ երկյուղած պաշտամունքով
Սա ծերունի բաղեղն երկինք կը մագըլցի՝
Համբուրելու գեղեցկությունն արեգակին...

Այս որքա՜ն վարդ՝ հընամենի պատերն ի վար...
Իրա՜վ, իրա՜վ, չե՞ք լըսեր դուք,
Ե՞րգը Հույսին,
Որ այս գույն-գույն ու կրքոտած վարդերեն դուրս
Միածանի շըքեղանքով մը կը հոսի...
Ան հիմա
Պիտի գա՜...
Ու կը քալե՜մ, ու կը քալե՜մ,
Այս բըռնկող կանաչ ու մեծ հըրդեհին մեջ՝
Հըպարտ, պայծառ քայլերով...
Ու կը հոսի մազերս ի վար, ծոծրակս ի վար,
Դղըրդելով գորշ թմրությունն
Իմ այս վըտիտ մարմինիս՝
Ուրախությո՜ւնն արեգակին...
Ան հիմա
Պիտի գա՜...

Ա՜հ, խելահեղ վա՜զքը իմ նոր արյունիս...
Շրթունքներիս ահա վարդե՜ր կը բըռնկին...
Եվ ուղեղիս գիշերին վրա,
Արշալույսի ցողերուն պես,
Ստեղծագործ հավա՜տքն է որ ահա անվերջ
Կ'իջնե՜, կ'իջնե՜...
Ան հիմա
Պիտի գա՜...

ՔԵԶՄԵ ՀԵՌՈՒ

Քեզմե հեռու՝
Անդունդներո՜ւ
Կը մտածեմ շատ անգամ.
Իսկ երբ կուգամ
Քու հոգիիդ երգին տակ՝
Այնպե՜ս հըստակ,
Կ'ըլլա հանկարծ ամեն բան...
Նույնիսկ ճամբա՜ն,
Որ զիս մահվան
Պիտի տանի՝
Հանկարծ ճերմակ կը հագնի...

Քեզմե հեռու՝
Սարսափն անծայր գիշերներու
Այնպե՜ս ուժգին
Կը փաթթվի իմ հոգիին՝
Որ բյուր անգամ
Ծունկի ալ գամ
Չե՜ն ունենար աչքերս արցունք,
Ու հոգիս՝ խունկ...

Աղոթքս ի՜նչ բուռն է ու դյուրին,
Երբ որ լըռին
Ծունկի կուգամ՝
Ա՜լ ուժաքամ,
Քու հոգիիդ երգին տակ՝
Եվ ի՜նչ հըստակ
Կ'ըլլա նորեն ամեն բան...

Նույնիսկ ճամբա՜ն,
Որ զիս մահվան
Պիտի տանի՝
Կ'ըլլա այնպե՜ս ընտանի...

ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ

Ցավիս խորերեն, տե՛ս, ճակատագիր,
Անսահման ծիծաղ մ՚ունիմ քեզի դեմ.
Գիտցի՛ր, որ նորեն քեզ կ՚արհամարհեմ,
Չկարծես, թե ա՛լ զիս կործանեցիր...

Իզո՛ւր կը թափես մոխիր սըրտիս վրա.
Ճառագա՛յթ կա հոն՝ իջած անհունեն...
Ջոհերն հարվածիդ լոկ ոսկորներս են,
Անոնց պետք չունի՛ միտքս, որ սուրա...

Պայծա՛ռ է ճակատս՝ արշալույսի պես.
Հոգիս՝ միշտ աղվոր, միշտ հպարտ, ժըպտուն՝
Դեռ կը սավառնի՛ անհունե անհուն...

Իզո՛ւր սըրտիս վրա մոխիր կը թափես.
Աստվածնե՛ր կան հոն՝ իջած երկընքեն.
Ցավիս խորերեն, տե՛ս, անոնք կ՚երգե՛ն...

ՇՔԵՂ ՕՐՀԱՍ

Երկընքի մե՛ծ դուռներուն պես
Բա՛ց հոգիիս թևերդ մարմար,
Եթե մեռնի՛մ իսկ հուզումես՝
Այդ մահն ապրի՛լ է ինձ համար...

Թո՛ղ որ հանգչի կուրծքիդ ձլունին՝
Հիվանդ հոգիս ու, շընչահատ,
Թող քեզ հրծծե Երազն իր հին,
Որ զիս այսքա՛ն ըրավ գունատ...

Ու թող մեռնի հոգիս այդպե՛ս.—
Հպա՛րտ՝ հպարտ մարմնիդ վըրա.
Լոկ իր Երազն հրծծելով քեզ...

Չի ես կուզեմ, որ ան սուրա՝
Մահվան գըրկին մեջ իսկ ինկած.
Ես սիրեցի քեզ իբր աստված...

ՎԵՐԵԼՔ

Հասա՜, հասա՜, հոգիիս հետ,
Ոսկի դուռներն անհունին.
Մտածումներըս կը տժգունին,
Կ՚ըլլան հույզե՛րս իսկ անհետ...

Այս ի՛նչ գիշեր է տարորեն...
Այս ի՛նչ երկինք ու աստղեր...
Կարծես մարմինս եմ ալ թաղեր
Ու կը փախչի՛մ դաշտերեն...

Կը ծընրադրե՛մ քեզի, ո՜վ Սեր,
Դո՛ւն բերիր զիս մինչև հոս.
Առաջ անդո՜ւնդըն էր ու քաոս.
Հիմա աստղե՛ր ու աստղե՛ր...

ԳԻՇԵՐՎԱՆ ԾՈՎԸ

Ծովափ իջա, ալիքներեն մագնիսված։
Ի՜նչ աղվոր է, գիշեր ատեն, հըպա՛րտ ծով,
Սաղմոսերգու այս ջուրերուդ երգը ցած՝
Որ կ՚ողողե զիս, անաստվածըս, աստվածո՜վ...

Ու մինչ արձան կ՚ըլլամ սա մեծ ժայռին քով,
Աչքըս տված հորիզոնի մը վայրի՝
Երգըդ այնպե՛ս կ՚օրորե զիս աղոթքով,
Որ խունկի պես այս մըռայլ սիրտըս կ՚այրի...

ՍԵՐՍ ՈՒ ՀՈԳԻՍ

Իմ սերը նման է
Օվկիանի մը անհուն՝
Ուր հոգիս, օրն ի բուն,
Մարգարի՜տ կը հանե...

Իմ հոգիս նման է
Երկընքի մը անհուն՝
Ուր իմ սերս օրն ի բուն,
Բույլ, բույլ ա՜ստղ կը ցանե...

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Կիսամութին մեջ հոգիիդ
Պիտի իջնեմ այս իրիկուն.
Քանի մը վարդ աղվափրթիթ
Պիտի գողնամ ու տանիմ տուն։

Պիտի արդյոք վշտանա՞ս դուն...
Գարո՜ւն է, քույր, ամեն տունի...
Իմ տունը, տե՜ս, ծի՛լ մը չունի...

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ԿՈՒՅՍԵՐԸ

Միսաք Մեծարենցի հոգիին

1.

Խո՜ր երազի պահեր կան՝
Իրիկունները աշնան՝
Երբ կը զգաս, թե հանկարծ խուցդ կը մտնե
Հոգի մ՝աղվոր—ու ամեն բան կը մրթնե...

2.

Ու կը նըստիս անոր հետ լուռ քովե քով,
Կամ կը պատմես, վըշտեդ տրժգույն, արցունքո՜վ,
Կործանումներն հնօրյա,
Եվ ան քեզի հետ կուլա...

Հետո երկա՜ր, երկա՜ր ատեն կը լռես.
Ան միշտ քեզի կը նայի, մութ, տրտմերես.
Դուրսը տակավ կը շատնան
Հըրնդյունները աշնան...

Օ՜, ըլլալ լուռ հոգիի մ՝հետ ու միանակ,
Որ գիտե՛ քեզ ավերակ առ ավերակ...
Սենյակին մեջ ամեն դի
Շիթ-շիթ արցունք կը կաթի...

Հանկարծ կը զգաս, թե շրթունքներ ճակատեդ
Կընեն Գիշերն ու Մորմոքումը անհետ...
Ա՛լ չես լըսեր ոչ մեկ ձայն,
Կը լսես Զա՜յնը միայն...

3.

Օ՜, այդ Զա՜յնը։ Նույնքա՜ն հիվանդ ու մրթին,
Որքան նվագն այն անծանոթ Սրինգին,
Զոր երազեր ես երկար,
Երբ հոգիդ վիշտ մ՝ունենար...

Ալ քեզ այնպե՛ս կը թվի թե, համբորեն,
Կը սահիս վար մութ ջուրերու վրայեն...
Ու մոռնալով կյանքը սին՝
Կը շնչես խունկն այդ կույսին...

Ու հոգիիդ վիհերեն դո՛ւրս կը թափին
Հոն թաքնված մութ-մութ վարդերն Ըղձանքին...
Կը գինովնա՜ս պերճորեն,
Աստվածային այդ բույրեն...

Ու հոգիիդ մշուշներեն կ՝երևին
Միածաններն երազված մե՜ծ Արևին...
Այդ լույսին տակ, սուրբի պես,
Ծունկի կուգաս, կ՝աղոթես...

4.

Հետո ժրպտով մ՚ընտանի,
Այդ քույրն անույշ կը մեկնի։
Իզո՜ւր մութին մեջ կը ձայնես ետևեն.
Մայրամուտի կույսերն այդքա՜ն կը տևեն...

ՄԻՄՈԶԱՅԻ ԾՅՈՒՂԸ

1.

Միմոզայի շյուղ մ՚էր բերեր
Երեկ գիշեր,
Ու բարձիս վրա դրեր էր զայն
Գողտուկ, անձայն...

2.

Ուշ գիշերին երազ տեսա...
Լեռան մը վրա,
Ծառի մը տակ միմոզայի՝
Լուռ կուլայի...

Գզտիկ աստղ մը, տակավ-տակավ,
Վրաս իջավ...
Բռընկեցա՜վ ծառը մեկեն
Իր ճյուղերեն...

Ես չփախա.— Օձապըտույտ
Բոցն էր կապո՜ւյտ...

Ու կ՝երգեին երկինքներեն
Աստղերն ամեն...

Օ, հըրդե՜հն այս միսերուս քով...
Ի՜նչ հեշտանքով
Փունջերն այրող միմոզայի
Կը գրկեի...

3.

Կը գրկեի... երբ որ հանկարծ
Այդ բոցարծարծ
Ծառը խընդաց...— Ի՜նչ հրաշք, Տե՜ր,
Իմ Սիրա՜ծս էր...

Իմ սիրածս էր, խո՜ւլ աչքերով,
Սերեն գինով...
Մինչ կը խնդար՝ աստղե՜ր բերնին
Կը վառեին...

Կը վառեին լույսով մ՚այնքա՜ն
Անբրջական՝
Որ ձյուն մարմինն իր կը թրթռա՜ր՝
Իբրև քընար...

Բայց գրկեցի զայն երբ ուժգին
Իմ որբ կուրծքին՝
Ոտքերուս տակ հանկարծ մոխի՜ր
Եղավ կարմիր...

4.

Պիտի բերե ան այս գիշեր
Նո՜ր ծաղիկներ.—
Ահ, ձեռքերն իր հետք կը կրե՞ն
Այն մոխիրեն...

ԳԻՆԱՐԲՈՒՔ

Լեցո՛ւր բաժակը՝ խըմեմ
Գինին անո՛ւյշ հեշտանքին.
Ալ կը ծաղրե՛մ այս կյանքին
Սրբութիւնները դժխեմ։

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ
Գինին կախա՛րդ հեշտանքին.
Այսքան ցավով՝ երկընքին
Ինչպե՛ս ճամբան ես գըտնեմ։

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ
Գինին բոսո՛ր հեշտանքին.
Կ՚ուզեմ հո՛ւրը դըժոխքին,
Ալ լուսնի լույսն ի՛նչ ընեմ։

Լեցո՛ւր բաժակը՝ խըմե՛մ
Գինին պղտո՛ր հեշտանքին.
Քիչ մ՚ալ այս մութ վայրէջքին
Ծով-ծով խրոովքը փորձեմ...

Լեցուր բաժակը՝ խըմե՛մ
Գինին հարո՛ւստ հեշտանքին.
Գինով ըլլամ ու կյանքին
Անմըտութիւնը երգեմ...

Լեցո՛ւր, լեցո՛ւր, որ խըմեմ,
ՄԱ՛ՀՆ է ահա աչքիս դեմ...

ԵՐԱԶԱՆՔ

Աշնան առավոտ, տրտում, անարև,
Աչքերըս գոցած՝ իրե՛ն կը խորհիմ,
Այնքա՛ն կը խորհիմ, որ աչքերն իր սև
Կը հալին, կ՚ըլլան ե՛րգ մը մըտերիմ...

Աչքերըս գոցած՝ հիմա կ՚ունկնդրե՛մ.
Ա՛լ իր աչքերում չէ՛ որ կը խորհիմ...
Հեռո՛ւ, ձյունափառ կատար մ՚հասեր եմ.
Աստված է այնքա՛ն մոտ ու մըտերիմ...

ԿՈՒԶԵՄ ԵՐԳԵԼ

Ահ, կ՚ուզեմ երգել գարո՛ւնն այս ծաղկող,
Տունկերը վայրի, տատասկներն հարբած,
Երգե՛լ, ա՛հ, երգե՛լ կույսերն այս շենշող
Ու սերն ու գինին, նույնիսկ քե՛զ, Աստված։

ԵՐԱԶ...

Այդ ի՛նչ խելառ արշավ է.
Ա՛լ ծաղկաքաղը կեցուր,
Ժողվածներդ բեր ցուցուր.
Ինծի հատ մը կը բավե։

Այդ որքան վա՛րդ ծոցիդ մեջ.
Կեցի՛ր գլուխըս դնեմ
Ու քնանամ, հոգնած եմ.
Ճակտիս կ՚այրի հուր մ՚անշեջ։

Ահ, ի՛նչ լավ է, մի՛ շարժիր.
Արցունքներըս մեղմ կ՚այրին.
Գերին ըլլամ այս ժայռին,
Ուր այսքան վարդ ինձ տվիր...

Ա՛խ, արևը կը մարի...
Մինչև առտու հոս ննջեմ.
Ահ, գիտե՞ս՝ ի՛նչ հոգնած եմ.
Իմ արևս ալ կը մարի...

ՈՎ ՏԵՐ...

Ո՜վ Տեր, ո՜վ Տեր,
Ինչու այդքան
Ցավ ես տվեր
Վարդ աղջկան։

Եթե Աստված
Ես ըլլայի,
Օ, անկասկած,
Զայն կ՝ընեի՝
Աստվածուհի՜...

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա ժողովածուն ընդգրկում է արևմտահայ բանաստեղծության ամբողջ շրջանը, նոր (աշխարհաբար) պոեզիայի սկզբնավորումից (1840-ական թթ., Ղևոնդ Ալիշան) մինչև նրա ավարտը (1920-ական թթ. սկիզբը, Մատթեոս Զարիֆյան), երբ արևմտահայության սպանդից ու բռնագաղթից հետո արևմտահայ կենդանի մնացած գրողները ցրվեցին աշխարհով մեկ՝ սկզբնավորելով այդ գրականության նոր՝ սփյուռքյան շրջանը։

Ժողովածուի մեջ, նկատի ունենալով նրա հատկապես դպրոցականներին և ուսանողներին ուղղված լինելու հանգամանքը, ներառվել են արևմտահայ բանաստեղծության ոչ միայն մեծերը, այլև (ավելի փոքր ծավալով) նրանք, ովքեր չնայած իրենց բանաստեղծական համեստ տաղանդին, մեծ ճանաչում են գտել իրենց ժամանակին, զգալի ու հաճախ կարևոր դեր են խաղացել 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ պոեզիայի զարգացման գործում, ինչ-ինչ չափով ազդել են հետնորդների վրա և իրենց գործով պայմանավորել այդ պոեզիայի զարգացման հետագա ընթացքը։ Բայց ահա, 20-րդ դարի սկզբին, երբ արդեն ստեղծագործում էին արևմտահայ բանաստեղծության մեծերը (Սիամանթո, Վարուժան և ուրիշներ), ծավալով ավելի շատ և երբեմն էլ առանձին հաջողված գործերի հեղինակներ չեն ներառվել, քանի որ նրանք հետք չեն թողել իրենց օրերի պոեզիայի մեջ, նկատելի դեր չեն խաղացել մեր պոեզիայի պատմության մեջ։ Ուրեմն, ներկա ժողովածուն հետապնդում է նաև մեր պոեզիայի պատմության ուսուցման նպատակ։

Նույն՝ դպրոցականներին և ուսանողությանը ուղղված լինելու հանգամանքով առաջնորդվելով, դպրոցական ու բուհական ծրագրերում առանձնացվող հեղինակները ներկայացվել են առավել ամբողջականությամբ՝ շարքերով, ժողովածուներով և մեծ ծավալով։ Այս առումով ներ-

կա ժողովածուն կարող է լիովին բավարարել ծրագրային (և ոչ միայն) պահանջները։

Հեղինակները ներկայացվել են ժամանակագրական կարգով՝ ըստ նրանց գրական մուտքի կամ տվյալ շրջանում նրանց ստեղծագործության կարևորության։ Պահպանվել է (չնչին խախտումներով) յուրաքանչյուր հեղինակի գործերի ժամանակագրական հաջորդականությունը։

Գրեթե պահպանվել են արևմտահայերենի, նաև հեղինակների նախասիրած գրության ձևերը, կետադրությունը, առանձին դեպքերում միայն կատարվել են փոփոխություններ. այսպես, հանվել են ուրիշի ուղղակի խոսքի ժամանակ ամեն տողի սկզբում դրվող չակերտները, բազմակետերից հետո դրվող վերջակետերը, ստորադասական նախադասությունների մեջ շաղկապներից առաջ դրվել է ստորակետ և այլն։

Պահպանվել է կը եղանակիչի գրության ձևը. բաղաձայնով սկսվող բառերից առաջ՝ անջատ (կը կոչվի, կը փայլի), ձայնավորով սկսվող բառերից առաջ՝ ապաթարցով (կ'երթար, կ'ընդմիջե, կ'ակոսե)։

Կրկնակի բաղաձայներ ունեցող բառերից առաջ եղանակիչը գրվել է միասին, քանի որ դրանք իրենց արտասանությամբ արդեն ունեն ը (ըզմայլին, ըսպասեմ, ըզգա,— հետևաբար՝ կըզմայլին, կըսպասեմ, կըզգա)։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԺԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ (1820—1901)

Ծնվել է Կոստանդնուպոլսում։ 1832 թվականից սովորել է Վենետիկում, Ս. Ղազար վանքի դպրոցում։ 1841 թվականից ուսուցչական աշխատանք է կատարել Վենետիկի Ռափայելյան (հետագայում կոչվեց Մուրատ-Ռափայելյան) վարժարանում։ 1848—1858 և 1866—1872 թթ. եղել է այդ, իսկ 1858—61 թթ. Փարիզի Մուրադյան վարժարանի տեսուչ։ Երկար տարիներ աշխատակցել է «Բազմավեպ» հանդեսին, 1849—52 թթ. եղել է նրա խմբագիրը։ 1872 թվականից մինչև իր մահը ամբողջովին նվիրվել է գիտական աշխատանքի՝ ստեղծելով հայագիտական հսկայածավալ ու մեծարժեք մի ժառանգություն («Շնորհալի և պարագա յուր», «Շիրակ», «Սիսական», «Հայ բուսակ», «Հին հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց», «Արարատ», «Հուշիկք հայրենյաց հայոց», «Հայապատում» և այլ ուսումնասիրություններ)։

Ալիշանը բանաստեղծություններ ու պոեմներ գրել է հիմնականում 40—50-ական թթ. և դրանք ամփոփել «Նվագք» ընդհանուր խորագրով ժողովածուի մեջ, որի հինգ հատորները («Մանկունի», «Մաղթունի և Բնունի», «Հայրունի», «Տերունի», «Տխրունի» խորագրերով) լույս են տեսել 1857—58 թթ. և վերահրատարակվել են հետագա տասնամյակներում։

Որպես բանաստեղծի՝ Ալիշանին մեծ հռչակ են բերել հատկապես «Երգք Նահապետի» խորագրով շարքի բանաստեղծություններն ու պոեմները, որոնց մի մասը լույս է տեսել «Բազմավեպ» հանդեսում դեռևս 1847—48 թթ., ապա զետեղվել «Նվագք»-ի երրորդ՝ «Հայրունի» հատորում, մյուս հայրենասիրական քերթվածների հետ։ «Երգ Նահապետի» շարքի հաջողությունը պայմանավորված էր նրա ոչ միայն հայրենասիրական բովանդակության, այլև աշխարհաբար գրված լինելու հանգամանքով (մյուս բանաստեղծությունները գրաբար են), որով էլ Ալիշանը դառնում է հայ նոր բանաստեղծության սկզբնավորողը արևմտահայ նոր գրականության մեջ։ Հետաքրքիր է հիշել, որ «Երգք Նահապետի» կամ պարզապես՝ Նահապետի երգեր շարքը «Բազմավեպ»-ում հրատարակելիս Ալիշանը օգտագործել է Նահապետ գրական անունը, թաքցնելով իր ինքնությունը, այլև ծանոթագրության մեջ այդ շարքը համարել հայ միջնադարյան գուսանական երգեր, որոնց հեղինակը իբրև թե մի ոմն Նահապետ էր։ Ներկայացվող բանաստեղծությունները «Երգք Նահապետի» շարքից են։

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ (1828—1868)

Ծնվել է Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում։ Սովորել է Մխիթարյանների դպրոցներում. նաև Կ. Պոլսում, ապա Պադուայում (Իտալիա)։ 1845 թվականից ծավալել է

գրական, մանկավարժական եռանդուն գործունեություն, մեծապես նպաստելով նոր սկսվող լուսավորչական շարժմանը։ Կ. Պոլսում հիմնադրել է հայկական թատրոն, մի մասնակցություն է ունեցել Հայագգեաց, Բարեգործական, Երաժշտական ընկերությունների հիմնադրմանն ու գործունեությանը, Սահմանադրության համար մղվող պայքարին։ Թատրոնի համար թարգմանել է պիեսներ, գրել ինքնուրույն դրամաներ աշխարհաբարով («Կոռնակ», «Արշակ», «Վահան»), որոնք բեմադրվել են։

Պեշիկթաշլյանը լայն ճանաչում է գտել հատկապես իր՝ բնության, սիրո և հայրենասիրության թեմաներով գրված աշխարհաբար բանաստեղծությունների (գրել է նաև գրաբար) շնորհիվ, որոնցից մի քանիսը հենց այն օրերից սկսած (առ այսօր) երգվել են։

Մահացել է Թոքախտից, քառասուն տարեկանում։

Պեշիկթաշլյանի բանաստեղծությունները մամուլում տպագրվել են 1840-ական թթ. վերջերից։ Առանձին ժողովածուով նրա երկերը առաջին անգամ հրատարակվել են Կ. Պոլսում, հեղինակի մահից երկու տարի հետո «Մատենագրություն» խորագրով։ Լեռ տագայում՝ 1903 թ. («Տաղեր», Թիֆլիս), 1904 թվականին («Քերթվածներ և ճառեր», Փարիզ), 1917 թ. («Տաղք և թատերգություն», Նյու-Յորք) և այլն։ Պեշիկթաշլյանի տաղերի ժողովածուն Երևանում լույս է տեսել երկու անգամ (1947 և 1961), իսկ երկերի լիակատար ժողովածուն 1987 թ.։

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ (էջ 49)— Գրվել է 1860-ական թթ. սկզբում հայ ազգային ազատագրական տրամադրությունների բարձրացման, Զեյթունի հերոսական ապստամբության (1862 թ.) շրջանում։ Առաջին անգամ տպագրվել է 1862 թ. Տ. Զուխաճյանի և Գ. Երանյանի «Քնար հայկական» հանդեսում։ Հենց այդ օրերից երգվել է։ Երաժշտությունը գրել է իտալացի կոմպոզիտոր Ֆոքսինին։ Երգը արտատպվել է հետագա շրջանի հայերեն բազմաթիվ երգարաններում։

ԳԱՐՈՒՆ (էջ 50)— Գրության թվականը հայտնի չէ, սակայն հեղինակի կենդանության օրոք տպագրվել է և երգ է դարձել։ Երաժշտությունը գրել է մեծն Տիգրան Չուխաճյանը։ Մեծ ժողովրդականություն վայելող ռոմանս է։

ՃԵՄՔ Ի ԼՅԱՌՆ ՀՍԿԱՅԻՆ (էջ 54)— Ա. Չոպանյանի հիշատակությամբ, այս բանաստեղծությունը Պեշիկթաշլյանը ներշնչվել է Բոսֆորի ասիական եզերքին գտնվող Հսկայի լեռը կատարած զբոսանք-ճամփորդության ժամանակ։ Նա մի հայ ընտանիքի հետ էր, որի դեռատի աղջկա ուսուցիչն էր, և որի նկատմամբ անտարբեր չէր։ Հիշվում է նաև, որ թեև այդ ընտանիքը օտարախոս էր, բայց Պեշիկթաշլյանը կարողանում է օրիորդի մեջ հայերենի նկատմամբ այնքան սեր բորբոքել, որ նա խորապես տիրապետի հայերենին, ավելին՝ դառնա նշանավոր հայ վիպասանուհի. նա Սրբուհի Տյուսաբն էր։ Նկատված է նաև, որ Պեշիկթաշլյանի «Աշուն» բանաստեղծությունը (առաջին հրատարակության մեջ «Առ Նե» նվիրումով) նվիրված է օրիորդ Սրբուհի Վահանյանին (Տյուսաբ)։

ՀԱՅ ՔԱՋՈՐԴԻ (էջ 60)— Ինչպես նաև «Մահ քաջորդվույն», «Թաղումն քաջորդվույն», «Հայ քաջուհին» բանաստեղծությունները, որ հայտնի են «Զեյթունի երգեր» անվամբ (խորագիրը դրել է Ա. Չոպանյանը), գրվել են 1862—63 թ., Զեյթունի հերոսական ապստամբության (1862 թ.) շրջանում։ Զեյթունը, որը հայաբնակ քաղաք և գավառ էր լեռնային Կիլիկիայում, համախ է ըմբոստացել Թուրքական տիրապետության դեմ, հրաժարվելով հարկերից։ Զեյթունցիներին նկատմամբ բռնությունները ստիպում են, որ 1862 թ. քաջարի զեյթունցիները ապստամբեն և մի պահ նույնիսկ հաղթանակի հասնեն։ Հայտնի է նաև զեյթունցիների հետագա տարիների, հատկապես 1895—96 թթ. ապստամբությունը։ Պեշիկթաշլյանի կենսագրությունից հայտնի է, որ պոլսահայ առաջադեմ մտավորականները (նրանց թվում նաև Պեշիկթաշլյանը) խանդավառված էին զեյթունցիների պայքարով և սերտ կապեր են ունեցել ապստամբության ղեկավարների հետ։

Այդ շրջանում (նաև հետագայում) հայ բանաստեղծները ոչ քիչ անգամ են դիմել օտար բանաստեղծներից փոխադրության կամ «նմանողությամբ» գրելու եղանակին։ Պեշիկթաշլյանի «Հայ քաջորդին» գրված է ֆրանսիացի Վ. Հյուգոյի «Տղան» բանաստեղծության նմանողությամբ, իսկ «Թաղումն քաջորդվույն» բանաստեղծությունը՝ անգլիացի Ուոլֆի մի բանաստեղծության նմանողությամբ։ Երաժշտությունը գրել է Մակար Եկմալյանը։

ՄԱՀ ՔԱՋՈՐԴՎՈՒՅՆ բանաստեղծության համար, որ դարձյալ մեր սիրված երգերից մեկն է, երաժշտություն է գրել գրող Սրբուհի Տյուսաբը։

ԱՌ ՀԱՅԿԱԶՈՒՆ ՕՐԻՈՐԴՍ (էջ 69)— Այս բանաստեղծության լրիվ վերնագիրն է՝ «Ի հանդես պարգևաբաշխության աշակերտուհյաց սրբոց Հռիփսիմյանց վարժարանի Օրթագյուղի, առ հայկազան օրիորդս»։

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆ (1819—1876)

Ծնվել է Կեսարիայի գավառի Էվքերեն գյուղում։ Սովորել է Կեսարիայում, Կ. Պոլսի Սկյուտար արվարձանում։ 1844—1851 թթ. սովորել է Փարիզի Սորբոնի համալսարանում և ավարտել է բժշկագիտության դոկտորի աստիճանով։ 1851 թ. վերադարձել է Կ. Պոլիս և ծավալել մանկավարժական, ազգային-հասարակական լայն գործունեություն։ Կայսերական բժշկական ուսումնարանի ուսուցիչ էր, բժշկական ընկերության անդամ, ազգային ժողովի երեսփոխան։ Ուսումնարանում իր դասավանդած փիլիսոփայության դասընթացը գրի առնելով, ստեղծել է փիլիսոփայության դասագիրք, որը Ֆրանսերեն և հայերեն լույս է տեսել եռմատոր։ Նշանակալից է Ռուսինյանի դերը հայոց լեզվի, արևմտահայ աշխարհաբարի համար մղված պայքարում։ «Ուղղախոսություն արդի հայ լեզվին կամ տարբերք արմենարանաբանության» աշխատությունը հեղինակի կենդանության օրոք ունեցել է երկու հրատարակություն։ Երկու տարի (1864 և 1873) հրատարակել է «Տարեցույց» հաստատները։

1848 թ. ֆրանսիական հեղափոխության գաղափարներով լցված, արևմտահայ ուրիշ մտավորականների հետ (Գ. Օտյան, Ն. Պալյան և ուրիշներ) ծավալել է ազգային բուռն գործունեություն, մեծ մասնակցություն բերելով արևմտահայոց Ազգային Սահմանադրության մշակման ու հաստատման աշխատանքներին։ (Սահմանադրությունը հայ Պատրիարքարանը ընդունել է 1860 թ., իսկ կայսերական իշխանությունը հաստատել է 1863 թ.)։

Ռուսինյանը զբաղվել է նաև գրական աշխատանքով։ Թարգմանություններ է կատարել ֆրանսիական պոեզիայից։ Նա թարգմանել ու առանձին գրքով 1873 թ. հրատարակել է Վ. Հյուգոյի «Ռուի Բլաս» չափածո դրաման։ Հետաքրքիր է հիշել, որ նա թարգմանությունից առաջ նամակով խնդրել է Հյուգոյի հեղինակային թույլտվությունը, Հյուգոն սիրով համաձայնել է, հայտնել իր գոհունակությունը, ապա ավելացրել. «Թե վաճառումն արդյունք բերե, որոշեցեք դուք ձեզնե՝ ինչ որ արդար դատիք՝ իմ հեղինակին բաժինս ու տվեք զայն աղքատաց։ Հավատացեք իմ սրտագին համակրության՝ Վիկտոր Հյուգո»։

Ռուսինյանը գրել է նաև ինքնուրույն բանաստեղծություններ, որոնցից մի քանիսն են միայն հայտնի մամուլի էջերից։ Արևմտահայ պոեզիայի մեջ Ռուսինյանը նշանա-

կալից տեղ ու դեր չունի, սակայն նրա «Կիլիկիա» բանաստեղծությունը, գրված 1860 թ., հաստատուն տեղ ունի մեր ժողովրդի հիշողության մեջ շնորհիվ ոչ միայն Գարրիկ Երանյանի հորինած լավ երաժշտության, այլև հայրենասիրական ոգու և անկեղծ ներշնչանքի։ «Կիլիկիան» մշտապես տեղ է գտել հայ բանաստեղծության ընտրանիներում ու երգարաններում, թեև այն ինքնուրույն ստեղծագործություն չէ, յուրովի զգացված փոխադրություն է Ֆրանսիայում մեծ ժողովրդականություն գտած «Երբ ամեն ինչ վերածնվում է» երգի, որ ֆրանսիացի բանաստեղծ ու երգահան Ֆրեդերիկ Բիռայի «Իմ նորմանդիա» բանաստեղծությունն է (երաժշտությունը նույնպես Բիռայինն է)՝ գրված 1836 թ.։ Ռուսինյանից տասը տարի առաջ այն թարգմանել-փոխադրել է նաև Մկրտիչ Պեշիկթաշլյանը՝ «Երգ հայրենի» վերնագրով։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ (1851—1872)

Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար արվարձանում։ Սովորել է տեղի ճեմարանում, որի տեսուչն էր Հակոբ Պարոնյանը։ Ընտանիքին օգնելու հոգսը նրան ստիպում է ուսումը թողնել կիսատ, և 1867 թ. նա սկսում է աշխատել։ Դեռ դպրոցական շրջանից գրում է բանաստեղծություններ, դրամաներ։ Դրամաները բեմադրվել են։ 1871-ի սկզբից նա հիվանդանում է թոքախտով, որ խորանալով նրան անկողին է գցում։ Մահացել է 1872 թ. հունվարի 20-ին։

Իր կենդանության օրոք, 1871 թ. ընթացքում մամուլում լույս են տեսել մի քանի բանաստեղծություն։

Բանաստեղծությունները և թատերգությունները առանձին ժողովածուով լույս են տեսել մահից հետո, 1872 թ. կեսերին, «Տաղք և թատերգություն» խորագրով։ Երկրորդ անգամ Դուրյանի ժողովածուն («Տաղք և թատերգություն, նամականի, դամբանական») լույս է տեսել 1893 թ., որի մեջ ճշտվել են նախորդ հրատարակության մեջ տեղ գտած մի շարք աղավաղումներ, ինչպես նաև հավելվել են նոր գործեր։

Հետագա տարիներին տարբեր վայրերում Դուրյանի գործերը, հատկապես բանաստեղծությունները, ունեցել են երկու տասնյակից ավելի վերահրատարակություններ։ Հատկապես արժեքավոր է Դուրյանի 1967 և 1968 թթ. Երուսաղեմում լույս տեսած ժողովածուների վերահրատարակությունը, որի մեջ հրատարակող Ա. Գալայճյանը քննական եղանակով ցույց է տվել նախորդ հրատարակությունների վրիպումները, ձեռքի տակ ունենալով Դուրյանի կողմից կազմված ինքնագիր երկու տետրակները, ուր տեղ են գտել 1869—1871 թթ. գրված տաղերը։

1971 թ. ՀԽՍՀ ԳԱ հրատարակությամբ Դուրյանի երկերը լույս են տեսել երկու հատորով, մանրամասն ծանոթագրություններով (տեքստը պատրաստել և ծանոթագրել է Ա. Շարուրյանը, խմբագրել է Պ. Սեակը)։

Ըստ ակադեմիական հրատարակության՝ Դուրյանի բոլոր տաղերի թիվը քառասունմեկ է։ Մենք ներկայացնում ենք գերակշիռ՝ լավագույն մասը։

ՍԻՐԵՑԵՔ ԶՄԻՄՅԱՆՍ (էջ 78)

Գողգոթա — Այն լեռը, ուր ըստ Աստվածաշնչի, խաչել են Հիսուս Քրիստոսին։ Օգտագործվում է ընդհանրապես որպես տառապանքի, տանջանքի վայրի, արյունոտ ճանապարհի խորհրդանիշ։

Հուդա — Ըստ Աստվածաշնչի՝ Քրիստոսի այն աշակերտը, որը մատնեց նրան։ Դարձել է մատնիչի խորհրդանիշ։

Վատիկան — Հռոմի եկեղեցին, կաթոլիկ քրիստոնյաների պետերի՝ պապերի աթոռանիստ-կենտրոնատեղին։

Փոխ-Քրիստոս — Նկատի ունի Վատիկանի սուրբ հայրերին, ակնարկում է խաչակրաց արշավանքների հետևանքները։

Գեթսեմանի — Գյուղ, պուրակ Երուսաղեմի մոտ, որտեղ Հուդան մատնեց Հիսուսին։

ԵԼԱԳ Է ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ (էջ 79)

Ազգային սահմանադրությունը, որ արևմտահայ մտավորականությունը կազմեց և ներկայացրեց թուրքական իշխանություններին, հայոց պատրիարքարանի կողմից ընդունվել է 1860 թ., իսկ թուրքական բարձրագույն իշխանության կողմից՝ 1863 թ.։ 1870 թ.՝ է (7-րդ) տարեդարձին է գրել Դուրյանը այս բանաստեղծությունը։

ՀՇԵՑՈՒՆՔ (էջ 81)

Պաղլար-Պաշի — Զբոսավայր Սկյուտար արվարձանում։

Կազին — Գազե լապտերների վառվելու ժամանակը։

ՀԱՅՈՒՀԻՆ (էջ 87)

Յուսկուտար — Սկյուտար արվարձանը։

ԹՐՔՈՒՀԻՆ (էջ 88)

Լամարթին — Լամարթին Ալֆոնս (1791—1869), ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ։ Նկատվել է նրա ազդեցությունը Դուրյանի վրա։

ՉՆԵ ՊԱՇՏԵՄ (էջ 95)

Զույգ մ'երկիններեն գինովցած — Նկատի ունի աչքերը՝ երկնքի խորությամբ ու գույնով։

Ես կպաշտեմ զիմ Պ... — Հայտնի չէ, թե ում նկատի ունի։ Ժամանակին ուրիշի ձեռքով ձեռագրի մեջ ավելացվել է «իստուս», իբրև թե այն թատերախմբում, ուր խաղացել է նաև Դուրյանը, կար Պիստուս անունով մի աղջիկ, որին էլ իբրև թե նվիրել է այս բանաստեղծությունը։ Բայց ժամանակակիցները այդ խմբում այդպիսի անձնավորություն չեն հիշատակել։ Ընդհանրապես հայտնի չէ Դուրյանի սիրո օբյեկտը կա՞ր, իրակա՞ն է, հանդիպե՞լ է նրան, թե՞ հեռվից հեռու, իր մտքում, թաքուն է պաշտել նրան, թե՞ իր երևակայության արդյունքն է։

Ի ԳԵՐԵԶՄԱՆ ԱՄԵՆԱՍԻՐԵԼՎՈ ԼՅՈՒԹՖՅԱՆԻ ՀԵՇԵՇՄՈՒՆՔ (էջ 102)

Վարդան Լյութֆյան — Դուրյանի ամենամոտիկ ընկերներից մեկը, նույն թվականի ծնված, գրում էր բանաստեղծություններ, մահացել է Դուրյանից մի քանի ամիս առաջ։ Նրա մահվան առթիվ Դուրյանը գրել է դամբանական խոսք։

Ղամլըճայի սարը — Սկյուտար արվարձանի գեղադիր բլուրներից մեկը։

Ըսբամպոլ — Ստամբուլ — Պոլիսը կամ մասնավորապես Պոլսի եվրոպական մասը։

ԻՄ ՅԱՎԸ (էջ 101) — Բանաստեղծության համար երաժշտություն է գրել Տ. Տերանգրեանյանը։

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆ (1840—1909)

Մնվել է Կ. Պոլսում։ Սովորել է Մխիթարյանների՝ Պոլսի, ապա Վենետիկի վանք, ժարանններում։ Վենետիկի Ռափայելյան վարժարանում (բանաստեղծ Մկրտիչ Ամենյանի հետ միասին) աշակերտել է Ղևոնդ Ալիշանին։ 1858 թ. վերադարձել է Կ. Պոլիս։ Եղել է ժամանակի ճանաչված ու սիրված ուսուցիչներից մեկը (հայերենի և ֆրանսերենի), կազմել է հայերենի և ֆրանսերենի քերականության դասագրքեր։ Զբաղվել է դրամատուրգիայով, գրել ու թարգմանել է դրամաներ, որոնք բեմադրվել են։ Հեղինակն է Տ. Զուխաճյանի «Արշակ երկրորդ» օպերայի լիբրետոյի (1871 թ. այն տպագրվել է հայերեն և իտալերեն)։

Լայն ճանաչում է գտել նաև որպես բանաստեղծ։ Թերզյանի բանաստեղծությունները տպագրվել են մամուլում սկսած 1850-ական թթ. վերջերից։ Առանձին գրքով (երկու հատորով) դրանք հրատարակվել են միայն 1929 թ. Վենետիկում, Ա. Զոպանյանի առաջաբանով և ծանոթագրություններով։

ՄԿՐՏԻՉ ԱՄԵՆՅԱՆ (1838—1917)

Մնվել է Կ. Պոլսում։ 1858 թ. Թովմաս Թերզյանի հետ ավարտել է Վենետիկի Ռափայելյան (հետագայում՝ Մուրատ-Ռափայելյան) վարժարանը։ Ամբողջ կյանքում աշխատել է Կ. Պոլսի հեռագրատանը։

Բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Ժպիտք և արտասուք» խորագրով, լույս է ընծայել 1871 թ.։ Հետագա տարիներին լույս է ընծայել նաև «Լույս և սուվերք» (1887), «Գարնան հովեր» (1892), «Թրթռուն հանգեր» (1909) ժողովածուները։ 1909 թ. առանձին գրքույկներով դրանք վերահրատարակել է, կազմել մեկ գրքի մեջ՝ շարունակական էջակալումով։

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ (էջ 121)

Ես եմ Հայրիկ ու պատրիարք... — *Հայրիկ՝ Խրիմյան Մկրտիչ, Խրիմյան Հայրիկ, Մկրտիչ Ա. Վանեցի (1820—1907), 1869-ին ընտրվել է Պոլսի Հայոց Պատրիարք, 1892-ին Ամենայն Հայոց կաթողիկոս։*

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ (1851—1908)

Մնվել է Կ. Պոլսում։ Սովորել է Խասգյուղի Ներսիսյան վարժարանում, աշակերտելով Թովմաս Թերզյանին և Մաղաթիա Գարագաշյանին, ապա Շահնազարյան վարժարանում։ 1874—76 թթ. եղել է Ֆրանսիայում, ծանոթացել Վիկտոր Հյուգոյի հետ։ 1876-ից մինչև կյանքի վերջը զբաղվել է մանկավարժությամբ, աշխատակցել է Պոլսի գրեթե ամբողջ մամուլին, անձամբ հրատարակել է «Գրական և իմաստասիրական շարժում», «Երկրագունտ», «Տնտես», «Դար» հանդեսները, առանձին գրքույկներ, ֆրանս-հայերեն բառարան, որն ունեցել է մի քանի հրատարակություն։ Դասավանդել է փիլիսոփայության պատմություն, պատմության փիլիսոփայություն, գեղագիտություն, հոգեբանություն, մանկավարժություն, հին ու նոր գրականությունների պատմություն դասընթացները, վայելելով մեծ հեղինակություն։ Տեմիրճիպաշյանը լայն ճանաչում է գտել նաև իր իմաստասիրական բնույթի ուսումնասիրություններով, գեղարվեստական արձակ երկերով, բանաստեղծություններով, որոնք լույս են տեսել ժամանակի մամուլում։ Տեմիրճիպաշյանի գրական հարուստ ժառանգության մի փոքր մասն է միայն հավաքվել ժողովածուի մեջ (Փարիզ, 1955, և Երևան, 1986)։ Նոր կյանքը և հիվանդությունը

նրան մղել են ինքնասպանության մի քանի փորձերի, որոնցից վերջինը եղավ ողբերգական։

ՀՈՎՍԵՓ ՇԱՀՆԱԶԱՐ *(էջ 131)* — *Բանաստեղծությունը նվիրված է մակույկավար Պետրոսին, որը փրկել է նրան 1893 թ. կատարած ինքնասպանության փորձի ժամանակ։*

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿՅՈԹՈՒՐՅԱՆ (1868—1891)

Մնվել է Խարբերդ քաղաքում։ 1887 թ. փայլուն առաջադիմությամբ ավարտել է Խարբերդի հայանի «Նիրատ» կոլեջը և նույն տարում դարձել կոլեջի անգլերենի և երաժշտության ուսուցիչ, աշխատելով մինչև իր մահը։

Հրաշալի նվագում էր, երաժշտություն հորինում, բանաստեղծություններ գրում։ Ցավոք, նրանից պահպանվել է ընդամենը մի քանի բանաստեղծություն ու արձակ խոհեր։ Մեծ Ճանաչում է գտել ու սիրվել «Սրինգ» բանաստեղծությունը, որը տեղ է գտել տարբեր դասագրքերում ու ժողովածուներում, նաև երգվել է։ Երաժշտության հեղինակը նույնպես Պեշկյոթուրյանն էր։

Որոշ ժողովածուներում (նաև՝ «Մարգարիտներ հայ քնարերգության», 2-րդ հատոր, Երևան, 1974 թ.) «Սրինգը» տպագրվել է կրճատ, մեկ երրորդի չափով, միայն վերջին մասը։

Մենք այն հրապարակում ենք ամբողջությամբ՝ մամուլից («Ծաղիկ», Կ. Պոլիս, 1994 թ., № 8)։ Նույն մամուլից ենք վերցրել նաև այստեղ ներկայացվող մյուս երկու բանաստեղծությունները։

ՎԱՀԱՆ ՄԱԼԵՋՅԱՆ (1871—1966)

Մնվել է Ռումինիայում, բայց նույն տարում նրանց ընտանիքը տեղափոխվել է Կ. Պոլիս։ Ավարտել է Կ. Պոլսի հայկական կրթարանը և իրավաբանական վարժարանը (1895)։ Երկու տարի աշխատել է Մերսին քաղաքում, 1897-ին փախել է Եգիպտոս։ Հետագա տարիներին ապրել է Կահիրեում, Փարիզում, Բրյուսելում, Նյու-Յորքում, Նիցայում, ուր և մահացել է 95 տարեկան հասակում։ Զբաղվել է իրավաբանությամբ, գրական, ազգային-հասարակական գործունեությամբ. վարել է Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) ընդհանուր քարտուղարի պաշտոնը։

Մալեզյանի բանաստեղծությունները պոլսահայ մամուլում լույս են տեսել 1880-ական թթ. վերջերից, առաջին ժողովածուն՝ «Մրմունջք» խորագրով, 1890 թ.։ Կյանքի հետագա տարիներին Մալեզյանը լույս է ընծայել «Անիծյալը» (1892), «Կերոններ» (1912), «Տարագրի մը հուշատետրը» (1915), «Անցած օրեր» (1927), «Կարապի երգը» և «Հոգիի ձայներ» (1949), «Ճամբուս վրա» (1950) և ուրիշ գրքեր, ուր տեղ են գտել բանաստեղծություններ, արձակ խոհեր, հուշեր, նամակներ, կենսագրական էջեր։

Ներկայացվող բանաստեղծությունները քաղված են տարբեր ժողովածուներից։

ՍՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ (1872—1954)

Մնվել է Կ. Պոլսում։ Ավարտել է Պոլսի Կեդրոնական վարժարանը և նվիրվել գրական, լրագրության-հրատարակչական գործունեության։ 1891 թ. լույս է ընծայել «Ար-

շալույսի ձայներ», 1892 թ.՝ «Թրթռումներ» փոքր ժողովածուները և «Թուղթին փաքր վիպակը, 1893-ին գրել է «Մութ խաղեր» դրաման, որ բեմադրվել է, 1894-ին լույս է ընծայել «Պետրոս Դուրյանի կյանքն ու գործը» մենագրությունը։ 1895-ին սկսել է «Մուրիկ» հանդեսի հրատարակությունը, լույս է ընծայել մի քանի համար և ահաբեկվում համիդյան բռնություններից՝ նույն տարում փախչելով՝ հաստատվել է Փարիզում, ուր և անցկացրել է իր հետագա ամբողջ կյանքը։

1898—1911 և 1929—1949 թթ. հրատարակել է հայտնի «Անահիտ» հանդեսը։ Հասարակական, լրագրական-հրատարակչական աշխատանքներին զուգընթաց զբաղվել է արվեստի, բանասիրության, գրականագիտության ու գրաքննադատության հարցերով, հրապարակախոսությամբ, գրել է արձակ ու չափածո գեղարվեստական գործեր, կատարել է թարգմանություններ։

Չոպանյանի բանաստեղծությունները հիմնականում ամփոփվել են «Քերթվածներ» (Փարիզ, 1908) խորագրով ժողովածուի մեջ։

Չոպանյանի երկերի ժողովածուն Երևանում հրատարակվել է 1966 և 1988 թթ., «Նամականին»՝ 1980 թ.։

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ (1874—1931)

Ծնվել է Խարբերդի նահանգի Մալաթիա քաղաքում։ Ավարտել է Խարբերդի հայտնի «Եփրատ» կոլեջը։ Մինչև 1901 թ. զբաղվել է ուսուցչությամբ (Պանորմայում, Կ. Պոլսում, Իզմիրում)։ 1904-ին տեղափոխվել է Աֆրիկա, Ջիբուդի քաղաք, ուր մինչև 1920 թ. զբաղվել է առևտրով։ 1920-ին տեղափոխվել է Փարիզ՝ Հայաստան գալու մտադրությամբ, բայց հիվանդությունը խանգարել է և նա այդպես էլ մնացել է Փարիզում, ուր և վախճանվել է 1931 թ. հունվարի 3-ին։

Որբերյանը գրել է բանաստեղծություններ, պոեմներ, ազգային, հասարակական կյանքի զանազան հարցերին նվիրված բազմաթիվ հոդվածներ։

Հրատարակել է երեք գիրք. «Հիշատակաց ծաղիկներ» (Կ. Պոլիս, 1893), «Ծփանքներ» (Կահիրե, 1906), «Ովասիս» (Փարիզ, 1920)։

Որբերյանի երկերի ժողովածուն Երևանում լույս է տեսել 1963 թ., իսկ հաջորդ մի մեծ փունջ 1981 թ., «Հայ դասականներ» մատենաշարով, Վ. Թեքեյանի, Ռ. Սեակի ու Մ. Ջարիֆյանի հետ մեկ գրքում։

Որբերյանի այստեղ ներկայացվող բանաստեղծությունները նպատակահարմար գտանք առանձնացնել երկու շարքով։ Հայրենի տան, հայրենիքի ճակատագրի շուրջ մտորումները և դարի, մարդկային կյանքի մասին խոհերը։ Առաջինի համար խորագիր ընտրելով շարքի համար առավել բնորոշ մեկ բանաստեղծության վերնագիրը՝ «Կարոտագին այց», մյուսի համար՝ «Մեր դարը...»

ԳԼՈՒՆ... (էջ 164) — *Բանաստեղծությունը նվիրված է իր Հարություն անունով միակ տղային, որին հայրը Ջիբուդիից Հայաստան է ուղարկել հայերենով կրթություն ստանալու համար. գրել է որդուն ճանապարհելու օրը։*

ԱՆԻՐԱՆԻԿ (էջ 171) — *Բանաստեղծությունը գրել է հայ ժողովրդի ազգային հերոս զորավար Անդրանիկի (Օզանյան) (1865—1927) մահվան առիթով։ (Ձեռագրի սկզբում հեղինակը գրել է խաչ նշանը)։*

Բոլորեցիք գեր ճակտին շուրջն առնական Շավարշանի մը շուրջն... — *Ակնարկ կապվում է Ալիշանի «Շուշան Շավարշանա» պոեմի հետ, որի մեջ հանուն քրիստոնեության նահատակված Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի մահը սգացող քնարական հերոս-հեղինակը կոչ է անում հայ աղջիկներին, որ Շավարշանա դաշտից վարդ ու շուշան հավաքեն և նրանց մարմինը զուգեն։*

Կայծակնաշող սուրն...

Դողդոջ բազկով երկարեց մայր հայրենեաց... — *Ակնարկում է այն փաստը, որ զորավար Անդրանիկը մահից առաջ իր փառաբանված սուրը ուղարկեց Հայաստան։ Այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում։*

Եվ դուն, Նվարդ, հույր սգ վոր Հայրենեաց... — *Դիմում է Անդրանիկի կնոջը։*

ԿԱՐՈՏԱԳԻՆ ԱՅՑ (էջ 173)

«Պատասխան առ Լոնկֆելլո» — *Լոնգֆելլո Հենրի Ուոդսուորթ (1807—1882), ամերիկացի բանաստեղծ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր։*

Յանկի պոետ — *ամերիկացի բանաստեղծ։*

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ (էջ 177)

Կոմփյուկիոս, Պուտտա, Սոկրատ, Պղատոն... — *Կոնֆուցիոս՝ հին չինական մեծ մտածող (մ. թ. ա. 6—5-րդ դդ.)։ Բուդդա Շակեյ Մունի՝ բուդդայականության՝ կրոնա-փիլիսոփայական ուսմունքի հիմնադիրը հին Հնդկաստանում (6—5-րդ դդ. մ. թ. ա.)։ Սոկրատես՝ հույն մեծ փիլիսոփա (մ. թ. ա. 469—399)։ Պլատոն՝ հույն մեծ փիլիսոփա (մ. թ. ա. 427—347)։*

ԱԴԱՄԻՆ ԱՆՆՈՒՔԸ (էջ 183)

Հիշեց Գալու Գեթսեմանի, Գողգոթան... — *Ըստ Աստվածաշնչի՝ Գեթսեմանին Երուսաղեմին մոտիկ այն վայրն էր, ուր Հուդան մատնեց Հիսուսին, իսկ Գողգոթան այն վայրը, ուր խաչեցին Քրիստոսին։*

ԻՆՏՐԱ (ՏԻՐԱՆ ՁՐԱՔՅԱՆ) (1875—1921)

Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար արվարձանում։ Ավարտել է Կ. Պոլսի հայտնի Պերպերյան վարժարանը (1891 թ.)։ Հաճախել է նաև Գեղարվեստից վարժարան։ (Այվազովսկին Պոլիս այցելած ժամանակ տեսել է պատանի Տիրանի նկարները և շատ է հավանել)։ Ձրաքյանն զբաղվել է ուսուցչական աշխատանքով։ Գրել է հոդվածներ, ուսումնասիրություններ, արձակ խոհեր, տպավորություններ, բանաստեղծություններ։

1906 թ. լույս է ընծայել «Ներաշխարհ» խորագրով խոհերի ու տպավորությունների գիրքը (գրված 1898—1900 թթ.), որը մեծ հռչակ է բերել նրան և 1908 թ.՝ «Նոճաստան» բանաստեղծությունների (հնչյակների) ժողովածուն։ Այս երկու գրքերի համար ընտրելով Ինտրա գրական անունը (Տիրանի շրջափոխությամբ կազմված)։

Հետագայում հոդվածները ստորագրել է դարձյալ Տիրան Ձրաքյան (հայտնի է հավասարապես երկու անուններով էլ)։

1895—96 թթ. ջարդերը խթարեցին նրա հոգեկան աշխարհը, 1915-ից հետո կորցրեց հոգեկան հավասարակշռությունը։ Թափառում էր գավառներում և սեր ու միություն քարոզում մարդկանց։ 1921 թ. թուրքական իշխանությունները նրան աքսոր են ջնում. տանջանքներին չդիմանալով՝ մեռնում է աքսորի ճանապարհին։

Ներկայացվող երեք հնչյակները («Նոճերուն մոտ», «Երեկո», «Իրեն») «Նոճաստան» գրքից են, «Սիհուն» բանաստեղծությունը տպագրվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույցում» (1907 թ., էջ 290), «Լեռին» (գրվել է 1893 թ.), «Կատուն» և «Մթնշաղի տրտմություն» (1897 թ.) բանաստեղծությունները տպագրվել են «Պարտեզ» գրական, գիտական և մանկավարժական հանդեսում (1904 թ. № 10)։

Սիհուն — *գետ Կիլիկիայում։*

ՍԻՊԻԼ (ՋԱՊԵԼ ԱՍԱՏՈՒՐ) (1863—1934)

Ծնվել է Կ. Պոլսի Սկյուտար արվարձանում։ Ավարտել է տեղի ճեմարանը (1879), երկար տարիներ վարժարաններում դասավանդել է մայրենի լեզու և գրականություն (հրատարակել է «Քերականություն արդի աշխարհաբարի» դասագիրքը), զբաղվել է լրագրական գործով, եղել է եռանդուն հասարակական գործիչ։

1891 թ. լույս է ընծայել «Աղջկան մը սիրտը» վեպը (օրիորդ Ալիս ծածկանունով), 1890-ական թվականների սկզբից մամուլում հանդես է եկել բանաստեղծություններով, որոնք առանձին ժողովածուով ընթերցողին է ներկայացրել միայն 1902 թ., «Յուլիս» խորագրով։

Հետագայում Սիպիլի բանաստեղծությունները ժողովածուներով հրատարակվել ու վերահրատարակվել են Ստամբուլում (1930), Վենետիկում (1955), Երևանում (1935, 1965, 1977)։

Սիպիլի այստեղ ներկայացված բանաստեղծությունները գրված են 1892—1913 թթ. ընթացքում (պահպանված է ժամանակագրական հաջորդականությունը)։

ՍՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1873—1915)

Ծնվել է Ռոդոսթոյին մոտիկ Մալկարա գյուղաքաղաքում։ Մինչև 1912 թ. ապրել և աստղագործել է ծննդավայրում։ Սանալով ընդամենը վեցդասյա կրթություն, ինքնուսուցությամբ տիրապետել է ֆրանսերենին, զբաղվել է Բարգմանությամբ, մոլի ընթերցանությամբ դարձել իր ժամանակի զարգացած մտավորականներից մեկը, ճանաչված քննադատ ու բանաստեղծ։ Օգտագործել է Մանիշակ, Պան, Շահեն-Կարո, Կարո ծածկանունները։

1912 թ. տեղափոխվել է Կ. Պոլիս, զբաղվել ուսուցչությամբ և այլ աշխատանքներով։ 1915-ին հոր հետ միասին Հարությունյանը սպանվել է թուրք գազանների ձեռքով։

Կենդանության օրոք Հարությունյանը հրատարակել է բանաստեղծությունների երկ ժողովածու՝ «Լքված քնար» (1902), «Երկունք» (1906), «Նոր քնար» (1912)։ Նրա արձակ ու չափածո երկերի ժողովածուներ են հրատարակվել Փարիզում, 1937 թ. («Անուշ էջեր և քերթվածներ») և Երևանում, 1968 թ. («Գիշերվան ճամփորդը»)։

ՀԵՐԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ (1887—1905)

Ծնվել է Կ. Պոլսի Պեշիկթաշ արվարձանում։ Մարդուհյան վարժարանում ուսում կիսատ է թողել հիվանդության պատճառով, բժիշկների խորհրդով մեկնել է գյուղ՝ բնությամբ ապաքինվելու։ Թոքախտի դեմ պայքարը կարճ է տևել... մահացել է 1905-ի գարնանը։

17-ամյա բանաստեղծուհին թողել է մի փունջ բանաստեղծություններ, մի քանի արձակ խոհեր, օրագրային գրառումներ, մտորումներ։ Մահից հինգ տարի հետո բանաստեղծ Հրանտ Նազարյանցը մի փոքրիկ գրքույկով հրատարակել է դրանք Կ. Պոլսում («Հերանուշ Արշակյան, իր կյանքը և բանաստեղծությունները»)։

Արշակյանի բանաստեղծությունները Երևանում հրատարակվել են 1956 թ. «Զիներուն արցունքը» խորագրով։

ՍԻՄԱՆԹՈ (ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆՅԱՆ) (1878—1915)

Ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում։ Տաներեք տարեկանում փոխադրվել են Կ. Պոլիս։ Սովորել է Պերպերյան վարժարանում։ 1896-ի շարդի օրերին ուրիշ շատ մտավորականների հետ փախել է Պոլսից նախ Կահիրե, ապա Ժնև, ուր մի քանի ամիս սովորել է տեղի կոլեջի ծաղկաբուծական բաժնում, հետո տեղափոխվելով Փարիզ, երեք տարի հաճախել է Սորբոնի համալսարանի բանասիրական մասնաճյուղի դասընթացներին։

1908 թ. վերադարձել է Կ. Պոլիս, 1909-ին լրագրական աշխատանքի է մեկնել ԱՄՆ-ի Բոստոն քաղաք։ 1914-ին տեղափոխվել է Կ. Պոլիս, իսկ մեկ տարի անց կիսել իր մտավորական ընկերների եղեռնական ճակատագիրը։

Սիմանթոյի առաջին բանաստեղծությունները մամուլում լույս են տեսել դարաշրջին, իսկ առաջին ժողովածուն՝ «Դյուցազնորեն» խորագրով, 1902 թ. Փարիզում։ Այնուհետև լույս է ընծայել «Հայորդիներ» (1905, 1906, 1908), «Հոգեվարքի և հույսի ջահեր» (1907), «Կարմիր լուրեր բարեկամես» (1909) ժողովածուները, «Հայրենի հրավեր» շարքը ամերիկահայ մամուլում (1909—1910 թթ.), իսկ 1910 թ. «Ամբողջական գործ» ժողովածուն և 1913-ին «Սուրբ Մեսրոպ» պոեմը առանձին գրքով։

Հետագայում, ետմահու, Սիմանթոյի երկերի ժողովածուներ են տպագրվել Բեյրութում, Կահիրեում, Երևանում, որոնց մեջ ներառվել են նաև մամուլում լույս տեսած գործերը։

Նկատի ունենալով բանաստեղծական շարքի կուռությունը, «Դյուցազնորեն» և «Հայրենի հրավեր» շարքերը ներկայացնում ենք ամբողջությամբ, մյուսները՝ ընտրությամբ։ «Հոգեվարքի և հույսի ջահեր» շարքում առաջին անգամ (1907 թ.) տպագրվելիս կար քսան բանաստեղծություն. «Ամբողջական գործում» հեղինակը ավելացրել էր ևս տասը. վերջիններից մենք ներառել ենք երկուսը («Հոգիս», «Քնարիս լարերը դեռ թաց են»)։

ԴՅՈՒՑԱԶՆՈՐԵՆ (էջ 220)

«Այնքան արշալույսներ կան, որ տակավին չեն ծագած։ Ռիկ-Վեդա»։

Ռիկ-Վեդա— *Ռիգ-Վեդա, նաև Ռիգվեդա (նշանակում է «Հիմների գիրք»)։ Հին հնդկական կրոնական հիմների ժողովածուներից մեկը, գրական հնագույն հուշարձան։ Բաղկացած է տասը գրքից։ Հիմն-աղոթքները նվիրված են կրակի աստված Ագնիին, ամպրոպի աստված Ինդրային, ուժի, հզորության աստված Սոմային և այլ աստվածների։*

ԱՐՇԱԼՈՒՅՍՆԵՐԸ (էջ 225)

Ուրեմն Օվսաննա ձեզի...— *Օվսաննա (եբրայերեն)՝ օրհնություն, փառք, կեցցե։*

ՀՈՂԻՆ ՁԱՅՆԸ (էջ 236)

Անգուզական Քրիստափորի հիշատակին համար— *Ընծայականը դուրս է մնացել երևանյան հրատարակությունից։ Քրիստափոր Միքայելյանը (1859—1905) հայ հասարակական-քաղաքական-ազգային գործիչ է, հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության հիմնադիրներից մեկը։ Զոհվել է ինքնաշեն ռումբի փորձարկման ժամանակ։*

ԱՂԲՅՈՒՐ-ՍԵՐՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ (էջ 242)

Իր քառասուն զինակիցներու հիշատակին համար— *Ընծայականը նույնպես դուրս է մնացել երևանյան հրատարակությունից։ Աղբյուր Սերոբ, նաև Սերոբ փաշա, Սերոբ Վարդանյան (1864—1899)— հայ ազգային ազատագրական շարժման ականավոր դեմքերից մեկը, ժողովրդական հերոս, ֆիդայի։*

ԿԻՎԿԵՍ (էջ 246)

Մասիսեն ի Տավրոս — *Տավրոս (Տորոս)՝ լեռնային համակարգ փոքրասիական բարձրավանդակի հարավում և հայկական լեռնաշխարհում։ Լեռնաշղթայի մի մասը կոչվում է Հայկական Տավրոս։*

Կարիեն Գաղատիա և Մարզվան և Պոլիսեն Իզմիր ու Երիզա — *Քաղաքներ Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարածքում, հայաշատ վայրեր։ Ուզում է ասել, թե ցարը Թուրքիայի ամբողջ տարածքում էր։*

ՀԻԳՆԱՐՔԻ ԵՎ ՀՈՒՅՍԻ ՉԱՀԵՐ (էջ 251)։ *Բնաբանը էսքիլեսից։*

Էսքիլես — *հույն նշանավոր դրամատուրգ (6—5-րդ դար, մ. թ. ա.)։*

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

ՆԵՐԲՈՂԱԿԱՆ (էջ 290)

Եվ Սեռվայի պատգամախոս մեծ Մատյանին դուն սրբագիր թարգմանիչ — *Եհովան Աստվածն է, Մատյանը՝ Աստվածաշունչը, որի առաջին հայ թարգմանիչը Մաշտոցն է։*

ՏԵՍԻԼՔԸ (էջ 295)

Աեավասիկ Քեռովբե մը... — *Քերովբե՝ հրեշտակ։*

ԳՅՈՒՏԻՆ ՓԱՌՔԸ (էջ 295)

Դուն Հելլենեերեն նոչակված Մեծատիտդոս Ակումիտ, ով մենակյաց, ով Մագիստրոս — *Հելլենները (հույները) Մաշտոցին անվանել են Ակումիտ. դա մի պատվավոր մակդիր էր, որ նշանակում էր՝ գիտնական վարդապետ։ Ակումիտ էին անվանում այն վանականներին, ովքեր ջերմեռանդորեն նվիրվում էին աղոթքի և գիտության։ Մագիստրոս (լատիներեն է) նշանակում է պետ, ուսուցիչ։ Միջնադարում այդպես անվանում էին նշանավոր գիտնական ուսուցիչներին։ Հետագայում, այսօր էլ արտասահմանյան որոշ երկրներում, մագիստրոսը գիտական աստիճան է։*

...Սահակ Պարթև զուգակշիռ արքանյակիդ և Վռամշապուհ արքայիկ — *Հայ գրերի ստեղծման շրջանում Սահակ Պարթևը հայոց կաթողիկոսն էր, իսկ Վռամշապուհը՝ թագավորը։ Հայտնի է, որ նրանց անմիջական խրախույսով և օժանդակությամբ Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը և ձեռնամուխ եղավ կրթական ու թարգմանական գործունեության։*

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ (ՄԵԾԱՏՈՒՐՅԱՆ) (1886—1908)

Մնվել է Խարբերդի Բինկյան գյուղում։ 1896 թ. ընտանիքով տեղափոխվել են Սեբաստիա։ 1896—1901 թթ. սովորել է Մարզվանի «Անատոլիա» գիշերօթիկ կոլեջում։ 1901-ին տեղափոխվել են Կ. Պոլիս։ Հաճախել է Կեդրոնական վարժարան, սակայն 1905-ին ուսումը կիսատ է թողել հիվանդության պատճառով։ Բժիշկների խորհրդով Թոքախտի դեմ պայքարելու նպատակով տեղափոխվել է Թուի Գարու արվարձան։ Մահացել է 1908 թ. հուլիսին։

Մեծարենցի մեզ հայտնի առաջին բանաստեղծությունները 1901 թվակիր են։ Մամուլում տպագրվել է 1903 թվականից (Սիրանույշ Պերպերյան, Մ. Կ. Մեծատուրյան, Նավասպ Միածան, Միսաք Մեծարենց անուններով)։

1903 թ. Մեծարենցը կազմել է բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածու՝ «Բաբախումներ» խորագրով (13 բանաստեղծություն) և հանձնել է իր ուսուցիչ Հրանտ Աստուրին։ Ժողովածուն ինչ-ինչ պատճառներով չի տպագրվել։

1906 թ. Մեծարենցը կազմել և հրատարակության է ներկայացրել 1903—1906 թթ. գրած 38 բանաստեղծություններից բաղկացած մի ժողովածու՝ «Միածան» խորագրով, որը լույս է տեսել 1907 թ. գարնանը։ Իսկ նույն տարվա նոյեմբերին լույս է ընծայել երկրորդ ժողովածուն՝ «Նոր տաղեր» խորագրով, բաղկացած 1906—1907 թթ. գրված 33 բանաստեղծություններից։ Ահա, ինչպես «Բաբախումներ» տետրի, այնպես էլ հետագա տարիներին գրած մի շարք բանաստեղծություններ նա խստապահանջորեն չի մտցրել իր ժողովածուների մեջ։ Մի քանի բանաստեղծություն էլ գրքերի մեջ չեն մտել՝ «Նոր տաղերը» հրատարակության ներկայացնելուց հետո գրված լինելու պատճառով։

Այստեղ ներկայացնում ենք «Միածան» և «Նոր տաղեր» ժողովածուները (հիմնական մասով, հեղինակի կազմած հաջորդականությամբ), իսկ վերջում՝ «Գրքերից դուրս մնացած բանաստեղծություններ» խորագրով, չորս բանաստեղծություն «Բաբախումներ»-ից, հինգ քերթված գրված 1903—1906 թթ., իսկ երկուսը («Մանիշակ և մամուռ», «Արգի մարդուն հայր մերը»)՝ գրված 1908-ին՝ նպատակ ունենալով ներկայացնել բանաստեղծին 1901—1908 թթ. կարգացման մեջ։

Մեծարենցը գրել է նաև արձակ բանաստեղծություններ, քնարական պատմվածքներ, գրաքննադատական հոդվածներ, կատարել է թարգմանություններ։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ (ՉՊՈՒԿՋՅԱՐՅԱՆ) (1884—1915)

Մնվել է Սեբաստիայի Նահանգի Բրգնիկ գյուղում։ Մանկությունն անցել է հայրենի գյուղում, առանց հոր (հայրը աշխատում էր Կ. Պոլսում)։ 1896-ին մայրը նրան տարել է հոր մոտ, ուր և Դանիելը ստացել է նախնական կրթությունը։ Բերա և Գատը գյուղ թաղամասերի՝ Մխիթարյանների գիշերօթիկ վարժարաններում։ 1902-ին, որպես լավ աշակերտի, տեղափոխել են Մխիթարյանների Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարան, որն ավարտելով՝ 1905-ին ընդունվել և 1909-ին ավարտել է Բելգիայի Գենտ քաղաքի համալսարանը՝ ուսանելով քաղաքական ու տնտեսական գիտություններ, հաճախելով նաև գրականության դասընթացներին։ 1909—1912 թթ. որպես ուսուցիչ է աշխատել հայրենի Սեբաստիայի և Թոքատի (Եվդոկիա) վարժարաններում, իսկ 1912-ից տեղափոխվելով Կ. Պոլիս՝ դարձել է Լուսավորչյան վարժարանի տնօրեն, աշխատելով մինչև 1915 թ.-ի ապրիլի 24-ը՝ իր ձերբակալության օրը։ Գազանաբար սպանել են օգոստոսի 26-ին։

Վարուժանի մեզ հասած առաջին բանաստեղծությունները 1901 թվակիր են։ 1902 թ. նա բանաստեղծությունների մի փոքրիկ ժողովածու է կազմել և, ստանալով Պոլսի վարժարանի իր ուսուցիչ Արիստակես Քասգանտիլյանի հավանությունը (նաև խմբագրել է ու փոքրիկ առաջաբան-խոսք գրել), հանձնել է հրատարակության։ Սակայն այդ ժողովածուն, որ «Ծաղկեփունջ կամ Բրգնիկցիի մը նվագները» խորագիրն ուներ, թեև գրաքննիչի թույլտվությունն էլ ստացել էր, լույս չտեսավ։

1904 թվականին, Վենետիկում, նոր գրած բանաստեղծություններից նա կազմել է մի նոր ժողովածու՝ «Փուշի ակոսներ» խորագրով (սկզբում գրել է «Մրրկահույզ կայծակիկներ», հետո ջնջել-փոխել է), բայց չի ներկայացրել հրատարակության։

1905 թ. այդ տետրակից ընտրված մի փունջ բանաստեղծություններ, 1905-ին գրված նորերի հետ, «Սարսուռներ» խորագրով, ներկայացրել է Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբանների հրատարակիչներին, և գիրքը գրեթե կիսով չափ կրճատված լույս է տեսել 1906 թ. գարնանը։ «Սարսուռներ»-ում ամփոփված էին 1903—1905 թթ. գրված բանաստեղծությունները։

1907 թ. Չոպանյանը Փարիզում, նախ «Անահիտ» ամսագրում, ապա առանձին գրքույկով հրատարակել է Վարուժանի «Ջարդը» պոեմը։

1908-ին Վարուժանը կազմել է մի ժողովածու, ուր հավաքել է իր հայրենասիրական քերթվածներն ու պոեմները, բայց այն լույս է տեսել միայն 1910 թ. գարնանը (գրքի շապիկին գրված է՝ 1909 թ.)։ Գրքում զետեղել էր 1905—1908 թթ. գրված բանաստեղծություններ, մեկ բանաստեղծություն՝ գրված 1903 թ., երեք բանաստեղծություն և մեկ պոեմ՝ 1904 թ. (դրանք մենք չենք ներկայացրել) և մեկ բանաստեղծություն («Կիլիկյան մոխիրներուն») 1909 թ.։

1912 թ. Վարուժանը լույս է ընծայել «Հեթանոս երգեր» ժողովածուն, ուր ներառված էին 1909—1912 թթ. գրված բանաստեղծություններ (ևս 10 բանաստեղծություն՝ գրված 1904—1908 թթ.)։

1914 թ. Վարուժանը Հակոբ Սիրունու հետ հրատարակել է «Նավասարդ» տարեգիրքը։

1915 թ. նա պատրաստվել էր հրատարակել «Հացին երգը» ժողովածուն (գրված 1911—1915 թթ.), սակայն նրան ձերբակալում են, բռնագրավում ձեռագրերը (նաև «Հացին երգը»)։ 1919 թ. Վարուժանի այրին կարողանում է կաշառել գրաքննիչներին ու ոստիկաններին և մի ներքնահարկից գտնել ու ետ բերել Վարուժանի ձեռագրերի մի մասը։ Կորել էին նաև «Հացին երգը» շարքի բանաստեղծություններից։ Շարքը այդպես՝ ոչ ամբողջական լույս է տեսնում 1921 թ. Կ. Պոլսում։

Հետագա տարիներին տարբեր վայրերում Վարուժանի ժողովածուները վերահրատարակվել են՝ ամբողջական, քաղվածաբար, երբեմն էլ որոշ անտիպ կամ մամուլում տպագրված բանաստեղծությունների հավելումով։

Երևանում Վարուժանի երկերը լույս են տեսել մի քանի անգամ։

1960-ական թվականներից Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում հավաքվեցին Վարուժանի ձեռագրերը, տարբեր նյութեր, որոնք հնարավորություն տվեցին նախ՝ մամուլում լույս ընծայել որոշ անտիպ երկեր, ապա 1984 թ., բանաստեղծի ծննդյան 100-ամյակի առթիվ, հրատարակել երկերի մի ժողովածու, ուր տեղ գտան բանաստեղծի պոեզիան գրեթե ամբողջությամբ (տպագիր ու անտիպ), մի քանի ընտիր նմուշներ արձակ էջերից, հոդվածներից ու նամակներից, համապատասխան ծանոթագրություններով։

Իսկ 1986—87 թթ. իրագործվեց Վարուժանի երկերի լիակատար ժողովածուի (երկ հատորով) ակադեմիական հրատարակությունը, ուր ամբողջությամբ ներկայացված է նաև արձակը, հոդվածները, նամականին ու թարգմանությունները, ուսագրերը, տարբերակները և բնականաբար՝ ծանոթագրություններ։

Այստեղ ներկայացնում ենք Վարուժանի հրատարակած երեք ժողովածուները քաղվածաբար, «Հացին երգը» շարքը ամբողջությամբ (մեզ հասածը) և մի քանի բանաստեղծություն, որոնք չեն մտել իր կողմից կազմված ժողովածուների մեջ՝ ընդհանուր պատկերացում տալու համար նրա վաղ և վերջին շրջանների բանաստեղծության մասին։ Դրանից՝ «Մանուշակը» գրված է 1901 թ., «Վարդերը»՝ 1902 թ. (հետո վերամշակել է), «Ոգբուհին»՝ 1903 թ., իսկ մյուսները՝ 1912—1914 թթ.։

ՅԵՂԻՆ ՍԻՐՏԸ (էջ 369)

«Ընդ եղեգան փող բոց ելաներ» Մ. Խորենացի։

Ամբողջ ժողովածուի համար բնաբան դարձրած այս տողը Վարուժանը վերցրել է Խորենացու հիշատակած հայ հնագույն առասպելներից մեկի՝ Վահագնի ծնունդի մասին լափածո առասպելից («Երկներ երկին, երկներ երկիր...»), որից միայն մի փոքրիկ կտոր է հասել մեզ։ Այդ կտորն է հիմք դարձել Հ. Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը» բանաստեղծության համար։ Եվ այս տողն է հիմք դարձրել Վարուժանը իր հրաշալի «Ձոն» կերտելիս։

ՆԵՄԵՍԻՍ (էջ 369)

Նեմեսիս (Նեմեզիս) — Վրեժխնդրության, արդարության և հատուցման աստվածուհին, Գիշեր աստծո դուստրը ըստ հին հունական դիցաբանության։

Կերտեց բեռն ամազոնի... — Ակնարկում է ամազոնուհիներին, որոնք ըստ հունական դիցաբանության պատերազմասեր, շրջապատը ասպատակող միաստինք կանայք էին։

Գորգոնա մ'էր, Հերա՞ն ֆիոռ, թե Իսիս... — Ըստ դիցաբանության Գորգոնան (Գորգոնը) կանացի կերպարանքով հրեշ էր, Հերան՝ Զևսի կինը, հովանավորը ամուսնական կապերի սրբության և անխախտության ու մայրական երկունքի, Իսիսը՝ բարությանության աստվածուհին։

Ատտիկեի մեհյանեղ ալ... — Ատտիկեն (Ատտիկա) հին հունական զարգացած նահանգ էր՝ Աթենք կենտրոնով, նշանավոր իր մեհյաններով։

Աղբյուր մ'ես դու Ստյուքսի... — Ըստ հունական դիցաբանության, Ստյուքսը այն գետն էր, որի մեջ մկրտել են Աքիլլեսին. այդ շրջից էլ նա դարձել էր անխոցելի և միակ խոցելի տեղը գարշապարն էր, որ չէր թրջվել։

Վարդաններու ռազմաւարդար ճեռքերեն — Նկատի ունի Վարդան Մամիկոնյանին և մյուս քաջարի հայրենասեր հերոսներին։

Արշակներու վերածնվող շիրիմներ — Նկատի ունի Արշակ Երկրորդ և մյուս քաջարի թագավորներին։

Նավասարդները լեցուն — Նավասարդը հին հայկական տոմարի առաջին ամիսն էր, որի առաջին օրը (այսօրվա տոմարով՝ օգոստոսի 11-ը) համարվել է Նոր տարի՝ Ամանոր։ Այդ օրը ամենուր տեղի էին ունենում մեծ բազմամարդ տոնահանդեսներ, զոհաբերություններ, թատերախաղեր, ռազմախաղեր, մրցություններ, զվարճություններ։

Ու Թորգոմա Տունն ըզգա... — Ըստ ավանդության, Նոյի երեք որդիներից Հարեթի թոռնորդին էր Թորգոմը՝ Հայկ Նահապետի հայրը։ Երբեմն հայոց նահապետ է համարվել նաև Թորգոմը և նրա անունով՝ Հայաստան աշխարհն էլ՝ Թորգոմա Տուն։

ՄԱՐԱՌ ՕՋԱԽԸ (էջ 383)

Պատմեց զրույցն Արտավազդի, Վահագնի — Արտավազդ Ա թագավորի և Վահագնի մասին հնագույն առասպել-զրույցներ, որոնք Գողթան գավառի գուսաններից լսելով գրի է առել Մովսես Խորենացին։ Արտավազդ Ա թագավորին իբրև շքայել էին մի քանի ավանդում, երկու շուն կրծում էին շքաները, որ դուրս գար և կործաներ աշխարհը, բայց գարբինները անընդհատ կռանը սալին էին խփում, և Արտավազդի շքաները ամրանում էին։ (Այս սյուժեով բանաստեղծություն է գրել Հ. Հովհաննիսյանը)։ Վահագնը հայկական դիցաբանության մեջ համարվել է պարսկական դիցաբանության Արամազդ և հու-

նական դիցաբանության Զևս աստվածներին հավասար, պատերազմի, քաջության, ամբոխի գերագույն աստված, նաև արեգակնային աստված։

Թորգոմ Գեղջուկի — *Թորգոմի ցեղի, այսինքն հա՛յ գեղջուկի։*

ՋԱՐԴԸ (էջ 396)

Հրամա՞ներ, օ՞ն։ Քարոզին մեջ Պիլալի — *Նկատի ունի Թաթար ջարդարար Պիլալին։*

Եվ Ալիսի ու Ճորոխի, Սփրատի — *Գետեր Հայաստանում։ Ալիսի ափին է անցել Վարուժանի մանկությունը։*

Թորգոմ վիշապը — *Նկատի ունի հայ ապստամբներին։*

Սան Ստեֆանի և Պերլինի ճողին վրա — *1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի հաշտության պայմանագիրը կնքվել է Պոլիսին մերձակա Սան-Ստեֆանոյում։ Պայմանագրի 16-րդ կետով Արևմտյան Հայաստանում պետք է մեծ բարենորոգումներ տեղի ունենային, բայց քիչ անց Բեռլինում պայմանագիրը վերաձևեց, 16-րդ կետը փոխվեց 61-ով, և հայերը ոչինչ չստացան։ Ավելին, ուժեղացան համիդյան խստությունները, ապա, շատ չանցած, սկսվեցին հայերի ջարդերը։*

Սլտրզ-Քյոշկի անկյուններուն մեջ... — *Սլտրզ-Քյոշկ (Աստղ-պալատ) — Թուրքական սուլթանների պալատը։*

Ու Թեյմրզի, Հոռեոսի, Վոլգայի *(Թեյմրզ-Թեմզա, Անգլիայի, Գերմանիայի ու Ռուսաստանի գլխավոր գետերը)* ջրերի մեջ լվացին քեզ դատող պիղատոսներն իրենց ձեռքերն ու ճոգին *պահպանելով* խոր լռությունը մատնիչ—*Ակնարկում է մեծ տերությունների անտարբերությունը, մատնիչ լռությունը հայկական ջարդերի նկատմամբ, նրանց նմանեցնելով Պիղատոսին։ Պիղատոսը (Պիղատոս Պոնտացի) հռոմեական դաժան կառավարիչ էր Հուդա նահանգում (մ. թ. 26—36 թթ.), որ անարգել է հրեաների կրոնը, խաչել Հիսուսին, որից հետո, իբրև թե ինքն անմեղ է, ժողովրդի մոտ, ըստ սովորության լվացել է ձեռքերը. այստեղից էլ՝ ձեռքերը լվանալ, արտահայտությունը, այսինքն չքմեղանալ, իր վրայից մեղքը գցել։*

Տավրոսին Մասիս, Մասիսեն Ջամլրճա— *Տավրոսը լեռնաշղթա է հայկական լեռնաշխարհում, նաև Կիլիկիայում, Ջամլրճա՝ բլուր Պոլսի Սկյուտար արվարձանի մոտ։*

...Պրոպոնտոսն — *Հնում այդպես է անվանվել Մարմարա ծովը։*

Ալլահն ամպին մեջեն, Սուլթանը ցեխին... ու Եվրոպան—*Ակնարկում է թուրքական կրոնի ու պետության միասնությունը հայկական ջարդերի կազմակերպման ժամանակ և Եվրոպայի լուռ համաձայնությունը։*

Ելլեսպոնտի եզերքին — *Ելլեսպոնտ (Հելեսպոնտոս)՝ Դարդանելի նեղուցի հին հունական անվանումը։ Այդպես է անվանվել նաև նեղուցի փոքրասիական ափը։*

Վեհաժողովը բիզմարքյան կը ճակեր— *Բիզմարքը (Բիսմարկ) գերմանական զինական ռեակցիոն գործիչ էր, Գերմանիայի ներկայացուցիչը Բեռլինի 1878 թ. վեհաժողովում։*

ԿԻԼԻԿԵԱՆ ՄՈԽԻՐՆԵՐՈՒՆ (էջ 405) — *Գրել է 1909 թ. ապրիլին, Ադանայում (Կիլիկիա) և Հալեպում տեղի ունեցած հայկական ջարդերի (մոտ 30000 զոհ) առիթով։*

Սիճոճն — *Սիհուն, գետ Կիլիկիայում։*

Ուրկե անցավ կրակի ցեղն Ատտիղասի ձիուն վրա— *Նկատի ունի հոներին և նրանց զորավար Աթիլային (5-րդ դար)։*

...Հեթումները ճապաքանկեր գրեցին — *Նկատի ունի կիլիկյան թագավորներ Հեթում Ա, Հեթում Բ (13-րդ դար) և ընդհանրապես կիլիկյան թագավորներին։*

Երիտասարդ Մակեդոնն...— *Նշանավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացին (4-րդ դար մ. թ. ա.)։*

Աբեղասի տրձանին — *Աբեղաս-Պալլաս, հունական դիցաբանության մեջ հավերժության կուսության, իմաստության, գիտության, քաջության աստվածուհի, Զևսի դուստր։ Ծնված նրա գլխից։*

Թուքենյան զավակներուն...— *Կիլիկիայի հայ թագավորական տունը կոչվում էր Ռուբենյան (գոյատևել է 1080—1350 թթ.)։*

ԿՈՎԻ ԵՐԹ (էջ 411)

Ասաղիկն աճուշ — *Հայկական դիցաբանության մեջ սիրո, գեղեցկության և հեշտասիրության աստվածուհին։ Համարվել է Նոյ Նահապետի դուստրը։ Նույնանում է հունական Աֆրոդիտեի, հռոմեական Վեներա աստվածուհիների հետ։*

Թեմիսը ճոն ճոր Բագոսներ կը ծեի — *Հունական դիցաբանության մեջ Թեմիսը արդարության պահպանման աստվածուհին էր, իսկ նրա և Զևսի որդի Բագոսը (նույն Դիոնիսոսը) գինեգործության, գինու և արբեցության, բանաստեղծության, նաև խրախճանքների, շվայտության պարահանդեսների աստված։ Այստեղից էլ՝ բաքոսական խնջույքներ, բաքոսական պարեր արտահայտությունը։ Բաքոսի հետ շրջող խնջույքներին մասնակցող կանայք էլ կոչվել են բաքոսուհիներ։*

ՀԱՅԿԱԿՆԵՐՈՒՆ ՕՐՈՐԱՆԸ (էջ 414)

Մեզ մսուրն Հիսուս մը կուտա—*Ըստ Ավետարանի, երբ Հովսեփն ու Մարիամը ստիպված քաղաք են գնում մարդահամարին արձանագրվելու, իջևանատներում տեղ չլինելու պատճառով գիշերում են քարայրում, և հենց այնտեղ էլ ծնվում է Հիսուսը, որին անասունների մսուրի մեջ փաթաթելով դնում են ոչխարներին կերակրելու համար սարքված մսուրի մեջ։ Եվ հովիվները առաջին անգամ մանկանը տեսնում են մսուրի մեջ։*

ՀԱՅՐՆԻ ԼԵՌՆԵՐ (էջ 415)

Անակորդվույն— *Անակի որդուն, որ Գրիգոր Լուսավորիչն էր, Հայաստանում քրիստոնեության առաջին տարածողներից մեկը, հայոց առաջին քրիստոնյա կրոնապետը՝ կաթողիկոսը։*

Տրդատին — *Հայ թագավոր (276—330), որի ժամանակ Հայաստանում քրիստոնեությունը ճանաչվեց ու հաստատվեց որպես պետական կրոն։*

Կառույց Երվանդն իր քաղաքն ու Երվազն ալ իր մեջեն — *Հայոց Երվանդ վերջին թագավորը կառուցել է Երվանդաշատը (մ. թ. ա. 3-րդ դարի վերջին), իսկ նրա եղբայր Երվազը՝ քաղաքի մեհյանը։*

Արշակ կապեց կամուրջներ — *Արշակ Բ թագավորը (թագավորել է 350 թվականից, մահացել է 368 թ. Անհուշ բերդում, ուր բանտվել էր Շապուհի խարդավանքով)։*

Բագրատունիքն մարտախոով — *Նկատի ունի Արշակունի թագավորներից մի քանի հետո հայոց թագավորությունը հաստատած Բագրատունիներին (885—1045)։*

Դիոսի տեղ ամպ մը այսոր—*Դիոնիսոս (կամ Բագոս) աստվածը (տես «Կովի երթ» ծանոթագրությունը)։*

Վանազն — *(Տես «Մարած օջախի» ծանոթագրությունը)։*

Ով Տիգրանի — *Նկատի ունի Երվանդ Սակավակյացի որդի Տիգրան կիսաառասպելական թագավորին (5-րդ դ. մ. թ. ա.)։*

...Հովիտներեն Տարոնի — *Տարոնը Մեծ Հայքի նշանավոր գավառներից մեկն էր, գտնվում էր Մամիկոնյան նախարարներին։*

Հայցայց Դրախտի — *Հայաստան աշխարհի Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի գավառի Աշտիշատ ավանում, որտեղ գտնվում էր Վահագնի մեհյանը։ Ըստ Փավստոս Բուզանդ պատմիչի, Գրիգոր Լուսավորիչը այդ մեհյանը փոխեց մայր եկեղեցի, այնտեղ սրբազան աղբյուրում մկրտեց Հայոց զորաբանակը։*

Այդ նույն գավառում կար Հացեկաց (հացիվ) անունով գյուղ, ուր ծնվել է Մաշտոցը։

Անա ճոման. — Հոմանի, տարփածու, սիրեկան։

Իրե վերջին Վանատնի — Հեթանոսական մեհյանի քրմապետ։

Այրիացաց ճաշտիշատիդ մեջ — Աշտիշատ ավանը Մեծ Հայքի Տարոն գավառում։ Աշտիշատում էին Վահագնի, Անահիտի, Աստղիկի նշանավոր հեթանոսական մեհյանները։ Քրիստոնեության շրջանում հիմնվեց են Մայր տաճարներ։ Աշտիշատում տեղի ունեցել կրոնական հայտնի ժողովներ։ Այնտեղ է թաղված Սահակ Պարթևը։

...Աստղերն Հարդգողին — Հարդագողի ճանապարհ անվանված Տիր Կաթին աստղաշերտը։ Ըստ հայոց առասպելի՝ Վահագնը աստծո գողացած հարդն է թափվել և դարձել նրա ճանապարհը։

ՎԻՐԱՎՈՐԸ (էջ 422)

Հայ-թաթարական կռիվներում առթիվ գրված — Հայ-թաթարական (ադրբեջանական) այս ընդհարումները տեղի են ունեցել 1905—1906 թթ.։ Մինչև 1918 թ. ադրբեջանցի, Ադրբեջան գոյություն չուներ, և Անդրկովկասի այդ տարածքի բնակիչները կոչվում էին Կովկասի թաթարներ, թուրքեր։

...Մեսիայի մ'ըսպասված — Մեսիա նշանակում է փրկիչ։ Այդպես են անվանում նաև Հիսուսին, որ դարձյալ նշանակում է փրկիչ։

ՀԱՎԻՎԸ (էջ 424)

Ա. Անառոնյան (1866—1948) — հայ գրող, քաղաքական գործիչ։

Որ Ոլիմպյան աստվածի... — Ոլիմպոս (Օլիմպոս), սար Հունաստանում, ուր բարձունքների բնակվում էին հին աստվածները։ Հնում երկար դարեր (մինչև մ. թ. ա. 394 թ.) օլիմպիական աստվածների պատվին Հունաստանում տեղի էին ունենում մրցաձևեր։ Հետագայում (1896 թվականին) այդ ավանդույթը վերականգնվեց և առաջին տեղի են ունենում օլիմպիական խաղեր, օլիմպիադաներ, խորհրդանիշ կրակը (լույսը) բերելով Հունաստանից։

ԱՆԱՆԱՏԻՒՐ (էջ 432) — Զոնված է Վանատուրին՝ հայ դիցաբանության մեջ պտղաբերության, այգեգործության, հյուրընկալության աստվածը։

Ծաղկամիսեն Միգաբեր — Ըստ հին հայկական անվանումների, գարնանից, ուղիղների ամսից մինչև աշուն, մեղ-մառախուղների ամիսը։

Կը ծրծրցնե. ծերակույտի անդամներ — Նկատի ունի բարձրաշխարհիկ դասի Հին Հունաստանում և Բյուզանդիայում երկիրը ղեկավարող ավագների խորհուրդը կոչվում էր ծերակույտ։

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲԱՂԱՆԻՔ (էջ 439)

Գանովայի Շնորհներ — Գանովա Անտոնիո (1757—1822), իտալացի նշանավոր քանդակագործ։

...այդ կիպերյան լուսեղեն արձաններում... — Կիպրոսի, հունական աստվածների մարմարակերտ արձանները։

ԳՐԳԱՆՔ (էջ 442)

Հարդարեցի մեր անկողինն Հիմենի — Ամուսնական առագաստ-անկողին իմաստով։ Հիմենի կամ հիմենյան արտահայտությունը մնացել է Աֆրոդիտեի օգնականներից մի՝ պատանի աստված Հիմենոսի անունից։ Ըստ առասպելի, նա ամուսնացած զույգերին շնորհում էր երջանկություն, նրա անունով էլ կոչվում էր նորապսակների առագաստը։

ԲԵԳԱՍ (էջ 448)

Պեգաս — Ըստ հունական դիցաբանության թևավոր ձի, որի սմբակի հարվածից լեռան վրա աղբյուր է բացվել։ Ընդհանրապես Բեգաս անվանումը օգտագործվել է որպես բանաստեղծական ներշնչանքի խորհրդանիշ։ Թևավոր Պեգասն է, որ ըստ ավանդության կարող է բանաստեղծին իր մեջքին առած հասցնել Մուսաների լեռը՝ Պառնաս։

Ընկեր Մուրատին և իր ձիուն կայծակնավազ — Մուրատ (Համբարձում Բոյաջյան) (1859—1915) — հնչակյան կուսակցության նշանավոր գործիչ, հայդուկ, մարտիկ։ Ժամանակակիցները պատմում են նաև նրա «Աստղիկ» անունով հրաշալի ձիու մասին։ Վարուժանը մտերիմ էր Մուրատի հետ (Սեբաստիայում), Ա. Պատրիկը հիշում է, որ մի անգամ նրան տեսել է Մուրատի ձին հեծած, իսկ մի քանի շաբաթ հետո Վարուժանը լույս է ընծայել «Բեգաս» բանաստեղծությունը։

ՀԱՐՃԸ (էջ 455)

Գոնմի այուժեն, մինչև Նազենիկին փախցնելու առաջին պահը, ինչպես բնաբանն է ցույց տալիս, Վարուժանը վերցրել է Մ. Խորենացու «Հայոց պատմություն»-ից։ Ըստ Խորենացու Տրդատը Բագրատունիների ցեղից ոմն մեկն էր, այրենքն ոչ հայտնի, որին Հայոց Տիրան թագավորը (մ. թ. ա. 2-րդ դար) փեսայացրել էր, կնության տալով իր ծրանյակ դստերը և դարձրել իշխան։ Բայց կինը արհամարհում էր նրան, ծաղրում որպես հասարակ ծագումով մեկի, և Տրդատը վրեժ է լուծում նրանից. ձեծում է, փտրում նրա մազերը և թագավորի զայրույթից խուսափելու համար՝ փախչում է Մարաստանի կողմերը, ճանապարհին հյուրընկալվելով Սյունյաց Բակուր իշխանի տանը, ուր և ինչույքի պահին, հավանելով Նազենիկին, նախ պահանջում է նրան Բակուրից, ապա ինքնիմության հանդիպելով՝ փախցնում է նրան, բարեհաջող անցնելով սահմանը։

Տրդատին հետապնդելու և հետագա շարունակությունը Վարուժանը ինքն է ստեղծել՝ իր գեղագիտության սկզբունքով։

Մարաստան — Մարերի երկիրը, Հայաստանի հարևանը հարավ-արևելքում։

Բագոսը՝ եզ մ'որբեռվ պսակելու զրաղած — Բաքոսին (տես «Կռվի երթ»-ի ծանոթագրությունը) նկարիչները պատկերել են նաև եզանը որթերով զարդարելու պահին։

Սյունյաց գավառներուն — Հայոց պատմական Սյունյաց աշխարհը՝ Սյունիքը, ներառում էր իր մեջ Սևանի ավազանը, Վայոց ձորը, Զանգեզուրը և շրջակա այլ տարածքներ և պատմական Հայաստանի, Մեծ Հայքի իններորդ մեծ նահանգն էր։

Վանատուրին սերմնաճոռդ և տոփածո Աստղիկին — Տես «Կռվի երթ» և «Վանատուր» բանաստեղծությունների ծանոթագրությունները։

Անոր ձեռքերն Ապողոն... — Ապոլլոն՝ Զևսի որդիներից, արևի, լույսի, արվեստների, փայտատության աստվածը (հունական), աստվածների մեջ ամենագեղեցիկը, այդտեղից էլ ապոլլոնյան գեղեցկություն արտահայտությունը։

...ան Կիպերյան Աստղիկին է — Նկատի ունի Կիպրոսում պաշտվող Աֆրոդիտեին, որ իր շնորհներով նույնանում է մեր Աստղիկին։

Տիոնիսյան Բազիճին... — Դիոնիս, Դիոնիսոս, նաև Բաքոս (տես «Կռվի երթ»-ի ծանոթագրությունը)։

Բավական է լի գավաթ մը Մյունիխի գարեջուր — *Մյունիխ (Մյունխեն), գերմանական քաղաք, հայտնի նաև իր գարեջրով։*

Սորեց զանոնք Արեսն արդընկեց *(կամ արդընկեց՝ տեգ, գեղարդ նետող)*—*Արեսը հունական դիցաբանության մեջ պատերազմի աստվածն էր, Զևսի և Հերայի որդին։*

...Գիշերվան մեջ Արամազդ...— *Արամազդ՝ աստվածների աստվածը՝ ամենազոր ու ամենահզորը պարսկական դիցաբանության մեջ, ընդունված էր նաև հայ դիցաբանության մեջ։*

ԼՈՒՅՍԸ (էջ 474)

Ռիկ-վետա — *Տես Սիամանթոյի «Դյուցազներեն» շարքի բնաբանի ծանոթագրությունը։*

Աստվածային Ակնին է— *Ագնի՝ կրակի աստվածը հնդկական դիցաբանության մեջ։*

Տանդեներն ու եռմերները եկա— *Դանթե Ալիգերի (1265—1321), իտալացի հանճարեղ բանաստեղծ, «Աստվածային կատակերգության» հեղինակը։ Հոմերոս (մ. թ. ա. 12—7-րդ դարեր, ըստ տարբեր կարծիքների) հույն հանճարեղ դյուցազներգակ, «Իլիական» և «Ոդիսականի» հեղինակը։*

Նշխարին պես — *Նշխարքը հատուկ եփված հաց է, որ եկեղեցում փոքրիկ կտորանքներով բաժանում են հավատացյալներին իբրև հաղորդություն։*

ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐՍ (էջ 481)

Ֆերրարա — *իտալական բիրդաքաղաք։*

Լորտ Պայրն — *Լորդ Ջորջ Բայրոն (1788—1824), անգլիացի մեծ բանաստեղծ։*

Մետեխի բանտին պատին...— *Յարիզմի ժամանակ Թիֆլիսի նշանավոր բանտը։ Այնտեղ բանտարկվել են նաև հայ մտավորականները, նաև Ավետիս Ահարոնյանը, որի նվիրված է բանաստեղծությունը։ Այդ բանտին «լավ ծանոթ» էր լեգենդար Կամո՝ Սիմոն Տեր-Պետրոսյանը։*

ԴԱԴԱՐ (էջ 484)

...Ուրկե Դենպետն...— *Զրադաշտական և մահմեդական կրոնապետը։*

Խորհրդավոր ըՍփինքսին— *Սփինքս, Սֆինքս՝ առասպելական կենդանի՝ ասիական մարմնով և մարդու գլխով։ Հին Եգիպտոսում կերտվել են Սֆինքսի հսկա արձանները։ Իմաստության խորհրդանիշ է համարվել։*

Մռայլ Ելտրզին — *Ելտրզ-Քյոշկ՝ սուլթանների պալատը Թուրքիայում։*

Վատիկանի կամարներն, ճողաթափերը Պապին — *Վատիկանը հռոմեական կաթոլիկ եկեղեցու քաղաքական, վարչական և գաղափարական կենտրոնն է։ Հռոմի նրանց առաջնորդի՝ Պապի նստավայրը։*

ԵՓՐԵՄ (էջ 490)

Եփրեմ — *Եփրեմ Խան (Եփրեմ Դավթի Դավթյան, 1868—1912), հայ ֆիդայի։ Փախչելով Պարսկաստան, դարձել է 1905—1911 թթ. իրանական հեղափոխության ազգային առաջնորդներից մեկը և սահմանադրության կողմնակիցների հաղթանակից հետո իրանական կառավարության կողմից նշանակվել զինված ուժերի հրամանատար։ Ստացել Սարդարի (գերագույն հրամանատարի) աստիճան, պարգևատրվել ոսկե դազարդ ոսկյա սրով։ Զոհվել է ճակատամարտում։*

Կարիպալտին Հռոմիեն է և Բոնաբարդ՝ Ոնիրին — *Կարիպալտի (Գարիբալդի Ջուզեպե (1802—1882), Իտալիայի ազգային հերոս, ազատագրական շարժման ժողովրդական առաջնորդ։ Բոնաբարդ—Նապոլեոն Բոնապարտ (1769—1821), Ֆրանսիայի կայսր և նշանավոր զորավար։*

Հազկերտներու Ոնիրին — *Հազկերտ 2-րդ, պարսից արքա 5-րդ դարում (Վարդանանց ապստամբությունը Հազկերտի դեմ էր)։ Նկատի ունի ընդհանրապես պարսից արքաներին և հայերի նկատմամբ նրանց ասիմիլացիոն քաղաքականությունը։*

Հաֆրզներու երկիրն ճեգ— *Հաֆրզ Շամս էդդին (1325—1394), պարսից մեծ բանաստեղծ։*

Եվ Անրիմանն՝ երկիներեն — *Ջարիքի, չարության աստվածը զրադաշտական կրոնում։*

Իսպահանի լիներուն — *Սպահան, քաղաք Պարսկաստանում։*

ՄԱՏՅԱՆՆ ԱՀԱ (էջ 493)

Հովհաննես Պալյան *(1876—1926)*—*թարգմանիչ, գրասեր, մեկենաս, որ հոգացել է նաև «Հեթանոս երգեր» գրքի տպագրության ծախսերը։*

Մեսալին Մ'նրաշյա.— *Վալերիա Մեսալինան Հռոմի Կլավդիոս կայսեր անբարոյական ու փառատենչ կինն էր, որին սպանեցին անբարոյականության համար։*

Պոմպեի գիշերներ — *Հռոմի Պոմպեյ քաղաքը, որ կործանվեց հրաբխի լավայի տակ, հայտնի էր որպես երկրի մեծամեծների գիշերային զվարճատեղի։*

ՈՎ ԴԱՐ, ՈՎ ԴԱՐ (էջ 529)

...Եփրեմի ասպետական քաջ ոգի — *(տես «Եփրեմ» բանաստեղծության ծանոթագրությունը)։*

...Կը սասանի Սասանյաց տունն — *Իրանի Սասանյան թագավորական դինաստիան. նկատի ունի ընդհանրապես նորագույն պարսկական թագավորներին։*

Էնեումանի շեմին վրա...— *Իրանում 1905—1911 թթ. հեղափոխության շրջանում թարված հեղկոմը կոչվում էր Էնջումեն։*

Հրեղեն պատյան կը գնե Դարեհներուն գահին վրա— *Նկատի ունի պարսից Դարեհ ընդհանրապես հին ու նոր արքաներին ու գահակալներին և դարասկզբի 1905—1911 թթ. հեղափոխական շարժումները ընդդեմ գահակալների։*

Կ'Ստամբոլի— *Ստամբուլ, Կ. Պոլիս։*

Գոգն ու Մագոգն — *Կտակարանում Գոգն ու Մագոգը հսկաներ էին, որ կռվում էին հրեաների դեմ։*

Ֆինլանտեն — *Ֆինլանդիա։*

Պրոմեթեներ — *Պրոմեթևսը (Պրոմեթեոս), որ ըստ հունական դիցաբանության, կրակը գողանալով աստվածներից տվեց մարդկանց, նրանց սովորեցրեց արհեստներ ու գրագրություն, պատժվեց Զևսի կողմից, գամվելով Կովկասյան լեռնաշղթայի ժայռերից մեկին։*

Սպանիան — *Իսպանիան։*

...Ֆերրերի արյունթաթախ դու ոգի...— *Ֆրանցիսկո Ֆերրերը, որպես հանրապետական, 1909 թ. մահվան դատապարտվեց Իսպանիայի Ալֆոնս 13-րդ թագավորի կողմից։*

Կուատալուպ կը կարմրի — *Անտիլյան կղզիներից մեկը։*

Անդալուզի աղջիկները— *Անդալուզիա՝ Իսպանիայի պատմական մարզերից մեկը։*

...Նոի աշխարհացուց մռայլ ՈԳԻ...— *Ըստ Աստվածաշնչի Նոյը շարության ուժն Քրիստոսի հակառակորդը, որ գալու է մի օր, պայքարելու է Քրիստոսի դեմ, սակայն պարտվելու է և աշխարհում հաստատվելու է արդարության թագավորությունը։ Նոյ էն*

անպանել եկեղեցու դեմ պայքարող ուժերին, դաժան թագավորներին, աշխարհը ավերողներին։ Նեռը հզոր չար ուժի խորհրդանիշն է։

Կ'ըլլա Հռովմ նոր Սոդոմ, Երուսաղեմ նոր Գոմոր — Ըստ Աստվածաշնչի՝ Սոդոմ և Գոմոր քաղաքները աստված կործանեց նրանց բնակիչների անբարոյական վարքի համար։

...Սավոնարոլի նեստ Հոգին...— Հերոնիմոս Սավոնարոլային, որպես կաթոլիկ եկեղեցու հակառակորդ, Պապի հրամանով 1496 թ. այրել են խարույկի վրա Ֆլորենցիայում։

Ով Պռունո...— Ջորդանո Բրունո (1548—1600), իտալացի աշխարհահռչակ առաջադեմ, փիլիսոփա։ Հռոմի ինկվիզիտորները նրան մեղադրեցին հերետիկոսության մեջ և այրեցին խարույկի վրա, ստիպելով հրաժարվել իր գաղափարներից։

...Հասունեներու կեղծ ուրարն...— Նկատի ունի Անտոն Հասունյանին՝ հայ կաթոլիկ եկեղեցական հետադեմ գործիչ (1809—1884). հայտնի է, որ Վատիկանի դրդմամբ նա կատաղի պայքար է մղել էջմիածնի կաթողիկոսի և Պոլսի պատրիարքարանի, հայ առաջադեմ մտավորականների կողմից ձեռնարկված լուսավորչական շարժման դեմ։ Նկատի ունի ընդհանրապես հասունյանարնույթ մարդկանց։

Եվ հիշատակն արյունոտ Գալվինեներու...— Ժան Գալվինը (Կալվին) 16-րդ դարում Հռոմեական կաթոլիկ եկեղեցու դեմ ուղղված շարժման հիմնադիրն է։

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ (ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ) (1885—1915)

Մնվել է Պոլսին մերձակա Սիլիվրի գյուղաքաղաքում։ Ավարտել է Պոլսի Պերպերյան վարժարանը 1905 թ., Շվեյցարիայի Լոզան քաղաքի համալսարանի բժշկական մասնաճյուղը 1911 թ.։ Երեք տարի որպես բժիշկ աշխատել է Լոզանում, իսկ 1914 թվականից՝ Պոլսում։ 1915 թ. ձերբակալվել է և աքսորավայրում գազանաբար սպանվել օգոստոսի 26-ին (Վարուժանի հետ միասին)։

Կենդանության օրոք Սևակը հրատարակել է մեկ գիրք՝ «Կարմիր գիրքը» (Կ. Պոլիս, 1910), բայց մամուլում հանդես է եկել հաճախակի, սկսած 1907 թվականից, բանաստեղծություններով, ապա բժշկական բնույթի գեղարվեստական զրույցներով՝ «Բժշկին գիրքեն փրցված էջեր» խորագրի ներքո։

Ցամանու Սևակի ստեղծագործությունները հրատարակվել են մի քանի անգամ։ Երևանում Սևակի երկերը լույս են տեսել երեք անգամ. 1955 թ., 1981 թ.՝ «Հայ դասականներ» մատենաշարով՝ Որբերյանի, Թեքեյանի ու Չարիֆյանի հետ մեկ գրքում և 1985 թ., որը բոլոր մյուս ժողովածուներից առավել ամբողջական է։

Սևակի պոեզիան այստեղ նպատակահարմար գտանք ներկայացնել թեմատիկ բաժանումով, չորս շարքի մեջ. «Սիրո գիրքը», «Խոհերի գիրքը» (բնության ու մարդու մասին խոհերը), «Վերջին հայերը» (հայրենական ցավի դրսևորումներն ու ազգային ճակատագրի շուրջ մտորումները) և «Քառսը» (սոցիալական բնույթի հարցադրումները)։ Ժամանակակիցների հավաստմամբ «Կարմիր գիրքը» ժողովածուից հետո Սևակը ծրագրել է մամուլում տպագրված բանաստեղծություններից կազմել և լույս ընծայել նոր ժողովածուներ՝ «Սիրո գիրքը», «Վերջին հայերը» և «Քառսը» խորագրերով։ Հենց այդ վերնագրերն էլ մենք պահպանել ենք, առանձնացնելով ևս մեկ շարք՝ մեր կողմից բնորոշված «Խոհերի գիրքը» պայմանական անվանումով։

ԿԱՐԱՊՆԵՐԸ (էջ 541)։ Գրել է 1907-ին, Շվեյցարիայում, Ալպյան լեռների բնապատկերի, Լեման լճի հրաշք գեղեցկությամբ ներշնչված։

Ժյուրաներու ստվերը լուռ կը մրափե — Ժյուրան լեռնաշղթա է Ֆրանկո-շվեյցարական սահմանի մոտ։

ՆԱՄԱԿԸ (էջ 549)

Վարը Ռոնն էր...— Ռոն, գետ Շվեյցարիայում, սկիզբ է առնում Լեման լճից։

ՈՎ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ (էջ 564)

Նվիրել է «Կիլիկիո արյունին», որովհետև գրել է 1909 թ. Ադանայում (Կիլիկիա) և Հալեպում կազմակերպված հայկական ջարդերի լուրերն ստանալու անմիջական տպավորությամբ։ Հայրենիքից հեռու գտնվող ուսանող-բանաստեղծի հուզումներն ու ցասումը դրսևորվել են նաև այդ օրերին գրված «Կիլիկյան երգեր» շարքի բանաստեղծություններում, «Կարմիր գիրքը» ժողովածուի «Ջարդին խենթը» պոեմում, նամակներում։ Այդ ջարդերի ժամանակ զոհ դարձան շուրջ 30 000 հայեր։

ՎԵՐՋԻՆ ՕՐՈՐ (էջ 572)

...Հռոմի էզ գայլին պես

Նոր Հռոմուլոս մը դիեցնել ստիմեխ — Ակնարկում է Հռոմի հիմնադիր Հռոմուլոսին։ Ըստ առասպելի Ալբա Լոնգա քաղաքի գահը զավթած Ամուլիոսը կարգադրում է գետը գցել գահաժառանգ երկվորյակ եղբայրներին՝ Հռոմուլոսին և Հռեմոսին։ Բայց եղբայրները փրկվում են և նրանց կաթ տալով մեծացնում է Գայլը։ Հետո նրանք իրենց փրկված տեղում հիմնում են քաղաք, որ Հռոմուլոսի անունով կոչվում է Հռոմ, և որի առաջին թագավորը դառնում է Հռոմուլոսը։

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ (էջ 576)

Ե. սրբ. Դուրյան բանաստեղծին — Եղիշե եպիսկոպոս Դուրյան (1860—1930), բանասեր, բանաստեղծ, կրոնական գործիչ։ Պետրոս Դուրյանի եղբայրը։

Անմահ Պապիլոն լռեց ճավիտյան,
Աթենքեն՝ ավեր, Մեմփիսեն՝ ավազ,
Հռովմեն ապ մ'անյուն մնաց ճազիվճազ...—

Պապիլոն—Բաբելոնն է, Մեմփիսեն՝ հին եգիպտական նշանավոր քաղաք։
Ասալեն մինչ Ալբ, ու մինչ Ափրիկե— Ուրալից մինչև Ալպեր ու մինչև Աֆրիկա։

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ (էջ 584)

Թրուպատուրներ — Թափառական երգիչ-բանաստեղծները միջնադարյան Ֆրանսիայում։

Թրուպատուրն Հոմեր— Հոմերոս՝ հույն հանճարեղ դյուցազներգակ (12—7-րդ դարերի միջև մ. թ. ա.)։

Գողթան թրուպատուրներ — Նկատի ունի Գողթան երգիչներին, գուսաններին, որ հիշատակում է Խորենացին, գրի առնելով պատառիկներ նրանց երգերից։

Բոյի գինեվաճառ այգեստաններեն — Բո կամ Պո, քաղաք Ֆրանսիայում, գինեգործության շրջան։

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ (1878—1945)

Մնվել է Կ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում։ Սովորել է Նեքսիայան, Պերպերյան ու Կեդրոնական վարժարաններում։ 1894-ից տարբեր պաշտոններ է վարել Անգլիայի, Ֆրանսիայի, Եգիպտոսի առևտրական հիմնարկներում։ Ապա եղել է դպրոցական հոգաբարձության անդամ, ուսուցիչ, տեսուչ Պոլսում, Մարսելում, Կահիրեում։ Եղել է Ազգային երեսփոխանական ժողովի անդամ, երեսփոխան։ 1915-ին Եգիպտոսում էր, պատերազմից հետո վերադարձել է Պոլիս, 1922-ին փախել է Բուլղարիա, ապա անցել Հունաստան, Ֆրանսիա, վերջնականապես հաստատվել Եգիպտոսում, ուր և վախճանվել է։

Երկար տարիներ զբաղվել է խմբագրական լրագրական աշխատանքով։ Խմբագրել ու հրատարակել է «Շիրակ», «Ժողովուրդին ձայնը», «Բարձրավանք», «Արև» և այլ պարբերականներ ու թերթեր։

Կենդանության ժամանակ լույս է ընծայել «Հոգեր» (Փարիզ, 1901), «Հրաշալի հարություն» (Կ. Պոլիս, 1914), «Կես գիշերեն մինչև արշալույս (Փարիզ, 1919), «Սեր» (Փարիզ, 1933), «Հայերգություն» (Կահիրե, 1943) և «Տաղարան» (Կահիրե, 1944) բանաստեղծությունների ժողովածուները։

Նոմահու Կահիրեում հրատարակվել է Թեքեյանի «Ամբողջական երկերը» տասնմեկ հատորով, որն ընդգրկում է հեղինակի չափածոն, արձակը, դրամատուրգիան ու թարգմանությունները։

Հետագա տարիներին ինչպես սփյուռքում, այնպես էլ Երևանում մի քանի անգամ լույս են տեսել Թեքեյանի պոեզիայի ժողովածուները։

Այստեղ նպատակահարմար գտանք Թեքեյանի բանաստեղծության հատընտիրը ներկայացնել թեմատիկ բաժանումով՝ «Սեր», «Հաշվեհարդար» (կյանքի մասին խոհերը) և «Հայերգություն» խորագրերով (օգտագործելով Թեքեյանի երկու գրքերի և մեկ բանաստեղծության վերնագրերը)։

ՀԱՆԸՄԸ (էջ 597)

Սթեցնելով Ոսկեղջյուրն...— *Ոսկեղջյուր, ծովախորշ Բոսֆորի նեղուցի եվրոպական ափի հարավում, որի ափին է Ստամբուլը (Կ. Պոլիս)։*

ԱՏԵՆՈՔ (էջ 602)

Ինչպես Զևսն ատենոք Պրոմեթեն ապստամբ՝ զայն կը զարներ շղթայի...— *Տես Վարուժանի «Ով դար, ով դար» բանաստեղծության ծանոթագրությունը։*

ԵՍ ԵՐԱԶԻՍ ՏԻՐԵՑԻ (էջ 605)

Ինչպես տիրեց Շամիրամ իրմե փախչող Արային — *Ըստ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի, Ասորեստանի թագուհի Շամիրամը ցանկանալով հայ Արա Գեղեցիկ արքային և չկարողանալով տիրել նրան, պատերազմում է նրա դեմ և մարտում գտնվում Արայի մարմինը դնելով մի առանձին տեղ, խնդրում է աստվածներին, որ արալեզ լիլը լիցնելով կենդանացնեն Արային։*

Ինձ կը թվի թե ապրած եմ Էլլադայի մեջ — *Էլլադա—Հելլադա—Հունաստան։*

Սոկրատին պես — *Սոկրատես (469—399 մ. թ. ա.), հույն մեծ փիլիսոփա։*

Ակրոպոլի ոտքին ներքև—*Ակրոպոլիս՝ հին հունական քաղաքների բարձրադիր մասը, ուր կառուցվում էին քաղաքի գլխավոր շինությունները։*

Այստեղ խոսքը Աթենքի ակրոպոլիսի մասին է։

ՋԱՎԱԿՍ (էջ 623)

Ջավկի մը շնորհն անգամ, ով տեր, զլացար ինձի ընդմիշտ— *Թեքեյանը ընտանի և զավակ չի ունեցել, ամբողջովին նվիրվել է ազգային, գրական-հասարակական գործունեության։*

ՄԵԿ ՀԱՏԻԿՍ (էջ 626)

Կուսակցական հողի վրա Թեքեյանի թշնամիները մի անգամ գիշերով հարձակվում են նրա վրա և վիրավորում։ Թեքեյանը զրկվում է մեկ աչքից։ Այս բանաստեղծությունը գրուց է իր մյուս՝ «մեկ հատիկ» աչքի հետ։

ԳԻՐՔԵՐ (էջ 630)

Օր մը երբ որ Հրատեն...— *Հրատ՝ Մարս մոլորակը։*

ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՆԹԵՂԸ (էջ 645)

Ըստ ավանդության, երբ Գրիգոր Լուսավորիչը աղոթելիս է լինում Արագած լեռան կատարին, նրան գիշերը լուսավորում է մի կանթեղ, առանց պարանի կախված երկնքից։ Իրոք թե այդ կանթեղը մինչև այժմ էլ կա, միայն թե տեսանելի է արժանավորներին և նրա գոյությանը հավատացողներին։

ՀՐԱԶԴԱՆ (էջ 646)

...Հովվատունը հայոց— *Երևանի եկեղեցին՝ Զանգվի ափին։ Ըստ եկեղեցու՝ հավատացյալ ժողովուրդը հոտն է, քահանաները՝ նրանց հովիվները, եկեղեցին՝ քահանա-հովիվների տունը։*

ՅՈՒԻՏԻԱ (էջ 649)

Սուետիա — *Սուետիա կամ Սվեդիա, շրջան Անտիոքի գավառում, Մուսա լեռան շրջակայքում։ Սվեդիայի հայկական վեց գյուղերի բնակիչները, շուրջ 6000 մարդ, 1915-ի տեղահանության ժամանակ ըմբոստացան, բարձրացան Մուսա լեռ և 40-օրյա հերոսական պաշտպանությամբ փրկվեցին ջարդից։ Նրանք դիմադրել էին նաև 1895 թ. ջարդի ժամանակ։*

ՆԵՐԿԱ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ (էջ 664)

Դիմում է Խորհրդային Հայաստանին։ Շարքը գրել է 30-ական թվականներին։ Խորհրդային Հայաստանին է նվիրված նաև «Հոն հեռուն, ահա» բանաստեղծությունը։

ՄԱՏԹԵՈՍ ԶԱՐԻՖՅԱՆ (1894—1924)

Ծնվել է Կ. Պոլսի Կեստիկ Փաշա թաղամասում։ Սովորել է Պարտիզակի ամերիկյան վարժարանում, Ռոբերտ Գոլեճում, ապա Պերպերյան վարժարանում, որն ավարտել 1913 թ.՝ Պսակավոր արվեստից տիտղոսով, և մեկնել Ադանա՝ ուսուցչական աշխատանքի։ Հիվանդության պատճառով 1914-ին անցել է Լիբանան, ապա վերադառնալով՝ զորակոչվել է Թուրքական բանակ։ Ենթասպաների դպրոցում սովորելիս ընդդիմության համար ռազմական ատյանը նրան դատապարտել է աքսորի։ Ազդեցիկ միջամտությունների շնորհիվ վճիռը փոխվել է երկարատև կալանքի, իսկ մի քանի ամիս հետո բանտից ազատվելով՝ ուղարկվել է զինվորական հիվանդանոց, որպես հիվանդապահ։

Պատերազմից հետո որպես անգլիական բանակի թարգմանիչ մեկնել է գավառները՝ մասնակցելու հայության բեկորների հավաքման գործին։ 1919—21 թթ. կրկին անցել է մանկավարժական աշխատանքի, Պոլսի Պերպերյան վարժարանում դասավանդելով անգլերեն լեզու և մարմնակրթանք (ֆիզկուլտուրա) առարկաներ։ Չնայած որ պատերազմից առաջ նա կոփված մարդիկ էր, նավասարդյան խաղերի ժամանակ դարձել էր հաղթող, սակայն թոքերում բուն դրած ախտը գնալով խորանում է, և 1922-ից ընկնում է անկողին։ Մահացել է 1924-ի ապրիլին։

Զարիֆյանը բանաստեղծություններով հանդես է եկել մամուլում միայն զինադադարից հետո։ 1921 և 1922 թթ. լույս է ընծայել բանաստեղծությունների երկու ժողովածու՝ «Տրտմության և խաղաղության երգեր», «Կյանքի ու մահվան երգեր»։ 1922-ից հետո մամուլում լույս են տեսել նրա ևս մի քանի բանաստեղծությունները։

1956 թ. Բեյրութում բանաստեղծի քրոջ՝ արձակագրուհի Սիրան Սեզայի և բանաստեղծ Վահե Վահյանի շնորհիվ լույս է տեսել Զարիֆյանի «Ամբողջական գործեր» ծավալուն հատորը, ուր ամփոփված են նրա տպագրված ու անտիպ բանաստեղծությունները, օրագրային ու գեղարվեստական արձակ էջերը, նամակները։

1964 թ. Երևանում լույս է տեսել Զարիֆյանի բանաստեղծությունների ժողովածուն (ընտրված)։ Ըստ «Ամբողջական երկերի» Զարիֆյանը ներկայացվել է նաև «Հայ դա-

սականներ» մատենաշարով (1981 թ.) Ռ. Որբերյանի, Ռ. Սեակի, Վ. Թեքգյանի հետ մեկ գրքում։

Այստեղ Զարիֆյանի բանաստեղծությունների այս հատընտիրը ներկայացված է նրա երկու ժողովածուների խորագրերի տակ։ Վերջին հինգ բանաստեղծությունները այդ երկու ժողովածուների մեջ չեն մտել՝ հետագայում գրված լինելու պատճառով։ Նպատակահարմար գտանք դրանք զետեղել երկրորդ՝ «Կյանքի ու մահվան» խորագրով շարքի վերջում։

ԵՐԿՈՒ ԱՎԵՐԱԿՆԵՐ (էջ 672)

Ես կերթայի Բաալբեկի ավերակները դիտելու— Բաալբեկ, քաղաք Լիբանանում։ Աշխարհի հնագույն քաղաքներից։ Պահպանվել են մեր թվարկությունից առաջ կառուցված տաճարների ավերակներ, հնագույն արձանագրություններ։

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ալելուն — ալիքները
Ալի, ալվույն — ալիք, ալիքի
Ալուցք — խորություն, խորք
Ալփաբետա — Ալֆաբետտա, այբուբեն
Ախոյան — չեմպիոն, հաղթող
Ակաղձու — լիուլի, լիքը
Ականողիք — աչքեր
Ակատ — ագաթ, թանկարժեք քար, նաև՝ փոքրիկ, անշուք, մակուկի, նավակ
Ակընկոր, ակընկորած — թեքված, հակված
Աղամող — ծուռոմուռ, շեղված
Աղածրի, աղարծի — մատղաշ, մատաղահաս
Աղապատանք — գուրգուրանք, սրտակցություն
Աղբերք — աղբյուրներ
Աղբյուս — աղբ, աղբավայր
Աղորիք — երկանք, շրաղացքար
Աղտաղտուկ — շատ աղ պարունակող, աղահամ տվող (հող, ջուր)
Աղփուն — թույլ, տկար
Ամայք — ամայի վայր, քանդված, լքված բնակավայր, վայր
Ամբարձիկ. — վեր բարձրացած, վեր ձգված, բարձր
Այեր, այերք — օդը, երկինքը, մթնոլորտը
Ալլուփ — էլի, դարձյալ
Անարգիլ — վիթխարի, անճոռնի մեծ
Անգայտ, անգայթ — նոսր, ցանցառ, նուրբ
Անդուման — հանկարծակի, շուտափույթ, շտապ
Անդեղյա — դեղթափ, դեղ՝ ցավի և թույնի դեմ
Անդեորդ, անդեորդի — հանդի, դաշտի որդի, հովիվ, տավարած
Անդոհ, անդոհական — մտատանջություն, վրդովմունք, մտատանջող
Անդրիանդի — անդրի, արձան
Անդուլը — հանգիստ, խաղաղ
Անեղ — չեղած, չստեղծված, հրաշակերտ
Անթրոց — թոնրի, հնոցի կքակիքառնիչ
Անժույժ — անհամբեր, անժուժկալ
Անկբակիծ — միանգամից

Անձկավ — կարոտով, փափագով, անձկությամբ
Անձնդյուր — իր հանդիստը փնտրող, փափկակենցաղ, ուշադիր ինքն իր նկատմամբ
Անճառելի — անսպասելի, անպատմելի
Ինմենկիկ — մենակ, անտեր
Աննիազ — անկարոտ
Անոպա — կոպիտ, բիրտ
Անոսր — նոսր, ցանցառ, թափանցիկ
Անտիական — հին, հնագույն, անտիկ
Առհավություն — ատավիզմ, վաղեմիություն, նախնիների հատկանիշները ձեռք բերելը
Ապաշավ — զղջում, ափսոսանք արածի համար
Ապշոպյալ — շփոթված, հուզված, խառնաշփոթություն
Ասղանի — կարելու թել, դեբձան
Աստեն, աստանոր — այս, այստեղ, այս վայրում, ներկա, այժմյան
Ասություն (ներ) — խոսք, ասվածք
Ավասիկ — ահավասիկ
Ավոտ — առավոտ
Ատակել — կարողանալ
Ատոկ, ատոք — հասուն, լցված հասկ
Արաղչին — թասակ, գլխարկ
Արդրնկեց, արդնրնկեց — տեգ, գեղարդ նետող
Արեկ — արի, եկ
Արիշ — խշմար, խաղողի որթի նեցուկ, նեցուկներ, թառմա
Արծպա — օճառախոտ
Արյունտողիք — արյունախառն թուք
Արտոսր — արցունք
Արևմարք — արևամուտ, մայրամուտ

Բ

Բաբե — զարմանքի արտահայտություն
Բագին — զոհասեղան հեթանոսական տաճարում
Բադիլ — փաթիլ, նուրբ հյուսվածք
Բադրոն — տախտակե երկար նստարան
Բալ — մեգ, մառախուղ
Բալածիգ — մեգոտ, մշուշոտ
Բարան — հրաբխի խառնարանը
Բարբարական — թափառական, աստանդական
Բարձեր — վերցրել
Բարսմունք — ծառի բարակ ճյուղերից կապված փունջ, որը մոգերը բռնում էին արարողության ժամանակ
Բաթունակ — ծառի բնից ծլած, շիվ, կանաչ շյուղ (նաև՝ խաղողի որթի շիվ)
Բուծանել — բուծել, բազմացնել

Բունծ — հողի կոշտ
Բուրյան — բուրավետ, հոտավետ, բուրող

Գ

Գաղիլ — դեզ
Գանգյուն — արձագանք
Գեմ — գեթ, գոնե
Գի, գիհի — փշատերև թուփ, որի պտուղները գործածում են իբրև խունկ
Գիրգ — փափուկ, քնքուշ
Գլել — գլորել, հոլովել, պտտեցնել
Գոգ — ծոց, գիրկ
Կոգած — կորացած, ներս ընկած, գոգավոր
Գոլ — լինել
Գոռեխ — իշամեղու
Գռիհ, գռեհ — փողոց՝ խուլ, կեղտոտ
Գուլ—բութ, ոչ սուր, նաև՝ բթամիտ
Գուռ — ծնկների ծալք
Գուպար —կռիվ, մենամարտ, մրցություն

Դ

Դաբիր — սրբարան, աղոթարանի ներսում սուրբ տեղ
Դալ — խիժ, ծննդկանի կամ նոր ծնած անասունի առաջին օրերի կաթը, նաև՝ այդ կաթը եփված վիճակում
Դահամունք — նվեր, ընծա, տուրք
Դահանակ — կանաչ ու դեղին ընտիր քար
Դաշխուրան—թաս, կոնք
Դաշտորա — դաշտեր, հանդեր
Դաստապան — թրի կոթ
Դաստառակ — թաշկինակ, մաքուր կտավից երեսսրբիչ
Դարպաս — պալատ, շքեղ շինություն
Դափր, դափրել — ձիու ոտքի զարկն ու գետին փորելը
Դերան — եկեղեցական
Դիաց, դիհաց — կողմից, կողմերից
Դիրտ — մրուր, նստվածք
Դիք — հին աստվածները
Դըդչահոս — աղմուկով հոսող, բարձր խշշացող, որոտացող
Դընդղնով — ծփանքով, ալեկոծումով
Դծպհի — անճոռնի, ատելի
Դլփին — դելֆին, ծովային կենդանի
Դժխո — իշխող կին, թագուհի, տիկնանց տիկին
Դուլթ — արշավ, խուռներամ, գրոհ
Դրացենակ — դրացի, հարևան

Ե

Եբենոս — ծառատեսակ, ամուր, սև փայտ ունեցող
Եղիճ — եղինջ, փշախոտ
Եղկ — գաղջ, գոլ, տաքուկ
Եղնորդ — եղնիկի ձագ
Եղտյուր — բուսականությամբ առատ, չրարբի տեղ
Երախայրի, երախայրիք — առաջին պտուղ, առաջին ստեղծագործություն, առաջին վաստակ
Երագ— արագ, շտապ
Երաստան — նստուկ, նստատեղ
Երետ — տվեց (տալ բայի անցյալ կատարյալ ձևը)
Երբուծ — լանջամիս, կրծքամիս

Զ

Զակատել — բաղձալ
Զահանդակ — սարսափած, զարհուրած
Զամբուռ — իշամեղու
Զանակ — ոսկու և արծաթի կտոր
Զաղու — հեզ, խոնարհ, քնքուշ
Զաղփաղփ, զաղփուն — խախուտ, խարխլած
Զառքաշ — ոսկեթել, ոսկեկար հանդերձ
Զասրքն — ոչխարի խուզված, մաքրված բուրդը
Զինահար — զենքով խոցված, նաև՝ փշաքաղված, սարսռած
Զյումրյութ — զմրուխտ, թանկարժեք քար
Զվարթուն — հրեշտակ
Զոփալ — դողալ, դողդողալ, ծփալ

Է

Էտրլվայս, էդրլվեյս — առյուծամագիլ, ալպյան ծաղիկ

Ը

Ըղձանույշ — հավերժահարս
Ընդունել — վիզը ոլորելով հաղթել
Ընթարմ, ընդարմ — ընդարմացած, զգացմունքները մեռած, սառած
Ըսթար, սթար — ձիու թամբի ծածկոց
Ըստներ, ստներ, ստև — բարակ ու կարճ մազ (անասունի), նաև՝ այդ մազից պատրաստված հագուստ

Թ

Թ'—թե, եթե
Թաթաղուն — թաթախված, մխրճված, ողողված, լցված

Թալկահար — դալուկ
Թակույկ — ջրի և գինու անոթ, սափոր, կուժ
Թանալ — թրջել, թաթախել
Թաքթաքուր — թաքնվելով, պահվտելով
Թեզան, թեզանիք — հագուստի թևերի վերջավորությունը
Թեֆարիկ, թեփարիգ — բույս, որից օծանելիք են պատրաստում
Թոշ — թոշնած, թոռոմած
Թորթոր — ծորալով, հոսելով
Թմբի — լորենի
Թևնակ — նավակի թի

Ժ

Ժահր — թարախ, վախր, գռեխ, աղտեղություն, կեղտ
Ժանյոք — ժանիքներով
Ժանտաժուտ — ժանտից ժանտ, դաժան
Ժիտ — հախուռն, խուռն
Ժռատ — ատամները թափած
Ժպրհիլ — վատ մտքով մի բանի ձգտել, հանդգնել, համարձակվել

Ի

Ի'—և, ու
Ի բաց հինեն — հեռու ինձանից
Իգա — վարսանդ
Իժիր— միշտ, հաճախակի
Ինչ ցեղ — ինչպիսի
Իցիվ — երանի
Իպլիս — սատանա

Լ

Լալվարթ (լաջվարդ)— ընտիր կապույտ ներկ, մուգ կապույտ գույն
Լայնշի — լայն ձևով, խիստ լայն
Լեսի — լեզի
Լբսնոսկի, լսնոսկի — սպիտակագորշավուն չժանգոտվող թանկարժեք մետաղ, պլատին
Լկամ — սանձ, երասանակ
Լոդիկ — թիկնոց, վերարկու
Լոռ — չրիմուռ
Լոռաձամ — չրիմուռե ծամերով
Լյուղ — լող
Լուկ — լոկ, միայն
Լոմա — չնչին դրամ, գրոշ, կոպեկ

Խ

Խազամուզ — նոր քաշած գինի
Խանձարուր — նորածնին փաթաթելու շորերի ամբողջությունը
Խանտուկ (խանդել, խանդող) — կոճղեղանման ուտվող արմատ
Խաշինք — խաշներ, ոչխարների հոտ
Խար — չոր խոտ
Խարստի — արու ձի կամ էշ, հովատակ
Խեռություն — անհնազանդություն, ըմբոստություն
Խլան — պատմուճան
Խլատեռ — թանկ քող, շղարշ
Խնծղալ — ցնծալ
Խոկալ — խորհել
Խոպալ — ուժգնությամբ առաջ մղվել, խայտալ, խոյանալ
Խորիսխ — խորիզ, յուղի մեջ բոված ալյուր՝ շաքարով, գաթայի միջուկ

Ծ

Ծանրածարիր — խիտ ծարիրված (ծարիր՝ աչքերը, հոնքերը ներկելու ներկ)
Ծին — ճյուղ, ոստ
Ծյուրիլ — հյուծվել
Ծոքրին — հոտավետ բույս, ուրց
Ծործոր — ձոր, ձորակ
Ծփին — ծփացող, ծփումը, ալեկոծումը, ծփանքը

Կ

Կազին — գազի լապտեր
Կալյակ — կաթիլ
Կաղամախ — բարդու տեսակ
Կայթել — թուլկոտել, ոստոստել
Կապելա — գինետուն
Կառարշավ — կառքով արշավելը, կառքով վազք
Կառափ — մարդու և կենդանիների գլուխ, գանգ
Կարի — շատ, չափազանց
Կարկահ — ասեղնագործելու, գործելու մեքենա, դազգահ
Կարկառ — քարակերտ թաքստոց
Կարկեհան — նոնաքար
Կարշնեղ — ջղուտ, մկանուտ
Կելերջ — ճիչ, ցավագին աղաղակ
Կենեղուտ — կյանքոտ, առույգ, զվարթ, կենդանի
Կերոն — ջահ, մեղրամոմից պատրաստված մեծ մոմ
Կեռիք — մարդու կամ անասունի ատամ, ժանիք, նաև անիվի, սղոցի ատամը
Կքնտիկ — լերկ, մազաթափ, կնտած
Կկոց — մաքոք, ոստայնակի գործիք

Կզկաթել — կարոտել, անձկալ
Կճյա — կուճից՝ մարմարից պատրաստված, կճեպ
Կնդրուկ — լիբանոսի ծառից հոսող խեժ, որից անուշահոտ օծանելիքներ են պատրաստում
Կնյուն — ուղիղ և ճկուն բույս
Կոշարա — խունկ պահելու աման
Կոշկոճված — ծեծված, տրորված
Կոշկոռ — հողի կտոր, կոշտ
Կովարած — տավարած, կովերը տրածացնող
Կուզն — խաղողի ողկույզ
Կոմբ — վահանի մեջտեղի ուռուցիկ մասը

Հ

Հագ — հագեցած, կուշտ
Հագագ — շունչ
Հազածո — կուռքերին զոհված
Հակուրջի — ճոճք
Համբարու — հուշկապարիկ, առասպելական հրեշ
Համբուն — ամբողջովին, շարունակ, անընդհատ
Համել, համենալ — հապաղել, ուշանալ
Համորեն — ամբողջովին
Համպարե — մշկենի, բուրավետ թուփ, որից անուշահոտ յուղ են ստանում
Հայհուշ — սպառնալից բացականչություն
Հանգունակ, հանգույն — նրա պես, նման
Հապ — ընդհուպ, մինչև
Հարաղ — երեսի քող, ծածկոց
Հասիթ — օգտակար, առողջարար
Հասողություն — մտքի կարողություն
Հավախոս — աքլորի կանչելու ժամանակը, աքլորականչ, լուսադեմ
Հավելուլ — ավելացնել
Հարկևոր — հարգելի, հարգարժան
Հարցն — հայրերի
Հափրանք — հագեցում, ձանձրույթ
Հեզ — խեղճ
Հեցել — հենել, կոթնեցնել, որպես հենարանի դեմ անել
Հեզություն — անհոգություն, անփութություն, ծուլություն, դանդաղություն
Հեռել — իրար կողքի շարել
Հետ — անհնազանդ, ըմբոստ
Իս (յիս) — ինձանում, իմ մեջ
Իմ (յիմ) — իմ
Իր — կարմիր, ծիրանագույն
Իրիկ — գեղեցիկ և բուրավետ ծաղիկ
Իրարաց — միասին, միաբան, հետ իրարաց, իրար հետ
Հման — սիրեկան, տարփածու

Հատել (հոտեցի) — կտրել, քշել, էտել
Հապիտ — խեղկատակ
Հույր — գեր, պարարտ
Հուսամ — ծաղիկ, նար-դոս
Հույլ — փունջ, խումբ, բազմություն
Հուսկ — վերջին

Ղ

Ղենջակ — գոգնոց, սրբիչ, լաթ

Ջ

Ջար — մազ՝ ձիու պոչի, այծի մորուքի

Ճ

Ճամուկ — նախշավոր, զարդարուն
Ճանճկեն — ճերմակ ու սև գծերով, գոլավոր
Ճապաղիք — հեղում, հոսում, հորդում
Ճետ — սերունդ, զավակ
Ճիկեր — ջիգյար
Ճիկ — թռչունների ճկճկոց
Ճխրանք — ճխալը, ծլվլոցը, ճռվողյուն
Ճղուղ — անիվ, անիվի ճաղ
Ճոկան — գավազան
Ճոշ, ճոշան — զրահ, լանջապանակ

Մ

Մազկինչ — հոգեվարքի վերջին բոպեն
Մազտաք — բուրավետ խեժ
Մախանք — նախանձ, խանդ, չարություն
Մախիզ — զզվելի, գարշելի, գանելի
Մածան — մածուցիկ, կպչուն
Մանանա — գազպե
Մանու — մանրիկ
Մանոման — մանեման, շուրջը պտտվելով
Մատրունք — մատուռ, մատուռներ
Մեծախնծիղ — մեծահրճվանք, մեծախնդում
Մեկոնաբույր — հաշիշաբույր, խաշխաշաբույր
Մեղեսիկ — ազնիվ քար, ամեթիստ
Մեղմավաչ — մեղմասահ, մեղմորեն սահելով
Մթար — մութ, խավար, մռայլ, նաև՝ կեղտոտություն

Միահաղույն — մեկ անգամից, բոլորը մեկտեղ
Մոլոշ — բաղրջուկ, փիփերթ
Մորճ — կանաչ, դալար ճյուղ
Մշկենի — բուրավետ բույս
Մույնք — վայելչաձև, վայելուչ
Մուրտ, մրտենի — մշտադալար թուփ

Ն

Նայ — խոնավ, թաց
Նայադ — ջրահարս
Նայեաց, նայաց — հայացք
Նավազ — նավաստի, նավի վրա ծառայող, ծովային
Նատիր (նադիր) — զենիթի հակադիր կետը
Նարոտ — գույնզգույն թել, հյուսվածք
Նշկոտում — անհնազանդություն, ապստամբություն, նաև՝ արհամարհելը, անարգումք
Նժդեհ — պանդուխտ
Նկան — հաց, բլիթ
Նսեհ — բախտին ապավինած, ճակատագրական, նաև՝ բախտ
Նվարտան — ծածկոց
Նուս — կռնակ, թիկնամեջք (եզան, ձիու)
Նուխա — համայիլ, հուռութք

Շ

Շահարիկ — անտառային ոգի
Շահենի — բազեանման թռչուն
Շահպրակ — անուշահոտ բույս
Շամբուշ — մոլեգնորեն, կրքոտ, պագշոտ
Շամշել — շամբշել, մոլեգնել, կրքոտվել
Շայիր — երգիչ, բանաստեղծ (պարսկերեն)
Շանսխուր — պոռնիկի վարձագին
Շառափ — փայլ, ցոլք, ճառագայթ
Շափրակ — ծաղկի պսակ
Շեր — գեղջկական երգ, բանաստեղծություն
Շերաս — շերամ՝ որդ, որի հյուսած բոժոժներից մետաքս են ստանում
Շերտափակ — շերտերով, ցցերով փակած, փայտե ցանկապատ
Շնոր — շփոթ, աղմուկ, գժտություն
Շոգ, շոգոլի — գոլորշի
Շողիք — եզան բերանի լորձունք, թուք
Շոճի, շոճեր — սոճի ծառ, ծառեր
Շրուշակ — սանձ, բերանակապ

Ո

Ողընտեռ — վերք մեջքի վրա
Ոյր — որի
Ոպսիտե — օբսիդե, օբսիդիանից (քարատեսակ)
Ոսին — սին, փուչ, դատարկ
Որա, որան — հնձած հացաբույսի խուրձ
Որորդ — ձայն, աղմուկ, շառաչ

Չ

Չալապի — տեր, պարոն
Չըվառական — թշվառական
Չըփույթ — անհոգություն, անփութություն

Պ

Պախուրց — սանձ
Պաղլեղ — քիմիական աղբ
Պայ, պայիկ, պայեր — դիցանուշ, ֆեյա
Պատարուն — լեցուն, լիակատար
Պատիր — սուտ, կեղծ, մոլորեցնող, խաբուսիկ
Պարեգոտ — պատմուճան, վերնազգեստ
Պարեխ — ծառի կտոր, ցցվածք
Պարիկ — հուշկապարիկ, համբարու առասպելական ոգի
Պարտասուն — հոգնած, բեզարած
Պերճասոսորդ — փառավոր վզով, հիասքանչ պարանոցով
Պլլվիլ — փաթաթվել
Պնդացայլ — պինդ ցայլ, պինդ ատուկ ունեցող, ամրապինդ
Պշնել — զարմանալ, շվարել
Պոլիպոտներ — ծովային փոքրիկ կենդանի
Պոչյուն — եզան, գոմեշի բառաչ
Պոնդ — բթամատով ու միջամատով հարվածելը
Պոր — կարապի մի տեսակ
Պորփյուր — կարմիր գույնի հանքային քար
Պուղել — ցրվել, քշել, վանել
Պուրճնուն — բերդի աշտարակ

Ջ

Ջաղբ — հորդ անձրև, շաղբել՝ հորդ անձրև տեղալ
Ջամբել — կերակրել, սնել
Ջայլ — բազմություն, մեռելի վրա լացող կանանց խումբ
Ջայլել — բազմությամբ լաց, ողբ անել, խմբվել մեռելի վրա կոծալու
Ջրամույն — ջրասույզ

Ռ

Ռեդին — դալուկ, դալկագույն
Ռոշնական — լուսավոր, պայծառ

Ս

Սակր — տապար, կացին
Սայլորդի — սայլապան
Սառ — սառույց
Սարբինա — ծառի խեշակ, հենափայտ
Սարդենի — դափնի
Սեղեխ — սիրեկան, տարփածու
Սեմեր — սիմ, սիմեր՝ կաշվե փոկեր
Սեպուհ — ասպետ, ազնվական
Սթար — ձիու թամբի ծածկոց
Սիկ — տիղմ
Սիկառ — սիգար, գլանակ
Սիպերիա — Սիբիր
Սնդուս — դիպակ, մետաքսի կտոր
Սորսորուն — հոսուն, հոսանուտ
Սպածանի (ըսպածանի) — գոգնոց
Սռնապան — սրունքները պահպանող կաշվե հագնելիք
Ստև (ըստև) — մաղ, բուրդ
Սրարբած — հարբած, գինովցած, սիրով արբեցած
Սույլ — սուլոց, ձայն

Վ

Վայրապար — զուր տեղը, իզուր, անօգուտ, անմիտ
Վանկ — հնչյուն, երգ
Վանորեք, վանորայք — վանքեր, մենաստան
Վարատական — աստանդական, հալածական
Վարմ — որսի թակարդ, ցանց
Վարշամակ — թաշկինակ
Վարոց — անասուն քշելու ճիպոտ, դալար ճյուղ
Վեշտասնամյա — տասնվեցամյա
Վետ — ալիք տալ, ծփալ
Վերեմ — թոքախտ, թոքախտավոր
Վիժակ — ջրի բխելը՝ հոսելը, բխում, փոշու՝ հարդի հոսք
Վիրապ — խոր փոս, անջուր հոր
Վկա — հանուն կրոնի նահատակ, զոհ, մարտիրոս
Վսեր — հանդուգն, լիրբ
Վրիժակ — վրեժխնդիր, վրիժառու

Տ

Տառատոկ — յափնջի, հովվի թաղիքե վերարկու
Տար — ուրիշ, օտար, այլ
Տարաղնիլ, տարտղնվել — բաժանվել, ցրիվ գալ, տարածվել, բաժան-բաժան լինել
Տափան — հերկած արտը հարթող ցաք, գործիք
Տիվ — ցերեկ
Տիվանդորը — ցերեկվա հանգիստ, անդորր
Տըղնդեր — ուռած փորով, տոդած
Տխեղծ — արատավոր, տգեղ, թույլ, պակասավոր
Տճկոր — տիկ, նվազարան (պարկապզուկ)
Տնանկ — տուն ու տեղ չունեցող, անտուն, անտեր, աղքատ, անդամալույծ
Տոսախ — ընտիր փայտ, շիմշիր
Տրմուղ — դժվարասանձ, անվարժ կենդանի

Ց

Ցայգ — մինչև այգը, լուսաբացին նախորդող պահը
Ցընցղկեն — ցնցղելով, շաղ տալով
Ցմախ — բույս, մանր, սպիտակ ծաղիկներով
Ցնծամույն — ցնծության մեջ խեղդված
Ցռուկ — նավակի քիթ, առաջամաս

ՈՒ

Ուլ, ուլա — վիզ, պարանոց
Ույծք — բացվածք, ճեղքվածք
Ունչեր — քիթ, ռունգ, քթանցք
Ուղ — ուղի
Ուղեշ — խաղողի որթի մատ, շիվ, ծառի շիվ
Ուղխ — առու, ջրի հոսանք, հոսող առատ ջուր
Ուրար — ժապավենաձև կտոր, որ սարկավագները կրում են ուսի վրա եկեղեցում սպասարկության ժամանակ
Ուսընդանութ — ուսից մինչև թևի, անութի տակ
Ուտի (ուտ, ուդ) — վին, լարավոր երաժշտական գործիք

Փ

Փաղփել — փայլել, շողալ, փայլփլել
Փաղփուն — փայլփլող, պսպղուն
Փայլարե — փայլարի (հանքաքար) նման
Փանաք — չնչին, անպետք, փունջ
Փապար — խոռոչ, քարանձավ, ավերակ
Փապ, փապեր — քարանձավ, խոռոչ, ծերպ լեռներում
Փարփառ — վառվռուն

Փեռեկել — պատառել, ճեղքոտել
Փթիթք — ծաղկունք
Փոսփոր — ֆոսֆոր
Փքին — նետ

Քաղ

Քակյալ — քանդված
Քայռ — գոհարազարդ մանյակ
Քանարիկ — դեղձանիկ
Քամելիա — կամելիա՝ բույս՝ գեղեցիկ ծաղիկներով, ծաղիկ
Քանաբար — կատաղի գայլ
Քարբ — օձի տեսակ, սև թունավոր օձ
Քերց — քույրերի
Քրթվտել — մարմինը միջատներից մաքրել
Քընթոնոց — օձի մարմնի և փղի կնճիթի գալարումը
Քթթում — աչքի թարթում
Քիրտ — քրտինք
Քմայք — քմահաճույք
Քորսե — կորսետ, սեղմիրան
Քողեք — ապարանջան
Քրեիքուր — գարշելի, վատթար, հանցավոր
Քրքում — բուրավետ բույս, զաֆրա, շաֆրան
Քոմայթ — խարտյաշ, շիկահեր
Քև — քեզանով

Օ

Օթեկ — հնացած, քարթու, օրն անցած
Օշնան — բույս, որի արմատից փրփուր է ստացվում
Օդանույշ — օդային ոգի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արևմտահայ բանաստեղծությունը . . . 3

ԳԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Երգք Նահապետի

Հայոց աշխարհիկ . . . 29
Հայ հայրենիք . . . 35
Ողբամ զքեզ, հայոց աշխարհ . . . 38
Հրազդան . . . 45
Հայ հանճար . . . 46

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ

Եղբայր եմք մեք . . . 49
Գարուն . . . 50
Աշուն . . . 51
Առ զեփյուռն Ալեմտաղի . . . 53
Ճեմք ի լյառն Հսկային . . . 54
Երգ (Ալեմտաղըն այն գեղեցիկ...) . . . 58
Երգ (Ո՞ւր էր, թե զեփյուռիկ...) . . . 59
Հայ քաջորդի . . . 60
Մահ քաջորդվույն . . . 61
Թաղումն քաջորդվույն . . . 62
Հայ քաջուհին . . . 64
Ջեն երջանիկ . . . 66
Մերն Վանա . . . 67
Առ հայկազուն օրիորդս . . . 69

ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆ

Կիլիկիա . . . 71
Մանուկ և արտույտ . . . 71

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐՅԱՆ

*** (Գարնանային կենացս մեջ) . . . 73

Թքի՜վ թե . . . 73
Վիշտք հայուն . . . 75
Եղծք առ Հայաստան . . . 76
Սիրեցեք զ'միմյանս . . . 78
Նվագ է տարեգարձի ազգային սահմանադրության . . . 79
Նե . . . 80
Հծծյունք . . . 81
Սիրել . . . 82
Դրժել . . . 84
Լճակ . . . 85
Հայուհին . . . 87
Թրքուհին . . . 88
Ներա հետ . . . 89
Տրտունջք . . . 91
Զզում . . . 93
Ջնե պաշտեմ . . . 95
Սե՜, սե՜ . . . 96
Մանիշակ . . . 98
Առ մայիս . . . 98
Նոր սև օրեր . . . 99
Իմ ցավը . . . 101
Ի գերեզմանն ամենասիրելվո Վարդան Լյուբֆյանի Հեծեծմո՜ւնք . . . 102
Իմ մահը . . . 104
Ի՞նչ կ'ըսեն . . . 105

ԹՈՎՄԱՍ ԹԵՐՋՅԱՆ

Առ արև . . . 106
Եղձ . . . 107
Աշխարհ . . . 108
Դափնե պսակը . . . 110
Կաղտնիքս . . . 111
Լքյալ տնակն . . . 112
Եղձ մը . . . 114
Իմ կյանք . . . 115

ՄԿՐՏԻՉ ԱՃԵՄՅԱՆ

Եղձ Մրկո . . . 116
Աստղեր . . . 117
Որբ թռչնիկը . . . 119
Աչքերը . . . 120
Ինորություն պատրիարքի . . . 121
Անակնկալ . . . 123
Նորեկ Պանդուխտները . . . 124

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱՆ

Մինակ . . . 126
Աղոթք . . . 127
Վերք ու վերք . . . 128
Վարդ աչք . . . 129
Վիշտ . . . 129
Թիթեռնիկ . . . 130
Հիմար արշավ . . . 131

ԳԱՐԵԳԻՆ ՊԵՇԿՅՈՒՐՅԱՆ

Սրինգը . . . 133
Երգ . . . 136
Վհատություն . . . 138

ՎԱՀԱՆ ՄԱԼԵԶՅԱՆ

Մեղեդի . . . 140
Հելակները . . . 140
Կրպասեմ . . . 141
Մութը կոխեց . . . 142
Մեկնումներ . . . 142
Թախծություններ . . . 143
Բանք առ հայրդի . . . 144
Կարոտը . . . 144

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

Դե՛ մայր Հայաստանին . . . 146
Ցրազը . . . 150
Ադամի վիշտը . . . 153
Տաղ . . . 154
Ծիրերդ . . . 155
Ատե՛, բայց մի՛ մոռնար զիս . . . 157
Սպասում . . . 158
*** (Մի ատեր վիշտը երբեք...) . . . 158

ՌՈՒԲԵՆ ՈՐԲԵՐՅԱՆ

Կարոտագին այց

Գյուղիս ճամբան . . . 160
Տնակս . . . 161
Գընա՞ . . . 164

Վարդենին . . . 165
Կոչնակ . . . 167
Հայրենիքի խնձորներ . . . 169
Անդրանիկ . . . 171
Կարոտագին այց . . . 173
Հին տնակս . . . 176

ՄԵՐ ԴԱՐԸ

Ճշմարտություն . . . 177
Փափաք . . . 178
Դեղձանիկս . . . 178
Մեր դարը աստուծո առջև . . . 179
Ծաղկանոցի նոճին . . . 181
Ադամին անեծքը . . . 183

ԻՆՏՐԱ (ՏԻՐԱՆ ՉՐԱՔՅԱՆ)

Լեռին . . . 187
Կատուն . . . 188
Մթնշաղի տրտմություն . . . 189
Նոճերուն մոտ . . . 190
Երեկո . . . 191
Իզձ . . . 191
Սիրուն . . . 192

ՍԻՊԻԼ

Ամպը . . . 193
Աչուն . . . 193
Ծանյակները . . . 195
Կ'անձրևե . . . 197
Հարցում . . . 198
Անուրջիս մեջ . . . 198
Ինչո՞ւ... ինչո՞ւ . . . 200
Խոսի՛լ . . . 200
Հայ լեզվին . . . 201
Աղվոր երազ . . . 203

ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արշալույս . . . 205
Պատուհաններ . . . 206
Հոպոպ թռչունը . . . 206
Գիշերային . . . 208
Անրջանք . . . 208

Երկրախտ 209
Փիշերվան ճամփորդը 210

ՀԵՐԱՆՈՒՇ ԱՐՇԱԿՅԱՆ

Երկու ճամփաները 211
Երշանիկ հուշեր 212
Գանգատ (Եկուր, նայե, ծովն է հանդարտ, ո՞վ ընկեր...) 213
Հոգիներուն արցունքը 213
Ապրիմ-մեռնիմ 214
Հույս 215
Գանգատ (Ցավի բաժակն մինչև մրուր քամեցի...) 216
Վարիպը 217
Օրերուն ոճիրը 217
Մահվան մոտ 218

ՍԻԱՄԱՆԹՈ

Դյուցազներեն

Հույսին ճամբան 220
Աստվածացումը 223
Արշալույսները 225
Ճակատամարտը 227
Հաղթանակեն հետո 231
Հանգրվանը և վաղորդայնը 232

ՀԱՅՈՐԴԻՆԵՐԸ

Դարերու վրեժ 234
Հողին ձայնը 236
Անդրանիկ 241
Աղբյուր-Սերոբ Վարդանյան 242
Կովկաս 246
Կախաղաններու կատարեն 248

ՀԱԳՆՎԱՐՔԻ ԵՎ ՀՈԳՅԻ ՋԱՀԵՐ

Մահվան տեսիլը 251
Ափ մը մոխիր, հայրենի տուն 253
Արյուն է որ կը տեսնեմ 254
Հայքենի աղբյուր 256
Արցունքներս 257
Ես երգելով կուգամ մեռնիլ 258
Հոգիս 259
Քնարիս լարերը դեռ թաց են 261

ԿԱՐՄԻՐ ԼՈՒՐԵՐ ԲԱՐԵԿԱՄԵՍ

Սուգ 262
Գարը 264
Լոգանքը 266
Կուլրը 267
Թթենին 270

ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ

Հայրը հոգեվարք 272
Հարսին երազը 274
Եղբայրն իր եղբորը 275
Մոր մը երազը 277
Կաղանդի իրիկուն 278
Սեր 280
Գերեզմաններեն ապաշավ 281
Մայրը իր զավկին 283
Առաքյալը 284
Որդին իր հորը 285
Այցեկուքը 286
Հայ դաշտերուն պաղատանքը 288

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

. 290

ՄԻՍԱՔ ՄԵԾԱՐԵՆՑ

Միածան

Զմրան պարզ գիշեր 299
Սիրերգ (Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին) 300
Կայծեր 301
Թրթռումներ 301
Ցայգանվագ 302
Երազի պահեր 303
Շերամին նինջը 304
Մոերմիկ տեսիլներ 305
Ճերմակ վարդեր 305
Աքասիաներու շուքին տակ 306
Այգերգ (Սարերուն մեջ կը կոչկոծի...) 306
Գետափի երազանք 307

Խոնջ իրիկունն արագորեն... 308
Ցնորոտ անդորրություններ 308
Վերադարձի երգ 309
Աշնանային հեծութիւններ 309
Այգերգ (Այգն է ծաղիկ երազով լի...) 310
Մթնշաղներ 311
Նավակները 312
Մեղուները 312
Բյուրեղի դյութանք 313
Իղձեր 314
Ցայգանկար 315
Արևին 317
Ցայգն է պայծառ... 318
Իրիկվան ձայներ 319
Առավան արևին մեջ 320

Նոր տաղեր

Վայրկյան 322
Ջուրեն դարձին 322
Մառախուղ 323
Անձրև (Բացաստանը վարագուրեց...) 324
Անդարձ 324
Սիրերգ (Տրցակ մը հուսամ ու տրցակ մ'ուրց) 325
Ջրտուք 326
Առնչություն 327
Անձրև (Համբույրն անձրևին կը թրջե շափշափ) 328
Անանուն 329
Իրիկնային 330
Այգային 330

Հովվերգություն մը

Ա. Գարնան հյուղը 331
Բ. Հյուղին գարունը 331
Գ. Երգը 332
Դ. Մրուրը 333
Ե. Հյուղին աշունը 334

Ըլլայի՜, ըլլայի՜

Իրիկունը 334
Հովը (Ալիքներուն վրա ոստոստող հովն ըլլայի) 335
Հյուղը 336
Բաղձանք 338
Հովը (Պատուհանս մատնահարեց ու անցավ) 339
Տերևները կ'ըսեին 340
Իրիկվան իղձ 341
Իրիկունս 342
Լուսնակ քուրիկիս 343
Ինչ արբեցությամբ... 345

Գրքերից դուրս մնացած բանաստեղծություններ

Փիշերին երազանքը 346
Արևագալը 347
Մարմնի վերք, սրտի վերք 347
Կյանքի երգը 348
Պետրոս Դուրյան 349
Եկուր 349
Ցայգերգ 350
Երազ օրեր 351
Աղերսանք 351
Մանիշակ և մամուռ 352

Արդի մարդուն հայր մերը

Տո՜ւր ինձի, տեր 354

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Սարսուռներ

Մուսային 356
Մոխիրներուն առջև 359
Մուրացիկը 361
Հիվանդ է 363
Ավազանին ձուկերուն 365

Ցեղին սիրտը

Ջոն 368

Նախերգանք

Նեմեսիս 369

Բազինին վրա

Հայրենիքի ոգին 380

Ողորմություն . . . 383
Մարած օջախը . . . 383
Օձը . . . 387
Վաղվան բողբոջներ . . . 390
Կարոտի նամակ . . . 392
Մեր կռունկը . . . 394
Ջարդը . . . 396
Կիլիկյան մոխիրներուն . . . 405

Կրկեսին մեջ

Վերածնություն . . . 409
Կռվի երթ . . . 411
Հայկակներուն օրորանը . . . 414
Հայրենի լեռներ . . . 415
Վահագն . . . 417
Դյուցազնի մը սուրին . . . 420
Վիրավորը . . . 422

Դյուցազնավեպեր

Հովիվը . . . 424

Հեքաեոս երգեր

Դեղեցկության արձանին . . . 431
Վանատուր . . . 432
Հեքանոսական . . . 435
Ո՜, Տալիթա . . . 437
Արևելյան բաղանիք . . . 439
Գրգանք . . . 442
... Ով Լալագե . . . 444
«Օրհնեալ ես դու ի կանայս...» . . . 446
Բեգաս . . . 448
Հարմը . . . 455

Գողգոթայի ծաղիկներ

Ճանապարհ խաչի . . . 471
Լույսը . . . 474
Առկայծ ճրագ . . . 477
Բանվորուհին . . . 477
Սպասում . . . 479
Պատգամավորներս . . . 481
Մեռնող բանվոր . . . 483
Դաղար . . . 484
Մայիս մեկ . . . 488
Եփրեմ . . . 490
Մատյանն ահա . . . 492

Հացիկ երգը

Մուսային . . . 494
Արտերուն հրավերը . . . 495
Մշակները . . . 496
Հարկիք . . . 496
Հերկեր . . . 496
Ցան . . . 497
Տափան . . . 498
Առաջին ծիլեր . . . 499
Դարնան անձրև . . . 500
Ցորյանի ծովեր . . . 501
Կակաչներ . . . 502
Անգապահը . . . 503
Հասուն արտ . . . 504
Հունձք . . . 505
Հունձք կը ժողվե... . . . 506
Սայլերը . . . 507
Ճարակում . . . 509
Խաչքուռ . . . 510
Կալեր . . . 511
Կալերու գիշեր . . . 513
Կամներգ . . . 514
Միջօրե . . . 516
Գուռը . . . 517
Երնում . . . 518
Օրհնություն . . . 519
Վերադարձ . . . 521
Ամբարներ . . . 522
Մարագներ . . . 523
Աղորիք . . . 523

Գրերից դուրս մնացած բանաստեղծություններ

Մանուշակ . . . 525
Վարդեր . . . 526
Արքուհին . . . 527
Մվ դար, ո՛վ դար... . . . 529
Աբքայիցց արքան . . . 533
Դուշակը . . . 534
Լոգանքեն վերջ . . . 535

Գալար ճյուղ . . . . . [illegible]
Լուանին . . . . . [illegible]
Նավասարդյան . . . . . [illegible]
Անդաստան . . . . . [illegible]

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

Սիրո գիրքը

Ինչո՞ւ 538
Սերը 538
Գինով սեր 539
Սերով, սերով... 540
Կարապները 541
Երգ-երգոց 543
Սիրո աղբյուր 544
Սիրո մրմունջ 545
Պատասխանը 546
Համբույրը 547
Գիտի սպասեմ 548
Նամակը 549
Մահաղգացում 550
Անկարելի սեր 551
Վերջին կոչը 551
Ծկուր 552
Սիրո և մահվան երգը 553
Գզտիկ սիրտդդ 554
Գինով գիշեր 555

Խոճեռի գիրքը

Հոգիս 556
Մենակ մարդը 556
Երթա՞լ... 557
Երնե՜կ, ջուր 558
Արգասավորում 559
Գացող մարդը 560
Մեծդ աստված 560
Ցնծուն մահ 562
Աքինդ 563
Գիշերն իջավ 564
Վերջին հայերը 564
Ով իմ հայրենիքս... 567
Ինչպես երբեմն... 568
Ջանգակնե՜ր, ջանգակնե՜ր... . . . . [illegible]

Կիլիկյան երգեր

Ա. Վրեժին սերմնացանը 570
Բ. Հայու որբիկ 571
Գ. Վերջին օրոր 572
Դապրիկ 573
Առջի հայերը 574
Հայաստան 576
Վերջին հայերը 576

Գառսը

Գամիճ աղոթքը 580
Գարմիր դրոշակը 581
Թռչպատորները 584
Ձյա դանակը 588

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ

Սեր

Նա սիրեցի 594
Քու հիշատակդ այս գիշեր... 595
Անունդ 595
Ազվորները 596
Հանքը 596
Ահավասիկ կուգեի... 597
Նարեն, ո՜վ սեր 597
Տեր, ի վերջո 598
Ոչչանկություն 598
Ամառն անցավ 599
Փափաք 600
Անկարելին 600
Առենոք 601
Անոնք 602
Նրեկ գիշեր 603
Սեր մը գաղտնի 603
Խաղի համար 604
Ողջույն 604
Նա երազիս տիրեցի 605
Սիրո կոչ 605
Քեզմե ոչինչ 606
Ինչպե՞ս խորհիս 606
Թե պատահեր 607
Ջրսիրվելով 608
Ձեռքի մը 608
Լուսնի գիշեր 609
[illegible] 609

Հաշվեհարդար

Ընթերցողին 610
Կ'անծրևե, տղաս 611
Գեղչիկան 612
Հայրենի գարնան հիշատակը 613
Ցորցավ աղբյուրը սրտիս 614
Եվ նորեն խոնջ են շրթունքներս 614
Տղու մը 615
Հեծեծանք 616
Տաղ առ ատելություն 616
Խաբեություն 617
Երազներ 617
Կասկածը 619
Անտառին մեջ 620
Երաժշտությունը 620
Ինձ կը թվի թե ապրած եմ 621
Երկու մահերը 622
Գայլին հսկումը 623
Ջավակս 623
Երեք կոչերը 624
Դուն հեռավոր մանկություն 625
Եռ այս գիշեր 625
Մեկ հատիկս 626
Ապագան 627
Վիշտ մը 627
Երեսնամյակ 628
Շվարում 629
Գիրքեր 630
Հաշվեհարդար 632
Իմ գյուղս 632
Տաղ արևին 633
Այս երազը 633
Գիտեմ գաղտնիք մ' ահավոր 634
Ապրի՞լ թե ոչ երազել 635
Պատիժը 636
Այս իրիկուն վերստին 637
Ոսկեմարտը 638
Կըսեմ մերթ ալ ինքզինքիս 639
Վարպետին 640
Ծրագ ու կյանք 640

Հայերգություն

Հայ ազգին 641
Հայաստանին 641
Դուն մերինն ես 643

Արարատյան դաշտին մեջ

Ա. Մասիսին 644
Բ. Ավերակները 645
Գ. Լուսավորչի կանթեղը 645
Դ. Հրազդան 646
Ե. Զվարթնոց տաճարին մեջ 647
Տաղ հայերեն լեզվին 647
Գարնան գիշեր 648
Հույսը 649
Սուտիա 649
Եվ նորեն միշտ 650
Ահավոր բան մը այնտեղ 650
Տարագրություն 651
Հպարտություն 652
Հարության շունչն է ահա 652
Ընթոստություն սրբազան 653
Որբերուն ձեռքերը 656
Գեղոն հայ որբին 656
Եփրատ 658
Կամուրջ 658
Գիտի մոռնանք 660
Հույսեր, մեծ հույսեր... 660
Մահերգ նահատակաց 661
Հայ հոգին 661
Սփյուռք 662
Փոշի ազգ 663
Լեզուն, որով գրեցի 663
Երբ օրը կա վերջապես 664
Ներկա Հայաստանին 664
Հոն հեռուն, ահա 666

ՄԱՏԹԵՈՍ ՉԱՐԻՖՅԱՆ

Տրամության ու խաղաղության երգեր

Խաղաղություն 668
Նոր հյուղակս 669
Հովոտ գիշեր 670
Հեգնանք 671
Կարեկցություն 671
Ջքսի՞ 672
Երկու ավերակներ 672
Աշնան առավոտ 675

Մի դպիր 675
Մահը կուգա 676
Վերջալույս 676
Որոշում 677
Լեռներն իմ երազիս 677

Տիեզերքը և համբույրս 678

Կյանքի և մահվան երգեր
Նոյեմբեր 678
Ան չէ... 680
Պզտիկ, աղվոր աղջիկ 680
Հոգիս 681
Ահա արդեն 681
Երջանկություն 682
Կարոտ 683
Սպասում 683
Քեզմե հեռու 685
Արհամարհանք 686
Շքեղ օրհաս 686
Վերելք 687
Գիշերվան ծովը 687
Մերս ու հոգիս 688
Գողություն 688
Մայրամուտի կույսերը 689
Միմոզայի շյուղը 690
Գինարբուք 692
Երազանք 692
Կուզեմ երգել 693
Երազ... 693
Իվ տեր... 694
ԿԱՉՄՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 695
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 697
ԲԱՌԱՐԱՆ 722

Գրական- գեղարվեստական հրատարակություն

ՑԵՂԻՆ ՍԻՐՏԸ

Արևմտահայ բանաստեղծություն

Литературно-художественное издание

СЕРДЦЕ НАЦИИ

Западно-армянская поэзия
Художник С. Е. Лачикян

(На армянском языке)
Издательство «Аревик»

Ереван, 1991

Խմբագրության վարիչ՝ Գ. Ս. Օհանյան
Խմբագիր՝ Լ. Տ. Սարգսյան
Նկարիչ՝ Ս. Ե. Լաճիկյան
Գեղ. խմբագիր՝ Խ. Զ. Հակոբյան
Տեխ. խմբագիր՝ Տ. Վ. Ավետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Ա. Սեդրակյան

ИБ—401

Հանձնված է շարվածքի՝ 1.11.1990 թ.։ Ստորագրված է տպագրության՝ 17.05.91 թ.։ Չափը՝ 60×84 1/16 Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 43,71 պայմ. տպ. մամ., 35,48 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 100.000։ Պատվեր՝ 1555։ Գինը՝ 5 ռ.։

«Արևիկ» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդին առընթեր մամուլի կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат имени Акопа Мегапарта Комитета по печати при Совете Министров Республики Армения. Ереван-9, ул. Теряна, 91.